ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(Հայկ Հարությունի Խաչատրյան)

(1926 – 2001թ.թ.)

ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾ

Պատմավեպ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՀՈՎԻՏՆԵՐ

ՎԱՅԿՈՒՆ

ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԻՈԲԱՐԶԱՆԻ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՂԱՆԴԸ

ԿԼԵՈՊԱՏՐԱ

ՍԵՎՈՒԿԻ ՍՊԻՏԱԿ ԽԱԼԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՃԱՆԿ ՆԵՏԸ

ԿԼԵՈՊԱՏՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

ԿԱՆԳ ԱՌ, ԱՍՏ ԵՐԿԻՐՆ Է ՀԱՅՈՑ

ՁԱՅՆԱՐԿՈՒ ԳՈՒՆԴԸ

ԱՐՔԱՅԻՑ – ԱՐՔԱ

ՀԱՂԹՈՂԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

ԴԱՆԴԱՂ ՇՏԱՊԻՐ

ՀԱՅՔԻ ԱՊԱԳԱ ՔԱՂԱՔԱՄԱՅՐԸ

ԽԱՐՈՆԴԱՍԻՆ ՄՈՌԱՅԻՐ

ԻՆՉՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է, ՔԱՆ ՈՉԻՆՉԸ

ՇՏԱՊՈՂԸ ՍԱՅԹԱՔՈՒՄ Է

ԶՈՍԻՄԱ

ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՕՂԱԿԸ

ՄԻ ԽՓԻՐ ԱՉՔԴ, ԵՐԲ ՎԱՌՎՈՒՄ Է ՀԱՐԵՎԱՆԻԴ ՏՈՒՆԸ

ԵԹԵ ԱՐՔԱՅԻՑ - ԱՐՔԱՆ ԿՌԱՀԵՐ

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԴԵՍՊԱՆԸ

ՀԱՅՈՑ ՆԱՎԱՍԱՐԴԸ

ՈՏՔԻ ԵԼ, ՀԱՅԿՅԱՆ ԵՐԿԻՐ, ՀՌՈՄՆ Է ԳԱԼԻՍ

ՈՒՇԱՑԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՂՆԻՔԸ

ՄԵԾ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՇԻՐՄԻ ԱՌՋԵՎ

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՍԱՂԱՎԱՐՏԸ

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ ՃԱՇՈՒՄ Է ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՀԵՏ

ԹԵՎԱՏՎԱԾ ԱՐԾԻՎԸ

ԳԼՈ՞ՒԽ ԵՍ ԲԵՐԵԼ

ՀԱՅՐԱԴԱՎ ՈՐԴԻՆ

ԼԵԶՈՒՆ ԿԱՊԻ ՊԵՏՔ ՈՒՆԻ, ԱԽՈՐԺԱԿԸ՝ ՉԱՓԻ

ՎՐԴՈՎՎԱԾ ԱՍՊԵՏԸ

ՈՐԴԻՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ Է ՀՈՐԸ, ՔԱՆ ԱՆԵՐՈՋԸ

ԵՐԿԱՅՆԱՁԻԳ ԳԻՇԵՐ

ՓՈԹՈՐԿԻՑ ՀԵՏՈ

ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՍԱՀՄԱՆԵՑԻ ՕՐԵՆՆ ԱՅՍ

ԵՍ ԿՄՆԱՄ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ

ՊԱՏԳԱՄ

Մ.թ.ա. առաջին դարում համաշխարհային տիրապետության ձգտող Հռոմը ցանկանում էր զավթել Փոքր Ասիան, բայց հռոմեական նվաճումների շղթան չէր ամբողջանում, որովհետև իրենց անկախության ու ազատության համար հերոսական պայքարի են ելնում Պոնտոսը, Հայաստանը և Պարթևստանը: Հայրենի երկիրը հռոմեական ավարառուներից պաշտպանելու համար ոտքի է կանգնում նաև հայ ժողովուրդը և ապրելու ու գոյատևելու իր իրավունքը պաշտպանում զենքի ուժով:

Արքայից արքա Տիգրան Բ Մեծի գլխավորությամբ Հայաստանը դառնում է աշխարհի հզոր տերություններից մեկը: Այդ դարաշրջանի գեղարվեստական պատկերն է արտացոլվում Հայկ Խաչատրյանի "Տիգրան Մեծ" պատմավեպում:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՀՈՎԻՏՆԵՐ

Տիզբոնը արթնանում էր քնից:

Բարձրահասակ արմավենիների տակ կուչ եկած շենքերը հեռվից նմանվում էին շուռ տված կարասների: Կամաց-կամաց դեպի երկինք չվող ամպերի տակից երևում էին քաղաքը շրջապատող բերդապարիսպները, որոնք աջ կողմից ուղիղ ձգվող Տիգրիսի հետ լարված աղեղի տեսք էին ստանում:

Աշնանային առավոտի ցուրտը ասես աշխուժացրել էր պարիսպների վրա թիկնոցները գլխներին քաշած քնատ պահակներին, որոնք ետ ու առաջ էին վազվզում անձրևից փախչողի նման:

Բերդաքաղաքի գլխավոր դարպասի առջև իրարանցում էր: Մի քանի հեծյալներ ուզում էին քաղաք մտնել, բայց զինվորները դարպասը չէին բացում:

- Այսպես չեն վարվի Հայոց աշխարհում: Մեր դռները բաց են ոչ միայն արքայական դեսպանախմբերի, այլև ամեն անծանոթի առջև, - կարծես ինքն իրեն խոսում էր սևաթույր նժույգի վրա անհանգիստ շարժումներ կատարող մի ծեր զինվորական:

- Թող ների մեզ Հայոց աշխարհի դեսպանը, որ մենք չենք կարող խախտել արքայից-արքայի հրամանը, - արձագանքում էր նրա պահապաններից մեկը, որ ըստ երևույթին, դարպասապահ զորամասի գլխավորն էր:

Վերջինիս շուրջը խմբված պարթև զինվորները՝ տարված դեսպանախմբի նժույգներն ու հանդերձները զննելով՝ համարյա չէին ունկդրում այդ խոսակցությանը:

- Բայց արքայից-արքային դեռ հայտնի չէ մեր ժամանումը, ի՞նչ հրաման է դա:

- Մինչև արևը չերևա հորիզոնում՝ օտար մարդ չթողնել քաղաք, որ չարը հեռու լինի մեզնից:

- Ինչպես տեսնում ենք, մենք չորս հոգի ենք, չլինի՞ կարծում եք, թե չորս հոգով մենք կգրավենք Տիզբոնը:

- Դե, չէ, - ժպտաց դարպասապահ զորամասի գլխավորը, - դու դեսպան մարդ ես և գիտես, որ մեծ չարիքները նախ նյութվում են մի մարդու գլխում…

- Լավ ես իմաստասիրում, պատվելի զորական, բայց որպես դեսպան քեզ կարող եմ ասել, որ ամենամեծ չարագործությունները լինում են հենց արևի լույսի տակ:

- Ահրումազդը հեռու պահի մեզ դրանցից:

- Ասել է թե՝ որ օրը ամպոտ լինի ու արևը չծագի մենք այստե՞ղ պիտի մնանք:

- Ինչպե՞ս թե արևը չծագի, Ահրումազդը…

Պարթևը չհասցրեց իր խոսքն ավարտել: Բերդապարիսպների աշտարակներից գալարափողերը ազդարարեցին լուսածագի աղոթքի ժամը: Խոսակցությունն ընդհատվեց, դարպասի առաջ մնացին միայն չորս հեծյալները:

Նրանք եկել էին Հայոց աշխարհից: Երկար ճանապարհից ու հոգնածությունից նրանց դեմքերը կնճռոտվել էին, սևացել: Տխուր լուրեր էին բերել. տխուր՝ իրենց, բայց ուրախ՝ պարթևների համար:

Վախճանվել էր Հայոց Տիգրան Առաջին Հայ թագավորը Արտաշեսյան դինաստիայից, Արտաշես Առաջին (Արտաշես Աշխարհակալ) թագավորի որդին, Տիգրան երկրորդի (Տիգրան Մեծի) հայրը: Տիգրան Առաջինը թագավորել է (115 – 95 թվականին մ.թ.ա.):

Հանգուցյալ արքայի ծերունի խորհրդատու և դեսպան Արշամը մի շաբաթ առաջ դուրս էր եկել Հայոց աշխարհից և աճապարում էր ժամ առաջ հասնել Տիզբոն (Պարթևական պետության մայրաքաղաքը, որ գտնվում էր Տիգրիս գետի արևելյան ափին, Սելևկիա քաղաքի դիմաց, Բաբելոնից, այժմյան Բաղդադից ոչ այնքան հեռու):

Նրա հետ էին Հուսիկ քուրմը և երկու զորական՝ արքունական տան պահակազորից: Դեսպանախումբը գլխավորում էր Արշամը, որն իր հետ բերել էր հայոց արքայազն Գուրի հավատարմաթուղթը:

Զորական չէր Արշամը, բայց իր կյանքի մեծ մասն անց էր կացրել նժույգի վրա, շրջել աշխարհը, եղել օտար արքունիքներում, արքաների հետ նստել վերկացել և աշխատել էր կռահել, թե ինչ են նյութում այդ արքաները ի վնաս Հայոց աշխարհի: Սուր էլ ուներ կողքին, բայց այն երբեք չէր հանել պատյանից, չնայած քիչ ճակատամարտեր չէր տվել նա Հայոց աշխարհի համար, երբեմն ահեղ ու օրհասական, երբեմն էլ՝ հաղթական: Դրանք մտքի ու խոսքի, խորամանկության ու ճարպկության մարտեր էին, որտեղ խոսքի սուրն ավելի շատ բան էր տեսնում, քան բյուր ու տասնյակ բյուր զորականների սրերը:

Այս անգամ, սակայն, նա հուզված էր կռվի նոր մասնակցող զինվորի նման: Այդ հուզմունքը պատել էր նրան Հայոց աշխարհից դուրս գալիս և ահա բազում օրեր մաշում էր ուղեղը: Ծերունին իր դեսպանական կյանքի քառուղիներում բազում ու բազմաբնույթ հանձնարարություններ էր կատարել, բայց այս մեկը, որի համար նա եկել էր Տիզբոն, առավել ծանր ու դժվարին էր թվում: Նա պետք է փրկեր պատանդված արքայաորդուն Միհրդատ Մեծի ճանկերից (Միհրդատ Երկրորդի) Պարթևական թագավոր Արշակունյաց դինաստյայից, որը թագավորել է 123 – 88 թվականներին մ.թ.ա.:

Արշամին այստեղ էր առաքել համայն Հայոց աշխարհը, առաքել էր՝ պատվիրելով Տուն բերել արքայազն Տիգրանին, որը Տիզբոն է ընկել տարիներ առաջ:

Այո, տարիներ առաջ էր: Պարթևների դեմ Կապուտանի ճակատամարտում հայերը ծանր դրության մեջ ընկան: (Կապուտան կամ Ուրմիա լիճը, որը այժմ մտնում է Իրանի տարածքի մեջ): Կապուտան ծովի ափին հայկական այրուձին շրջապատվեց պարթևների ահռելի բանակով: Կռիվը կատաղի էր, սակայն թշնամուն ահ ու սարսափ պատճառող հայկական այրուձին ընկել էր մի լեռնավանդակի մեջ, որը միայն մի ելք ուներ՝ բաց ծովակը: Մարդկանց կյանքը փրկելու համար հայերը հաշտություն խնդրեցին: Պարթևները, որոնք լեռնագագաթներից քրքջում էին հայերի անհուսալի դրության վրա, պահանջեցին պատանդ տալ արքայազն Տիգրանին: Հաշտություն կնքվեց ի վնաս հայերի: Արքայազն Տիգրանը պատանդ պիտի մնար պարթևների մոտ և չպետք է տեսներ Հայոց աշխարհն ու իր հոր դեմքը, մինչև վերջինիս վախճանվելը:

Միաժամանակ պայման կապեցին, որ պատանի Տիգրանը կգլխատվեր, եթե հայերը փորձեին կռիվ սկսել պարթևների դեմ:

Շատ տարիներ են գլորվել այդ օրից, շատ դեպքեր կատարվել աշխարհում: Պարթևական հողի վրա չդոփեց հայոց նժույգի սմբակը, պարթևի ու հայի սրերը այլևս չբախվեցին իրար: Պատանի Տիգրանն իր պատանդությամբ զսպում էր հայոց վրիժատենչ ոգին և ապահովում Միհրդատ Մեծի տերության սահմանները արևմուտքում:

Իսկ Հայոց աշխարհում լուրեր են պտտվում, թե արքայազնը դարձել է խոհեմ ու քաջ տղամարդ, թե պարթևների արքունիքում նախանձով են նայում նրա ընդունակություններին, և ինքը՝ պարթևաց արքայից - արքա Միհրդատ Մեծն էլ երիտասարդ Տիգրանի մեջ տեսնում է իր ապագա ախոյանին:

Այժմ Տիզբոնի դարպասների տակ ծերունի Արշամը սպասում էր: Նա վաղուց չէր եղել Տիզբոնում, որը կարծես մնացել էր նույնը, այն տարբերությամբ միայն, որ Միհրդատ Մեծը հրամայել էր արևածագից առաջ օտարական մարդու առջև չբացել քաղաքի դարպասները:

Յուր ոտքով եկած հյուրը պատիվ չի ունենա, - լսելի ձայնով շշնջաց ծերունին և դարձավ քուրմ Հուսիկին:

- Ի՞նչ է խորհում Արամազդի (Հեթանոս հայերի աստվածների հայրը) պատգամախոսը:

- Հաջողություն եմ մաղթում մեր ձեռնարկած գործին:

- Հայոց աշխարհի համար հաջողությունը միշտ էլ նման է եղել նպատակի, հենց որ ձեռքից բաց թողեցիր ուրիշներին է որս դառնում:

Մի պահ նրանք լռեցին: Թվում էր, թե արդեն մի քանի օր է, ինչ իրենք սպասում են Տիզբոնի դարպասների տակ:

Քիչ հետո հորիզոնում երևաց արևը:

Վերջապես բացվեցին քաղաքի դարպասները, և Արշամն իր մարդկանց հետ ներս մտավ՝ հետևելով արքայից - արքայի զորապետի խմբին, որն ընդառաջում էր նրանց: Խումբը շարժվում էր քաղաքի կենտրոնական փողոցով, որի աջ ու ձախ կողմերին ձգվում էին խանութներ ու դարբնոցներ:

"Քառասուն պայտանոցների" քաղաքը մտել էր իր առօրյա եռուզեռի մեջ: Խմբի առջևից քայլող պարթև զորականը ստեպ – ստեպ դեպի շուրթերն էր տանում անտակ կուլայի տեսք ունեցող մի նվագարան և ականջ ծակելով սուլում, որից փողոցում անցուդարձ անողները իսկույն մի կողմ էին քաշվում: Քառորդ ժամից հետո նրանք կանգ առան մի հսկա շինության առջև: Դա Միհրդատ Մեծի արքայական ապարանքն էր: Շինության դիմացի լայն հրապարակը մի ձվաձև գեղեցիկ տափարակ էր, հարթեցրած կավածեփ աղյուսներով: Վագրի ու առյուծի գիրկընդխառն պղնձաձույլ մի արձան գեղեցիկ կամար էր կազմում ապարանքի նախամուտքի շուրջը: Այդ կամարի տակով կարող էին հեշտությամբ անցնել չորս հեծյալներ Ապարանքի առջև, հսկա պատի կենտրոնական մասում, նրբին արվեստով քանդակված էր արևի գունդը, որից սկիզբ առնող բոսորագույն ճառագայթները տարածվում էին չորս բոլորը և պատի վերջավորություններում վերածվում նիզակների:

Ապարանքի շքամուտքի մոտ նրանց դիմավորեց սպասավորների մի ստվար բազմություն:

Խոնարհ գլուխ տալով, նրանցից մի քանիսն իսկույն բռնեցին ձիերի երեսաններից ու թամբերի ասպանդակներից՝ օգնելով հեծյալներին ձիերից իջնելու: Արշամին ու նրա հետ եկած մարդկանց ուղեկցեցին դեպի ապարանքի ձախակողմյան անկյունում կուչ եկած փոքրիկ տաղավարը, որի մի դռնակը բացվում էր Տիգրիսի վրա: Հոգնատանջ Տիգրիսը պղտոր ալիքներով ծեծում էր ափի պատնեշները:

Կարճահասակ մի պարթև, որի թիկնոցի ծայրերը քայլելիս քսվում էին գետնին, մտավ տաղավար և, փայլեցնելով իր խեժագույն աչքերը, դիմեց եկվորներին.

- Կցանկանայի իմանալ, թե ո՞վ է ձեր մեջ հարգարժան դեսպանը:

Արշամը թեթևակի շարժեց գլուխը, որից պարթևը կռահեց, որ դեսպանը ծերունին է:

- Երկար կյանք ու ողջություն լեռների զավակներին, ձեր ժամանումն արդեն հայտնի է արեգակնափայլ արքայից - արքային: Առայժմ դուք կարող եք փոքր – ինչ դադար առնել: Ի դեպ, ես արքունիքի սենեկապետն եմ և շատ ուրախ կլինեմ հայոց դեսպանի հետ անձնապես ծանոթանալու, ինձ կոչում են Սանատրուկ:

Արշամն ու Սանատրուկը ողջունեցին իրար՝ ի նշան ծանոթության, հետո Արշամը սիրալիր հարցրեց նրան.

- Ե՞րբ կնդունի մեզ արքայից - արքան:

- Դա կախված է ձեզնից, չգիտեմ ձեր գալու նպատակը, բայց ենթադրում եմ, որ այն առնչվում է արքայորդի Տիգրանի հետ:

- Դու ճիշտ կռահեցիր, մենք արքայորդու հետևից ենք եկել, բայց կցանկանայինք արքայից - արքայի հետ տեսակցել այսօր: Քո ծառայության համար դու կվարձատրվես ըստ պատշաճի: Արշամը Սանատրուկի գրպանը խոթեց մի փոքրիկ դրամաքսակ և այնպիսի տեսք ընդունեց, որ ասես իր պարտքն էր վերադարձնում պարթևին:

- Ամեն ինչ կանցնի հաջող, - ժպտաց Սանատրուկը և դուրս եկավ տաղավար – հյուրանոցից:

Սանատրուկի գնալուց հետո քուրմ Հուսիկը դարձավ ծերունուն. - Տարօրինակ աշխարհ է սա, ոսկուց են սկսում բանակցությունները:

- Զգույշ քուրմ Հուսիկ, ավելորդ ասված մի բառ կարող է փչացնել ամեն ինչ:

- Բայց մենք հայերեն ենք խոսում, ի՞նչ պիտի հասկնան սրանք, եթե նույնիսկ լրտեսեն:

- Արքունիքում ամեն բան ականջ ունի, ամեն ինչ լսվում է այստեղ, թեկուզ սատանայի լեզվով էլ խոսելու լինենք:

Տաղավարում, ուր իջևանել էին նրանք, դրված էին փայտե թախտեր, որոնք ծածկված էին ծովախոտով լցված ներքնակներով: Նրանք հանեցին թիկնոցները և նստելով ներքնակների վրա՝ յուրաքանչյուրը յուրովի թաղվեց խոհերի մեջ: Կեսօրին հայտնվեց Սանատրուկը և

առաջնորդեց նրանց դեպի Միհրդատի պալատը: Ապարանքի նեղ, ոլորապտույտ միջանցքներով նրանք հանդարտ քայլերով հասան մի ընդարձակ սրահ: Մի քանի սպառազեն թիկնապահներ արձանների պես անշարժ կանգնել էին սրահի տարբեր անկյուններում:

Դահլիճ տանող գլխավոր մուտքից ծաղրածուի դեմքով մեկը դուրս եկավ և ծափ զարկեց: Սանատրուկը, Արշամի կողմը նայելով, հպեց ձախ աչքը: Նրանք մտան դահլիճ:

Մետաքսակար, ասեղնագործ արքայական պատմուճանում փաթաթվել էր Միհրդատ Մեծը՝ գլխին շականակագույն խույր: Նրա դուրս ընկած աչքերը, փոքր քիթը և արտասովոր հաստ շրթունքները տարօրինակ ներդաշնակություն էին կազմում: Գահավորակին բազմել էր հպարտորեն: Աջ կողքին ճերմակազգեստ քրմապետն էր, ձախ կողքին՝ զորական մի մարդ:

Արշամը, Հուսիկը և երկու հայ զորականները խոր գլուխ տվին.

- Արևի և լուսնի եղբորը, պարթևաց արքաների - արքա Միհրդատ Մեծին Հայոց աշխարհից ամենաջերմ ողջույններ, - մի քիչ առաջ անցնելով ու կրկին խոնարհվելով ասաց Արշամը:

Հայ զորականներից մեկը ձեռքին բռնած փայտե մատուցարանը, որի վրա ոսկե ու արծաթե սպասք էր դասավորված, հանձնեց ընդառաջ եկող մի պարթև մեծապետի:

- Խաղաղություն Հայոց աշխարհին, - նույն հպարտ կեցվածքով, ժպտալով պատասխանեց Միհրդատ Մեծը, - վաղուց է, որ մեր աշխարհում հյուր չի եղել դեսպան Արշամը, վերջին անգամ ես նրան տեսա երիտասարդ, իսկ այժմ ճերմակ մազեր են երևում գլխին:

- Արևելքի արեգակնափայլ արքաների արքա, մարդկային կյանքը նման է մի ցերեկվա, բացվեց առավոտը, դեռ գործ չտեսած՝ վրա կհասնի իրիկունը:

- Խելոք ասեցիր, Ահրումազդը վկա, ի՞նչ նորություն կա Հայոց աշխարհում, ինչպե՞ս է զգում իրեն Տիգրան արքան:

Արշամը անխոս Միհրդատին մեկնեց մագաղաթյա թղթակալը:

Մի քանի րոպե դահլիճում ծանր լռություն էր իջել: Արքայից - արքան կարդում էր Հայոց աշխարհից ուղարկված հավատարմաթուղթը:

- Այդպես, - գահավորակի վրա շուռ գալով, ծոր տվեց Միհրդատ Մեծը, - ցավում եմ Հայոց աշխարհին հասած դժբախտության համար: Ձեր հանգուցյալ արքային տվածս խոստումը կկատարեմ: Արքայազն Տիգրանը կստանա հոր գահն ու իշխանությունը: Սակայն Հայոց գահաժառանգը մեծացել է ինձ մոտ, ես նրա հանդեպ տածել եմ հայրական հոգատարություն, և մեզ պատանդ թողած պատանի թագաժառանգից դուք ստանալու եք մի հասուն արքա, որի հայրը խոստացել է իր աշխարհի անունից լավագույն նվերներ տալ ողջ ու առողջ նրան ձեզ վերադարձնելու ժամանակ: Գուցե այդ մասին մոռացել է Գուրը, կամ Տիգրան արքան չի հայտնել նրան: Ասենք, երկար տարիներ են անցել, մարդու հիշողությունը… ո՞վ գիտե…

- Վսեմափայլ տեր, մեր արքունիքի գանձարանը միշտ բաց է իր արքաների ցանկություններն ի կատար ածելու համար. ասա նվերների չափը, և ես Հայոց աշխարհին

տեղյակ կպահեմ այդ մասին, կամ, որ հաճելի կլիներ, թող գահաժառանգը մասնակցի մեր զրույցին իր խոսքն ասի:

- Արքայազն Տիգրանը հիմա պալատում չէ, այլապես բազմած կլիներ իմ կողքին: Նա որսի է գնացել վաղ լուսաբացին և կգա արևմուտին, իսկ այն նվերները, որոնց մասին խոսք եղավ, թող նախօրոք խոստանա Հայոց աշխարհը:

Արքայազն Տիգրանն այս դեպքում նույնիսկ իր մասնակցությամբ գործին չի կարող օգնել, որովհետև առայժմ նա ոչինչ չունի, իսկ ոչինչ չունեցող մարդուց ոչինչ չեն պահանջում: Ինչ վերաբերվում է նվերների չափին, ապա այս դեպքում գահաժառանգ Տիգրանը պետք է քավի իր պապի՝ Արտաշես արքայի հանցանքը, որը յոթանասուն տարի առաջ պարթևներից գրավել է Կապուտան աշխարհը, յոթանասուն գետ կտրել Պարթևաց աշխարհից: Այդ հովիտները թող նվեր լինեն պատանդ արքայաորդուն ստանալու համար: Հայոց հարգարժան դեսպանը թող իմանա նաև, որ դա նույնիսկ նվեր չէ, այլ տվածը ետ ստանալու պահանջ: Դրան, ի միջի այլոց, ավելացնում եմ յոթ հազար պայտ: Այսքանը:

- Օ, պարթևների հզոր արքա, ես միայն դեսպան եմ և Հայոց աշխարհից գավառներ նվիրաբերելու լիազորություններ չունեմ: Հետո թող ների ինձ արքայից - արքան, որ վերջին զարմանալի պահանջն էլ ծանր բեռ կլինի Հայոց աշխարհի համար: Այդքան պայտ Տիզբոնի ինչի՞ն է պետք, որ մեր աշխարհներում հայտնի է իր բազմաթիվ պայտանոցներով և իզուր չէ որ քառասուն պայտանոցների քաղաք է կոչվում:

- Քո զարմանքը կչափավորվեր, դեսպան, եթե հիշեիր ձեր՝ հայերի առածը՝ "Դերձակի հագուստը ծակ կլինի", իսկ լիազորության հարցում դու համեստություն ես անում, որովհետև իշխան Գուրի հավատարմաթուղթը այլ բան է ասում քեզ տված իրավունքների մասին:

- Վսեմափայլ արքայից - արքան, կարծում եմ, ժամանակ կտա խորհելու այդ մասին:

- Խորհեցեք դեսպան, իմ Արևը քեզ հաջողություն է մաղթում, - Միհրդատը ուղղվեց գահավորակի վրա, իսկ մուտքի մոտ կանգնած ծաղրածուի դեմքով պարթևը ծափ զարկեց նորից: Այս նշանակում էր, որ զրույցն ավարտված է:

Նորից խոր գլուխ տալով, Արշամը, Հուսիկը, երկու զորականները դուրս եկան դահլիճից և ուղղվեցին դեպի իրենց հատկացված տաղավարը: Սանատրուկը նրանց հետ էր: Վերջինս ժպտում էր անվերջ և սիրաշահող խոսքեր քրթմնջում Արշամի ականջին:

- Շուտով որսից կդառնա ձեր Տիգրանը, օ, իշխան Արշամ, գիտե՞ք, թե որքան գեղեցիկ տղամարդ է նա: Արծիվ է, բայց ոչ մեր տափաստանների արծվի նման, ձեր լեռների պես ամուր ու չքնաղ տեսք ունի նա: Մեր կանանց չի հավանում, ասում է պարթևուհիները թթված են: Ձիարշավներում մրցորդ չունի, իսկ սուսերամարտերում՝ միշտ հաղթող է:

- Սանատրուկ, - ընդհատեց նրան Արշամը, - գահաժառանգ Տիգրանի վերադարձը ե՞րբ իմաց կտաս մեզ:

- Մի հրասախի (կամ ՓԱՐՍԱԽ - երկարության չափ, որ հավասար է 5250 մետրի) վրա, դեռ Տիզբոնում չլսած որսից վերադարձողների ձիերի դոփյունը, հարգարժան դեսպանը տեղյակ կլինի այդ մասին:

Նրանք հասան տաղավարին: Սանատրուկն անջատվեց խմբից և գնաց հյուրերի համար ուտելիք բերելու:

Իրիկնադեմին հյուրանոց – տաղավարի դռնակը բացվեց շրխկոցով: Թախտերի վրա թիկնած Արշամը, քուրմ Հուսիկն ու զորականները վեր թռան տեղներից: Նրանց առջև կանգնած էր Հայոց գահաժառանգը՝ արքայազն Տիգրանը, ամբողջովին սպառազինված, վրան ծաղկազարդ թիկնոց, խոնավ ու վշտոտ աչքերով:

- Հայր Արշամ, - շշնջաց նա և գրկեց ծերունուն:

Տիգրանի աչքերից առատ արցունք էր հոսում: Արտասվում էր և ծերունին: Քուրմ Հուսիկը՝ ձեռքերը վեր կարկառած, աղոթք էր շշնջում Արամազդ աստծուն: Զորականները կարմրատակած դեմքերով կանգնել էին զգաստ և չէին շարժվում: Դռնակի մոտ կանգնել էր Տիգրանի պանդխտության տարիների անբաժան ընկեր ասպետ Բագարատը, որը լուրջ ու խոհուն հայացքով նայում էր հայրենի աշխարհից եկած մարդկանց: Մի քանի վայրկյանից հետո արքայազնը պոկ եկավ ծերունու գրկից և անխոս բարևեց քուրմ Հուսիկին ու երկու զորականներին: Նրա օրինակին հետևեց Բագարատը:

- Ինչո՞ւ չես խոսում, հայր Արշամ, բերածդ նորությունների տխուր բաժինն արդեն հայտնի է ինձ, պատմիր, ծերունի:

- Ո՞վ հայտնեց քեզ այդ մասին, տեր իմ:

- Նվեր որոնող մի պարթև պալատական, որին մի ժամ առաջ ուղարկեցի մյուս աշխարհը՝ իր նախնիների մոտ: Թշվառականը կարծում էր, թե հորս մահը գուժելով ոսկու քսակներ կստանա:

Արշամը պատմեց արքայազնին Միհրդատ Մեծի պայմանները՝ նրան պանդխտությունից ազատելու համար:

- Ի՞նչ, - ծերունուն լսելով, ձգվեց տեղում թագաժառանգը: - Նվերներ է պահանջում: Յոթանասուն հովի՞տ: Հասկանում եմ:

- Գնա հանգստացիր, տեր իմ, և խորհիր:

Տաղավարում արդեն կիսախավար էր, որը խանգարում էր տեսնել խոսողների դեմքերը: Արքայազնը առանձնացավ իր ննջարանում և սկսեց վերապրել իր պատանդության անցած տարիները:

Տիգրիսի ափին, արքայական պալատից կես հրասախ հարավ, սրբատաշ քարերից կերտված դղյակի առաջին հարկում պարթևաց արքայից - արքան արքայազնի համար հատկացրել էր մի սենյակ, որն առանձին մուտք ուներ և բոլորովին կտրված էր դղյակի մյուս հարկաբաժիններից: Դղյակի առաջին հարկը զբաղեցրել էր արքայից - արքայի տիկնունու ներքինապետը: Այստեղ քնում էին տասի չափ զորականներ, որոնք ենթարկվում էին ներքինապետին: Երկրորդ հարկում ապրում էին արքայից - արքայի երեսուն հարճերը: Միհրդատ Մեծի ավագ կինը երկու տարի շարունակ տիկնունում այնպիսի դավեր սարքեց, որ համարյա ամեն ամիս մի հարճ էր սպանվում: Այն հարճը, որի մոտ գիշերով լինում էր Միհրդատը, առավոտյան անշնչացած հայտնվում էր տիկնունու պարտեզում: Արքայից -

արքան ստիպված իր հարճերին առանձնացրել էր պալատից և տեղավորել այս դղյակում: Տիկնունունին երկատվել էր, և ապարանքում մնացել էին տիկնաց – տիկինն ու տասնհինգ ազնվազարմ տիկիններ:

Առաջին օրերին արքայազն Տիգրանը չգիտեր դղյակի մյուս բնակիչների մասին:

Մի մատռվակ ամեն օր, առավոտյան ու կեսօրին, դղյակի մյուս բաժնից ուտելեղեն էր բերում և ձեռքերով խոսելով արքայազնի հետ, շտապ հեռանում: Դրսում Տիգրանը դիտում էր դղյակի պարսպապատ բակի դեմ - դիմաց կանգնած երկու պահակներին, որոնք աջ ձեռքով բռնած երկաթակոթ տեգերը՝ արձանացել էին տեղերում:

Ուրեմն չի կարելի դուրս գալ, ահա թե ինչ բան է պատանդը, - անցնում է արքայազնի մտքով:

Միհրդատը կարող է զիջել ինձ հորս, եթե պարգև ստանա ողջ Հայոց աշխարհը:

Մի քանի օր հետո նրա մոտ եկավ արքունիքի սպասավորներից մեկը, արքայազնին խոր գլուխ տվեց և հորջորջեց հայերեն.

- Ծանոթանանք, իմ անունը Սանատրուկ է, շահնշահի հրամանով քեզ հետ պետք է պարապեմ պարթևերեն: Ամեն օր Սանատրուկը գալիս էր արքայազնի մոտ ու պարապում:

Մի տարի հետո արքայազնը առաջին անգամ դուրս եկավ քաղաքը շրջագայելու: Նրան ուղեկցում էր Սանատրուկը:

Սանատրուկը նրան քաղաքի մասին բացատրություն էր տալիս: Բայց, երբ նա արքայազնին հասկացրեց, որ դղյակի մյուս բաժինների իր հարևանները արքայից - արքայի հարճերն են, Տիգրանի դեմքը քրտնեց, ուրեմն, ես արքայից - արքայի աչքում մի հարճի կշիռ ունեմ, ինչ է որ ինձ բնակեցրել է հարճերի կողքին:

Նրա սրտում ծնունդ առավ մի նոր զգացում: Երբևէ վրեժխնդիր լինել Միհրդատից, պարթևներից: Նրա մտքերը սլացան հեռու: Երբ ինքը գահ բարձրանա, հարյուր հազար հայկական այրուձիով առաջին հերթին կարշավի պարթևների դեմ և ծունկի կբերի նրանց:

Հետո կարշավի դեպի Անտիոք, կգրավի Մեծ ծովի ափերը: Հռոմը կդողա հայկական հզորությունից և ետ կքաշվի փոքրասիական իր պրովինցիաներից:

Բայց չէ՞ որ այժմ ինքը պատանդ է, որը քառապատիկ վատ է, քան գերի լինելը: Իր ազատությունը կախված է հոր՝ Տիգրան արքայի վախճանից: Բայց գուցե անվախճան մնա հայրը, գուցե աստվածները մի քանի դար կյանք շնորհեն նրան: Եվ ի՞նչ օրենք է սա: Մեկի ազատությունը պայմանավորում են մյուսի մահով: Խեղճ արքայազնամայր, երևի հիմա դու խնդրում ես աստվածներին, որ թագավոր ամուսինդ շուտ մահանա, միայն թե հարազատ որդուդ տեսնես օտար աշխարհից ազատված: Իսկ հա՞յրը:

Հայրը հիմա չկա, բայց ինքը պատանդ է: Խորամանկում է Միհրդատ Մեծը: Յոթանասուն հովիտ և յոթ հազար պա՞յտ: Երևի ձգտում է իր կամքը թելադրել ինձ, ապահովում է իր երկրի արևմտյան սահմանը: Հետո՞, հետո ինչ: Երազում է Հայոց աշխարհում է՞լ ինձ պատանդ պահել: Գուցե սխալվեցի ես, որ մերժեցի կնության առնել Միհրդատի գեղեցկուհի դստերը:

Գուցե այդ դեպքում Միհրդատը ինձ համարեր իր ազգականը, և ամենևին խոսք չլիներ յոթանասուն հովտի մասին: Բայց ինչպե՞ս կարող էի ամուսնանալ պարթևուհու հետ: Չէ՞ որ ինձ պատանդ է վերցրել նրա հայրը: Չէ՞ որ ես առաջին Արտաշեսյան պայազատն եմ, որ պատանդ մականունը ստացա: Հայքում իմ անունը չեն տալիս, պատանդ են կոչում: Ոչ ես չէի կարող իմ արյունը խառնել պարթևականին:

Դա կմթագներ Հայոց աշխարհը հզոր և ինքնուրույն տեսնելու իմ երեզանքը: Յոթանասուն հովիտը կարելի է ետ նվաճել, բայց պարթևուհուց ծնված հայկազուն պայազատից չես կարող քամել պարթևական արյունը: Ներեցեք ինձ, աստվածներդ Հայոց, որ ես ստիպված եմ յոթանասուն հովիտ զիջել Միհրդատին: Դաժան մի լինեք իմ հանդեպ, մտածելով, թե ես հորս հիշատակը հավերժացնում եմ պարթևներին հայկական գավառներ նվիրաբերելով: Դուք շատ ուշ եք ձեռք մեկնում ինձ: Չէ՞ որ ես հիմա քառասունհինգ տարեկան եմ: Ես շատ եմ ուշացել: Մեծ Ալեքսանդրն աշխարհում երեսուներեք տարի ապրեց: Իսկ դուք իմ ձեռքին սուր եք դնում հիմա: Ծաղրո՞ւմ եք ինձ, ինչ է: Էլ ինչպե՞ս կարող եմ հասնել մեծերի հետևից: Ի՞նչ, նախապատրաստել եք քառասունհինգ տարի՞: Այդ ինչքա՞ն կյանք եք շնորհել ինձ, որ քառասունհինգը հատկացրիք իմ կամքը կոփելուն: Լռում եք: Իսկ ինչո՞ւ եք լռում: Կարող եմ նվաճել ամբողջ աշխա՞րհը; Օ, ոչ, ես հայկազուն եմ, աշխարհն ինձ պետք չէ, օգնեցեք միայն ապահով դարձնել Հայոց աշխարհը:

Տիգրանը շփեց ճակատը, ոտքի ելավ ու քայլեց դեպի դուռը: Նա ամուր գոցեց սենյակի դռան սողնակը և նորից մոտեցավ թախտին: Բարձի տակից հանեց Մեծ Արտաշեսի պատգամները տարեգրող հաստափոր մատյանը, շրջեց առաջին մագաղաթն ու սկսեց բարձրաձայն կարդալ.

՝Եվ դու, պայազադտ հայկազուն, որ բախտ կունենաս թերթելու մատյանն այս, գիտցիր, որ հայրենիքը քո բաժանված է երեք մասի:

Ես ջանացի անդուլ, որ Ծոփքը միանա մեր բնաշխարհին, բայց Զարեհը ցանկանում էր իր գլխին ունենալ այնպիսի թագ, ինչպիսին իմ գլխին է:

Եվ կռիվ տվի Զարեհի դեմ, բայց Գամիրքը օգնեց Զարեհին, և իմ այրուձին նահանջեց:

Ես կռիվ տվի Պոնտոսի սահմանակից Փոքր Հայքի դեմ, բայց այստեղ էլ մեր արյունակիցները նախնտրեցին մնալ Պոնտոսից կախյալ վիճակում, քան մտնել հայրենիքի գիրկը:

Չհաջողվեց ինձ, ով դու, պայազատդ հայկազուն, միավորել հայոց ծվատված հողերը: Փորձիր այդ բանն անել ինքդ, և եթե քեզ էլ չհաջողվի, ավանդիր քո որդոց նույնը: Կկորչի աշխարհի վրա հայ ազգը, եթե ի մի չձուլվի, կկորչեն հայրենախոս մեր լեզուն ու երգը, եթե հայերը շարունակեն անջատված մնալ իրարից:

Հայը շնորհաշատ է: Աստվածները նրան՝ այս հին աշխարհի հին բնակչին, պատվիրել են քայլել դեպի հեռավոր գալիքները, իր հարևան ազգերի հետ դառնալ հավերժության ուղեկիցը: Նա քաջայր է և կռվի մեջ ետ չի մնա ոչ պարթևից, ոչ հելլենից: Նա գիտե երկնահաս տաճարներ կառուցել և շարժել հին ու նոր աստվածների նախանձը: Նա կարող է անտաշ քարի վրա այնպես գեղազարդել աստվածներին, որ վերջիններս պապանձվեն զոհունակությունից: Հայը կարող է ժայռը դնել ժայռի գլխին, ուսել հսկա գերանը և ելնել

Մասիսն ի վեր: Նա կարող է նաև ուսել ամենածանր տառապանքը, հելլենի ու պարթևի հետ դուրս գալ մրցասպարեզ և հաղթել:

Եվ դու, պայազատ հայկազուն, մի թողնիր, որ հայն իր շնորհները շաղ տա այս աշխարհի բոլոր անկյուններում:

Օտար երկրում հայը թեկուզ կառուցի ամենաշքեղ պալատը, միևնույն է, այդ երկրի սերունդները չեն տա նրա անունը: Բայց թե նա հայրենի հողում թողնի թեկուզ մի սրբատաշ քար, դարերի փոշին չի կարող նստել նրա անվան վրա:

Հայը օտարի համար չափազանց լավ հարևան է: Բայց դու, պայազատ հայկազուն, սովորեցրու հային, որ նա միայն լավ հարևան լինի, որ հարևանին դուր գալու համար չհանդերձափոխվի նրա պես, խոսի նրա լեզվով, ամեն ինչում աշխատի նմանվել նրան: Այս մեծ աշխարհում մարդու ամենամեծ արատը նմանվելու գայթակղությունն է: Ով աշխատում է նմանվել նա կորցնում է իրեն":

Արքայազնը հայացքը կտրեց մագաղաթից և գլուխն առավ ափերի մեջ:

Նա նորից ձեռքը տարավ դեպի մատյանը և բացեց հաջորդ մագաղաթը: Հուշել է Մեծն Արտաշեսը և արքայական մատենագիրը ողորկ մագաղաթի վրա հունատառերով քերթել է նրա մտքերը:

"Իմ կյանքն անցավ կռիվների մեջ, ով դու, պայազատ հայկազուն: Տեսա ես թշնամուն առերես, հարվածեցի նրան, որ մաքրեմ մեր տունը, բայց մի քանի սենյակներում նա թաք կեցավ: Ես գիտեմ, նա նորից կգրոհի: Եվ դու մի սպասիր, թե կգրոհեն միայն մի կողմից: Թշնամին կարող է Հայոց աշխարհի վրա հարձակվել բոլոր կողմերից, քանզի պարսպապատ չէ այն":

Արքայազն Տիգրանը շուռ տվեց հաջորդ մագաղաթը, հայացքը դարձրեց փոքրիկ սենյակը հազիվ լուսավորող ճրագին ու սկսեց երազել:

- Թող վկա լինեն հայոց բոլոր աստվածները, ես երդվում եմ ի կատար ածել իմ մեծագործ պապի սուրբ պատգամները:

Ներիր ինձ, պապ, Մեծդ Արտաշեսյան, ես ստիպված եմ հիմա յոթանասուն հովիտ զիջել պարթևին, բայց հենց որ վերադառնամ Հայոց աշխարհը՝ գիտեմ, թե ինչ լեզվով կխոսեմ պարթևի հետ:

Մի պահ լռեց ու նորից շարունակեց.

- Դու լսո՞ւմ ես, պապ: Չէ, Հայոց աշխարհը այսպես չի մնա: Ես չեմ հանդուրժի, հայկազյան տան սահմաններում հրամաններ արձակեն պարթևն ու հելլենը: Թող նրանք նստեն իրենց տներում, հանգիստ պահեն իրենց և աչք չտնկեն մեր լեռների վրա: Դու լսում ես, պապ:

Լեռներ ու հայոց լեզու, ուրիշ էլ ի՞նչ է ավանդել Հայկ նահապետը: Կորցնես լեռները՝ կկորչի լեզուն, կորցնես լեզուն՝ այդ լեռներն աչքիդ հարթություններ կերևան: Ես կպահեմ մեր լեռների պես հպարտ ու անկոտրում հայոց լեզուն, ես կպահեմ հայոց լեզվի պես հպարտ ու անկոտրում մեր լեռները:

Գիշերվա պես երկարեցին Տիգրանի խորհրդածությունները:

Լուսադեմին արքայազնը լսեց դռան թխթխկոց: Նա ետ տարավ սողնակը: Պարթևի համազգեստով շեմին կանգնել էր զինավառ մի երիտասարդ: Տիգրանը ներս հրավիրեց նրան:

- Դու գունատ ես երևում, - հայացքը չկտրելով երիտասարդի դեմքից, ասաց Տիգրանը:

- Դավադիրները մտադրվել են քո շքախմբի առաջը կտրել Խուլփի ափին:

- Ո՞վ պետք է նրանց տեղյակ պահի, թե երբ եմ ես դուրս գալու Տիզբոնից:

- Տիզբոնում գտնվող նրանց լրտեսները:

- Իսկ եթե ես Արտաշատ վերադառնամ Կապուտանի ափով:

- Բայց հայոց արքունիքն ու բանակը քեզ սպասում են Աղձնիքում: Տիզբոնից Աղձնիք կարելի է հասնել մի քանի օրում, իսկ Արտաշատի վրայով…

- Այդպես են համոզված նաև դավադիրները:

- Նրանք չեն էլ կասկածում, թե դու ուրիշ երթուղի կնտրես:

- Եվ նրանք չեն սխալվում:

- Ի՞նչ, դու որոշել ես ընդառաջ գնալ վտանգին:

- Այո:

- Այդ դեպքում դու ստիպված կլինես Միհրդատից պահանջել, որ մի ամբողջ զորամաս նա ուղեկից դարձնի քո շքախմբին:

- Ոչ, Միհրդատ Մեծին ես չեմ հայտնի այդ մասին: Այս նամակը դու պետք է հասցնես եղբորս՝ արքայազն Գուրին: Ես Տիզբոնից դուրս կգամ այն ժամանակ, երբ դու իմաց տաս, որ Գուրն ստացել է նամակը:

Զինավառ երիտասարդը ժպտաց, գլխով համաձայնության նշան արեց և, հրաժեշտ տալով արքայազնին, դուրս եկավ նրա ննջարանից:

Երկու օր հետո պալատում Միհրդատ Մեծը արքայական հրովարտակով ազդարարեց Տիգրանի պատանդությունից ազատվելը և Հայոց արքա դառնալը: Տիգրանն ստորագրեց այն պայմանագիրը, որով նա հրաժարվում էր Կապուտան ծովակի շրջակա աշխարհի յոթանասուն հովտից: Միհրդատ Մեծին յոթ հազար պայտ հանձնելու ժամկետ սահմանվեց տասը տարի:

Արքայից - արքան խոստացավ իր թիկնապահ զորամասերից մեկը տալ, որը պետք է ուղեկցեր նրան դեպի Հայոց աշխարհը:

Գահաժառանգը իր շքախմբով և պարթևաց թիկնապահ զորքով որոշեց Տիզբոնից դուրս գալ և դեպի հայրենիք ուղևորվել այն ճանապարհով, որն ուղիղ տանում էր Աղձնիք, և որտեղ նրան սպասում էր Գուրը:

Մի քանի օր հետո, երբ արքայազն Տիգրանը ճամփա ընկավ դեպի Հայոց աշխարհ, Արշամը, ոտքը ձիու ասպանդակին դնելով, մտքում ասաց. "Առյուծի ձագը փրկվեց գայլի ճանկերից":

ՎԱՅԿՈՒՆ

Բերդանման լեռնագագաթներ ունի Սիվանը: Այդ գագաթներից մեկն իր անմատչելի բոլորքի շնորհիվ շատ հնուց դարձել է բերդ: Մարդիկ փորել են լեռան կուրծքը, անձավներ բացել տարբեր կողմերից, հետո միացնելով իրար դարձրել են մի քանի հարկաբաժիններ ունեցող լեռնային ամրոց: Բնությունը լեռ է քանդակել, մարդն էլ այդ վանդակի ներսում՝ ապաստարան:

Սիվանի լեռնապարը նման է կիսաշրջանաձև ձգվող բեղերի: Եվ ահա կառուցելով այդ բերդը, մարդիկ այն նմանեցրել են բնական բեղի ու անունը դրել Բնաբեղ:

Այս խուլ լեռնաշխարհում բերդի բնակիչները չեն հանդիպում հակառակորդի, իսկ հակառակորդն էլ դժվար թե գտնի բերդի տեղը:

Ասում են Բնաբեղը կառուցվել է Զարեհ արքայի ժամանակ, որն այստեղ պահում է իր արքունական գանձերի մի մասը: Զարեհի թոռը՝ Ծոփքի հայոց արքա Արտանը, կարծես մոռացել էր, որ իր թագավորության մեջ կա նաև Բնաբեղ:

Հայոց աշխարհի համար խոշոր իրադարձություններով, անակնկալ դեպքերով բեռնավորված ժամանակներ էին: Շուրջ մի հարյուրամյակ առաջ Սելեկյանների Մագնեզիայի ճակատամարտում կրած պարտությունից հետո կիսանկախ և ուրիշների հպարտությունն ընդունած հայկական իշխանությունները ըմբոստացան և ստեղծեցին ինքնուրույն թագավորություններ: Դրանցից երկուսը՝ Մեծ Հայքն ու Ծոփքը, զորեղ գտնվեցին ինքնուրույն շնչելու, իսկ Փոքր Հայքը մասամբ կուլ գնաց Պոնտոսին, մասամբ էլ ուրիշներին: Բայց երկու հարևան հայկական թագավորություններն էլ չէին հաշտվում իրար հետ: Մեծ Հայքը չէր հանդուրժում, որ իր կողքին հարուստ Ծոփքը ինքնուրույնություն ունենա, գրոհում էր հարևանի վրա և առանց հաղթելու ու պարտվելու հանգիստ առնում մի քանի տարի, հետո երկրորդում իր հարձակումը: Ծոփքի թագավորը, ավելի շուտ իր թագի, քան Ծոփքի մասին հոգալով, արյունակից ու հարևան Մեծ Հայքից պաշտպանվելու համար դիմում էր իր արևմտյան հարևանի՝ Գամիրքի օգնությանը:

Ծոփքը փոքր էր Մեծ Հայքից, փոքր էր մոտ տասն անգամ, բայց հարուստ էր. փարթամ արոտավայրեր, մրգատու այգիներ ուներ նա և հիանալի վարելահողեր, իսկ Բնաբեղից քսան հրասախ հարավ՝ ոսկու հանքեր: Նա վաղուց կնվաճվեր Մեծ Հայքի կողմից, եթե Հռոմը չհիշեր Ծոփքի գոյությունը:

Դեպի արևելք ձգվող իր հսկայական տիրապետությունների սահման Գամիրքից Հռոմը հետևում էր հայկական երկու թագավորությունների լարված հարաբերությունների ընթացքին, իսկ հիմա սկսեց անձամբ խառնվել հայոց գործերին:

Ուշ աշուն էր: Բնաբեղի քարանձանաձև սենյակներից մեկում, քարե հատակի վրա անցուդարձ էր անում մռայլ խոհերով տարված սեպուհ Վահանը: Սենյակի դուռը բախեցին,

ներս մտավ հաղթամարմին մի զինվորական: Արտան արքայի զորապետն էր՝ նահապետ Միլիտոս Վարդունին:

- Լսիր, Սեպուհ, հիմա խառն ժամանակներ են Տիգրան արքան վախճանվել է, և Մեծ Հայքը մնացել է գահաթափուր: Տիզբոնից վաղը կժամանի արքայազն Տիգրանը: Ինքդ գիտես, որ այդ Արտաշեսյանները բոլորովին մեզ հանգիստ չեն տալիս: Չի տա նաև այդ նոր Տիգրանը, որի մասին ասում են, որ քաջաբազուկ այր է: Արտան արքան որոշել է վերջ տալ Արտաշեսյաններին: Իսկ նրանցից այժմ մնացել են երկուսը՝ մեկը արքայազն Տիգրանը, իսկ մյուսը՝ խենթ Գուրը, որը նույնիսկ արքայազն տիտղոսի արժանի չէ, որովհետև Մեծ Հայքում նրան համարում են ամենաանճարակ երիտասարդը: Մեր բախտը բերում է: Արքայազն Տիգրանը Տիզբոնից գալիս է այս ուղղությամբ: Աղձնիքում նրան սպասում են Տիգրան արքայի հուղարկավորության թափորն ու հայկական այրուձին:

Մենք պետք է այնպես գործենք, որ արքայազն Տիգրանը չտեսնի ոչ հայոց այրուձին, ոչ էլ իրեն սպասող գահը:

- Դա սարսափելի է, տեր զորապետ, թագավորասպաններ ենք մենք, ինչ է:

- Բայց մի մոռացիր, որ դրանով ողջ Հայոց աշխարհը կանցնի Զարեհյանների թագի ներքո, - զորապետ Վարդանին կեղծ ժպտաց ու շարունակեց, - Արտան արքան հայտնել է, որ գործը հաջողությամբ վերջանալու դեպքում սեպուհ Վահանը անհապաղ կստանա Մեծ Հայքից սեփական կալվածքներ և այն էլ իր ընտրությամբ:

- Համենայն դեպս, սարսափելի է այդ մասին մտածել: Մեր Փոքր Ծոփքը դավադիր է լինում Մեծ Հայքին, արդյոք չե՞ն ծիծաղի մեր վրա Միջերկրայք:

- Ընդհակառակը, սեպուհ, մեզ հետ է Գամիրքը, մեզ հետ է Հռոմը:

- Եվ նույնիսկ Հռո՞մը:

- Այո, լուսադեմին այստեղ կլինի ծովակալ Վայկունը:

- Ծովակա՞լ:

- Ինչո՞ւ զարմացար:

- Ի՞նչ գործ ունի ծովակալը մեր լեռներում:

Դուռը բախեցին: Զորապետ Վարդունին, առանց պատասխանելու սեպուհին, գնաց դուռը բացելու: Ներս մտավ պահապաններից մեկը:

- Տեր զորապետ, - ասաց պահապանը, - Տիզբոնից սուրհանդակ է եկել:

- Կանչել ներս, - հրամայեց զորապետը:

Քիչ անց սենյակ մտավ հոգնատանջ մի հեծյալ: Երևում է, որ նա շտապել է:

- Արծիվը պոկվեց վանդակից, - ծանր արտաշնչելով ասաց հեծյալը:

- Նշանաբանը ճիշտ ասացիր, - պատասխանեց զորապետ Վարդունին և, հեծյալին հրավիրելով նստել ասաց. - դե պատմիր:

- Արքայազն Տիգրանը մի քանի հայ մարդկանցով և պարթևաց թիկնապահ ջոկատով դուրս է եկել Տիզբոնից և ուղևորվել դեպի Աղձնիք:

- Դու ո՞ր ճանապարհով եկար:

- Նույն արքայական պողոտայով, որով հիմա Աղձնիքին է մոտենում արքայազնի շքախումբը:

- Մոտենում է Աղձնիքի՞ն:

- Այո, ես շրջանցեցի նրանց, և ոչ ոք չտեսավ ինձ:

- Թիկնապահ ջոկատում քանի՞ զորական կլիներ:

- Երեք հարյուրից ոչ ավելի:

- Տեր զորապետ, դու խոսում էիր ինչ-որ ծովակալի մասին:

- Ա, Վայկունը: Այս գործում ամենամեծ դերը պետք է կատարի Վայկունը: Նա և ծովակալ է, և քաջ մարդ:

- Այդ էլ հանելուկ է երևում, հայկական զորքը պետք է գլխավորի ինչ-որ ծովահեն:

Մեծ ծովի ավազանում անթաց տիրակալ է Վայկունը, որ նավեր կարող է ճանկել լռելյայն:

Տարիներ առաջ հռոմեական բանակի լեգիոնի հարյուրապետ էր Վայկունը և պատրաստվում էր ամուսնանալ գեղեցկուհի Կլոդիայի հետ: Բայց մի ծերակուտական խնջույքում վիրավորեց Վայկունին:

"Հարյուրապետ, ասում են՝ դու երազում ես ամուսնանալ չքնաղատես Կլոդիայի հետ. ես զարմանում եմ, որ այդքան երկար ես մեկնում քո ոտքերը: Քո ամայի գրպանները, որտեղ մի սեստեռցը մոլորյալ հյուր է լինում, հնարավորություն չեն տա, որ դու սեփական բաղնիք կառուցես, բայց ահա աչքդ չես հեռացնում սիգաճեմ կանանց սրունքներից": Վայկունը հիմա աղոտ է հիշում, թե ինչ կատարվեց իր հետ խնջույքի սեղանի վրա: Նրան ավելի շատ խոցեց Կլոդիայի ամբարտավան քմծիծաղը, որն ասես վավերացնում էր ծերակուտարանի խոսքերը: Նա առանց աղմուկի հեռացավ խնջույքից, և Հռոմում նրան ոչ ոք չտեսավ: Նրա հայրենիքը դարձավ Մեծ ծովը: Երազում էր մինչև քառասուն տարեկան դառնալը կուտակել չորս հազար տաղանդ, որով նա մի այնպիսի վարձու բանակ ձեռք կբերեր, որից կդողար Հռոմի ծերակույտը: Իսկ Կլոդիային, ում հետ էլ ամուսնացած լիներ և ինչպիսի տիտղոս էլ ունենար, Վայկունը կդարձներ իր ապագա գեղեցկուհի կնոջ աղախինը, և Հռոմի յոթ բլուրների վրա կկառուցի յոթ դաստակերտ, յուրաքանչյուրը տրամադրելով իր սեգաճեմ կանանցից մեկին: Ինչ է, մի՞թե յոթ կինը շատ է: Պարթև Արշակունիները դրա տասնապատիկն են պահում:

Վայկունը մի ամիս առաջ զրկվեց հիսուն սեստերցից: Հերթական գրոհի ժամանակ միակ ավարը դուրս եկավ մի ազնվազարմ պառաված տիկին: Վերջինս տվեց Սուլլայի անունը: Եվ ահա ստրկավաճառանոց կղզու վրա Վայկունը հանդիպեց Սուլլային ու առանց մի գրոշի

զիջեց նրան ազնվազարմ տիկնոջը: Զիջեց, որովհետև Սուլլան հարգանքով վերաբերվեց Վայկունին և նրա ձեռքը տվեց շահավետ մի ձեռնարկի բանալի:

Հայոց աշխարհում ինչ-որ թագավոր է վախճանվել, մի ուրիշ պստիկ հայոց թագավոր ուզում է ինքը տեր դառնալ մահացած թագավորի աշխարհին և օգնության խիստ կարիք է զգում: Այ թե որտեղ է պետք գալիս Վայկունը: Սուլլան նրան ասաց, որ գործը կարելի է գլուխ բերել և ստանալ մինչև հազար տաղանդ: Վայկունը հո երեխա չէ, որ գլուխ չբերի: Ինչ-ինչ պիտի մի արքայազնի սպանել, որ պստիկ թագավորը մեծ թագ դնի գլխին: Դա հիանալի գործ է: Վայկունը պատրաստ է բոլոր հայ թագավորներին գլխատել:

Այդ հայերն էլ զարմանալի մարդիկ են, անպայման ուզում են թագավոր լինել: Վայկունը հիմա նրանց դաս կտա: Պիտի սովորեցնել նրանց, որ մի թագի համար մի գլուխ է պետք, ոչ թե երկուսը կամ երեքը:

Սուլլայի գաղտնի նամակը նա բերեց հանձնեց Գամիրքի թագավոր Արիոբարզան Հռոմեասերին: Կարճատև զրույցի ժամանակ Վայկունը գլխի ընկավ, որ այս Հռոմեասերը հայոց պստիկ թագավոր Արտանի ջերմ բարեկամն է: Մի փոքրիկ հեծելագունդ էլ Գամիրքը տվեց, և Վայկունը շտապ հասավ Ծոփաց աշխարհի քաղաքամայր Արշամաշատ: Բայց այստեղ նրան հայտնեցին, որ հայոց թագավոր Արտանը մեկնել է իր երկրի մյուս քաղաքամայր Երկաթակերտը: Տարօրինակ է, մի թիզ հողի վրա երկու քաղաքամայր են կառուցել: Այդքան գեղեցիկ քաղաքների նա չէր հանդիպել Միջերկրայքում:

Վայկունի հանդերձը Մեծ ծովի ավազանի տարբեր ազգերի հանդերձների հավաքածու էր:

Ճերմակ, հաստ կաշվից կարված սրնքակարները նա բռնագրավել էր իսպանացիներից, ներքևի երկար տոգան հելլեններից, իսկ նրա վրայից հագած երկրորդ կարճ տոգան՝ կիպրոսցիներից, կողքից կախված երեք դաշույններից մեկը, որի պատյանն ամբողջովին ոսկյա է՝ մի հրեա վաճառականից, իսկ երրորդը՝ մի կելտացի մսագործից: Հո այստեղ էլ ծով չէ, որ յուրաքանչյուր գրոհի համար փոխես հանդերձդ որպեսզի չճանաչեն քեզ:

Ծոփաց աշխարհի զորապետ Միլիտոս Վարդունին Բնաբեղի իր առանձնասենյակում Վայկունին հանդիպեց լուսադեմին: Թիկնապահ ծովահեններից մեկը ստանձնեց թարգմանչի պաշտոնը:

- Ինչպիսի՞ն է հակառակորդի ուժերի տեղաբաշխումը, - հարցրեց Վայկունը:

- Մեծ Հայքի տասը հազարանոց այրուձին արքայազն Տիգրանին սպասում է Խուլփ գետի մոտ, որ այստեղից հեռու է քառասուն հրասախ:

- Իսկ ինչո՞ւ է սպասում:

- Հարգարժան ծովակալ, երկու ամիս առաջ Մեծ Հայքում վախճանվել է Տիգրան արքան: Հնավանդ սովորությամբ այդ երկրի արքաների աճյունները ամփոփվում են Տարոնի գավառում: Իսկ Տարոնը մոտիկ է այստեղից: Եվ ահա հայոց այրուձին իր հանգուցյալ արքային ուղեկցել է այստեղ, բայց մինչև հիմա չի շարժվել տեղից, որովհետև սպասում է արքայազն Տիգրանին:

- Իսկ այդ այրուձիու մասին դու որտեղի՞ց գիտես:

- Մեր լրտեսները մասնակցել են հուղարկավորությանը և լսել այն ամենը, ինչ պետք է:

- Իսկ արքայազն Տիգրա՞նը:

- Նա Տիզբոնից գալիս է արքայական պողոտայով: Երևի արդեն մոտեցել է Ամիդին, մենք վաղը կեսօրին կարող ենք փակել նրա ճանապարհը:

- Իսկ մարտի համար ամեն ինչ պատրա՞ստ է:

- Այո, միայն սպասում ենք քեզ, հարգարժան ծովակալ:

Հայկական զորքերը բոլոր կողմերից շրջապատեցին այն բարձունքները, որտեղ իրենց թաքստոցներից կատաղաբար կռվում էին Վայկունի ծովահենները:

Արքայազն Տիգրանին հեռացրին մարտի դաշտից:

- Եղբայրս, Վահագնը վկա, ես լավ հասա, - ցնծության մեջ եղբոր ուսերը թափ տալով ասում էր Գուրը: Գիշերը վրա էր հասնում, և զորքը պետք է մնար տափարակում: Ասպետ Բագարատի հրամանով յուրաքանչյուր տասն քայլի վրա ժամապահներ նշանակվեցին և ավելի խիստ շղթայով օղակեցին լեռնալանջերը:

Լուսադեմին հայոց բանակը վերսկսեց գրոհը: Խիտ մարտաշարքերով հայ զորականները սանրում էին լեռնալանջերը և կամաց-կամաց բարձրանում վերև: Սպառվում էին արդեն ծովահենների վերջին նետերը: Բայց ամենամեծ ելուզակը շարունակում էր ճակատել մոլեգնաբար: Հանկարծ փոքրիկ ժայռի հետևից նրա վրա թափվեցին մի քանի զինվորներ: Նրա ձեռքերն իսկույն կապոտեցին: Մարտը դադարեց: Քիչ հետո կապկպված Վայկունը կանգնած էր արքայազն Տիգրանի առջև:

- Դեհ, խոսիր, ելուզակ, ո՞վ ես դու:

- Ես ոչինչ չգիտեմ, ես մի խեղճ մարդ եմ, ինձ զոռով են բերել այստեղ, - կմկմում էր Վայկունը:

- Վճռիր, ասպետ, սրա բախտը, նա քո գերին է, - դիմեց Բագարատին Տիգրանը:

- Նա ելուզակ է, արքա, որ փողի համար արքա սպանելու հանձնարարություն է ստանձնել, մահ Վայկունին:

Վայկունին գլխատեցին այն լեռան վրա, որտեղից նա կռվում էր արքայազն Տիգրանի շքախմբի դեմ: Այդ օրվանից լեռն ստացավ Վայկուն անունը, իսկ Հայոց աշխարհում այնուհետև ելուզակներին սկսեցին կոչել վայկուն:

ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձմեռը մարդկանց ամենից շատ կարող է պատժել Երկաթի երկրում, Հայոց լեռնաշխարհում խենթություններ անելու համար ձմեռն այստեղ՝ Աղձնիքում է կատարում իր խելացնոր վարժությունները:

Խուլփի գետի ձախ ափին գտնվող հնամյա բերդի խցերում և ընդարձակ ու մեծ հյուրակայանում ցրտից կուչ էր եկել հայոց արքունիքը: Հանգուցյալ արքայի հուղարկավորությանը մասնակցելու և արքայազն Տիգրանին դիմավորելու համար Արտաշատից Աշտիշատ, իսկ Աշտիշատից էլ Խուլփի ափերն են եկել ոչ միայն արքայական տունը, այլև երկրի համարյա բոլոր գավառների նահապետները: Բերդի աշտարակամերձ առանձնասենյակում, հսկա խարույկի մոտ, նստել էր տիկնաց-տիկին Երանուհին:

Նահապետներն իրենց զինավառ գնդերի հետ տեղավորվել էին դաշտային վրաններում, իսկ հյուրակայանում համարյա իրար վրա թափված էին ամբողջովին սև հագած ձայնարկու կույսերն ու ողբացող կանայք, որոնք հուղարկավերության ժամանակ սպառել էին իրենց ձայները և ակամայից դարձել լռակյացներ:

Բերդի ստորին սենյակներից մեկում նստել էր Նախճավանի նահապետ Փայլակ Մարդպետունին: Նրա կողքին՝ նահապետի դուստր, գեղեցկուհի Համասփյուռը ձեռքերը կարկառել էր խարույկին: Երկրորդ տարին է, ինչ Փայլակը Նախճավանից փոխադրվել է արքունիք: Նրանց աղխի բոլոր տղամարդիկ ծառայում էին Արտաշեսյանների մոտ, չար աչքից հեռու պահելու համար հսկում էին տիկնունուն, թիկնապահում արքային, խնամում թագաժառանգներին: Արտաշեսյանները նրանց հայր էին անվանում, որովհետև Մարդպետների աղխը նվաճել էր արքունիքի հանդեպ հայրական հոգատարություն տածելու մենաշնորհը:

Փայլակը չէր էլ մտածում, թե այս նոր արքան ինչպես կդիմավորի իրեն: Նա ուրիշ հոգսեր ուներ: Նրա դուստր Համասփյուռը դուր էր եկել տիկնաց-տիկին Երանուհուն: Արքունիքում արդեն գիտեին, որ Համասփյուռը պետք է դառնա արքայազն Տիգրանի առաջին կինը և ստանա տիկնանց-տիկնոջ շնորհումը: Հայրը չէր կասկածում, որ Համասփյուռը իր գեղեցկությամբ կգերի Տիգրանին:

Բոլորը սպասում էին տագնապով:

Քրմապետ Վահունին խորհում էր, թե ինչպես արդարացնի Տիզբոն մեկնած դեսպանախմբում իր բացակայությունը:

Կեսօրին Խուլփի մյուս ափից լսվեց սրնգահարների և թմբկահարների մարտանվագը: Արքայազն Տիգրանը գալիս էր: Առջևից՝ կռվի պատրաստ շարքերով՝ հայկական այրուձիու վաշտերն էին գալիս, հետո՝ արքայազնի շքախումբը և ապա՝ վերջապահ վաշտերը:

Գետն անցնելով և բերդի պարիսպներին մոտենալով՝ առաջապահ վաշտերի շարքերը երկատվեցին, և նժույգի վրա երևաց արքայազն Տիգրանը: Դիմավորողների հզոր բացականչությունը խլացրեց ձմեռային քամու ոռնոցը: Տիկնանց տիկին Երանուհին վազեց դեպի Տիգրանը: Պանդխտությունից վերադարձող որդին երկար ժամանակ չէր կարողանում ազատվել մոր գրկից: Գուրը ուրախությունից թփթփացնում էր ավագ եղբոր մեջքին:

Հենց այդ ժամանակ բերդի դիմացի բարձր բլուրի վրա բոցավառվեց մեծ ատրուշանը: Եվ մինչ արքայազն Տիգրանը մոր ու եղբոր հետ զրույցի էր բռնվել բերդի տաքուկ սենյակներից մեկում, ամբոխը հավաքվել էր ատրուշանի մոտ և սկսել տոնախմբությունը: Արհամարհելով ձմեռային ցուրտն ու քամին, նրանք շուրջպար էին բռնել հսկա խարույկի մոտ, երգում էին

խմբերով, ուրախանում նվերներ խոստանում աստվածներին՝ խնդրելով նրանց՝ երկար տարիների կյանք շնորհել հայոց նոր արքային:

Թագադրության ատրուշանը մի խենթ հրճվանքով էր լցրել բլրի վրա հավաքված բազմահազար մարդկանց սրտերը:

Հնօրյա սովորությամբ նրանք մեկիկ-մեկիկ մոտենում էին ատրուշանին, ձախ ձեռքը մեկնում բոցին, ցավացնելու չափ այրում և արտասովոր հանգստությամբ շարունակում մասնակցել տոնական զվարճություններին: Թագադրության ատրուշանից ձախ ձեռքի վրա այրուցք ստանալ- ասել է թե արժանանալ նոր թագավորի բարեհաճությանը: Իսկ այդպիսի ատրուշաններ հաճախակի չեն լինում Հայոց աշխարհում, և միշտ չէ, որ մարդկանց հաջողվում է նախօրոք իմանալ, թե երբ և որ բլրի վրա է վառվելու այն:

Բուքը խելահեղ ոռնոց արձակեց բլրի ետևից և Խուլփի շրջակայքը լցրեց գորշությամբ: Երեկոն իջավ հանկարծակի: Արքայամայր Երանուհին առանձնացավ Տիգրանի հետ:

- Մայր իմ, ժամն է, որ հանգստանաս նաև դու, - ասաց արքայազնը:

Տիկնանց - տիկնոջ թորշոմած դեմքի վրա երևաց մի դժգույն ժպիտ:

- Զավակս, ես իմ կյանքում երբեք այնքան հանգիստ չեմ եղել, որքան այժմ, այս պահին, երբ դու ինձ մոտ ես: Ես շատ բան ունեմ ասելու և չեմ կարող հետաձգել վաղվան:

- Ինչո՞ւ, մայր իմ:

- Տիգրան, միմյանց անմիջապես հաջորդող դժբախտու – թյունն ու ուրախությունը, սովորաբար արագացնում են մարդու մահը:

- Իմ գալուստը պետք է որ քո սրտից հեռու վաներ այդ մտքերը:

- Այնուամենայնիվ, զավակս, դու պետք է լսես ինձ հենց հիմա և խոստանաս կատարել իմ ցանկությունը:

- Ես կարծես կռահում եմ քո անելիքը, մայր… Քո վերջին նամակներում դու միայն Համասփյուռի մասին էիր գրում:

- Այո, զավակս, վաղը դու քո գլխին կդնես հորդ արքայական խույրը և կցանկանայի տեսնել հենց վաղը:

- Այդքան շո՞ւտ:

- Շուտ չէ, Տիգրան, քո քառասունն անց է, դու շատ ես ուշացել:

- Բայց չէ՞ որ ես նրան նույնիսկ չեմ տեսել, գուցե նա դուր չի գա ինձ:

- Նա գեղեցիկ է գեղեցիկների մեջ, և չեմ կարծում, որ պարթևաց աշխարհում մնալը փչացրած լինի քո ճաշակը:

- Իսկ ինչո՞ւ չի կարելի դա անել Արտաշատ մեկնելուց հետո:

- Դա կլինի քո առաջին սխալը, զավակս:

- Ինչո՞ւ, մայր:

- Դու գիտես, թե ինչ այրեր են Մարդպետները, իսկ նրանց մեջ Փայլակն ամենախելոքն ու զորեղն է, ամենաճարպիկն ու հեռատեսը:

- Հետո ինչ, մի՞թե Համասփյուռի հետ ամուսնության հետաձգումով ես նվաստացնում եմ Փայլակին կամ բոլոր Մարդպետներին:

- Դու ընդհատում ես, զավակս, և չես լսում մինչև վերջ: Գիտցիր, որ թակագիր այրերի թույլ կողմն է դա: Սովորիր, Տիգրան, դիմացինին ունկդրել համբերությամբ և նոր միայն վճիռներ արձակել: Հաճախ մարդը ճակատագրական սխալ է գործում այն ժամանակ, երբ չի կարողանում ստիպել իրեն մինչև վերջ լսելու խոսակցին:

Ես գիտեմ, որ դու բոլորից շատ ատում ես շատախոսությունը և սիրում ամեն ինչի մասին լսել ու պատմել լակոնացու պես:

Բայց աստվածները բոլորին չեն ընծայել դեպքերի մարգարիտները վիպելու շնորհը: Երբեմն զրուցակցի մոտ այդ մարգարիտը երևում է շատախոսության վերջաբանում: Եվ այդպես: Տիգրան, ես շարունակում եմ Մարդպետների մասին: Նրանք Ատաշեսյան տան այն սյուներից են, որոնց հետ միշտ պետք է բարեհաճ լինել: Համասփյուռին կնության առնելով, բոլոր Մարդպետներին և ամբողջ Նախճավանին կգրավես քո կողմը: Նախճավանցի զորականները արքայական բանակի սիրտն են, Մարդպետներն էլ՝ մեր հայր պաշտպանները: Վաղը հանդիսավոր օր է համայն աշխարհի համար: Որքան զգացված կլինի Փայլակը, եթե Համասփյուռը Տիկնանց-տիկնոջ խույրը դնի իր գլխին հենց վաղը, տերության բոլոր ծայրերից այստեղ հավաքված նահապետների ներկայությամբ:

- Իսկ ինքը՝ Համասփյուռը, ցանկանո՞ւմ է հենց վաղը ապարոշ դնել գլխին:

- Համասփյուռն արդեն արքայական տան անդամ է դարձել: Վերջին երեք տարում նա չի բաժանվում ինձնից: Նա ոչ միայն գեղեցիկ է, զավակս, այլև գեղեցիկ խելք ունի և իհարկե հիմա սրտատրոփ սպասում է, թե երբ պիտի հանդիպի քեզ: Եվ չնայած դա ձեր առաջին հանդիպումը կլինի, բայց նա կցանկանար, որ այլևս չբաժանվեիք իրարից:

- Իսկ ի՞նչ կասեն հայոց աստվածները

- Զավակս ձեր ամուսնությունը Աստղիկ39 աստվածուհու ցանկությունն է:

- Տիկնանց-տիկնոջ և արքայազնի զրույցը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Իսկ բլրի վրա, թագադրության ատրուշանի մոտ տոնահանդեսը գնալով բորբոքվում էր ժամ առ ժամ:

Հաջորդ օրվա առավոտյան արքայազնը մոր և Բագարատի ուղեկցությամբ դուրս եկավ ամբոխի առջև:

- Կեցցե հայոց արքա Տիգրանը, - բացականչեց ասպետ Բագարատը, որը դարձավ թագադրության արարողությունն սկսելու ազդանշան:

- Կեցցե մեր Տիգրան արքան, արձագանքեց ամբոխը: Արքունիքի հազարապետը ոսկեկար սփռոցների վրա մատուցեց նոր արքայի հանդերձը: Ականակապ խույրը ձեռքում բռնած՝ ասպետ Բագարատը դիմեց ամբոխին.

- Եվ դուք, որդիներդ Հայկի, աստվածների կամքով պարտ եք ճանաչել ձեր նոր թագավորին:

Ամբոխը արձագանքեց.

- Երկար կյանք մեր տիրոջը, Հայոց թագավոր Տիգրանին:

- Եվ դուք, որդիներդ Հայկի, խոստացեք, որ չեք խնայի ձեր կյանքը՝ ի փառս Հայոց աշխարհի, ի փառս Տիգրան արքայի:

- Մենք մեր կյանքը կտանք Հայոց աշխարհի ու Տիգրան արքայի համար:

- Եվ դուք, որդիներդ Հայկի, ձեզ համար աստվածային վճիռ պիտի համարեք մեր նոր արքայի խոսքը յուրաքանչյուր:

- Կեցցե մեր աստվածը, մեր Տիգրան արքան, - նորից արձագանքեց ամբոխը:

- Ով դու, մեծն և արին Արամազդ, դու ոսկեմայր և ոսկեծղի Անահիտ, և դու կորովաբաշխ Վահագն, և դուք բոլոր աստվածներդ Հայոց, ապավեն եղեք ձեր երկրային որդուն, օգնեցեք նրան՝ պահելու աշխարհը Հայոց, օժտեցեք նրան թշնամասաստ քաջությամբ և հայրենյաց բարի գործերը բազմացնելու իմաստությամբ:

- Փառք քեզ, Տիգրան, Հայոց տերության քաջաբազուկ արքա: Այնպես վարիր աշխարհը, որ թեթև լինեն հայկազուն սերունդների հոգսերը:

Արքունի գրիչը համակ լսողություն դարձած աշխատում էր հիշել ասպետի բոլոր խոսքերը, որ հետո արձանագրի թագավորաց մատյանում:

Անլռելի բացականչությունների տակ Բագարատը խույրը դնում է Տիգրանի գլխին:

Կես ոսկեհուռ ու կես սպիտակ պատմուճանով, արքայական ծիրանիով, ճամկավոր վարտիքով՝ արքան ելավ փոքրիկ պատվանդանի վրա: Աստղազարդ մարգարտաշար խույրը, որի վերին ճառագայթներին ագուցված էին գնդիկավոր ոսկիներ, ճակատին իջած արքայական ապարոշը նրա դեմքը դարձրել էին վսեմաշուք:

Պատվանդանի մոտ գտնվող՝ քամուց երերվող ծառի վրա երևաց քրմապետ Վահունին: Անահիտ աստվածուհու պատգամախոսը հայացքը երկնքին հառած, ծառի չոր ճյուղերից հազիվ կառչած, մենախոսեց մի փոքր ու ապա դիմեց ամբոխին.

- Ոսկեմայր և ոսկեծղի Անահիտը Տիգրան արքային շնորհում է այնքան տարիների կյանք, ինչքան հիմա ձյան փաթիլներն են իջնում երկնքից, նա խոստանում է այնքան հաջողություններ, որքան փաթիլներ են թափվում հիմա:

Ինչպես ոչ ոք չի կարող հաշվել ձյան փաթիլների թիվը, այնպես էլ ոչ ոք, ոչ մի թշնամի, որտեղից էլ նա հայտնվի, չի կարող չափել Տիգրան արքայի ուժը, որովհետև Տիգրանն անպարտելի է ու անհաղթ:

- Կեցցե անպարտելի ու անհաղթ Տիգրան արքան, - բացականչեց ամբոխը:

Պատվանդանի վրա արքան ուղղվեց տեղում: Ասպետ Բագարատը բարձրացրեց ձեռքը: Բացականչությունները լռեցին:

- Արք և տիկնայք Հայոց աշխարհի, - խոսեց Տիգրանը, - աստվածների կամքով ես ազատվեցի պատանդությունից և եկա իմ տունը Հայրենի: Մեզ շատ գործեր են սպասում: Աստվածների օգնությամբ Հայոց աշխարհը պիտի դառնա անմատչելի բերդ բոլոր թշնամիների դեմ: Անահիտ աստվածուհին ինձ հայտնել է, որ աստ, ուր թագ կապեցի ես, պիտի դառնա հայկական երկրի կենտրոնը:

Ամբոխը նորից արձագանքեց արքային:

Ապա սկսեցին պատվանդանի կողքով անցնել կերպասե ոսկեհուռ հանդերձներով զարդարված բոլոր նահապետները: Նրանք զենքերը վայր թողած, խոր գլուխ տալով անցնում էին արքայի առջևով: Նահապետներին հետևում էին նրանց գավառների գնդերը: Հետո սկսեցին նվերներ տալ արքային և շնորհավորական ճառեր ասել: Փոքրիկ ընդմիջումներով Փայլակ Մարդպետունին մի քանի բուռ դրամ շաղ տվեց պատվանդանի առջևով անցնող ամբոխի վրա:

Քիչ հետո մի քանի ծառա դեսպակի՝ վրա արքայական պատվանդանին մոտեցրին օրիորդ Համասփյուռին:

Ծառաները բարձրացրին դեսպակը, և Տիգրան արքան բռնեց Համասփյուռի թևից ու բարձրացրեց պատվանդանի վրա: Արքայամայրը գլխից հանեց տիկնանց-տիկնոջ խույրը և դրեց Նախճավանի գեղեցկուհու գլխին: Բոլորը ճանաչեցին Փայլակ Մարդպետունու դստերը:

- Կեցցե տիկնանց-տիկին Համասփյուռը, - բացականչեցին այս ու այն կողմից:

Հնավանդ սովորությամբ թագադրվելուց հետո Տիգրանը դուրս եկավ արքայական որսի:

ԱՐԻՈԲԱՐԶԱՆԻ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՂԱՆԴԸ

Եղեմաբուխ գետի և Տիգրիսի արանքում փռված է Գեղեցիկ հովիտը: (Խարբերդ դաշտի հին անվանումը) Հայկական Ծոփքի առաջին քաղաքամայր Արշամաշատը բազմել է գեղեցիկ հովտի ամենագեղեցիկ անկյունում: Արածանիի ձախ ափից քիչ հեռու մշտականաչ հայթավայրի կրծքում բարձրանում են աղեղնավոր շարքերով բոլորվող քաղաքի պարիսպները: Այդ պարիսպները քաղաքին տալիս էին ամրոցի տպավորություն: Քաղաքի ծայրամասերում տեղավորված են զորակայանները, իսկ կենտրոնում՝ միահարկ բնակելի շենքերն ու արհեստավորաց տները: Վերջիններս Արշամաշատում ավելի մեծ թիվ էին կազմում, քան այդ ժամանակվա հայկական որևէ այլ քաղաքում:

Այդ տներում դրամ էին կտրում, զենքեր կռում, պատրաստում ամենաչքնաղ բազմոցները, աշտանակներ ձուլում և կարում նորաձև տոգաներ: Փոքր քաղաքի բնակիչները չէին կարող սպառել արհեստավորաց տների ամբողջ արտադրանքը: Միջերկրայքի և Մեծ ծովի ավազանի շուկաներում մեծ հռչակ էին վայելում Արշամաշատի արհեստավորների գործերը:

Գլխատված բուրգի տեսք ունեցող հայկական ապարանքը թևանցուկ էր արել քաղաքի հյուսիսային անկյան բերդապարսպին: Զարեհյան գահակալության իննսունհինգերորդ տարում այդ ապարանքն օրհասի մեջ էր ընկել: Քաղաքում խոր անդորր էր, իսկ արքունիքը ոտքի ելած պատրաստում էր կարապի իր երգը: Արքայական ծիրանու քղանցքները ջղաձգորեն ճմրթելով՝ Արտան արքան խոսում էր բորբոքված, անկապ լուտանքներ թափում Արտաշեսյանների հասցեին.

- Տես ինչքան էլ գոռոզամիտն է, մի քանի օր է, ինչ գլխին թագ է դրել և ամբարտավան պահանջներ է ցուցանում: Ծոփքն այնքան էլ փոքր պատառ չէ, որ միանգամից կուլ գնա նրա կոկորդով: Սպասիր դեռ, Արիոբարզանի օգնական զորքը հասնելուն պես մենք կգրոհենք և ետ կվերցնենք Երկաթակերտը:

- Արքա, - մեջ ընկավ երիտասարդ Մեհրուժանը, արքայի հորեղբոր տղան, որ Արշամաշատի բերդապահ զորքերի պետն էր, - Տիգրան արքայի այրուձին շուտով կմոտենա քաղաքին և կպաշարի մեզ, իսկ Գամիրքը չի հասցնի օգնության ձեռք մեկնել: Պետք է դիմել շտապ ձեռնարկի:

- Թող գան մենք կկռվենք, Մեհրուժան, հենց ես ու դու կկռվենք:

- Արքա, դա նման կլինի պարսատիկով ջրվեժի վրա քար նետելուն:

- Զարմանում եմ, ով քաջ Մեհրուժան, միթե քո երակներում Զարեհյան արյուն չկա:

- Այդ արյան առկայությունն էլ, արքա հիմա չի փրկի դրությունը, հավանաբար աստվածները որոշել են պատժել մեզ մեր սխալների համար:

- Ի՞նչ սխալների մասին ես խոսում:

- Դրանք շատ են արքա: Ի՞նչ գործ ուներ Վայկունը Հայոց հողի վրա: Դու չափից դուրս հավատ ընծայեցիր Արիոբարզանին: Եվ ի՞նչ ստացվեց: Տիգրանը ջարդեց Վայկունի բոլոր ծովահեններին և մեր ու Գամիրքի օգնական ջոկատներին: Նա երեխա չէ, որ չկարողանա կռահել, թե որտեղ է նյութվել այդ դավադրությունը:

- Եվ դու դա համարում ես դավադրությո՞ւն, - Մեհրուժանին ընդհատեց Արտան արքան:

- Այո, արքա, առողջ բանականությունը յուրաքանչյուր մարդու պիտի թելադրի այսպիսի ծանր պահերին իրերն իրենց անուններով կոչելու: Ես չեմ կասկածում, որ Տիգրան արքան Վայկունին օգնող մեր ջոկատի բոլոր մարտիկներին գլխատած լինի: Այդ մարտիկներից շատերը, իրենց կյանքը փրկելու համար ըստ ամենայնի ստիպված են եղել խոստովանել ճշմարտությունը և երկյուղից՝ գունազարդված ներկայացնել այն: Իսկ այդպիսի դեպքերում ամեն մարդ տուն չի մտնի՝ իր հակառակորդին թողնելով այդ տան շեմին:

Այդպես կվարվեինք նաև մենք, արքա: Եվ դու մի մեղադրիր Տիգրանին, որ նա Աղձնիքում արքայական խույրը գլխին դնելուց հետո, փոխանակ ճանապարհվելու դեպի Արտաշատ, բռնել է Արշամաշատի ուղին:

- Մեհրուժան, դու մեղադրում ես գահակալին, մոռանալով, որ նա կարող է պատժել քեզ հանդգնությանդ համար:

- Դա ճիշտ է, արքա, գուցե ես արժանի եմ պատժի, բայց ես էլ Զարեհյան եմ և ցավում եմ մեր երկրի համար: Այդ ցավն էլ ստիպում է ինձ ամուր սեղմել ճշմարտության ձեռքը: Եթե Վայկունի փոխարեն մենք Աղձնիք ուղարկեինք Տիգրան արքայի գահակալությունը շնորհավորող թեկուզ մի պատվիրակ, Ծոփքը հիմա կլիներ աշխարհի ամենախաղաղ անկյունը:

Արքայական դահլիճի շեմին երևաց զորապետ Միլիտոս Վարդունին: Արտան արքան անհամբեր մի շարժում կատարեց գահի վրա, հայացքով Վարդունուն հասկացնելով, որ նա արագ մոտենա իրեն: Սակայն զորապետը խեղանդամ քայլվածքով էր առաջանում դեպի գահակալը:

- Խոսիր, զորապետ, ի՞նչ է ասում Արիոբարզանը, ե՞րբ պիտի գա օգնական զորքը:

- Արքա, - բառերը հատ-հատ արտաբերելով, խոսել սկսեց Վարդունին, - Արիոբարզանը դրժեց Արիարաթների և Զարեհյանների հնօրյա ուխտը, նա մերժեց մեզ օգնական զորք տալ:

- Ահա թե ինչ, - ցավագար ճիչով ձայնեց Արտանը և գահից բարձրանալով սկսեց քայլել արքունական տան անդամների սառած շարքի առջևով, - պիղծ պարթև…

- Գամիրքից ուրիշ բան չէր կարելի սպասել, - դարձյալ խոսակցությանը խառնվեց Մերուժանը, - նա մեզ հետ հարևանություն էր անում Հռոմի թելադրանքով, իսկ Հռոմը հիմա խճճվել է իր գործերում և ժամանակ չունի խորհուրդներ տալու Արիոբարզան Հռոմեասերին:

- Հետո՞, զորապետ, - նորից Վարդունուն դառնալով խոսեց արքան, - Արիոբարզանը հաջողությո՞ւն մաղթեց մեզ:

- Արքա, Արիոբարզանը հանդգնել է լպիրշ առաջարկ անել մեզ:

- Ի՞նչ առաջարկ:

- Տոմիսիա45 ամրոցը Գամիրքին զիջել հարյուր տաղանդով:

- Անամոթ Արիարաթյան, - բղավեց Արտան արքան, - հին հարդ է քամուն տալիս: Այստեղ են ասել՝ մեկի մորուքը վառվեց, սպասիր տաքանամ՝ ասաց մյուսը: Ուխտադրուժ Արիոբարզան, մի օր էլ քո դռանն այսպիսի ուղտ կչոքի: Ի զեն, ով Զարեհյան այրեր, ես խոստանում եմ Տոմիսիան դարձնել Վահեվահյան տաճար, և Վահագն ու Աստղիկը հաղթություն կմաղթեն մեզ, ի զեն իմ քաջեր, թող Արշամաշատը դառնա այնպիսի անմատչելի ամրոց, որ Տիգրան արքան ծերության հասակում էլ միայն երազի մեջ տեսնի այն:

Լուսադեմին վերջին սուրհանդակները մտան Արշամաշատ, և քաղաքի բոլոր դարպասները փակվեցին Մեծ Հայքի զորքերի առջև:

Ապարանքին հպած բերդակառույցի զորապետական խցիկում Մեհրուժանը պատի փոքրիկ պատուհանի աշտանակի կոթառի մեջ լցրեց ճրագայուղը: Հաստ թիկնոցի մեջ փաթաթված Միլիտոս Վարդունին խոսում էր ինքն իրեն, մեկ-մեկ էլ դիմում Մեհրուժանին և առանց նրան սպասելու, ինքը պատասխանում իրեն: Ցուրտը նրան դարձրել էր շատախոս: Իսկ ձմռան գիշերվա լուսադեմը բերդի դիտարանի վրա անցկացնելը Վարդունու համար ավելի դժվար էր, քան Արտանի համար Տոմիսիան հարյուր տաղանդով զիջելը:

- Ինքդ դատիր, Մեհրուժան, երկու դաշնակիցներ, տարիներ շարունակ իրար օգնող հարևաններ և հանկարծ նման պահանջ: Այդպիսի հարևանության վրա աստվածներն էլ կթքեն: Չէ, աշխարհում էլ ազնվություն չմնաց, ինչ հարևանություն, ինչ բան: Արիոբարզանը ստահակ է, վերջին շինականն էլ այդքան տմարդի չէր գտնվի իր բարեկամի հանդեպ: Ճիշտ չե՞մ ասում, դե լավ, ինքդ մտածիր, օգնող զորք չտվին մեզ, հերիք չէ, ուզում են Տոմիսիան էլ գնել; Կռվի գնացող զինվորը զե՞նք կվաճառի, իսկ ինքդ գիտես, որ Տոմիսիան Ծոփքի ամենալավ զենքերից է: Չէ՞, Մեհրուժան, դու ասա, ինչպե՞ս կորակես Գամիրքի այս դիրքը, հը, ինչպե՞ս կորակես:

- Դրկիցը դրկիցի մոխրին է կարոտ, - աշտանակի վրա վառվող պատրույգի դիրքը ուղղելով, ասաց Մեհրուժանը:

- Խելոք ասացիր, Մեհրուժան, դու պատանի ես, բայց հասուն մարդու խելքով ես կշռում դեպքերը: Այ, եթե ազատվենք այս արհավիրքից, այդ մոխրով կկուրացնենք մեր ուխտադավ հարևանի աչքերը:

Եթե մենք երեք հազար հեծյալ ունենայինք, ես այսօր կջարդեի Տիգրանին և կգնայի ուղիղ Տոմիսիա, Արիոբարզանին կհրավիրեի այնտեղ՝ իբր ամրոցը վաճառելու և նրա աչքերը կհանեի առանց ափսոսալու, որ ձեռքերս կարող են կեղտոտվել:

- Տոմիսիան հիմա գրավված կլինի Տիգրանի առաջապահ գնդերի կողմից:

- Դու կարծո՞ւմ ես:

- Չեմ կարծում, համոզված եմ:

- Ուրեմն, ավելի վատ:

- Ինչո՞ւ, մի՞թե մեզ համար նախընտրելի չէ Տոմիսիան ձրի տալ Տիգրանին, քան հարյուր տաղանդով վաճառել Արիոբարզանին:

- Այդ ինչե՞ր ես ասում, Մեհրուժան, Տիգրանը մեր թշնամին է, իսկ Գամիրքը…

- Տիգրանը հայ է, իսկ Տոմիսիան՝ հայկական ամրոց, մի՞թե ավելի լավ չէ, որ մեր ամրոցը արյունակցի ձեռքը ընկնի, թեկուզ այդ արյունակիցը հիմա մեր ախոյանն է, քան վաճառվի Գամիրքին և դառնա Արիարաթների առաջավոր մատույցը Հայկական Ծոփքի վրա աչք տնկելու համար:

- Դրանք վտանգավոր մտքեր են, Մեհրուժան, մենք տարբեր տերություններ ենք:

- Բայց մենք հայեր ենք, զորապետ, խոսում ենք նույն լեզվով, պաշտում նույն աստվածներին, նվագում նույն քնարի վրա:

- Դու Զարեհյան ես, իսկ նա՝ Արտաշեսյան:

- Երկուսն էլ սերվել են Հայկից:

- Պատանի, ես տեսնում եմ, որ քո մտքի աչքերը հոգնել են, քեզ հանգստանալ է պետք:

- Կռվի ժամին զինվորը չի կարող մտածել հանգստության մասին:

- Բայց հիմա կռիվ չկա:

- Զինվորի համար ամենաթեժ կռիվը սկսվում է կռվի նախօրեին, երբ նա իր հոգում նախապատրաստում է իրեն, և եթե այդ թեժ կռվում նա հաղթի՝ ռազմադաշտում կմարտնչի դյուցազնի պես:

- Իսկ դու քեզ վատ ես նախապատրաստում, Մեհրուժան:

- Ինձ թվում է, թե դու կարող ես նույնիսկ Տիգրանի առջև բացել Արշամաշատի դարպասները:

- Եթե դրա անհրաժեշտությունը զգացվի, ես կհրամայեմ, որ դա անեն մեր զինվորները:

- Դու հանդգնում ես, կաշառված երեխա, - Միլիտոս Վարդունու աչքերը պեծին տվին մոմի թույլ լույսի տակ:

- Ինձ կաշառել է հայի իմ խիղճը:

- Ոչ, քեզ Տիգրանն է կաշառել:

- Դու կարող ես գոռալ ուրիշների վրա, զորապետ, բայց քո առջև կանգնած այրը Զարեհյան տոհմից է, վատ հիշողություն ունես:

- Ես կզեկուցեմ արքային:

- Հանգստացիր զորապետ, դու Վայկունի հետ սարքած քո դավադրությամբ չկարողացար փրկել Զարեհյաններին, այն ժամանակ ես չխառնվեցի և, ինչպես տեսնում ես, ձեր հիվանդագին մտահոգացումների հետևանքով պաշարվել է մեր քաղաքամայրը:

Իսկ հիմա ես հրամայում եմ քեզ չշարժվել տեղից: Փոքրիկ վտակի հունը կտրելով լիճ չես սարքի, վտակը կանհետանա գետնի տակ, իսկ եթե նույն վտակը խառնվի գետին, հողի երեսին կպահի իր գոյությունը, և գետն էլ ավելի հորդառատ կդառնա: Այդպես է նաև մեր Ծոփքը: Նա պետք է վաղուց խառնվեր Մեծ Հայքին: Դա չի եղել առաջ, իսկ հիմա էլ խանգարելը միայն կվնասի գործին: Հասկացիր, զորապետ, հարմար պահ որսալով Գամիրքը կուլ կտա Ծոփքը, իսկ Հռոմն էլ Գամիրքը, դրանից հետո դու Ծոփքը չես գտնի, բայց ինձ ու քեզ համար դա ոչինչ, մեր հետնորդները չեն գտնի, մի՞թե դա ցավ չի պատճառում քեզ:

Հանկարծ Մեհրուժանի աչքին ընկավ կիսամութի մեջ Վարդունու ձեռքում փայլատակող փոքրիկ դաշույնը:

- Դու պետք է մեռնես իմ ձեռքով, դավաճան, - ատամների արանքից խռպոտաց Վարդունին և փորձեց առաջանալ դեպի Մեհրուժանը:

- Կանգ առ անմիտ ծերուկ, - բացականչեց Մեհրուժանը, ակնթարթային արագությամբ սուրը հանելով:

Վարդունին թափով պոկ գալով տեղից, դուրս թռավ սենյակից:

- Բռնեցեք Վարդունուն, բռնեցեք նրան կենդանի, լսում եք պահապան զինվորներ, կալանդներ հագցրեք այդ անուղղելի մատնիչի ձեռքերին ու ոտքերին:

Մեհրուժանը գիտեր, որ քիչ հետո Տիգրանը շղթայի մեջ կառնի Արշամաշատը:

Եվ ով պետք է դիմադրեր նրան: Ամբողջ քաղաքի բերդապարիսպների վրա հազար զինվոր էլ չկա:

Բայց եթե նույնիսկ դրա տասնապատիկը լինի, արժե՞ արդյոք կռիվ տալ: Չէ՞ որ դա նման է եղբայրասպանության: Ինքը՝ Մեհրուժանը, ուզում է, որ Հայոց աշխարհը հզոր լինի, իսկ նրա համար Ծոփքն էլ է Հայոց աշխարհը, Մեծ Հայքն էլ: Փույթ չէ, թե ում գահակալության տակ կլինեն նույն երկրի երկու մասերը: Քիչ հետո կբացվի լույսը, և Մեծ Հայքի զինվորները կգրոհեն Արշամաշատի վրա: Իսկ եթե ինքը բացել տա դարպասները, և Տիգրանն առանց արյուն թափելու մտնի քաղա՞ք: Այդ դեպքում ի՞նչ անուն կտան իրեն՝ Մեհրուժանին: Արշամաշատցիները դավաճան կհամարեն իրեն: Բայց ում է դավաճանում ինքը: Արտանի՞ն: Ուրեմն թող միայն Արտանը դավաճան համարի Մեհրուժանին: Ոչ մի արշամաշատցի իրավունք չունի ձաղկելու Մեհրուժանի վարմունքը: Նա չի դավաճանում հայրենիքին: Նա նույնիսկ անձնական ակնկալություններ էլ չի սպասում այդ քայլի դիմաց: Դեռ ավելին: Տիգրանը կարող է գլխատել տալ Մեհրուժանին: Բայց նրան քիչ է մտահոգում դա: Արքաները հաճախ մարդկանց գլխատում են ոչ այնքան մեղքի համար, որքան իրենց հզորությունը մնացածներին ցույց տալու և նրանց աչքը վախեցնելու համար: Ի վերջո, մի՞թե միևնույն չէ: Եթե ինքը հիմա բացել չտա քաղաքի դարպասները և խաղաղությամբ չդիմավորի Տիգրանին, մի քանի ժամից Տիգրանը դա կանի ուժով: Այն ժամանակ Զարեհյան աղխի ոչ մի անդամի համար Արշամաշատում թաքնվելու տեղ չի լինի:

Բերդապարիսպների գլխավոր մատույցների հարյուրապետերը սպասում էին Մեհրուժանի հրամանին:

- Թող յուրաքանչյուրը մեկնի իր մատույցը և սպասի իմ հրամանին, - ասաց Մեհրուժանը:

Երբ հարյուրապետերը հեռացան, Մեհրուժանը առանց հապաղելու, կողքի դիտարանում խմբված զինվորներին հրամայեց աշտարակի վրա կախել անձնատուր լինելու դրոշը և ինքը շտապ իջավ գլխավոր դարպասի մոտ:

- Ջարդեցեք դարպասը, - հրամայեց նա զորականներին, որոնք սկսեցին երկաթյա բրիչներով տեղահան անել հսկա դարպասների կրունկները:

Մի ժամ հետո Տիգրան արքան բազմել էր Արշամաշատի արքայական ապարանքում: Նրա առջև կանգնել էր Զարեհյան գահակալների վերջին արքա Արտանը: Տիգրանը խնայել էր նրա արքայական մեծությունը կալանդներ հագցնել միայն ձեռքերին:

ԿԼԵՈՊԱՏՐԱ

Պոնտոսի քաղաքամայր Ամիսոսի ամենաբարձր շինությունը արքայական պալատն էր: Նրա քսաներկու աշտարակների դռները բացվում էին Սև ծովի վրա: Այդ աշտարակների վրա գիշերները վառվող հսկա կանթեղները արքայական ապարանքին տալիս էին բազմաչք փարոսի տպավորություն:

Ամիսոսում շատ կան գեղեցիկ շենքեր, սակայն Պոնտոսի Աթենքի և ոչ մի կառույց քսաներկու աշտարակ չունի:

Ամենավերջին ամիսոսցին գիտե, թե ինչու արքայական պալատն ունի քսաներկու աշտարակ և ոչ թե ավելի կամ պակաս:

Արքաներն իրենց հաղթությունները նշանավորում են հաղթակամարներ կառուցելով: Այսպես կարող էր անել նաև Պոնտոսի մեծ արքա Միհրդատ Եվպատորը: Սակայն թշնամիների դեմ տարած իր հաղթանակները նա թեթև բան է համարել և իր պալատի արտաքին տեսքի վրա ցուցադրել ուրիշ բան: Այո, ամենավերջին ամիսոսցին գիտե, որ Միհրդատ Եվպատորը տիրապետում է քսաներկու լեզվի և բոլորովին չի կասկածում, որ քսաներեքերորդին տիրանալու դեպքում մեկով կավելանա պալատի աշտարակների թիվը: Առաջին աշտարակը կառուցված է հունական ոճով, երկրորդը՝ պարթևական, երրորդը՝ հայկական, չորրորդը՝ հռոմեական, հինգերորդը՝ բյութանիական և այսպես անվերջ: Ասում են, որ Եվպատորը գիտե նաև իր ութսուն հազար զինվորների անունները: Բայց նա չէր մտածել Ամիսոսի հոյակապ պալատի վրա ցուցադրել իր հզոր հիշողության այդ կողմը: Պալատի քսաներկու աշտարակներում էլ Եվպատորն ուներ իր արքայական բազմոցը: Սովորաբար նա նստում էր հունական աշտարակում, բայց բավական է պետական գործերը պահանջեին, և ահա նա կհայտնվեր այլ աշտարակում: Աշտարակներ կային, որտեղ նա տարիներով ոտք չէր դնում:

Բայց մինչ այդ աշտարակներին տիրանալը, ճակատագիրը քանի աշտարակից ցած նետեց նրան: Ինչպե՞ս մնաց ոտքի վրա, ինչո՞ւ մնաց: Չէ՞ որ նրան չէր հովանավորում Պոնտոսի ոչ մի աստված: Ո՞վ էր յուղ լցնում նրա բախտի ճրագին: Հռոմի աստվածնե՞րը: Ինչպե՞ս թե, Հռոմի աստվածները պաշտպանո՞ւմ են Հռոմի թշնամուն:

Ոչ միայն պաշտպանում, այլ կոփում են նրան:

Հանիբալից հետո Հռոմը հզոր ախոյան չի ունեցել: Եվ թուլացել է, որովհետև միայն թույլերի հետ է չափվել: Տեսնո՞ւմ եք ինչքան իմաստուն են Հռոմի աստվածները: Նրանք ավելի հեռուն են տեսնում: Միհրդատ Եվպատոր են պատրաստում, որ Հռոմի հզորության աստղը իր լույսի տակ առնի համայն աշխարհը:

Միհրդատ Եվպատոր:

Տասնմեկ տարեկան էր, երբ գլխին թագ դրին: Նա չխաղաց թագի հետ, ոչ էլ երեխայի պես շլացավ թագի ճաճանչափայլ մարգարիտներից: Մոր կողմից նրա պապի պապը աշխարհակալ Ալեքսանդրն էր, հոր կողմից Կյուրոսն ու Դարեհն էին նրա ապուպապերը: Նա ցանկանում էր շտկել իր երեք մեծ նախորդների սխալները: Եվ սկսեց տասնմեկ տարեկանից:

Մայրը չէր սիրում Միհրդատին: Տղան հրամաններ էր տալիս հասուն արքայի պես: Իսկ արքայամայրը չէր ցանկանում ստվերի տակ մնալ և նժարի վրա դրեց տասնմեկամյա որդուն ու կանացի փառասիրությունը: Վերջինս ավելի ծանր դուրս եկավ: Բայց ինչպե՞ս վերացնել որդուն: Թո՞ւյն լցնել ճաշի մեջ, թե՞ դաշույն դնել դավադիրի ձեռքին: Իսկ եթե գաղտնիքը բացվի՞; Ոչ, սպանության դյուրին ու ապահով միջոցներ կան: Արքայամայրն ընտրեց ամենահարմարը: Ծառաները փոքրիկ Միհրդատին նստեցնում էին խոլ նժույգի վրա և բաց

թողնում: Արքայական ապարանքի լուսամուտից արքայամայրը գաղտնի դիտում էր, թե ձին ինչպես է տրտինգ տալիս ու քամու պես պոկվում միանգամից:

Նա համոզված էր, թե ուր որ է Միհրդատը կընկնի և ջարդուփշուր կլինի: Բայց տղան ձիուց պոկ չէր գալիս: Մայրը զայրանում էր պալատականների ներկայությամբ հայհոյում ծառաներին, որոնք իբր առանց իր թույլտվության փոքրիկ արքային ձի են նստեցնում: Ես ստիպված կլինեմ պատժել ծառաներին, ասում էր արքայամայրը, ի՞նչ անենք, թե Միհրդատը շատ է սիրում ձի հեծնել, հո չի կարելի նրա բոլոր ցանկությունները կատարել: Իսկ Միհրդատը, ընդհակառակը, չէր սիրում ձիավարել: Արքայամոր կարգադրությամբ նրան ստիպում էին, սպառնում: Հետո պահանջեցին, որ ձիու վրա, սլացքի ժամանակ, նա սովորի նիզակ նետել: Եվ տալիս էին ամենածանր նիզակը: Միհրդատը դիմացավ և կռահեց մոր դավադրությունը: Էլ ինչպե՞ս կարելի է մնալ արքունիքում, երբ քո դեմ դավադիր է մայրդ:

Մի քանի բարեկամներ գտավ ու փախավ պալատից:

Պոնտոսի արքունիքում նա չերևաց յոթ տարի: Չորոնեցին: Որոնեին էլ՝ չէին գտնի ոչ մի հարկի տակ: Ապրում էր անձավների մեջ, ծառերի փչակներում: Չափվում էր գազանների հետ, դառնում կորովի:

Սկսեց քիչ-քիչ թույն ու հակաթույն օգտագործել: Մի քանի տարում այնպես վարժվեց, որ ամենաուժեղ թույնն էլ չէր վնասում նրան: Հաղթեց:

Արքունիք վերադարձավ որպես հաղթամարմին ըմբիշ: Պալատականներն իրարով անցան: Արքայամայրը թաքնվեց:

Տիկնունիում Միհրդատը ոչ ոքի գլխին տիկնանց-տիկնոջ խույր չդրեց: Հետո կդնի: Կնոջ հավատարմությունը նման է սառույցի: Երբեմն միանգմից է հալչում, երբեմն՝ դանդաղ, բայց ի վերջո, հալչում է: Աշխարհում կան նաև չհալչող սառույցներ: Բայց այդպիսիներն արքունիք չեն ընկնում: Եթե ընկնեն էլ՝ չեն դիմանա արքունիքի ջերմությանը: Գեղեցիկ կինը չի բարեկամանում գեղեցիկ կնոջ հետ: Իսկ արքունիքում գեղեցկուհիներին են հավաքում:

Բայց ինչպե՞ս համաձայնեց, որ քույրը՝ Լավոդիկեն դառնա իր կինը: Ի՞նչ անենք, թե մայրը խորթ է, բայց հոր կողմից իր հարազատ քույրն է: Գեղեցկուհի է: Ավելի վատ: Լավոդիկեն համոզված է, որ Պոնտոսի տիկնանց-տիկինը ինքը կդառնա: Թող երևի, առայժմ նա այդպիսի վճիռ չի կայացնի:

Միհրդատը նորից հեռացավ պալատից: Թափառեց Փոքր Ասիայի շատ թագավորություններում: Արքունիքից վերցրած ոսկու քսակները դատարկվում էին իրար ետևից: Ոսկով գնում էր մարդկանց հավատարմությունը: Մի օր պետք կգան: Չէ՞ որ իր երազանքի տուտերը նա միացրել էր աշխարհի բոլոր ծայրերին և փորձում էր սեղմել աշխարհը: Սեղմել: Իսկ ինչո՞ւ Մեծն Ալեքսանդրը չկարողացավ սեղմել; Քիչ ապրեց: Ալեքսանդրը չգիտեր, թե Պոնտոսում կենսատու բույսեր կան, որ մարդու կյանքը կարող են ձգել մինչև երկու դար: Այդ բույսերի տեղը գիտե միայն Միհրդատը: Եվ չի ասի ոչ ոքի: Իսկ ինքը կապրի՞ երկու հարյուր տարի:

Եթե նետն ու դաշույնը չլինեին: Բայց ինքը ոսկով կփակի դրանց ճանապարհը:

Իսկ ե՞րբ կդառնա աշխարհի տերը: Ոչինչ, դեռ շուտ է: Չէ՞ որ ինքը վեց Ալեքսանդրի կյանք կունենա: Վեց Ալեքսանդր: Եթե բախտը վեց անգան ժպտա նրան Ալեքսանդրի պես, ապա աշխարհը փոքր կլինի նրա փառքի համար: Ինչպե՞ս պիտի խոսի իր հպատակ արքաների հետ: Թարգմանիչների միջոցո՞վ: Ինչքա՞ն թարգմանիչ վարձի: Ոչ, թարգմանիչներին չի կարելի վստահել: Նրանք կարող են կաշառվել և խեղաթյուրել իր ասածները: Ահավոր զորություն ունեն բառերը: Հաճախ թարգմանչի դիտավորությամբ նենգափոխված մի բառը տերություն է կործանում: Այո, մի բառը կարող է մի ամբողջ ժողովրդի գերեզմանաքար դառնալ:

Եվ Միհրդատը սովորեց քսաներկու լեզու, որ նրա համար քսաներկու բանակ էր: Բայց մի օր Պոնտոսի արքունիքի բամբասանքը քսաներկու լեզվով փոխանցված հասավ Մեծ ծովի ափը, որտեղ գտնվում էր Միհրդատը: Նրան համարում էին մեռած: Միհրդատը մեռա՞ծ, երևի խենթացե՞լ են Պոնտոսի պալատականները: Պետք է շտապ պալատ վերադառնալ: Միհրդատին դիմավորեցին այնպես, ինչպես Հռոմը կդիմավորեր հաղթական կռվից մայրաքաղաք վերադարձող զորավարին: Ինչո՞ւ են ցնծում այս մարդիկ, չէ՞ որ ոչ ոք չգիտե, թե որտեղից է գալիս Միհրդատը: Երևի ոչ ոք զուրկ չէ կեղծիքի արատից: Առանձնացավ պալատում և մեկ-մեկ ընդունեց արքունականներին: Ոչինչ չէր փոխվել: Դավաճանել է միայն իր քույրը, իր կինը՝ Լավոդիկեն:Միհրդատը գաղտնիքն իմացավ, բայց ցույց չտվեց: Լավոդիկեն զգաց, որ իրեն մահ է սպասում:

Շտապեց կանխել եղբայր ամուսնուն և արքայի համար պատրաստված ճաշի մեջ մահաբեր թույն լցրեց: Միհրդատն առավ ճաշի համը և ստամոքսում զգաց ծանոթ գալարները: Որոշեց այնպես պատժել դավադիրներին, որ Պոնտոսում երբեք չմոռանան այդ մասին: Նա ճաշի հրավիրեց բոլոր պալատականներին: Իր դիմաց նստեցրեց կնոջը՝ Լավոդիկեին և այն երեք ազնվականներին, որոնց անկողիններում Լավոդիկեն հաճելի գիշերներ է անցկացրել; Խոհարարը թունավորված ճաշից հինգ ափսեներ դրեց նրանց առջև: Մյուս պալատականները ոտքի վրա էին և ապշահար սպասում էին, թե ինչով կվերջանա արտառոց ճաշկերույթը:

- Էյ, խոհարար, ես գայլի պես սոված եմ, ինձ մեծ ամանով ճաշ մատուցիր, - հրամայեց Միհրդատը:

Հրամանն իսկույն կատարվեց:

Միհրդատը դարձավ պալատականներին և ասաց.

- Արք և տիկնայք, իմ տունդարձը ես ցանկանում եմ նշանավորել: Ես տիկնանց-տիկնոջ կոչում եմ շնորհում քրոջս, իմ սիրելի կնոջը՝ Լավոդիկեին: Այդ պատվին նա արժանացել է իր հավատարմությամբ: Իսկ այս երեք ազնվականներին, որոնք իմ բացակայության ժամանակ փայլել են իրենց տիրասիրությամբ, հարյուրական տաղանդ եմ նվիրում:

Եվ Միհրդատն սկսեց ախորժակով ուտել ճաշը: Լավոդիկեն և ազնվականները գունատվել էին: Նրանք չէին համարձակվում ձեռք տալ գդալներին:

- Ինչո՞ւ չեք ճաշում, մի՞թե հաճելի չէ արքայի հետ ճաշելը, - ասաց Միհրդատը:

Արքայի խոսքերը հնչեցին սպառնալի: Երեք ազնվականները վախից սկսեցին դատարկել իրենց ափսեները: Նրանց հետևեց նաև Լավոդիկեն: Կնոջ դեմքին մի դաժան ժպիտ երևաց: Նա չհամբերեց.

- Միհրդատ, գոնե դու մի կեր:

- Ինչո՞ւ:

- Այս ճաշը թունավորված է:

- Ով է թունավորել:

- Ես և այս երեք ազնվականները:

- Սիրելիս, այդպիսի կատակներով չես կարող փչացնել իմ ախորժակը:

- Ես ճշմարտությունն եմ ասում:

- Դու ասում ես, թե այս ճաշը թունավորվա՞ծ է, չեմ հավատում, տես, ես հինգ անգան քեզնից շատ կերա, բայց երկու հարյուր տարի կապրեմ աշխարհի վրա:

Միհրդատը չշարունակեց և դուրս եկավ ճաշասենյակից: Մի ժամ հետո նույն ճաշասենյակից տարան չորս դիակ:

Ե՞րբ են կատարվել այս բոլորը: Նա արդեն մոռացել է նույնիսկ Լավոդիկեի դեմքը: Ճիշտ արեց, որ քանդել տվեց հին պալատը: Ոչ միայն Լավոդիկեն, նրա ուրվականն էլ չի կարող մտնել այս նոր պալատը:

Տասնհինգ տարի ընդմիջումից հետո, գարնանային մի օր Եվպատորը հայտնվեց հայկական ոճով կառուցված աշտարակում: Այդ աշտարակի բազմոցի վրա նա նստել էր տասնհինգ տարի առաջ, երբ արշավանքի էր պատրաստվում դեպի Փոքր Հայք: Անցած ժամանակներում նրան առիթ չէր ներկայացել Հայոց աշխարհի հետ գործ ունենալու:

Փոքր Հայքն էլ հավատարիմ գտնվեց իրեն, և Եվպատորը բնավ չէր մտածել, թե այս խռովահույզ ժամանակներում, երբ նա գիշերներ էր լուսացնում հռոմեական աշտարակում, կարող էր անհրաժեշտություն զգացվել հայկական աշտարակ մտնելու: Սակայն լուրերն ազդու էին, և ինքը չէր կարող անցնել դրանց կողքով: Պարթևաց արքայից-արքա Միհրդատ Արշակունուն պատանդ տված արքայազն Տիգրանը յոթանասուն հովիտ է զիջել պարթևներին, դարձել Հայոց աշխարհը և, դեռ խույրը գլխին չդրած, նվաճել Ծոփաց թագավորությունը: Հայոց աշխարհում սկսվել է թեժ զորահավաք: Եվպատորը խորհում էր այս մասին: Ոչ մի Արտաշեսյանի չէր հաջողվել ձեռք գցել Ծոփքը: Դա ձեռնատու էլ չէր Մեծ Հայքի հարևաններին: Հայկական հարուստ Ծոփքը դարձնում էր կրկնապատիկ ուժեղ: Տիգրան արքայի այդ առաջին քայլը անշուշտ կապ ունի հեռավոր նպատակների հետ: Արիոբարզանը չի կարողացել օգնել Արտանին: Իսկ Տիգրանը գիտե, որ Գամիրքը Ծոփքի բարեկամն է: Հավանաբար հիմա նա զորահավաք է կատարում Գամիրքի հետ հաշիվներ մաքրելու համար: Բայց դա կտապալի Եվպատորի ծրագրերը: Չէ՞ որ ինքը՝ Եվպատորը, երազում է Գամիրքը դարձնել ոստնակ՝ Հռոմի վրա նետվելու համար: Եվ ահա հայկական այս նոր գահակալը պիտի խառնի իր հաշիվները: Դե, իհարկե, Տիգրանը չի կանգնի Ծոփքում: Ասում են, որ

Արիոբարզանը ինչ-որ Վայկուն անունով մի ծովահենի ուղարկել է Արտանի մոտ, որ նրանք մահափորձ կատարեն Տիգբոնից տուն դարձող Տիգրանի դեմ:

Ինչպե՞ս կարող է Տիգրանը չմտածել Արիոբարզանից վրեժխնդիր լինելու մասին: Գուցե Տիգրանը շարժվի նաև դեպի Փոքր Հայք: Դա արդեն վտանգավոր է Պոնտոսի համար: Միհրդատը ամենևին չէր ցանկանա թշնամանալ հարավի՝ թերևս թույլ հարևանի հետ: Նույնիսկ դժվար է Հայքին թույլ կոչել: Այս նոր Տիգրանը քնից կարող է արթնացնել հայկական ուժերը: Այն ժամանակ ուշ կլինի որևէ բան ձեռնարկել: Ժամանակը միշտ հաղթում է այն մարդուն, որ հապաղում է հորիզոնի ամպոտ հատվածում տեսնել վերահաս ամպրոպի նշանները: Փոքր Հայքը չի կարելի կորցնել և միաժամանակ չի կարելի թույլ տալ, որ Տիգրանը միայնակ մտնի Գամիրք: Մնում է միայն բարեկամության ձեռք մեկնել: Հարմար պահը հիմա է: Պետք է պատվիրակություն ուղարկել նրա գահակալությունը շնորհավորելու համար, իսկ մնացածը կանեն ճարպիկ դեսպանները: Թերևս ավելի զորավոր հենք գտնվի երկու տերությունների բարեկամությունը շաղկապելու համար: Իհարկե: Պոնտոսի համասփյուռին՝ գեղեցկուհի Կլեոպատրային, ինքը կնության կտա Տիգրանին: Բայց Տիգրանն արդյո՞ք արժանի է այդ չքնաղ էակին: Կլեոպատրայի վրա աչք ունեն իր զորավարներից շատերը: Իսկ Արքեղայոսը կարող է նույնիսկ խելագարվել Կլեոպատրային կորցնելու համար: Բայց Արքեղայոսը Եվպատորի զորավարն է, և Եվպատորը նրան կարող է փոխարինել մեկ ուրիշով, իսկ Տիգրանի թիկունքում կանգնած է Հայքը: Ոչ Կլեոպատրան կդառնա Տիգրանի կինը: Իսկ ո՞ւմ ուղարկել Տիգրանի մոտ: Սա դժվար խնդիր է, չէ՞ որ գնացողը պետք է խոսի Կլեոպատրայի մասին, իսկ ո՞ր տղամարդը կարող է իր սիրած աղջկա բարեմասնությունները պատմել ուրիշի:

Պոնտոսում չկա խելքը գլխին, ճանաչված մի այր, որ անտարբեր լինի Կլեոպատրայի հանդեպ: Գտավ: Մի քանի օր առաջ Կլեոպատրային սիրահետելու համար Գորդիոսը ծաղրել է Արքեղայոսին: Այո, Գորդիոսը: Նա գիտե, որ Կլեոպատրան անմատչելի է իր համար: Եվ ոչինչ էլ չի խնայի, որ նա անմատչելի դառնա նաև Պոնտոսի մյուս այրերի համար: Վճռված է: Տիգրանի մոտ կգնա Գորդիոսը: Պետք է զրուցել նրա հետ:

Միհրդատ Եվպատորը արմունկը հենեց բազկաթոռի կողին: Ինչ-որ տարօրինակ ճռռոց լսվեց, հետո սենյակի դուռը բացվեց, և շեմքին երևաց սպառազեն մի զորական:

- Գորդիոսին, - առանց թիկնապահի կողմը նայելու, ասաց Եվպատորը:

- Իսկույն, տեր իմ:

Խոր Վիրապի (Բլուր, որի վրա կառուցված էր Արտաշատի միջնաբերդը) միջնաբերդի արքայական դահլիճից Տիգրանը դուրս չեկավ մի քանի օր: Իր պատանդության տարիներին Հայքում շատ բան է փոխվել: Նա հանդիպում էր նոր նահապետների ու սեպուհների, որոնք ամեն կերպ աշխատում էին մոռացության տալ "Մեռածի մասին կամ լավ, կամ ոչինչ" առածը և ամբաստանել նրա հանգուցյալ հորը, որ արքունիքում ժողովել էր Հայքի ամենաապաշնորհ մարդկանց: Հայրը, տարիներ շարունակ, երկրի կյանքի կրակը անթեղել էր մոխրի տակ, չմտածելով, որ մի օր կարող է բոլորովին հանգցնել այն:

Ամեն ինչ պետք է սկսել նորից: Իսկ ինքը ոչ պատանի է, ոչ երիտասարդ: Նրա պատանեկության տարիները հարազատ հայրն էր պատանդել, իսկ երիտասարդությունը՝ պարթևների արքայից-արքան: Հիմա քառասունն անց է: Ո՞ւմ հետ նա կարող է խորհրդակցել: Բագարատին թողեց Ծոփքում և միայնակ մտավ քաղաքամայր: Խելոք մարդ է Բագարատը: Տիգրանը զորահավաքի հրովարտակ արձակեց նրա խորհրդով: Բայց ո՞ւմ դեմ պետք է կռվի ելնել: Կռվել պետք չէ, ասել է Բագարատը, թող այդ զորահավաքը լինի ուժերի ստուգատես: Հարկավոր է փորձել նահապետների վստահությունը և նոր մտածել կռվի մասին: Ինքը լիովին համաձայն է Բագարատի այդ մտքին, բայց ամբողջ երկրում կարծում են, թե Հայքը կռվի է ելնում իր հարևաններից մեկի դեմ:

Քիչ հետո նա պետք է ընդուներ Պոնտոսի արքա Եվպատորի պատվիրակությանը: Տիգրանը քաջ գիտե այդ խորամանկ պարթևին: Պետք է զգույշ լինել նրանից և ընդհանրապես բոլոր պարթևներից: Աքեմենյանները զարմանալի ծիլեր են տվել պարթևաց աշխարհում գահակալները պարթևներն են, Պոնտոսում՝ պարթևներ, Գամիրքում՝ պարթևներ: Իսկ ինքը ատելով ատում է պարթևներին: Ինչո՞ւ են աստվածները այսպիսի սխալներ թույլ տվել: Ո՞ւմ հետ հարևանություն անի Հայքը: Պարթևների հարևանությունը Հայքի համար միշտ էլ նման է եղել սև ամպի, որ հազվադեպ է ցրվում առանց փոթորկի: Պետք է պատռել հարևանության այս շղթան և դուրս գալ նեղվածքից: Բայց ե՞րբ, ինչպե՞ս:

Նա ուղղվեց հայրական գահավորակի վրա և ծափ զարկեց: Ներս մտավ կարճահասակ մի սպասավոր և խոր գլուխ տվեց:

- Գորդիոսին, - ասաց Տիգրանը:

Սպասավորը գլխով համաձայնության նշան արեց և հապճեպ դուրս թռավ դահլիճից:

Չանցած քառորդ ժամ արքայական դահլիճի մուտքի մոտ լսվեց մի բարակ շեփորահարություն: Եվպատորի դեսպան զորապետ Գորդիոսը գլուխը հպարտ բռնած անցավ թիկնապահ զորականների կողքից, իսկ դահլիճ մտնելով՝ անմիջապես խոր գլուխ տվեց.

- Մեծ Միհրդատի և ամենայն Պոնտոսի ջերմագին ողջույնը Հայոց արքա Տիգրանին, - մի պահ գլուխը բարձրացնելով ասաց Գորդիոսը և նորից գլուխը հակեց կրծքին:

- Օ, հո, այդ երբվանի՞ց են պոնտացիները սովորել այդքան վարժ խոսել հայերեն, - ժպտալով հարցրեց Տիգրանը, դեռևս իրեն ուղղված ողջույնին չարձագանքած:

- Հայոց քաջ արքա, Միհրդատ Եվպատորը գիտե քսաներկու լեզու և իր մոտ ոչ մի զորապետի չի պահի, եթե վերջինս առնվազն երկու լեզու չիմանա:

- Ես չեմ զարմանում, որ դու երկու լեզու գիտես, այլ զարմանում եմ, որ քո գիտցած երկրորդ լեզուն հայերենն է:

- Արքա, հայոց լեզուն չքնաղ է ինչպես հունարենն է և երգային՝ ինչպես պարթևերենը: Այդ լեզվով կարելի է դյութել բոլոր աստվածների սրտերը, իմաստության ծովից հանել ամեն տեսակ մարգարիտներ, մտնել արվեստի կաճառը առանց ամոթխածության չնչին զգացումի,

քառապատիկ անգամ ապրել սիրո տվայտանքը և թշնամու վրա այնպես գրոհել, որ այդ ձայնը հասնի մինչև Հերկուլեսյան սյուները54:

- Գովում եմ մեր լեզվի արժանիքների արժանավույն գնահատումը քո, Գորդիոս:

- Մեծ Եվպատորը շնորհավորում է քո գահակալությունը, Տիգրան արքա, և բարեմաղթում առողջություն և հաջողություն, - այս ասելով՝ Գորդիոսը ծափ տվեց, և դռների վրա երևացին երկու պոնտացի զորականներ, որոնք պատշաճ հանդիսավորությամբ, մի մեծ մատուցարան ձեռքներին բռնած, դահլիճ մտան:

Մատուցարանի վրա շարված էին Եվպատորի ընծաները: Պոնտացի զորականները դուրս եկան՝ խոր գլուխ տալով արքային: Դահլիճում մնացին Տիգրան արքան և Գորդիոսը: Վերջինս մատուցարանի վրայից վերցրեց մի ոսկեզօծ վահան և մեկնեց Տիգրանին: Վահանի վրա մեծագույն վարպետությամբ նկարված էր Տիգրան արքան, իսկ նրա կողքին՝ երկգլուխ Մասիսը:

- Ձեր պատկերահանները շատ հմուտ են երևում, - վահանը ձեռքում շուռումուռ տալով ու նկարին ուշադիր դիտելով, ասաց արքան:

- Պատկերահանը մարմնավորել է միայն Միհրդատ Եվպատորի մտահղացումը, արքա, տես, թե որքան բարեկամության և քո մեծությունը գնահատելու խորհուրդներ են թաքնված այդ պատկերում: Ձեր աշխարհի ամենաբարձր ու անհասանելի աշտարակը երկգլուխ Մասիսն է: Պատկերահանը քեզ նկարել է այդ սարի կողքին որպես հավասար մեծություն: Դրանով նա ցանկացել է ցույց տալ, որ դու Մասիսի չափ բարձր ես և Մասիսի պես անհասանելի:

- Հայոց աշխարհը խորապես շնորհակալ է հարևան Պոնտոսի բարեկամական ցուցադիր վարմունքից:

- Արքա, դու անշուշտ կարդացել ես Եվպատորի հավատարմաթուղթը:

- Այո, Գորդիոս, ընթերցել եմ և խորհել այդ մասին: Ես սրտանց ցանկանում եմ, որ Հայքն ու Պոնտոսը բարեկամության ձեռք մեկնեն իրար, բայց առաջին հերթին ես ցանկանում եմ, որ Պոնտոսը, և ոչ միայն Պոնտոսը, Հայքը դիտի որպես ինքնուրույն տերություն և մոռանա այն ժամանակները, երբ հանգամանքների բերումով Հայքը ում սայլին նստում էր, նրա հորովելն էր երգում:

- Եվպատորը ոչ միայն ճանաչում, այլև ի սրտե հարգում է Հայքի ինքնուրույնությունը:

- Հավատարմաթղթում առանձին խնդիրների մասին վերապահումով է արտահայտված:

- Չեմ կարծում, արքա, Եվպատորը ձգտում է ոչ միայն բարեկամանալ քեզ հետ, այլև օգնել, որ Հայքը դառնա հզոր տերություն:

- Շատ լավ, հարգարժան դեսպան, ապա ինչո՞ւ Գամիրքի մասին նա այդպիսի պահանջներ է առաջադրել:

- Ի՞նչ պահանջներ:

- Մի՞թե քեզ հետ նա չի խորհրդակցել այդ մասին, և բացի այդ, չէ՞ որ հավատարմաթղթի բովանդակությունը գիտես բերենացի:

- Արքա, Եվպատորը առաջարկում է Գամիրքը գրավել համատեղ ուժերով և քո թշնամուն՝ Արիոբարզանին, հանձնել ձեռքդ:

- Արիոբարզանը կարող է հագեցնել միայն իմ վրեժխնդրության ծարավը, իսկ Հայքը ոչինչ էլ չի շահի դրանից: Ինքդ էլ զորապետ ես, Գորդիոս, և գիտես, որ կարելի է Գամիրքը նվաճել, բայց Արիոբարզանին գերի չվերցնել: Գերի հանձնվելը Արիարաթների բնությունից շատ հեռու է:

- Բայց չէ՞, որ Արիոբարզանից բացի Եվպատորը համաձայնում է, որ Գամիրքի բոլոր բնակիչներին կարող ես քշել Հայքի խորքերը և բազմացնել հպատակներիդ թիվը:

- Դա քիչ է:

- Քո պահանջները արքա:

- Գամիրքի ամբողջ շարժական գույքը պետք է բերվի Հայք:

- Պոնտոսը կհամաձայնի դրա հետ:

- Եվ այստեղ ոչ մի բացառություն չպետք է լինի:

- Ես հասկացա քեզ, արքա:

- Այս պայմանները կարող են ընդունելի չհամարվել Եվպատորի կողմից:

- Այդ պայմանները վավերացնող արքայական մագաղաթները քսան օրից հետո կլինեն քո ձեռքի տակ, արքա, ես հավաստիացնում եմ քեզ, և այն, ինչ այստեղ խոսում եմ՝ կատարում եմ միայն Եվպատորի թելադրանքով:

- Բարի, հարգարժան դեսպան, բայց Գամիրքի հարցը կարող է լուծվել մեր ցանկացած եղանակով, եթե մինչ այդ լուծվեր ամենակարևոր խնդիրը:

- Ես լսում եմ արքա: - Զարմանում եմ, Գորդիոս, թե ինչո՞ւ Պոնտոսը լռության է մատնում Փոքր Հայքի խնդիրը: Ինքդ գիտես, որ դա մեր նախնյաց մեծ օջախի մի սենյակն է, որ ահա տասնհինգ տարուց ավել է, ինչ Պոնտոսը նվաճել է և այնպես նստել այնտեղ, ասես իր տունը լինի:

- Փոքր Հայքը բարեկամությամբ է միացել Պոնտոսին:

- Մի ժամանակ Փոքր Հայքն էր օգնում, որ Պոնտոսը դառնա ինքնուրույն տերություն, այդ ինչպե՞ս պատահեց, որ հիմա նա կամովին կորցրեց իր դեմքը: Հա՞յրն է ընկնում որդու գիրկը, թե՞ որդին է ընկնում հոր գիրկը:

- Արքա, Փոքր Հայքի հայերը գոհ են իրենց վիճակից, նրանք Պոնտոսի պատվարժան բնակիչներն են:

- Ավելի վատ, Գորդիոս, քո ասածը հաստատում է այն կասկածը, որ մայր երկրից կտրված հայերը կորցնում են իրենց ազգային դեմքը, եթե դա այդպես չէ, ապա նրանք պետք է մտածեն իրենց բնաշխարհին միանալու մասին:

- Ոչ, արքա, նրանք մնացել են հայեր և խոսում են հայերեն:

- Բայց հայերեն ես խոսում նաև դու, Գորդիոս, և մեր չքնաղ լեզվով դու պաշտպանում ես Պոնտոսի շահերը: Այդպես են վարվում նաև Փոքր Հայքի հայերը: Պոնտոսի պարթևների և հայերի այդքան ջերմ բարեկամությունը, ինչպես ներկայացնում ես դու, բոլորովին էլ չի խոսում հօգուտ հայերի: Նրանք մի բուռ են պարթևների մեջ և պարթևների հետ կձուլվեն այնպես, ինչպես մի բուռ ջուրը հսկա տակառում: Եվ մի քանի դար հետո արի ու Փոքր Հայքում հայ գտիր, յոթ անգամ յոթ պորտ պետք է տնտղես, ապացուցելու համար, որ այսինչ պարթևի ապուպապը կամ տատի տատը հայ է եղել: Եվ ի՞նչ օգուտ այն ժամանակ այդպիսի որոնումներից: Մեր նախորդները մի իմաստուն առած են ավանդել մեզ, թե պանդուխտի գերեզմանը առանց քարի կմնա:

Հայերը Պոնտոսում պանդուխտներ են, Գորդիոս և Հայքը չի կարող հաշտվել այդ մտքի հետ:

- Ես հիմքեր չունեմ քեզ առարկելու, արքա, բայց այդ խնդիրն էլ կարելի է լուծել խաղաղությամբ: Գամիրքը նվաճելուց հետո Եվպատորը չի զլանա իր բարեկամին զիջել մի այնպիսի փոքրիկ երկրամաս, ինչպիսին Փոքր Հայքն է:

- Տեսնո՞ւմ ես, Գորդիոս, թե ինչ ձևով ես մտածում դու: Իսկ եթե Գամիրքի հարցի լուծումը հետաձգվի, իսկ եթե այն բոլորովին չլուծվի՞, չէ՞ որ կարող է և այդպես պատահել:

- Քեզ կարելի է պատասխանել քո իմաստուն նախնյաց իմաստուն առածով, արքա. "Ժամանակը քեզ չի հարմարվի, դու ժամանակին հարմարվիր":

- Դժբախտաբար, Գորդիոս, մեր պապերը միշտ հարմարվել են ժամանակին, որի պատճառով Հայքը ծվեն-ծվեն է դարձել: Իսկ ես չեմ կարող հանդուրժել, որ հայկական պարանի վրա իրենց լվացքը փռեն օտարները:

- Արքա, ես լիազորված չեմ Փոքր Հայքի մասին այդպիսի հարցադրումներին զոհացուցիչ պատասխան տալ:

- Իսկ եթե ես մերժե՞ւմ Եվպատորին մեր դաշնագիրը Գամիրքի համար:

- Խորհուրդ չէի տա, արքա, նամանավանդ, որ այդպիսի դաշնագիրը վավերացնող զորավոր պատճառ չկա:

- Ի՞նչ պատճառ:

Գորդիոսը նորից ծափ զարկեց: Դահլիճ մտան պոնտացի նույն զորականները: Այս անգամ նրանք բռնել էին դռան չափ մի հսկա տախտակ, որն ամբողջովին պարուրված էր քաթանի մեջ: Գորդիոսը գլուխը ծռեց, և զորականները գլխահակ հեռացան դահլիճից: Ապա նա մոտեցավ և, հատակից բարձրացնելով տախտակը, սկսեց քանդել քաթանի երիզները:

Տախտակին ամրացված կտավի հոյակապ տեսարանն ասես կուլ տվեց արքայի ուշադրությունը:

Իրենց-իրենց բացվող ծովի ալիքների միջից կաքավելով դուրս էր ելնում ճերմակազգեստ մի գեղեցկուհի: Թվում էր, թե ալիքները ետ-ետ են գնում նրա գերող հայացքի ուժից: Կախարդական հմայք էր բուրում գեղեցկուհու դեմքից: Արքան մի քանի րոպե ապշահար դիտեց նկարը և հանկարծ, Գորդիոսի համար անսպասելի ճչաց.

- Սա մեր Աստղիկն է, դուք գողացել եք մեր աստվածուհուն, լսո՞ւմ ես Գորդիոս, դուք գողացել եք, պարթևներդ...

- Հանգստացիր, արքա, եթե իրոք դա ձեր Աստղիկն է, ապա Եվպատորը նրան Հայք է ուղարկում, իսկ գողն իր ապրանքը տիրոջից հազար հրասախ հեռու կտանի:

- Ո՞վ է, ո՞վ է այս չքնաղ էակը:

- Եվպատորի դուստրը, արքա, Պոնտոսի համապիյուռը:

- Ի՞նչ է նրա անունը: - Կլեոպատրա:

- Պատկերահանի երևակայության ծնո՞ւնդն է սա, Գորդիոս, թե իրոք...

- Արքա, Պոնտոսի օրենքներով պատկերահանները կարող են գլխատվել ամենատգեղ արքայադստեր դեմքը փոքր ինչ աղավաղելու համար: - Պատմիր, Գորդիոս:

- Թե որքան անկաշառ է Հայոց աշխարհին մեկնած Պոնտոսի բարեկամության ձեռքը, պիտի որ պերճախոս վկայի դեր կատարի այս պատկերը: Եվպատորը, Տիգրան արքա, քեզ է նվիրում իր ամենամեծ հարստությունը: Գեղեցկուհի Կլեոպատրան սպասում է Հայոց արքայի տիկնանց-տիկնոջ խույրին:

Հանուն Հայքի ու Պոնտոսի բարեկամության, Եվպատորը հրաժարվում է Պոնտոսի զարդից: Տասնյոթ գարուն է բոլորել չքնաղ Կլեոպատրան: Գեղեցկության բոլոր աստվածների համատեղ ստեղծագործության արգասիք է նա, Տիգրան արքա: Այդքան չնաշխարհիկ էակ մինչև այժմ չի ծնվել աշխարհի վրա: Աստվածային են նրա գեղեցկությունն ու խելքը: Նա գիտե հունարեն ճարտասանել, երգել պարթևների՝ մարդու սրտին հմայիչ թախծություն բերող երգեր, վիճել իմաստունների հետ և նժույգավարել ինչպես քաջայր մի զորական: Նա գիտե ձեր Նավասարդյան բոլոր երգերը և կարող է քնարի ու տավիղի վրա նվագելով մրցության դուրս գալ գինեվետ Գողթանի բոլոր գուսանների հետ:

- Խոսում էր Գորդիոսը և աչքի պոչով հետևում, թե Տիգրան արքայի վրա ինչպես է ներգործում նախօրոք սերտած իր ճառը:

Տիգրանը հայացքը կտրեց պոնտական գեղեցիկ պատկերից և շարժվեց դեպի գահը: Նրա աչքին ընկավ արքայական բազմոցի հենակին ամրացված Արտաշես Մեծի ոսկեձույլ բարձրաքանդակը: Մի պահ նրան թվաց, թե Արտաշեսյան հարստության հիմնադիրը խոժոռ հայացքով նայեց իրեն: "Չհանդգնես մի աղջկա համար գերության մեջ թողնել հայրենիքի մի մասը", - պապի դեմքին կարդաց Տիգրանը:

Նստեց գահին, բայց չշտապեց պատասխանել Գորդիոսին: Իսկ վերջինս սպասում էր: Եվպատորի դեսպանը զգաց Տիգրանի դեմքի փոփոխությունը և նոր գրոհ ակնկալող զորավարի պես հիշողության մեջ ժողովեց ճարտասանության պահեստային ուժերը:

- Դու լսո՞ւմ ես, Գորդիոս, - խոսել սկսեց Տիգրանը:

- Արքա, աշխարհում ոչ ոք չի կարող այնպես ուշադիր լսել, ինչպես դեսպանները:

- Կլեոպատրան գեղեցիկ է, բայց Փոքր Հայքն ավելի գեղեցիկ է:

- Որպես դեսպան, արքա, ես խորհուրդ կտայի քեզ շրջահայաց լինել և ձեռքից բաց չթողնել Պոնտոսի հետ բարեկամության հուսալի ագույցը: Բարեկամն ավելի շատ է մտածում իր պարտքը վերադարձնելու մասին, քան օտարը: Իսկ Հայքը չի կարող Եվպատորից զորեղ ու լավ բարեկամ գտնել: Այժմ Փոքր Հայքը ետ ստանալու լավագույն բանալին Կլեոպատրան է և, ըստ իս, միայն Կլեոպատրան:

- Այնուամենայնիվ, գիտցիր, Գորդիոս, մենք կփորձենք նաև այդ բանալին, իսկ եթե այն ժանգոտած կամ անպետք դուրս եկավ, Հայքը կմտածի ուրիշ բանալու մասին: Այդպես էլ զեկուցիր Եվպատորին և նրան հաղորդիր հարգանքներիս հավաստիքը:

Ընդունելությունն ավարտելուց հետո ապարանքի հյուրասենյակում նստած Գորդիոսը հաճույքով շփում էր ձեռքերը՝ խորհելով այն մասին, որ Եվպատորը գոհ կմնա ամեն ինչից: Նրան այժմ ոչինչ չէր մնում Հայքում անելու: Եթե Տիգրան արքան տար Կլեոպատրային ուղարկվող տիկնանց-տիկնոջ խույրը, Գորդիոսը Պոնտոս կդառնար հենց հիմա: Եվ ինչո՞ւ սպասել, չէ՞ որ չի կարելի հապաղել, երբ Եվպատորն է քեզ սպասում:

Երկու օր հետո Գորդիոսը դուրս եկավ Արտաշատից և ուղևորվեց դեպի Պոնտոս:

Կլեոպատրային տիկնանց-տիկնոջ խույրը ուղարկելու գաղտնիքը առաջինն իմացավ Փայլակ Մարդպետունին, որ Տիգրանի հրովարտակով հենց նոր էր ստանձնել արքունիքի հազարապետի պաշտոնը, չկարողացավ կուլ տալ այդ անարգանքը: Չէ՞ որ Տիգրանը տիկնանց-տիկնոջ կոչում է շնորհել նրա գեղեցիկ դստերը՝ Համասփյուռին: Արքան ի՞նչ է մտադիր անել: Չլինի՞ թե կարծում է, որ տիկնունում երկու տիկնանց-տիկին կարելի է պահել: Գուցե ժամանակները փոխվե՞լ են, և Մարդպետունին իրերի դրությունը պարզորոշ չի տեսնում: Բայց չէ: Ո՞վ կհանդուրժի Հայքում, որ Արտաշեսյան գահաժառանգի մեջ պոնտական արյուն լինի: Գուցե դիվանագիտական խա՞ղ է դա, որ Տիգրանն անում է երկրի ընդհանուր շահերից ելնելով: Ժամանակը կտա դրա պատասխանը: Իսկ Փայլակը պարտավոր է սպասել: Բայց պետք է աչալրջությամբ սպասել, այլապես ժամանակը կարող է գալ, իրենից ծածուկ տալ այդ հարցի պատասխանը և անցնել: Այդ դեպքում Մարդպետունին չի հասնի ժամանակի հետևից, և ամեն ինչ շուռ կգա գլխիվայր:

ՍԵՎՈՒԿԻ ՍՊԻՏԱԿ ԽԱԼԸ

Աշունը հրաժեշտ էր տալիս Արարատյան դաշտավայրին: Մրգաշատ գյուղում շինական Տաճատը իր կավաշեն տնակի կողքին փորած հորն էր իջեցնում գինու հսկա կարասը:

Քրքրված տոգայի առջևի քղանցքները նա խրել էր գոտու տակ, մի ոտքը հենել կարասին և գետնի վրա գլորելով աշխատում էր այնպես տեղադրել փոսի մեջ, որ անցած տարվա դեպքը չկրկնվի: Տաճատը չի կարող մոռանալ անցած տարին:

Փոսի մեջ իջեցնելու ժամանակ կարասը կպել էր կողքի քարին և մի փոքրիկ ճեղքվածք ստացել: Ճեղքվածքն այնքան աննշան է եղել, որ Տաճատը չի նկատել: Նա խաղողահյութը լցրել է կարասի մեջ, փակել կարասի բերանը և երկու ամիս հետո, երբ նորից բացել է այն, ձեռքը խփել է գլխին: Կարասի հատակում մնացել է գինենավի (գինի պատրաստելու համար տաշտ, հնձան, որը փոքրիկ նավի տեսք ունի) թեփուկի պես մի բան: Անաղարտ հյութը կարասի ճեղքվածքով հոսել է հողի մեջ: Այդ ձմեռ Տաճատը շատ նեղություն քաշեց: Ուրիշները խմում էին իրենց խաղողահյութը, մի մասը ծախում և փերեզակներից գնում տնային գործածության համար մանր-մունր բաներ, իսկ Տաճատը նայում էր կողքից:

Կարասը լավ բան է, բայց դե ինչ կարող ես անել, որ այն կավից է պատրաստված և կարող է ջարդվել: Եվ Տաճատը հիմա շարժվում է զգույշ: Տաճատի կարասի վրա նկարված էին յոթ խիրուսիաչափ ամաններ: Ուրեմն կարասը այդքան խաղողահյութ կարող է պարունակել: Դե, նրան շատ մեծ կարաս էլ պետք չէր: Որտեղի՞ց այդքան խաղող: Ուրիշների կարասների վրա մի քանի ակարքիաչափ ամաններ են լինում: Իսկ Տաճատն աղքատ է, նրա խաղողի ամբողջ այգին քսանհինգ թուփ ունի:

- Նվարդ, այ Նվարդ, - մի պահ աշխատանքը ընդհատելով, կանչեց Տաճատը:

Կինը չլսեց ամուսնուն: Այդ պահին տան ներսում նա զբաղված էր դմբիչ (կամ թնթոց – խառնիչ-գավազան, որով հարում են գինին) պատարաստելով:

Փայտյա ողորկ գավազանի ծայրին նա ամրացնում էր հոտավետ ծաղիկների մի փոքրիկ փունջ: Այդ գավազանով խաղողահյութը խառնելու ժամանակ ծաղիկներն իրենց բուրմունքը հաղորդում էին հյութին:

- Չե՞ս լսում, կնիկ, - այս անգամ ձայնը բարձրացնելով նորից կանչեց Տաճատը:

Կինը ցած դրեց դմբիչը և վազեց բակ:

- Մոտ արի, կնիկ, բռնիր էս պարանի ծայրը, - գործի անցավ Տաճատը և կարասի գլխի եզրերը պարուրած պարանի ծայրը տվեց կնոջը:

Նվարդի օգնությամբ Տաճատը հորի մեջ իջեցրեց կարասը և թեթևացած շունչ քաշեց:

- Դե, հիմա կարող ես գնալ, մնացածը ես կանեմ, - ժպտաց նա կնոջը և սկսեց փոսի մեջ ուղղել կարասի դիրքը:

Կինը աջ ձեռքը կզակին դրած նայում էր ամուսնուն և տեղից չէր շարժվում:

- Դու էսօր բան չես տարել բերանդ, այ մարդ, ախր օրը կիսվեց արդեն:

- Էհ, կնիկ, ուտելու ախորժակ չկա:

- Բայց քաղցած մնալ չի լինի, մարդ, սպասիր ես մի բան բերեմ, - այս ասելով Նվարդը վազեց տուն և քիչ հետո Տաճատի մոտ դարձավ տարգալը (հեղուկ ճաշի ման հին Հայաստանում) ձեռքում բռնած:

Տաճատը ընդհատեց աշխատանքը և փայտե գդալը վերցնելով սկսեց կում-կում կուլ տալ տարգալի պարունակությունը: Երբ ամուսինը վերջացրեց, Նվարդը դարձավ նրան.

- Մեր էրեխին տարան, իսկ մենք հանգիստ խղճով նստել ենք տանը:

- Կնիկ, ի՞նչ կարող ենք անել, թագավորի հրաման է, Հայոց աշխարհի քսանհինգը լրացած այրերը պետք է զորակոչի գնան:

- Բա ինչո՞ւ մինչև հիմա էդ տեսակ հրաման չկար:

- Կնիկ, դու հո ուրիշ աշխարհից չես եկել, թագավորը փոխվել է, իսկ նոր թագավորը որ հրաման չտա, բա ինչով անցկացնի իր ժամանակը, հո նա չի օգնելու մեր այգեկութին:

- Վույ, ինձ համար իմ թագավորը իմ Վրույրն է, խեղճ տղաս, տեսնես հիմա ի՞նչ է անում:

- Քաղաքամայրում զինավարժություններ է կատարում, ինչ պիտի անի:

- Իսկ ե՞րբ պիտի տուն գա:

- Թե կռիվ չլինի, մի տարի հետո տանը կլինի: Տիգրան արքայի հրովարտակն էդպես է, սրանից հետո բոլոր այրերը պարտավոր են մի տարի ծառայել արքայական զորագնդերում, իսկ կռվի ժամանակ գնդի մեջ կմնան այնքան, մինչև կավարտվի կռիվը:

- Իսկ թե հիմա կռիվ լինի, Տաճատ, ուրեմն Վրույրիս թշնամու վրա կտանե՞ն:

- Բա ի՞նչ պիտի անեն, կնիկ, հո թագավորի կողքին չեն նստեցնելու:

Ապա Տաճատը խոսքը շուռ տվեց.

- Ո՞ւր է մեր Սոսիկը

- Երինջը տարավ արածացնելու:

- Զգուշացրի՞ր, որ հեռու չտանի:

- Դե մի վախենա, ճակատի խալը մուրով սևացրի:

- Կնիկ, էսօր քրմերը կգան գյուղը, ես վախենում եմ: Եթե նրանք գլխի ընկնեն, որ մեր երինջի ճակատին սպիտակ խալ կա և մինչև հիմա մենք չենք հանձնել տաճարին, բաններս բուրդ է: Երեկ չէ մեկել օրը մեր հարևան գյուղում այդ կնազգեստ ավազակները մեկին այնքան էին ծեծել, որ խեղճը կիսամեռ էր դարձել:

- Ինչի՞ համար են ծեծել:

- Սպիտակ խալով երինջը թաքցնելու համար:

- Ով դու, Արամազդ, սա ի՞նչ պատիժ է, որ թափվում է խեղճերի գլխին: Որդի մեծացրու և զինվորագրիր թագավորին, բերքի քառորդը տուր թագավորին, տասնորդը գավառի նահապետին, մյուս տասնորդը ու սպիտակ խալով երինջները՝ քրմերին: Ախր մեզ բան չի մնում: Էսպես որ գնա, մեր մարմինն էլ պարտքի տակ կընկնի:

Մինչ մարդ ու կին իրենց տան կողքին նստած զրուցում էին այսպես, նրանց փոքրիկ տղան՝ տասնամյա Սոսը գյուղից քիչ հեռու, աշնանային թզուկ խոտերի վրա նստած, նայում էր, թե

ինչպես է իրենց Սևուկը դունչը ստեպ-ստեպ կպցնում գետնին և ախորժակով խժռում հողաթաթախ խոտը:

Սևուկը Սոսիկենց երինջի անունն էր: Նրա կաշին մոխրագույն էր, բայց ճակատին սպիտակ խալ ուներ: Իսկ Հայոց աշխարհում ճակատներին խալ ունեցող երինջները մեկ տարեկան դառնալուց հետո պետք է անհապաղ հանձնել Անահիտի տաճարին: Այդ մասին գիտեր նույնիսկ Սոսիկը: Բայց նա միաժամանակ գիտեր, թե ինչու են իր ծնողները այդքան խնամքով թաքցնում Սևուկի ճակատի սպիտակ խալը: Ախր դա իրենց ձմռան միակ մսացուն էր: Ինչպե՞ս տան տաճարին: Բա ձմեռն ի՞նչ ուտեն իրենք:

Հո չե՞ն կարող արորի եզները մորթել: Բա գարնանը ինչո՞վ վարեն հողը: Դե հո Սոսիկը փոքր չէ, որ այսքանը չհասկանա: Բայց նա միշտ մտածել է, թե ինչու է Սևուկը սպիտակ խալով ծնվել: Էխ, Սևուկ, Սևուկ, դու ախր չգիտես, որ Սոսիկենք աղքատ են, ուտելու բան չունեն; Ախր շատ աղքատ են:

Գանգուրների հետ մատով խաղալով՝ Սոսիկը նայում է Սևուկին և մեղմ ժպտում: Հանկարծ նա հիշեց, որ ինքը առավոտվանից բան չի կերել: Ձեռքը տարավ տոգայի գրպանը և հանեց չորացած հացի մի փոքրիկ կտոր: Մայրն էր դրել: Ուտելու ուրիշ բան չկար: Այ թե մի քիչ ջուր լիներ: Սոսիկը հացի կտորը կթրջեր ջրի մեջ և կսկսեր կծոտել: Ախր այդպես շատ քաղցր է լինում հացը: Բայց որտեղի՞ց ջուր գտնես: Այստեղ աղբյուր չկա: Իսկ հացը թրջելու համար Սոսիկը չէր կարող Սևուկին թողնել դաշտում և վազել տուն:

Սոսիկը դեռ չէր հասցրել հացի կտորը բերանը տանել, երբ դաշտամիջյան ճանապարհով փոշի բարձրացնելով՝ նրան մոտեցան մի խումբ մարդիկ: Անծանոթներից երկուսը հագել էին երկար շուրջառներ: Սոսիկը գիտեր, որ նրանք Անահիտ աստվածուհու տաճարի քուրմերն են: Քրմերի հետ կային նաև երեք զինվորներ, որոնք լայնալիճ կապարճները վզներով գցած, զգաստ սպասում էին որևէ հրաման կատարելու: Սոսիկն ակամայից հիշեց իր եղբորը՝ Վրույրին, որ մի քանի օր առաջ զորակոչվել էր արքունի բանակ: Հավանաբար հիմա Վրույրն էլ է այսպիսի զենքեր կրում, անցավ Սոսիկի մտքով:

Անծանոթ մարդկանց հայացքներից քաշվելով, Սոսիկը հացի կտորը նորից դրեց գրպանը:

Հանկարծ զորականներից մեկը գլուխը թեքեց դեպի Սևուկի կողմը և մի քանի քայլ առաջ անցավ: Երինջին մոտենալուն պես ծափ տվեց ու աղաղակեց.

- Սրբապղծություն, քուրմ հայրեր, սրբապղծություն...

- Կարծես Սոսիկի սիրտը սուր մտավ: Փոքրիկն իսկույն հասկացավ, որ զորականը գլխի է ընկել ամեն ինչ: Նա ուզում էր մի ճարպիկ բան մտածել ու փախցնել Սևուկին, բայց նրա աչքով ընկան զինվորների կապարճները և համարձակությունը չքացավ:

- Ի՞նչ է պատահել, - զորականի աղաղակի վրա խոսեց քրմերից մեկը, որը կապույտ գույնի փաթթոցագլխարկ էր կրում:

- Սրբապղծություն, քուրմ հայր, սրբապղծություն, այս երինջի ճակատի խալը սևացրել են:

- Ի՞նչ, - բղավեց կապույտ փաթթոցավոր քուրմը և մոտեցավ Սևուկին, ստուգելու համար զորականի ասածները:

Երինջը խրտնեց, բայց երկու զորականները վազելով կլոր փոկը զցեցին նրա վիզը, և քուրմը հանգիստ մոտեցավ ու աչքերը չռեց անասունի ճակատին:

- Մաքրել ճակատի կեղտը, - կարգադրեց քուրմը:

Սպիտակ խալը հայտնաբերելու համար երկար ժամանակ չպահանջվեց:

- Սա էլ երրորդ դեպքն է, ավազակներ, աստվածուհին իր ամբողջ վրեժը կթափի մեզ վրա, - բացականչեց կապույտ փաթթոցավոր քուրմը և մոտեցավ Սոսիկին:

- Դու ո՞ւմ տղան ես, փոքրիկ, - հարցրեց քուրմը:

Տղան լուռ էր:

- Դու ո՞ւմ տղան ես, - կրկնեց իր հարցը քուրմը:

Սոսիկը մտածում էր փախչելու մասին: Կապույտ փաթթոցավոր քուրմը զգաց դա և աչքով արեց զորականներից մեկին: Սոսիկի թևը բռնեցին:

- Դու ո՞ւմ տղան ես, - այս անգամ գոռալով հարցրեց քուրմը:

- Տաճատի, - լացակումած պատասխանեց Սոսիկը:

Քառորդ ժամ հետո շինական Տաճատի տան բակում հավաքվել էին բոլոր մրգաշատցիները: Կապույտ փաթթոցավոր քուրմը կանգնել էր բազմության կենտրոնում և իր արնակալած հայացքը հառել գետնին ծունկի եկած Տաճատին: Ոչ ոք ծպտուն չէր հանում:

- Ի՞նչ էին անում քո պապերը, երբ նրանց կովերը ծնում էին ճակատին սպիտակ խալ ունեցող հորթեր, - հանդիսավոր լռությունը խլեց կապույտ փաթթոցավոր քուրմը:

- Նվիրում էին Անահիտի տաճարին, սուրբ հայր, - դողալով պատասխանեց Տաճատը և կողքանց նայեց իրենից երկու քայլ հեռու կանգնած զինավառ զորականներին:

- Իսկ ինչպե՞ս էին նվիրում:

- Խնամում էին մի տարի, հետո նվիրում:

- Ես այդ չեմ հարցնում:

- Ապա ի՞նչ ես հարցնում, սուրբ հայր:

- Որևէ մեկը հիշեցնո՞ւմ էր նրանց սպիտակ խալավոր երինջը աստվածուհուն նվիրելու մասին:

- Ոչ, չէին հիշեցնում, սուրբ հայր:

- Իսկ ինչո՞ւ ես խախտել դու քո պապերի սովորությունը:

- Ես աղքատ մարդ եմ:

- Սրբապիղծ անասուն, դու համարձակվում ես աստվածուհուն նվիրաբերվող մսո՞վ լցնել ստամոքսդ:

- Դե, չէ, սուրբ հայր, - Տաճատի ձախ աչքում երևաց արցունքի առաջին շիթը:

- Ապա ի՞նչ, սպասում էիր, որ մտրակների հարվածնե՞րը տեղը բերեին հիշողությունդ ու պարտականությունդ:

- Խղճա, սուրբ հայր:

- Դու անարգել ես Հայոց աշխարհի սուրբ օրենքը, վատաբարո գեղջուկ:

- Ես աղքատ մարդ եմ, ուտելու ոչինչ չկա մեր տանը, Սևուկը ես պահել էի, որ ձմռանը կերակրվենք նրա մսով:

- Դու դեռ շարունակում ես լեզուդ բլբլացնե՞լ, ո՞վ է թույլ տվել, որ հայ գեղջուկը սնվի սպիտակ խալ ունեցող երինջի մսով, ո՞վ է թույլ տվել, հը, ի՞նչ է, պապանձվե՞ց լեզուդ: Տաճատը գլուխը կախ գցեց և ոչինչ չպատասխանեց:

- Մրգաշատցիներ, - կապույտ փաթթոցավոր քուրմը բարձրացրեց ձայնը, - Անահիտ աստվածուհին այսօր առավոտյան հայտնեց ինձ՝ իր պատգամախոսին, որ Մրգաշատում Տաճատ անունով մի գեղջուկ տաճարից թաքցրել է ճակատին սպիտակ խալ ունեցող մեկուկես տարեկան մի երինջ: Նա հայտնեց դա և պատվիրեց գալ ձեր գյուղը և խստագույնս պատժել օրինաց կարգը զանցողին: Եվ ինչպես տեսնում եք մենք չուշացանք և աճապարեցինք այստեղ՝ կատարելու մայր աստվածուհու պահանջը: Շինական Տաճատի սպիտակ խալ ունեցող երինջը ծնվել է Անահիտի տաճարի համար և այն պետք է ընծայվի տաճարին:

Աստվածուհու հրամանով անամոթ Տաճատը պետք է ստանա մտրակի քսան հարված: Ոսկեմայր և ոսկեծղի Անահիտը պահանջել է նաև, որ Մրգաշատից այս ամոթը կարելի է վերցնել միայն մի պայմանով՝ Տաճատի հորթապահ տղան պետք է իր ամբողջ կյանքը անցկացնի քաղաքամայրի Անահիտի տաճարում և քրմերի համար օգտավետ ծառայությամբ քավի իրենց ընտանիքի մեղքը:

- Ահ, կանացի մի զիլ ծղրտոց ընդհատեց քրմի խոսքերը:

Մարդիկ իրար անցան:

- Չեմ տա, ես իմ Սոսիկին չեմ տա, ավազակներ, մարդակերներ, չեմ տա, - ճչում էր Նվարդը:

Կապույտ փաթթոցավոր քուրմը ոչ մի բան չուներ իր դատավճռին ավելացնելու: Նա կարգադրեց զորականներին ի կատար ածել աստվածուհու պատվիրանը: Գյուղացիների մեջ սկսվեց մի տարօրինակ իրարանցում:

- Անխիղճներ, թալանչիներ, - լսվեց բազմության միջից:

- Խաբեբաներ, - արձագանքեցին մի այլ կողմից:

- Էյ, ով է այդպես պիղծ խոսքեր ասում, զինվորներ բռնեցեք դրանց, - քրմի կատաղությունը հասավ գագաթնակետին:

- Չեմ տա, ոչ մի աստվածուհու չեմ տա իմ Սոսիկին, սպանեցեք ինձ, բայց չեմ տա, - Նվարդը ամուր գրկել էր փոքրիկ Սոսիկին և չէր թողնում, որ զինվորները բռնեն նրա թևը:

Զինվորներից մեկը հանել էր տվել Տաճատի տոգան և նրա մերկ մեջքին խարազանում էր մտրակների հարվածները: Ոչ ոք չէր մոտենում Տաճատին:

Գյուղացիների ուշադրությունը գրավել էր Նվարդը, որը, վագրի ուժ ստացած, չէր ուզում իր գրկից բաց թողնել Սոսիկին: Տաճատին ծեծող զորականը յուրաքանչյուր երեք հարվածից հետո շունչ էր առնում, բութ հայացքով նայում, թե ցավից տնքացող գյուղացու մեջքի վրա ինչպիսի բծեր են թողնում իր մտրակի հարվածները և նորից անցնում գործի:

Քիչ հետո Տաճատը ուշագնաց փռվել էր գետնի վրա: Ծեծող զորականը ամբարտավան քայլվածքով հեռացավ իր զոհի մոտից և գնաց դեպի կապույտ փաթթոցավոր քուրմը: Գյուղացիները հավաքվեցին Տաճատի մոտ: Նրան բարձրացրին և ջուր ցանեցին դեմքին: Տաճատը բացեց աչքերը և խոր հառաչ արձակեց: Մի գյուղացու օգնությամբ հազավ կողքին ընկած տոգան: Այդ ժամանակ Նվարդը դեռ կատաղությամբ պայքարում էր զորականների հետ և չէր պոկվում Սոսիկից: Զինվորներից մեկը ոտքով ուժգին հարված տվեց կնոջ մեջքին: Լսվեց մի թույլ հառաչանք, և մայր ու որդի անջատվեցին իրարից:

Գյուղացիները վախից քարացան տեղներում:

Հախուռն հուզմունքից Սոսիկը չէր կարողանում բացականչել: Նրա մղկտոցը չէր հասնում շրթունքներին:

Կապույտ փաթթոցավոր քուրմը գյուղից մեկնելու նշան տվեց: Երկու քուրմեր և երեք զորականներ Սևուկին ու Սոսիկին իրենց առաջն արած հեռացան Մրգաշատից:

Տանջահար Տաճատը օրորվելով հազիվ կարողացավ մոտենալ գիտակցությունը կորցրած Նվարդին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՃԱՆԿ ՆԵՏԸ

Արշամաշատի թագավորական բանտի ստորին խցիկում Արտան արքան հաշվում էր իր գերության օրերը:

Ինչո՞ւ Տիգրանը միանգամից գլխատել չտվեց իրեն: Արտանը ոչ մի կերպ չէր կարողանում պատասխանել այս հարցին: Օրերն անցնում էին, դառնում ամիսներ, իսկ Արտանը դեռ սպասում էր դահիճին: Մի ժամանակ բանտի այս խցում ապրում էին Արտանի հրամանով ձեռբակալվածները: Այն ժամանակ նա թագավոր էր, և Ծոփքում ոչինչ չէր արվի առանց նրա համաձայնության: Իսկ հիմա Տիգրանը նրան զրկել է գահից: Եվ կարծես դա քիչ է, հպարտ Արտաշեսյանը ուզում է Արտանին կենդանի տանջել: Ծոփաց նախկին թագավորը շատ է վախենում մահից, իսկ սպասողական վիճակը նրան ավելի է վախկոտ դարձրել: Ոչ ոք նրան չէր հայտնում, թե ինչ է կատարվում հիմա Ծոփքում, դրսի աշխարհում: Բանտապահներն անգամ չէին հարգում նրա արքայական մեծությունը և անպատասխան էին թողնում նրա բոլոր հարցերը: Միայն մի անգամ հայտնեցին, որ իր առաջին զորապետ Միլիտոս Վարդունին գլխատվել է՝ խելագարի աղաղակով ընդունելով մահը: Լավ է, որ ինքը ներկա չի եղել, այլապես նրա վախը հիմա կկրկնապատկվեր: Իսկ ի՞նչ եղավ Մեհրուժանը: Արտանը չէր

կասկածում, որ նա կենդանի է: Հավանաբար նա կամ փախել է, կամ իր սուր լեզվով ապրելու շնորհ պոկել Տիգրանից:

Վերջին օրերին Արտանը խորհում էր իր սխալների մասին: Չէ՞ որ Երկաթակերտը Տիգրանի կողմից նվաճվելուց հետո ինքը կարող էր փախչել դեպի Գամիրք և ապավինել Արիոբարզանին: Եվ մեղավորը հենց Արիոբարզանն է, այդ Արիարաթների աղն ու հացը:

Իր արքայական կյանքում է՞լ ինչ սխալ է գործել նա: Ամենամեծ սխալը նա հայտնագործեց հինգ օր առաջ: Այդ սխալի համար նա չի կարողանում ներել իրեն: Այս բանտը ինքն է կառուցել տվել: Մի՞թե չէր կարող այն ժամանակ մի գաղտնի անցք պատրաստել տալ հենց այս խցի մեջ: Եթե այդ սխալը չգործեր, հիմա վաղուց նա ազատված կլիներ և այն ժամանակ կիմանար, թե ինչ ձևով վրեժ կլուծեր Տիգրանից:

Արտանը նույնիսկ չէր մտածում այն մասին, որ Տիգրանը կարող էր նրան այստեղ չբանտել, կամ ընդհանրապես չբանտել և տեղնուտեղը գլխատել տալ: Չէ: Աստվածները ցանկացել են, որ ինքը բանտարկվի հենց այս խցում և տանջվի իր սխալի համար:

Թագավորական բանտը, ուր Արտանը իր ուղեղը տանջում էր այսպիսի խոհերով, գտնվում էր Զարեհյանների արքայական պալատի ստորին հարկում: Արքայական դահլիճում Տիգրան արքան զրուցում էր Բագարատի և Մեհրուժանի հետ:

- Ուրեմն Արիոբարզանը փախավ, - կարծես ինքն իրեն ասաց Տիգրանը:

- Այո, արքա երբ մեր զորքերը մտան Մաժաք, Արիոբարզանն արդեն գտնվում էր Մեծ ծովի ափերին, - պատասխանեց Բագարատը:

- Հետո, Բագարատ էլ ի՞նչ տեսար Գամիրքում:

- Վահագնը վկա, արքա, դու այդ պոնտոսցիներին իզուր էիր մեզ ուղեկից դարձրել:

- Բագարատ, մենք Պոնտոսի հետ ամուր կապերով ենք բարեկամացել:

- Ես ոչինչ չեմ ասում, արքա, բայց Գամիրքը ես կգրավեի ավելի արագ, քան հիմա գրավեցինք պոնտոսցիների հետ միասին: Եվ նրանք այնքան էլ լավ այրեր չեն: Դաշնագրի համաձայն շարժական ամեն բան պիտի տային մեզ:

- Ինչ է, նրանք դրժեցի՞ն իրենց ուխտը:

- Դժվար է ասել, թե դրժեցին, արքա, բայց շատ բան թաքցրին:

- Եվ դու այդ մասին չհայտնեցի՞ր Գորդիոսին:

- Ինչպես չէ, Մեհրուժանի հետ մենք բողոք ներկայացրինք, և Գորդիոսը շատ բան զիջեց: Քո հրամանի համաձայն մենք առաջին հերթին հավաքեցինք այն ամենը, ինչ պատրաստված էր մետաղից, հետո ձիերն ու կովերը և նոր միայն մարդկանց: Մեր զինեգործները հիմա մետաղի պակաս չեն զգա:

- Ինչպե՞ս էր վարվում ձեզ հետ Գորդիոսը:

- Բարեկամաբար, արքա, և ոչ միայն նա: Աներձագդ՝ իննամյա Արիարաթը, խոնարհաբար էր դիմավորում մեզ, նա անչափ ուրախացավ, որ Գամիրքի գահի վրա ես թագադրեցի նրան:

- Բագրատունիները թագադրության իրենց մենաշնորհը տարածում են Հայոց աշխարհի սահմաններից դուրս, դա լավ նշան չէ, Բագարատ, - ծիծաղելով ասաց Տիգրանը:

- Վահագնը վկա, արքա, բարեկամին թագադրելուց վնաս չկա:

- Դուք հետևեցի՞ք մեր զորքի մարտունակությանը:

- Արքա, - այս անգամ Տիգրանին պատասխանեց Մեհրուժանը, որ մինչ այդ լուռ էր, - մեր սակրավորները բանի պետք չեն: Մաժաքի մատույցներում նրանք գլխովին կջախջախվեին Գամիրքի աղեղնավորներից, եթե Գորդիոսի այրուձին ժամանակին օգնության չհասներ:

- Ի՞նչ խորհուրդ ես տալիս, Մեհրուժան, - հարցրեց արքան:

- Արքա, անհրաժեշտ է լիովին վերազինել մեր բանակը, թեթև և կտրուկ զենքեր են պետք մեզ:

- Ես համամիտ եմ քեզ, Մեհրուժան, մենք պետք է ունենանք հզոր բանակ, և դա պետք է անեք դուք, զորապետներդ: Մեր պապերի կալվածքների մի մասը դեռ գտնվում է ուրիշների ձեռքին: Մենք պետք է ետ վերցնենք այն, մենք պարտավոր ենք այդ անել: Քո անձնազոհ ծառայության համար, Մեհրուժան, ես քեզ կարգում եմ Ծոփքի գահերեց: Բայց մոռացիր, որ առաջին հերթին դու զորապետ ես և պետք է գործ ունենաս զենքի հետ: Պատյանում երկար ժամանակ մնալուց շատ է ժանգոտվել հայոց սուրը, ժամանակն է, որ այն փայլատակի մեր թշնամիների գլխին:

- Շնորհակալություն, արքա, վստահության համար, - գլուխ տվեց Մեհրուժանը, - ես իմ կյանքը չեմ խնայի ի փառս Հայոց աշխարհի, ի փառս Տիգրան արքայի:

- Բագարատ, - դարձավ արքան զորապետին, - ժամանակը կգա, և մենք հնարավորություն կտանք Հռոմին՝ մոռանալու Միջերկրայքի Մեծծովյան ափերը բերող ուղիները: Այն ժամանակ Արիոբարզանը փախչելու տեղ չի ունենա: Բայց մինչև Արիոբարզանին գերելը չի կարելի Արտանին կենդանի պահել: Ստիպված ենք նրան գլխատել իր բարեկամից առաջ:

- Վահագնը վկա, արքա, կարելի է դեռ չշտապել, գուցե հաջողվի Արիոբարզանին շուտ գերել:

- Կարծո՞ւմ ես Բագարատ:

- Ես ուզում եմ, որ Արտանն ու Արիոբարզանը միասին ընդունեն իրենց մահը: Դա հետաքրքիր կլինի, և տարեգիրները այդ մասին կպատմեն սերունդներին:

- Սովորաբար ամեն բանում համբերելն ավելի օգտավետ է, քան աճապարելը: Բայց այս դեպքում չի կարելի ուշացնել: Արիոբարզանին գուցե մենք գերի էլ չվերցնենք, այն ժամանակ Արտանը կարող է մեզանից շատ ապրել: Ես հրաման կտամ դահճին, որ այս գիշեր Արտանը գլխատվի:

Զրույցը մի պահ ընդհատվեց: Երեքն էլ սկսեցին մտածել տարբեր բաների մասին: Արքան խորհում էր, թե երբ պետք է առիթը ներկայանա պարթևների վրա գրոհելու համար:

Բագարատը երազում էր Բագրևանդի գեղեցիկ հովիտների մասին, իսկ Մեհրուժանը մտածում էր, թե ինչպես կընդունի Ծոփքը Արտանի գլխատվելն ու իր գահերեց նշանակվելը:

Լռությունն առաջինը խզեց Բագարատը:

- Արքա, այդ պիղծ պարթևների պարտքից հիմա կազատվենք: Գամիրքից այնքան մետաղ ենք բերել, որ մի քանի տասնյակ հազար պայտ կարելի է պատրաստել միանգամից:

- Եվ դու կարծում ես, թե այդ մետաղներից մենք պայտեր կպատրաստենք և կտանք պարթևների՞ն:

- Արքա, դու խոստացել ես նրանց:

- Բայց ես խոստացել եմ յոթ հազար պայտ տալ տասը տարում:

- Իսկ ինչը կխանգարեր, որ մենք հիմիկվանից մարեինք մեր պարտքը:

- Դու այնպես ես խոսում, Բագարատ, կարծես թե իրոք մենք պարթևներին պայտ ենք պարտք.

- Մենք խոսքով ենք պարտք:

- Դա ճիշտ է, խոսքով պարտք ենք, իսկ գործով պետք է պայտել նրանց պահանջը: Հասկացիր, Բագարատ, ոչ մի պայտ Հայոց աշխարհը չի տա պարթևներին: Մեր պայտերը պարթևաց աշխարհը կտեսնի միայն այրուձիու նժույգների սմբակներին:

- Դա երբ կլինի, արքա:

- Այս դեպքում արդեն չպետք է սպասել: Իսկ ձեր բերած մետաղներից պետք է պայտեր շատ պատրաստել, դա ճիշտ է, այս խնդրում ես համաձայն են քեզ հետ:

Ասաց Տիգրանը, մի պահ լռեց և շարունակեց.

- Գնանք հիմա գլխավոր զորակայանը, ես պետք է նոր զենք ցույց տամ ձեզ:

- Նոր զե՞նք, - զարմացած հարցրեց Բագարատը:

- Այո նոր զենք, հայկական երկճանկ նետ:

- Ո՞վ է պատրաստել:

- Արշամաշատի արհեստավորաց տներում աշխատող մի վարպետ:

- Տիգրանը ծափ տվեց: Դահլիճի շեմին երևաց արքայական թիկնապահը:

- Կանչել հազարապետին, - հրամայեց արքան:

Թիկնապահը դուրս եկավ դահլիճից: Քիչ անց երևաց Փայլակ Մարդպետունին: Նա գլուխ տվեց արքային և հրաման կատարելու սպասողական դիրք ընդունեց:

- Արհեստավորաց տան վարպետ Արմենին վերցրու և բեր գլխավոր զորակայանը, մենք հիմա գնում ենք այնտեղ, - ասաց արքան և ոտքի ելավ:

- Մարդպետունին դուրս եկավ արագ, իսկ Բագարատն ու Մեհրուժանը հետևեցին Տիգրանին:

Իր ամբողջ կյանքում Արմենը միայն մետաղ է կռել: Նրա կյանքի հիսունհինգ տարիներից քառասունն անցել է քուրայի մոտ: Գլուխը ճաղատ է, դեմքի վրա մազի հետք չի երևում: Ասես քուրայի կրակը խանձել է ամեն ինչ և զրկել Արմենին մազ ունենալու շնորհից: Նա թագավորների հետ գործ չի ունեցել իր կյանքում: Ոչ հանդիպել է, ոչ ցանկացել: Զենքեր է կռել, հանձնել արհեստավորաց տան մեծավորին ու ստացած վաստակով հոգացել իր բազմանդամ ընտանիքի ծախսերը: Բայց մի քանի օր առաջ արհեստավորաց տան մեծավորը նրա մոտ եկավ ուրախացած ու, թափ տալով Արմենի մեջքը, հայտնեց, որ Տիգրան արքան ցանկանում է հանդիպել նրան, որ այդ նոր զենքը շատ է դուր եկել արքային: Արմենը գնաց պալատ և հանդիպեց Հայոց թագավորին: Տիգրանը գովեց նրա վարպետությունը և մի տաղանդ նվիրեց: Իր կյանքում Արմենի ձեռքը այդքան դրամ չէր ընկել: Նա խոր գլուխ տվեց թագավորին և եկավ տուն:

Հիմա էլ նորից Արմենին կանչում են թագավորի մոտ:

Գլխավոր զորակայանի մի անկյունում մի նետաձիգ հեռավորությամբ վազքուղու նմանվող տաղավար էր կառուցված: Այդտեղ սովորաբար զինավարժություններ էին կատարում կայանի զորականները:

Դիմացի պատին դնում էին ամեն տեսակ խրտվիլակներ, որոնք թիրախի դեր էին կատարում նշանառուի համար:Երբ Արմենը հազարապետ Մարդպետունու ուղեկցությամբ ներս մտավ, մարզարանում բավական մարդ էր հավաքվել:

Արքայի և զորապետներ Մեհրուժանի ու Բագարատի համար բերել էին բազմոցներ: Արմենը մոտեցավ և ծալվեց թագավորի առջև:

- Վարպետ Արմեն, - դարձավ նրան Տիգրանը, - վերցրու քո պատրաստած նետն ու աղեղը և պատմիր նրա մասին, - արքան Արմենին մեկնեց մի նետ ու աղեղ:

- Արքա, տերդ Հայոց աշխարհի, քո նվաստ ծառան այս նետը պատրաստել է, որ թշնամու ավելի շատ սրտեր խոցվեն հայ զորականների ձեռքով:

Արմենին ամենից ուշադիր լսում էին Մեհրուժանն ու Բագարատը: Վարպետը նախ պատմեց աղեղի մասին: Այն պատրաստված էր հոնի ծառի ճյուղից, որի կորացրած ծայրերը ձգում էր չորացրած աղիքից սարքած լարը: Աղեղն ուներ երեք կորություն, ընդ որում միջին փոքր կորությունից աղեղնավորը պիտի բռներ ձախ ձեռքով: Ավելի հետաքրքիր էր նետը, որի փայտե կոթին հագցված էր երկաթյա երկճանկ ծայրը:

- Այս ճանկը, - պատմում է Արմենը, - մարդու մարմնից հանելը դժվար է: Նա կխրվի մարդու մսի մեջ և կսեպվի երկու ուղղությամբ: Զույգ ճանկերի ծայրերի այս աննկատ փոսիկներում պիտի լցվի չնչին քանակությամբ թույնի փոշի, դա նետը կդարձնի թունավոր:

- Իսկ այդ փետուրն ինչի՞ համար է, - վարպետին դիմեց Բագարատը՝ ցույց տալով նետի ձողի ստորին ծայրին ամրացված թռչունի փետուրը:

- Այս փետուրն օգնում է, որ արձակված նետը սրընթաց ու ազատ թռչի օդում և մեծ կորագիծ չտա, որի շնորհիվ հարվածը դիպուկ կլինի:

- Ահա այս ասելով Տիգրան արքան ելավ իր բազմոցից և, մոտենալով Արմենին, վերցրեց նրանից նետն ու աղեղը:

- Զորականները նետաձգարանի պատին ամրացրին հարդով լցված մի բարձ:

Արքան վերցրեց աղեղն ու նշան բռնեց:

- Կեցցե Հայոց աշխարհի ամենադիպուկ այրը, - բացականչեցին նետաձգարանում հավաքվածները:

Արքայի արձակած նետը կպել էր բարձի կենտրոնին:

Զորականներից մեկը վազեց և բարձի միջից հանեց նետը:

Բարձի երեսը պատռվեց դուրս քաշվող նետի ճանկերից: Զորականը պատին նոր բարձ ամրացրեց: Արքան այս անգամ նետի ձողի ծայրից հանեց փետուրը և լարեց աղեղը: Նետաձգարանում դարձյալ հիացական աղմուկ բարձրացավ, սակայն նետն այս անգամ կպել էր բարձի ծայրին: Տիգրանը դարձավ ու նստեց իր բազմոցին, նետը հանձնելով Բագարատին: Մի քանի անգամ նետն արձակեցին Բագարատն ու Մեհրուժանը: Նրանցից հետո իրենց սրատեսությունը փորձեցին նաև Փայլակ Մարդպետունին, հետո մյուս զորականները: Երբ նետն արձակում էին փետուրով, այն դիպչում էր ուղիղ նշանակետին, իսկ երբ առանց փետուրի էին արձակում՝ հաճախ վրիպում էր:

Վարպետ Արմենի պատրաստած նոր նետի փորձարկումը հաջող անցավ: Տիգրան արքան աչքով արեց Մարդպետունուն: Վերջինս Արմենին նվիրեց ևս մի տաղանդ: Վարպետն ուրախությունից կորցրել էր իրեն և Տիգրանի առաջ խոնարհվելու փոխարեն գլուխ էր տալիս Փայլակ Մարդպետունուն:

- Վարպետ, - բազմոցի վրա ուղղվելով Արմենին դարձավ Տիգրան արքան, - օրական այսպիսի քանի նետ կարող ես պատրաստել:

- Թե մետաղ լինի, արքա, երկուսից-երեքը:

- Քիչ է, ձեր արհեստավորաց տնում քանի՞ մարդ է աշխատում:

- Հիսուն մարդ, արքա:

- Ի՞նչ են պատրաստում նրանք:

- Ամեն ինչ էլ պատրաստում են, արքա, դանակներ, վարսակալներ, հերազարդեր, աշտանակներ, սակրեր և էլի ուրիշ մանր-մունր բաներ:

- Դու կարո՞ղ ես նրանց բոլորին սովորեցնել այդպիսի նետ պատրաստել:

- Ինչու չէ, արքա, նրանք բոլորը քուրայի առաջ մեծացած այրեր են և գիտեն մետաղի լեզուն:

- Իսկ Արշամաշատում շա՞տ կան այդպիսի վարպետներ:

- Շատ, արքա, նրանց թիվը կհասնի մի քանի հարյուրի:

- Քեզ վարպետ Արմեն, կարգում եմ այդ վարպետների մեծավոր: Վաղվանից հավաքիր հմուտ այրերին և գործի անցիր: Զորապետ Մեհրուժանը ձեզ շենք կտրամադրի և մետաղ կտա ինչքան որ պետք է: Սովորեցրու նրանց այս նետի արտադրության եղանակը: Պետք է շատ նետեր պատրաստել, շատը հազար չհասկանաս, այլ հարյուր հազար, բյուր հարյուր հազար: Եվ միայն կպատրաստեք այս տեսակ նետ: Բայց գիտցիր, վարպետ և հիշեցրու ապագա քո գործավորներին, որ այս կարգի բոլոր նետերը պետք է պատրաստվեն միայն տերության բանակի համար:

Մասնավոր մարդու, ով էլ նա լինի՝ հայ թե օտարական, թեկուզ մի երկճանկ նետ վաճառելու դեպքում՝ վաճառողը պատասխան կտա իր գլխով, և նրա աղխի բոլոր անդամները կդառնան տերության ստրուկներ: Գործը հաջողությամբ գլուխ բերելու դեպքում դու կարժանանաս իմ ուշադրությանը:

ԿԼԵՈՊԱՏՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Քաղաքամայր Արտաշատում տոնախմբություն էր: Ծնվել էր Տիգրան արքայի անդրանիկ որդին: Արքայամայր Երանուհին փոքրիկին տվել էր Արտավազդ անունը:

Ոսկեճաղ մահճակալին պառկել էր Համասփյուռը: Մետաքսյա վերմակի տակից նա հայացքը հառել էր կողքին դրած օրորոցին, որի մեջ փաթաթված նորածինը ձայն չէր հանում: Օրորոցի կողքին Համասփյուռի հարդասեղանն էր, որի վրա շարված էին զանազան պարագաներ՝ ոսկե վարսակալը, սկավառականման հերազարդը, բրոնզե հայելին ու մազխիլը (պարագա, որով կանայք իրենց դեմքերից պոկում էին ավելորդ մազերը: Բառացի նշանակում է պոկող) և երկար բրոնզե սանրը: Մահճակալին կպած կարճոտ աթոռիկի վրայի տարգալը լցված էր տապակած վառյակների փափուկ մսակտորներով: Համասփյուռի փարթամ վարսահյուսքերը այնպես էին փռվել բարձի վրա, որ ամբողջովին ծածկել էին պարուրակը(բարձի երես): Դեմքին նայելիս թվում էր, թե հենց նոր է դուրս եկել բաղնիքից: Այդ վիճակում Համասփյուռը այնքան գեղեցիկ էր, որ թողնում էր քնած աստվածուհու տպավորություն:

Բայց նա քնած չէր: Չէր էլ կարող քնել: Նա Տիգրան արքայի հետ ամուսնացավ որպես տիկնանց-տիկին, բայց առաջին զավակը լույս աշխարհ բերեց արդեն տիկին դարձած: Պոնտոսի գեղեցկուհին տիկնունին խառնեց իրար: Կլեոպատրան արքունիք մտավ տիկնանց-տիկինոջ խույրով: Համասփյուռը այդ հարվածը չկարողացավ տանել և վազեց ամուսնու մոտ: Տիգրան արքան նրան բացատրեց, թե Հայոց աշխարհի շահերը պահանջում են, որ առայժմ տիկնանց-տիկինոջ խույրը գտնվի Պոնտոսի արքա Եվպատորի դստեր գլխին: Քիչ էր մնում, որ Համասփյուռը թունավորեր իրեն, բայց արքայամայրն ու հայրը խանգարեցին նրան: Սակայն իր արքա ամուսնու վիրավորանքը մոռանալ չէր կարողանում: Համասփյուռը հիշում էր, թե մեղրամիսի օրերին ինչպես էր Տիգրանը խոսում գալիքի մասին: Նա համոզում էր Համասփյուռին, որ Հայոց աշխարհը իրենք կդարձնեն հզոր տերություն, որ իրենց փառքը կհասնի աշխարհի ծայրը: Գուցե այդ նույնը նա հիմա ասում է Կլեոպատրային: Համասփյուռը զարմանում էր, թե ինչպես է Տիգրանը տիկնանց-տիկինոջ կոչում շնորհել պարթևուհուն, որն

արքայի առաջ կաքավում է ինչպես վարձակ: Տիգրանը համոզում էր Համասփյուռին, որ ինքը բոլոր պարթևներին կամ կոչնչացնի, կամ հայեր կդարձնի, իսկ այս պարթևուհու խորհրդով պալատականներին ստիպում է սովորել հունարեն և դառնալ քաղաքակիրթ: Մի՞թե բոլորին հայ դարձնելու համար Տիգրանը մտադրվել է սկսել հունասիրությունից: Բայց այդ ճանապարհով ոչ միայն ուրիշները հայ չեն դառնա, այլև հայերն էլ հույներ կդառնան: Դա սարսափելի է; Իսկ Համասփյուռը այնպե՞ս է հավանում Տիգրանին: Բայց բոլորից շատ նա տանջվում էր Կլեոպատրայի ներկայությունից: Ամիսոսից գալուն պես նա իր մեծաքանակ սպասավորներով զբաղեցրեց տիկնունու բոլոր դահլիճները: Համասփյուռին մնաց միայն այս սենյակը: Միջնասրահում էլ հանդիպելիս Համասփյուռին նայում էր որպես սպասուհու: Ինչո՞վ է զոռոզանում Պոնտոսի այդ պճնամոլը: Եթե արքայամայր Երանուհին չլիներ, ինքը այս պալատում մի վայրկյան չէր մնա: Դու, Համասփյուռ, միշտ ասում է Երանուհին, հայոց տիկնունու առաջին կինն ես, թեկուզ տիկնանց-տիկնոջ խույրը ուրիշն է կրում: Արտաշեսյանների գահին պարթևական արյուն ունեցող մարդ չի կարող բարձրանալ: Հայոց աշխարհը դա թույլ չի տա: Երանուհին համոզում է, որ միայն Համասփյուռից ծնվածը օրինական պայազատ կհամարվի:

Համասփյուռը Երանուհու ասածները ընդունում էր որպես սկեսրոջ բարի ցանկություններ: Նա արդեն գիտեր արքունական տան օրենքները: Առանց արքայի համաձայնության Համասփյուռի ոչ մի զավակ հայոց գահի երես չի տեսնի: Իսկ արքան օրվա մեծ մասն անց էր կացնում Կլեոպատրայի հետ:

Եվ, այնուամենայնիվ, նրա դեմքն այժմ ողողված էր խաղաղ երջանկության փայլով: Օրորոցի բռնակից, նորածնի գլխի վրա, կախված է արքայական խույրը: Երանուհու հետ Տիգրան արքան մտել էր Համասփյուռի սենյակը և փոքրիկ Արտավազդի գլխի վրա իր ձեռքով կախել արքայական խույրը:

Արքունական սովորությունների համաձայն դա նշան է, որ նորածինը մեծանալով գլխին թագ կունենա: Երանուհին Համասփյուռի ականջին փսփսացել է, որ հայոց թագաժառանգի ծնունդը քաղաքամայրը դիմավորում է տոնախմբությամբ և որ դա արվում է արքայի ցանկությամբ:

Բայց տոնախմբության ձայները չէին հասնում Համասփյուռին:

Խոր Վիրապի միջնաբերդին հարող ընդարձակ հրապարակում արտաշատցիները ցնծագին տոն էին սարքել: Հրապարակի կենտրոնում մի քանի տասնյակ մարդ իրենց մարմիններից փայտեր էին կապել, ապա ծածկել չթով ու թռչկոտում էին աջ ու ձախ: Նրանք այնպես էին շարժվում, ասես նստած էին ձիերի վրա: Քիչ այն կողմ կապերտներից ուղտեր էին սարքել, որոնց տակ երկուական մարդիկ իրենց շարժումները վարպետորեն ներդաշնակելով՝ թողնում էին ուղտի տպավորություն: Արհեստական ուղտերի վզներից կախկխել էին փոքրիկ զանգակներ: Նրանք շրջան էին կազմել միջնաբերդի պատի տակ և անընդմեջ զնգզնգացնելով, կարծես իմաց էին տալիս նորածին թագավորազնին, որ նա կունենա անսահմանափակ քանակությամբ ձիեր և ուղտեր, որ նրա հպատակները իրենց տիրոջը կենթարկվեն ձիերի ու ուղտերի պես:

Տիկնունու իր սենյակի պատուհանից այդ ամենը տեսնում էր Կլեոպատրան: Տեսնում ու հասկանում էր: Ահա թե որտեղ է ընկել ինքը: Արցունքով հուռթի նրա գեղեցիկ աչքերը չէին

կտրվում հրապարակից: Նա գիտեր, որ այդ ամենը սարքել է Երանուհին: Վերջինս չի սիրում Կլեոպատրային: Ոչ միայն չի սիրում, այլ տեսնել անգամ չի ուզում: Սակայն սա արդեն չափազանց է:

Այսպիսի տոն կարելի է սարքել միայն իսկական գահաժառանգի համար: Իսկ Կլեոպատրան այդ ժառանգը լույս աշխարհ կբերի վեց ամիս հետո: Նա պատրաստվում էր իր ամբողջ մաղձը թափել արքայի վրա, բայց արքան պալատից դուրս էր գնացել: Նրա նաժիշտ Քասիման, որին նա վստահում էր ամեն ինչ, տիկնանց – տիկնոջ մոտ մտավ գլուխը գցած:

- Ի՞նչ է պատահել, Քասիմա, - պատուհանից հայացքը կտրելով և դեպի իր ոսկեզօծ մահճակալը շարժվելով հարցրեց Կլեոպատրան, - արքան դեռ չի՞ դարձել միջնաբերդ:

- Ոչ, իմ քնքուշ դշխո, դեռ չի դարձել, - լացակումած պատասխանեց նաժիշտը:

- Դու արտասվում ես, Քասիմա, ի՞նչ է պատահել, պատմիր, շուտ:

- Դշխո, ես վատ բան տեսա:

- Պատմիր, ի՞նչ տեսար:

- Չեմ ուզում պղտորել քո սիրտը:

- Դե շուտ պատմիր, Քասիմա, դու գիտես, որ ես չեմ սիրում երկար սպասել:

- Դժխո, բայց եթե ես պատմեմ, կդառնամ գուժկան, իսկ ինքդ գիտես, որ ես ապրում եմ միայն նրա համար, որ բարի լուրերով ուրախացնեմ քո սիրտը:

- Իմ լավ Քասիմա, քո տիրուհուն դուրս ես բերում համբերությունից: - Դժխո, Համասփյուռի նորածնի օրորոցից արքայական խույր է կախված:

- Ի՞նչ, բարկությունը Կլեոպատրայի գեղեցիկ այտերի մարմարափայլը փոխեց ալ-կարմիրի, - դու քո աչքո՞վ տեսար:

- Այո, դշխո, - նվազած պատասխանեց նաժիշտը և այնպիսի տեսք ընդունեց, որ ասես մեղք է գործել:

- Քասիմա, դու երազո՞ւմ ես տեսել, թե՞... Կլեոպատրան չէր կարողանում զսպել հուզմունքը:

- Դշխո, երազ չէր, իմ աչքով տեսա, մի քանի րոպե սրանից առաջ...

- Իսկական արքայական խույր էր այն:

- Իսկական:

- Դա արքայամայր Երանուհու ձեռքի գործն է, հրապարակի այս խառնիճաղանջն էլ է նրա գործը, սպասիր արքան դառնա, ես կիմանամ, թե ինչ կանեմ:

- Դշխո, - նորից մեղայական տոնով խոսեց նաժիշտը:

- Հը, Քասիմա, ուրիշ լո՞ւր էլ կա:

- Կա դշխո:

- Դու վատթարագույնը հայտնեցիր, երկրորդականները պատմիր համարձակ:

- Բայց... նաժիշտը չէր համարձակվում ասել:

- Բայց ի՞նչ, Քասիմա, դու այսօր այնքան տարօրինակ ես դարձել, որ քիչ է մնում մյուսների պես քեզ էլ հրամայեմ, որ լեզուդ բացվի:

- Դշխո, ես դեռ չպատմեցի հույժ կարևորը:

- Հույժ կարևո՞րը

- Այո:

- Ո՞րն է այդ հույժ կարևորը:

- Սպասավորներն ասում են, որ Տիգրան արքան իր ձեռքով է նորածնի օրորոցին կախել արքայական խույրը:

- Արքա՞ն:

- Այո, արքայամոր հետ միասին մտել է Համասփյուռի ննջարանը և...

- Դու լսո՞ւմ ես, ոսկեմայր և ոսկեծղի Անահիտ, - Կլեոպատրան գլուխն առավ ափերի մեջ, - ես չեմ կարող այլևս հանդուրժել, չեմ կարող, ով դու, աստվածուհի Աստղիկ, միթե ես այնքան գեղեցիկ չեմ, որ իմ հայացքով Տիգրանին մոռացնել տամ Հայոց աշխարհի բոլոր համասփյուռների գոյությունը: Ինչ է կատարվում իմ շուրջը: Տիկնանց-տիկնոջ խույրը ես եմ կրում, իսկ Հայոց աշխարհը ուրիշին է ճանաչում թագուհի: Ես կավերեմ այս միջնաբերդը, ես այստեղ չեմ մնա: Օյ, գլուխս պտտվում է, Քասիմա, - Կլեոպատրան մետաքսակար շրջազգեստի քղանցքները կոխոտելով ընկավ մահճակալի վրա:

- Հանգստացիր, իմ դշխո, - Կլեոպատրայի ոտքերը մահճակալի վրա ուղղելով, թախանձագին խոսում էր նաժիշտը:

Բայց Կլեոպատրան չկարողացավ պառկած մնալ մահճակալին: Մի րոպե հետո նա գլուխը բարձրացրեց և նստեց տեղում:

- Իմ լավ դշխո, դու մի վրդովիր քո սիրտը, խաղաղվիր և կտեսնես, որ ամեն ինչ լավ կլինի:

- Բայց ես չեմ կարող, Քասիմա, չեմ կարող, հասկանո՞ւմ ես, ինչի՞ տեղ է դրել Տիգրան արքան Միհրդատ Եվպատորին, որ այդքան շուտ դրժում է նրան տված իր խոստումը, ինչի՞ տեղ է դրել ինձ, որ գիշերները շարունակ հավաստիացնում է, թե Հայոց աշխարհը միայն մի տիկնանց-տիկին ունի և նա Կլեոպատրան է, թե աստվածները միայն մի գեղեցկուհի են պարգևել աշխարհին և նա Կլեոպատրան է, թե ես, դու լսո՞ւմ ես, Քասիմա, թե ես ոչ միայն Պոնտոսի ու Հայքի, այլ համայն աշխարհի անզուգական համասփյուռն եմ: Իսկ այսօր արքայական խույրի տակ ննջում է Նախճավանի գեղջկուհու զավակը: Դե, իհարկե գեղջկուհի է: Ինչ է, Քասիմա, կարծում ես նրա անունը փրկո՞ւմ է դրությունը: Համասփյուռ անուն կրելով

համասփյուռ չես դառնա: Թե այդպես լիներ, բոլոր ծնողները իրենց դուստրերին Համասփյուռ կանվանեին:

- Հանգստացի, դշխո, վրդովմունքը քո գեղեցկության թշնամին է, մի բարեկամացիր այդ թշնամու հետ:

- Իմ լավ, իմ բարի Քասիմա, հիմա չի կարելի հանգստանալ և չի կարել լռել:

- Արքայի հետ կխոսես և ամեն ինչ լավ կլինի, իմ դշխո, արքան պաշտում է քեզ, ինչպես Վահագնը՝ Աստղիկին:

- Մինչև այժմ ես հավատում էի դրան, իսկ այժմ համոզված եմ, որ նա հավատացնում է միայն:

- Այդպես մի չարանա, իմ դշխո, արքան լավն է, հայերն են վատը:

- Մի թույլ ժպիտ երևաց Կլեոպատրայի շրթունքներին:

- Իմ լավ, Քասիմա, բայց չէ՞ որ արքան էլ հայ է:

- Ես նրանց չեմ սիրում, դշխո, որովհետև նրանք... չեմ կարողանում ասել...

- Զգույշ, Քասիմա, այդպիսի մտքերով Հայքում երկար չես հյուրասիրվի, իսկ մենք այստեղ ենք եկել ոչ որպես հյուրեր:

Կլեոպատրան վեր կացավ մահճակալից, մի քանի քայլ արեց սենյակում և պատուհանից լսվող հրապարակի բազմության աղաղակներից փակեց ականջները:

Նա նորից քայլեց դեպի մահճակալը, հետո կանգ առավ գեղեցիկ աչքերը Քասիմային սևեռած մի պահ լուռ խորհեց, ապա կտրուկ շարժվեց դեպի գրակալը: Նաժիշտը բազմոցը քաշեց նրա տակ:

- Քասիմա, դու հանգիստ նստիր, չխոսեցնես, լսո՞ւմ ես, ասաց Կլեոպատրան և գրակալի զզրոցից հանեց մի մագաղաթ:

- Լսում եմ դշխո:

Երկու ժամ շարունակ Կլեոպատրան իր մտքերը հանձնում էր մագաղաթին, իսկ նաժիշտը լռության աստվածուհու դեր էր կատարում:

- Դու հոգնեցի՞ր Քասիմա, - գործը վերջացնելով, փորձեց կատակել Կլեոպատրան:

- Ինչից պիտի հոգնեի, դշխո, - զարմացած հարցրեց նաժիշտը:

- Լռելուց, Քասիմա, լուռ մնալուց:

- Մի՞թե լռելուց կարելի է հոգնել, դշխո:

- Այո, Քասիմա, բոլոր կանայք հոգնում են լռելուց:

Բայց ես հիմա կցրեմ քո հոգնածությունը, գիտե՞ս ինչ գրեցի:

- Չգիտեմ, դշխո:

- Նամակ, Քասիմա, իմ առաջին նամակը դեպի Պոնտոս: Հայրս սովորեցրել է ինձ, որ եթե մարդ զգում է իր հետ կատարվող դժբախտության ծակոցները և չի դիմում օգնության, նա դառնում է կրկնակի դժբախտ: Լսիր, Քասիմա, թե ինչ եմ գրել:

Եվ Կլեոպատրան սկսեց շշուկով կարդալ նամակը:

"Հայր իմ և Պոնտոսի արքա.

Սիրեցյալդ դուստրը ջերմագին ողջույններ է հղում քեզ: Այնպես, ինչպես ոչ ոք չի կարող քո աշտարակներից տեսնել մեր ծովի մյուս ծայրը, այնպես էլ ոչ ոք չի կարող չափել դեպի քեզ տածած իմ սիրո սահմանը: Հայքը լավն է, բայց Պոնտոսն ինձ համար ավելի լավ է, որովհետև այնտեղ են անցել իմ լավ օրերը, որովհետև այնտեղ է ապրում իմ հզոր և իմաստուն հայրը:

Առաջնորդվելով քո խրատներով, ահավասիկ, ես նամակ եմ գրում քեզ և հայտնում, որ հայոց արքունիքում գործերն այնքան էլ լավ չեն: Տիգրանը շատ է լսում իր մորը՝ Երանուհուն: Իսկ վերջինս մյուս պալատականների հետ որոշել է հայոց գահի ժառանգը դարձնել Համասփյուռից ծնվածին և այսօր նորածնի օրորոցից կախել է արքայական խույրը: Արքաների խոսքը չպետք է տարբերվի աստվածների ցանկությունից: Սակայն այդպես է միայն մեզ մոտ՝ Պոնտոսում, իսկ այստեղ՝ Հայքում, Տիգրանը խաղում է իր խոստումների հետ: Տիկնանց-տիկնոջ խույրը իմ գլխին է, իսկ Արտաշատը այսօր տոնում է թագավորազնի ծնունդը: Եվ այդ թագավորազնի մայրը տիկին Համասփյուռն է: Գուցե խորամանկում է Տիգրանը: Գուցե ձևի համար է նրանից վերցրել տիկնանց-տիկնոջ խույրը և դրել իմ գլխին:

Հայր իմ և Պոնտոսի արքա: Ես կասկածում եմ Տիգրանի անկեղծության վրա, որովհետև, եթե նա շարունակի լսել իր մորը, հավանաբար ես կիջնեմ մինչև հարճի աստիճանը:

Ի՞նչ անեմ հայր իմ":

***

Կլեոպատրան նամակի պատասխանը ստացավ երկու ամիս հետո: Այն խիստ սեղմ էր: Եվպատորը գրում էր. "Ավելի ուժգին սիրիր Տիգրանին":

ԿԱՆԳ ԱՌ, ԱՍՏ ԵՐԿԻՐՆ Է ՀԱՅՈՑ

Արցախի Սմբատ նահապետը Տիգրան արքային ուղարկեց երկու հարյուր օդապարիկ նժույգներ: Այդքան նժույգներ նվիրելը հայոց արքային հպատակվելու նշան էր: Արցախի նժույգավոր դեսպանն արքունիքում պատշաճ ընդունելության արժանացավ:

Դեսպանի և Տիգրանի գաղտնի զրույցին մասնակցեց միայն Բագարատը:

- Եվ ի՞նչ երկիր է ձեր Արցախը, - արքայադահլիճի լռությունը խախտում է Տիգրան արքան:

- Արքա, Արցախը առանձին երկիր չէ, նա Հայքի մի մասն է, - պատասխանում է դեսպանը:

- Ապա ինչո՞ւ ձեր գավառը հարկ չի տալիս տերությանը:

- Չգիտեմ արքա, բայց կարող եմ ասել, որ մեր պապերի պապերն էլ հավաստել են, թե Արցախի վրա Արտաշեսյաններից շատ դարեր առաջ իշխել են հայերը: Քո հանգուցյալ հոր ժամանակ միայն Արտաշատը մոռացավ Արցախին:

- Եվ ո՞ւմ եք դուք հիմա ձեր գլխին թագավոր ճանաչում Աղվանների Օրոզ արքայի՞ն:

- Արքա, արցախցիները հպարտ ու ըմբոստ այրեր են, ոչ մի աղվան, ոչ մի Օրոզ նրանք չեն ընդունի:

- Ովքե՞ր են ապրում ձեզ մոտ:

- Միայն հայեր:

- Միա՞յն:

- Այո, արքա, մեր ընդարձակ գավառում ապրում են Հայոց աշխարհի ամենաքաջաբազուկ ռազմիկները:

- Մինչև ո՞ւր են ձգվում ձեր գավառի սահմանները:

- Արցախն, արքա, անունով է միայն գավառ, նա շատ մեծ երկիր է, որի սահմանները հասնում են մի կողմից Արաքսին, Ուտիքին ու Շակաշենին, մյուս կողմից՝ մինչև ծովն Գեղամա և Սունյաց աշխարհի Աղավնո գետը:

- Եվ ի՞նչ լեռներ ու գետեր կան ձեզ մոտ:

- Ամենամեծ սարը Քիրսն է, որ գետնից բարձր է տասն հազար ոտնաքայլ, հետո Կաչաղակաբերդը: Եվ շատ ու շատ հորդառատ գետեր ունի Արցախը, և նրանցից ամենամեծը Տրտուն է: Տրտուն Արցախի Արաքսն է, արքա, մեր գուսանները նրա մասին այսպես են երգում.

Երեք հարյուր վաթսուն և վեց առվի մայր,

Դարձյալ հզոր ու հորդառատ իմ Տրտու...

Աղբյուրների երկիր է Արցախը, ամենահորդառատը Սևաղբյուրն է, որ գտնվում է Վարանդայում, և որի ջրով յոթ ջրաղաց են աշխատում: Մեր հողը, արքա, հարուստ է ամեն ինչով, իսկ ամենից շատ՝ հայրենասերներով:

Թագավորը դարձավ Բագարատին.

- Դու փորձարկեցի՞ր Սմբատ նահապետի ուղարկած նժույգները:

- Այո, արքա, նրանք արագավազ են ու դիմացկուն, քան մեր ամենալավագույն նժույգները: - Իմ ողջույնները հաղորդիր Սմբատին, - դեսպանին դարձավ Տիգրանը, - մինչև մի քանի ամիս ես կլինեմ ձեր գավառում:

Դեսպանի մեկնելու հաջորդ օրը Տիգրանն առանձնացավ Բագարատի հետ:

- Մենք այնքան շատ գործեր ունենք, Բագարատ, բայց նստել ենք այստեղ և սպասում ենք, ո՞ւմ ենք սպասում, ինքներս էլ չգիտենք: Հիշո՞ւմ ես, թե ինչ էինք երազում Տիզբոնում, իսկ հիմա ասես փայտացել են մեր ձգտումները, մի՞թե կարելի է բավարարվել Ծոփքով:

- Արքա, դու ծրագրել էիր Ծոփքից հետո շարժվել դեպի Փոքր Հայք, - ասաց Բագարատը:

- Դա ճիշտ է, Բագարատ, բայց դու մոռանում ես, որ Միհրդատը իմ աներն է:

- Ուրեմն դու հաշտվե՞լ ես Փոքր Հայքի կորստի հետ:

- Բնավ: Բայց Մեծ Հայքն էլ առայժմ մեր ձեռքին չէ ամբողջությամբ: Արցախն էլ հո Փոքր Հայք չէ: Թե այսպես գնա, նա էլ աղվանների բաժինը կդառնա:

Մի քանի օր հետո հայկական այրուձին դուրս եկավ Արտաշատից և շարժվեց դեպի Շիրակ: Տիգրանն ուզում էր հանգստանալ տիկնունու պատճառած գլխացավանքներից: Կլեոպատրան անխղճաբար խլում էր արքայի ժամանակի մեծագույն մասը: Իսկ նախնյաց բզկտված հողերը նրան օգնության էին կանչում: Կանայք տղամարդու կյանքում հաճախ բախտորոշ դեր են կատարում: Տիգրանին արդեն հոգնեցրել էին Կլեոպատրայի գերող փաղաքշանքները և Համասփյուռի սիրածարավ հայացքները: Արքան զգում էր, որ եթե այսպես շարունակվի ինքը կբռնի հոր ճանապարհը, և երկիրը կմնա թույլ և անպաշտպան:

Ամբողջ ամառը հայկական այրուձին ռազմական երթով, բայց առանց ճակատելու, Կուրի ակունքների մոտից իջավ գետի աջափնյա գավառներով մինչև Փայտակարան: Խորձենի, Գուգարքի, Շակաշենի, Ուտիքի և Կասպքի նահապետներն իրենց հպատակությունը հայտնեցին Տիգրան արքային:

Շակաշենի մոտ, Կուրի ափին Տիգրանը հանդիպեց աղվանների Օրոզ արքային: Լայնահուն, պղտոր գետի աջ ափին բանակել էր հայկական զորքը: Հանդիպակաց ափից փոքրիկ մի լաստանավ սկսեց մոտենալ հայերին: Լաստանավի մեջ երկու զորականներ էին, որոնք զինված էին գեղարդով, մկունդով և վահաններով: Նրանց գլխներին դրված էին գազանների մորթուց պատրաստված սաղավարտներ: Երբ լաստանավը հասավ գետի ուղիղ մեջտեղը, աղվան լաստանավորդներից մեկը օդի մեջ բաց թողեց մի աղավնի: Լաստանավի շարժումներին հետևող հայ զորականները ծափահարեցին նրանց: Սակայն լաստանավը գետի մեջտեղի հոսանքից այս կողմ չէր շարժվում: Աղվանները թիավարում էին տեղում և սպասում հայոց դեսպաններին:

Ջրի մեջ իջավ նաև հայկական լաստանավը: Հայ և աղվան լաստանավորդները հանդիպեցին գետի ուղիղ կենտրոնում: Աղվանները ողջունեցին և պղնձյա մի փոքրիկ մատուցարան մեկնեցին հայերին: Մատուցարանի վրա դրված էր սուրմահի ձկան հավասար կեսը:

- Օրոզը ողջունում է քաջ Տիգրանին, - ասաց աղվանցիներից մեկը:

Նրան հաղորդեցեք Տիգրանի ողջույնը, - պատասխանեցին հայկական լաստանավից:

- Կուրը մեծ է ու լայն:

- Այդ մենք տեսնում ենք:

- Նա կհագեցնի բոլոր հայերի ու աղվանների ծարավը:

- Դա ճիշտ է:

- Կուրը հարուստ է սուրմահի ձկներով:

- Այդ դեպքում մեկնեցեք, թե ինչո՞ւ մատուցարանի վրա դուք կես ձուկ եք դրել:

- Մենք կատարել ենք Աղվանաց աշխարհի արքա Օրոզի հրամանը:

- Ինչ է ուզում ասել ձեր Օրոզ արքան:

- Որ հայերը և աղվանները պետք է մնան բարեկամներ և Կուրի սուրմահիից օգտվեն հավասարապես:

- Մենք այդ մասին կհայտնենք մեր արքային:

- Օրոզը ցանկանում է, որ Կուրը լինի Հայոց և Աղվանաց աշխարհների սահմանը և չփոխի իր անունը: Այդ անունը ձեր պապերն են դրել ի նշան հայոց, վրաց և աղվանաց ազգերի կուռ բարեկամության:

- Տիգրանը հարգում է Օրոզի բարեկամությունը:

Հրաժեշտի ողջույններ փոխանակելով, լաստանավերը շարժվեցին գետի կենտրոնից և սահեցին հակառակ ուղղություններով:

- Ի՞նչ կասես, Բագարատ, - ասաց Տիգրան արքան, - արժե՞ հավատալ Օրոզին:

- Արքա, մեր պապերը ոչ անցել են Կուրի մյուս ափը, ոչ էլ վտանգ սպասել այնտեղից: Կուրը մեր հուսալի թիկունքն է, - պատասխանեց զորապետը:

- Բայց Օրոզը կարող է խաբել և հարմար առիթի սպասելով, սուրմահին ամբողջությամբ ուտել:

- Դժվար թե նա այդպիսի չար դիտավորություններ ունենա արքա: Իսկ եթե մոռանա իր արքայական խոսքը, մենք սուրմահիի փուշը նրա կոկորդում կթողնենք:

Տիգրանը համաձայնեց Բագարատին և մտածեց սահմանասյուներ կանգնեցնել գետի ողջ երկարությամբ: Խորձենից, Գուգարքից, Շակաշենից, Ուտիքից և Կասպքից եկան հազարավոր վարպետներ և լծվեցին տենդագին աշխատանքի: Գետի աջ ափին, նրա ակունքներից մինչև Վրկանա ծովը, իրարից մեկ թավալում հեռավորությամբ, պատրաստվեցին երկու ոտնաքայլ բարձրությամբ քարակերտ պատվանդաններ, որոնց վրա որպես կոթող բարձրանում էին Հայքի տարբեր տեղերից բերված մարդաչափ սյուները: Սյուների գլխարկաձև գագաթներին փորագրիչները պատկերել էին Կուր գետը, որի ձախ ափից մի սպառազեն մարդ փորձում է անցնել դեպի աջ ափը: Աջ ափին կանգնած հայ զորականը նիզակը ուղղել է սահմանախախտի սրտին: Հմուտ քանդակողը ցանկացել է ցույց տալ, որ եթե մեկը խախտի Հայոց աշխարհի սահմանը և անցնի Կուր գետը, կնիզակահարվի տեղնուտեղը: Պատկերի տակ գրված էր. "Կանգ առ, աստ երկիրն է Հայոց":

Միայն աշնան սկզբներին, երբ Տիգրանն ավարտել էր սահմանայուների պատրաստման գործը, հայկական այրուձին ոտք դրեց հյուրընկալ Արցախում:

ՁԱՅՆԱՐԿՈՒ ԳՈՒՆԴԸ

Ամիսոսի քսաներկու աշտարականոց արքայական պալատում Միհրդատ Եվպատորը սկսեց հաճախակի երևալ հռոմեական, բյութանիական և Գամիրքի ոճով կառուցված աշտարակներում: Բայց ամենից շատ նա լինում էր հռոմեականում: Հռոմը հանգիստ չէր տալիս Պոնտոսին:

Իսկ Եվպատորը չէր ուզում կռվել: Նա նույնիսկ հաշտվեց այն մտքի հետ, որ Գամիրքում նորից գահ բարձրանա Արիոբարզանը, իսկ Բյութանիայում՝ Նիկոմեդեսը: Սակայն հռոմեական դեսպան Մանիոս Ակվիլիոսը դրդեց Նիկոմեդեսին՝ գրոհելու Պոնտոսի վրա: Եվ Նիկոմեդեսը շարժվեց դեպի Պոնտոսի հյուսիս-արևելքն ու հասավ մինչև Ամաստրիս: Նիկոմեդեսը թալանում էր պոնտական բնակիչներին և ծածկում գահ բարձրանալու համար տրված հռոմեական փողատերերի և իր ծախսերը: Եվպատորը սկսեց բանակցել հռոմեական դեսպանների հետ: Սակայն ոչ մեղմ դիվանագիտությունը, ոչ արքունիքի գանձով կաշառված Հռոմի ծերակուտականները չկարողացան փոխել դեպքերի ընթացքը:

Հռոմը խեղդամահ էր անում Միհրդատ Եվպատորի համբերությունը: Պոնտոսը ահեղ կռվի ելավ հզոր Հռոմի դեմ: "Չէ՞ որ ավազակի դեմ ամեն ոք զենքի է դիմում, եթե ոչ փրկվելու, գոնե վրեժ առնելու համար", ասել է Եվպատորը և փչել տվել պատերազմի փողը:

Խառնակ վիճակ էր նաև Պարթևաց աշխարհում: Եղբոր դավադիր ձեռքով սպանվել էր արքայից - արքա Միհրդատ Արշակունին: Արյամբ թաթախված արքայից- արքայի խույրը իր գլխին էր դրել Հրահատ Արշակունին79:

Խաղաղություն էր տիրում միայն Հայքում: Բայց Տիգրանը հանգիստ չէր զգում իրեն: Անցել էր յոթ տարի, ինչ նա տուն էր դարձել, գլխին թագ դրել, բայց ամեն առավոտ քնից արթնանալիս նրան թվում էր, թե իրեն ճաշ պիտի մատուցի պարթև սպասավորը և իր ներկայությամբ զգացնել տա, որ արքայազնը պատանդ է Արշակունիների մոտ: Վերազինել է իր բանակը, վաժրեցրել բաց ճակատում հանդիպելու թշնամուն: Արդյոք ժամը չէ՞ պարթևների հետ հաշիվներ մաքրելու: Եվպատորը լավ է խաճվել: Առայժմ դա ձեռնատու է Հայքին, չնայած Կլեոպատրան ջղաձիգ շարժումներով է ընդունում Պոնտոսի բախտին անտարբեր նայող իր ամուսին արքային:

***

Նախճավանի մոտ Արաքսը հոսում է խաղաղ ու անձայն: Այդպես խաղաղ ու անձայն էլ երկրի բոլոր կողմերից հավաքվեցին այստեղ հայկական զորքերը: Յուրաքանչյուր նահապետ բանակատեղի էր ներկայանում իր զորքով: Նահապետներն արդեն ընտելացել էին Տիգրան արքային, որը զինավարժությունների համար հաճախ Ուտյաց աշխարհի կամ Ծոփքի ծայրակալ գնդերը մի քանի օրում բերում էր քաղաքամայր Արտաշատ և հաջորդ օրը ետ ուղարկում իրենց տները: Հավատարմության փորձությո՞ւն էր դա, թե՞ մի ուրիշ բան, բայց բոլոր գավառների զորականները գիտեին, որ հաճախ կրկնվող այդ ուղերթերը մի օր

կվերջանան թշնամու հետ բախվելով: Արքայական հրովարտակը բոլորին ազդարարել էր, որ Նախճավան եկող զորականները պետք է ունենան պահեստային նժույգներ և մի ամսվա պարեն: Ոմանք իրենց հոգում դժգոհում էին արքայից, որ բերքահավաքի այդ եռուն շրջանում իրենց կտրել է դաշտային գործից:

Գետի ձախ ափին, քաղաքից մի հրասախ հեռավորության վրա, գտնվում է հայկական զորքերի համակենտրոնացման ճամբարը:

Մեհրուժանն ու Բագարատը շրջում են հեծյալ գնդերն ու վաշտերը և ստուգում վերջիններիս մարտունակությունը: Մի քանի օր հետո, երբ այլևս ոչ ոքի չէին սպասում, զորապետներն անցան իսկական զորավարժության: Բայց այնքան էլ հեշտ չէր գործ ունենալ մի տեղ հավաքված երեսունհազարանոց այրուձիու հետ: Յորաքանչյուր վաշտ և գունդ ուներ մարտավարության իր եղանակը: Իսկ Մեհրուժանն ու Բագարատը ձգտում էին, որ ամբողջ բանակը վարժվի մարտավարության այն եղանակներին, որ մշակել էին իրենք:

- Մենք ուշացումով ենք սկսել այսպիսի զորավարժությունները, արքա, - մի օր Տիգրանի վրանը մտնելով ասաց Բագարատը:

- Ասպետ, լավ է ուշ, քան երբեք, - պատասխանեց նրան Տիգրանը:

- Արքա, մենք պետք է այսպիսի մի հավաք կազմակերպեինք նախքան Նախճավանի մոտ հասնելը:

- Ինչ որ բան ես ակնարկում Բագարատ:

- Չեմ ակնարկում, արքա, կռահում եմ:

- Ին՞չ ես կռահում:

- Որ հասել է պարթևներին պայտ տալու մեր խոստացած ժամանակը, - մեղմ ժպիտով ասաց Բագարատը:

- Ո՞վ է այդպես մտածում քեզնից բացի:

- Ով ձի է նստել, զենք կապել և հասել Արաքսի ափը:

- Դա վատ չէ:

- Բայց դեռևս ամեն ինչ չէ:

- Երազում էիր մի բյուր հեծյալներով գրավել Տիզբոնը, այժմ ես եռապատկել եմ քո ցանկացած թիվը, էլ ի՞նչ կուզեիր ասպետ:

- Որ մշտապես գործող այսպիսի բանակ ունենայինք:

- Մենք կունենանք դրա տասնապատիկը, Վահագնը խոստացել է ինձ հաղթության դափնին:

- Ե՞րբ ենք անցնում գետի մյուս ափը:

- Երբ զեկուցես, որ բանակը պատրաստ է մարտի:

- Բայց մենք արքայական բանակից մի քանի գունդ հետևակ պիտի վերցնեինք:

- Ասպետ, ժամանակն այնքան արագ է գնում, և դեպքերն այնպիսի թռիչքով են զարգանում, որ ոչ միայն ոտքով, այլև նույնիսկ նժույգի վրա դժվարանում ես հասնել նրանց հետևից: Հասկացիր, ասպետ, միայն հայկական այրուձին կարող է խելքի բերել պարթևներին: Մեհրուժանին և բոլոր նահապետներին հայտնիր, որ այսօր երեկոյան հավաքվեն ռազմական խորհրդի:

Լուսադեմին բոլորից շուտ արթնացավ Վրույրը: Գետից ասես ցուրտ քամի էր փչում: Գետափին ցրված հարյուրավոր վրանների անդորրը մեկ-մեկ խախտում էին ժամապահների ձայները և ձիերի խրխինջները: Վրույրը վեր կացավ, թիկնոցը գցեց ուսին, փոկը հագցրեց պարանոցին ու մոտեցավ իր ձիուն: Ինչո՞ւ արթնացավ այդպես շուտ, ինքն էլ չգիտեր: Ոչ չար երազ էր տեսել, ոչ էլ ժամապահության պիտի գնար: Քսանվեցամյա երիտասարդը կարծես մի պահ վախեցավ լուսադեմի աղջամուղջում: Նրա նիհար այտերի փոսիկները խորացան, արտևանունքները սկսեցին շարժվել նրա կամքից անկախ: Վախի զգացումը ստիպեց, որ նա մի գործ անի: Թամբը դրեց ձիու վրա, հագցրեց փորակապները, ուղղեց ասպանդակները:

Հետո ծոցից հանեց սրտաձև մի փոքրիկ թիթեղ ու կապեց ձիու վզին: Ապա բռնեց ձիու գլուխը և սկսեց խոսել, ձեռքով խաղալով սրտաձև թիթեղի հետ:

- Տեսնո՞ւմ ես, այս հուռութքը քեզ հանար է, Սևուկ: Նա քեզ հեռու կպահի չար աչքից ու թշնամու նետից: Իմ Սևուկ, Սևուկ: Դժբախտ մարդ է քո հեծյալը: Նա ուզում է քնել, անվերջ քնել իր դժբախտությունը մոռանալու համար, բայց արթնանում է բոլորից շուտ: Մենք մի հորթ ունեինք: Նրա անունն էլ Սևուկ էր: Բայց նրա ճակատին սպիտակ խալ կար, և քրմերը տարան նրան: Քրմերը տարան նաև իմ փոքր եղբորը՝ Սոսիկին, և ծեծեցին իմ հորն ու մորը: Ասա, իմ Սևուկ, էլ ինչպե՞ս պիտի վաղը ես կռվի դուրս գամ, ի՞նչ սրտով գնամ պարթևների դեմ: Դու կարծում ես, թե ես վախենո՞ւմ եմ թշնամուց: Ոչ, Սևուկ: Ես վախենում եմ, թե Սոսիկի վիշտը մայրս չկարողանա տանել և... Իսկ դու գիտե՞ս, որ հիմա մեր տանը ուտելու բան չկա, որ հիմա երևի հայրս, հազար անգամ ափսոսալով, ծծում է դեռահաս ողկույզները և մի կերպ մթնեցնում իր օրը: Իմ լավ Սևուկ, ինչպես կուզենայի քնել, քնել այնպես, որ նորից արթնանալու ժամանակ աշխարհը փոխված լիներ, և մարդ զգար իրեն ինչպես թռչուն: Բայց ո՞ր աստվածը ինձ պես թշվառին կարժանացնի այդպիսի բախտի: Աստվածները, ընդհակառակը, խլում են նույնիսկ գիշերային մի քանի ժամվա իմ հանգիստը, որ ես ոտքի վրա զգամ իմ վիշտը: Եվ ինչքան անարդար են լինում հաճախ այդ աստվածները: Նրանք խլում են նաև բախտավոր մարդու քունը: Արի ու հանգստացիր:

Դեռ քիչ է, որ նա բախտավոր է, բայց նա էլ իր երջանկությունը զգում ու ապրում է այնքան շատ, ինչպես դժբախտներն իրենց վիշտը: Անքուն մնալու ժամանակի մեջ են միայն դժբախտն ու երջանիկը իրար հավասար: Իմ Սևուկ, Սևուկ, ես քո վզից հուռութք եմ կախել, պարթևը չի կարող սպանել քեզ, իսկ իմ վզից ոչ մի աստված հուռութք չի կախի: Թշնամու նետից կարող է ինձ փրկել միայն մորս աղոթքը, իսկ նա այնքան հեռու է այստեղից, որ եթե մեր գունդն էլ ձայն տա չի հասնի նրան:

Արաքսի ափին բանակած հայկական այրուձիու մեջ կա հազար մարդ, որ առանձին գունդ է կազմում: Այո, ուղիղ հազար են նրանք, որոնք գիտեն հզորապես գոռալ: Տիգրան արքան Հայոց աշխարհի բոլոր գավառներից հավաքել է զիլ ու հնչեղ ձայն ունեցող հազար երիտասարդների

ու կազմել ձայնարկու մի գունդ, որը կռվի դաշտում միայն պետք է ահեղ գոռոց արձակի ու խուճապի մատնի թշնամուն: Վրույրին էլ մտցրին այդ գունդը: Նրա ձայնը հնչեղ էր ու քաղցր: Բայց նա երազում էր գուսան դառնալ և երգել սրտահույզ, իսկ Տիգրան արքան հրամայում է գոռալ թշնամու վրա: Վրույրը գիտե, որ ձայնարկու գնդի բոլոր տղաներն էլ կարող են գուսաններ դառնալ: Բայց ո՞վ է հարցնում նրանց ցանկությունը: Դեռ Վրույրի վիճակը մի քիչ լավ է: Նա միայն գոչում է: Իսկ գնդի հիսուն տղաներ թմբուկներ են զարկում և զարկելու ընթացքում էլ գոռում: Դա շատ դժվար գործ է: Մի քանի անգամ Վրույրը փորձեց, բայց բան չստացվեց:

Փողհարությունից քիչ հետո ձայնարկու գնդի բոլոր զորականներին բաժանեցին երկուական հում ձու: Ձայնարկու գունդը ձվով ապահովելու համար Տիգրան արքան ձվի հարկ էր դրել բոլոր գավառների վրա:

Վրույրը գիտեր, որ ամսվա մեջ հինգ ձու պիտի տա նաև իր հայր Տաճատը: Բայց չէ՞ որ իրենք այնքան քիչ հավեր ունեին: Գուցե նրանք ձու էլ չեն ածում: Որտեղից է հինգ ձու ճարում հայրը: Եվ ամեն անգամ ձվի կեղևը կոտրելիս նա մի պահ կանգ էր առնում ու խորհում այն մասին, թե գուցե հենց իր ձեռքին բռնած ձուն արքայի հարկահավաքները զոռով են տարել իրենց տնից; Ախ, ինչքան կուզեր, որ այդ ձուն չբաշխեն իրենց: Ինքն ավելի բարձր կգոռա, միայն թե թողնեն, որ գոնե այդ ձվերը մնան իրենց տանը: Իսկ հիմա երկուական են տալիս: Դա նշան է, որ ձայնարկու գունդը մեկնում է մարտի: Վրույրը տհաճ զգացումով կուլ տվեց իր բաժին ձվերը:

Լույսը բացվելուն պես հայկական այրուձին սկսեց անցնել Արաքսը: Բայց մինչ վերջապահ գնդերը դուրս կգային ճամբարից, արևը մի քանի հրասախ տարածությամբ պոկվել էր հորիզոնից: Դարեհյան պողոտան դողում էր բազմահազար ձիերի դոփյուններից; Առաջին անգամ էր Հայքը այդպիսի հզոր բանակ դուրս բերել իր հզոր հարևանի դեմ:

Ռազմակառքում նստած՝ Տիգրան արքան անհանգիստ շարժումներ էր կատարում: Արքայական ծիրանու մեջ փաթաթված, նա հայացքը դարձրել էր կառքի առջևի մասի փեղկին, որտեղից երևում էր կառապաններից մեկի մեջքը: Մենակությունն ու անհանգիստ մտորումները հոգնեցրին նրան: Նա խփեց կողքի զանգակը և ռազմակառքը իսկույն մեխվեց տեղում: - Կանչել զորապետ Բագարատին, - հրամայեց նա ռազմակառքի դռնակը բացող թիկնապահին:

- Իսկույն, արքա, - եղավ պատասխանը:

Բայց այդ "իսկույնը" տևեց քառորդ ժամ, որովհետև Բագարատն այդ պահին գտնվում էր զորքի վերջնամասում: Երբ նա իր նժույգի վրա քառատրոփ արշավելով ներկայացավ արքային, վերջինս արդեն չկարողացավ պահել իր զայրույթը:

- Ձարմանալ կարելի է, ասպետ, եթե զորապետներն այդպես դանդաղ են շարժվում արքայական պողոտայում, չգիտեմ, թե նրանք ինչ պիտի անեն կռվի պահին:

- Արքա, ներիր ինձ ուշանալուս համար, ես արդար պատճառ ունեմ:

- Նստիր այստեղ, - ռազմակառքի մեջ հրավիրելով, ասաց արքան:

Բագարատն իսկույն իջավ իր նժույգից, հանձնեց այն թինապահին և ցատկեց արքայական ռազմակառքի մեջ:

- Այդ ի՞նչ արդար պատճառ է, ասպետ, - խոսեց արքան, երբ զորապետը տեղավորվել էր նրա կողքին:

- Խորձենի գունդը դժվար է հասկանում մեր հրամանները:

- Ի՞նչ ասել է դժվար է հասկանում, ասպետ, դու մոռացել ես իմ հրամանը, կռվի նախօրեին պետք է տեղնուտեղը պատժել ամենաանշան մեղք գործող զորականին:

- Նրանք ոչ մի մեղք չեն գործել, արքա:

- Ապա ի՞նչն են դժվար հասկանում:

- Հայոց լեզուն, արքա, նրանք հազիվ են ձեռքով ու ոտքով բացատրվում մյուս գնդերի զորականների հետ:

- Ասպետ, մի՞թե նրանք հայեր չեն, հայկական արյուն չկա նրանց մեջ: - Արքա, նրանք երկար ժամանակ կտրված են մնացել մայր երկրից և մյուս հայկական գավառներից, մոռացել են իրենց լեզուն:

Ցավը նրանումն է, արքա, որ միայն խորձենցիները չեն այդպես, ուրիշ գավառներից էլ կան մարդիկ, որոնց հետ դժվար է բացատրվել:

- Ես այդ մասին բոլորովին չէի մտածել:

- Պետք է մտածել, արքա:

- Ահա թե ինչ, ասպետ, դու չե՞ս գտնում, որ տերության հպատակները պետք է մի ընդհանուր լեզու ունենան:

- Դա խիստ անհրաժեշտ է, արքա:

- Տիկնանց-տիկինը ինձ խորհուրդ է տալիս, որ հրովարտակ արձակեմ բոլոր գավառներում հունարեն լեզուն ուսուցանելու համար:

- Հունարե՞ն:

- Ինչո՞ւ զարմացար, ասպետ:

- Իսկ մեր լեզո՞ւն, հայերենը:

- Հայերեն էլ թող սովորեն, բայց Հայքը քաղաքակիրթ դարձնելու համար միակ միջոցը հունարենին դիմելն է:

- Մեր տերության մեջ երկու լեզու չեն կարող պետական կոչվել, արքա: Մեր տերության մեջ թող հայերենը լինի առաջին լեզուն: Տիր աստվածը կօգնի մեզ, իսկ հունարենով թող խոսեն հույները:

- Խոստանում եմ, ասպետ այդպիսի հրովարտակ արձակել հենց որ պարթևներից շահենք առաջին ճակատամարտը: Ճակատամարտը կշահենք, արքա, աստվածները մեզ հետ են:

Արքան ժպտաց Բագարատին և նորից զարկեց զանգակը: Ռազմակառքը կանգ առավ:

Դռնակը իսկույն բացվեց:

- Հայտնել բոլորին, որ ճաշադադարի ժամ է, - ասաց արքան:

- Իսկույն, արքա, - պատասխանեցին թիկնապահները և թռչելով նժույգների վրա՝ ասպանդակեցին դեպի պողոտայի այս ու այն կողմը:

Երկու օր հետո հայոց այրուձին հասավ Կապուտանին:

Թեթև քամին տաշում էր Կապուտանի ջրերը: Հայոց աշխարհի հարավի աչքը՝ Կապուտան ծովակը, աշնանն ասես ավելի էր կապույտ երևում: Կապույտ են նրա ջրերը, բայց այդպիսի կապտություն չունի աշխարհի և ոչ մի ծով: Մոտեցիր նրա ջրերին, շաշափիր, լցրու բուռդ, միշտ էլ քո աչքին կապույտ է երևում:

Ծովակի վրա երկինքը կապտավուն է: Հինավուրց զրույցն ասում է, որ երկինքն իր չքնաղ փայլը՝ կապտությունը, նվիրել է ծովակին, որպեսզի նա տարբերվի մյուս ծովերից, և շատ վաղուց կապտաթույր ջրերի շնորհիվ ծովակն ստացել է Կապուտան անունը: Նա մեծ է Գեղամա ու Վանա ծովակներից:

Բազմաթիվ ու բազմաձև կղզյակները Կապուտանի ջրերում թողնում են լողացող նավակների տպավորություն: Ամենամեծ կղզին, որ գտնվում է ծովակի արևմտյան մասում, կոչվում է հենց ծովակի անունով, որի վրա էլ գտնվում են դարձյալ համանուն գյուղն ու բերդը, որտեղից պարզ երևում է Զազրոսի լեռնապարը: Ծովակի ափերը տեղ-տեղ այնքան ցածրադիր են, որ թվում է, թե ուր որ է ալեկոծությունից ջրերը դուրս կթափվեն և կողողեն շրջակայքը: Ձուկ չի ապրում Կապուտանում, բայց ծովափի բնակիչները ասում են, որ այն լիքն է համեղ ձկներով, որոնց գույնը այնքան կապույտ է, որ ձկնորսները չեն կարողանում նրանց տարբերել ջրից:

Ոչ մի լողորդ չի խեղդվել Կապուտանում, չնայած նրա խորությունը տեղ-տեղ անցնում է քսանհինգ կանգունից: Ծովակի հարավային՝ դեպի արքայական պողոտա տանող ափերից դեռևս Արտաշես Մեծի օրոք մի քանի տեղերից փորվել են արհեստական առուներ, որոնց մեջ շոգ օրերին բաց են թողնում ջուրը, հետո կտրում հունից: Մի քանի շաբաթից հետո գոլորշիանում էր առվի ջուրը, և մեկից-մեկուկես կանգուն բարձրությամբ առվի ողջ լայնքով նստում էր աղը: Այդ առուները կոչվում էին արքայական աղարաններ, որտեղից Արտաշատն ու արաքսամերձ գավառները ամեն տարի ստանում էին հազարավոր քուրձ աղ: Յոթանասուն գետեր են թափվում Կապուտանի մեջ, բայց ոչ մի գետակ էլ չի հոսում նրանից: Ծովափնյա աղբյուրների մոտ կան կաթնային սպիտակություն ունեցող մարմարի հանքեր, որից հայերը ոչ միայն շենքեր էին կառուցում իրենց համար, այլև երբեմն տանում էին նաև Տիզբոն՝ պարթևների քաղաքամայրը, և վաճառում մեծատուն իշխանավորներին ու պարթևաց արքայից-արքային: Ծովակի ափամերձ կղզիների վրա, որոնցից մի քանիսը բավական մեծ ու ընդարձակ են, աճում է փարթամ խոտ, որ ծովափնյա բնակիչները հնձում են լաստերով տեղափոխում են մոտակա գյուղերը:

Սակայն Հայոց աշխարհի համար Կապուտանն առաջին հերթին մնում է որպես հարավի աչք, որը առաջինն է տեսնում դեպի Հայոց աշխարհն արշավող պարթևներին և որպես ջրային պատնեշ փակում ոսոխի ուղին:

Զրկվել այդ աչքից՝ նշանակում է դառնալ կիսակույր, նշանակում է հույս դնել կրնկահան արված դարպասներով բերդի վրա:

Երեսունհազարանոց հայկական այրուձին գնում էր արագ երթով: Հետախույզ հեծյալները, զորքից հինգից-տասը հրասախ առաջ ընկած, սրարշավ կտրում էին պողոտան և ետ դառնալով զեկուցում արքային, որ ճանապարհը բաց է, թշնամին չի երևում:

- Բագարատ, Պարթևաց աշխարհին ես և դու քաջ ծանոթ ենք, բավական է շահենք առաջին մարտը, այնուհետև ամեն ինչ կգնա մեր ցանկացած ձևով:

- Արքա, մենք մոտենում ենք այն լեռնագոգին, որտեղ մեր բանակը տարիներ առաջ շրջապատվեց պարթևների կողմից և ջարդ կրեց, ես հուզվում եմ:

- Իզուր, ասպետ, Վահագն աստվածը ինձ հայտնել է, որ հենց այս նույն դաշտում ես պետք է հաղթեմ պարթևներին, մի մոռացիր, որ հիմա երեք բյուր հեծյալից է կազմված մեր այրուձին: Ժամն է գործելու, ասպետ, աստվածները հազվադեպ են Հայոց աշխարհին վրիժառության պահեր շնորհում:

Իրիկնադեմին հայկական բանակը կանգ առավ: Հետախույզները հայտնեցին, որ պարթևները մարտի են սպասում դաշտի հարավային եզրին: Բագարատը համաձայնեցրեց Տիգրանին՝ զորքը հեռու պահել լեռնագոգից: Արքայական վրանի ներսում նորից ռազմական խորհրդի հավաքվեցին Մեհրուժանն ու Բագարատը: - Ներիր, արքա, - խոսեց Բագարատը, - ես դարձյալ երկյուղում եմ, որ մեզ հետ կրկնվի նախկինը, այս նեղ լեռնագոգը հանգիստ չի տալիս ինձ: Այն անվտանգ անցնելու համար առանց հետևակի ոչինչ չես կարող անել:

- Ասպետ, միշտ էլ կարելի է հեծելազորը հետևակի վերածել, իսկ հետևակը չես կարող ցանկացած դեպքում հեծելազոր դարձնել:

- Բարի, արքա, այդ դեպքում հրաման տուր, հենց այս գիշեր երկու հազար զորականներով զբաղեցնել դաշտին հարող լեռնագագաթները:

- Տեսնենք թե ինչ կասի Մեհրուժանը, ասում են՝ նա ծնվել է իմաստասեր դառնալու համար, բայց հայրենյաց շահը ստիպել է, որ սուր կապի իր կողքին:

Մեհրուժանն արքայի հաճոյախոսությանն արձագանքեց ժպտալով և ասաց.

- Արքա, ես չեմ առարկում Բագարատի լեռնագագաթները գրավելու առաջարկին, բայց ինքս էլ ուրիշ միջոցի մասին եմ խորհել: Մեր Ծոփքում ես շատ եմ լողացել և սիրում եմ ջուրը...

- Ա-ա, դու ուզում ես մտնել Կապուտան և եզրի՞ց հարվածել պարթևներին, նման մի բան մեր գլխին ժամանակին սարքել են պարթևները հենց այստեղ: Ուրեմն այդ եղանակը նրանց ծանոթ է, և նրանք նախօրոք մտածած կլինեն այդպիսի միջոցներին հակադրվելու համար:

- Ոչ, արքա, ես ուրիշ բան եմ ասում:

- Ապա:

- Կապուտանը շատ կղզիներ ունի այս մասում:

- Դա ճիշտ է:

- Մենք կարող ենք այդ կղզյակներով մի բյուր հեծյալ անցկացնել թշնամու թիկունքը և լուսադեմին գրոհել նրա վրա երկու թևերից:

- Համարձակ միտք է Մեհրուժան, - արքայի հայացքը դարձավ ներհուն, - հը, ասպետ, ի՞նչ ես կարծում, մեր իմաստունը չի՞ սայթաքում այս հարցում:

- Արքա, ես հավատում եմ Մեհրուժանին, նա քիչ է սխալվում:

- Բայց այսպիսի ժամանակ կատարած սխալը կարող է ճակատագրական դառնալ Հայքի համար:

- Ես հավատում եմ Մեհրուժանին, արքա, ահա իմ վերջնական խոսքը, - ասաց Բագարատը:

- Լավ, այդ դեպքում անհրաժեշտ է մի փոքրիկ հավելում անել:

- Լսում եմ, արքա, - ասաց Մեհրուժանը:

- Ձայնարկու գունդը պետք է գնա շրջանցող այրուձիու հետ, որպեսզի խուճապն ավելի կատարյալ լինի:

- Ես խոստանում եմ պարթևներին թիկունքից այնպես հարվածել, որ նրանք ժամանակ էլ չունենան մեր ձայնարկություններին լսելու, այնպես որ կարող ենք գունդը պահել այս ճակատում:

- Ի՞նչ ես ասում Մեհրուժան, - աշխուժացավ Բագարատը, - դու չգիտես, թե ինչպիսի գյուտ է մեր ձայնարկու գունդը: Պարթևները ամենից շատ վախենում են հզոր աղմուկից, այո, այո հզոր աղմուկից: Մենք նրանց լավ ենք ուսումնասիրել և գիտենք նրանց հակումներն ու հակակրթությունները: Չէ՞ որ մենք պարթևների մեջ ենք անցկացրել մեր երիտասարդական տարիները: Դու միայն խելոք օգտագործիր այդ գունդը և կհամոզվես, որ նա ավելի շատ բան կանի, քան կարող է անել մի քանի հազար զորական: Նախքան շրջանցումը Մեհրուժանը մի փոքրիկ վաշտի հետ դուրս եկավ հետախուզության:

Ծովափից մի հրասախ հեռու, Կապուտանի խորքում մի քանի կղզյակներ շղթա են կազմել: Մի կղզուց մյուսը ընկած ջրային հատվածը հեծյալը առանց դժվարության անցնում էր լողալով: Խաղաղ Կապուտանի ջինջ ջրերը աստղազարդ երկնքի տակ թողնում էին օրորվող կապտավուն վերմակի տեսք: Կղզյակներն ասես այդ վերմակի կարկատանները լինեին: Երկու ժամ հետո Մեհրուժանը ափ դուրս եկավ իր վաշտով և սկսեց ստուգել տեղանքը: Արքայական պողոտայի այդ մասն անցնում էր ընդարձակ հարթության միջով: Ոչ մի պարթև չէր երևում: Երկու հետախույզ շարժվեցին դեպի պարթևաց բանակը և իսկույն վերադարձան Մեհրուժանի մոտ: Պարթևներն այդ կետից հեռու էին երկուսից երեք հրասախ:

Վաշտից երկու զորականի թողնելով տեղում՝ Մեհրուժանը նույն ճանապարհով ետ դարձավ և, արքայի հրամանն առնելով, գլխավորեց տասնհազարանոց այրուձիու ուղերթը:

Հեծյալները փալասներից դնչկալներ էին պատրաստել ու հագցրել ձիերի գլխներին, որպեսզի նրանք չխմեն ծովակի աղի ջուրը: Շարժումը կատարվում էր հանգիստ, առանց ավելորդ շտապողականության:

Հորիզոնը դեռ չշառագունած՝ Մեհրուժանն իր բանակով պարթևների թիկունքում արդեն պատրաստ էր մարտի: Արքայի խորհրդով ձայնարկու գունդը նա տեղավորել էր ընդարձակ դաշտը Կապուտանի հանդիպակաց մասից աղեղած լեռնագագաթների ստորոտներում: Ձայնարկու գնդի մոտ էր պահված նաև երկուհազարանոց պահեստային զորքը, որը պետք է սպասեր ձայնարկու գնդին:

Հենց որ վերջինս աղմուկ-աղաղակ սկսեր՝ պահեստայինները թշնամու վրա պետք է նետվեին ցրված դիրքով և դանդաղ, ցույց տալու համար, թե մեծաթիվ բանակ են կազմում: Մարտի ծրագիրը գիտեին բոլոր գնդերի հրամանատարները: Ուղիղ ճակատից մի բյուր հեծյալով գրոհ պետք է սկսեր Բագարատը: Հակառակ ճակատից մարտի էր ելնելու Մեհրուժանը յոթ հազար հեծյալով: Բագարատի և Մեհրուժանի աջ թևերից պետք է օգնեին լեռնագագաթների վրա գտնվող հետևակ դարձած երկու հազար զորականներն ու ձայնարկու գունդը և վերջինիս առընթեր՝ երկհազարանոց այրուձին: Պարթևները հարձակման կենթարկվեին երեք թևերից, իսկ եթե փորձեին փախուստի դիմել դեպի Կապուտան, արքայական թիկնապահ գնդերը կկտրեին նրանց ճանապարհը:

Պարթևաց բանակում այդ ժամերին զորականները հանգիստ էին առնում: Զորապետական վրանի ներսում միայն մի մարդ էր անքուն: Նա չգիտեր, թե ում օգնության կանչի՝ պարթևա՞ց, թե՞ հայոց աստվածներին:

Այդ մարդը սեպուհ Վահանն էր: Հրահատ Արշակունին վստահել էր նրան վարել մարտը: Բայց մի՞թե Միհրդատ Արշակունին չէր վստահում: Բոլոր օտարները վստահում են նրան: Միայն Հայոց աշխարհի համար նա հայրենադավ է: Նա գիտե, որ այս նոր Տիգրանը մտադրվել է անել այն, ինչ չի կարողացել նախորդ Տիգրանը: Եվ ինչի՞ հասավ ինքը: Այս անգամ նա բոլորովին կզրկվի հայրենական կալվածքից: Եթե հայերը շահեն այս մարտը, ոչ մի պարթև երկար ժամանակով Կապուտանի երեսը չի տեսնի: Նա ապրում էր իր կյանքի հինգերորդ տասնամյակում, բայց դեռ նժույգի վրա առույգ էր զգում իրեն:

Ի՞նչ է սպասում վաղը իրեն: Պարթևները կարող են կոտրել հայերի թափը: Նա ծրագրել էր մարտը վարել դաշտի նեղ մասում և հայկական այրուձիուն հնարավորություն չտալ ազատ շարժվելու: Փորձված զինվորը, սակայն, չէր հավատում հաջողությանը: Պարթևները լավ են կռվում, երբ շատ են լինում: Իսկ հիմա երեսունհազարանոց հայկական այրուձիու դեմ կանգնած է երեսունհազարանոց պարթևական այրուձին: Սա պարթևների համար անհավասար ուժ է: Նրանք շատ են վախենում հայկական այրուձիուց: Հետաքրքիր է, թե ինչու են վախենում: Բայց գրողը տանի բոլոր պարթևներին: Ինքը պետք է միայն վաղը հաղթի Տիգրանին: Չհաղթեց, ուրեմն վերջ ամեն ինչի: Իսկ իրենից հետո, թե աշխարհի վրա ինչ կլինի՝ չի հետաքրքրում սեպուհին: Միայն, եթե աստվածները ցանկանան, որ ինքը վաղը ընկնի ռազմադաշտում, ապա նա կցանկանար, որ ընդհանրապես հաղթեն հայերը: Այո, իր մահից հետո թող հաղթեն հայերը: Իսկ քանի դեռ ինքը կենդանի է, աստվածները խելոք բան կանեն, եթե հաղթություն շնորհեն պարթևներին: Եթե Տիգրանը ներումն շնորհեր նրան և հատուկ հրովարտակով վերահաստատեր նրա նահապետական իրավունքները, ապա Վահանը հենց

հիմա էլ կանցներ հայրենակիցների կողմը: Բայց Տիգրանը կներե՞ր Վահանին: Հազիվ թե: Մնում է միայն հույսը դնել պարթևների հաղթության վրա:

Լուսադեմին Բագարատն ու մի խումբ նահապետներ մտան արքայական վրան: - Ժամն է, արքա, հրաման տուր մարտն սկսելու, - ասաց Բագարատը:

- Սպասիր, ասպետ, թող զորականները հանգիստ առնեն, - պատասխանեց արքան, դաշտային մահճակալի վրա մեջքն ուղղելով:

- Արքա, բայց հանգիստ են առնում նաև պարթևք:

- Դու շատ ես հուզված, ասպետ, - ասաց արքան, հետո նայելով նահապետներին՝ ավելացրեց, - սպասեք դրսում, ես հիմա ոտքի կելնեմ:

Բագարատն ու նահապետները դուրս եկան վրանից:

Արքան նստեց մահճակալի վրա և ծափ տվեց: Վրանի կողօթևանի վարագույրը բացվեց, և իսկույն ներս մտավ հանդերձապահը: Վերջինս սկսեց օգնել արքային հագնվելու: Որդան կարմրագույն արքայական պատմուճանը ուսին գցելով, Տիգրանն ամբողջ հասակով մեկ կանգնեց վրանի ներսում: Նրա գլխին դրած բարձր խույրը, որի վրա իրար մոտ կանգնել և գլուխները միմյանց հակառակ կողմ էին դարձրել երկու ոսկեզօծ արծիվներ, կպավ վրանի կտավին:

Դա զգաց Տիգրանը: Նրա արծվենի հայացքը մռայլվեց: Արքայական խույրի՝ գլխի վրա շարժվելը վատ նշան է: Չլինի՞ թե աստվածները հուսախաբ անեն իրեն և այս անգամ էլ հաղթությունը շնորհեն պարթևներին, անցավ արքայի մտքով: Նա իսկույն դարձավ հանդերձապետին.

Այստեղ բեր հավը:

Հանդերձապետը դուրս թռավ և իսկույն էլ դարձավ ոսկեցանցից բոլորակ հյուսած վանդակը ձեռքին: Նա վանդակը դրեց արքայի մահճակալի կողքին հենվող աշտանակի վրա և դուրս գնաց: Հանդերձապետը լավ գիտեր, որ հավահմայության ժամին արքայի մոտ ոչ ոք չպետք է լինի: Վանդակի ներսում թռչկոտող արծվի փոքրիկ ճուտը սկսեց կտցահարել վանդակի հատակը:

Արքան սկսեց թռչունին նայել աղերսող հայացքով: Տիգրանը հավատում էր հայոց աստվածներին: Բայց պակաս հավատ չէր ընծայում նաև այս թռչունին: Պարթևներին հաղթելու դեպքում նա խոստացել էր Անահիտ աստվածուհուն, որ հարյուր տիկ գինի կթափի Արաքսի մեջ, իսկ Վահագնի համար Կապուտան ծովակի վրա կկառուցի մի հոյակապ մեհենասենյակ, որ ռազմի ու քաջության աստվածը այնտեղ ըմբոշխնի Աստղիկի սերը: Նախճավանից դուրս գալուց առաջ այս փոքրիկ թռչունը հաղթության նշաններ ցուցանեց արքային, և Տիգրանը հրաման տվեց շարժվել պարթևների վրա:

Ուր էլ գնար արքան՝ այս վանդակը տանում էր հետը: Ինչ էլ ձեռնարկեր՝ փոքրիկ թռչունը օգնում էր նրան վերջնական վճիռ կայացնելու:

Իսկ ինչո՞ւ այստեղ, մեծ մարտից առաջ, նրա գլխի վրա շարժվեց խույրը: Գուցե Նախճավանի մոտ սխալվել է թռչունը: Պետք է նորից փորձել: Եվ արքան մոտեցավ վանդակին: Արծիվն սկսեց վանդակի մի ծայրից մյուսը թռչել: Վերջապես նա թառեց վանդակի վերին, ձախ անկյունում ցանցին ամրացված փոքրիկ թիթեղի վրա:

Տիգրանը սկսեց մտածել: Ընդունենք, որ Հայքը կանգնած է հենց այստեղ: Հիմա ինքը երկու հատիկ կձգի, մեկը վանդակի հարավային կողմում, մյուսը՝ հյուսիսային: Հարավայինը Պարթևաց աշխարհն է, իսկ հյուսիսայինը՝ Հայոց: Թռչունն անպայման կնետվի հատիկի վրա: Բայց կարևորն այն է, թե նախ ո՞ր հատիկի վրա կթռչի:

Եթե թռավ հարավայինին, նշանակում է Հայքը պետք է գրոհի պարթևների վար, իսկ եթե թռավ հյուսիսայինի վրա, ասել է, թե պետք է բավարարվել եղածով:

Եվ արքան հատիկները ձգեց վանդակի հատակի տարբեր անկյունները: Արծվի ճուտը թափով նետվեց հարավային մասի հատիկի վրա և կտցահարեց այն:

Տիգրանի դենքը շողաց երջանկության փայլով: Նա իսկույն դուրս եկավ վրանից և համարյա ճչաց.

- Ասպետ, դու լսո՞ւմ ես, գրոհել, գրոհել հենց հիմա:

Բազարատը ծանոթ էր Տիգրանի հավահմայական թուլությանը: Նա թույլ ժպտաց և, դիմելով իր թիկնապահներին, հրամայեց.

- Նահապետներին, հարյուրապետներին ու տասնապետներին հայտնել, որ հավաքվեն արքայական վրանի շուրջը:

Եվ երբ թիկնապահները գնացին, ասպետը դիմեց արքային.

- Այո, արքա, գրոհի ժամն է, լույսը բացվում է, պարթևները կարող են գլխի ընկնել ծուղակի մասին, թափով գրոհել Մեհրուժանի վրա ու փրկվել:

- Իսկ մենք ի՞նչ ենք անում այստեղ, որ նրանց թույլ տանք Մեհրուժանի դեմ մենակ ճակատելու, - լրջացավ արքան:

- Արքա, Մեհրուժանը մեզնից հեռու է քառասուն ասպարեզ:

- Մեր հետախույզները ի՞նչ բանի վրա են:

- Նրանք հայտնում են, որ պարթևները դեռ ոչինչ չեն ակնկալել և ամեն տեղ խաղաղություն է տիրում:

Զորականները սկսեցին խմբվել արքայական վրանի մոտ:

Հանդերձապետի հնարամտությամբ վրանի կողքին պատրաստվեց մի փոքրիկ աշտարակ, որի վրա բարձրացրին արքային: Տիգրանը պատրաստվում էր խոսելու: Առավոտյան մեղմ քամին տարուբերում էր նրա մետաքսակար պատմուճանի քղանցքները: Տիգրանն իր առջև տեսնում էր հազարավոր դեմքեր, որոնք սպասում էին նրա խոսքին: Նա գլխի վրա ուղղեց խույրը և սկսեց.

- Հայոց աշխարհի քաջեր, մեր դեմ կանգնած է պարթևաց բանակը, նրանք, որ մեզնից յոթանասուն հովիտ են զավթել և ձեր արքային երկար տարիներ պահել որպես պատանդ: Այսօր մենք պետք է փառավոր ջարդ տանք նրանց: Հանուն մեր Կապուտանի, որի աղի պակասը, ահա, երկու տասնամյակից ավելի է, ինչ զգում է Հայոց աշխարհը: Հանուն հայկական զենքի փառքի, մենք պետք է հաղթենք այսօր: Մեզ հետ են բոլոր աստվածները, մեզ հետ է ճշմարտությունը: Փշրեցեք, ջարդեցեք նրանց, որ այլևս ոչ մի հայ պատանդ չգնա Տիզբոն, որ այլևս ոչ մի պարթև աչք չունենա Կապուտանի վրա: Ի զեն, իմ քաջեր, ի մարտ, օն, դեպի պարթևը, դեպի հաղթություն:

- Կեցցե Տիգրան արքան, - որոտաձայն բացականչեց զորականների բազմությունը:

- Ի ձիանց, ի ձիանց, ի ձիանց, - լսվեցին այս ու այն կողմից վաշտապետների հրամանները:

Շեփորահարների և թմբկահարների հուժկու մարտանվագը տարածվեց չորս կողմը: Առաջապահ գունդը առաջ շարժվեց:

Նրան հետևեց Բագրատունյաց գունդը, հետո երկար շարասյունով տեղից պոկվեց արցախցիների այրուձին: Հետախույզները սլացան դեպի Մեհրուժանը՝ հայտնելու մարտն սկսվելու մասին: Քիչ հետո դիմացից երևացին պարթևների ջոկատները: Նրանք սրարշավ գալիս էին դեպի հայերը: Բագարատը հրամայեց առաջապահ գնդին դանդաղեցնել նժույգների ընթացքը: Դա հնարավորություն կտա սառնասրտորեն ընդունել մարտը և խուսափել խուճապից: Օդի մեջ փայլատակող նիզակները թափահարելով՝ պարթևները ավելի արագացրին իրենց վազքարշավը:

- Մահ բոլոր հայերին, մահ նրանց թագավորին, մահ ուխտադրուժ Տիգրանին, պարտազանց Տիգրանին, - գոռում էին պարթևները, իրենց խոսքերը համեմելով Տիգրանի հասցեին ուղղված լուտանքներով:

- Բագարատը հրաման էր տվել Արցախի նահապետ Սմբատին՝ պարթևների հետ բախվելուց անմիջապես հետո թևերից սրարշավ նետվել առաջ և, օդակի մեջ առնելով պարթևաց մի քանի վաշտեր, նոր ճակատ բացել հակառակորդի հետ:

Զենքերի շառաչյունը և ձիերի սմբակների դոփյունները խառնիճաղանջ աղմուկով էին լցրել ծովափնյա տափարակը: Հայկական այրուձին մարտն սկսեց հանգիստ: Առջևի շարքը դիմագրավեց հակառակորդին, իսկ երկրորդ շարքից հայերն սկսեցին ամենայն երկճանկ նետերի տարափ տեղալ պարթևաց վրա: Բագարատը հրամայել էր խնայել ձիերին և միայն ծայրահեղ դեպքում դիմել հակառակորդի ձին սպանելու քայլին: Նահապետ Սմբատի արցախցի քաջերը պատռեցին պարթևների ստվար շարքերը և հազարի չափ պարթևներ ընկան օդակի մեջ:

Նրանք կռվում էին մոլեգին կատաղությամբ: Սակայն օդակի մեջ ընկած հազարյակի ջախջախումը անխուսափելի էր, որովհետև հայերը աքցանի մեջ էին առել նրանց: Մյուս ճակատից պարթևները սկսեցին ընկրկել Սմբատի զորականների գրոհից:

Հայկական այրուձին սկսեց առաջ շարժվել ամբողջ ճակատով: Պարթևները ետ նահանջելով տափարակի նեղ հատվածում սկսեցին նեղել հայկական այրուձիուն: Բագարատը զգաց դա: Սակայն մարտի այդպիսի թեժ պահին նահանջի փող փչելը կարող էր

կոտրել հայկական զորքի մարտական թափը, և Բագարատը հրամայեց ավելի բուռն թափով առաջ նետվել: Տափարակի նեղ հատվածում հեծյալները խանգարում էին միմյանց՝ շարժվելու տեղ չլինելու պատճառով:

Տափարակի հյուսիսային եզրին գտնվող փոքրիկ բլուրից Տիգրան արքան դիտում էր մարտը: Հանկարծ նա լսեց նահանջի փողը: Դա Բագարատն էր հրաման տվել ետ քաշվել տափարակի նեղ հատվածից, որտեղ արցախցիները զգալի կորուստ էին տալիս: Արքան աչքերը մթնեցրեց և իսկույն աղաղակեց.

- Ինչո՞ւ են նահանջում մերոնք, այստեղ կանչել զորապետ Բագարատին:

Թիկնապահները ասպանդակեցին նժույգները և բլուրից իջան տափարակ:

Բագարատը արքայի կանչը լսելով ձեռքը թափ տվեց և նահապետ Սմբատին կարգադրեց.

- Չշարժվել առաջ, պարթևները նորից են խորամանկում, բայց այս անգամ նրանք մեր ձեռքից չեն ազատվի:

- Երբ նա բարձրացավ այն բլուրը, որտեղ արքայական դիտարանն էր, Տիգրանը վրդովված բռնեց նրա օձիքը և գոռաց.

- Ասպետ, դու խաղում ես Հայոց աշխարհի բախտի հետ, ինչո՞ւ դադարեցրիր գրոհը:

- Արքա, դաշտի այս մասը շատ նեղ է, իսկ պարթևները դիրքավորված են հմտորեն, չարժե կորուստների գնով գրավել այդ հատվածը, պետք է ուրիշ հնարքի դիմել:

- Ի՞նչ հնարքի մասին ես խոսում, ասպետ, վերցրու նաև իմ թիկնապահ գնդերը և գրոհիր, պետք է միայն գրոհել, լսո՞ւմ ես, ասպետ, միայն գրոհել, - բացականչում էր Տիգրանը և բորբոքված ետ ու առաջ շարժվում դիտարանի վրա:

- Հանգստացիր, արքա, ամեն ինչ լավ կլինի, - մեղմ ասաց Բագարատը:

- Նահանջի մեջ ես լավ բան չեմ տեսնում, ասպետ:

- Մենք հիմա չենք նահանջում, արքա, այլ գրոհում ենք:

- Ասպետ, դու նահանջի փող հնչեցրիր, նայիր այնտեղ, մերոնք ետ են քաշվել վախկոտների պես:

- Դու մոռացել ես Մեհրուժանին, արքա, նա քիչ հետո կգրոհի թշնամու թիկունքից, և երբ խուճապն սկսվի պարթևների մեջ, մենք կանցնենք տափարակի կոկորդը և դուրս կգանք դաշտ, այ այն ժամանակ քո դիտարանի տեղը կփոխվի և դու կտեսնես, արքա, որ հայերը նահանջել չգիտեն: - Դու արդեն հրամա՞ն ես տվել Մեհրուժանին ճակատելու: - Այո, արքա, մի ժամից հետո պարթևները կկորցնեն իրենց գլուխները:

Մինչ Բագարատը արքայական դիտարանի վրա խոսում էր Տիգրանի հետ, Մեհրուժանի մոտ հասան Բագարատի հետախույզ-սուրհանդակները:

- Ի ձիանց, - որոտաց երիտասարդ զորապետը և իսկույն թռավ նժույգի վրա, - ի ձիանց, հայոց քաջեր, մահ պարթևներին, կեցցե Տիգրան արքան:

Վահանը չէր սպասում, որ թիկունքից կարող է հայկական այրուձի երևալ: Նա հրաման տվեց գլխավոր ուժերը ետ դարձնել և հարվածել թիկունքից եկող հայերին: Նախ դա հնարավորություն կտա խուսափել օղակումից և ապա պարտության դեպքում փախուստի բոլոր ճամփաները փակված չեն լինի:

- Ի՞նչ եք քարացել, - պարթև զորապետների վրա գոռաց սեպուհը և ոտքը դրեց ձիու ասպանդակին:

Եվ մինչ պարթևները վերադասավորում էին իրենց ուժերը, Մեհրուժանը հրաման տվեց, որ ձայնարկու գունդը անցնի իր անելիքին:

- Մահ պարթևներին, - մի հզոր աղաղակ թնդացրեց շրջակայքը:

Ձայնարկու գնդի բացականչությունն այնքան սաստիկ էր, որ պարթևներին թվաց, թե երկինքը որոտաց: Այդ ձայնից սարսափեց նաև Վահանը: Ուրեմն Տիգրանը իր զորքը գաղտնի փոխադրել է պարթևների թիկունքը և հիմնական ճակատից միայն ձևի համար է մարտ վարում, իսկույն անցավ նրա մտքով: Եվ սեպուհը որոշեց խուսափել թիկունքից գրոհող հայկական այրուձիու հարվածներից ու ճանապարհ բացեց առջևից:

Բայց եթե Վահանը այդպիսի որոշում էլ չկայացներ, պարթևները պետք է վարվեին հենց այդպես: Նրանք սկսեցին հզոր աղմուկից փախչել և մոտենալ տափարակի կոկորդին: Ձայնարկու գունդը դեռ շարունակում էր որոտընդոստ բացականչությունը, երբ պարթևները փախուստի դիմած անցան դաշտի նեղ հատվածը և դուրս եկան դաշտ: Մեհրուժանի հեծյալները թշնամուն սկսեցին հալածել անողոքաբար և նեղացնել օղակող շղթան: Այժմ միայն պետք է արագացնել շղթայի նեղացումը, մտածում էր Մեհրուժանը, պետք է թիկունքից գրոհող հայ հեծյալները իրենց աչքով տեսնեն, որ առջևում Բագարատի զորքն է: Նա ոգևորում էր զորականներին և մղում առաջ:

Արքայական դիտարանի վրա Տիգրանը նորից սկսեց անհանգիստ շարժումներ անել: Պարթևները կուլայից թափվող ջրի պես լցվում էին դաշտի մեջ:

- Այս ի՞նչ է անում Բագարատը, - նորից բացականչեց արքան:

- Բայց Բագարատը այդ պահին նրա մոտ չէր: Տիգրանը դիտում էր պարթևների հոծ խմբերը, որոնք վայնասուն բարձրացնելով գրոհում էին արցախցիների վրա: Մարտը քանի գնում բորբոքվում էր: Մի ժամից հետո տափարակի "կոկորդից դուրս թափվեցին պարթևներին թիկունքից հարվածող մեհրուժանականները: Ձայնարկու գնդի հաղթական թնդյունը հասավ արքային:

- Տեսնո՞ւմ ես, թե ինչպես պիտի ճակատել, - դարձավ Տիգրանը իր կողքին ապշահար Վահունուն:

- Վահագնը մեզ հետ է, արքա, նա հաղթություն է բերում մեզ, - պատասխանեց սքեմավորը և ռազմադաշտի վրա ինչ-որ բան նկատելով՝ հուզված բացականչեց.

- Նայիր, արքա, պարթևները շրջապատվել են բոլոր կողմերից, նրանք փախչում են դեպի ծովը, հա,հա,հա, նրանք փախչում են դեպի ծովը:

- Այս ինչո՞ւ է Բագարատը թույլ տալիս, որ նրանք փախչեն դեպի ծովը, գուցե մեր այրուձին չի՞ կարողանում չորս կողմից օղակել պարթևներին: Բայց չէ՞ որ Բագարատը ծրագրել էր օղակել: Դե, իհարկե, նրանք փախչում են, ահա, այնտեղ արցախցիները կտրեցին նրանց առաջը, այդպես, այդպես, Սմբատ նահապետ, բայց չէ, մյուս կողմից նրանք դարձյալ մտնում են ծովը: Ոչ, այսպես չի կարելի, էյ, սեպուհ, - դիմեց նա իր թիկնապահ գնդերից մեկի պետին:

- Լսում եմ, արքա:

- Տեսնո՞ւմ ես, թե ինչպես են փախչում պարթևները:

- Տեսնում եմ, արքա:

- Պետք է փակել նրանց ճանապարհը, - ասաց արքան:

- Արքա, ինձ հրամայված է չշարժվել տեղից և մարտի չմտնել:

- Ո՞վ է հրամայել:

- Ասպետ Բագարատը:

- Բայց Բագարատը միայն իմ ասպետն է, իսկ ես նրա և քո արքան եմ և հրամայում եմ քեզ, որ հենց հիմա քո գնդով նետվես այնտեղ և փակես պարթևների փախուստի ուղին: - Արքա, - սեպուհը կմկմաց, - թշնամին կարող է մոտենալ քեզ...

- Գնդապետ, կատարիր միայն իմ հրամանը, եթե ցանկանում ես, որ գլուխդ մնա ուսերիդ վրա, - սաստեց արքան:

- Լսում եմ, արքա, - զգաստացավ սեպուհը և արքայական դիտարանի մոտ բանակած զինվորական գնդերից մեկը մարտակարգի հրավիրեց:

Թիկնապահ գունդը սրարշավ իջավ բլրից և, շրջանցելով ռազմադաշտի աջ թևը շրջվեց դեպի ծովափ: Արքայական կատաղած հազարյակը մի քանի րոպեում պատնեշ կազմեց ծովափի երկարությամբ և մարտի մտավ: Պարթևները բոլոր կողմերից ընկան օղակի մեջ: Մեկիկ-մեկիկ բարձրացվեցին անձնատուր լինելու դրոշները: Երեսունհազարանոց պարթևաց բանակը հալվել էր և վերածվել մի քանի հազարանոց գուգազի:

Հաղթանակի շեփորները հնչեցին ռազմադաշտում և ազդարարեցին մարտի ավարտը:

Ռազմադաշտում փռված դիակների կույտերի մեջ հայերը չգտան սեպուհ Վահանին:

- Այս անգամ դու չես փրկվի, չարագործ դև, թեկուզ մինչև աշխարհի ծայրն էլ գնաս, քո հետևից կհասնենք, - ատամները կրճտացրեց Տիգրան արքան, լսելով իր զորապետների զեկույցները:

ԱՐՔԱՅԻՑ - ԱՐՔԱ

Ադրաբանան ամրոցը պաշարվեց հանկարծակի:

Կապուտանի խոշոր ճակատամարտում պարտվելուց հետո Հրահատ Արշակունու բանակը դադարեցրեց դիմադրությունը: Հայկական այրուձին սկսեց խորանալ Պարթևաց աշխարհի սրտում:

Տիգրանը ետ նվաճեց յոթանասուն հովիտները:

Հետո նա գրավեց Մեծ Աղբակ գավառը, արշավեց դեպի Ադիաբեն, Նինուեի ու Արբելայի շրջաններում քարը քարի վրա չթողեց: Հրահատը հասցրեց Արշակունիների ամառային նստավայր Եկբատանից Տիզբոն փոխադրել իր տիկնունին: Տիգրանը հրամայեց խնայել Եկբատանը: Եկբատանում հայերը ավերեցին միայն հայրենադավ Վահան սեպուհի դաստակերտը, որ նա նվեր էր ստացել Միհրդատ Արշակունուց:

- Թող պարթևները տեսնեն, թե ինչպես է Հայքը պատժում հայրենադավին: Թող նրանք պատմեն իրենց սերունդներին, որ այստեղ մի դաստակերտ է եղել, որ ավերել է տվել անհաղթ Տիգրանը: Եվ թող այս դաստակերտի մոխիրները տեսնեն նաև Հայոց աշխարհի այրերը, տեսնեն ու միշտ հիշեն, որ հայրենիքի դավաճանի բույնը, թեկուզ աշխարհի ծայրում էլ լինի, կիրդեհվի հայկական վրիժառու ձեռքով: Ահա թե ինչ է ստացել սեպուհը իր դավաճանության դիմաց, մի դաստակերտ, որի մոխիրը կարող է տանել մի ձի: Ի՞նչ գործ ունի հայը Եկբատանում: Ես ձեզ եմ հարցնում, հայոց նախարարներ, ի՞նչ գործ ունի Վահանն այստեղ: Մենք պետք է գտնենք այդ հայրենադավին: Եթե պարթևաց աշխարհի սահմանները նույնիսկ ընդարձակվեն օվկիանի ալիքների պես, այնուամենայնիվ մենք պիտի գտնենք նրան:

- Տիգրանը չէր կատակում: Հենց Եկբատանում նա նորից ռազմական խորհուրդ հրավիրեց: Խորհուրդը որոշեց առանց ուշացնելու գրոհել Տիզբոնի վրա:

Եվ հայկական այրուձին արքայական պողոտայով շարժվեց դեպի Բագիստան: Տիզբոնի վրա գրոհելու լուրը իսկույն հասավ Հրահատին: Վերջինս այնքան ուժ չուներ մարզված հայկական այրուձիու դեմ ճակատելու համար: Նույնիսկ քաղաքամայր Տիզբոնը պաշտպանող զորքը, հայկական բանակի ահից սարսափած, սկսել էր խուճապի մատնվել դեռ այն ժամանակ, երբ Տիգրանը Տիզբոնից հեռու էր հարյուրավոր հրասախներով: Արշակունիների հարյուրհիսունամյա գահակալությունը կանգնած էր կործանման եզրին: Պարթևաց արքայից-արքան մտածում էր փրկել Տիզբոնը հայկական հրդեհից: Իսկ Տիզբոնը փրկել՝ ասել է փրկել Պարթևաց աշխարհն ու Արշակունիների գահակալությունը: Հրահատը հասկանում էր, որ փրկելու համար պետք է զիջել: Եվ կանգ առավ զիջելու մտքի վրա: Բայց գուցե ինքը զիջի, իսկ Տիգրանն ավելի շատ պահանջի:

- Առանց ժամանակ կորցնելու Հրահատի դեսպանախումբը դուրս եկավ Տիզբոնից և ճեպընթաց ընդառաջ գնաց Տիգրանին:

Տիգրան արքան նոր էր պատրաստվում Բագիստանից դուրս գալ, երբ դեսպանախումբը տեղ հասավ: Բագիստան ամրոցի կամարակապ սրահը դարձավ բանակցության նստավայր: Զորապետ Գուրգենը նախ Տիգրանին հանձնեց թանկարժեք նվերներ, ապա սկսեց Հրահատի անունից ամեն ինչ խոստանալ, պայմանով, որ հայերը չմոտենան Տիզբոնին:

Հրահատը համաձայն է, որ յոթանասուն հովիտը Ադիաբենն ու Ատրպատականը հավիտյանս-հավիտենից դառնան Հայքի անկապտելի մասերը, որ ոչ մի պարթև Արշակունի օրինական իրավունք չի ունենա այդ երկրների վրա, - ասաց Գուրգեն զորապետը:

- Արշակունիները պետք է հրաժարվեն նաև Միկդոնյայից և Օրոյենից, - ավելացրեց Տիգրան արքան:

- Հրահատը համաձայն է նաև այդ պայմանին, պատասխանեց Գուրգենը:

Խոսակցությանը խառնվեց զորապետ Բագարատը:

- Դեսպան, թող Հրահատը պայմանագիր կապի և հրաժարվի արքայից-արքա տիտղոսից, հասել է ժամանակը, որ այդ շնորհումն այսուհետև կրեն միայն Արտաշեսյանները:

Գուրգենը համաձայնեց նաև պարթևների համար չափազանց նվաստացուցիչ այս պահանջին:

- Եվ գիտցեք, դեսպան, եթե Հրահատի մատնակնիքով վավերացված այս բոլոր պայմաններն ամփոփող դաշնագիրը երկու օրվա ընթացքում չլինի Բագիստանում, երրորդ օրը Տիզբոնի տակ կերևա հայկական այրուձին, - ասաց Բագարատը և ավելացրեց. – մի պայման ևս՝ սեպուհ Վահանը պետք է կենդանի հանձնվի մեր ձեռքը:

Ուղիղ երկու օր հետո Բագիստանի շրջակայքը դարձավ խրարճանատեղի: Հրահատը ընդունել էր Տիգրանի բոլոր պահանջները: - Կեցցե արքայից-արքա Տիգրանը, կեցցե Մեծ Տիգրանը, - որոտում էր հայկական այրուձիու զորական ամբոխը:

Այս հաղթահանդեսը ոչ մի հայ հեծյալ չի մոռանա: Արքայից-արքա Տիգրանը բոլոր զորականներին երկուական ոսկի նվիրեց:

Վրույրն իր դրամները թաշկինակի մեջ փաթաթած՝ ամրացրեց տոգայի ներքնագրպանում և որոշեց, որ եթե կենդանի մնա ու տուն դառնա, այդ փողով ստրկությունից ազատի իր կրտսեր եղբորը՝ Սոսիկին:

Ի պատիվ Տիգրանի հաղթության, ձայնարկու գունդը քառորդ ժամի չափ հզոր գոչյուններով խլացնում էր Բագիստանի շրջակայքը: Եվ մինչ հայկական այրուձին տոնախմբությամբ էր զբաղված, Բագարատն ու Մեհրուժանը մի քանի վաշտով սրարշավ գնում էին դեպի Եկբատան: Հրահատ Արշակունին հայտնել էր, որ սեպուհ Վահանը գտնվում է Ադրաբանան ամրոցում և Տիգրանն ինչպես կուզե թող վարվի նրա հետ: Իսկ Ադրաբանանը Եկբատանից հեռու էր երեք հրասախ:

Բագիստանի տոնախմբությունը դեռ չվերջացած, Ադրաբանանը պաշարվեց: Ամրոցի այդ հանկարծակի պաշարումը բոլորովին էլ չշփոթեցրեց սեպուհ Վահանին:

Ամրոցը մի հարվածով գրավելու հայկական վաշտերի առաջին փորձը ձախողվեց: Բերդակալները նետերի տարափով դիմավորեցին հայ հեծյալներին:

Բագարատը նահանջեց:

- Ետ դառնամ, - ասաց Մեհրուժանը Բագարատին, - ու ամբողջ բանակը շարժել տամ այս դավաճանի գլխին:

- Դու ուզում ես, որ արքայից-արքան ծիծաղի՞ մեզ վրա, - անհաջող գրոհից զայրացած պատասխանեց ասպետ Բագարատը:

- Բայց դու ասում ես, որ օղակումից դուրս պրծնելու մեջ ոչ ոք չի հասնի սրան, էլ ինչո՞ւ լրացուցիչ հնարավորություն տալ, որ նորից նա դիմի այդ քայլին:

- Դու ճիշտ ես ասում, հենց հիմա մեկնիր, մութը վրա է հասնում արդեն, ես բոլոր ճամփաները կտրել կտամ, և նա այժմ փախչելու տեղ չի ունենա, իսկ դու շտապիր, առաջապահ գնդերից վերցրու մի քանիսը և հասիր օգնության, համոզիր արքայից-արքային, որ դա հույժ անհրաժեշտ է:

Արքայից-արքայի տրամադրությունը վատ չէ, ասպետ, նա չի մերժի մեզ, լուսաբացին այստեղ կլինեմ:

Մեհրուժանը մեկնեց դեպի Բագիստան, իսկ Բագարատը ամրացրեց բերդի պաշարումը:

Ադրաբանանի եռանկյունաձև քարակոփ բերդապարիսպները տասնհինգ կանգուն բարձրություն ունեին: Կրկնապարիսպի վրա բերդակալների համար պատրաստված էին պառկելու տեղեր: Մութը վրա հասնելուն պես բերդի բոլոր աշտարակների վրա սկսեցին բեկբեկալ կանթեղների բոցերը: Փնջավոր նետահարությամբ պաշարողները նշան էին բռնում լույսերի վրա և հանգցնում դրանք: Վահանը ամրոցի աշտարակից շտապ իջավ ու զորականներին կարգադրեց կրկնապատկել կանթեղների քանակը:

- Այդ ինչո՞ւ զորապետ, - հարցրեց պարթևաց վաշտապետը:

- Թող նրանք խփեն ինչքան սրտները կուզի: Դրանով միայն մենք կշահենք: Հայկական նետերը ուրիշ տեղ չեն ընկնում, այլ բերդի մեջ, իսկ մեզ շատ նետեր են պետք, պա՞րզ է, վաշտապետ:

Պարթևը օրորեց գլուխը և գնաց սեպուհի հրամանը կատարելու:

Մեհրուժանը Ադրաբանան հասավ մյուս օրը:

Հայկական այրուձիու մի քանի գնդերից բացի, նա իր հետ բերել էր նաև ձայնարկու գունդը: Ամրոցը գրոհելու պահին այդ գնդի հզոր աղմուկը կօգնի հայերին, մտածում էր Մեհրուժանը: Բայց ասպետ Բագարատը բերդը գրավելու ուրիշ ծրագիր էր մշակել: Երբ Մեհրուժանի բերած հեծյալները մի քանի ժամ հանգիստ առան, Բագարատը հրամայեց գրոհը նորից կրկնել: Ադրաբանանը այս անգամ էլ մնաց անմատչելի: Հայերը ավելի շատ կորուստներ տվեցին:

Ամրոցի պաշարումը շարունակվեց նաև երրորդ օրը: Գրոհով այն վերցնելու բոլոր ձեռնարկումները մատնվեցին անհաջողության: Վահանի գլխավորությամբ բերդապահները, հմտորեն պաշտպանվելով, ետ էին մղում հայկական զորքերի բոլոր գրոհները: Զորապետական վրանի ներսում Բագարատը ու Մեհրուժանը չարացած ետ ու առաջ էին շարժվում:

Հաջորդ երկու օրը Ադրաբանանի խաղաղությունը ոչ ոք չվրդովեց: Բագիստանում նստած արքայից-արքա Տիգրանն իր մոտ կանչեց Բագարատին և հրամայեց ինչ գնով ուզում է լինի հրդեհել ամրոցը և հայրենադավին թողնել բոցերի մեջ:

Սկսվեց ճրագայուղի տենդային հավաք: Հայ զորականները մտնում էին պարթևաց գյուղերը և ուժով խլում շինականների ճրագաթասերի վերջին սնունդը: Հայկական երեսուն

հազարանոց բանակից քսան հազարը զբաղված էր Ադրաբանանը հրդեհելու նախապատրաստական աշխատանքով: Հրահեղուկ էին կուտակում բոլոր տեսակի կավե ու պղնձե ամաններով, կաշվե հադաղակներով:

Ու մի գիշեր, Վահանի համար բոլորովին անսպասելի, հայերը գրոհեցին բերդի վրա: Նրանք հրավառված հազարավոր կանթեղներ էին շպրտում ամրոցի ներսը: Բերդակործան բաբաների վրայից ձեթով լի տակառներ էին գլորում բերդի աշտարակներից: Բերդապահ զորքի՝ հրդեհի առաջն առնելու եռանդուն ջանքերը արդյունք չտվին:

Ամրոցի փայտե աշտարակն սկսեց վառվել: Բերդի ներսի կողմից բոլոր պարիսպների տակ լճացած հրահեղուկներից դեպի երկինք բարձրացան կրակե լեզուները: Հայերը շարունակում էին կրակի վրա յուղ լցնել: Ահեղ բոցերից սարսափած բերդակալները պարիսպների առանձին մասերում դադարեցրին դիմադրությունը: Սակայն հայերը ներս մտնելու ոչ մի ցանկություն չունեին: Նրանք շարունակում էին ավելի բորբոքել հրդեհը և հեղուկով լցված հարյուրավոր ու հազարավոր ամաններ նետել ամրոցի վրա:

Լուսաբացին Ադրաբանանը թողնում էր հսկա խարույկի տպավորություն: Բերդապահներից ոչ ոք չկարողացավ ազատվել հրե ճանկերից:

Ամրոցի հրդեհը շարունակվեց մի քանի օր: Հայկական այրուձին հեռացավ Ադրաբանանի մոտից: Բայց շատ հեռվից էլ հայ զորականները տեսնում էին հրկիզվող ամրոցի բոցերը:

ՀԱՂԹՈՂԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

Արքայից-արքա Տիգրանը Պարթևաց աշխարհից դուրս եկավ ամռան սկզբներին, հասավ Աղձնիք և երկար ժամանակ կանգ առավ այստեղ: Ճանապարհին շատերն էին փորձում հանդիպել նրան, ընծաներ տալ և ընդունել նրա հպատակությունը: Սակայն նա ոչ ոքի չէր ընդունում:

Թող գան և իմ առջև խոնարհվեն հայոց հողի վրա, մտածում էր նա: Թող այն վայրը, ուր ես իմ գլխին դրեցի պապենական խույրը, դառնա Հայոց համայն աշխարհի կենտրոնը և օտարների համար՝ խոնարհվելու տաճար:

Ինչո՞ւ պիտի հայը հելլենի, պարթևի կամ հռոմեացու դռանն սպասի:

Մի՞թե վերջիններս ավելի խելոք են ու քաջ, քան հայը: Աստվածները շատ երկար են հանդուրժել այս անարդարությունը: Պետք է ուշքի բերել հային, սովորեցնել նրան, որ իր բոլոր հարևաններին նայի առանց աչքերը թարթելու, որ ուսերի վրա ուղիղ պահի իր գլուխը:

Աղձնիքում, խուլփի ափին, բոցկլտաց հայոց հաղթության ատրուշանը: Թիթեռների պես նրա շուրջն սկսեցին պտտվել Միջագետքի բոլոր մեծ ու փոքր արքաները, զորապետներն ու մեծատունները:

Հին բերդի ընդարձակ դահլիճը դարձել էր հաղթողի ժամանակավոր նստավայրը: Տիգրանն այստեղ օրեր է անցկացնում Բագարատի ու Մեհրուժանի հետ, խորհրդակցում, նոր

արշավանքներ ծրագրում, բայց բոլորովին չէր շտապում ընդունել օտարներին, որոնց վրանները օրըստօրե բազմանում էին Խուլփի ափերին:

Արտաշատից եկավ Փայլակ Մարդպետունին, իր հետ վերցրեց Պարթևաց աշխարհից բերած ռազմաավարը և վերադարձավ քաղաքամայր:

Մի օր, սովորական խրախճանքից հետո, երբ բերդի ընդարձակ սենյակից դուրս եկան բոլոր սպասավորները, ասպետը դարձավ արքայից-արքային:

- Դու, Մեծդ Տիգրան, ի՞նչ ես խորհում, որ այդքան սպասեցնել ես տալիս հզորությանդ առջև խոնարհվելու պատրաստակամությունը հայտնող մարդկանց: - Թող սովորեն սպասել: Հայի տունը նրա համար չէ կառուցված, որ օտարը մտնի, թալանի ու ավերի այն: Պետք է բարձրացնենք մեր տան հեղինակությունը: Թող բազմանա մեր դռան առջև սպասողների թիվը: - Բայց նրանք շատ երկար են սպասում, արքայից-արքա: - Ավելի լավ, ես ուզում եմ փորձել նրանց համբերությունը:

Եվ դու մի զարմանա, ասպետ, բոլորովին էլ հաճելի չէ, որ համբերության աստվածը իր հովանու տակ է առել միայն հայերին:

Այս զրույցից մի քանի օր հետո հին բերդի առջև սրընգահարների երկարաշունչ նվագն ազդարարեց ընդունելության սկիզբը: Արքայանիստ դահլիճում առաջինը ոտք դրեց Կորդուքի թագավոր Զարբիենոսը: Հարթ, սպիտակափայլ դեմքով, միջահասակ Զարբիենոսը արքայական պատմուճանը անփութորեն ուսերին գցած, կորդվացի երկու մեծապետների ուղեկցությամբ մտավ ընդարձակ սենյակը և, մոտենալով Տիգրանի ճամփորդության գահին, չոքեց արքայից-արքայի առջև:

Կից սենյակից ընդունարան մտավ քրմապետ Վահունին և արձակելով գրտնակաձև փաթաթված մագաղաթը սկսեց զեկուցել.

- Ամենայն հայոց տիրակալ, Արևելքի արքաների-արքա, այս աշխարհի ամենահզոր ու հանճարեղ այր, երկրի վրա Արամազդի փոխանորդ Մեծդ Տիգրան, քո առջև խոնարհված այրը Կորդուքի թագավոր Զարբիենոսն է: Քո աշխարհացույց հաղթությունները շնորհավորելու համար նա բերել է հետևյալ ընծաները. հազար տաղանդ ոսկի, վաթսուն աշխատավոր ընդոծին, հիսուն օդապարիկ նժույգ, հարյուր քսեստ ձիթայուղ, ութ հազար ունկի արծաթ, երեք թավալում ասեղնագործ կտոր, մեկ ճարտարագործ, ոսկեզօծ աշտանակ, հինգ հարյուր հազար զարեհատ ընտիր ցորեն, քառասուն հադաղակ տասնամյա գինի և երկու գեղեցկապարանոց աղջիկներ:

Վահունին վերջացրեց մագաղաթի ընթերցումը, մի պահ լռեց ու ծափ զարկեց: Ներս մտավ մատուցարանը ձեռքին մի զորական: Մատուցարանի վրա դրված էին Զարբիենոսի արքայական խույրն ու ապարոշը: Զորականը մոտեցավ, մատուցարանը դրեց Տիգրանի ոտքերի առջև և, խոր գլուխ տալով, դուրս եկավ ընդունարանից:

- Ով Մեծդ Տիգրան, - հայացքը Տիգրանի ոտքերին հառած, սկսեց Զարբիենոսը, - Կորդուքը գլուխ է տալիս քեզ և աղերսում, որ ընդունես նրան որպես քո հպատակը, նա հավատարիմ կլինի արմենների հզորագույն տիրակալին, անհաղթ ու անպարտելի արքայից-արքային:

Տիգրանը ուղղվեց գահի վրա, ժպտաց, մատուցարանի վրայից վերցրեց խույրը և դնելով Զարբիենոսի գլխին ասաց.

- Վեր կաց Զարբիենոս, դու արժանի ես այս խույրը կրելու մինչև վախճանդ:

Կորդուքի արքան համբուրեց Տիգրանի ոտքը և ելավ տեղից: Տիգրանը շարունակեց.

- Ես վերահաստատում եմ քո արքայական շնորհը, Զարբիենոս հուսալով Հայոց աշխարհի հանդեպ ցուցաբերելիք քո հավատարմությունը: Կորդուքն այսուհետև կդառնա Հայոց երկրի անբաժանելի հատվածը և աստվածների կամքով այդպիսին կմնա հավիտյանս-հավիտենից:

- Շնորհակալ եմ, ով Մեծդ Տիգրան, քո բարեհաճ վերաբերմունքը ես ինձ հետ կտանեմ մինչև գերեզման:

- Լսիր, Զարբիենոս, - նորից խոսեց Տիգրանը, - կառավարիր Կորդուքը, բայց բնավ չմոռանաս, որ այն Հայքի մի մասնիկն է, պարտավորվիր, որ ամեն տարի արքունիքի գանձարանի համար կուղարկես հազար հինգ հարյուր տաղանդ ոսկի և երբ պետք լինի՝ կորդվաց ամբողջ բանակը կկռվի հայկական դրոշների ներքո:

- Ես ավելին կասեմ, արքայից-արքա:

Շուտով քրմապետ Վահունին ընթերցեց նախապես պատրաստված հավատարմության թուղթը, որը Զարբիենոսը ուրախությամբ մատնակնքեց և մեկնեց արքայից-արքային: Վահունին ծափ զարկեց, և Զարբիենոսը, զգալով, որ ընդունելությունն ավարտված է, մի քանի անգամ մեջքից ծալվելով, ետ-ետ գնաց ու դուրս եկավ սենյակից:

- Ասպետ, - դառնալով Բագարատին ասաց Տիգրանը,

- Կորդուքը ինչքա՞ն զորք կարող է հանել:

- Երեք հազար հեծյալ և այդքան էլ կամուրջ սարքողներ:

Տիգրանի լիաթոք ծիծաղը տարածվեց ընդունարանում:

- Ասպետ, մի՞թե վատ է, որ հայկական բանակում այդքան կամուրջասարք զինվորներ ունենք:

- Վատ չէ, արքայից-արքա, բայց մեզ պետք չեն այդքան կամուրջ սարքողներ:

- Ոչ, ասպետ, մեզ ավելին են պետք, մենք դեռ շատ գետեր կանցնենք, բավ է որքան հայկական նժույգը դոփեց իր տեղում, մեզ սպասում են հեռուները:

Ապա դառնալով քրմապետ Վահունուն, հրամայեց.

- Հաջորդը:

- Վաչկատուն արաբների ցեղապետ շեյխ Աբգարը:

Ընդունարան մտավ լայն տոգայով և երկար սրնքակալներով մի մարդ, որի արևախանձ դեմքի վրա աչքերն այնպես էին փայլում, ինչպես բուի աչքերը գիշերով: Քրմապետ Վահունին թվարկեց շեյխի բերած ընծաները:

- Բոլոր հեծյալ արաբների ջերմաջերմ ողջույնը այս աշխարհի ամենահզոր արքային՝ Մեծն Տիգրանին, - ասաց Աբգարը և խոր գլուխ տվեց:

- Շեյխ, որտե՞ղ են ապրում քո հեծյալ արաբները, - հարցրեց Տիգրանը:

- Ձիերի վրա, - պատասխանեց Աբգարը:

- Իսկ ձեր ձիե՞րը:

- Այստեղից մինչև այնտեղ, ուր Եդեմաբուխ գետն ու Տիգրիսը խառնվում են իրար:

- Եթե բոլորդ հավաքվեք մի տեղ՝ քանի՞ մարդ կլինեք:

- Միայն իմ ցեղը՝ տասը բյուր:

- Ահա թե ինչ, շեյխ Աբգար, հավաքիր քո բոլոր հեծյալներին և հանգրվանիր Օսրոյենի ու Եդեսիայի միջանցքում: Հը՞, կարող ես այդպես անել:

- Քո ցանկությունը, արքայից-արքա, ես խոստանում եմ ի կատար ածել մինչև մի ամիս:

- Հիանալի է, շեյխ, դու դուր ես գալիս ինձ: Քեզ նշանակում եմ Զնգմայի իշխան: Համարիր քեզ Եդեմաբուխ գետով անցնող բոլոր կամուրջների տնօրենը: Իմ անունից անցավարձ գանձիր այդ ճամփաներով անցնող ամեն մեկից և երեք ամիսը մեկ զեկուցիր ինձ այդ մասին: Աղխիդ անդամների մի մասն էլ թող ձիեր բուծի ու վարժեցնի մեր բանակի համար:

- Ամեն ինչ կանեմ այնպես, ինչպես հրամայեցիր, արքայից-արքա:

Աբգարից հետո ընդունարան մտավ հնդիկ մեծ վաճառական Սինգիը: Նա իր հետ բերել էր բազմատեսակ թանկարժեք քարեր և հմուտ ճարտասանի պես գովում էր դրանց արժանիքները: Սինգիը իր ուռած տոպրակից հանեց պայծառ ու փայլուն երեք քարեր:

- Սրանք ի՞նչ են, - հարցրեց Տիգրանը:

- Ով մեծդ արքա, սրանք հակինթներ են. այս մեկը, - Սինգիը ձեռքին բռնեց կապտաթույր մի հակինթ, - չքնաղ տեսք կտա աշխարհի ամենամեծ արքայի վսեմաշուք գահին, այս մյուսն իր պայծառ ճաճանչներով զվարճացնում է մարդու աչքերը, սա միայն կսազի քո արքայական խույրին, իսկ այս երրորդը, որ այսքան գեղեցիկ փայլ ունի, այնպիսի զորությամբ է օժտված, որ օգնում է հիվանդին:

Սինգիը հակինթները դրեց Տիգրանի առջև և ձեռքը նորից տարավ դեպի տոպրակը, այնտեղից հանեց կարմրագույն մի ակն և ասաց.

- Սա սուտակ է, դուք՝ հայերդ սրան կոչում եք մեղեսիկ: Արքայական գոտու ճարմանդների համար սա անփոխարինելի զարդ է:

Ապա Սինգիը Տիգրանի առջև դրեց կանաչ ու դեղին փայլքերը միախառնող մի ուրիշ քար:

- Սա էլ բյուրեղն է, աշխարհում ոչ մի քար չի կարող այնպես մաքուր ճառագայթել, ինչպես սա: Բյուրեղով կարելի է սրբել ատամները, և վերջիններս բնավ չեն կեղտոտվի ու կփայլեն այնպես, ինչպես արևի տակ՝ Հայոց Մասիսի գլուխը:

Հնդիկը հանեց մի սև, թեթև քար, կոչեց այն սեպաճ և ճարտասանեց.

- Ամեն ինչ այս աշխարհում կարելի է բուժել: Բայց երբ մարդը մոտենում է իր աշնանը, և պակասում է նրա աչքերի լույսը, անզոր ես լինում դրա դեմ ճար անել; Իսկ աշխարհում բոլորն են ծերանում, նույնիսկ ծերանում է ինքը՝ աշխարհը, որովհետև այդպես են ցանկանում աստվածները: Կգա մի օր, ով հզոր ու Մեծ Տիգրան, կպակասի և քո աչքերի լույսը: Եթե այս քարը պահես և ծերության ժամանակ մեկ-մեկ նայես նրան, ապա կավելանա քո աչքերի լույսը և կօգնի, որ քո հեռատեսությամբ մրցես արծիվների հետ:

Հետո Սինգիը հանեց հին ու նոր ադամանդներ, մարգարիտներ, օձի քար ու այլևայլ գույնզգույն ակներ և իր ճարտար լեզվով երկինք հասցրեց նրանց գովքը:

Լսեց Տիգրանը մեծ վաճառականին ու հարցրեց.

- Եվ որտեղի՞ց ես հավաքել այս ամբողջ հարստությունը:

- Վաճառական Սինգիին ճանաչում են հեռավոր Գանգեսից մինչև Աթենք: Այդ երկար ճանապարհին անցնում է շատ երկրներով, որտեղ ես բազում գործավորներ ունեմ: Նրանք ձեռք են բերում այս բոլորը, հանձնում ինձ, ստանում իրենց վաստակը:

- Իսկ դու, Սինգի, ամենքի՞ն ես վաճառում այս գեղեցիկ քարերը:

- Ոչ, Հայոց մեծ արքա, միայն մեծապետներին, իսկ առավել շատ՝ հզոր մեծապետներին, որովհետև աստվածները կզայրանան ինձ վրա, եթե դրանք ես հանձնեմ վատաբարո, թեկուզ իր գլխին թագ ունեցող, մարդուն:

- Այս ամենի դիմաց ինչքա՞ն ոսկի ես ուզում:

- Ով Մեծ Տիգրան, ես արքաներին ոչինչ չեմ վաճառում:

- Ապա՞:

- Այս բոլորը ես ընծայում եմ քեզ և դրա փոխարեն ոչինչ չեմ պահանջում:

- Բարի, հարգարժան Սինգի, քո ծառայության համար ես կհատուցեմ, - ասաց Տիգրանը և դարձավ Վահունուն. – քրմապետ, տերության գանձարանից մեծ վաճառականին ընծայիր երկու հարյուր տաղանդ ոսկի:

Եվ երբ հնդիկը մինչև գետին խոնարհվելով ուզում էր դուրս գալ ընդունարանից, Տիգրանը դարձավ նրան.

- Սպասիր, Սինգի:

- Լսում եմ, մեծ ու առատաձեռն արքա:

- Մենք չվերջացրինք մեր զրույցը:

- Ես պատրաստ եմ լսել այնքան ժամանակ, որքան կբարեհաճի Մեծն Տիգրանը:

- Դու երբևէ եղե՞լ ես Տիգբոնում:

- Ավելի շատ, քան աշխարհի որևէ քաղաքում:

- Իսկ ինչո՞ւ քո գանձերը չես նվիրում Արշակունիներին, չէ՞ որ Տիզբոնը Գանգեսին ավելի մոտ է:

- Ես շատ եմ նվիրել Արշակունիներին, բայց Հրահատը անպատվեց ինձ միայն նրա համար, որ ես չկարողացա ժամանակին կատարել նրա պատվերը:

- Ի՞նչ պատվեր էր դա:

- Գտնել մի տեսակ քար, որ ակատ է կոչվում:

- Հրահատի ինչի՞ն է պետք այն:

- Այդ ակնը օգնում է մարդու մարմնի քորին, իսկ Հրահատի ամբողջ մարմինը տառապում է քորից:

- Հետո՞, գտար ակատը:

- Գտա, բայց հասա այն ժամանակ, երբ պարթևը գլուխը կորցրել էր ցավից: Նա կատաղած հարձակվեց ինձ վրա և ապտակեց անմեղիս:

- Դա ե՞րբ էր:

- Մի տարի առաջ:

- Իսկ այնուհետև դու էլ չայցելեցի՞ր Հրահատին:

- Բնավ:

- Ինչո՞ւ, գուցե նա զղջացել է իր արածի համար:

- Ուրիշ բան է ասում մեր իմաստուն առածը:

- Ի՞նչ առած է դա:

- Կոպիտ կերպով մի կտրիր բարեկամության թելը, նորից կապելու դեպքում ագույց կմնա:

- Ամենից շատ ո՞ր աշխարհում են գնահատում քո ակները, Սինգի:

- Հայոց աշխարհում:

- Արդյոք այդպես չե՞ս խոսում նրա համար, որ այս պահին դու գտնվում ես հայկական հողի վրա:

- Ամենևին էլ ոչ, արքայից-արքա, հնդիկները ճշմարտությունից չեն բաժանվի, եթե նույնիսկ դրա համար նրանց տանելու լինեն դեպի կառափնարան:

- Հայոց արքունիքի դռները միշտ բաց կլինեն քո առջև, Սինգի, որ ժամին որ մեր կողմերը գաս:

- Ես հասկացա քեզ, արքայից-արքա:

- Իսկ դու կարող ես շուտ-շուտ այցելել ինձ:

- Այսուհետև բոլոր ճամփաները ինձ կբերեն քո աշխարհը:

- Եվ որքան ծանր լինի քո բեռը, այնքան առատորեն կվարձատրվես դու:

- Ես կաշխատեմ, արքայից-արքա, որ Արևելքի բոլոր գեղեցիկ ակները հավաքվեն միայն Հայոց արքունիքում:

- Բարի ճանապարհ ու հաջողություն քեզ, Սինգի, - իր խոսքն ավարտեց Տիգրանը և դարձավ քրմապետ Վահունուն. – հրովարտակ գրիր իմ անունից, թող ամենուրեք իմանան, որ մեծ վաճառական Սինգիը վայելում է իմ ամենամեծ բարեհաճությունը:

Քիչ հետո արքայական ընդունարանի գավթում քրմապետ Վահունին վեճի մեջ մտավ մեկի հետ:

- Հարգելի իմաստասեր, - ասում է Վահունին, - միթե դու չգիտես, որ մեծ և անպարտելի Տիգրանի մոտ կարելի է մտնել գլխաբաց և միայն գլխաբաց:

- Բայց իմ գլխինը խույր չէ, այլ սովորական մի գլխարկ, որը կրում եմ ոչ թե նրա համար, որ հետևում եմ մյուս բոլոր մարդկանց, այլ ուզում եմ ծածկել գլխիս ճաղատությունը, իսկ ճաղատության համար ես մեղք չունեմ, բնությունն ինքն է այդպիսի գլուխ դրել իմ ուսերի վրա:

- Ամֆիկրատ Աթենացի, քո խելքի համբավը տարածվել է ողջ Արևելքում, բայց զարմանում եմ, որ չես ուզում հասկանալ հասարակ բանը:

- Քրմապետ, միայն երրորդ անձը կարող է դատել, թե մեզանից ով է դժվարանում հասկանալ:

- Ի՞նչ կարող է ասել այդ երրորդ անձը:

- Նա կհաստատի, որ ես իրավացի եմ, թագավորներն ու զորապետները Մեծն Տիգրանի մոտ պարտավոր են գլխաբաց մտնել, քանզի նրանց գլուխները՝ խույրերն ու ապարոշները, խորհրդանշում են իշխանություն, որ չի ճանաչում արմենների մեծ արքան, որովհետև ինքը չէ նրանց այդպիսի իշխանություններ տվել: Իսկ ես խշխանություն չունեմ, իմ հարստությունը իմ գլխի մեջ է, որը տեսանելի չէ ոչ ոքի համար և որից վնաս չի գա այս աշխարհի և ոչ մի մեծապետի:

- Թող հովանավորի քեզ ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտը, ես վախենում եմ, որ այդ քաթանե կնգուղի համար դու զրկվես քո գլխից, արքայից-արքան կատակել չի սիրում:

- Եթե ես չկարողացա այս բանում համոզել ամենամեծ արմենին, կնշանակե իմ գլուխն ավելի չարժե, քան քաթանե մի կնգուղ, որի կորուստը տիրոջը հազիվ թե ցավ պատճառի:

- Թող հովանավորի քեզ ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտը,- կրկնեց Վահունին և ընդունարանի դուռը բացեց Ամֆիկրատ Աթենացու առջև:

- Տիգրանը լսելով նրա անունը շարժվեց գահի վրա և, հայացքը չհեռացնելով նժդեհի կնգուղից, ասաց.

- Ամֆիկրատ Աթենացի, ես լսել եմ, որ բազում են քո գիտելիքները, Հայոց աշխարհը հարգում է այնպիսի մեծ հելլեն իմաստասերի, ինչպիսին դու ես, բայց ակամայից կասկածում եմ քո իմաստությանը, որովհետև դու չես հարգում մեր սովորությունները, մի՞թե քեզ չհայտնեցին, որ ինձ մոտ կարելի է մտնել միայն գլխաբաց:

- Ով Մեծդ Տիգրան, այդ մասին հայտնեցին ինձ, բայց ես ոչինչ չարեցի, որովհետև անելու բան չկար:

- Բայց ես քո գլխին գլխարկ եմ տեսնում, ինչո՞ւ չհանեցիր այն նախքան այստեղ մտնելը:

- Մի՞թե քեզ մոտ մտնողները սափրում են իրենց գլուխները:

- Գլխարկը մազ չէ, Աթենացի:

- Նայած ում համար, իմ գլուխը ճաղատ է:

- Վատ չես իմաստասիրում, Աթենացի, այժմ ասա ինձ, ի՞նչն է քեզ բերել Հայոց աշխարհը:

- Ես պատրաստվում եմ գրել այս աշխարհի մեծ մարդկանց մասին, իսկ այդ մեծերի շարքում աստվածները տեղ են տվել նաև քեզ, ամենամեծ արմենիդ, որ հաղթեց պարթև Արշակունիներին և չհրդեհեց Տիզբոնը:

- Մի՞թե Տիզբոնը չհրդեհելը մեծության նշան է:

- Այո, արքայից-արքա, պատմությունն ու սերունդները կգնահատեն նրանց, ովքեր ոչ միայն քաղաքներ են կառուցել ու աստվածների արձաններ ձուլել, այլև նրանց, ովքեր չեն ոչնչացրել դրանք:

- Բայց մի քանի տարի առաջ Սուլլան պաշարեց քո հայրենի քաղաքը և կտրտեց այն հիանալի պուրակը, որտեղ ճեմել են հանճարեղ Պլատոնն ու Արիստոտելը:

Ասա ինձ, Աթենացի, Սուլլան տեղ չի՞ գրավի քո մատյանում:

- Ես չեմ կարող չգրել նրա մասին:

- Դու հասկանում ես ինքդ քեզ, Աթենացի, այդպիսի իմաստասիրությունը հազիվ թե կապ ունենա ողջախոհության հետ:

- Բոլոր մեծապետներն էլ տառապում են քմահաճության ցավով, այս աշխարհի մեծ մարդկանց գործունեության կեսը ոճրագործությունն է:

Տիգրանը ծիծաղեց և հարցրեց.

- Հավանաբար Աթենքի դռները քո առջև փակվել են համարձակ գաղափարդ տարածելու պատճառով:

- Արքայից-արքան չի սխալվում:

- Իսկ ինչո՞ւ ես համոզված, որ ես կներեմ քեզ քո ճշմարիտ մտքերի համար:

- Դու ոչ միայն ներեցիր, այլ համաձայնեցիր ինձ հետ:

- Ինչպե՞ս:

- Իմ մտքերը համարեցիր ճշմարիտ:

- Դա բավականությո՞ւն պատճառեց քեզ:

- Անչափ, արքայից-արքա:

- Աթենացի, ճի՞շտ է, որ անգործ իմաստասերը նման է այն ամպին, որը անձրև չի տալիս:

- Ամպ կա, որ ամեն օր է մաղում, բայց հազիվ է կարողանում թրջել երկրի երեսը, ամպ էլ կա, որ տասը տարին մի անգամ է անձրևում, բայց այնքան հորդառատ է լինում այդ անձրևը, որ հագեցնում է հողի բազմամյա ծարավը:

- Բարի,Ամֆիկրատ Աթենացի, ապրիր իմ արքունիքում և գրիր քո մատյանը, ես հուսով եմ, որ տաս տարի հետո քո իմաստասիրությունը անձրևի պես կտարածվի համայն աշխարհի վրա:

ԴԱՆԴԱՂ ՇՏԱՊԻՐ

Կլեոպատրայի հանգիստը խռովվեց այն օրից, երբ նա իր գլխին դրեց տիկնանց-տիկնոջ խույրը:

Պոնտոսի համասփյուռը թույլ արմատներ էր ձգել հայկական հողում, բայց չնաշխարհիկ ծաղկաբույլ հանել հողի երեսին:

Հայոց աշխարհի Համասփյուռն իրեն ձուլված էր զգում մայր հողին, բայց արձակել էր միայն մի կոկոն:

Երկու համասփյուռներից ո՞րը կդիմանա ժամանակի հողմին՝ Կլեոպատրան, թե՞ Փայլակ Մարդպետունու դուստրը:

Դա մրցություն էր երկու մայրերի, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր Հայոց աշխարհի հաջորդ արքայի խույրը տեսնել իր որդու գլխին:

Համասփյուռը մի զավակ ուներ, իսկ Կլեոպատրան արդեն հասել էր երեք պայազատի մայր կոչվելու պատվին:

Կլեոպատրայի անդրանիկ որդու լույս աշխարհ գալուց մի քանի ամիս հետո Հայոց արքունիքում սկսեց հյուսվել խարդավանքների զորդյան հանգույցը, որը սակայն, Տիգրանը չլուծեց այնպես, ինչպես իմաստուն Մակեդոնացին:

Տիգրանի և Կլեոպատրայի առաջին լուրջ վեճը սկսվեց այսպես.

- Եվ դու, Տիգրան ինչպե՞ս համարձակեցիր քո հարազատ որդուն և հայոց գահի միակ օրինավոր ժառանգին այդպիսի նվաստացուցիչ անուն տալ, - ասաց Կլեոպատրան:

- Ինչե՞ր ես ասում, Կլեոպատրա, մի՞թե Զարեհը հնչեղ ու գեղեցիկ անուն չէ, մի՞թե հայոց առաջին թագավորներից չի եղել այդ անունը կրող այր, - պատասխանեց Տիգրանը:

- Բայց նա թագավորել է միայն Ծոփքում, իսկ Ծոփքը, Տիգրան, գավառ է միայն, ինչպես սիրում ես կրկնել ինքդ:

- Լավ չես ծանոթանում մեր պատմությանը, Զարեհ է կոչվել նաև Մեծն Արտաշեսի հայրը:

Գործն ու իշխանությունն է վեհացնում մարդու անունը և ոչ հակառակը:

- Ոչ, Տիգրան, արքունիքում խոսում են, որ իմ Զարեհը, լսում ես, քո և իմ Զարեհը միայն կարող է Ծոփքում կառավարիչ դառնալ, իսկ համայն Հայքի արքան կլինի Արտավազդը:

- Ծիծաղելի բաներ ես ասում, սիրելիս, Զարեհը կլինի իմ առաջին հաջորդը, և թող քո խիղճը հանգիստ լինի:

- Չեմ հավատում, Տիգրան, չեմ հավատում, ես սարսափում եմ այն մտքից, որ մեզնից ծնվածը...

Եվ Կլեոպատրան ընկել էր Տիգրանի գիրկը ու արտասվել: Տիկնանց-տիկինը արցունքոտ աչքերը հառել էր արքային և բացականչել.

- Միայն Տիգրան, լսո՞ւմ ես, միայն Տիգրան անունը պետք է կրեն իմ որդիները:

- Լավ, այսուհետև ինչքան տղաներ ունենաս՝ բոլորին կանվանենք Տիգրան, իսկ Զարեհի անունը փոխել չենք կարող, Հայոց աշխարհում չի ընդունված մանուկ արքայազնի անունը փոխել:

Անցան տարիներ:

Կլեոպատրան ունեցավ երկրորդ որդին:

Նրան կոչեցին Տիգրան: Հետո ունեցավ երրորդը:

Սրան էլ կոչեցին Տիգրան:

Զարեհը տասներկու տարեկան էր արդեն, միջնակ Տիգրանը՝ ինը, իսկ կրտսեր Տիգրանը՝ չորս, երբ նրանց հայրը Հրահատ Արշակունուց խլեց արքայից-արքա տիտղոսը:

Տիգրանը մի քանի ամսից հետո Աղձնիքից վերադարձավ Արտաշատ, իսկ հայկական զորքը, Բագարատի ու Մեհրուժանի գլխավորությամբ, շարժվեց դեպի Օսրոյենե:

Քաղաքամայրը հայկական զորքերի հաղթության և Տիգրանի արքայից-արքա դառնալու պատվին մեծ տոնախմբություն էր սարքել:

Բայց արքայական պատմուճանի ճանապարհի փոշին դեռ թափ չտված՝ Տիգրանն ընկավ Կլեոպատրայի կշտամբաքների տարափի տակ:

Տիկնունու տիկնանց-տիկնոջ առանձնասենյակում Կլեոպատրան իր շուրջն էր հավաքել Զարեհին, միջնակ ու կրտսեր Տիգրանին:

Հորը տեսնելով որդիները վազեցին ու սկսեցին փաթաթվել նրան:

Մի փոքր հետո ուշքի գալով, արքայից-արքան դիտելով շուրջը և նայելով առանձնասենյակում դրված երկու մահճակալներին՝ դարձավ կնոջը:

- Այս ի՞նչ ննջարան ես դարձրել այստեղ:

- Ի՞նչ է, կուզենայիր այս մահճակալնե՞րը տեսնել այստեղ, թե՞ լսեիր քո որդիների կորստյան բոթը, - հուզմունքը չկարողացավ զսպել, - ասաց Կլեոպատրան:

- Պարզ խոսիր, ի՞նչ է պատահել:

- Արքունիքը, Տիգրան, դարձել է մարդասպանների բույն, և եթե հիմա ինձ տեսնում ես կենդանի քո առաջ կանգնած, պարտական ես հորս:

- Հայրդ ի՞նչ գործ ունի այստեղ, - տիկնանց-տիկնոջը ընդհատելով, զարմանքով հարցրեց արքայից-արքան:

- Լսիր մինչև վերջ և քո վճիռը արձակիր: Քո՝ Պարթևաց աշխարհ գնալուց հետո Համասփյուռը և մայրդ ինձ հանգիստ չեն տվել:

Իսկ մի քանի ամիս առաջ նրանք թունավորեցին ինձ, լսո՞ւմ ես, թունավորեցին...

- Կլեոպատրիայի գեղեցիկ այտերի վրայով սահեց արցունքի երկու շիթ:

- Կլեոպատրիա, դու կորցրել ես քո ողջախոհությունը:

- Ամենևին ոչ, արքայից-արքա:

Դա պատահել է այսպես:

Քասիման կեսօրին ճաշի տարգալը բերում է իմ սենյակը:

Իմ ու քո բախտից այդ ժամանակ սրանք տանը չէին, - Կլեոպատրիան հայացքով ցույց տվեց պայազատներին, - իսկ ես բոլորովին միամիտ ձևով սկսում եմ ախարժակով ուտել աղավնու մսից պատրաստված ճաշը և առնել խորտիկների համը:

Մոտ մի ժամ հետո տուն են դառնում Տիգրանիկները, Զարեհը ձիավարժության էր գնացել և այդ օրը ուշ վերադարձավ պալատ: Ու հենց այդ պահին, երբ պետք է պայազատները ճաշեին նույն կերակրից, ես թույլ գալարներ զգացի իմ ողջ մարմնում:

Այդ գալարները ինձ ծանոթ են դեռևս Պոնտոսից, երբ հայրս ընտելացնում էր ինձ օգտագործել դեղթափը (հակաթույն, որն ստեղծել է Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորը):

Ես իսկույն մեր որդիներին արգելում եմ ձեռք տալ ճաշին և տարգալներն իրենց պարունակությամբ շպրտում եմ պատուհանից դուրս:

Այնուհետև ես արգելում եմ սրանց, - Կլեոպատրիան իր խանդակաթ հայացքը նորից դարձրեց որդիների կողմը, - որևէ բան ուտել առանց իմ համաձայնության: Նախօրոք ինքս փորձում եմ և երբ անցնում է մեկ-երկու ժամ ու ծանոթ գալարներ չեմ զգում, թույլ եմ տալիս, որ ճաշեն նաև պայազատները: Ահա քո խոստացած երանությունը, Տիգրան, ահա քո

սրբություն-սրբոց արքունիքը: Եվ մի՞թե դու պետք է հանդուրժես այս ամենը, ինչո՞ւ չես խոսում, ահ, ես միշտ էլ մտածել եմ, որ դու չես սիրում ինձ, չես սիրում, չես սիրում...

Կլեոպատրիան նորից սկսեց արտասվել, իսկ արքայից-արքայի ներհուն հայացքը ուղղված էր տիկնանց-տիկնոջ առանձնասենյակի պատուհանին: Տիգրանն ամենևին չէր հաշտվում այն մտքի հետ, որ իր հարազատ մայրը՝ Երանուհին, կարող է բռնել թոռնասպանության ուղին:

Արքայից-արքային թվում էր, թե ինքը լոկ հեքիաթ էր լսել, հեքիաթ, որ իրեն պատմեց ոչ թե հարազատ կինը, այլ հեռավոր աշխարհից եկած մի գուսան: Իսկ գուցե Կլեոպատրիան խտացնում է գույները, գուցե այդ գալարները բոլորովին էլ աղերս չունեն ճաշի թունավորված լինելու հետ: Մի՞թե մարդ իր ստամոքսում գալարներ չի զգում: Ուրեմն բոլոր դեպքերում պետք է մտածել, որ ինքը թունավորվա՞ծ է:

Միջնակ Տիգրանը շարժվեց պահարանի առջևով, և արքայից-արքայի հայացքը աղավաղվեց: Տիգրանը նայեց Կլեոպատրիային, առանձնասենյակ մտած Քասիմային կարգադրեց պայազատներին դուրս տանել, ապա տիկնանց-տիկնոջ գեղեցիկ գլուխն իր գրկի մեջ առնելով սկսեց համբույրներով ծածկել նրա դեմքը:

- Դու իմ աստվածուհին ես, Կլեոպատրիա, իմ Աստղիկը, իսկ ես քո Վահագնը, ինչպե՞ս կարող եմ ես առանց քեզ ապրել այս աշխարհում:

- Եթե դու շարունակես ինձ պահել այս վիճակում, - գլուխը Տիգրանի կրծքին հենած՝ կամացուկ շշնջաց Կլեոպատրիան, - ես կմեռնեմ:

- Աստվածները, թանկագինս չեն մեռնում:

- Իսկ ես կմեռնեմ, ես, որ մերժեցի բոլոր, բոլոր քաջ այր պոնտացիներին և համաձայնեցի քո կինը դառնալ, մի՞թե իմ պատճառով չէ, որ հիմա հայրս տուժում է:

- Ի՞նչ է պատահել հորդ:

- Ի՞նչ է, չգիտե՞ս:

- Ես ո՞րտեղից պետք է իմանամ, Պարթևաց աշխարհից եկողը ի՞նչ կարող է ասել Պոնտոսի մասին:

- Ավելի վատ, որ չգիտես, դու նրա փեսան ես, արքայից-արքա, և եթե բարեկամության զգացմունքներ ունենայիր նրա հանդեպ, կիմանայիր նրա հետ պատահածի մասին և գուցե օգնեիր, ահ, ասենք, դու ոչ ոքի չես ուզում օգնել, դու քո կնոջը չես օգնում, ուր մնաց նրա հորը օգնեիր...

- Պատմիր, թե ինչ է կատարվել Պոնտոսում:

- Հռոմեացիները հաղթեցին հորս, - դառն քմծիծաղով ասաց Կլեոպատրիան:

- Հռոմեացիները հաղթեցի՞ն, - զարմացած հարցրեց Տիգրանը:

- Այո, ամենավճռական ճակատամարտում հորս զորավար Արքեղայոսը դավաճանեց, և պոնտական զորքերը գլխովին ջախջախվեցին:

- Արքեղայո՞սը:

- Այո, այն Արքեղայոսը, որի կինը պիտի դառնայի ես, և որը, վրեժի թույնը սրտում կուտակած, հորս հարվածեց հռոմեացիների հետ ունեցած ճակատամարտի բախտորոշ պահին: Սուլլայի դեսպանի միջոցով նա հոխորտացել է հորս վրա, անվանել նրան ուխտադրուժ:

- Բայց հայրդ ի՞նչ ուխտ է ունեցել Արքեղայոսի հետ, որ դրժի:

- Մի՞թե չես հասկանում:

- Ուրեմն Եվպատորը խոստացել էր քեզ կնությա՞ն տալ Արքեղայոսին, - արքայից-արքայի դեմքը խոժոռվեց:

- Ոչ, նա այդպիսի խոստում չի տվել, բայց Արքեղայոսի հետ չափից դուրս մոտ էր, և Պոնտոսում բոլորը համոզված էին, որ Եվպատորը կդառնա Արքեղայոսի աները:

- Հետո՞:

- Մի՞թե այսքանից հետո այդպիսի հարց են տալիս: Հռոմեացիները հաղթել են, հայրս պարտավորվել է Սուլլային վճարել երկու հազար տաղանդ և հանձնել ութսուն ռազմանավ: Դարդանոսում բանավոր դաշինք է կնքվել, և Սուլլան խոստացել է ձեռք չտալ Պոնտոսին:

- Բանավոր դաշի՞նք:

- Այո:

- Մի՞թե գետի մեջ ալյուր են մաղում:

- Ինչ ասացի՞ր:

- Ասում եմ գետի մեջ ալյուր չեն մաղում, բանավոր դաշինք, և այն էլ ո՞ւմ հետ, հռոմեացիների՞, որոնք դաշինք կնքելուց առաջ նախապես մտածում են այն խախտելու ուղիների մասին:

- Նշանակում է հորս դրությունը ծանր է եղել, որ նա դիմել է այդ քայլին, չէ՞ որ նա հաճախ է գործ ունենում հռոմեացիների հետ և նրանց գիտե ոչ վատ, քան կարող են իմանալ Հայոց աշխարհում:

- Երբ ես Պարթևաց աշխարհում էի, ինձ հայտնեցին, որ հայրդ կազմակերպել է ութսուն հազար իտալիկների կոտորած: Անշուշտ դա էլ է ազդել դեպքերի այդքան անցանկալի ընթացքի վրա:

- Սուտ է, դա Սուլլան է հերյուրել աշխարհով մեկ, թե Միհրդատ Պոնտացին հրահրել է կոտորել իտալիկներին: Սուտ է, Տիգրան, այդ իտալիկները զոհ են գնացել տեղի բնակչության զայրույթին, իսկ զայրույթի աղբյուրը այն անտանելի հարկերն էին, որի տակից չէր կարողանում դուրս գալ Փոքր Ասիան:

- Եթե այդ կոտորածը հայրդ չի կազմակերպել և հռոմեացիների առջև ընկրկել է այդքան հեռավորության վրա, ուրեմն նա հիմա պատրաստվում է բոլոր հռոմեացիներին կոտորել:

- Դու որտեղի՞ց գիտես, որ հայրս պատրաստվում է կռվի:

- Կռահեցի:

- Ինչպե՞ս կռահեցիր:

- Ես մի փոքր ծանոթ եմ հորդ անհանգիստ բնավորությանը, նա չի կարող տանել այդպիսի նվաստացում: Քո զարմացական հարցմունքն էլ վավերացրեց իմ ենթադրությունը:

- Դա ճիշտ է, Տիգրան, - Կլեոպատրիան շոյող հայացքով նայեց արքայից-արքային:

- Ըստ ամենայնի նա հույս ունի նաև իմ օգնության վրա:

- Իմ լավ Տիգրանս, - Կլեոպատրիան գրկեց ամուսնուն և սկսեց խաղալ նրա մազերի հետ:

- Ես առայժմ գործ չունեմ հռոմեացիների հետ, մեր բանակը դեռ լավ չի մարզված, մենք դեռ պետք է գրավենք Ասորիքը, Փյունիկեն, Կոմմագենեն, Կիլիկիան, դուրս գանք Մեծ ծովի ափը, և այնպես նստենք այդ ափում, որ հռոմեացին հավիտյանս-հավիտենից չկարողանա ոտք դնել այդ հողի վրա:

- Բայց քո բոլոր ձեռնարկումներին կարող է Հռոմը խանգարել, նախքան դու կհասցնես իրագործել դրանք: Մի՞թե ավելի խելամիտ չի լինի միավորել պոնտական ու հայկական ուժերը և համատեղ դուրս գալ Հռոմի դեմ:

- Ոչ, Կլեոպատրիա, ծովային նավակով չի կարելի օվկիանոս դուրս գալ: Հայքը դեռ նոր է ոտքի կանգնում, իսկ թվարկածս աշխարհները ես կգրավեմ երկու-երեք տարվա ընթացքում:

- Երկու-երե՞ք:

- Գուցե դեռ ավելի շուտ:

- Դա հիանալի է, - տիկնանց-տիկինը, արքայից-արքայի ծնկին նստած, թռվռաց փոքրիկ մանկան պես, - դրանից հետո դու կօգնես հորս, ոչ, դուք կմիավորվեք և Հռոմի հետ կմաքրեք բոլոր հաշիվները:

- Դու գիտես Կլեոպատրիա, որ ես չեմ կարող հորդ հետ գործակցել, քանի դեռ Փոքր Հայքը նա չի հանձնել ինձ:

- Դարձյա՞լ Փոքր Հայքը:

- Իսկ ինձ համար այն ավելի արժե, քան ամբողջ Միջերկրայքը:

- Ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ, ի՞նչ ես գտել այդ մի կտոր երկրում, որի երեսը նույնիսկ չես տեսել. ճիշտ են ասել, թե արգելված պտուղը քաղցր է լինում: - Մի՞թե քեզ համար պարզ չէ, թե ինչու: Որովհետև Փոքր Հայքը մերն է եղել, երբ դեռ աշխարհում չկայինք ես և դու, չկար Մեծն Միհրդատը, չկար նույնիսկ քո հայրենիք Պոնտոսը:

Իսկ հիմա նա դեռ մերը չէ, և եթե ես չմտահոգվեմ կցելու այն Հայոց բնօրրանին, ապա ո՞վ պետք է անի դա:

- Լսիր, Տիգրան, ես խոստանում եմ հորս համաձայնեցնել, որ նա զիջի Փոքր Հայքը, բայց դու մի մոռացիր, որ Արևելքի մեծ հակառակորդը՝ Հռոմը եթե զորեղանա, ապա միանգամից կուլ կտա Պոնտոսը և նույնիսկ մեր Հայքը, թեկուզ վերջինիս կցված լինի նաև Փոքր Հայքը:

- Դու սխալվում ես, Հռոմի նավերը չեն հասնի մեր լեռներին, դու դեռ կտեսնես, որ օրերից մի օր հայկական տորմիղը կծեծի Հռոմի մատույցները: Հայքը քաջաբազուկ այրեր ունի, որոնք հավատարիմ են ինձ: Հանճարեղ ու իմաստուն է իմ ասպետ Բագարատը, քսանհինգամյա իմ զորավար Մեհրուժանը իր խելքի ավելցուկով կարող է պապանձեցնել տասը հելլեն իմաստունի: Մեր այրուձիու ահից սկվել են գոռոզ Արշակունիները: Այնպես որ, սիրելիս, Հռոմի ձեռքը չի հասնի մեզ:

- Ասա ինձ, Տիգրան, իսկ դու ե՞րբ պիտի գաս այդ Արքեղայոսի հախից, ես վախենում եմ նա խույս տա քո ճամփաներից:

- Ինչո՞ւ ես ուզում, որ անպայման ես հանդիպեմ Արքեղայոսին, բոլոր ձևերով դու ձգտում ես, որ ես նպաստեմ Պոնտոսի հզորությանը, դե ես խոստացա, որ մինչև երեք տարի հորդ հետ մենք Սուլլային ջուրը կգլորենք:

- Ես դրա համար չասացի, արքայից-արքա, Արքեղայոսը Սուլլայի դեսպանով նաև ուրիշ բան է հաղորդել հորս:

- Ի՞նչ է հաղորդել:

- Որ ինքը՝ Արքեղայոսը, մի օր կահնդիպի Տիգրանին և ցույց կտա նրան, թե ինչ է նշանակում ուրիշի գեղեցկուհուն տեր դառնալ:

- Ուրեմն խելագուրկ անձ է քո այդ Արքեղայոսը, իսկ դու էլ նրան համարում ես քաջայր պոնտացի: Հայոց Տիգրանին նա կարող է հանդիպել շղթայակապ: Չլինի՞ կարծում է, թե Սուլլային կարող է ուղարկել դեպի Հայք, ապա թող փորձեն, Հայքը ոսկրոտ կտոր է Հռոմի համար, Սուլլայի կոկորդը կպատռվի այդպիսի պատառից:

- Բայց ինչո՞ւ թույլ տալ, որ մի Արքեղայոս վայրահաչի Մեծն Տիգրանի վրա:

- Շունը կհաչի, քարավանը կերթա, դու պետք է սովորեիր մեր առածը, չէ՞ որ դու համայն Հայքի տիկնանց-տիկինն ես, - ծիծաղելով ասաց Տիգրանը:

- Իսկ ե՞րբ պետք է ինձ տանես այստեղից, - հարցրեց Կլեոպատրան:

- Այսուհետև իմ բոլոր արշավանքներում դու կլինես ինձ հետ:

- Իսկ դու գիտե՞ս, որ ես չեմ սիրում կռվի գնալ:

- Այն դեպքում կմնաս այստեղ:

- Դու մոռացար, թե ինչ պատմեցի ես:

- Ես կասկածում եմ, որ քո ճաշը թունավորած լինեն, գուցե պատրանք է դա, գուցե դա թվացել է քեզ, և դու սիրտդ լցրել ես կասկածանքներով, մայրս ինձ շատ է սիրում և չի կարող

հարսասպան կամ թոռասպան դառնալ, աշխարհում այդպիսի բաներ լինում են, բայց ոչ Հայքում:

- Ուրեմն դու նույնիսկ կասկածում ես իմ պատմածների վրա, այդ դեպքում ես այստեղ չեմ մնա, կվերցնեմ իմ որդիներին և կգնամ Պոնտոս, հորս մոտ:

- Արտաշեսյաններն իրենց կանանց ուրիշ աշխարհ չեն ուղարկել երբեք:

- Արտաշեսյանները, - Կլեոպատրան դառը ժպտաց, - հա, քո Արտաշես պապը իսկական այր էր և գիտեր, թե ինչպես կարելի է կին պահել: Նա իր կնոջ՝ Սաթենիկի համար մի ամբողջ Արտամեդ է կառուցել, իսկ դու բանտել ես ինձ այս բլուրի վրա:

- Իսկ ես քեզ համար կառուցելու եմ ավելի հոյակապ քաղաք:

- Ինձ համար քաղա՞ք ես կառուցելու, - ուրախացած հարցրեց տիկնանց-տիկինը:

- Քեզ և Հայոց աշխարհի համար, այո, նոր քաղաք, որ պետք է լինի ավելի լավ, ավելի գեղեցիկ, քան Արտաշատը, քան քո Ամսիոսը կամ Սինոպը:

- Եվ որտե՞ղ պիտի լինի այն, - հուզմունքը չկարողանալով զսպել, հարցրեց Կլեոպատրան:

- Աղձնիքում, այնտեղ, ուր Հայոց աշխարհը իմ գլխին դրել է արքայական խույրը:

- Ուրեմն ես ավելի մոտ կլինեմ Պոնտոսին:

- Ոչ, Կլեոպատրա, Պոնտոսը քեզ մոտիկ կլինի, դու դարձյալ չես մոռանում Պոնտոսը:

- Եվ ինչպիսի՞ն կլինի մեր նոր քաղաքը:

- Գեղեցիկ, ինչպես գեղեցկուհի Կլեոպատրան, նա կդառնա Հայքի մեծ քաղաքը, քաղաքամայրը: Այնտեղ իմ թագուհին կունենա իր առանձին պալատը, որի առջև կցայտեն տասնյակ շատրվաններ, ջրավազաններում կխայտան ձկները, պարտեզներում կդայլայլեն սոխակները: Ու գիտե՞ս, թե ինչ եմ մտածել նաև. ամեն օր քեզ համար թարմ ձուկ կբերեն Գեղամա ծովակից, ամեն օր երկրի բոլոր բարիքներից բեռնավորված քարավաններ կգան քո պալատի առջև:

- Իսկ ծաղիկնե՞ր, չէ՞ որ ես ամենից շատ ծաղիկներ եմ սիրում, իմ հելլեն ուսուցիչը միշտ հիշեցնում էր ինձ, որ եթե մարդ ապրի ծաղիկների մեջ, կարող է երկու դար քայլել այս աշխարհում:

- Ես կհրովարտակեմ, որ քո պարտեզներում ամենալավագույն ծաղիկները աճեցնեն:

- Ես ուզում եմ, որ հելլեն իմաստունները այդ նոր քաղաքում պատշաճ ընդունելություն գտնեն, Տիգրան:

- Ես կբերեմ բոլոր հելլեն իմաստուններին, Կլեոպատրա, և այդ նոր քաղաքում դու քեզ կզգաս երանության մեջ:

- Սպասիր Տիգրան, բայց չէ՞ որ Աղձնիքը Հայքի ծայրն է, և թշնամին կարող է գալ ու գրավել. մի՞թե ավելի լավ չէր լինի, որ մեր քաղաքը կառուցեինք երկրի խորքում:

- Աղձնիքը ծայր է հիմա, իսկ մի քանի տարի հետո նա կլինի Հայքի կենտրոնը, ոսկեմայր և ոսկեծղի Անահիտի պատվիրանն է դա, որն անպայման կկատարվի:

- Իսկ ի՞նչ անուն պիտի տաս այդ քաղաքին, դու երևի մտածել ես նաև այդ մասին:

- Ի՞նչ ես կարծում, քաղաքների մեջ այդպիսի մի անձեռնակերտ քաղաքին ինչպիսի՞ անուն կլիներ վայել:

- Տիգրանակերտ, այն կանվանենք Տիգրանակերտ:

- Լավ թող լինի Տիգրանակերտ: Հայոց աշխարհը, Կլեոպատրա, կդառնա հզոր տերություն, իսկ Տիգրանակերտը՝ մեծ քաղաքամայր: Ես կհրամայեմ, որ այնտեղ փոխադրեն երկրի բոլոր կողմերի լավագույն շինաքարերը, ես կհրամայեմ, որ այդ մեծ գործին մասնակից դառնան երկրի բոլոր նահապետները, բոլոր ստրուկներին կքշեմ այնտեղ, և Տիգրանակերտը կդառնա ամենաբազմամարդ քաղաքը Հայոց աշխարհում:

- Խոստացիր, որ Համասփյուռը չի ապրի այդ նոր քաղաքում:

- Դու ուզում ես իմ դեմ լարել Մարդպետունիներին, իսկ գիտե՞ս, որ արքայական բանակի կորիզը նրանց երեքհազարանոց այրուձին է:

- Ուրեմն քեզ համար ես երեքհազարանոց այրուձի՞ էլ չարժեմ:

- Դե, հասկացիր, Կլեոպատրա, որ ես այդ իմաստով չասացի:

- Ապա ինչո՞ւ տվեցիր այրուձիու անունը: Եթե քեզ անհանգստացնում է այդ այրուձին, ես կարող եմ գրել հորս, որ նա որպես հավելյալ օժիտ երեք հազար ձի ուղարկի քեզ համար:

- Կլեոպատրա, քանի՞ կին ունի քո հայրը:

- Տասներեք:

- Տեսնո՞ւմ ես, իսկ ես ընդամենը երկու կին ունեմ:

- Բայց Միհրդատ Եվպատորը գիտե գնահատել գեղեցկությունը:

- Հասկացիր, Կլեոպատրա, որ ես ավելի եմ գնահատում, քան քո հայրը, բայց եթե ես շարժվեմ այնպես, ինչպես ինքդ ես ցանկանում, հայոց բոլոր նահապետները երես կթեքեն ինձնից, մի մոռացիր, որ սա Հայք է, ոչ թե Պոնտոս: Դու այնքան խելոք ես, բայց հաճախ զարմանում եմ, թե ինչպես է պատահում, որ նման հասարակ հարցերը հանգուցում ես սխալ պատասխաններով: Ի դեպ, դու շատ ես խանդում, և դրանից է, որ երբեմն մեր զրույցներում քո մտքի նժարը վերև է թռչում բոլորովին անսպասելի:

- Ես չեմ ուզում իմ կողքին տեսնել Համասփյուռին:

- Իսկ նա գուցե նույնիսկ չցանկանա մեր ապագա քաղաքը գալ:

- Ահա թե ինչ, ուրեմն Համասփյուռը կարող է ցանկանալ գալ կամ չգալ, և արքայից-արքան հաշվի է նստում նրա ցանկության հետ, իսկ Կլեոպատրայի փոքրիկ ցանկությունը դառնում է

անիրագործելի, որովհետև դրա կատարումից կարող է տուժել Հայոց աշխարհը: Նա իրեն ավելի վեհանձն է զգում, քան ես:

- Նա էլ Հայքի տիկնանց-տիկինն է և իր գլխին խույր է դրել այն ժամանակ, երբ դու...

- Երբ ես չգիտեի, թե ինչ է խույրը, այո՞:

- Դու արդեն բորբոքվում ես, Կլեոպատրա:

- Ես կցանկանայի, որ դու հազար հարճ պահեիր, բայց միայն տիկնունում չլինեին Համասփյուռը և նրա Արտավազդը:

- Արտավազդին ու Զարեհին մի առժամանակ ոչ դու կտեսնես, ոչ էլ Համասփյուռը:

- Ո՞ւր պիտի տանես նրանց:

- Դեպի Ասորիք, դեպի արշավ, թող գնան և կռվել սովորեն:

- Դու նորի՞ց պիտի մեկնես:

- Այո:

- Ե՞րբ:

- Մինչև մեկ ամիս:

- Ես չեմ ուզում, որ Արտավազդն ու Զարեհը իրար հետ մեկնեն կռվի:

- Ինչո՞ւ:

- Արտավազդը կարող է սպանել Զարեհին:

- Նրանք եղբայրներ են, և այդպիսի բան նրանց մտքով երբեք չի անցնի: Դու կարող ես սպանել Համասփյուռին, ինչպես և Համասփյուռը քեզ, պարզ է, հարազատներ չեք և ատելով ատում եք միմյանց, բայց Արտավազդին ու Զարեհին կապում է հայրական արյունը և մեկմեկու հանդեպ նրանք դավ չեն նյութի:

- Իսկ չե՞ս կարող միայն Արտավազդին տանել, թող Զարեհը մնա ինձ մոտ:

- Եթե այժմ, երբ հայկական բանակը կռվում է օտարի դեմ, նա չերևա, վախկոտի անուն կվաստակի, իսկ միայն Արտավազդի երևալն էլ բոլոր նահապետների համակրանքը կառաջացնի, որը քո սրտովը չէ:

- Ես հավատում եմ քեզ, Տիգրան, արա ինչպես թելադրում է քո արքայական խելքը, բայց, թե ուզում ես, որ ես էլ օգտակար լինեմ քեզ, առանձնացրու ինձ, հեռու տար Արտաշատից և կտեսնես, որ քո Կլեոպատրան միայն գեղեցիկ չէ, այլ նաև խելոք է:

- Շուտով դու կլինես նոր քաղաքում, քո նոր Տիգրանակերտում:

- Բայց երբ կլինի այդ շուտովը, երբ պիտի սկսես Տիգրանակերտի կառուցումը:

- Իմ զորավար Մեհրուժանը սիրում է միշտ կրկնել. "դանդաղ շտապիր":

ՀԱՅՔԻ ԱՊԱԳԱ ՔԱՂԱՔԱՄԱՅՐԸ

Զարիշատից, Ամիդից ու Արբելայից դուրս գալով՝ արքայական պողոտան փնջվում է Տիգրիսի ձախակողմյան վտակ Խուլփի աջ ափին: Հենց այստեղ էլ, Տավրոսյան լեռների ծնկների տակ փռված ընդարձակ վայրում, արքայից-արքա Տիգրանը սկսեց իր ապագա գահանիստ քաղաքի շինարարությունը:

Բոլորովին ամայի դաշտում առաջինը բարձրացան արքայական պալատի գեղապարույր սյունաշարերը:

Հայոց աշխարհի բոլոր գավառներից արքայական հրովարտակով այստեղ են ժամանել հարյուրավոր ու հարյուրավոր վարպետներ: Յուրաքանչյուր գավառի նահապետ պարտավոր էր իր տոհմի անդամներից մեկի ընտանիքը փոխադրել նոր քաղաքը: Արքայից-արքան ցանկանում էր դրանով իր ապագա քաղաքամայրը կապել ամբողջ երկրի հետ: Ուղտերի ու ձիերի քարավանները հեռու-հեռավոր վայրերից ձգվեցին դեպի Աղձնիք: Բերում էին շինափայտ ու շինաքար:

Յուրաքանչյուր նահապետ աշխատում էր նոր քաղաքում ավելի չքնաղ դաստակերտ կառուցել և արժանանալ Տիգրանի բարեհաճությանը: Նահապետներից ոմանք իրենց տների համար ընտրում էին բազմագույն ու բազմատեսակ շինաքարեր: Բոլորակ թմբուկի տեսք ունեցող շենքերը, որոնց վրա բարձրանում էին կոնաձև ծածկերը, սունկի պես աճում էին դաշտի այս ու այն հատվածում: Այդ շենքերը թողնում էին փոքրիկ Մասիսների տպավորություն: Մեծ մասամբ դրանք երկհարկանի տներ էին, որոնց առաջին հարկերը կիսով չափ ընկղմված էին գետնի մեջ:

Շինականները երկար ժամանակ մոռացան ձվի համը: Երկրի բոլոր գավառներում ընտանի հավքի ձվի հարկը ավելի ծանրացրեց գյուղացիների վիճակը:

Ամեն օր հազար-հազար ձու էր վատնվում արքայական պալատի, միջնաբերդի և պարիսպների շինարարության վրա: Խուլփի ափերի ավազը չբավարարեց քաղաքաշինարարների պահանջը: Եվ քարավաններն սկսեցին ավազ փոխադրել նաև Տիգրիսի ափերից:

Ավազը չորացնում էին արևի բարակ ճառագայթների տակ, հետո մաղում բարակ երկաթալարերից հյուսած մաղերով: Ապա կրաքարերի հսկա գուղձերը լցնում էին մեծ կաթսաների մեջ, դնում կրակի վրա և հետևում կրի տաքությանը: Կաթսաներից կրաքարերը հանում են շտապով, թափում մեծ սալիկների վրա և սկսում մանրատել: Կրի, փոշու և ավազի հետ խառնում են ձվի պարունակությունը և ավելացնում այն շինաքարից նախօրոք պատրաստված փոշին, որի համար նախատեսնվում է շաղախը:

Ամենից արագ բարձրանում էին քաղաքի սև քարերից պատրաստվող պարիսպները: Հիսուն կանգուն բարձրությամբ այդ պարիսպները երկշարք գոտով պիտի պարուրեին ապագա քաղաքի զբաղեցրած ողջ տարածությունը: Պարիսպների արանքում պատրաստվում էին ախոռներ ու պահեստանոցներ: Ապագա Տիգրանակերտը թողնելու էր յոթանասուներկու աշտրակ ունեցող մեծ բերդի տպավորություն:

Քաղաքի հյուսիսային՝ դեպի բնաշխարհի կենտրոն՝ Արտաշատ նայող պարիսպների վրա վարպետները հունատառերով փորագրում էին Մեծն Արտաշեսի պատգամները, քանդակում Արարատյան դաշտավայրի անուշահամ մրգերն ու հոտավետ ծաղիկները, իսկ դեպի Հռոմ նայող հարավային դարպասների վրա Տիգրան Մեծի կողմից պարտված, հայկական նիզակների տակով ծնկաչոք անցնող թագավորներին:

Արքայից-արքայի հրամանով օտարազգին Տիգրանակերտ պիտի մտներ միայն հարավային դարպասներով, որպեսզի Հայոց աշխարհի հզորության մասին առաջին պատկերացումն ստանար այդ քանդակներից:

Գարնան վերջերին ապագա մայրաքաղաքում երևացին հելլեների, հրեաների ու ասորիների մեծ խմբեր: Տիգրանն սկսել էր իր նվաճած երկրների բնակչության բռնի գաղթեցումը: Գալիս էին մեծ մասամբ արհեստավորներ:

Տիգրանակերտի շինարարությունը բուռն թափ ստացավ: Արքայից-արքան ձգտում էր Միջերկրայքի գրավումով հաղթահանդես կազմակերպել նոր քաղաքում և հանդիսավոր արարողությամբ հռչակել այն որպես Հայոց աշխարհի նոր քաղաքամայր:

Քաղաքի պարիսպներից դուրս արքայական պալատի շինարարության վրա աշխատում էին երեք ստրուկներ: Նրանցից մեկը այժմ արդեն պատանի դարձած Սոսիկն էր: Իր հայրենի Մրգաշատը, իրենց տունը և ծնողներին նա հիմա տեսնում էր միայն երազում:

Մյուս ստրուկը երեսունամյա մի երիտասարդ էր, որը հաստ բազուկներ ուներ և անհամեմատ հաստ սրունքներ: Արևի տակ երկար աշխատելուց երիտասարդի մաշկը սևացել էր, կոշտացել: Նրա անունը Կոլոտ էր: Երրորդ ստրուկը և երեքի մեջ ամենից ավագը երկարահասակ Մենթոն էր, որ, հայերեն չիմանալով, իր ընկերների հետ խոսում էր ձեռք ու ոտքով: Նա հմուտ որմնադիր էր:

Նրանց հագի ծվատած տոգաները քրտինքից կոշտացել էին ու բեռը շալակելուց ցավեցնում էին մարմինները: Համատեղ աշխատանքի առաջին օրերին նրանք չէին խոսում իրար հետ, իսկ Մենթոն նույնիսկ թշնաբար էր նայում Կոլոտին ու Սոսիկին: Բայց հետո, լռությամբ, վստահությունը փոխանցվեց միմյանց:

Ու մի գիշեր սրտաբաց մի զրույցով ճանաչեցին իրար:

- Դու ինչպես ընկար Տիգրանակերտ, - Սոսիկին դիմեց Կոլոտը:

- Մեր Սևուկի պատճառով, - փորձեց կարճ կապել Սոսիկը:

- Ի՞նչ Սևուկ, - նորից հարցրեց Կոլոտը:

- Դե, մենք մի հորթ ունեինք, որի անունը Սևուկ էր: Ահա այդ Սևուկի ճակատին սպիտակ խալ կար, իսկ ինքդ գիտես, որ սպիտակ խալ ունեցող երինջները պետք է նվիրաբերել Անահտական տաճարին: Հայրս աղքատ էր և ուզում էր Սևուկը թաքցնել քրմերից: Վերջիններս գլխի ընկան և Սևուկին էլ տարան, ինձ էլ ստրկագրեցին:

- Իսկ մինչև այստեղ գալը որտե՞ղ էիր:

- Արտաշատում, Անահիտ աստվածուհու տաճարի հորթերն էի պահում:

- Եվ ի՞նչ, չկարողացա՞ր քուրմ դառնալ, - փորձեց կատակել Կոլոտը:

- Եթե նույնիսկ կարողանայի, չէի դառնա:

- Ինչո՞ւ:

- Որովհետև նրանք աշխարհի ամենամեծ խաբեբաներն են: Գիտե՞ս, Կոլոտ, մինչև տաճարն ընկնելը ես կարծում էի, թե իսկապես սպիտակ խալ ունեցող երինջները նվիրաբերում էին Անահիտին:

- Ապա ո՞ւմ են նվիրաբերում:

- Քուրմերին:

- Իսկ աստվածուհին ինչո՞վ է ապրում:

- Չգիտեմ, թե նա ինչով է ապրում, բայց միայն գիտեմ, որ տաճարի բոլոր երինջների միսը ուտում են հենց տաճարի քրմերը:

- Դե նրանք աստվածուհու պատգամախոսներն են և երևի դա անում են Անահիտի թույլտվությամբ:

- Ոչ, հիշում եմ, թե ինչպես մի անգամ ավագ քրմապետը, ինձ իր հետ վերցրած, գնաց Նիգ106 գավառի գյուղերից մեկը: Գիշերը մենք մնացինք մի շինականի տանը, որը շատ գեղեցիկ դուրտր ուներ:

Մի քանի օր հետո քրմապետը ապսպրեց այդ շինականին, թե Անահիտ աստվածուհին ուզում է տեսնել նրա գեղեցիկ դստերը: Իսկ երբ աղջիկը եկավ տաճար, ես գաղտագողի տեսա...

- Հետո, իսկ քրմերը քեզ ո՞նց թողեցին Տիգրանակերտ գալ:

- Ինձ նվիրեցին արքայից-արքային: Հենց որ Արտաշատում տարածվեց նոր քաղաքամայրի կառուցման լուրը, ամեն մեկը սկսեց արքային դուր գալ մի ձեռնարկով: Դե, ահա, քուրմերն էլ ինձ նվիրեցին Տիգրան Մեծին, որ օգնեմ նրա գահանիստ քաղաքի կառուցմանը:

- Ուրեմն տուն դարձող ճամփաները հեռացան քեզ համար, - տխրամած հայացքով ասաց Կոլոտը:

- Այո, ես գիտեմ, որ պետք է մեռնեմ այստեղ, իսկ դո՞ւ, Կոլոտ, դու որտեղի՞ց ես:

- Արտաշատից:

- Իսկ ծնողնե՞րդ:

- Նրանք էլ են Արտաշատից:

- Բայց արտաշատցիներին, կարծեմ, չեն ստրկացնում, ի՞նչ հանցանք ես կատարել դու, որ դարձել ես անազատ:

- Ոչ մի հանցանք, Սոսիկ, ես ընդոծին եմ, իմ ծնողներն ու պապերն էլ են ստրուկ եղել:

- Դու հասկանո՞ւմ ես մեզ, Մենթո, - երկարահասակին դիմելով՝ հարցնում է Սոսիկը: Մենթոն ձեռքի դաստակները մոտեցնում է իրար և Կոլոտին ու Սոսիկին նայելով, հայացքով բացատրում, որ իրեք բոլորն էլ ստրուկներ են:

Ապա Սոսիկը ձեռքի շարժումներով Մենթոյին մի կերպ հարցնում է, թե որտեղից է նա եկել:

Մենթոն ձեռքի դաստակները մոտեցնում է իրար և Կոլոտին ու Սոսիկին նայելով, հայացքով բացատրում, որ իրեք բոլորն էլ ստրուկներ են:

Ապա Սոսիկը ձեռքի շարժումներով Մենթոյին մի կերպ հարցնում է, թե որտեղից է նա եկել:

- Խառան, Խառան, - ուրախանալով, որ այդ բառը կարող է հասկանալի լինել իր ընկերներին, ասում է Մենթոն:

- Խառա՞ն, - հարցնում է Սոսիկը և դիմում Կոլոտին, - Կոլոտ, աշխարհում այդպիսի քաղաք կա՞:

- Ես միայն գիտեմ Արտաշատը, իսկ այստեղ բերելիս էլ ցույց տվեցին Զարեհավանն ու Զարիշատը, - պատասխանեց Կոլոտը:

- Բայց երևի Խառան քաղաք էլ կա, թե չէ Մենթոն ինչո՞ւ պիտի այդպիսի անուն ասեր, - կարծես վեճը լուծված համարելով ամփոփեց Սոսիկը:

Ամիսներ հետո, երբ Մենթոն սկսեց խոսել հայերեն, Սոսիկն ու Կոլոտը իմացան, որ Մենթոն Օսրոյենի Խառան քաղաքից է, և Տիգրան Մեծը նրան բերել է այստեղ որպես ռազմագերի:

***

Հոգնած ճամփորդի պես աշունն իր բեռան մեծ մասը թափել էր Արարատյան դաշտում և թեթևացած բարձրանում էր դեպի լեռները:

Շինական Տաճատի խաղողի թփերը բեռնավորվել էին վճիտ ողկույզներով: Տաճատը հույս ուներ ձմեռվա համար երկու կարաս խաղողահյութ ամբարել: Բայց արքայական հրովարտակը ամեն ինչ խառնեց իրար: Պետք է թարմ խաղող հասցնել Տիգրանակերտ: Մի խումբ մրգաշատցիների հետ Տաճատն էլ ճամփա ընկավ դեպի այդ հեռավոր քաղաքը:

Չիերից կազմված փոքրիկ քարավանը տանում էր ընտիր խաղողով լեցուն կողովները:

Չիու երասանից բռնած՝ Տաճատը քայլում էր համագյուղացիների հետ ու անխոս ունկդրում նրանց տաք խոսակցությանը:

- Թե էսպես գնա, մի օր էլ արքայից-արքան կարող է հրաման տալ, որ մեր դաշտն էլ փոխադրենք Աղձնիք, - ասում էր գյուղացիներից մեկը:

- Արեգը վկա, ճիշտ եմ ասում, - արձագանքում էր մեկ ուրիշը, - ձուն տվեցինք, բուրդը տվեցինք, հացահատիկը՝ նույնպես, հիմա էլ խաղողը: Գոնե որպես հարկ գային ու վերցնեին, էլի ոչինչ, բայց արքայից-արքան ուզում է, որ մեր ձեռքով տեղ հասցնենք:

- Եվ զարմանալի է արքայից-արքայի վարմունքը, այսքան մարդ բերքահավաքից կտրել է, թե ինչ է, ամեն մեկը պետք է մի քանի կողով խաղող տանի քաղաքամայր:

- Դա դեռ քիչ է, ասում է, էնպես տարեք, որ թարմ մնա, բա էստեղից Աղձնիք խաղողը թա՞րմ կմնա:

- Ախր մեր ինչի՞ն է պետք էդ նոր քաղաքը, Արտաշատը հերիք չէ՞, իբր Հայոց աշխարհում եղած քաղաքների մարդկանց փորը կարողացանք կշտացնել, հիմա էլ նոր Տիգրանակերտի մասին մտածիր:

- Ասում են էդ Տիգրանակերտը պիտի լինի աշխարհի ամենամեծ քաղաքը:

- Եղբայր, շինականն ի՞նչ օգուտ ունի մեծ կամ փոքր քաղաքներից: Որ ինձնից հարցնես, բոլոր քաղաքներն էլ կքանդեի: Բա ինչ: Կռիվ լինի՝ քաղաքից կգա, հարկ լինի՝ քաղաքից, ամեն տեսակ վատ բան՝ քաղաքից:

- Մարդ էլ չի տեսնում էս կռվի վերջը;

- Հա, Տիգրանը շատ հեռու է գնում, եղբայր, այդքան կռվել ո՞ւմ է պետք:

- Մենք որ օգուտ չունենք:

- Ի՞նչ օգուտ պետք է ունենանք:

- Իբր թե մեր դաշտը մեզ կշտացրեց, հիմա էլ ուրիշներին է բերում:

- Էդ խեղճ ու կրակ մարդիկ չեն դիմանա էստեղ:

- Ինչո՞ւ չեն դիմանա, մեր դաշտում իր մահով մարդ չի մեռնի:

- Ախր արքայից-արքան նրանց առջև այնպիսի պայման է դրել, որ խեղճերը տակից դուրս գալ չեն կարող:

- Ի՞նչ պայման:

- Արքայից-արքան հրամայել է բոլոր հրեաներին՝ խոսել հայերեն:

- Բայց նրանք ո՞նց կարող են միանգամից հայերեն խոսել:

- Դե, մի տարի ժամանակ է տվել:

- Բա մի տարին ի՞նչ է, մի տարում նրանք իրենց ապրո՞ւստը հոգան, թե հայերեն սովորեն:

- Արամազդը փրկի էդ խեղճերին:

Զրուցում էին շինականները և արքայական պողոտայի հարթ ճանապարհով շարժվում առաջ: Նրանց հանդիպում էին ուրիշ զավառներից Տիգրանակերտ մեկնող այլ քարավաններ: Մեկը տանձ ու խնձոր էր տանում. մյուսը՝ նուռ, մեկ ուրիշը՝ կարմրախայտ ու սուրմահի, չորրորդը՝ դեղձ, հինգերորդը՝ ձմերուկ ու սեխ, մյուսները՝ խաղող ու հապալաս:

Աշունը լեռների կատարներից արտասվելով դիտում էր, թե արքայից-արքան ինչպես է դաշտում թափած իր բարիքները թալանած քշում դեպի հեռավոր աշխարհ:

Տարոնի մոտ մեծ քարավանին խառնվեց մի փոքրիկ քարավան, որը ձիերի վրա բեռնած գազպեն էր տանում նոր քաղաքամայրը:

- Տեսնվա՞ծ բան է, որ գազպենի հարկ էլ գցեն, - տրտնջում էին տարոնցիները:

- Անահիտ աստվածուհին կպատժի արքայից-արքային դրա համար, - զրույցին խառնվեց փանդիռոն ուսին գցած գողթնացի մի գուսան:

- Ինչո՞ւ պիտի պատժի, - մոտենալով գուսանին հարցրին շինականները:

- Որովհետև գազպենը աստվածային բարիք է, հարկման չենթակա:

- Խոսիր, գուսան եղբայր, պատմիր, - խնդրեցին այս ու այն կողմից:

Եվ պատմեց գուսանը.

- Երբ մեր լեռնաշխարհում բազմացան Հայկ նահապետի սերունդները, չար ոգիներն սկսեցին նախանձ ու չարություն ներարկել մարդկանց սրտերը: Եվ Մեծն ու արին Արամազդը տեսավ այս բոլորը: Տեսավ ու խորհեց այդ մասին: Մի օր էլ նա հրավիրեց աստվածներին ու խորհուրդ առավ: Արամազդը նրանց հայտնեց, որ Հայոց աշխարհում մարդիկ իրենց հանգիստ չեն պահում:

- Եվ հարցում արավ. "Ո՞վ է հանձն առնում կամովին գնալ աշխարհն այդ և հովանավոր լինել հայոց ազգին՝ նրա հոգին ու միտքը կեղտից մաքրելու ու հավերժ անաղարտ պահելու համար":

Եվ հրաժարվեցին աստվածները, ասելով. "Հայերը կոշտ ու կոպիտ են իրենց լեռների նման, հայերը հպարտ ու անմատչելի են իրենց լեռների նման: Եվ ի՞նչ կարող ենք անել մենք, աստվածներս, ով դու, Արամազդ, հայրդ աստվածների, առաքիր այնտեղ մեր սիգաճեմ, ամենագեղեցիկ աստվածուհիներից մեկին: Նա կարող է փափկացնել հայերի սիրտը: Հայերը սիրում են գեղեցիկը իրենց լեռների նման, հայերը պաշտում ու հարգում են կանանց իրենց լեռների նման": Ապա դիմեց Արամազդը դիցուհիներին. "Ով է ուզում մեկնել աշխարհը Հայոց և այնտեղ անցկացնել իր ողջ կյանքը": Դիցուհիները, որ մինչ այդ լսել էին իրենց եղբայրների խոսքերը Հայոց աշխարհի մասին, ոչ մի ձայն չհանեցին:

Արամազդը կրկնեց իր հարցը, բայց նորից չարձագանքեցին նրան:

Եվ իմաստուն Արամազդը որոշեց Հայոց աշխարհի աստվածուհուն ընտրել աստվածների հոր մեծահոգությամբ:

Վիճակ գցեցին:

Եվ զարմանալիորեն վիճակն ընկավ ամենագեղեցիկ աստվածուհի Անահիտին:

Տխրեց գեղեցկապարանոց Անահիտը, գունատվեցին նրա ոսկեգույն այտերը: Բայց չառարկեց վիճակի դեմ: Աստվածուհին հորից միայն մի բան խնդրեց՝ թույլ տալ, որ այդ

լեռնեղեն հոգի ու սիրտ ունեցող մարդկանց աշխարհը իր հետ մեկնեն նաև փոքրիկ քույրերը՝ Աստղիկն ու Գիսանեն: Արամազդը չմերժեց իր ամենագեղեցիկ դստեր խնդրանքը:

Մինչև մեր աշխարհ գալը Անահիտը ուղևորվեց երկնում և լոգանք ընդունեց Գեղեցկության լճում, որի շնորհիվ յոթնապատիկ անգամ նա ավելի գեղեցիկ դարձավ, հետո լոգանք ընդունեց Բարության լճում և դարձավ ամենաբարին երկնային բնակիչների մեջ: Այդ լճերում նա լողացրեց իր մանկահասակ քույրերին՝ Աստղիկին ու Գիսանեին, որոնք դարձան կատարյալ գեղեցկուհիներ:

Եվ ճամփա ընկան երեք քույրերը դեպի աշխարհը Հայոց, դեպի երկիրը վեհաձիգ լեռների: Նրանց աչքին առաջինը երևաց ճերմակազգեստ Մասիսը: Նայեց Անահիտը հպարտ Մասիսին ու մտածեց. "Մի՞թե բոլոր հայերը այսքան հպարտ են: Ես ինչպե՞ս կարող եմ լեզու գտնել նրանց հետ":

Ամբողջ ճանապարհին Տաճատը չխառնվեց իր ընկերների խոսակցությանը: Նա զրուցում էր իր սրտի հետ: Ի՞նչ պիտի լինի այս ամենի վերջը: Իր պաշտելի որդիներից ոչ մեկն էլ տանը չէր: Վրույրը գնաց կռիվ, ու ինքը՝ Տաճատը, չգիտեր էլ, նա կենդանի է, թե ոչ:

Սոսիկը մնաց ստրուկ: Կինը՝ Նվարդն էլ զավակների կարոտից հալվում է ոտքի վրա: Ի՞նչ մեղք է գործել ինքը:

Խորհում է Տաճատը, մտորում, երազում:

Մի քանի օր հետո մրգաշատցիների քարավանը հասավ Տիգրանակերտ: Քաղաքից դուրս կառուցվող արքայական պալատի ամբարի առջևի ընդարձակ հրապարակում քարավանները բեռնաթափելու համար հերթի էին կանգնել: Արքայական դրանիկ զնդի մի ջոկատ հսկում էր ստրուկներին, որոնք կողովներն ու պարկերը շալակած բակից տանում էին մթերանոցները: Բեռներ էին կրում նաև Կոլոտն ու Սոսիկը: Նրանք խնդրել էին իրենց ընկերոջը՝ Մենթոյին, որը չէր ազատվել որմնադիրի իր աշխատանքից, ազատ ժամանակ գտնել և իմանալ, թե Մրգաշատից կամ նրա հարևան գյուղից մարդ եկել է թե ոչ:

Եվ երկարահասակ Մենթոն անցնում էր քարավաններից քարավան ու կամացուկ հարցնում բոլոր հանդիպողներին.

- Ձեր մեջ մրգաշատցի չկա՞:

Մի տեղ, այդ հարցին առանց պատասխանելու, մեկը բարեկամաբար բռնեց նրա թևից:

- Ես մրգաշատցի եմ:

- Ինչ լավ է, - ուրախացավ Մենթոն ու մարդուն մի կողմ քաշեց, - ձեր գյուղում Տաճատ անունով մարդ կա՞:

- Ես եմ, եղբայր, Տաճատը ես եմ, ասա, ի՞նչ բարի լուր ունես ինձ հայտնելու:

- Դու Տաճա՞տն ես:

- Այո, եղբայր, ես Տաճատն եմ, և Մրգաշատում ինձնից բացի Տաճատ անունով մարդ չկա:

- Դժվարանում եմ հավատալ:

- Աստվածները վկա, բարեկամ, ես Տաճատն եմ:

Մենթոն մի փոքր լռեց, ապա հարցրեց.

- Այդ դեպքում ասա, դու քանի՞ որդի ունես:

- Երկուսը:

- Փոքրի անունն ի՞նչ է:

- Սոսիկ:

- Ճիշտ է, մարդ, դու Տաճատն ես, և ես քեզ եմ որոնում:

- Ասա բարեկամ, իմ համբերությունը հատավ, - այլայլված աղերսում էր Տաճատը:

- Բարեկամ, քո Սոսիկը այստեղ է:

- Իմ Սոսի՞կը, - ճչաց Տաճատը վախի և ուրախության զգացումով:

- Հանգիստ, բարեկամ, թե մի փոքր էլ բարձր գոռաս, դու կարող ես որդուդ տեսնելու փոխարեն գլխատվել տեղնուտեղը:

- Խոսիր, մարդ, որտե՞ղ է նա, ի՞նչ է անում, ինչպե՞ս է, իմ Սոսիկը այստեղ է, ոհ, ինչ ուրախություն, ինչո՞ւ չես խոսում, մարդ:

- Նախ ինձ կոչում են Մենթո, ես Սոսիկի մոտ ընկերն եմ: Սոսիկը հիմա զբաղված է բեռնաթափման գործով: Այ այնտեղ, - և Մենթոն ձեռքով ցույց տվեց դեպի պալատի հրապարակը:

Տաճատը թողեց ձիու երասանը, պոկվեց տեղից և փորձեց վազել դեպի հրապարակը, բայց Մենթոն կանգնեցրեց նրան:

- Սպասիր, Տաճատ, ո՞ւր, հիմա արքայի դրանիկ գնդի զորականները կարող են վզակոթիդ տալ:

- Եղբայր Մենթո, մի՞թե ես չեմ կարող տեսնել զավակիս:

- Սպասիր, բարեկամ, և լսիր ինձ:

- Ասա, սիրելի Մենթո, ի՞նչ անեմ ես, որ գոնե մի անգամ տեսնեմ որդուս:

- Այսօր ցերեկով դու չպետք է տեսնես նրան, և եթե տեսնես էլ՝ ցույց տուր, որ չես ճանաչում: Իսկ երեկոյան կգաս երրորդ աշտարակի մոտի տաղավարը: Այդ աշտարակը հենց այդ դարպասի մոտ է, որտեղով ձեր քարավանը քաղաք է մտել:

- Գիտեմ, գիտեմ:

- Այդպես, ուրեմն, կգաս տաղավարի մոտ և ողջ գիշերը կարող ես տեսնել որդուդ, ու ոչ ոք քեզ չի խանգարի:

- Շատ լավ, եղբայր Մենթո, շատ լավ. դու աշխարհի ամենալավ մարդն ես, բարեկամ, իմ կյանքում ես անծանոթից լավ բան չեմ լսել բնավ, իսկ դու ուրախացրիր իմ սիրտը: Շնորհակալություն, Մենթո, հազար-հազար շնորհակալություն, - Տաճատը սկսեց արտասվել փոքր երեխայի պես:

- Մի հուզվիր, Տաճատ, ամեն ինչ լավ կլինի, հանգստացիր և արա այն, ինչ ասացի, չմոռանաս, հա, եթե չհամբերես ու վազես դեպի Սոսիկը, քեզ էլ, նրան էլ վատ բան կպատահի:

- Կանեմ այնպես, ինչպես ինքդ ես ասում, Մենթո, - խաղաղվեց Տաճատը:

- Դե, ես գնացի, Տաճատ, երեկոյան ուշ ժամին կարող ես գալ մեր տաղավարը, մենք քեզ սպասելու ենք, - ասաց Մենթոն և շարժվեց տեղից:

- Սպասիր, Մենթո, ո՞ւր ես գնում:

- Աշխատանքի, Տաճատ, իմ ճաշադադարը վերջացավ արդեն, ես պետք է գնամ:

- Սպասիր, ես քեզ հյուրասիրեմ, - ասաց Տաճատը և ձեռքը տարավ դեպի կողովը ու փորձեց այնտեղից խաղողի մի քանի ոսկույզ հանել:

- Այդ ի՞նչ ես անում, - կամացուկ ձայնեց Մենթոն, - գժվե՞լ ես, ինչ է: Ոչ մի ստրուկ իրավունք չունի արքայական սննդի համն առնելու, իսկ ձեր բերածը արքունիքի համար է: Եթե իմ ձեռքին տեսնեն թեկուզ մի հատիկ խաղող, կգլխատեն ինձ, հասկանո՞ւմ ես, Տաճատ, կգլխատեն, և գուցե քեզ էլ ինձ հետ միասին: Ետ քաշիր ձեռքդ, ես խաղող ուտելու ախորժակ չունեմ, որովհետև դեռ ուզում եմ ապրել:

- Տաճատը թուլացած հենվեց կողովին և ապշահար հայացքը ուղղեց Մենթոյին: Վերջինս թույլ ժպտաց ու, գլխով հրաժեշտ տալով, արագ քայլերով դուրս եկավ ձիերի արանքից:

Իրիկնադեմին հասավ նաև մրգաշատցիների քարավանը բեռնաթափելու հերթը: Տաճատը սկսեց ուշադիր հետևել բեռներ կրող ստրուկներին: Երեսունի չափ կորովի երիտասարդներ էին նրանք, որոնք քրտինքի մեջ կորած՝ ուսերին էին առնում բեռը, վազելով անցնում հրապարակի մի ծայրից մյուսը և մթերանոցի մուտքի մոտ հանձնում մյուս ստրուկներին: Տաճատը քիչ մնաց բղավեր, բայց իսկույն հիշեց Մենթոյի նախազգուշացումը և թուքը կուլ տվեց:

Նայում էր հայրը, թե ինչպես, մեջքին փալասի մի հաստ կտոր զցած, հարազատ որդին լուռ ու հանգիստ վերցնում է կողովները և վազում առաջ: Տաճատն սկսեց արտասվել: Եթե ինքը Սևուկը չթաքցներ քրմերից, հիմա Սոսիկը տանը կլիներ: Բայց արդյո՞ք տանը կլիներ: Մի՞թե Վրույրն էլ է ստրուկ, որ տանը չէ: Չէ, ինքը դժբախտ մարդ է: Ինչքան սոսկալի է զգալ, որ ահա այստեղ, քո աչքի առջև որդիդ բեռ է կրում, որդիդ, որին երկար տարիներ չես հանդիպել, բայց հիմա էլ հանդիպելու, հետը մի քանի խոսք փոխանակելու իրավունք չունես: Եվ ո՞վ է հնարել այդ իրավունքը: Էլ ո՞ւր մնաց աստվածային մեծահոգությունը, երբ աշխարհում այնպիսի օրենք կա, որի համաձայն հայրը չի կարող տեսնել իր որդուն: Երևի հիմա նա չգիտե, որ Տաճատը՝ իր հայրը, կանգնած է այստեղ, Մրգաշատից բերած խաղողի կողովների մոտ: Ախ, ինչպես կուզենար ձեռքը տաներ դեպի կողովը, հաներ ամենալավ ողկույզը և մեկներ որդուն ու ասեր. "Կեր, Սոսիկ, սա մայրդ է ուղարկել, սա մեր այգու խաղողն է, ախր դու շատ ես

սիրում խաղող, և սկսում էիր ուտել, երբ դեռ խակ էր, իսկ սա հասած է, ուտելու համար ամենալավը, դե կեր, զավակս, կեր քո հայրական այգու միրգը": Բայց Տաճատը չէր կարողանում խոսել, նա խոսելու իրավունք չուներ: Իսկ եթե փորձի թեկուզ մի բառ ասել, ի՞նչ կլինի:

Սակայն Մենթոյի բարի ժպիտները հիշելով՝ Տաճատը ետ էր կանգնում որդուն մոտենալու մտքից: Նա սկսեց հեռվից դիտել որդուն և հագեցնել իր կարոտը:

ԽԱՐՈՆԴԱՍԻՆ ՄՈՌԱՑԻՐ

Մարգաց ամիսն էր: Գամիրքի փոքրիկ քաղաքամայր Մաժաքում կայծակի պես տարածվեց արքայից-արքայի հրովարտակը:

- Բոլոր մաժաքցիները պետք է թողնեն քաղաքը և մեկնեն Տիգրանակերտ՝ այնտեղ մշտապես բնակվելու:

Մաժաքն ասես ցնցվեց ահեղ շանթից: Բնակիչներն իրար անցան, սարսափը պատեց բոլորին:

Իր տնամերձ արտի եզրին վաղ առավոտյան հայտնվեց Սարգոսը: Հաղթամարմին էր նա, երկար դեմքով, մոխրագույն մազերով: Ամբողջ Մաժաքում Սարգոսը հայտնի էր շատակերությամբ: Նա կարող էր միանգամից խժռել հարյուր մարդու օրապահիկը: Մարդը չէր կշտանում ոչ մի բանից, բայց ամենից շատ հացից: Այս տարի, սակայն, նա հույս ուներ ապրել մարդավայել, գուցե և ամուսնանա, չէ՞ որ նրա երեսունն արդեն անցել էր: Հուռթի հասկերը գրգռում էին ախորժակը, և նա անհամբերությամբ սպասում էր հնձին: Բայց դեռ շատ շուտ էր: Ամառը նոր-նոր բարձրացնում էր Սարգոսի արտի կանաչ վերնազգեստի տուտերը:

Եվ ահա նա նստել էր արտի եզրին, մեղմորեն շոյում էր ցողունները և մենախոսում կոշտացած ձայնով.

- Ով դու, Մա, աստվածդ գթասիրտ ու մեծահոգի, փրկիր ինձ: Դու, որ այսպես շռայլորեն հատիկներով լցրել ես իմ արտի բոլոր հասկերը, որ գոնե մի անգամ իմ աչքը կշտանա հացից, չե՞ս կարող փրկել այդ արքայից:

Ախր նա չի թողնում, որ ես նույնիսկ հնձեմ իմ արտը, ասում է պատրաստվիր և երեք օրից հետո ճամփա ընկիր դեպի Տիգրանակերտ: Իսկ ես չեմ ուզում գնալ: Ես սիրում եմ մեր Մաժաքը, մեր կապույտ, կապույտ երկինքը, իմ այս փոքրիկ հողակտորը և Գամիրքի ախորժաբեր հացը: Որտե՞ղ է այդ Տիգրանակերտը, ինչո՞ւ են ուզում ինձ քշել այնտեղ: Ասում են այնտեղ շատ արտեր կան: Իսկ ես չեմ հավատում: Եթե արմենները շատ արտեր ունեն, ապա ինչո՞ւ են եկել այստեղ: Չէ, Մա, աստվածդ գթասիրտ ու մեծահոգի, չի կարող այդպիսի բան լինել: Ես, որ իմ հացով չեմ կշտանում, ուրիշի հացով բոլորովին չեմ կշտանա: Ասում են Տիգրանակերտում ինձ կտան այնքան հող, ինչքան այստեղ ունեմ: Իսկ ես չեմ ուզում, թող ամենն իր հողը մշակի, իսկ մաժաքցին՝ իրենը: Ասա ինձ, Մա, մի՞թե ես կարող եմ թողնել իմ

արտը, չէ՞ որ այն դեռ չեմ հնձել, իսկ մի ամսից շուտ հնձել չի լինի: Օ, Մա, ես խոստանում եմ քեզ ընծայել հարյուր դահեկան ցորեն, միայն փրկիր ինձ:

Սարգոսը վեր կացավ տեղից ու փորձեց քայլել դեպի տուն, երբ նրա կողքին հայտնվեցին երկու հայ հեծյալ զորականներ: Նա դեմքը շուռ տվեց, աշխատելով չտեսնելու տալ հայերին: Զորականները կտրուկ սանձեցին իրենց ձիերը: Նրանցից մեկը դարձավ Սարգոսին.

- Էյ, այս կողմը նայիր:

Սարգոսը շրջվեց:

- Ինչպե՞ս են կոչում քեզ, - հարցրեց հեծյալներից մեկը:

- Սարգոս:

- Ի՞նչ կայք ունես:

- Մի փոքրիկ տնակ և այս արտը:

- Ուրի՞շ:

- Եվ մի եզ, որը ցանքի ժամանակ տալիս եմ հարևանիս, որ նա լծի իր ունեցած միակ եզի հետ:

- Այդպես է վարվում նաև հարևա՞նդ:

- Միայն այդպես:

- Քեզ հայտնե՞լ են, թե քանի օրից պիտի ճամփա ընկնես դեպի Տիգրանակերտ:

- Հայտնել են:

- Եվ դու իհարկե, պատրաստ ես արդեն մեկնելու:

- Ոչ:

- Ապա ինչի՞ ես սպասում, Մեծն Տիգրանը չի ներում օրինազանց մարդկանց:

- Բայց իմ արտը դեռ չի հասել, - Սարգոսը ձեռքը մեկնեց դեպի արտը:

- Սա երեսուն օրում հազիվ հասունանա, Սարգոս, իսկ դու երեք օրից հետո պետք է բոլորովին հրաժեշտ տաս Մաժաքին:

- Իսկ իմ ա՞րտը:

- Արքայական հրովարտակը քեզ թույլ է տալիս վերցնել քո բոլոր ինչքերը, եթե կարող ես, շալակիր նաև քո դեռահաս արտը:

- Դու ծաղրում ես ինձ:

- Ոչ, ճշմարտությունն եմ ասում:

- Աշխարհում ճշմարիտ բան չի մնացել: Խարոնդասի օրենքով թեթև հանցանք ունեցողն անգամ կարող է իր բերքը հավաքել և նոր ներկայանալ ատյանին, իսկ ես զանցանք էլ չեմ կատարել, բայց չեք թողնում սպասեմ ու հնձեմ իմ արտը:

- Խարոնդասին մոռացիր, Սարգոս, Արևելքում հիմա օրենքներ կարող է հրատարակել Տիգրան Մեծը: Լսո՞ւմ ես, Սարգոս, ոչ ոք քեզ իրավունք չի շնորհել ծանր ու թեթև անելու այս աշխարհի օրենքները, եթե պարանոցդ քոր չի գալիս, պատրաստվիր ճամփա ընկնել դեպի Հայք, - զորականը վերջացրեց իր խոսքը և, սաստող մի հայացք նետելով Սարգոսին, մտրակեց նժույգը: Սարգոսը երկար ժամանակ մնաց տեղում ապշահար կանգնած:

Ո՞ւր գնալ, ի՞նչ անել, մտածում էր Սարգոսը: Տեսնես ինչո՞վ է զբաղված հիմա հորեղբայր Ֆորկուսը: Մի՞թե նա էլ պիտի քանդի արհեստավորաց իր տունը: Իսկ ո՞վ պիտի մաժաքցիների համար խոփեր պատրաստի, չէ՞ որ Գամիրքում ոչ ոք չի արող այնպիսի խոփ կռել, ինչպես հորեղբայր Ֆորկուսը:

Սարգոսը շարժվեց դեպի քաղաքի կենտրոնը:

Մաժաքի կենտրոնում փռված են այգիներն ու արտերը. արհեստավորաց տներն ու մեծապետների ապարանքները տեղավորված են քաղաքը պարուրող բերդապարիսպների կողքին: Կենտրոնում գտնվող միակ արհեստավորաց տունը պատկանում է Ֆորկուսին: Վերջինս յոթ տարի առաջ մի աթենացի ստրուկ էր գնել, նրանից սովորել խոփ կռելը և թողել հողագործի իր զբաղմունքը:

Քաղաքում ոչ մի շարժում չէր նկատվում: Երբ Սարգոսը տեղ հասավ, Ֆորկուսը տան բակում փոս էր փորում:

- Ողջույն, հորեղբայր:

- Ողջույն, Սարգոս:

- Այս ի՞նչ ես անում, հորեղբայր Ֆորկուս:

- Փոս եմ փորում:

- Այդ ես տեսնում եմ:

- Եթե տեսնում ես, էլ ինչի՞ ես հարցնում:

- Ուզում եմ իմանալ, թե ինչի համար է այդ փոսը:

- Ավանդ եմ թողնում Մա աստծուն:

- Ի՞նչ ավանդ:

- Սարգոս, դժվար թե ես կարողանամ Հայքում երկար մնալ: Այդ պատճառով էլ չեմ կարող շալակել և այնտեղ տանել իմ բոլոր գործիքները: Ավելի լավ է այդ գործիքները ես թողնեմ այս փոսի մեջ մինչև իմ վերադարձը:

- Դու կարծում ես, թե արմենները կթողնե՞ն վերադառնալ Մաժաք:

- Հույսը մարդուն հեծյալ է դարձնում:

Սարգոսն այլևս չշարունակեց զրույցը: Չոր մարդ էր հորեղբայրը: Եթե Սարգոսը մի քիչ երկար սպասի Ֆորկուսը կկարծի, թե այսօր նա ուզում է ճաշել իրենց մոտ: Եվ, չնայած հիմա բոլոր մաժաքցիները համարյա մոռացել են ճաշելու մասին, այնուամենայնիվ, Ֆորկուսի ախորժակը բացվում է, երբ տեսնում է Սարգոսին: Բայց նրանք հազվադեպ են իրար հանդիպում ճաշասեղանի շուրջը:

Սարգոսը ետ դարձավ և մոլոր քայլերը ուղղեց դեպի տուն: Նա մտածում էր իր արտի մասին: Զարմանալի էր, որ ծերուկ Ֆորկուսը հույս ունի վերադառնալ Մաժաք և նորից գործարկել արհեստավորաց իր տունը: Դե նրան հեշտ է, գործիքներն ի՞նչ են որ, թող հողի մեջ ու թեկուզ հինգ տարի հետո հանիր: Իսկ Սարգոսն ինչպե՞ս թաքցնի իր արտը:

Իսկ եթե ինքս թաքնվե՞մ, անցավ նրա մտքով: Դա այնքան էր դժվար չէ: Քաղաքի ներսում, իհարկե, չեմ կարող, արմենները տակնուվրա կանեն ամեն ինչ, իսկ Կաղնիների պուրակում, որ քաղաքից հեռու է երկու հրասախ, հիմա ոչ ոք չի լինի: Կգնամ այնտեղ, կսպասեմ երեք օր, արմեններն ու մաժաքցիները կգնան Տիգրանակերտ, իսկ ես էլի կդառնամ իմ արտի տերը:

Ուշ գիշերին Սարգոսը մի քանի օրվա պարեն լցրեց տոպրակի մեջ և դուրս եկավ տանից: Նա գաղտագողի անցավ մի քանի արտերի ու այգիների միջով և մոտեցավ քաղաքի բերդապարիսպներին: Սարգոսը կարծում էր, թե այդ պարիսպները հայերը քանդում են ոչ թե նրա համար, որ պետք է քանդել, այլ՝ պարապությունից չձանձրանալու համար:

Նա շարժվեց դեպի արևելյան դարպասը, որն այդ օրը հիմնահատակ էին արել հայ զորականները: Իրար վրա կիտված քարերի վրայով զգուշորեն քայլեց առաջ և դուրս եկավ քաղաքից:

Նա մի պահ կանգ առավ շունչ քաշելու, երբ կողքին լսեց ձիերի դոփյունը:

- Կանգ առ, ով մարդ, եթե գիտես գնահատել քո կյանքը, - լսեց Սարգոսը և մինչև կկողմնորոշվեր, չորս կողմից շրջապատեցին նրան:

Սարգոսին բռնեցին և կապեցին ձեռքերը:

- Տարեք զորապետ Մամիկի մոտ, - հրամայեց հեծյալների գլխավորը:

Կես ժամ հետո Սարգոսը կանգնած էր Արիարաթների նախկին պալատի առջև: Այդ ուշ ժամին զորապետ Մամիկը ոտքի վրա էր: Թիկնավետ, քսանհինգամյա այս երիտասարդը սովորություն ուներ քնել միայն ցերեկները: Մի անգամ, երբ Տիգրան արքան հարցրեց, թե ինչո՞ւ է նա նախընտրում քնել ցերեկները, Մամիկն այսպես պատասխանեց. "Արքա, թշնամին Հայոց աշխարհի վրա միշտ գրոհում է ուխտադրժորեն: Նա գողի պես գիշերով է մտնում երկիր: Եթե հայ զորականն արթուն լինի այդ պահին, ապա Հայքը բան չի կորցնի": Այս խոսքերը դուր էին եկել Տիգրանին և սկզբում Մամիկին նշանակել էր իր դրանիկ գնդերից մեկի պետ, իսկ հիմա նրա հրամանատարության տակ է դրել երեքհազարանոց հայկական այրուձին և հանձնարարել մաժաքցիներին գաղթեցնելու գործը:

Սարգոսին հրեցին զորապետի ընդունարանը: Մամիկը ոտքից գլուխ չափեց եկվորին ու հարցրեց.

- Ո՞վ ես:

- Մարդ:

- Ինչպե՞ս ես հանդգնում այդպես պատասխանել, մի՞թե ես չեմ տեսնում, որ դու մարդ ես:

- Իմ հայրը լակոնացի էր:

- Քո անունն ու զբաղմունքը:

- Սարգոս, մաժաքցի հողագործ:

- Ուր էիր ուզում ծլկել:

- Կաղնիների պուրակը:

- Ի՞նչ ես կորցրել այնտեղ:

- Ոչինչ:

- Ապա ինչո՞ւ էիր ուզում գնալ այնտեղ

- Ժամադրվել էի մի աղջկա հետ:

- Մի՞թե աղջիկների մոտ են գնում մի քանի օրվա պաշար վերցրած:

- Դա իմ ընթրիքի բաժինն է, որ ուզում էի ճաշակել մաքուր օդում:

- Դու ստում ես, Սարգոս, քո տոպրակում քսան կլոր հաց կա, որը քեզ կհերիքի տասն օր:

- Ես չեմ ստում:

- Այդ դեպքում նստիր այստեղ և ապացուցիր, որ քո ընթրիքը սովորաբար բաղկացած է լինում քսան հացից, - ասաց Մամիկը և տոպրակը քաշեց Սարգոսի առջև:

Մաժաքցին գործի անցավ որկրամոլի փութաջանությամբ: Երիտասարդ զորապետը զարմանքով նայում էր, թե Սարգոսը ինչպես էր խժռում իրար վրա դարսած չոր հացի կլորակները: Երկար ժամանակ չպահանջվեց, որ Սարգոսը տոպրակի պարունակությունը փոխանցեր իր ստամոքսը:

- Դու փրկեցիր քո կյանքը, Սարգոս, - ասաց Մամիկը, - գնա և ապրիր, բայց այսուհետև չփորձես գիշերային շրջագայության դուրս գալ, չէ՞ որ ինքդ քաջ գիտես, որ Կաղնիների պուրակում քեզ ոչ ոք չի սպասում:

***

Երեք օրից հետո բոլոր մաժաքցիները թողեցին հայրենի քաղաքը:

Մեծատուններն ու արհեստավորները ձիերի, իսկ հողագործները եզների ու էշերի վրա բարձել էին իրենց ինքը, փոքրիկ երեխաներին ու հիվանդներին: Գաղթականների թափորը շարժվում էր դեպի արևելք: Շատերը լալիս էին բարձրաձայն, անիծում Տիգրան արքային: Հայ զորականները ձիերի վրա ետ ու առաջ էին արշավում, հրամաններ տալիս, շտապեցնում:

Կեսօրին բոլոր մաժաքցիներին հավաքեցին քաղաքի մերձակա սարի վրա: Նրանց առջև բացվում էր մի տխուր տեսարան: Քաղաքն ասես որբացել էր: Մարդիկ թողել էին տներն ու այգիները, արտերն ու շքեղ ապարանքները:

"Թող մաժաքցիները ծաղկեցնեն Տիգրանակերտը և մոռանան դարձի բոլոր ճամփաները", մտածում էր երիտասարդ զորապետը:

Սարգոսը, իր եզի կողքին կանգնած, աչքը չէր կտրում հայրենի տնից: Նրա հոգում կարոտից ասես ինչ-որ լար կտրվեց: Աչքերը մթնեցին, նա կորցրեց իրեն: Սարգոսը մի տարօրինակ աղաղակ արձակեց և, պոկվելով տեղից, խելագարի պես վազեց դեպի Մաժաք: Մի զորական փորձեց մտրակել իր նժույգը և հասնել Սարգոսի հետևից, բայց զորապետ Մամիկը կանխեց նրան:

- Պետք չէ... Սարգոսի եզը բառաչեց և խառնվեց Տիգրանակերտի ճամփան բռնած երեսուն հազար մաժաքցիների թափորին:

ԻՆՉՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է, ՔԱՆ ՈՉԻՆՉԸ

Տիգրանակերտն սկսեց հասակ առնել օրերով: Նոր քաղաքում օտարերկրացիք հետզհետե ավելանում էին: Արքայից-արքա Տիգրանը Գամիրքից ու Ասորիքից իր նոր քաղաքամայրն էր ուղարկում բազմաթիվ մարդկանց:

Քաղաքի բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում հույները: Նրանք մուտք էին գործում արքունիք, տիկնունի, բանակ: Տիգրանն իր շուրջն էր հավաքում Միջերկրայքի նշանավոր մարդկանց: Արքայից-արքայի ու տիկնանց-տիկնոջ բարեհաճությանն էին արժանանում հույն իմաստասերները, ճարտասանները, դերասաններն ու արհեստավորները: Ամֆիկրատ Աթենացին Տիգրանի պալատում խորհրդատուի պաշտոն էր ստանձնել: Տիկնանց-տիկին Կլեոպատրան առանձին հարգանքով էր վերաբերվում Ամֆիկրատին: Վերջինս սիրում էր պատմել մեծ այրերի կյանքը, իր զրույցները համեմելով սրամտություններով: Հաճախ նա շաղակրատում էր արքայից-արքայի առջև, փորձելով համոզել ներկաներին, թե Տիգրանին հովանավորում է Զևսը, թե այն, ինչ չկարողացան անել Աքեմենյաններն ու Սելևկյանները, կանի Տիգրանը, քանզի Հայոց արքայից-արքան վայելում է բոլոր աստվածների սերը: Ամֆիկրատի խորհրդով արքունիքում սկսեցին խոսել նաև հունարեն, բայց գավառներից եկող նահապետները չէին տիրապետում հունարենին, և Տիգրանը նրանց հետ խոսում էր հայերեն: Ավագանին խորհրդի նստելիս արքայից-արքան չէր թողնում հունարեն խոսել:

Մի անգամ, երբ հայկական զորքերը պաշարել էին Անտիոքը, և արքայից-արքան մի քանի օրով ժամանել էր նոր քաղաքամայրը, տեսնելու, թե ինչպես են ընթանում շինարարական գործերը, Գուրի և նրա միջև բացվեց մի խոսակցություն, որ Տիգրանի համար բոլորովին անսպասելի էր: Գուրը հանդարտաբարո երիտասարդ էր և բոլորովին չէր խառնվում արքայից-արքայի գործերին: Տիգրանը սիրում և վստահում էր կրտսեր եղբորը:

- Նահապետները տրտնջում են բացահայտ, - դիմելով ավագ եղբորը, կարծես ի միջի այլոց, ասաց Գուրը:

- Ինչո՞ւ են տրտնջում, - եղբոր խոսքերից անակնկալի եկած հարցրեց արքայից-արքան:

- Ասում են՝ մենք կռվում ենք, արյուն ենք թափում, կորցնում մեր ընտիր հայկազուններին, իսկ արքայից-արքան մեր գլխին հույներին է կարգում:

- Ես ոչ մի հույնի հային հրամայելու իրավունք չեմ տվել:

- Մի քանի օր առաջ արքայական արհեստավորաց տան հույն տնօրենը ծեծել էր մի հայ պատանու, որի հայրը նահապետ է: Քրմապետ Վահունին դատական շատ գործեր հանձնարարում է հույն դպիրներին...

- Սպասիր, Գուր, - ընդհատեց արքայից-արքան, - դու գիտե՞ս, որ հույներին մենք Հայոց աշխարհ ենք բերում, որպեսզի մեր ժողովուրդը նրանցից արհեստներ սովորի, ծանոթանա նրանց բարձրաճաշակ մշակույթին: Հույնը, Գուր, Հայքում չի կարող երկար ժամանակ հույն մնալ, նա օրերից մի օր հայ կդառնա, որով կբազմանա մեր տերության մարդկանց թիվը:

- Ոչ մի հաղթող, արքայից-արքա, չի հանդուրժի, որ հաղթվողը ծեծի իրեն:

- Ժամանակով այդ պատանին կմոռանա հույնի ծեծը, բայց արդեն յուրացրած կլինի երկաթի լեզուն:

- Հույներն իրենց սանձարձակ են պահում նաև բանակում, զոռոզանում և նույնիսկ ձեռք են բարձրացնում այն տասնապետների վրա, որոնք դժվարանում են հունարեն գրել սովորել:

ՇՏԱՊՈՂԸ ՍԱՅԹԱՔՈՒՄ Է

Տիգրանակերտի արքայական կիսաշեն ապարանքի՝ տիկնաց-տիկին Կլեոպատրայի սենյակում ամբողջ գիշերը լույսերը չմարեցին:

Կլեոպատրան չէր կարողանում քնել: Նա գիտեր, որ քաղաքում հիմա բոլորն ընկել են Մորփեոսի գիրկը: Բայց Մորփեոսն այս գիշեր մոռացել է Կլեոպատրային: Ինչու միայն Մորփեոսը, այժմ ամենքն էլ մոռացել են Կլեոպատրային: Լռել է նաև հայրը, արդեն մի քանի շաբաթ է, ինչ Պոնտոսից ոչ մի սուրհանդակ չի գալիս: Ամբողջ աշխարհն ու բոլոր աստվածները իրավունք ունեն մոռանալ Կլեոպատրային: Այդպիսի իրավունք չունի միայն հայրը՝ Մեծն Միհրդատը: Ինչո՞ւ պիտի ինքը ամուսնանար Տիգրան արքայի հետ: Չէ՞ որ Տիգրանն իրենից մեծ է քսանութ տարով: Հայրը պետք է դառնար Ասիայի տիրակալը, բայց չգիտես ինչու, հիմա նահանջում է Հռոմի առջև: Խենթացե՞լ են աստվածները, ի՞նչ է կատարվում աշխարհի վրա: Երբ Միհրդատ Եվպատորն է նահանջում, նշանակում է բոլոր աստվածներն էլ կորցրել են իրենց խիղճը: Չէ՞ որ Եվպատորը Մեծ Ալեքսանդրի միակ օրինական ժառանգն է:

Արքայից-արքա Տիգրան Մեծի տիկնանց-տիկին Կլեոպատրա: Փաղաքուշ է հնչում, բայց խորություն չունի: Ինքը՝ Կլեոպատրան, ավելի մեծ տիտղոսի է արժանի: Շուտով իր տիտղոսն էլ չի լինի: Տիգրանը ծերացել է: Սկսվել է արքայից-արքայի կյանքի ձմեռը, ճիշտ է, դեռ ձյուն չի եկել, բայց կարող է այսօր կամ վաղը գալ: Այդ ո՞ր ձմեռն է առանց ձյուն անցնում: Իսկ եթե եկավ, Կլեոպատրան ստիպված կլինի տիկնանց-տիկնոջ իր խույրը տալ... Ո՞ւմ, Արտավազդի

ապագա կնոջը, գուցե Զարեհի... Բայց Հայքում ոչ ոք չի էլ կասկածում, որ Տիգրանին կփոխարինի Արտավազդը: Իսկ Տիգրանը հավատացնում է, թե Զարեհը կփոխարինի: Երևի ստում է: Ի՞նչ, ստում է: Իսկ ինչի՞ համար նա եկավ Հայք: Որ գեղեցկությունը թողնի այստեղ և ձեռնունայն վերադառնա Պոնտո՞ս:

Ամեն մարդ իր երեզանքն է ունենում: Հաճախ անցնում է կյանքդ, բայց այդ երազանքը իրականություն չի դառնում: Մի՞թե այդպես է լինելու նաև իր հետ:

Կլեոպատրան ամեն օր մտաբերում է հոր խոսքերը. "Լսիր, աղջիկս: Դու չպետք է տրտնջաս իմ որոշման դեմ: Դիվանագիտական ամուսնության զոհ մի համարիր քեզ: Քո ամուսինը քեզնից մեծ է քսանութ տարով, իսկ հորիցդ՝ ինը տարով: Նա երկար չի ապրի: Հայքը պետք է լծել Պոնտոսի սայլին: Քեզ դրա համար եմ ուղարկում այնտեղ: Փոխարենը խոստանում եմ իմ կենաց հեղուկներով քո կյանքը հասցնել երկու հարյուր տարվա: Եվ հետո ես քեզ թագուհի կկարգեմ այն տերության գլխին, որն ինքդ ցանկանաս":

Իսկ հիմա հայրը նահանջում է Հռոմի առաջ: Հռոմը կարող է Միհրդատին խորտակել Պոնտական ծովում: Այդ դեպքում նրա հետ էլ կխորտակվի Կլեոպատրայի երազանքը: Արդյոք աստվածները քմահաճ խաղեր չե՞ն սարքում Ալեքսանդրի հետնորդների գլխին: Ինչպե՞ս թե, ինքը Տիգրանակերտում հանգիստ նստած, իսկ երազանքը խորտակվի Պոնտական ջրերում: Գուցե այս ամենի մեջ մեղավորը հենց ինքն է: Չէ՞ որ նա կարող էր շատ բան անել Միհրդատի համար: Հետո ինչ, թե Տիգրանը բանի տեղ չի դրել նրա բոլոր թախանձանքները: Տարիներն անցնում են, Հայքի սահմաններն ընդարձակվում են, իսկ Միհրդատը շարունակում է նահանջել... Ինչու են աստվածները աշխարհակալի դափնեպսակ հյուսում Տիգրանի համար: Էլ ինչպե՞ս կարող ես հիմա Հայքը լծել Պոնտոսի սայլին: Պոնտոսը կուչ է գալիս Հայքի ստվերի տակ: Կլեոպատրան շատ է ուշացել: Հորից դժգոհելու իրավունք չունի: Անկատար թողեց նրա պատվիրանը: Հիմա էլ ուշ չէ: Ամենից շատ շտապում է նա, ով շատ է ուշացել:

Կլեոպատրան մոտեցավ պատուհանին և, կտրուկ շրջվելով, կանչեց.

- Էյ, - Քասիմա, Քասիմա:

Ներս մտավ նաժիշտը:

- Լսում եմ, դշխո:

- Այդ ո՞ւմ սենյակում վառվեց լույսը:

Նաժիշտը մոտեցավ լուսամուտին:

- Կարծես Ամֆիկրատ Աթենացին է, - ասաց Քասիման:

- Այս ուշ ժամին ինչո՞ւ է արթնացել իմաստասերը:

- Չգիտեմ, դշխո:

- Ապա, կանչիր նրան այստեղ:

- Այս ժամի՞ն:

- Ինչի՞ց ես երկյուղում:

- Եթե պահակներից մեկը նկատի, որ իմաստասերը կեսգիշերին այցելում է քեզ, իմաց կտա արքայից-արքային, և Աթենացին կզրկվի իր գլխից:

- Դու կարծում ես, թե ես շա՞տ բարձր եմ գնահատում նրա գլուխը:

- Կամքդ ի կատար, դշխո, ինձ համար միևնույն է, ես իմ թաշկինակը չեմ փոխի ոչ մի տղամարդու գլխի հետ, - ասաց նաժիշտը և շարժվեց դեպի դուռը:

- Սպասիր, Քասիմա, - կանգնեցրեց նրան Կլեոպատրան:

- Լսում եմ, դշխո:

- Դու ինչո՞ւ ես ատում բոլոր տղամարդկանց:

- Որովհետև քո դեմքը հաճախ մռայլվում է նրանց պատճառով:

- Իմ լավ Քասիմա, - ժպտաց Կլեոպատրան և գլխով արեց:

- Նաժիշտը դուրս եկավ և քիչ հետո վերադարձավ Ամֆիկրատ Աթենացու հետ: Իմաստասերի թևատակին մի ստվար մագաղաթ կար:

- Իմ խոնարհ ողջույնները Հայոց տիկնանց-տիկնոջը, Մեծն Միհրդատի սքանչելի դստերը:

- Նստիր Աթենացի, - ասաց Կլեոպատրան և, մտաբերելով, թե ինչու է հրավիրել նրան, ավելացրեց.

- Ինչո՞ւ ես արթուն այս ուշ ժամին:

- Բայց ես բոլորովին չեմ քնել:

- Իսկ ինչո՞ւ քո սենյակում լույսը նոր վառվեց:

- Ես ինքս վառեցի:

- Գիտեմ, որ ինքդ վառեցիր, բայց ի՞նչ էիր անում մինչև այդ:

- Մտածում էի:

- Մթության մե՞ջ:

- Այո:

- Մի՞թե իմաստասերները մթության մեջ են մտածում:

- Դե, իհարկե, ոչ:

- Իսկ ինչո՞ւ ես ուզում բացառություն կազմել:

- Փորձում եմ հարմարվել բնությանը:

- Աթենացի, մեկնիր խոսքերդ և աշխատիր չհոգնեցնել իմ միտքը:

- Տիկնանց-տիկին, մարդը մտածում է ուղեղով, իսկ ուղեղն անմատչելի անկյուն է, որտեղ հավերժական գիշերվա խաղաղությունն է թագավորում: Եվ ահա ինձ թվում է, թե մթության մեջ մարդն ավելի լավ է իմաստասիրում:

- Մթության մեջ մտածել, լույսի տակ գրե՞լ, սա՞ է քո իմաստասիրությունը:

- Այո, տիկնանց-տիկին:

- Լսում եմ քեզ, Աթենացի, և խորհում, որ իմաստասերները կարող են նաև հաղթել հիմարության մրցույթում:

- Մեծ հիմարության համար էլ խելք է պետք, - փորձեց կատակի տալ Աթենացին:

- Այդ ի՞նչ մագաղաթ ես դրել թևիդ տակ:

- "Մեծ մարդկանց մասին" Իմ պատմությունն է:

- Ինչո՞ւ ես բերել քեզ հետ:

- Այստեղ հորդ՝ Միհրդատի նոր խոսքն եմ գրի առել:

- Հորս նոր խո՞սքը:

- Այո:

- Ի՞նչ նոր խոսք է ասել հայրս և որտեղի՞ց է այն ընկել քո ձեռքը:

- Հայրդ հռոմեատյաց իր բարեկամներին նամակ է գրել, որն աստվածային պատգամի զորություն ունի: Մտերիմ մի մարդ գրի է առել այդ նամակը և ուղարկել ինձ:

- Կարդա:

- Աթենացին հարմար դիրք գրավեց փոքրիկ թախտի վրա և բացելով մագաղաթյա մատյանը, սկսեց կարդալ.

"Թող ողջ Ասիան իմանա, որ Արևմուտքի այս տերությունը՝ Հռոմը, որի ճիրանները տարածվում են մինչև Արևելք, գայլի ախորժակ ունի: Ես կռվում եմ Ասիան փրկելու համար: Եթե նույնիսկ հաղթանակի հույսն էլ աղոտ լինի, այլ ելք չունեմ, քան սուր բարձրացնել ավազակների դեմ: Հավատացնում եմ ձեզ, որ Հռոմն անպարտելի չէ: Մի՞թե Պյուրոսը երեք պատերազմում պարտության չմատնեց Հռոմին: Հաղթական Հանիբալը տասնվեց տարի շարունակ ոտնակոխ չարե՞ց Իտալիան, և նրա հայրենակիցների սաստիկ նախանձն էր և ոչ թե հռոմեացիների ուժը, որ արգելեց նրան հիմնիվեր կործանելու Հռոմ քաղաքը: Անդրալպյան գալլերը գրավեցին այդ քաղաքը, հռոմեացիներին թողնելով միայն մի բլուրի գագաթ և ի վերջո հռոմեական ոսկին էր և ոչ թե քաջությունը, որ ստիպեց գալլերին ետ քաշվել:

Հռոմին այդքան սարսափ ազդած գալլերը այժմ իմ բանակի մի զորամասն են կազմում: Ես այլևս չեմ կարող սպասել: Սուրն ավելի շուտ վարանողի գլխին է իջնում, քան նրա, որ դիմագրավում է սրին: Մի՞թե չեք տեսնում, թե ծերակույտն ինչպես է վերաբերում ինձ հետ: Մի անարդար որոշումին հաջորդում է մյուսը: Այդ որոշումների սաստկությունը ես չկարողացա

մեղմացնել համակերպվելով: Իմ զիջումներն անգամ չարգելեցին նրանց, որ խիստ քայլերի չդիմեն իմ դեմ:

Համայն Ասիան գիտե, թե նրանց պահանջներին ես ինչքան տեղի տվի: Փռյուգիան և Պափլագոնիան չհանձնեցի՞ նրանց: Զավակս չհեռացա՞վ Կապադովկիայից, որը գրավել էի ես, և որն օրինաց կարգով ինձ էր պատկանում: Իմ հաղթանակի պտուղները ինձնից խլեցին այն մարդիկ, որոնք կռվում են կողոպտելու համար: Հռոմի ցուցմունքով չէ՞ր, որ Նիկոմեդեսը կռիվ սկսեց իմ դեմ: Իսկ ինչո՞ւ սկսեց: Որովհետև ես իմ հողերը չհանձնեցի Նիկոմեդեսին: Ո՞վ է Նիկոմեդեսը, մի հասարակ պարուհու զավակ, որի գլխին թագ են դնում հռոմեացիները: Նիկոմեդեսը թագավոր, ծիծաղելի չէ՞: Ո՞վ է լսել, որ պարուհուց թագավոր ծնվի:

Հռոմը հիմա ոսկի է տալիս նրան, ով բամբասում է ինձ: Եվ ով շատ է բամբասում, նա ավելի շատ է ստանում: Բամբասում են ինձ՝ Մեծն Ալեքսանդրի ծոռանս: Իսկ ովքե՞ր են իրենք՝ Հռոմի ծերակուտականները: Հռոմեացիներն այնպիսի թագավորներ են ունեցել, որոնց անուններն անգամ ամոթով կարող են տալ իրենք. խառնածին հովիվներ կամ սաբինյան բախտագուշակներ, կամ կորնթացիներ, կամ թուսկաների աղախիններ և ստրուկներ: Եվ ինչպես Հռոմի հիմնադիր զույգը սնվեց գայլի կաթով, այդպես էլ նրանց ամբողջ ցեղը գայլի խառնվածք ունի, արյունի ու բռնության, հարստության և կողոպուտի է ծարավի":

Աթենացին լռեց: Կլեոպատրային թվաց, սակայն, թե ինքը լսում է հոր խոսքի շարունակությունը:

- Տիրուհի, - կարճատև լռությունն ընդհատեց Աթենացին, - ես վրդովեցի քո հոգին:

- Կլեոպատրան զգաստացավ.

- Ամենևին էլ ոչ, հարգարժան իմաստասեր, ես միշտ զվարթանում եմ, երբ լսում եմ քեզ:

- Դու լսեցիր քո հորը, տիրուհի, և ոչ ինձ:

- Եվ ի՞նչ ես կարծում, իմաստասեր, հորս բարեկամները կարձագանքե՞ն նրա կոչին:

- Իմաստասերները արձանագրում են միայն կատարվածը և խորհրդածում իրականի շուրջը:

- Դու խուսափում ես ուղիղ պատասխանելուց:

- Այժմ ինձ համար պատմություն է միայն հորդ նամակը: Չգիտեմ, թե ով կմտնի նրա դրոշի տակ: Տիգրանից բացի, ովքեր չմիանան Միհրդատին, պատմության համար կդառնան և այլն:

- Եվ ա՞յլն:

- Այո, բոլոր մարդիկ պատմության համար հասարակ զինվորներ են, իմաստասերների լեզվով՝ և այլն:

- Դու համոզված ես, որ Տիգրանը կհասնի՞ Ալեքսանդրի փառքին:

- Տիգրանը կհասնի իր՝ Տիգրանի փառքին:

- Մի՞թե պատմության համար այդպիսի մեծություն է դարձել իմ արքայից-արքան:

- Նա չի կրկնում մյուս մեծերին, ահա թե որն է նրա մեծությունը:

- Իսկ հա՞յրս:

- Հորդ ուղեկցում է Ալեքսանդրի ուրվականը:

- Սրտա՞նց ես ասում, Աթենացի, թե ինձ հաճոյանալու համար, չէ՞ որ ինքդ էլ գիտես, որ նա հիմա նահանջում է հռոմեացիների առջև:

- Իմաստասերները համոզված են, որ Միհրդատը ծնվել է Հռոմը կործանելու համար:

- Դու կարող ես գնալ, Աթենացի, ներիր, որ խանգարեցի քո գիշերային անդորրը, - ասաց Կլեոպատրան և հենվեց լուսամուտին:

Մտքերով տարված Աթենացին մոռացավ հրաժեշտի խոսք ասել և անձայն դուրս եկավ սենյակից:

- Քասիմա, - դեմքին խորամանկ մի ժպիտ խաղացնելուց հետո նաժիշտին դիմեց Կլեոպատրան, - տուր ինձ թիկնոցս:

- Ո՞ւր, դշխո:

- Գնանք Փիլիպոսի մոտ:

- Նա հիմա քնած կլինի:

- Կարթնացնենք:

Փիլիպոսը տիկնանց-տիկին Կլեոպատրայի խոհանոցի մատակարարն էր: Իր տիրուհու հետ եկել էր Պոնտոսից: Նա խոստացել էր Միհրդատին՝ ծանր պահերին պաշտպան կանգնել Կլեոպատրային և եթե պետք լինի – նրան ապահով վերադարձնել Ամիսոս: Բայց Հայքում նա սկսել էր ձանձրանալ: Նրան դուր չէին գալիս հայ Արտաշեսյանները: Շատ խաղաղ մարդիկ են այս հայերը: Արքունիքում ոչ դավաճանություն կա, ոչ սպանություն: Կարծես թե կյանքում ամենքն էլ գտել են իրենց տեղը: Քսան տարի անցավ, բայց նա ոչնչի չհասավ: Միհրդատը, սակայն, նրան հիշում էր: Մեկ-մեկ Պոնտոսից Եվպատորը ողջույններ է հղում իր բարեկամին:

Նրա ննջասենյակը արքայական ապարանքի ստորին հարկում էր, խոհանոցի կողքին: Տիկնանց-տիկնոջը նա հազվադեպ էր հանդիպում: Տիկնունու հայ ներքինապետը չէր վստահում Փիլիպոսին և չորս աչքով հետևում էր նրա քայլերին: Փիլիպոսն զգում էր դա և զգուշանում:

Տիկնանց-տիկնոջ տարաժամ այցելությունը ասես սթափեցրեց նրան:

- Տիրուհի, ես ամենևին չէի սպասում, որ այս ուշ ժամին կարող էի պետք գալ քեզ:

- Փիլիպոս, դու դեռ հիշո՞ւմ ես Եվպատորին:

- Ի՞նչ ես ասում, դշխո, ես Մեծն Միհրդատի բարեկամն եմ: Ինչպե՞ս կարող եմ չհիշել աստվածային մի թագավորի, որն ինձ չի մոռանում նույնիսկ այն ժամանակ, երբ Պոնտոսում

գործերը խառն են: Հենց երեկ նա սուրհանդակի միջոցով խնդրում էր հայտնել, թե ինչպես է իրեն զգում տիկնանց-տիկին Կլեոպատրան:

- Փիլիպոս, պատրաստվիր հենց հիմա մեկնելու...

- Ես պատրաստ եմ, տիրուհի, վաղուց է չեմ եղել Ամիսոսում:

- Բայց քեզ Պոնտոս չեմ ուղարկում:

- Իսկ ո՞ւր պիտի գնամ ես:

- Արտաշատ:

- Արքայազն Զարեհի մո՞տ;

- Այո:

- Հրամանդ ի կատար, տիրուհի, ես այսօր կմեկնեմ:

- Դու պետք է մեկնես մինչև կբացվի լույսը: Վերցրու այս մատանին, կհանձնես Զարեհին:

- Հետո ես շտա՞պ պիտի վերադառնամ:

- Այդ մասին քեզ կասի արքայազնը:

- Իսկ ներքինապե՞տը:

- Ահ, ես մոռացել էի, որ դու պարտավոր ես տեղյակ պահել նրան, թե ուր ես մեկնում:

- Այո, արքայից-արքայի հրամանն այդպես է:

- Ահա թե ինչ Փիլիպոս: Ներքինապետին հայտնիր, որ տիկնանց-տիկնոջ ասեղնակար բարձիկը մնացել է Արտաշատում, գնում ես բերելու:

- Իսկ այդ բարձիկն, իրոք մնացել է Արտաշատո՞ւմ:

- Ոչ Փիլիպոս, այդ բարձիկը մաշվել է տարիներ առաջ, ես այն նետել եմ Արաքսի մեջ:

- Հասկացա տիրուհի:

- Ի՞նչ հասկացար:

- Մատանին հասցնել արքայազն Զարեհին և ուրիշ ոչինչ:

- Քեզ բարի ճանապարհ, աշխատիր մտաբերել Պոնտոսը, - ասաց Կլեոպատրան և, Քասիմայի հետ դուրս գալով, միայնակ թողեց Փիլիպոսին:

Տիկնանց-տիկնոջ վերջին, խորհրդավոր բառերը սկսեցին տանջել տիկնունու խոհանոցի մատակարարի միտքը:

Արքայազն Զարեհը Փիլիպոսին դիմավորեց գահասրահում:

Ստանալով տիկնանց-տիկին Կլեոպատրայի մատանին, Զարեհի ուսերն այնպես բարձրացան, ասես մեկը խայթեց նրա ոտքը: Փիլիպոսն զգաց պայազատի դեմքի հանկարծահաս մռայլությունը և մտմտում էր իր ասելքը:

- Ի՞նչ ասաց մայրս, - Փիլիպոսի աչքերին նայելով, ասաց Զարեհը:

- Տիկնանց-տիկինն ասաց, որ ես լսեմ ու կատարեմ քո հրամաններն այնպես, ինչպես կկատարեի Մեծն Միհրդատի հրամանները:

- Դու ժամանակին եկար, Փիլիպոս, ուղարկելով այս մատանին՝ մայրս իմաց է տալիս, որ այլևս չի կարելի ուշացնել:

- Այդպես է մտածում նաև պապդ՝ Միհրդատ Եվպատորը:

- Չնայած Զարեհը գիտեր, թե Փիլիպոսն ինչ լուր է բերել Պոնտոսից, բայց անտեղյակ ձևանալով հարցրեց.

- Դու որևէ լուր ունե՞ս նրանից:

- Այո: Մի քանի օր առաջ նա հաղորդեց ինձ, որ տեղեկացնեմ քեզ...

- Ի՞նչ, - անհամբեր դարձավ Զարեհը:

- Արքայազն Զարեհը թող իմանա, որ ինքը Մեծն Միհրդատի թոռն է: Զարեհը Հայքի թագի միակ օրինական ժառանգն է: Տիգրանը վաղուց պետք է այդ թագը հանձներ նրան: Իզուր է ուշացնում: Ճիշտ է, ես հիմա չեմ կարող օգնել թոռանս: Բայց մի՞թե օգնություն չէ այն, որ ես խարխլում եմ Հռոմի հզորության հիմքերը, որ ես ապրում եմ աշխարհի վրա: Իմ ստվերն անգամ պետք է Զարեհին փառքի կոչի:

- Հետո՞:

- Ես հայտնեցի ամբողջը:

Այս լուրը բերող սուրհանդակը երկու օր մնաց Տիգրանակերտում՝ մինչև համոզվեց, որ ես առանց խաթարելու անգիր արեցի Միհրդատի պատգամը:

- Այո, պապս չի սիրում նամակներ գրել և ամեն բան հաղորդում է երրորդ կամ չորրորդ մարդու միջոցով: Լսիր Փիլիպոս, քիչ հետո ես այստեղ կհրավիրեմ իմ հավատարիմ նահապետներին: Այսօր դու շատ բան կիմանաս: Զինվիր այնպես, ինչպես ոչ ոք մինչև հիմա չի զինվել աշխարհում: Այս պահից դու իմ թիկնապահն ես: Քո ծառայության համար ես քեզ կվարձատրեմ պատշաճորեն: Հենց հիմա ես մարդ կուղարկեմ Պոնտոս, որ Միհրդատին հաղորդի...

- Ի՞նչ հաղորդի:

- Որ արքայազն Զարեհի կյանքի ապահովությունը վստահված է Փիլիպոսին:

- Արքայազն, խնդրում եմ լիովին վստահել ինձ:

- Մի՞թե ես չեմ վստահում, Փիլիպոս:

- Բայց...

- Բայց զարմանում ես, որ գործում եմ Միհրդատի պես, այնպես չէ՞: Ինչ կարող ես անել, սիրելի Փիլիպոս, ես նրա թոռն եմ: Եվ մի մոռացիր, որ բոլոր թոռներն ավելի շատ իրենց պապերին են նմանվում, քան հայրերին:

Քիչ հետո Փիլիպոսը դուրս եկավ գահասրահից, իսկ արքայազն Զարեհը մտավ իր սենյակը: Նա չէր կարողանում ընթացք տալ իր մտքերին: Արդյոք պապն ու մայրը նրան չէի՞ն մղում դեպի անդունդ: Ինքն իրավունք ունի՞, արդյոք, արքայից-արքա հռչակվելու, երբ դեռ կենդանի է հայրը: Բայց ո՞վ կարող է ասել, թե երբ կմեռնի Տիգրանը: Ո՞վ կերաշխավորի, որ նրա մահից հետո Հայքի թագը Արտավազդի գլխին չեն դնի: Այն ժամանակ Զարեհն ստիպված կլինի իր եղբայրների ու մոր հետ փախչել Պոնտոս: Ինչ կասի Միհրդատը այդ դեպքում: Իսկ հայրը դեռ առույգ է:

Վաթսունհինգ տարեկան է, բայց ավելի լավ է ելնում նժուգի վրա, քան ասպետ Բագարատը: Հավանաբար նրան կծերացնի Միջերկրայքը: Արդյոք շատ չի՞ ձգում Հայոց թելը: Չէ՞ որ այն կարող է կտրվել: Եթե կտրվեց՝ գործերը կխառնվեն, և բոլոր նահապետներն արքայից-արքա կճանաչեն Արտավազդին: Չէ՞ որ նա հելլեն իմաստասերներից խելոք է:

Իսկ ի՞նքը՝ Զարեհը: Արդեն քսան տարեկան է դարձել: Էլ ե՞րբ պետք է թագավոր դառնա: Իր պապը՝ Միհրդատը, Պոնտոսի արքա է հռչակվել տասնմեկ տարեկանում: Ինը տարով ետ է մնացել: Ավելի շուտ՝ արքայից-արքա Տիգրանի մահը ուշացել է ինը տարով: Նա կարող է դեռ շատ ապրել: Կյանքից չի հագեցել: Դե, իհարկե, մի մարդ, որ պարթևների մոտ պատանդ մնա տասնհինգ տարուց ավելի՝ կյանքից չի հագենա: Աստվածները նրան ահեղ համբերությամբ են օժտել: Վերջապես ի՞նչ է արել իր հայրը, որ բոլորը սարսափում են նրանից: Տասնհինգ տարի գերի է եղել պարթևներին: Սա քաջությո՞ւն է: Միհրդատը տասնհինգ օր էլ գերի չի մնա: Միհրդատը, ահա թե ում պետք է հետևի Զարեհը:

Արքայից-արքան ետ տվեց նրան Անտիոքի վրա արշավող հայկական բանակից և ուղարկեց Արտաշատ: Հոր խոսքերը. "Գնա, հանդստացիր Արտաշատում", այրում են Զարեհ սիրտը: "Գնա, հանդստացիր", մի՞թե քսան տարեկան արքայազնը կարող է հանգստանալ: Չէ՞ որ հիմա ինքը՝ արքայից-արքան, պետք է հանգստանա և ոչ թե Զարեհը:

Զարեհը հիշում է նաև, թե այդ խոսքերից հետո Արտավազդի դեմքին ինչպիսի քմծիծաղ երևաց: Ոչինչ: Հիմա ինքն "այնպես կհանգստանա", որ Տիգրանն ու Արտավազդը մեկընդմիշտ կորցնեն իրենց հոգու հանգստությունը:

Ինչպես կվարվեր Միհրդատը այս պահին:

Զարեհն արդեն կողմնակիցներ ունի: Ամենավստահելին Արտաշատի նահապետ Քաջունին է: Արքայից-արքայի հրամանով Քաջունին պետք է թողներ Արտաշատը և փոխադրվեր Տիգրանակերտ՝ այնտեղ մշտապես բնակվելու համար: Տիգրանի ցանկությունը Քաջունու համար հավասար է մահվան: Նրա պապերը ծնվել ու ապրել են Արտաշատում: Ինչպես կարող է հիմա Քաջունին թողնել հայրենի կալվածքը և գնալ Տիգրանակերտ: Չլինի՞ թե արքայից-արքան աքսորում է նրան: Արքայից-արքա է, իր անունով քաղաք է կառուցում, ուզում է անմահանալ, թող անմահանա, բայց ոչ Քաջունիների կյանքը խորտակելով: Զարմանալի է, Միջերկրայքից հրեաներին ուղարկում է Արտաշատ, իսկ Քաջունուն

հրամայում թողնել Արտաշատը և մոտենալ Միջերկրայքին: Չէ, թեկուզ և Տիգրանն արքայից-արքա է, բայց Քաջունին չի ենթարկվի նրա կամքին: Կմեռնի այստեղ՝ հայրենի Արտաշատում:

Զարեհը գիտե, որ այսպես են մտածում նաև Այրարատ աշխարհի այն նահապետները, որոնց ընտանիքների առանձին անդամներ պետք է մեկնեն Տիգրանակերտ:

Հուսալի մարդկանց մի խումբ Զարեհի հրամանով Արտաշատում լուրեր տարածեց, թե արքայից-արքան, Տիգրանակերտը դարձնելով Հայքի քաղաքամայրը, որոշել է քանդել տալ Արտաշատի պալատներն ու արհեստավորաց տները և բոլոր արտաշատցիներին քշել նոր քաղաքամայրը: Արտաշատցիների մի մասը հավատացել է այս լուրերին: Զարեհի հրամանով փակվել է Տափերական կամուրջը:

Արդյոք շատ հեռու չի գնում արքայազնը: Իսկ եթե ճշմարտությունը հայտնի դառնա արտաշատցիներին: Բայց մի՞թե արժե ետ դառնալ կես ճանապարհից: Չէ՞ որ հիմա մարդիկ հավատում են իրեն: Ի վերջո, ով է հաշվի նստում մարդկանց հավատի հետ: Եթե վաղն ինքը արքայից-արքա դառնա՝ կհավատան միայն իրեն: Իսկ հետո՞, հետո ի՞նչ պետք է անի:

Պիտի հրաժարվի՞ Հայքի մյուս մասից, թե այն կթողնի հորն ու Արտավազդին: Ոչ, առայժմ պետք է տիրանալ թագին, մնացածը կասի Միհրդատը: Իսկ մա՞յրը, երկու եղբայրնե՞րը: Նրանք ինչո՞ւ են մնացել Տիգրանակերտում: Հավանաբար, կասկած չհարուցելու համար: Կլեոպատրան ավելի խելոք ու հեռատես է, քան աշխարհի որևէ կին:

Շշուկներ լսելով, Զարեհը դուրս եկավ գահասրահ: Այստեղ արքայազնին էին սպասում դավադիր նահապետները: Քաջունին առաջ անցավ և, խոնարհվելով Զարեհի առջև ասաց.

- Արքայազն Զարեհ, մենք համաձայն ենք քո պայմաններին, այսօրվանից մեր տերը դու ես, քեզ հռչակում ենք Հայքի արքա:

- Ես շնորհակալ եմ, նահապետներ, բայց երդումը խոսք է, խոսքը՝ ամենաշուտ մոռացվող բանը:

- Մենք արյամբ կերդվենք:

Եվ դավադիր նահապետները հանեցին իրենց դաշույնները: Նրանք թեթև կտրեցին իրենց աջ ձեռքերի ափերից և սկսեցին միմյանց ձեռքից արյուն ծծել: Այրամբ շաղախված դաշնադրության արարողությունն սկսեց արքայազն Զարեհը:

ԶՈՍԻՄԱ

Սելևկյանների քաղաքամայր Անտիոքը հայկական զորքերի կողմից պաշարվեց Հրոտից ամսի Զոպաբեր օրվա լուսաբացին: Կես միլիոն բնակիչ ունեցող Անտիոքում սկսվեց խուճապային իրարանցում: Մեծատուն մարդիկ փութացին իրենց դրամագլուխները թաքցնել ներքնատներում, արհեստավորները կողպեցին իրենց գործատները և կարևոր գործիքներն ու սարքերը պահ տվեցին ծանոթներին:

Զորականները, առանց ոգևորության ու հաղթանակի հույսի, բարձրացան բերդապարիսպների վրա: Քաղաքի բոլոր փողոցները դարձել էին բանուկ: Մարդիկ վազում էին աջ ու ձախ, կանչում միմյանց, ճչում, աղաղակում:

- Օ, Անտիոքիա, փրկիր մեզ Հայոց Ալեքսանդրից, նա դաժան է ու անողոք, նա եկել է, որ տարագիր դարձնի մեզ և ավերի մեր չքնաղ քաղաքամայրը, - բացականչում էին փողոցներով անցուդարձ անող մարդիկ և իրենց աղերսալից հայացքներն ուղղում երկինք:

- Անտիոքցիները արդեն լռել էին, որ Հայոց արքայից-արքա Տիգրանը իր գրաված քաղաքի բնակիչներին քշում է դեպի Հայոց աշխարհի խորքերը: Լսել և սպասում էին ահ ու սարսափով: Սելեկյան արքա Անտիոքոս Երկյուղածը փախել էր մայրաքաղաքից առանց դրանիկ ջոկատի, և ոչ ոք չէր կարող ասել, թե որտեղ է ապաստանել նա: Քաղաքում գտնվում էր սելևկյան մարզված բանակը, որը կարող էր դիմագրավել Տիգրանն և նույնիսկ հայկական զորքերի հետ ճակատել բաց դաշտում: Բայց Հայոց բանակի հաղթական արշավները ահով էին լցրել Միջերկրայքի բոլոր զորականների սրտերը: Անտիոքցիները չէին հավատում, թե կարելի է հաղթել հայերին, իսկ Տիգրանի անպարտելիության մասին տարածվող լուրերը բոլորովին հուսահատ էին դարձնում պաշարվող քաղաքի պաշտպաններին: Տիգրանը Ալեքսանդ Մակեդոնացի է, հայկական Ալեքսանդր, ասում էին անտիոքցիները և սպասում արքայից-արքայի դատաստանին:

Մի խումբ թիկնապահներով շրջապատված՝ զորապետներ Բագարատն ու Մեհրուժանը քաղաքամայրի բերդապարիսպներից երկու նետաձիգ հեռավորությամբ սկսեցին պտույտ տալ չորս կողմը: Անտիոքի արևմտյան մասի դարպասները ողողում էին Օրոնտես գետի ջրերը:

Հենց այս հատվածում էլ Բագարատն ու Մեհրուժանը իջան ձիերից: - Ասպետ, - Բագարատին դարձավ Մեհրուժանը, - չկրկնե՞նք այստեղ Մաժաքի ռազմեղանակը:

- Այստեղ պարիսպներն ամուր են, ու գետն ավելի լայնահուն է երևում, - պատասխանեց ասպետը և ավելացրեց. - բացի այդ, անտիոքցիները լսած կլինեն Մաժաքի մասին և նախօրոք հոգացած, որ նույնը չկրկնվի իրենց քաղաքի հետ:

- Կարծո՞ւմ ես, - ասաց Մեհրուժանը:

- Չգիտեմ, թե ինչու դու միշտ ուզում ես, որ մենք գրոհենք պաշարված քաղաքի առավել անմատչելի մատույցներով, - ժպտալով հարցրեց Բագարատը:

- Որովհետև երկար ժամանակ ամրոցները պաշարելն էլ անկարողության նշան է:

- Ես չեմ հասկանում, թե դա ինչ ռազմավարություն է, մենք պաշարում ենք և հանգիստ սպասում, թող պաշարյալը մտածի անձնատուր լինելու կամ սովամահ դառնալու մասին:

- Իսկ նա մինչ կընտրի այդ երկուսից մեկը՝ մենք կորցնում ենք:

- Ի՞նչ ենք կորցնում:

- Ժամանակը, ասպետ, դու չես զգում, որ մենք շատ ենք զբաղվում պաշարելով, իսկ տարիներն անցնում են սուրհանդակի շտապողականությամբ:

- Վահագնը վկա, ճիշտ ասացիր, Մեհրուժան, զարմանալի է, որ չեմ զգում, թե ինչպես է անցնում ժամանակը:

- Դու արդեն ծերացել ես:

- Հապա ի՞նչ էիր կարծում, հիսունս անց է:

- Դու չես մտածում ընտանիք ունենալու մասին:

- Իմ նժույգը ինձ հազիվ է մի տեղից մյուսը փոխադրում, որտե՞ղ պիտի պահեմ այդ ընտանիքը:

- Բայց քո հիսունն անց է:

- Իսկ դու էլ ոտք ես դրել չորրորդ տասնամյակը, դու ինչու չես ամուսնանում, չէ՞ որ մենք այնքան չքնաղ աղջիկներ ենք գերում, որոնցից իր տիկնունու համար Տիգրանն է ընտրություն կատարում: Դու երիտասարդ ես, գոնե մի երկու գեղեցկուհի կարող ես կնության վերցնել:

- Չեմ կարող, ասպետ:

- Ինչո՞ւ:

- Որովհետև ես սիրում եմ:

- Սիրո՞ւմ ես:

- Այո:

- Ո՞ւմ:

- Մի աղջկա, որ ապրում է Երկաթակերտում:

- Նա սպասո՞ւմ է քեզ:

- Սպասում է:

- Եվ հավատում է, որ պիտի վերադառնաս տո՞ւն:

- Հավատում է:

- Իսկ դու հավատո՞ւմ ես դրան

- Ինչի՞ն:

- Տուն դառնալուն:

- Այո:

- Այդ լավ է, Մեհրուժան, շատ լավ է, իսկ ես, ահա չեմ հավատում, իմ կյանքը կանցնի նժույգի վրա, նժույգի վրա էլ կմեռնեմ ես, իսկ արքայից-արքան ինձ կփոխարինի Բագրևանդի իմ ազգականներից մեկով: Ի՞նչ տեսա ես այս կյանքում, ոչինչ կամ համարյա ոչինչ: Սփոփիչն այն է, որ իմ կյանքն ամբողջովին նվիրաբերեցի Հայոց աշխարհին և Տիգրանին:

- Իսկ ինչո՞ւ արքայից-արքան քեզ չի հիշեցնում ամուսնանալու մասին:

- Երբ Տիգրանը խոսք է բացում այդ մասին, ես իսկույն փոխում եմ խոսակցության նյութը:

- Իսկ ես խորհուրդ կտայի քեզ այս անգամ էլ փոխեիր քո սովորությունը և վերցնեիր մեկին:

- Որտեղի՞ց:

- Այ, այստեղից, - Մեհրուժանը ձեռքը մեկնեց դեպի իր առջև փռված Անտիոքը, - ասում են Աֆրոդիտեի բոլոր երկվորյակները հավաքվել են այստեղ:

- Բայց ինչո՞ւ ինքդ չես մտածում նրանցից մեկին վերցնել:

- Ես ասացի, որ սիրում եմ:

- Ինչ անենք, երկուսին սիրիր:

- Աշխարհում ոչ ոք երկուսին չի կարող սիրել:

- Ապա ինչպես է Տիգրանը սիրում և Համասփյուռին և Կլեոպատրիային:

- Արքայից-արքան ցույց է տալիս, նա կարող է այդ երկուսից մեկին սիրել միայն:

- Դու էլ ցույց տուր, երկաթակերտցի աղջկան սիրիր, իսկ մյուսին պահիր որպես կին կամ հարճ:

- Չեմ կարող, ասպետ, ես իմ ամբողջ էությամբ սիրում եմ նրան, ով սպասում է ինձ, իսկ եթե իմ սրտում փորձեմ տեղ տալ նաև երկրորդին, դա կնմանվի... - Մեհրուժանը մի պահ կանգ առավ և մտածեց:

- Ինչի՞ն կնմանվի, - հարցրեց ասպետ Բագարատը:

- Մի բաժակ գինուն խառնիր մի բաժակ ջուր և համոզիր մարդկանց, որ երկու բաժակն էլ անաղարտ գինի է, ո՞վ կհավատա:

- Ուրեմն, ըստ քեզ, ամեն ոք միայն մեկի՞ն կարող է սիրել:

- Միայն: - Իսկ ես, ահա, ոչ ոքի չեմ սիրում, էլ ինչո՞ւ ես խորհուրդ տալիս, որ անտիոքցի Աֆրոդիտեների հետևից վազ տամ պատանու պես:

- Իսկ դա բոլորովին էլ վատ չի լինի, - քահ-քահ ծիծաղեց Մեհրուժանը, - այ թե կվազես, հա, կդառնաս իսկական պատանի:

- Զարմանալի կենսուրախ այր ես դու, Մեհրուժան, արի ավելի լավ է աղջիկների մասին չխոսենք:

Այդ ժամանակ քաղաքի բերդապահ զորապետի մոտ հավաքվել էին Անտիոքի երևելի այրերը: Պատկառելի դեմքով, ոտքից գլուխ զինավառ զորապետը, որին կոչում էին Ֆարմես, քաղաքի գլխավոր բերդապարիսպի աշտարակում անցուդարձ էր անում անհանգիստ, առանց նայելու աշտարակում հավաքված տասնհինգի չափ մարդկանց:

- Եթե Անտիոքիան մեզ չփրկի, մենք կարող ենք դիմանալ հազիվ հինգ - վեց օր, - տաքացած մենախոսում էր Ֆարմեսը:

- Զորապետ, մեր բանակը վարժված է, իսկ քաղաքն էլ մի քանի ամսվա պարեն ունի, ինչո՞ւ եք այդպես հոռետես դարձել, - ասաց հավաքվածներից մեկը:

- Իսկ դու կարծում ես, թե Տիգրանը մի քանի ամիս ձեռքերը կծալի և կսպասի՞:

- Ապա ի՞նչ պիտի անի:

- Կգրոհի ամեն օր, կգրոհի բոլոր տեղերից:

- Զորապետ, այդքան մի գերագնահատիր Հայոց ուժերը. երբ ծովում փոթորիկ է բարձրանում, կղզու բնակիչներն իրենց ջուրը չեն նետում, մտածելով, թե միևնույն է, փոթորիկը կղզին ծովի տակ կտանի, նրանք պատրաստվում են և սպասում, փոթորիկն անցնում է, իսկ կղզին մնում է այնպես, ինչպես որ եղել է, - դարձյալ խոսեց նույն մարդը, որ աշխատում էր բարձրացնել Ֆարմեսի մարտական ոգին:

- Հայերն այնքան էլ անողոք ու բարբարոս չեն, ինչքան պատկերացնում ենք մենք, - խոսակցությանը խառնվեց աշտարակի անկյունում կանգնած մի ծեր վաճառական:

Վերջինիս խոսքերը բորբոքեցին ներկաների մի մասին: Բոլոր կողմերից հարձակվեցին վաճառականի վրա:

- Այ աչքածակ, վախենում ես լաթերդ առնո՞ղ չլինի:

- Չէ, նա ուզում է Զևզմայում գործատուն բացել, որ Տիգրանին դուր գա:

- Գուցե արդեն նա Տիգրանի համար արքայական քղամիդի կտոր է առանձնացրել:

- Նա դավաճան է, ես առաջարկում եմ նրան աշտարակից նետել ցած:

- Սպասեցեք այրեր Անտիոքի, - մեջ մտավ զորապետ Ֆարմեսը, - այդ տղայական բանակռիվներով ոչ Անտիոքը կպաշտպանենք, ոչ էլ ձեզ: Քաղաքը մենք կպաշտպանենք թշնամուց, գուցե Անտիոքիան օգնի, և Տիգրանը հեռանա առանց ձեռք տալու մեզ:

Իսկ Տիգրանը բոլորովին հեռանալու միտք չուներ: Հրոտիցի Մուրց օրը Անտիոքի վրա կատարվեց առաջին գրոհը: Ապա այն կրկնվեց Երիզկան և Անի օրերին: Քաղաքի պաշտպանները բերդապարիսպներից հայկական զորքի վրա նետերի տարափ էին թափում, իսկ պարիսպներին մոտեցող փայտյա բաբանների վրա նետում վառվող կպրանյութով լցված անոթներ: Միայն Պարխարի կեսգիշերին քաղաքի արևմտյան մասով, ուր Օրոնտեսը ծառայում էր որպես ջրամբարտակ, Մեհրուժանի հրամանատարությամբ, երեք հարյուր զորականներից կազմված մի ջոկատ մտավ գետը և սկսեց կամաց-կամաց մոտենալ բերդապարիսպներին: Բազարատը հայոց բանակի հիմնական ուժերը կենտրոնացրել էր գետի մոտ և սպասում էր, որ Մեհրուժանը մտնի քաղաք ու տա առաջին ազդանշանը: Եթե Օրոնտեսի ափերը պաշտպանող մի քանի աշտարակներ անցնեին Մեհրուժանի ձեռքը, ապա հայկական բանակը կարող էր մի քանի ժամում մուտք գործել Անտիոք:

Եվ հենց այն ժամին, երբ Մեհրուժանը լողում էր Օրոնտեսի ջրերում, քաղաքի արևելյան հատվածում հայկական բանակը վերսկսեց իր գրոհը: Սակայն դա միայն Անտիոքի պաշտպանների ուշադրությունը շեղելու փորձ էր: Ֆարմեսը սուրհանդակներ ուղարկեց և մյուս բերդապարիսպներից օգնական զորքեր պահանջեց, կարծելով, թե հայերի գիշերային գրոհը արևելյան դարպասների ուղղությամբ նախապատրաստված հարձակում էր, որը զուցե չկարողանան ետ մղել այդ հատվածի վրա դիրքավորված զորականների ուժերով: Անտիոքի գլխավոր զորապետը արևելյան դարպասների մոտ կենտրոնացրեց նաև Օրոնտեսի մոտի բերդամատույցների պաշտպաններին:

Ամառային այն գիշերներից մեկն էր, երբ ամպակուտակ երկինքը երկրի վրա մթնեցնում է ամեն բան: Մեհրուժանը հայ զորականների հետ գետում լողում էր հանգիստ, անաղմուկ: Եթե մի աշտարակ կարողանան գրավել, ապա հարյուր զորականներ կսկսեն կռվել, իսկ մյուս երկու հարյուրը պետք է երկուսից-երեք ժամում քանդեն բերդապարիսպի մի անկյունից, որ Բագարատը կարողանա հայկական այրուձին մտցնել Անտիոք: Այդ նպատակով ջոկատի զորականների մեծ մասը զինվել է քլունգներով և երկաթակոթ բրիչներով:

Մեհրուժանի կողքին, լողում էր Վրույրը, որն այժմ զորապետի թիկնապահն էր: Մի ճակատամարտում նա մահից փրկել էր Մեհրուժանին և արժանացել զորապետի ուշադրությանը: Վրույրը սիրում էր Մեհրուժանին: Երիտասարդ զորապետը դուր էր գալիս նրան այն բանի համար, որ միշտ ձգտում էր թշնամուն հաղթել առանց զոհեր տալու: Իսկ ինքը՝ Վրույրը, դեռ ուզում էր ապրել: Նա երազում էր նորից տեսնել հարազատ Մրգաշատը, գրկել մոր գլուխը: Վրույրը չգիտե, թե ինչ է կատարվում իր հայրենի աշխարհում: Նա միայն զինվոր է և կռվում է թշնամու դեմ: Ով է այդ թշնամին, ինքն էլ չգիտե:

Զորապետ Մեհրուժանն ասում է, որ Սելեկյանները հայոց թշնամիներն են, և Վրույրը հավատում էր դրան: Երբեմն Վրույրը մտածում էր այն մասին, թե ինչպես կարելի է լուր ստանալ Մրգաշատից: Այ, արքայից-արքան մագաղաթներ է գրում և մի քանի օրում ուղարկում երկրի մի ծայրից մյուսը: Իսկ ի՞նչ կլինի, եթե մի այդպիսի մագաղաթ էլ գրեն իր համար, որտեղ պատմվի, թե ինչպես են ապրում ծնողները, ինչպես է իր եղբայր Սոսիկը: Բայց դե ինքը գիտե, որ աշխարհում այդպիսի բաներ չեն լինում: Զինվորի համար ո՞վ մագաղաթ կգրի, իսկ եթե նույնիսկ գրեն, ո՞վ կտանի այդ մագաղաթը Մրգաշատից մինչև Անտիոք կամ Անտիոքից մինչև Մրգաշատ: Մի անգամ զորապետ Մեհրուժանը խփել է Վրույրի ուսին և ասել. "Դու փրկել ես իմ կյանքը և հիշիր, ինչ որ խնդրես՝ կկատարեմ": Իսկ Վրույրը համեստորեն կախել է գլուխը և լռել: Ինչո՞ւ է լռել, չէ՞ որ նա կարող էր մի լավ բան խնդրել: Բայց ինչ: Այն ժամանակ նա պատրաստված չէր խելացի խնդրանքի համար: Իսկ ամիսներ հետո սկսեց մտածել, թե ինչ խնդրի Մեհրուժանից: Նա գիտեր, որ լավության համար մի անգամ խնդրելը մեղք չէ: Եվ որոշեց, որ զորապետից կխնդրի միայն մի բան՝ միջնորդել, որ իր փոքրիկ եղբայր Սոսիկը ազատվի Անահտական տաճարի ստրկությունից: Գուցե Մեհրուժանը մերժեր նրա այդ խնդրանքը, պատճառաբանելով այն ի կատար ածելու անհնարինությամբ: Միևնույն է, Վրույրը ուրիշ բան չունի խնդրելու: Եվ ամեն անգամ նա որոշում էր մոտենալ զորապետին ու ասել այդ մասին, բայց չգիտես ինչու, մեկեն փոխում էր միտքը և հետաձգում հաջորդ օրվան: Իսկ օրերն անցնում էին, դառնում ամիսներ ու տարիներ, բայց Վրույրը չէր համարձակվում Մեհրուժանին պատմել իրեն տանջող ցավը:

Հենց այսօր առավոտյան, երբ զորապետը եկավ իր մոտ և այնքան ուրախ տեսք ուներ, Վրույրը կարող էր ասել իր խնդրանքը: Սակայն որոշեց այս անգամ էլ հետաձգել: Այ, կգրավեն Անտիոքը, և այն ժամանակ նա կասի: Անպայման կասի:

Հետախույզ ջոկատը մոտենում էր Օրոնտեսի ափապատնեշ բերդապարիսպներին: Ամրոցի Օրոնտեսահայաց աշտարակներից մի քանիսում վառվող կանթեղների լույսը չէր հասնում ջրերին, և հայ զորականների գետանցը կատարվում էր աննկատ: Ահա և պարիսպները: Հետախույզները սկսեցին հավաքվել Մեհրուժանի շուրջը: Ջրից դուրս գալու տեղ չկար:

- Վրույր, - ջուրը ճողփելով, կամացուկ ասաց Մեհրուժանը:

- Լսում եմ զորապետ, - եղավ պատասխանը:

- Գործի անցիր, հանգիստ պահիր քեզ, ամենափոքր անզգուշությամբ կարող ես կործանել բոլորիս:

- Լսում եմ զորապետ:

- Դեհ, էլ մի ուշացրու:

- Իսկույն:

Գետի մեջ մի քանի հաղթանդամ հայ զորականներ վեր բարձրացրին իրենց հետ մյուս ափից բերած մի երկար գերան: Առանց աղմուկի ու հապճեպության զորականները գերանի ծայրը դեմ տվեցին բերդապարսպի պատին: Վրույրը սկսեց բարձրանալ, իսկ զորականները՝ հավաքելով իրենց ուժերը, պահում էին գերանի ուղղությունը: Վրույրը իր կողքից կապել էր երկար պարանի ծայրը: Նա պետք է բարձրանար գերանով և գաղտագողի գլխատեր աշտարակի վրա պահակող անտիոքցի զորականին: Բարձրանում էր գերանը գրկած և հիշում մանկության օրերը: Տարիներ առաջ այդպես նա բարձրանում էր իրենց գյուղի մոտ գտնվող միակ ընկուզենին: Բայց այն ժամանակ նա բարձրանում էր, որ ընկույզ քաղի և տանի Սոսիկի հետ ջարդի, իսկ հիմա այս գերանի ծայրին ընկույզի փոխարեն իրեն սպասում է Հայոց աշխարհի թշնամին:

Բայց իսկապե՞ս այդ պահակը Հայոց աշխարհի թշնամին է:

Գուցե այդ մարդը բոլորովին էլ թշնամություն չունի հայերի հետ, գուցե զորապետ Մեհրուժանը դա ասում է միայն մարտիկների արիությունը բորբոքելու համար:

Բարձրանում էր Վրույրը, և քանի մոտենում էր աշտարակի անցքին, այնքան նա հուզվում էր: Կողքից կապված պարանն էլ սկսեց ծանրացնել նրա վերելքը:

Ջրի մեջ գերանի ծայրը պահող զորականները վերև չէին նայում: Այնտեղ սպասողներին վայրկյանները ժամեր էին թվում: Պարանը դադարեց վերև ձգվել: Ուրեմն Վրույրը հասել է աշտարակին: Մի քանի րոպե հետո պարանի ծայրն սկսեց ջրի մեջ տարուբերվել: Զորականները կռահեցին, որ Վրույրը մենամարտի է բռնվել բերդապաշտպան անտիոքցու հետ: Բայց պարանի տարուբերվելը երկար տևեց: Մեհրուժանը մտածում էր երկրորդ հետախույզին բարձրացնել գերանով: Սակայն մինչ նա կորոշեր, թե հետախույզներից որն է

հարմար վերև ուղարկելու համար, բերդապարսպի գագաթից մեկը թափով ընկավ գետի մեջ: Գերանի շուրջը հավաքված հայ զորականների մոտ ջուրը ճողփած և իր գիրկն առավ զոհին: Ո՞վ էր: Անտիոքցի՞ էր, թե Վրույրը: Ոչ ոք չկարողացավ իմանալ: Եվ սկսեցին սպասել: Քիչ հետո պարանը երեք անգամ ձգվեց և իջավ: Դա Վրույրի նշանն էր: Ուրեմն նա կենդանի է: Այժմ սկսեցին բարձրանալ և գերանով, և պարանով: Մեհրուժանը բարձրացավ տասներորդը:

Առանց աղմուկ - աղաղակի, մի քանի րոպեից հետո երկու թավալում երկարությամբ բերդապարիսպների պաշտպանները նետահարվեցին կամ գլխատվեցին: Գետի մեջ սպասող հայ ռազմիկներն սկսեցին ամրոցի պարիսպների վրա բարձրանալ տարբեր տեղերից: Սակայն Մեհրուժանը իր անակնկալ հարձակման թափը չշարունակեց:

Հարմար դիրքեր գրավելով քաղաքի ներսից եկող հակառակորդին դիմավորելու համար, զորապետը հրամայեց՝ սկսել պարիսպի քանդումը: Երկու հարյուր մարդ գործի անցան: Քլունգների ու բրիչների ձայները չէին հասնում ոչ անտիոքցի մյուս պաշտպաններին, ոչ էլ քաղաքի բնակիչներին: Մթության մեջ ավելի լավ է թշնամու հետ կռվել, քան պարիսպ քանդել: Երկու մասն երկարությամբ քանդողները բրիչներով տեղահան էին անում քարերը և գլորում դեպի գետը: Դա ծանր աշխատանք էր: Մեհրուժանը զգում էր, որ գործը դանդաղ է առաջանում: Բայց ոչինչ անել չէր կարող: Սկսեցին միմյանց փոխարինել, իրենց պարտականությունը զիջելով նոր հերթափոխողներին:

Զորապետը սկսեց նայել դեպի արևելք: Գիշերն ուր որ է կվերջանա: Իսկ քանդելու գործ դեռ կար: Նա իր մոտ կանչեց Վրույրին:

- Չափիր, թե քանի կանգուն է մնում պատը:

Վրույրը հանեց մեջքին կապած փոքրիկ պարանը և սկսեց չափել:

- Զորապետ, մինչև գետին հասնելը մնացել է վեց կանգուն, - զեկուցեց Վրույրը:

- Վե՞ց:

- Ճիշտ այդպես, զորապետ, ուղիղ վեց կանգուն:

- Եթե մենք ազդանշան տանք ասպետ Բագարատին, մինչև կես ժամը նա կմոտենա քաղաքին, այդ ժամանակամիջոցում կարելի է քանդել ևս երեք կանգուն, կմնա երեքը, իսկ այդպիսի բարձրությամբ նժույգները թռչել չեն կարող, որովհետև ջրից պիտի դուրս գան, այ ուրիշ բան, եթե բաց դաշտում փորձես երեք կանգունի վրայով թռչել: Վրույր, ի՞նչ ես կարծում, արժե ազդանշան տալ:

- Որ մերոնք մոտենան բերդապարիսպներին, քանդողներն ավելի կոգևորվեն, - պատասխանեց Վրույրը:

- Կեցցես, Վրույր, դա ճիշտ է, բարձրացիր աշտարակի վրա և հրավառիր մեր կանթեղները:

- Իսկույն, զորապետ, - բացականչեց Վրույրը և արագ վազելով, գնաց հրամանն ի կատար ածելու:

Մի ժամից հետո Բագարատն ու Մեհրուժանը, քաղաքի պարիսպների աշտարակներից մեկում նստած խոսում էին իրենց անելիքների մասին:

- Շուտով լույսը կբացվի, ասպետ, իսկ մեր այրուձիու կեսն էլ դեռ քաղաք չի մտել, - ասաց Մեհրուժանը:

- Մեհրուժան, մեր զբաղված դիրքերը նեղ են՝ ճակատ բացելու համար, պետք է շարունակել բերդապարիսպների գրավումը, այլապես ցերեկով մեր գործերը կարող են դժվարանալ:

Հենց այդ պահին ներս մտավ Վրույրը և աղաղակեց.

- Զորապետ հակառակորդը...

Բագարատն ու Մեհրուժանը իսկույն դուրս եկան աշտարակից: Պաշարյալները գլխի են ընկել, որ Օրոնտեսի կողմից հայկական բանակը մտել է քաղաքամայրը: Սակայն գլխի էին ընկել ուշացումով: Պարիսպների մոտ անընդհատ ավելացող հայկական զորքերի վրա Ֆարմեսը ուղարկեց մի գունդ: Երկու կողմերի միջև սկսվեց գիշերային կատաղի նետահարություն: Անտիոքցիները ընկրկեցին: Մեհրուժանը սկսեց հետապնդել նահանջող թշնամուն: Մի նեղ փողոցում հանկարծ նրա ականջին հասավ իր կողքից վազող Վրույրի ձայնը.

- Ախ...

Անտիոքցու նետը դիպել էր Վրույրի կրծքին:

Մեհրուժանը մոտեցավ իր թիկնապահին, բայց վերջինս արդեն թավալվում էր գետնի վրա:

- Վրույր, Վրույր, - ձայն տվեց զորապետը:

- Զորապետ, ես մի եղբայր ունեմ...

Վրույրը չկարողացավ շարունակել: Նրա գլուխը պտտվեց: Ինչպես երազում, աչքի առաջ կանգնեց մայրը՝ Նվարդը, նրանից մի փոքր հեռու՝ հայրը, Սոսիկը չէր երևում...

- Վերցնել իմ անձնվեր թիկնապահի դիակը և տանել զորապետական վրանի մոտ, - հրամայեց Մեհրուժանը իր կողքին խմբված զորականներին, և ինքն իրեն ասաց. – Նա քաջ հայկազուն էր, և անտիոքցիները թանկ կվճարեն նրա մահվան համար:

Ապա պոկվեց տեղից և ամբողջ ձայնով գոչեց.

- Լսո՞ւմ եք, հայկազուն քաջեր, օն, առաջ, մահ բոլոր անտիոքցիներին:

Զորականները հետևեցին իրենց զորապետին: Մարտը կատաղի բնույթ ստացավ: Պաշարյալները ծանոթ լինելով փողոցներին ու տներին, կարողանում էին հարմար դիրքեր գրավել և նահանջել՝ առանց մեծ կորուստների: Իսկ հայկական բանակը կորուստ էր տալիս և մարտական մոլուցքի մեջ խորանում դեպի քաղաքի կենտրոնը: Շուտով Մեհրուժանը դադարի հրաման տվեց: Վերջին դիրքերում հայերն սկսեցին պաշտպանական մարտ վարել: Մեհրուժանը վերադարձավ դեպի բերդապարիսպները: Նրա դեմքը մռայլ էր:

- Դու վիրավորված ես, - Մեհրուժանի այլայլված դեմքին նայելով, հարցրեց Բագարատը:

- Ոչ, - չոր պատասխանեց Մեհրուժանը:

- Անտիոքցիները նեղում են, հասկանում եմ, Մեհրուժան, - ժպտալով ասաց ասպետը և ավելացրեց. – շուտով լույսը կբացվի, և մենք նրանց հետ ուրիշ լեզվով կխոսենք, իսկ դու մի մտածիր, և այդքան էլ մի վտանգիր կյանքդ, թե չէ երկաթակերտցի աղջկա սպասումներն ի չիք կդառնան:

- Ասպետ, իմ թիկնապահը զոհվեց:

- Ո՞ր թիկնապահը, - հարցրեց Բագարատը:

- Նա, որ Զնգմայում փրկեց իմ կյանքը:

- Վրո՞ւյրը:

- Այո:

- Կորցնում ենք Մեհրուժան, մեր լավ այրերին կորցնում ենք այս հեռավոր քաղաքում:

- Նա քաջազն էր, ասպետ, մեռնելուց առաջ էլ ինչ-որ եղբոր մասին էր խոսում, բայց կիսատ թողեց իր խոսքը, այդպես էլ չիմացա, թե ինչ էր ուզում ասել:

- Ո՞ր գավառից էր:

- Ստույգ գավառը չգիտեմ, բայց գիտեմ միայն, որ Այրարատ աշխարհից էր, - պատասխանեց Մեհրուժանը:

- Գուցե ցանկանում էր ասել, որ իր եղբորը կանչես, որպեսզի փոխարինի իրեն, - հարցրեց ասպետ Բագարատը:

- Գուցե:

- Ամառային օրվա առավոտը Անտիոքի վրա բացվեց ծանրորեն: Քաղաքի պաշտպանության օղակը ճեղքած հայկական բանակը պատրաստվում էր ամբողջ թափով գրոհելու: Սակայն զորապետ Ֆարմեսը հրամայեց աշտարակների վրա բարձրացնել անձնատուր լինելու դրոշը:

Զորապետ Ֆարմեսը պարտավոր էր քաղաքի բանալիները տանել հայերի զորապետական կայանը: Սակայն նա վախենում էր: Չէ՞ որ Անտիոքը դիմադրել է, իսկ այդ դիմադրության հրամանատարը ինքը՝ Ֆարմեսն է եղել: Կների՞ արդյոք Հայոց Տիգրանը: Այդպիսի դեպքերում սովորաբար գլխատում են զորապետներին, իսկ Ֆարմեսն ուզում էր ապրել: Այս խորհրդածություններով տարված, չգիտես որտեղից, նրա գլխում առկայծեց մի հետաքրքիր միտք, որի հետ կապեց կենդանի մնալու իր բոլոր հույսերը:

Աֆրոդիտեն Անտիոքում շատ երկվորյակներ ունի: Բայց նրանցից առաջինը համարում են զորապետ Ֆարմեսի դուստր Զոսիմային: Տասնութամյա այս չքնաղ գեղեցկուհին մերժել ու մերժում է իր ձեռքը խնդրող բոլոր այրերին և սպասում, որ օրերից մի օր իր մոտ կբարեհաճեն նույնիսկ աստվածները: Չարիք չէ, երբ կինը գիտակցում է իր գեղեցկությունը: Սարսափելին այն է, երբ նա ապրում է միայն այդ գիտակցությամբ: Զոսիման ավելի շատ նաժիշտներ ուներ, քան Հռոմի իմպերատորի կամ արևելքի արքայից-արքաների առաջին կանայք: Այդ նաժիշտները, սակայն, զբաղված չէին Զոսիմայի արտաքին բարեմասնությունների պակաս

կողմերն արհեստականորեն շտկելու գործով: Զոսիմայի գեղեցկությունն անթերի էր: Բայց զորապետի դստեր նաժիշտներն օրնիբուն հանգիստ չունեին: Նրանց պարտականությունն էր գովել Զոսիմայի գեղեցկությունը: Հավաքվում էին գեղեցկուհու ննջարանում, և նաժիշտներից մեկն ասում էր. "Աֆրոդիտեն նախանձով կնայի քո չքնաղագույն դեմքին": Մյուս նաժիշտն ավելացնում էր. "Զոսիմա, քո այտերը նման են երկնի ճերմակափրփուր ամպերին": Երրորդը շարունակում էր. "Զասիմա, դու նման ես մայր Օրոնտեսի անբիծ փրփուրներից ծնված հավերժահարսի":

Զորապետի դուստրը ոսկեզօծ բազմոցին անփութորեն փռված, լսում էր իր նաժիշտներին ու ժպտում երանության աշխարհին ընկած: Իսկ նաժիշտները պարտավոր էին ամեն օր նրա գեղեցկությանն արժանի նոր հոմանիշներ հայտնաբերել: Եթե մեկը փորձեր կրկնել իր կամ ընկերուհիների նախորդ օրերին ասված խոսքերը, ապա կստանար Զոսիմայի շառաչուն ապտակը և տեղնուտեղը դուրս կվռնդվեր զորապետի ապարանքից:

Եվ հիմա Ֆարմեսը մտածում էր քաղաքամայր Անտիոքի բանալիները հաղթողին հանձնել Զոսիմայի ձեռքով: Չէ՞ որ Զոսիման հայերի կատաղությունը մեղմելու անզուգական սպեղանի է: Մի քանի րոպե խորհելով, Ֆարմեսը կշռադատեց իր անելիքը և, դուրս գալով բերդապարիսպի զորապետական աշտարակից, քայլերն ուղղեց դեպի իր առանձնատունը, որը գտնվում էր քաղաքի կենտրոնում:

Լույսը բացվելուց երկու ժամ հետո Բագարատն ու Մեհրուժանը լսեցին շեփոնահարների անսովոր մի նվագ: Նեղ փողոցով հայերի զորապետական կայանին էր մոտենում քսան-քսանհինգ մարդուց բաղկացած մի թափոր: Առջևից քայլում էին շեփոնահարները, ապա նրանց հետևում էր դեսպակի վրա բազմած Զոսիման: Շրջազգեստի քղանցքները դուրս էին ընկել դեսպակի նախշավոր կողերի արանքներից: Դեսպակը տանում էին չորս հաղթանդամ զորականներ: Դեսպակի հետևից քայլում էին Զոսիմայի ութ նաժիշտները, ապա մի քանի զորականներ:

Բագարատը ուշադիր նայեց եկվորներին և դարձավ Մեհրուժանին:

- Վահագնը վկա, զորապետ, սրանք ասես հարսանիքի լինեն դուրս եկած:

- Այս անգամ, ասպետ, սրանք երկու բանալի են բերում, ինձ թվում է, որ երկաթյա բանալին կտանք Տիգրանին, իսկ...

- Սպասիր, Մեհրուժան, նրանք մոտենում են, - ընկերոջ խոսքերն ընդհատեց ասպետ Բագարատը:

Զորապետ Ֆարմեսի պատվիրակությունը, իրոք մոտեցավ հայկական դրոշ կրող բերդաշտարակի բակին և կանգ առավ: Բագարատն ու Մեհրուժանը իջան աստիճաններից և մի խումբ թիկնապահներով ընդառաջ գնացին եկողներին:

Դեսպակի վրա Զոսիման ոտքի ելավ: Նա իր հրապուրիչ դեմքը ուղղեց Բագարատին և ասաց.

- Անտիոքը անձնատուր է լինում ամենահաղթ հայկական սրի առաջ: Զորապետ Ֆարմեսը ներում և խաղաղություն է խնդրում զորապետ Բագարատին և նրան հանձնում քաղաքամայր Անտիոքի բանալիները:

Զոսիման կռացավ և դեսպակի բազրիքից կախած ծանր բանալիների փունջը մեկնեց ասպետին: Սակայն այդ պահին Բագարատն ուրիշ բանի մասին էր մտածում: Իր առջև կանգնած գեղեցկուհին գրավել էր նրա ուշադրությունը: Իսկ ինչ կլինի, եթե նա կնության վերցնի այս գեղեցկուհուն: Սա կարող է մրցել Կլեոպատրիայի և Համասփյուռի հետ: Դե, իհարկե, կարելի է, Մեհրուժանն ամենից շատ կուրախանա:

Եվ մինչ Բագարատը խորհում էր այդ մասին, Զոսիման շարունակեց. - Զորապետ Ֆարմեսը հույս ունի, որ Հայոց զորապետները աստվածային մեծահոգություն պիտի ցուցաբերեն և խնայեն մարդկանց ու քաղաքը:

- Անտիոքում ոչ ոք չի գլխատվի, - Զոսիմայից բանալիներն ընդունելով, ասաց Բագարատը:

- Դու խոստանո՞ւմ ես ձեռք չտալ իմ հորը՝ Զորապետ Ֆարմեսին և Անտիոքի մյուս երևելի անձանց, - հարցրեց գեղեցկուհին:

Գեղեցկուհի, Անտիոքում ոչ ոք չի գլխատվի, հայերն ամենից շատ ատում են կրկնությունը և իրենց խոսքից ետ կանգնելը, - մեղմ պատասխանեց Բագարատը:

- Եվ դուք չե՞ք ավերի մեր քաղաքը, - նորից խոսեց Զոսիման:

- Անտիոքը գեղեցիկ է, իսկ հայերը պաշտում են գեղեցկությունը:

- Ես համոզված եմ, որ դու չես դրժի քո ասպետական խոսքը, - Զոսիման գայթակղիչ ժպիտով նայեց Բագարատին:

- Երդվում եմ Վահագն աստծու և արքայից-արքա Տիգրանի անունով, որ հայերի մուտքը բոլորովին էլ չի խանգարի Անտիոքի անդորրը, - պատասխանեց Բագարատը:

- Մեհրուժանը սկսեց քթի տակ ծիծաղել: Երբեք նա չէր տեսել, որ Բագարատը այսքան մեղմ խոսեր պարտվողի հետ: Այս աղջիկն ըստ ամենայնի դուր է եկել ասպետին, անցավ Մեհրուժանի մտքով: Եվ զորապետն սկսեց խորհել, թե ինչ կերպ կարելի է այս գեղեցկուհուն մոտեցնել Բագարատին: Մեհրուժանը համոզված էր, որ եթե արքայից-արքան տեսներ սրան, անպայման կվերցներ իր տիկնունու համար: Բայց առայժմ Տիգրանն այստեղ չէր:

Նա իր շքախմբով հավանաբար Անտիոք կժամանի մի քանի օր հետո:

Մի փոքր մտածելով, Մեհրուժանը խառնվեց խոսակցությանը:

- Ինչպե՞ս է քո անունը, - հարցրեց նա:

- Զոսիմա, - լսվեց պատասխանը:

- Լավ անուն է, գեղեցիկ է, ինչպես իր տիրուհին:

Զոսիմայի դեմքը շառագունեց:

- Սիրուն Զոսիմա, դու պետք է մնաս մեզ մոտ որպես պատանդ, մինչև մեր զորքերը կտիրեն քաղաքին, - ասաց Մեհրուժանը:

Աղջիկը մի պահ մտածեց և ժպտալով ասաց.

- Դու չե՞ս հավատում զորապետ Ֆարմեսի խոսքերին:

- Հաճելի չէր լինի, որ աշխարհում հավատ ընծայվեր բոլոր խոսքերին, քանի որ հաճախ սուտն ու ճշմարտությունը բարեկամանում են, իսկ ինքդ գիտես, որ Օրոնտեսը կարող է ավելի շուտ ետ հոսել իր հունը, քան մարդը կհաշտվի այդ բարեկամության մտքի հետ, - ասաց Մեհրուժանը:

- Լավ, - ասաց աղջիկը, - զորապետ Ֆարմեսի դուստրը Անտիոքի համար ոչինչ չի խնայի, թող ձեր ասածը լինի:

***

Անտիոքը ամբողջովին անցավ հայերի ձեռքը: Ֆարմեսի զինաթափված զորականները ցրվեցին տները: Բազարատը քաղաքամայրում հաստատեց գիշերային և ցերեկային պարեկություն: Քաղաքացիների անհանգստությունն ու սարսափը կամաց-կամաց տեղի տվեց, և Անտիոքի կյանքը մտավ իր սովորական հունը: Արհեստավորաց տներում ու շուկաներում սկսվեց առօրյա եռուզեռը: Սակայն ասպետ Բազարատը Զոսիմային բաց չթողեց տուն: Քաղաքում սկսեցին խոսել այն մասին, որ Հայոց զորավարը սիրահարվել է Անտիոքի Աֆրոդիտեին և պատրաստվում է ամուսնանալ նրա հետ:

Այդ լուրերն ամենից շատ ուրախացրեց զորապետ Ֆարմեսին: Չքնաղ Զոսիման այդպիսի ամուսնությամբ իր բարձրության վրա կպահեր հոր հեղինակությունն ու անունը: Մնացած անտիոքցիներին չէր հետաքրքրում, թե Զոսիմայի ամուսնությունը ինչ օգուտ կբերի Ֆարմեսին կամ իրեն՝ Զոսիմային: Յուրաքանչյուրն իր ցավն ուներ:

Անտիոքում, այնուամենայնիվ, կար մեկը, որի ցավը հենց Զոսիման էր: Այդ մարդը քաղաքի դրամատան կառավարիչ Բեֆորեսն է: Քսանհինգամյա այդ երիտասարդը ճարպիկ ու գործունյա մարդու համբավ ուներ ողջ Անտիոքում: Բեֆորեսը գեղեցիկ տղամարդ էր: Եվ չնայած մի քանի անգամ ստացել էր Զոսիմայի մերժումը, բայց և այնպես քաղաքում քայլում էր գլուխը բարձր պահած: Նրա սլացիկ հասակին մի առանձին վեհություն էր տալիս այն հոյակապ քղամիդը, որ նա ուսերին գցած, դուրս էր գալիս դրամատնից, անցնում Անտիոքի գլխավոր փողոցով, ապա քայլերը դանդաղեցնում զորապետ Ֆարմեսի ապարանքի առջև և նոր գնում տուն:

Բեֆորեսը երբեք չէր վախենում արքայից-արքա Տիգրանից: Նրա համար միևնույն էր, թե ում պատվերը կկատարի իր դրամատունը: Զուլածո դրամների վրա թող Սելեկյան իշխողի փոխարեն լինի Հայոց տիրակալի պատկերը: Ի՞նչ է կորցնում Բեֆորեսը դրամաձուլական կաղապարները փոխելով: Նրան հետաքրքրում էր իր շահույթը: Իսկ Տիգրանի հարստությունների մասին առասպելներ էին պատմում: Ուրեմն Բեֆորեսը կարող էր Հայքի այս ամենազոր տիրակալի հաշվին այնքան ոսկի կուտակել, որ Զոսիմային ձեռք բերելը այլևս դժվարություն չէր լինի: Դրամատան կառավարիչը ծանոթ էր զորապետ Ֆարմեսի դստեր բոլոր նաժիշտների հետ:

Նաժիշտները հույս էին տալիս Բեֆորեսին, իսկ վերջինս նրանց վարձատրում էր առատորեն: Սակայն քաղաքի գրավումը հայերի կողմից, Զոսիմայի պատանդ մնալը զորապետ Բագարատի մոտ, կարծես տակնուվրա արին Բեֆորեսի հաշիվները: Նա բոլորովին չէր հաշտվում այն մտքի հետ, որ Անտիոքի չքնաղ Աֆրոդիտեն կարող էր դառնալ մի նժդեհի կին: Ինչ անենք, թե այդ նժդեհը զորապետ է և այն էլ հաղթող բանակի զորապետ: Ինքը՝ Բեֆորեսն էլ դրամի զորապետ է: Ո՞րն է ավելի հզոր, զենքի զորապետը, թե՞ դրամի: Ախր, Բեֆորեսը կարող էր իր ոսկիներով հիսուն Բագարատ գնել, ինչո՞ւ դա չի ուզում հասկանալ Զոսիման: Եվ մի՞թե այդ չքնաղ էակը կհամաձայնի ամուսնանալ ծերուկ Բագարատի հետ:

Ասպետ Բագարատն այդ ժամանակ մտածում էր, թե ով պետք է իր մասին խոսի Զոսիմայի հետ: Մի ներքին ձայն Բագարատին թելադրում էր շտապել: Չնայած Տիգրանը իր մանկության և ռազմական կյանքի ընկերն էր, բայց և այնպես նա արքայից-արքա էր ու Զոսիմային տեսնելուց հետո ամեն ինչ կմոռանար: Եվ ասպետը շտապում էր այնպես լուծել գործը, որ Տիգրանը Անտիոք մեկնելուց Զոսիմային տեսնելու հնարավորություն չունենա: Հենց այս մտքերի հետ, ասպետը զորապետական կայանի իր առանձնասենյակում անցուդարձ էր անում, երբ թիկնապահ զորականը ներս մտավ և ասաց.

- Զորապետ, Անտիոքի դրամատան կառավարիչ Բեֆորեսը խնդրում է իրեն արժանացնել քո տեսությանը:

- Թող ներս գա, - անտարբեր պատասխանեց Բագարատը և նստեց պատուհանի տակ դրված բազմոցին:

Իր շքեղ քղամիդի քղանցքները փռփռացնելով, ներս մտավ Բեֆորեսը և հրացայտ հայացքը հառելով ասպետին, կանգ առավ սենյակի կենտրոնում ու գլուխը թեթևակիորեն հակեց ներքև:

- Ես լսում եմ քեզ, - այցելուին ոտքից գլուխ չափելով խոսեց Բագարատը:

- Ես Անտիոքի դրամատան կառավարիչ Բեֆորեսն եմ:

- Շատ ուրախ եմ քեզ տեսնելու համար, պատվելի Բեֆորես: Դու դժգոհելու ոչինչ չես ունենա կարծեմ, որովհետև ես հրաման եմ տվել իմ զինվորներին ձեռք չտալ դրամատանը:

- Քո հրամանը կատարվում է սրբությամբ, զորապետ Բագարատ:

- Այդ դեպքում ինչ է հետապնդում քո այցելությունն ինձ մոտ:

- Ես եկել եմ քեզ մոտ մի շահավետ գործարքի համար և ուզում եմ առանձին խոսել:

- Այս առանձնասենյակում դու տեսնում ես, որ ինձնից ու քեզնից բացի ուրիշ ոչ ոք չկա:

- Ես ուզում եմ ասել, թե մեզ չե՞ն կարող ունկնդրել:

- Ոչ, պատվելի Բեֆորես, ազատ զգա քեզ և պատմիր, թե ինչ գործարքի մասին է խոսքը:

- Թույլ տուր ազատ լինել և շրջանցել նման խոսակցությունների համար համեմունքի դեր կատարող բոլոր շեղումները:

- Ես հարգում եմ քո անկեղծությունը, Բեֆորես, խոսիր, բազմոցի վրա ուղղվելով, ասաց Բագարատը:

- Զորապետ Ֆարմեսի դուստրը քո գերին է, - ասաց դրամատան կառավարիչը:

- Նա գերի չէ, Բեֆորես, այլ պատանդ և կազատվի այն օրը, երբ քաղաքում ամբողջովին վերահաստատվի խաղաղությունը:

- Իսկ Անտիոքում այդ խաղաղությունն արդեն վերահաստատվել է:

- Մեզանից յուրաքանչյուրը յուրովի է ընկալում այն:

- Դու թույլ տվեցիր, որ ես անկեղծ խոսեմ:

- Ես կարող եմ կրկնել, որ հարգում եմ քո անկեղծությունը:

- Զորապետ, Զոսիման քո գերին է, ես խնդրում եմ ասել նրա փրկագինը:

- Ո՞վ է քեզ լիազորություններ շնորհել զորապետ Ֆարմեսի դուստրը դրամի ուժով ազատելու համար:

Դրամատան կառավարիչը մի տխուր հոգոց հանեց և լուռ նայեց ասպետ Բագարատի դեմքին:

- Դու չպատասխանեցիր իմ հարցին, ո՞վ է քեզ այդպիսի լիազորություններ շնորհել:

- Իմ սիրտը, - կտրուկ պատասխանեց Բեֆորեսը և, ասպետի առջև կանգնած, այնպիսի դիրք ընդունեց, որ ասես ուսերից թոթափել է մի ծանրություն: Բագարատը դառն ժպտաց և, հայացքը շեղելով մի կողմ, հարցրեց. - Իսկ դու այդքան կարողություն ունե՞ս նրան ազատելու համար:

- Դու միայն ասա նրա փրկագինը, և մինչև մի ժամ դրամը կլինի քո առջև:

- Ասպետ Բագարատը իր կյանքում մարդ չի վաճառել:

- Զորապետ, ես Զոսիմայի համար տալիս եմ հիսուն տաղանդ ոսկի:

Բագարատը լուռ խորհում էր:

- Դա քի՞չ է, - աչքերը փայլեցնելով, նորից խոսեց Բեֆորեսը, - ես պատրաստ եմ ավելացնելու դրա չափը, հը՞, տվեցի վաթսուն, - մի փոքր լռելուց հետո ավելացրեց. – հը՞, յոթանասուն... ութսուն... իննսուն... հարյուր:

- Լռիր, լռիր, թշվառական, հարյուր տաղանդ ունենալով հանդերձ դու մի փերեզակի հոգի ունես, - զայրույթից աչքերը դրամատան կառավարչին ուղղելով և բառերը ծանրորեն արտաբերելով, խոսեց Բագարատը, բազմոցից և նայեց Բեֆորեսի այլայլված դեմքին, - լռիր և շտապիր հեռանալ այստեղից, քանի դեռ ուսերիդ աշտարակը կանգուն է, լսո՞ւմ ես, - ասպետը վեր կացավ բազմոցից և նայեց Բեֆորեսի այլայլված դեմքին,

- Նա իմ կինն է, և եթե Անտիոքի բոլոր մարդկանց էլ վաճառես, չես կարող լրացնել նրա փրկագինը: Եվ դու, խեղճ արհեստավոր, մի՞թե չես լսել, որ զորապետ Բագարատը աշխարհում ոչ մի բան փողով չի վաճառի, դե դուրս այստեղից...

- Ես, ես, - դրամատան կառավարչը սկսեց կմկմալ և այնպես կուչ գալ իր գեղեցիկ քղամիդի մեջ, որ ասես արքունիքի ծաղրածու լիներ արքայի առջև՝ արքայի դեր կատարելիս:

Բեֆորեսը հայոց զորապետական կայանից դուրս եկավ բորբոքված ու մոլեգնած: Նա զգաց, որ Զոսիման իր համար դարձավ բոլորովին անմատչելի: Բոլոր հույսերը չքացան միանգամից: Վերջ, Ֆարմեսի դուստրը և Անտիոքի զարդը ասպետ Բագարատի սեփականությունն է, և աշխարհի ոչ մի դրամատան կառավարիչ այն գնել չի կարող: Բայց ինքը, Բեֆորեսը, չէր կարող հանդուրժել նվաճող հայի անպատվությունը: Նրա սրտում սկսեց սաղմնավորվել վրեժի որդը; Այո, նա վրեժ կլուծի Բագարատից և Զոսիմայի համար, և իր անպատվության, և ողջ Անտիոքի համար: Միայն մի սխալ կատարեց, Զոսիմայի համար այդպիսի դրամագին նշանակելով: Հիմա Բագարատը գիտե, որ Բեֆորեսը հարյուր տաղանդ ոսկի ունի: Բայց չէ՞ որ նա կարող է մի փոքրիկ ջոկատ ուղարկել և հաղթողի իրավունքով կալանավորել Բեֆորեսին ու տիրանալ նրա հարստությանը՝ առանց Զոսիմային ձեռքից տալու: Այդ հպարտ հայը կարող է դրամատան կառավարչին նշավակել նույնիսկ հրապարակորեն: Հավանաբար արքայից-արքա Տիգրանի առջև Բագարատը կչարախոսի Բեֆորեսի մասին, և դրամատունը կանցնի հայերի ձեռքը: Բանից պարզվում է, որ ինքը միայն Զոսիմային չկորցրեց:

Ողջ գիշերը Բեֆորեսը չկարողացավ փակել աչքերը, իսկ հաջորդ օրը Անտիոքում ամենից շուտ բացվեցին դրամատան դռները:

Բեֆորեսը, փայլացնելով իր խորամանկ աչքերը, տնտղեց դրամատան հալոցամաններն ու կշեռքները և մոտեցավ պատուհանի տակ թաքնված կաղապար-դրվագներին: Մեկ-մեկ զննեց դրանք և հառաչելով շշնջաց.

- Մնաք բարով, իմ հարազատ Սելևկյան արքաներ, դուք անկարող եղաք երկարակյաց դարձնելու այս կաղապարներն ու ձեր իշխանությունը: Այժմ պիտի դուք ներեք, որ ես դրվագելու կաղապար եմ ձուլում Հայոց Տիգրանի համար:

Ապա Բեֆորեսը կաղապարներից մի քանիսը վերցրեց և տեղավորեց եռոտանի աշտանակի վրա ու գործի անցավ: Նախ կավի, հետո փխրուն մետաղակտորի վրա նա սկսեց եռանդուն աշխատանք տանել: Եվ միայն երրորդ օրը Բեֆորեսին հաջողվեց իր ցանկացած մտահղացումը մարմնավորել մետաղյա կաղապարի վրա: Գործավորները վառեցին կրակօջախը, հալոցքի ամաններում Բեֆորեսը թափեց ընտիր մետաղի բեկորները: Իրիկնադեմին դրամատան կառավարչը իր սենյակում նստած դիտում էր օրվա աշխատանքի արգասիքը: Ահա փոքրիկ, փայլուն դրամի վրա Անտիոքիան պճնվել է բազմաճալ շրջազգեստի մեջ, գլխին դրել Անտիոքի տիրակալ արքայից-արքա Տիգրանին: Վերջինս իր գլխին դրել է ճաճանչավոր խույրը, որի տակից երևում էին վզկալն ու ականջակալը:

Առաջին հաջողությունը չթուլացրեց Բեֆորեսի թափը: Նա սկսեց նորանոր կաղապարներ պատրաստել հաղթող Տիգրանի անունով: Մի դրամի վրա Օրոնտես գետում կանգնած Անտիոքիան պարուրվել է զարդարված շրջազգեստի մեջ, լայն ուսակալով, ատամնավոր թագը գլխին, արմավենու ճյուղը հաղթող Տիգրանին է կարկառում ժայռի գագաթից:

Բեֆորեսն իր հաշիվներն ունի, և որքան ավելանում էին նոր կաղապարները այնքան թափ էր առնում նրա աշխատասիրությունը: Դրամատան կառավարիչը երազում էր շահել հաղթող Տիգրանի սերը:

Նա Հայոց արքայից-արքային կներկայացնի այդ նոր դրամների նմուշները և կպատմի նրան, որ բացի Անտիոքիա աստվածուհուց՝ Անտիոքում կա նաև մի ուրիշ աստվածուհի, որին ճանկել է զորապետ Բագարատը: Տիգրանն անպայման կցանկանա տեսնել Զոսիմային, իսկ որ տեսավ, Բագարատն ստիպված կլինի մեկընդմիշտ հրաժարվել նրանից:

***

Արքայից-արքա Տիգրանի մուտքը Անտիոք վերածվեց հաղթահանդեսի: Քաղաքի բոլոր նշանավոր մարդիկ շտապեցին Հայոց գահակալին ներկայանալ թանկարժեք նվերներով: Հաղթող Արտաշեսյանի շքախումբը Սելևկյանների մայրաքաղաքը մտավ Հրոտիցի Սեին օրը: Արքայական դրանիկ գնդի սրնգահարներն ու թմբկահարները Տիգրանից մի նետաձիգ հեռավորությամբ առաջ ընկած, հաղթանվագով ավետում էին հաղթողի մուտքը քաղաք: Սելևկյանների քաղաքամայրում գտնվող հայկական բանակը մարտական շարքերով իր հսկողության տակ էր առել բոլոր փողոցներն ու խաչմերուկները:

Տիգրանը գնում էր ռազմակառքին բազմած: Նա փաթաթվել էր արքայական պատմուճանի մեջ, գլխին դրել բազմաժանիք շրջանակով խույրը: Գլուխը վեր պահած, նա իր վեհատեսիլ դեմքը չէր թեքում աջ ու ձախ: Իսկ անտիոքցիներն իրենց բացականչություններով արժանին էին մատուցում հաղթողին: Շքախումբը կանգ առավ զորապետ Ֆարմեսի ապարանքի առջև: Հենց այստեղ էլ նա սկսեց ընդունել անտիոքցիներին: Արքայից-արքային խոր գլուխ տալով և, ոսկեզօծ, պատյանավոր սուրը նրա ոտքերի տակ դնելով, զորապետ Ֆարմեսը բավական բարձրաձայն ասաց.

- Անտիոքը խոնարհվում է Հայոց հզոր աստծու՝ արքայից-արքա Տիգրանի առջև:

Բոլոր անտիոքցիները ուրախության զգացումով են դառնում Մեծն Տիգրանի հպատակները: Ես քեզ եմ հանձնում, ով հզոր տիրակալ, իմ սուրը և իմ այս մեծ ապարանքը, որ ամենագեղեցիկ ապարանքն է քաղաքամայր Անտիոքում:

Տիգրանը ժպտաց և ասաց.

- Քո նվիրվածությունն ու անկեղծությունը կհատուցվի ըստ արժանավույն, զորապետ Ֆարմես:

Հետո շարքով սկսեցին արքայից-արքայի ռազմակառքին մոտենալ մյուս անտիոքցիները: Փայլակ Մարդպետունին Տիգրանին ընծայվող իրերն ու պիտույքները դասավորում էր ռազմակառքի կողքին: Վերջապես մոտեցավ նաև Անտիոքի դրամատան կառավարիչը: Բեֆորեսը ոսկյա մատուցարանի վրա Հայոց տիրակալին մեկնեց իր դրամները: Տիգրանն սկսեց մեկ-մեկ նայել դրանք և լսել Բեֆորեսի բացատրությունները: Արքայից-արքան շոյվեց: Բոլոր նվերների մեջ ամենից թանկագինը Բեֆորեսի դրամներն էին: Արքայից-արքան մտադիր էր Անտիոքը գրավելուց հետո հատել տալ այսպիսի դրամներ, որոնք խորհրդանշեին Հայքի և Մեծն Տիգրանի իշխանությունը Սելևկյան երկրների վրա: Այս դրամները հատողը

կարծես թե կռահել է Տիգրանի ցանկությունը: Ավելի լավ, պետք է ոգևորել պարտվողի արտակարգ, Հայքին ձեռնտու հաճկատարությունը:

- Ո՞վ է պատրաստել այս դրամները, - հարցրեց Տիգրանը, աչքը չհեռացնելով պսպղուն մետաղներից:

- Հայոց ամենազոր աստծու խոնարհ հպատակը, որին կոչում են Բեֆորես, - պատասխանեց Բեֆորեսը և մի քանի անգամ գլուխ տվեց Տիգրանին:

- Անտիոքը հրաշալի դրամներ ունի, - հաճոյախոսեց արքայից-արքան:

- Այո, տեր, ես այդ դրամատան կառավարիչն եմ:

- Բեֆորես, դու կմնաս այդ տան կառավարիչը և մինչև կյանքիդ վերջը կբազմացնես այս դրամների բոլոր նմուշները:

- Լսում եմ, իմ ամենազոր տեր, դու զոհ կլինես իմ աշխատանքից:

- Ո՞վ է արմավենու ճյուղը բռնած այս դիցուհին, - հարցրեց Տիգրանը:

- Անտիոքիան, Սելևկյանների Անահիտը, արքայից-արքա, - պատասխանեց Բեֆորեսը և մի փոքր մտածելով ավելացրեց. - Անտիոքիայից բացի մեր քաղաքամայրը մի ուրիշ դիցուհի էլ ունի:

- Ո՞վ է այդ դիցուհին:

- Զորապետ Ֆարմեսի դուստրը:

- Ի՞նչ է նրա անունը:

- Զոսիմա, իմ տեր:

- Որտե՞ղ է հիմա այդ դիցուհին:

- Ասպետ Բագարատը բանտել է նրան, - ասաց Բեֆորեսը և կարծես իր անելիքը համարելով վերջացրած, մի կողմ կանգնեց:

- Ասպետ Բագարատ, - ձայնեց արքայից-արքան:

- Լսում եմ, արքայից-արքա, - ռազմակառքին մոտենալով, ասաց Բագարատը;

- Ճի՞շտ է ասում դրամատան կառավարիչ Բեֆորեսը, դու բանտե՞լ ես զորապետ Ֆարմեսի դստե՞րը:

- Ես միայն նրան պատանդ եմ վերցրել, արքայից-արքա, և սպասել մինչև քո գալուստը, հրամայիր, և հենց հիմա Զոսիման ազատ կարձակվի:

- Բերել այստեղ այդ աղջկան, - հրամայեց Տիգրանը:

- Իսկույն, տեր իմ, - դժկամորեն ասաց Բագարատը:

Բայց հենց այդ պահին զորապետ Մեհրուժանը դարձավ նրան.

- Ասպետ, դու սպասիր, ես ինքս կգնամ Զոսիմայի հետևից:

- Ճիշտ է ասում, Բագարատ, - հավանություն տվեց արքայից-արքան, - դու սպասիր, իսկ դու Մեհրուժան, շտապիր գեղեցկուհուն ներկայացնել իմ տեսությանը:

Մեհրուժանը թռավ իր նժույգի վրա և, մի քանի թիկնապահներով, ճեղքելով բազմությունը սլացավ դեպի զորապետական կայանը: Նա ասպանդակում էր իր նժույգը և մտածում Բագարատի մասին: Այն պահին, երբ Բագարատը արքայից-արքային խոստացավ ներկայացնել Զոսիմային, Մեհրուժանի գլխում փայլատակեց մի միտք: Չթողնել, որ արքայից-արքան տեսնի Զոսիմային: Ինքը կգնա զորապետական կայան և ետ դառնալով կզեկուցի, որ Զոսիման հիվանդ է և Տիգրանի մոտ գալ չի կարող: Ախր ինչո՞ւ պետք է այդպես ստացվեր: Մեհրուժանն այնքան շտապեցնում էր, իսկ ասպետը Զոսիմայի հետ իր ամուսնանալը հետաձգում էր ամեն օր: Տես, թե որքան խորամանկ էր այդ Բեֆորեսը: Եվ արժանացավ Տիգրանի բարեհաճությանը, և վրեժխնդիր եղավ Բագարատից: Իսկ ասպետն էլ Բեֆորեսին խելքից զուրկ երիտասարդ էր համարում: Այնուամենայնիվ ինքը՝ Մեհրուժանը կշտկի դրությունը, իսկ Բեֆորեսի հետ կարելի է հաշիվ մաքրել հետո: Հիմա հարկավոր է Զոսիմային հեռու պահել արքայի տեսադաշտից, այնուհետև ամեն ինչ կարելի է հարթել հեշտությամբ:

Հասնելով քաղաքի արևմտյան ծայրամասում գտնվող բրգավոր աշտարակին, Մեհրուժանը իջավ ձիուց և, թիկնապահներին թողնելով ներքև, բարձրացավ աշտարակի աստիճաններով:

Զորապետական կայանի լավագույն սենյակը Բագարատը առանձնացրել է Զոսիմայի ու նրա նաժիշտների համար: Սենյակի մուտքի մոտ պահակող հայ զորականները, տեսնելով զորապետ Մեհրուժանին, զգաստացան իրենց տեղերում: Պահակներին հրամայված էր, որ Մեհրուժանից բացի, ոչ ոք չպետք է մուտք գործի Զոսիմայի մոտ:

Մեհրուժանը դուռը թակեց ու ներս մտավ: Փափուկ գահավորակի վրա Զոսիման բազմել էր հպարտորեն և լսում էր իր նաժիշտներին:

Մեհրուժանի՝ առանձնասենյակ մտնելուն պես, նաժիշտները մի կողմ կանգնեցին:

Օրիորդ, ես պետք է առանձին խոսեմ ձեզ հետ, - ասաց Մեհրուժանը առանց շտապելու:

Զոսիման գլխով արեց, և նաժիշտներն անցան կողոթյակը:

- Հայերն իրենց դեռ խաղաղ չե՞ն զգում Անտիոքում, - առաջինը խոսեց Զոսիման:

- Օրիորդ, մի՞թե դա քեզ ավելի շատ է հետաքրքրում, քան այն, ինչ պիտի ասեմ ես:

- Ինձ հետաքրքրում է իմ ազատությունը, և ինչ էլ դու ասես, չի կարող փոխարինել իմ ազատության ավետիքին:

- Օրիորդ, ասպետ Բագարատը սիրում է քեզ, - միանգամից ասաց Մեհրուժանը:

- Ասպետ Բագարա՞տը, - աղջիկը մի փոքր կախեց իր գեղեցիկ գլուխը և թեք հայացքով նայեց Մեհրուժանին:

- Այո, ասպետ Բագարատը:

- Զարմանալի է, - ասաց Զոսիման:

- Ի՞նչն է զարմանալի:

- Որ զորապետներն էլ են ընդունակ ստելու, Բագարատը խոստացել է ազատել ինձ, հենց որ քաղաքում խաղաղություն հաստատվի, իսկ հիմա էլ ապսպրում է, որ սիրում է ինձ, սա զարմանալի չէ՞ քեզ համար, զորապետ Մեհրուժան, ասեք գուցե Հայոց աշխարհում ընդունված է, որ երևելի այրերը դրժեն իրենց խոսքը, համենայն դեպս Անտիոքում այդպիսի բան չի լինում:

- Օրիորդ, մի պահ պատկերացրու, որ դու ազատ ես, միայն խնդրում եմ ասա քո համաձայնությունը, որովհետև քո և ասպետի ամուսնությունը պետք է կատարվի շատ շուտով:

- Զորապետ, ես դեռ չեմ տվել իմ համաձայնությունը, իսկ դու խոսում ես ամուսնության ժամկետի մասին:

- Հասկացիր օրիորդ Զոսիմա, կան հանգամանքներ...

- Ինձ չեն հետաքրքրում քո հանգամանքները, ես չեմ սիրում քո Բագարատին և ընդհանրապես չեմ սիրում ոչ ոքի, ոչ էլ կամուսնանամ մեկի հետ:

- Օրիորդ, խորհուրդ եմ տալիս քեզ մտածել այդ մասին, - վրա տվեց Մեհրուժանը և, չլսելով համառ անտիոքուհու պատասխանը, շտապ դուրս եկավ առանձնասենյակից:

Մի քանի րոպե հետո նա կանգնած էր արքայից-արքա Տիգրանի առջև:

- Տեր իմ, օրիորդ Զոսիման իրեն վատ է զգում և ցավում է, որ չի կարող արժանանալ քո աստվածային տեսությանը, - ասաց Մեհրուժանը՝ լուրջ տեսք տալով դեմքին:

Բագարատը հասկացավ և իր շնորհապատ հայացքն ուղղեց Մեհրուժանի կողմը: Զորապետ Ֆարմեսը, որ ռազմակառքի մոտ կանգնած, անխոս դիտում էր անտիոքցիների երթը հաղթողի առջևով, լսելով Մեհրուժանի խոսքերը, անհանգստացավ և քայլերն ուղղեց Բագարատի կողմը:

Ասպետ, ես խնդրում եմ քեզ, թույլ տուր տեսակցել դստերս հետ, դու լսեցի՞ր թե ինչ ասաց զորապետ Մեհրուժանը, - խղճահար դեմքը Բագարատին ուղղելով, ասաց Ֆարմեսը:

Եվ մինչ Բագարատը մտածում էր, թե ինչպես պատասխանի զորապետ Ֆարմեսին, նրանց մոտեցավ Մեհրուժանը և դառնալով Ֆարմեսին ասաց.

- Զորապետ, քո դստեր գլուխը մի փոքր ցավում էր և, երևի, հիմա անցած կլինի, դու կարող ես բոլորովին հանգիստ լինել:

Զոսիմային Տիգրանից հեռու պահելու Մեհրուժանի և Բագարատի ձեռնարկումներն արդյունք չտվին: Արքայից-արքան ինչ-որ բան կռահեց, թե որևէ մեկն օգնեց նրան, անհայտ մնացին Բագարատին ու Մեհրուժանին:

Տիգրանն անձամբ գնաց զորապետական կայան և տեսավ Զոսիմային: Զորապետ Ֆարմեսի դստեր հետ զրուցելուց հետո արքայից-արքան գլխի ընկավ, որ Բագարատը մտադրվել էր անտիոքցի գեղեցկուհուն կնության վերցնել:

Հայոց աշխարհի արքայից-արքայի և ասպետ Բագարատի բարեկամության նավը, ասես ընդծովյա խութի հանդիպելով, խարիսխ ձգեց: Զորապետ Ֆարմեսի ապարանքի դահլիճներից մեկում արքայից-արքան առանձնացավ ասպետ Բագարատի հետ:

- Ասպետ, մենք միասին ենք մեծացել և միասին էլ ապրել այն տանջանքն ու խնդությունը, որ աստվածները բաժին են տվել մեզ, - խոսեց արքան և ժպտաց Բագարատին:

- Իրավ է, արքայից-արքա, մեր մտերմությունը զոդված է Հայոց աշխարհի բոլոր աստվածների ցանկությամբ, - պատասխանեց ասպետը:

- Արդ, ցանկանում եմ իմանալ, իմ սիրելի ասպետ, թե ի՞նչն է ստիպել քեզ վերջին ժամանակներս դառնալ գաղտնապահ:

Վահագնը վկա, ես քեզնից երբեք ոչինչ չեմ թաքցրել:

- Երևի դա քո առաջին սուտն է, որ հասնում է իմ և Հայոց աստվածների ականջներին:

- Դու կատակում ես արքայից-արքա:

- Ոչ, ասպետ, ես չեմ կատակում:

- Ապա՞:

Ապա ուզում եմ պատասխանես, թե ինչու օրիորդ Զոսիմային բանտել ես իզուր, որը կարող է անտիոքցիներին հրահրել մեր դեմ, մեր թշնամիներն այնքան էլ քիչ չեն, ուրեմն խելացի չէր լինի բարեկամների բանակում էլ թշնամանք առաջացնել:

- Արքայից-արքա և իմ տեր, ես խնդրում եմ լսել ինձ: Իմ ողջ կյանքը ես նվիրաբերել եմ քեզ և Հայոց աշխարհին:

Քեզ՝ Արևելքի հզորագույն վեհապետիդ սպասում է երկար կյանք և աստվածային ծերություն, իսկ ես միայն զինվոր եմ, և հեռու չէ այն օրը, երբ պիտի հրաժեշտ տամ այս աշխարհին: Բայց ես չէի ցանկանա, որ արքայից-արքա Տիգրանի կողքին, իմ մահից հետո, չկանգներ ասպետ Բագարատի ժառանգը և Հայոց մեծ գահակալին ծառայեր այնպես, ինչպես իր հայրն է ծառայել:

- Դու ուզում ես ամուսնանա՞լ Զոսիմայի հետ, - հարցրեց Տիգրանը:

- Այո, արքայից-արքա, ես ուզում եմ:

- Բարի իմ ասպետ, ես սրտանց ուրախ եմ, բայց դա կարող էիր ասել շուտ:

- Ես սովոր չեմ մարդկանց ներկայությամբ խոսել իմ մասին:

- Թող այդպես լինի, ես չեմ առարկում, և քանի որ դու միշտ եղել ես իմ լավ ընկերն ու բարեկամը, ապա ես ցանկանում եմ, որ քո կողակիցը լինի քաղաքակիրթ և աստվածասեր:

Պայմանավորվենք այսպես, Բագարատ, Զոսիմային ես կուղարկեմ Տիգրանակերտ, նա տիկնաց-տիկին Կլեոպատրայի մոտ կապրի մի ժամանակ և կծանոթանա մեր երկրի սովորություններին: Կլեոպատրան Զոսիմային կդարձնի իսկական հայուհի: Մեր նոր քաղաքում պիտի հավաքվեն տերության երևելի այրերն ու տիկնայք: Դու չե՞ս ցանկանում, որ Տիգրանակերտը գեղեցիկ լինի ոչ միայն իր կառույցներով, այլ նաև իր բնակիչներով ու բնակչուհիներով: Եվ բացի այդ, Զոսիման զորապետ Ֆարմեսի դուստրն է: Իսկ Ֆարմեսը այնքան էլ հանգիստ մարդ չէ, ինչպես ներկայացնում է իրեն: Զոսիմայի Տիգրանակերտում մնալը կզսպի նրան, և Անտիոքում խաղաղությունը կդառնա հարատև: Իսկ մեր բանակը շուտով կշարժվի դեպի Փյունիկե:

- Այդ դեպքում ի՞նչն է խանգարում, որ Զոսիման ես ինձ հետ տանեմ Փյունիկե:

- Բայց դու պետք է մնաս այստեղ, ասպետ:

- Այստե՞ղ:

- Այո:

- Ուրեմն ես չպե՞տք է լինեմ իմ արքայից-արքայի կողքին, - Բագարատի դեմքը այլայլվեց:

- Ասպետ, քեզ նշանակում եմ Անտիոքի կառավարիչը:

- Տեր իմ, ես կուզեի դառնալ քո դրանիկ զորականներից մեկը, քան մնալ այստեղ:

- Բագարատ, դու մնում ես իմ թագադիր ասպետը, Փյունիկեի արշավանքը այնքան էլ երկար չի տևի, և հավանաբար մեր բանակը առանց կռվի գրավի այդ երկիրը: Իսկ Անտիոքը մեզ համար հույժ կարևոր դիրք է: Քո՝ Անտիոքի կառավարիչ դառնալու առթիվ ես Անտիոքը հռչակում եմ Հայոց աշխարհի քաղաքամայր:

- Իսկ Տիգրանակերտը կլինի Հայոց աշխարհի քաղաքամայրերի երեց քաղաքամայրը, իսկ Անտիոքն ու Արտաշատը՝ նրա երկու թևերը:

- Միանգամից երեք քաղաքամա՞յր:

- Այո, Բագարատ, Հայոց աշխարհը շատ է մեծացել, Արտաշատը հեռու է Անտիոքից, իսկ Անտիոքն ու Արտաշատը մոտիկ են Տիգրանակերտին

- Տեր իմ, մի՞թե արքայական տնից մեկ ուրիշը չկա Անտիոքում տնօրինելու համար:

- Ասպետ, իմ նախորդները Բագրատունիներին համարել են արքայական տան հարազատ անդամներ, մի՞թե դա այդպես չէ: Եղբորս՝ Գուրին, ես կառավարիչ եմ նշանակել Մծբինում: Նա իր երեք հազար հայկական զորքով կպահի Միգդոնայի Միջանցքը, իսկ դու կմնաս այստեղ և քեզ հետ կվերցնես հինգ հազար այրուձի: Մեհրուժանին էլ վաղը կուղարկեմ Ծոփք:

- Մեհրուժանին չպետք է բաց թողնել, նա անփոխարինելի զորապետ է, տեր իմ, Հայոց բանակն իր հաղթությունների համար շատ բանով է պարտական նրան:

- Դա ես գիտեմ, ասպետ, բայց Ծոփքում խլրտումներ են գնում, Մեհրուժանը պիտի դառնա և այնտեղ անդորր հաստատի: Ուրեմն նա էլ Ծոփքի՞ կատավարիչ է դառնում:

- Այո ասպետ:

Մի քանի օր հետո արքայական դրանիկ գնդի մի փոքրիկ ջոկատի ուղեկցությամբ Զոսիման գնաց Տիգրանակերտ: Հենց նույն օրն էլ հայկական յոթանասունվեց հազարանոց բանակը դուրս եկավ Անտիոքից և շարժվեց դեպի հարավ: Բայց այստեղ Տիգրանի ճանապարհը կտրեց Անտիոքոս Երկյուղածի կինը՝ Սելենե թագուհին: Միջերկրայքի գեղեցկության այս աստվածուհին համոզված էր, որ արքայից-արքա Տիգրանը կնության կառնի իրեն, և նա կդառնա հզոր Հայքի տիկնանց-տիկինը: Սելենեն իր դեսպանին ուղարկեց Տիգրանի մոտ: Արքայից-արքան լսեց նրան և պատասխանեց.

- Հայոց աշխարհում ընդունված չէ, որ ամուսնության առաջարկով հանդես գա կինը: Եվ ապա, պատշաճ չէ, որ Հայքի արքունիքում երկու տիկնանց-տիկին լինի Կլեոպատրիա անունով: Իսկ ամենակարևորը, դեսպան, ես հաղթել եմ Սելևկյաններին, և Սելենե թագուհին իմ գերին է, ես կարող եմ նրան իմ հարճը դարձնել, եթե ցանկանամ: Դու կարո՞ղ ես իմ խոսքերն անաղարտ վիճակում հաղորդել քո թագուհուն:

- Անշուշտ արքայից-արքա, - պատասխանեց դեսպանը, - բայց քո վճիռն արդար չէ:

- Ինչո՞ւ:

- Նա հիմա քո գերին չէ:

- Եթե այսօր նա չհանձնվի, ես վաղը կգերեմ նրան:

- Նա թռչուն կդառնա, արքայից-արքա, և դու չես հասնի նրա հետևից: - Դեսպան, հաղորդիր նրան միայն իմ խոսքերը:

ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՕՂԱԿԸ

Տիգրանակերտի կենտրոնում, բարձր պարիսպների օղակում, երկու քարաշեն տներ, ասես միմյանցից խռոված, մեջքով կպել են իրար:

Պարիսպների այդ օղակն ու տներից մեկը հինգ տարի առաջ կառուցել էր Նիգ գավառի նահապետը: Իր դաստակերտը նա հանձնել էր քսանամյա որդուն՝ Վաչուտին, իսկ ինքը վերադարձել հայրենի գավառը:

Նոր քաղաքում Վաչուտն սկսեց ձանձրանալ: Ամեն օր նա գնում էր արքայական զինագործատունը և մի քանի ժամ լսում հույն վարպետին, որն ամեն ինչի մասին հաճույքով պատմում էր, բացի բաբան կառուցելու գաղտնիքից: Հետո Վաչուտը պտտվում էր հույների թաղամասում, աչքի պոչով նայում գեղեցիկ աղջիկներին ու քայլերն ուղղում դեպի տուն:

Մի անգամ, սակայն, Տիգրան արքան իր այցելությամբ փարատեց Վաչուտի ձանձրույթը: Նիգցի երիտասարդի համար բոլորովին անսպասելի, Տիգրանը, ասպետ Բագարատի ուղեկցությամբ, մտավ դաստակերտը, աչք ածեց չորս կողմը և դարձավ Վաչուտին.

- Վատ չէ, հայր ու տղա իսկական ամրոց եք պատրաստել, տեսնո՞ւմ ես, Բագարատ, ինչպես են պարսպապատել, իսկ մենք չենք հասցնում ամբողջ քաղաքը շրջափակել, բայց

երևում է, որ նիգցիներն իրենց ոտքերը շատ լայն են մեկնել: Այս ընդարձակ տարածության վրա կարելի է մի ուրիշ տուն էլ կառուցել, չէ՞, երիտասարդ նահապետ:

- Իհարկե, կարելի է արքայից-արքա, - ժպտալով պատասխանեց Վաչուտը:

- Ինչքան ժամանակ է, որ այստեղ ես, - հարցրեց արքան:

- Մեկ տարի:

- Եվ ի՞նչ ես անում:

- Սովորում եմ բաբան կառուցելու արհեստը:

- Լավ է, հը՞, Բազարատ, դա շատ լավ է, - ապա նորից դարձավ Վաչուտին. - դու քանի եղբայր ունես:

- Հինգ:

- Եվ ի՞նչ գիտեն նրանք:

- Նժույգավարել:

- Տեսնո՞ւմ ես, Վաչուտ, ձեր աղխը միայն նժույգավարներ կարող է տալ, իսկ Հայքին պետք են նաև զինագործներ և ամեն տեսակ արհեստավորներ: Եթե մեր աշխարհում յուրաքանչյուր վեց եղբայրներից մեկը հույների պես մի արհեստ իմանա, ապա տերությունը կլինի հզոր ու անպարտելի: Սովորիր, նահապետ, բաբան կառուցելը, այնպես սովորիր, որ քո որդիներին ինքդ սովորեցնես, և նրանք չդիմեն օտարի օգնությանը:

Այս դեպքից մի քանի օր հետո պարիսպների օղակում սկսեց իր նոր տունը կառուցել սոլիցի շինարար Մարատակոսը: Կարճահասակ, ջլապինդ մարդ էր գաղթականը, որ աշխատում էր նաև գիշերները:

Վաչուտի ապարանքը նայում էր դեպի Արարատյան աշխարհը, իսկ Մարատակոսինը՝ դեպի Միջերկրայք: Շենքերն իրար կպան միայն մեջքով: Այդպես վարվեցին նաև նրանց տերերը, որոնց հարևանությունը սովորական ողջույնից այն կողմ չգնաց: Նրանք իրար միայն հանդիպում էին պարիսպների օղակից դուրս բերվող հսկա, կամարակապ դռանը: Շուտով հայտնվեց նաև երրորդ բնակիչը՝ ստրուկ Սոսիկը, որը տեղ զբաղեցրեց Մարատակոսի տան ներքնահարկում:

Պարսպապատ օղակի բնակիչներից յուրաքանչյուրն իր հոգսերն ուներ: Վաչուտը երազում էր Նիգի կանաչապատ ձորերի մասին, կարոտում հայրենական կալվածքը: Նա չէր կարողանում տանել ոչ բաբանագործ հույնին, ոչ էլ իր հարևաններին Մարատակոսին ու Սոսիկին: Հայրը, լսելով, որ Տիգրան արքան պարսպապատ օղակի մեջ տեղ է հատկացրել նաև ուրիշի, ապսպրեց որդուն՝ համբերությամբ սպասել, և եթե պատեհ առիթը ներկայանա՝ վաճառել ամեն ինչ ու վերադառնալ տուն:

Մարատակոսը հիշում էր իր հայրենի քաղաքը՝ ծովափնյա Սոլին: Եվ չնայած նա այնտեղ ոչինչ չէր թողել, չնայած Տիգրանակերտում նա ավելի շքեղ տուն էր կառուցել, քան շատ մեծատուն սոլիցիներ, այնուամենայնիվ ամեն օր նա մտքով թափառում էր Մեծ ծովի ափերին:

Մարատակոսը վաղ առավոտյան դուրս էր գալիս տնից և գնում Խուլփի բլուրների մոտ: Այստեղ մի քանի ուրիշ վարպետների հետ, նա զբաղված էր Տիգրանակերտի մեծ թատրոնի շինարարությամբ: Արքայից-արքան հազար ստրուկ էր տվել վարպետներին: Երկու բլուրների արանքում կառուցել էին երրորդ, արհեստական բլուրը: Բլրալանջերին աղեղի պես ձգվում էին քարե նստարանները: Կոր շարքերով բլուրների ստորոտից սկսվում էին և մինչև գագաթները բարձրանում յոթանասուն նստելատեղ-շարքերը: Վերջին օրերին Մարատակոսը աշխատում էր արհեստական բլուրի վրա: Հուշասյան վրա պիտի բարձրացնի չորս ջրաղացքարի մեծությամբ արևի ժամացույցը: Ստրուկները շալակով հող էին բերում, լցնում բլուրի կատարին, ապա հսկա քարը հրում հողի վրայով: Երբ կլորակ սալաքարը հասցրին հուշասյան վրա և երկաթյա գամերով ամրացրին նրան, ստրուկների համար նոր աշխատանք բացվեց. պետք է նորից շալակել նույն հողը և տանել բլրի ստորոտը: Երկու օր հետո բացվեց հուշասյունը, որի գլխին թառել էր արևի վիթխարի ժամացույցը: Սալաքարի կենտրոնում Արեգ աստծու ոսկեձույլ դիմաքանդակն էր: Արեգը ձեռքին հորիզոնական դիրքով բռնել էր ոսկեզօծ մի նիզակ: Արևաճաճանչ տասներկու գծեր կլորակ քարը բաժանում էին տասներկու հավասար մասերի: Արևը դուրս գալիս՝ ոսկեզօծ նիզակը շվաք է նետում գծերի վրա և ցույց տալիս օրվա ժամը: Այդ հսկա սալաքարը Մարատակոսը տաշել է երկու ամսվա ընթացքում:

Քաղաքում խոսում են այն մասին, որ արքան սպասում է թատրոնի շինարարության ավարտին, որից հետո մեծ հաղթահանդես կլինի, և շատ ընծաներ կստանան բոլոր շինարարները:

Մարատակոսի պատրաստած արևի ժամացույցը ամենից շատ դուր էր եկել արքայազն Արտավազդին, որը հաճախ էր հայտնվում բլուրների մոտ: "Մեր ժամացույցը, - Մարատակոսին ասել է Արտավազդը, - եզակի է: Այն գիշերներն անգամ լուսնի տակ ցույց է տալիս ժամանակի գնացքը: Ներկայացումներին բոլոր դերասանները, կատակերգուները, կաքավիչներն ու վարձկանները բլուրների ստորոտում կառուցված բեմից կդիտեն ժամացույցը և կորոշեն, թե ինչքան ժամանակ հետո պիտի դուրս գան հանդիսատեսի առջև": Հետո արքայազնը գովել է Մարատակոսի ճարտարությունը և երկու ոսկի ու ստրուկ Սոսիկին նվիրել նրան:

Եվ այնուամենայնիվ Մարատակոսը չէր հավատում Տիգրանակերտի բախտին: Նա համոզված էր, որ պարսպապատ օղակը չի կարող հայրենիք դառնալ այն բազմահազար մարդկանց համար, որոնց սպառնալիքի տակ այստեղ է հավաքել հզոր Տիգրան արմենը:

Մի օր բլուրների ստորոտում, բեմահարթակի համար քար հղկելու ժամանակ, մոտակա կողոթյակից Մարատակոսը լսեց այնպիսի խոսքեր, որոնք նրան համոզեցին, որ Տիգրան արքան իր մտքի սլաքը ավելի հեռու է նետում: Արքայազն Արտավազդն ու զորապետ Մամիկը կողոթյակում զրուցում էին իրար հետ:

- Հավատա, զորապետ, բեմն էլ ճակատամարտի վայր է, որտեղ քո գաղափարներով պայքարի ես ելնում հանդիսատեսի խոհերի ու զգացմունքների հետ: Կռվի դաշտում միշտ չէ, որ հաղթում է զորավարի հանճարը, բայց բեմում, երբ իրար միահյուսվեն դրամայի հեղինակի ու դերասանի հանճարը, կարելի է հաղթել:

- Քո "Հայոց Մեծը" դրաման առաջինն այստե՞ղ պիտի ցուցանեն, թե Արտաշատում:

- Այստեղ: Դու դարձյա՞լ պնդում ես քո առարկումները:

- Այո, արքայազն:

- Զորապետ, բոլոր մեծերի վերելքի ժամանակ ներքին հակադիր ուժերն այնպես են կուչ գալիս, որ նրանց չես կարող բարձրացնել դիմադրող կերպարի մակարդակին:

- Բայց հորդացած գետը կարող է վտակ տալ:

- Ուզում ես ասել, որ Հայքում ներքին դավաճանություն կարող է լինել:

- Այո:

- Դա կնշանակի, որ վերելքն արդեն հասել է իր ավարտին: Հաճելի չէր լինի, զորապետ, որ Հայոց հորդացած գետը վտակ տար կամ փոխեր իր հունը: Մենք պետք է հետևենք, որ վարարած ջրերը Հայոց գետի հունը խորացնեն: Չէի ցանկանա, որ մեր վերելքի գետը վտակ տար և դառնար դրամայի նյութ:

- Մամիկը շուռ տվեց խոսքը.

- Իսկ քո նոր դրաման արդեն պատրա՞ստ է:

- Այո Մամիկ, հենց հիմա դերասանները կփորձեն առաջին արարը, ուշադիր եղիր և եթե շտկելու տեղեր գտնես, հայտնիր անվարան, չէ՞ որ իմ գրածը նվիրված է մեր նոր քաղաքամայրի առաջին բնակիչներին, որոնցից ենք ես և դու: - Ապա արքայազն Արտավազդը դարձավ մեկին. - Էյ Վարշակ, կարո՞ղ ես սկսել փորձը:

- Այո, արքայազն:

- Դե, սկսեք:

- Քիչ հետո Մարատակոսը լսեց հետևյալը:

- Ասա ինձ, Մարկոս, դու կարո՞ղ ես իմ բոլոր հարցերին պատասխանել այնպես, որ պարտք չմնաս խղճիդ առջև:

- Իսկ դու, Վահագն, աստվածդ հայոց, չե՞ս գտնում որ այդ դեպքում քո աչքում կդառնամ քստմնելի անձ:

- Հազիվ թե, Մարկոս, աստվածները գիտեն ներել:

- Եթե այդպես է, ես պատրաստ եմ, հարցրու:

- Ո՞րն է քո հայրենիքը:

- Որտեղ ծնվել եմ ես:

- Իսկ որտե՞ղ ես դու ծնվել:

- Մեծ ծովի ափին:

- Դու զավակ ունե՞ս

- Այո:

- Նա որտեղ է ծնվել:

- Այստեղ, Տիգրանակերտում:

- Ո՞րն է նրա հայրենիքը:

- Տիգրանակերտը:

- Ինչո՞ւ ես ուզում փախչել Մեծ ծովի ափը:

- Որովհետև այնտեղ եմ ծնվել ես:

- Ուրեմն դու ուզում ես զրկվել քո զավակից:

- Օ, ոչ, Վահագն, ես չեմ կարող առանց նրան ապրել:

- Բայց նա չի ուզում թողնել Տիգրանակերտը:

- Նշանակում է ես էլ չեմ կարող գնալ:

- Մարատակոսը շարունակությունը չլսեց, հավանաբար կողոթյակի դուռը փակեցին: Բայց սոլիցին երկար ժամանակ մտմտում էր ինքն իրեն. "Ահա թե ինչ, հիսուն տարի հետո պարսպապատ Տիգրանակերտում ծնունդ կառնի մի նոր սերունդ և կասի, որ իր հայրենիքը Տիգրանակերտն է: Գուցե այդ սերնդին հարազատ լինի Տիգրան արքայի շրջափակող օղակը, այնուամենայնիվ ինքը չի սիրում այս քաղաքը և անձկությամբ կբռնի տան ճամփան, եթե բարեբախտ մի պատահար պատռի այդ օղակը":

***

Տիկին Համասփյուռն իր սպասավորներով տեղավորվել էր նոր մայրաքաղաքում կառուցվող միջնաբերդի անավարտ բաժիններից մեկում, իսկ Կլեոպատրան իր տնօրինության տակ էր առել քաղաքից դուրս կառուցված արքայական շքեղ ապարանքը: Տիկնանց-տիկինը օրական երկուսից-երեք անգամ մտնում էր պալատի մարմարակերտ բաղնիքը, պառկում ոսկեզօծ տաշտի մեջ և գրգանում: Տաշտի մեջ շարված բազմաթիվ սրվակներից, փոքրիկ ընդմիջումներով, Քասիման հոտավետ ծաղկեջուր էր հեղում տաշտի մեջ և լսում, թե ինչ է ասում իր տիրուհին:

- Քասիմա, աշխարհում ամենալավ բանը ծաղկաջրով լոգանքն է, ես այնպիսի երանություն եմ զգում, այնպիսի երանություն, որ արտաքո հաճույքից քիչ է մնում ներեմ քուրմ Նորայրի հիմար փափագը,- ժպտում է գեղեցկուհին և նշան անում նաժիշտին, որ վերջինս ձեռքի սրվակի պարունակությունն ամբողջությամբ պարպի տաշտի մեջ:

Նորելուկ քաղաքամայրի շինարարությունը ամենևին չէր հետաքրքրում Կլեոպատրային: Արքայական հոյակապ պալատն արդեն պատրաստ էր, և տիկնանց-տիկինը հանգիստ կյանք էր վայելում այնտեղ:

Տիգրանակերտը տարեցտարի կլանում էր Հայոց աշխարհի բանող ամենաորակյալ ուժերը: Իրենց հայրենի գավառներից տարագիր դարձած նահապետները դժգոհում էին բացեիբաց:

Առավել դժգոհ նահապետները Այրարատ աշխարհից էին, որոնք այս նոր քաղաքամայրի կառուցումը համարում էին մեծ Արտաշատի փառքի ոտնահարումը: Սակայն արքայից-արքան գտնվում էր Փյունիկեում և չէր կարող լսել նահապետներին ու պատժել նրանց:

"Փյունիկեում Տիգրանը կծերանա", ասում էին Հայոց աշխարհում: Հայկական բանակը պաշարում էր ծովափնյա ամրոցները, կորցնում երկար ժամանակ, հետո կատաղի գրոհով առնում դրանք, դադար տալիս ու շարունակում նոր ամրոցներ պաշարել:

Սելենեն թռչունի պես ոստնում էր մի քաղաքից մյուսը, և Տիգրանի ձեռքը չէր հասնում նրան:

Մի օր արքայից-արքան Մեծ ծովի ափին դիմավորեց Արտաշատից եկած սուրհանդակին: Վերջինս Տիգրանին մեկնեց մի քանի ոսկյա դրամներ: Դրամների վրա պատկերված էր նրա որդու՝ Զարեհի դիմանկարը, շուրջանակի՝ "արքայից-արքա" մակագրությամբ: Դրամը կտրվել էր Արտաշատի փողերանոցում:

Ահավոր գույժը կարծես արքայից-արքային համրեցրեց: Դողացող ձեռքերում դրամները բռնած՝ Տիգրանը հայացքը հառեց կողքին կանգնած զորապետին:

ՄԻ ԽՓԻՐ ԱՉՔԴ, ԵՐԲ ՎԱՌՎՈՒՄ Է ՀԱՐԵՎԱՆԻԴ ՏՈՒՆԸ

Տիկնանց-տիկին Կլեոպատրան ջերմորեն դիմավորեց Միհրդատ Եվպատորի դեսպան Մետրոդորին:

- Իմ բարի և լավ ուսուցիչ, որքան հաճելի է նորից հանդիպել ու լսել քեզ: Արդեն քսան տարուց ավելի է, ինչ չեմ տեսել քեզ: Պատմիր, իմաստասեր, ինչպե՞ս են Պոնտոսում փչում հովերը, ինչպե՞ս է հայրս: Կլեոպատրա, հորդ գործերը լավ չեն, Լուկուլլոսը ավերում է Պոնտոսը, հայրդ միայնակ չի կարողանում դուրս վռնդել անամոթ հռոմեացուն: Նա ինձ Տիգրանի մոտ է ուղարկել և օգնող զորք է խնդրում Հայքից:

- Սուրհանդակները ասում են, որ Տիգրանը դուրս է եկել Փյունիկեից և այսօր կամ վաղը կհասնի քաղաքամայր: Նա կօգնի, պատվելի Մետրոդոր, չի կարող չօգնել, որովհետև այդպես է խոստացել նա ինձ:

- Սակայն ոչ Կլեոպատրան և ոչ էլ Մետրոդորը չգիտեին, որ արքայից-արքան Տիգրանակերտ է գալիս, իր հետ բերելով որդու դավաճանության անխոս վկաները՝

Արտաշատի փողերանոցում կտրված դրամները, որ նա Տիգրանակերտ է բերում կուտակած մի զայրույթ՝ թափելու համար Կլեոպատրայի ու Պոնտոսի գլխին:

Արքայից-արքայի շքախումբը Տիգրանակերտ մտավ գիշերով: Ապարանքի մուտքի մոտ Տիգրանին դիմավորեց հազարապետ Փայլակ Մարդպետունին: Նրանք անձայն բարձրացան արքայական մարմարակերտ ննջարանը: Տիգրանը հանեց ծիրանին, նետեց գահավորակի վրա և նստեց օրորալով: Մարդպետունին դռան մոտ սպասեց այնքան ժամանակ, մինչև արքայից-արքան կհրավիրեր նրան: Մի պահ նրան թվաց, թե Տիգրանը քնով անցավ, բայց չհամարձակվեց առաջանալ: Հազարապետը հենվեց դռանը, որի ճռռոցը ուշքի բերեց արքայից-արքային:

- Մոտ արի, Փայլակ, պատմիր առանց շտապելու, մի վառիր կանթեղը, թող պալատում ոչ ոք չիմանա, որ այս պահին ես արթուն եմ:

- Քո հրամանն առա թե չէ, - սկսեց Մարդպետունին, - ես իսկույն մեկնեցի Արտաշատ: Վատ դիմավորեց ինձ Զարեհը: Նա գոռաց ինձ վրա և ասաց. "Հը՞, ինչ է, չե՞ս կարողանում Տիգրանակերտում հանգիստ նստել, թե՞ կարծում ես քո թոռը՝ Արտավազդը, պիտի գահ բարձրանա: Շտապիր հեռանալ այստեղից, եթե չես ուզում կյանքիդ մնացած մասը թողնել հանցանաց խուցում: Ես դուրս եկա Խոր Վիրապից և շրջեցի քաղաքում: Ամեն տեղ խաղաղություն էր:

- Ովքեր են միացել անարժան արքայազնին, - հազարապետին ընդհատեց Տիգրանը:

- Կոգովիտի, Ճակատքի, Արագածոտնի, Բասենի, և Կոտայքի նահապետները:

- Շարունակիր Փայլակ:

Մարդպետունին պատմեց, թե խոռվարարներն ինչպես են համատեղ երդվել՝ նեցուկ դառնալ արքայազն Զարեհին:

- Եվ ավելի վատաբարո տեղեկություն հասավ իմ ականջին, արքայից-արքա, - ասաց հազարապետը, - Պոնտոսից սուրհանդակներ են գալիս Զարեհի մոտ:

- Ես կանխազգում էի այդ, - Տիգրանը թափով բարձրացավ գահավորակից և մոտեցավ պատուհանին:

Լուսնի լույսի տակ Մարդպետունին տեսավ արքայից-արքայի խռովահույզ դեմքը:

- Խորամանկ Եվպատորը, - Տիգրանի ձայնը հազիվ էր հասնում հազարապետին: - Շտապում ես Հայոց գահի վրա տեսնել թոռա՞նդ, որ ինչ թելադրես, նա կատարի առանց երկար ու բարակ դատելու: Դրա համա՞ր ես Կլեոպատրային կնության տվել ինձ: Թե՞ կարծում ես, որ Տիգրանն արդեն ծերացել է և չի կարող իր գլխի վրա պահել Արտաշեսյան խույրը: Ես էլ եմ մեղավոր, ինչո՞ւ պիտի թույլ տայի, որ քո ձեռքը հասներ մինչև Արտաշատ: Բայց ես այնպես կայրեմ այդ ձեռքը, որ դու ցավագար ճիչով այն ետ քաշես Հայքից և մտքիցդ բոլորովին հանես դեպի այս կողմերը նորից երկարելու մասին: Իսկ դու Զարեհ, որ վրդովեցիր ծերությունն այն մարդու, որը քեզ համար պատրաստում էր աշխարհի ամենապատվաբեր թագը, դու, Զարեհ, անարժան որդիդ Մեծն Տիգրանի, իրավունք չունես այսուհետև ապրելու և շնչելու հայկական օդը: Ներիր ինձ Արամազդ, ներեցեք ինձ և դուք աստվածներդ Հայոց, գուցե մոտ է նաև իմ մահը, բայց ես չէի ցանկանա այս աշխարհից հեռանալ այդպիսի անպատվություն ուսած: Դու այստե՞ղ ես, Փայլակ, կանչիր զորապետ Մամիկին, վերցրեք մի բյուր այրուձի և մեկնեցեք Արտաշատ, մեկնեցեք հիմա, քանի դեռ չի բացվել լույսը, որ իմ աչքով չտեսնեմ, թե խռովարար, բայց հարազատ որդուս գլխատելու համար ինչպես են թռչում ձեր հեծյալները:

- Արքայից-արքան շարժվեց լուսամուտի կողքից և թուլացած ընկավ գահավորակի վրա: Մարդպետունին կամացուկ բացեց ննջարանի դուռը և մթության մեջ թողնելով Տիգրանին, քայլերն ուղղեց դուրս:

Լույսը բացվելիս արքայական պալատի աշտարակի վրա Մետրոդորը տեսավ երկնագույն, արծվակիր դրոշը: "Ուրեմն Տիգրանը ժամանել է", անցավ նրա մտքով, և նա աճապարեց ներկայանալ արքայից-արքային:

Լսելով, որ Եվպատորը դեսպան է ուղարկել իր մոտ, Տիգրանն ընկավ մտածմունքների մեջ: Մի՞թե Միհրդատը չգիտե, որ իր թոռը ինքնակոչ արքա է հռչակել իրեն: Գուցե իրոք չգիտե, և ինքը՝ Տիգրանը, շտապեց մեղսակից դարձնել նրան: Գուցե Միհրդատը ոչ մի սուրհանդակ էլ չի ուղարկել Արտաշատ, և Մարդպետունին այդ լուրն իրենից է հնարել, որ ավելի սաստկացնի արքայի բարկությունը: Չէ՞ որ Տիգրանը չի օգնի իրեն: Եվ արդյոք շուտ չարձակե՞ց որդուն պատժելու վճիռը: Բայց չէ, այս աշխարհում ոչ ոք չի կարող մեղադրել իրեն այդպիսի վճռի համար: Եթե այդպիսի մարդ գտնվի ապա Տիգրանը նրա երեսին կշպրտի Զարեհի պատկերը կրող ոսկեձույլ դրամները:

Տիգրանը Մետրոդորին երկար սպասեցնել չտվեց: Արքայից-արքային թվում էր, թե Միհրդատի դեսպանի հետ իր զրույցը նոր գաղտնիքներ կարող է բացել:

Ժպիտը դեմքին ծերունի Մետրոդորը մտավ արքայից-արքայի ընդունարանը և, խոր գլուխ տալով, ողջունեց ու Միհրդատը Եվպատորի հավատարմաթուղթը մեկնեց նրան:

- Որտե՞ղ է հիմա իմ բարեկամ Եվպատորը, - հավատարմաթուղթը անցկացնելով և կեղծ ժպտալով, հարցրեց Տիգրանը:

- Փոքր Հայքում:

- Ահա թե ինչու Պոնտոսը չի հրաժարվում Փոքր Հայքից: Մի՞թե բնիկ հայկական այդ երկրամասը Միհրդատը իր ձեռքին պահում է նրա համար, որ ճողոպրի Լուկուլլոսի առջևից և ապաստանի այնտեղ:

- Արքայից-արքա, Պոնտոսը քո հարևանն է, մի խփիր աչքդ, երբ հարևանիդ տունն է վառվում:

- Լուկուլլոսը ինձ վատություն չի արել:

- Լուկուլլոսը Պոնտոսի թշնամին է:

- Այդ մասին գիտեն բոլորը:

- Լուկուլլոսը կանգ չի առնի Պոնտոսում:

- Հռոմը չի փորձի իր դունչը մոտեցնել Հայքին:

- Կմոտեցնի, արքայից-արքա:

- Մենք ուրիշ կերպ կհյուրասիրենք նրան:

- Վատ չհյուրասիրեց նաև Եվպատորը:

- Եվպատորը անարժան բարեկամ է:

- Ես հիմքեր չունեմ այդպես դատելու նրա մասին:

- Մետրոդոր, ես հարգում եմ քեզ որպես քաջահմուտ իմաստասերի, բայց չեմ կարող օգնել Եվպատորին և իմ դեմ գրգռել Լուկուլլոսին: Ես գիտեմ, որ դու ավելի շատ ես ատում հռոմեացիներին, քան նույնիսկ Եվպատորը, դու կարող ես մնալ Հայքում, եթե հաճելի է քեզ համար մեզ մոտ մնալը: Եվպատորին կպատասխանեմ վաղը: Նրան ուղարկվելիք հավատարմաթուղթը կտանի իմ սուրհանդակը, որը կարող է ուղեկցել նաև քեզ, եթե ցանկանաս այդքան շուտ թողնել Տիգրանակերտը:

ԵԹԵ ԱՐՔԱՅԻՑ - ԱՐՔԱՆ ԿՌԱՀԵՐ

"Կլեոպատրա.

Դու իրավացի չես: Ոչ ոք Հայքում ինձ որդեսպան չի կոչում:

Միայն դու, ցանկանում ես բացառություն կազմել դու: Ի՞նչ իրավունքով: Մի՞թե Զարեհը քոնը լինելով հանդերձ, նախ և առաջ իմ զավակը չէր: Իմ և քո որդին դավաճան է: Դու ասում ես, թե կարելի էր ներել նրան, չէ՞ որ նա մեր որդին էր: Ես համաձայն եմ: Ես մտադիր էի ներել նրան, եթե նա հանձնվեր: Բայց նա փակել էր Արտաշատի պարիսպները և մարտի բռնվել Հայոց արքայական բանակի դեմ: Ահա թե ինչպիսի փառասեր որդի ենք մեծացրել ես և դու: Նա դավաճանել է ոչ թե ինձ ու քեզ, այլ Հայոց հողին: Լսե՞լ ես երբևէ, որ հայկական բանակը կռվի հայկական բանակի դեմ: Առաջին օրինակը տվեց մեր որդին: Երիցս անեծք նրան: Գահին տիրանալու համար նա մոռացել էր ամեն ինչ: Մոռացել էր թե ում զավակն է: Մի պահ դուրս արի մայրական ցավի ու զայրույթի վանդակից և դատիր որպես Հայոց աշխարհի տիկնանց-տիկին: Մեր ապստամբ որդին իր կեղծ թագը գլխին պահելու համար կռիվ է սկսել իմ ուղարկած գնդի դեմ: Մարտում սպանվել է երեք հարյուր հայ զինվոր: Դա սարսափելի է: Երեք հարյուր հայ սպանել՝ հույս ունենալով ժամանակից շուտ զավթել հայրական իշխանությո՞ւնը: Այդպիսի այրը արժանի չէր լինի Հայոց գահին: Ես ցանկանում եմ բազմացնել հայերի թիվը, իսկ հարազատ որդիս այն կրճատում է երեք հարյուրով: Հայքում դեռ շատերը , որ մեր երեք ախոյանները՝ հռոմեացիք, հելլեններն ու պարթևները օրերից մի օր մեզ կսեղմեն և կփորձեն կուլ տալ ոչ թե նրա համար, որ քաջ ու քանքարաշատ են, քան հայերը, այլ որովհետև թվով դեռ մեծ են մեզնից: Աշխարհում հիմա մեծերը կուլ են տալիս փոքրերին: Եվ ոչ ոք չի դատում մեծերին: Հաճախ մեծերը կուլ են տալիս սիրաշահելով, եղբայրության ու բարեկամության քողի տակ: Ես մոտենում եմ յոթանասունին, բայց ձիուց չեմ իջնում նրա համար, որ հայերը մեծանան նաև թվով, որ հայը կուլ չգնա որևէ մեկի կոկորդով: Եթե Զարեհը չլիներ, հիմա հայերի թիվը երեք հարյուրով մեծ կլիներ: Ահա թե ինչու ես անիծում եմ նրա ծնունդը: Գիտեմ, հիմա քո դեմքը մռայլվում է: Զարեհի մայրն ես: Բայց ներիր ինձ, մի՞թե մայրեր չունեն նաև Զարեհի պատճառով սպանված այրերը:

Պահանջում ես գոնե պատժել նրան, ում նետից ընկել է Զարեհը: Ես չգիտեմ, թե ով է սպանել մեր որդուն: Մարտի ժամանակ հաճախ դա չես նկատի: Եվ չնայած այն բանին, որ ես, այնուամենայնիվ, կարող եմ գտնել այդ մարդուն, բայց արքայական իմ խիղճը թույլ չի տա նման քայլի դիմել: Չէ՞ որ այդ մարդը, ով էլ որ լինի, կատարել է իմ հրամանը:

Ես նորից ծանրութեթև եմ անում մեր դժբախտության հետ առնչվող բոլոր պատճառները: Գուցե դարձյալ չհամաձայնես ինձ հետ, բայց հավանաբար, Զարեհին, և ընդհանրապես մեր

զավակներին, մենք ճիշտ չենք կրթել: Նույնիսկ զավեշտական է, երբ ասում եմ մենք: Նրանց կրթել ու կրթում են հելլեն իմաստունները: Ահա մեր հելլենասիրության առաջին պտուղը: Հելլեն ուսուցիչները մեր զավակների մեջ մեռցնում են հայկական ավանդապահ ոգին: Օտար արքունիքների լպրծուն խարդավանքների պատմություններով նրանք մթագնում են հայ արքայազունների միտքը: Սայթաքելու մասին չեն նախազգուշացնում: Հույն իմաստունների համար ինչ փույթ, թե մի հայ պայազատ կարող է զոհվել: Ես խոստանում եմ ստուգել իմ այս կասկածները, իսկ այժմ Միջնակ ու Կրտսեր Տիգրաններին ուղարկիր ինձ մոտ: Թող նրանք հայկական զորքի հետ լինեն: Այսպես եմ ցանկանում ես որպես հայր և Հայոց աշխարհի տիրակալ:

Եթե արքայից-արքան կռահեր, թե ինչ է կատարվելու մի ամիս հետո, ապա նա կպատռեր այս նամակը: Ոչ նրա սիրտը. ոչ էլ աստվածային պատգամախոսները չէին զուշակում առավել սարսափելին:

Անտիոքի կողքին, Օրոնտես գետից ոչ հեռու տարածվում էր Սելևկյանների արքայական որսապուրակը: Սելևկյաններից բացի այստեղ ոչ ոք նետ արձակելու իրավունք չուներ: Քաղաքը հայկական զորքերի կողմից գրավվելուց երկու ամիս հետո անտիոքցիները լսեցին, որ արքայից-արքա Տիգրանը իր շքախմբով որսապուրակ է մեկնում: Նրանք չզարմացան: Հայոց Տիգրանը դրանով կարծես հաստատում էր, որ Ասորիքի տերը այսուհետև ինքն է և միայն ինքը:

Արքայից-արքան որսի էր ելնում միշտ այն ժամանակ, երբ նրա տրամադրությունը կամ բարձր էր, կամ ինչ-որ վշտից ցավ էր ապրում սիրտը: Այդ օրը նա որսապուրակ էր մեկնում ոչ Անտիոքը հայկական գահանիստ քաղաք հռչակելու ուրախությամբ համակված, ոչ էլ Սելևկյանների իշխանությանը տիրելու հպարտության զգացումից պարուրված: Դավաճան, բայց հարազատ որդու մահը հանգիստ չէր տալիս նրան:

Արքայից-արքան համոզված էր, որ ոչ մի որս չի կարող ցրել իր մեծ վիշտը: Բայց ցանկանում էր գոնե մի քանի ժամով շեղել ուշադրությունը, ազատել իրեն սեփական մտքերի նետատարափից:

Ահա և արքայական որսապուրակը: Մուտքի մոտ Մա աստծու արձանն է: Սելևկյանները Մային կանգնեցրել են այստեղ, որ նա թույլ չտա աշնանը՝ ժամանակից շուտ տերևաթափ դարձնելու սաղարթախիտ ծառերն ու գեղեցիկ թփերը:

Սովորաբար որսի ժամանակ Տիգրանին ուղեկցում էր միայն ասպետ Բագարատը: Որսի շքախմբի մյուս անդամները գտնվում էին բավական հեռավորության վրա: Սակայն այս անգամ արքայից-արքան որոշեց որսի ելնել իր զավակների՝ Միջնակ ու Կրտսեր Տիգրանների հետ, որոնք մի շաբաթ առաջ էին եկել Տիգրանակերտից:

Զարեհի կորուստը ասես Տիգրանին ավելի էր մոտեցրել մյուս որդիներին:

Հոր նման գեղեցիկ ու առնական էին երկու արքայազունները: Միջնակը տասնութ տարեկան էր, կրտսերը՝ տասնվեց: Երկուսն էլ զինավառ էին և իրենց ձիերով շվաքի պես հետևում էին արքայից-արքային:

- Դուք ի՞նչ եք գուշակում, հաջո՞ղ կլինի այսօր մեր որսը, - դիմեց Տիգրանը արքայազուններին:

- Այո, արքայից-արքա, - խոսեց Միջնակ Տիգրանը, - ասում են Սելևկյանները մի քանի ամիս է, ինչ ոտք չեն դրել այստեղ, այս պուրակում մի քանի հարյուր եղնիկներ են ապրում:

- Հայրիկ, հրաման տուր, թող այստեղի եղնիկներին տանեն Տիգրանակերտ, - խոսեց Կրտսերը:

Միջնակը կշտամբեց կրտսեր եղբորը.

- Եղնիկներին Տիգրանակերտ տանելուց առաջ լավ կլիներ, որ դու չմոռանայիր այն, ինչ ամեն օր ասում ենք քեզ, բայց հիշողությանդ մեջ տեղ չի գրավում: Քանի անգամ է տիկնանց-տիկինը քեզ սովորեցրել, որ մենք պարտավոր ենք հայրիկին արքայից-արքա կոչել, երբ գտնվում ենք տնից դուրս, և մեզ լսում են ուրիշները:

- Հիմա մեզ ոչ ոք էլ չի լսում, - փորձեց արդարանալ Կրտսերը, - իսկ եղնիկները լեզու չունեն:

Հայրը չէր միջամտում և հաճույքով լսում էր զավակների զրույցը: Զարեհի կերպարը կարծես հեռանում էր նրա մտապատկերից:

Հեռվից մեկը փողհարեց: Մի քանի եղնիկներ դուրս եկան արքայից-արքայի առաջ: Միջնակ ու Կրտսեր Տիգրանները, հետևելով իրենց հորը, աշխատում էին զսպել նժույգները և չխախտել պատշաճ հեռավորությունը: Արքայից-արքան լարեց աղեղը, բայց եղնիկները պոկվեցին նրա տեսադաշտից և մտան թփուտների հետև:

Տիգրանը փորձեց կտրուկ շրջել նժույգը և ձախ թևից հետապնդել եղնիկնեին, բայց նրա գլուխը պտտվեց: Նա սրտխառնուք զգաց: Կորցրեց հավասարակշռությունը և ընկավ ձիուց: Զավակներն անմիջապես իջան իրենց ձիերից և մոտեցան ուշագնաց հորը: Արքայից-արքան մեկնվել էր գետնի վրա, աչքերը փակել և կարծես չէր շնչում: Արքայական ոսկեհուռ խույրը ընկել էր Տիգրանի գլխից:

Կրտսեր Տիգրանը սկսեց շարժել հորը, սակայն վերջինս կենդանության նշաններ ցույց չտվեց:

- Հայրիկը մահացել է, շուտ փողհարիր, - ասաց Միջնակը և մոտենալով հորը, սկսեց նայել նրա դեմքին:

Արքայից-արքան մեռյալի գույն ուներ: Միջնակը, հայացքը մի պահ կտրեց հոր դեմքից և, երկյուղալի քայլերով մոտեցավ խոտերի վրա ճաճանչափայլող արքայական թագին: Միջնակի դեմքը հանկարծ փոխվեց: Նա ճանկեց թագը, շտապով դրեց գլխին և խենթի պես աղաղակեց.

- Հայոց արքայից-արքան ես եմ, Հայոց արքայից-արքան ես եմ...

- Դու խելագարվե՞լ ես, - բացականչեց Կրտսերը:

- Բայց Միջնակը նրան այլևս չէր լսում: Նա վազվզում էր անտառի մեջ և աղաղակում.

- Հայոց արքայից-արքան ես եմ, Հայոց արքայից-արքան ես եմ...

Միջնակի՝ օգնության փողկանչից արքայից-արքան բացեց աչքերը: Նա հանգիստ բարձրացրեց գլուխը և, ուշքի գալով ասաց.

- Ոչինչ, զավակս, գլխապտույտս անցավ, ես հիմա լավ եմ:

Հետո նկատելով, որ խույրը գլխին չէ, Միջնակն էլ չի երևում, հարցրեց.

- Ո՞ւր է Միջնակը, չտեսա՞ք որտեղ ընկավ իմ թագը, վատ նշան է, զավակս, երբ արքայի գլխից թագն է ընկնում:

Կրտսերը զայրույթից չէր կարողանում խոսել:

- Ինչ է, քո գլուխն է՞լ է պտտվում:

- Ոչ, հայրիկ, իմ գլուխը չի պտտվում, Միջնակի գլուխն է պտտվում: Երբ դու ընկար, նա կարծեց, թե դու մահացել ես, թագդ դրեց գլխին և սկսեց աղաղակել. "Հայոց արքայից-արքան ես եմ, Հայոց արքայից-արքան ես եմ":

- Ո՞ւր է հիմա նա:

- Վազվզում է անտառում և ինքն իրեն հռչակում արքա:

- Ավաղ, Հայոց աշխարհում իմ բարկությունը մեղմող աստված չունենք, - ասաց Տիգրանը և օրորվելով ոտքի ելավ:

Գետինը սմբակներով դոփող սպիտակաբաշ նժույգը մոտեցավ տիրոջը: Արքայից-արքան սկսեց շոյել ձիու գլուխը: Հենց այդ ժամանակ քառատրոփ արշավով Տիգրանի մոտ հասավ ասպետ Բագարատը:

- Ի՞նչ է պատահել, արքայից-արքա, դու գունատ ես, - երկյուղած հարցրեց ասպետը:

- Օ Բագարատ, իմ լավ ասպետ, դու չե՞ս տեսնում, որ աշխարհը փուլ է գալիս: Նժույգն ավելի հավատարիմ է մնում տիրոջը, քան հարազատ որդին: Ես չհասցրի ոչ մի եղնիկ նետահարել, իմ գլուխը պտտվեց, ես ընկա ձիուց: Միջնակը իմ դեմքին ջուր ցանելու փոխարեն, վերցրեց թագս և իրեն հռչակեց Հայոց աշխարհի արքայից-արքա: Իմ ձին չհեռացավ ինձնից, իսկ զավակս թողեց ինձ ուշագնաց և...

Ասպետ Բագարատը դիմեց իր թիկնապահին.

- Հենց հիմա գտիր արքայազնին, թող շտապ այստեղ բերի արքայից-արքայի խույրը:

- Սպասիր, ասպետ, - ձիու բաշին հենվելով, խոսեց Տիգրանը, - կիսատ հրամաններ մի տուր, թող թագի հետ բերեն նաև նրա գլուխը:

- Արքայից-արքա...

- Այո, ասպետ, պետք չէ այնպիսի զավակ ունենաս, որ մի նժույգի չափ էլ հավատարիմ չլինի քեզ:

- Արքայից-արքա, մի շտապիր, Զարեհի...

- Միջնակս էլ Զարեհի եղբայրն է, նրանք իրար նման են: Նման մարդիկ նույն ճակատագիրն են ունենում, միայն Կրտսերն է իմ հավատարիմը:

Արքայից-արքան մոտեցավ և սկսեց շոյել Կրտսեր Տիգրանի գլուխը: Վախից ու սարսափից արքայազնը ոչ մի ձայն չէր հանում:

- Դու չլսեցի՞ր իմ հրամանը, ասպետ, - նորից Բագարատին դիմեց արքայից-արքան:

- Արքայից-արքա...

- Տիգրանն այլևս չէր լսում: Արքայից-արքային թվաց, թե հարազատ որդուն գլխատելու հրամանը ինքը չտվեց: Դե, իհարկե, ինքը չէր: Հայքի հովանավոր աստվածներն են պատժում Միջնակին: Պատժում են դավաճանության համար: Այդ աստվածները չեն ներում Հայքի դավաճաններին: Եվ ինքը արքայից-արքա Տիգրանը, չի կարող հիմա միջնորդել, չի կարող աղերսել որպես հայր, որպեսզի այդ հրամանը չկատարեն:

Տիգրանի ձախ աչքից արցունքի մի շիթ ցայտեց և կախվեց ակնակապիչից:

Կես ժամ հետո արքայից-արքայի շքախումբը դուրս եկավ Սելևկյանների որսապուրակից: Տիգրանը Անտիոք էր վերադառնում արյունոտված թագով:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԴԵՍՊԱՆԸ

Տիգրանակերտ տանող արքայական պուրակով սլանում էին մի քանի հեծյալներ:

Ձմեռային սառը քամուց պաշտպանվելու համար նրանք կրում էին տաք դիմակներ ու ծնկակալներ: Մոտիկ լեռների վրա մոլեգնող բուքը կարծես շտապեցնում էր նրանց՝ շուտափույթ իջևան գտնելու համար;

Հավանաբար բուքը քիչ հետո կիջնի լեռներից և կասպատակի արքայական պողոտան: Հեծյալները կանխազգում էին այդ և աճապարում տեղ հասնել ժամ առաջ:

Ահա և Տիգրանակերտի արևելյան մեծ դարպասը: Հեծյալները կանգ առան: Բրգավոր աշտարակից մեկը ձայն տվեց.

- Ովքե՞ր եք:

- Զորապետ Լուկուլլոսի դեսպանախումբը, - պատասխանեց հեծյալներից մեկը:

- Այս դարպասով օտարականը քաղաք մտնելու իրավունք չունի, - լսվեց դարձյալ աշտարակից:

- Էյ, հաստագլուխ, մենք դեսպանախումբ ենք և հույժ կարևոր հանձնարարական ունենք արքայից-արքա Տիգրան Մեծի անունով:

- Հաստագլուխը նա է, ով չի հարգում Մեծն Տիգրանի օրենքները, շրջանցեք արևելյան պարիսպները և հասեք արևմտյան դարպասին: Միայն այդ դարպասով դուք կարող եք Տիգրանակերտ մտնել:

- Լսիր, ով մարդ, մենք շտապում ենք, լսիր...

Սակայն աշտարակից այլևս ոչ ոք չարձագանքեց:

Մի քանի րոպե հեծյալները իզուր սպասեցին, սպառնալիքներ կարդացին աշտարակի վրա գտնվող պահապանին, բայց ոչ ոք չպատասխանեց նրանց:

Բուքը սաստկանում էր կամաց-կամաց:

Հռոմեացի զինվորականները, որոնք երկար ճանապարհ էին կտրել՝ մինչև հասել էին Տիգրանակերտ, չդիմանալով այլևս քաղցին, ասացին իրենց մեծավորին.

- Տրիբուն, մենք կարող ենք այստեղ սառչել, ավելի լավ չէ՞ շտապենք արևմտյան դարպասի մոտ:

- Դուք իրավացի եք, սիրելի պատրիկներ:

- Քառորդ ժամ հետո դեսպանախումբը երևաց Տիգրանակերտի արևմտյան դարպասի առջև: Այստեղ նրանց դիմավորեցին երկու աղեղնավոր զինվորներ: Հռոմեացիներն իջան ձիերից և մոտեցան մի պարսպի, որի վրա քանդակված էին հսկայական նիզակների տակով ծնկաչոք անցնող Արևելքի թագավորների պատկերները: Դարպասից ներս մտնելու համար մի փոքրիկ մուտք կար, որտեղով անցնելիս պետք է գլուխդ խոնարհեիր մինչև գոտկատեղդ:

Լուկուլլոսի դեսպան Ապպիոս Կլավդիոսը մի պահ դիտեց բերդապարիսպը, փոքրիկ մուտքը և չհամբերելով՝ դարձավ աղեղնավոր հայ զինվորներին, որոնք դուրս էին եկել քաղաքից, դեսպանախումբին ընդառաջելու:

- Դուք անչափ վատ եք դիմավորում անհաղթ Լուկուլլոսի դեսպանին, և կարծում եք, թե ես՝ Հռոմի պատվիրակ Ապպիոս Կլավդիոսս, պետք է մեջքս ծալելո՞վ մտնեմ ձեր քաղաքը: Դուք այդպես կարող եք վարվել պարտվածների հանդեպ, բայց Հռոմի հետ այսպիսի կատակներ չի կարելի անել:

- Այստեղ Հռոմ չէ, ով դեսպան, - պատասխանեց աղեղնավոր զինվորներից մեկը, - ձեզ չեն հրավիրել այստեղ, դուք ձեր ոտքով եք եկել Հայոց աշխարհը, այդ պատճառով էլ պարտավոր եք հարգել մեր երկրի օրենքները:

- Ահա թե ինչ, դուք թշնամուն չե՞ք տարբերում բարեկամից:

- Բարեկամներն այդպես գոռոզ-գոռոզ չեն խոսում:

- Չափազանց հպարտ եք պահում ձեզ:

- Բնությունը մեզ այդպես է ստեղծել:

- Որտե՞ղ է հիմա արքա Տիգրանը:

- Տիգրանը արքայից-արքա է, եթե դու դեսպան չլինեիր, քեզ կգլխատեինք հենց հիմա՝ աշխարհակալ Տիգրանին սովորական արքաների հետ շփոթելու համար:

- Հռոմեացին զգաց, որ այս խոսակցությունները կարող են անհաճո վախճան ունենալ: Բայց նա չուզեց տեղի տալ և գցել հռոմեացու իր հեղինակությունը: Ինչ կասի Լուկուլլոսը, եթե լսի, որ իր դեսպանը խոնարհվել է հայերի առջև: Ավելի լավ է գիշերել բաց դաշտում, քան նվաստացած մտնել արմենների քաղաքամայրը:

- Կլավդիոսը, աղեղնավոր զինվորներից տեղեկանալով, որ ամենամոտիկ իջևանը քաղաքից հեռու է յոթ հրասախ, դիմեց իր համահարզներին:

- Ով քաջ պատրիկներ, զինվեք համբերությամբ և հետևեցեք ինձ:

Նա մտրակեց նժույգը և թափով սլացավ առաջ: Նրան հետևեցին մյուս հեծյալները:

Կես ժամ հետո Լուկուլլոսի դեսպանը իր մարդկանցով տեղավորվել էր "Աղձնյաց խորոված" իջևանատանը:

Արքայական պողոտայի մի անկյունում ընկած այս բանուկ իջևանատունը սովորականից ավելի շատ հաճախորդներ ուներ: Իջևանատերը, որին կոչում էին Եղջերու Վարդ, հաճությամբ ընդունեց օտարականներին, երկու սենյակ հատկացրեց նրան և վազեց խոհանոց ընթրիք պատրաստելու:

Գիշերն արդեն վրա էր հասնում, իսկ բուքը շարունակում էր հետզհետե սաստկանալ:

Կլավդիոսը դեռ նոր էր տեղավորվել հին բազմոցի վրա և սկսել ձեռքերը շփել՝ բուխարու կրակին մոտեցրած, երբ ներս մտավ Եղջերու Վարդը:

- Ես ստիպված եմ անհանգստացնել իմ պատվելի հյուրին, - գործարար մարդու փութաջանությամբ ասաց իջևանատերը:

- Ի՞նչ է պատահել, - առանց Եղջերու Վարդի կողմը նայելու, հրավիրեց Կլավդիոսը:

- Այստեղ, քեզ հետ պիտի գիշերի Կորդուքի արքա Զարբիենոսը:

- Նա որտեղի՞ց հայտնվեց:

- Տիգրանակերտ էր գնում, բուքը ստիպեց նրան հանգրվանել այստեղ:

- Թող գա:

- Քիչ հետո կորդվացին ու հռոմեացին ծանոթացան և զրույցի բռնվեցին: Այդ ծանոթությունը ճարպիկ հռոմեացու սրտովն էր: Նա շատ հեռվից սկսեց:

- Այս ինչ օրենքներ են Հայոց աշխարհում, հյուրին ընդունում են թշնամաբար: Արքաներին անգամ առանձին սենյակ չեն տալիս այսպիսի քոսոտ իջևանատնում:

- Է, հարգելի դեսպան, այս քսանհինգ տարում, ինչ գահի վրա է Մեծն Տիգրանը, ամեն ինչ շուռ է եկել:

- Որտե՞ղ է հիմա նա:

- Խոզապարկուկ է խաղում Սելենե թագուհու հետ Պտղոմայիդի դարպասների տակ:

- Ահա թե ինչ, ուրեմն ես չեմ կարող նրան հանդիպել այս օրերին, իսկ ես կարծում էի, թե նա Տիգրանակերտում է:

- Անհոգ եղեք, ես վաղը իմ մարդկանց կուղարկեմ նրա մոտ, և իմաց կտանք, որ Հռոմի մեծ զորավար Լուկուլլոսի դեսպանը սպասում է նրան:

- Անչափ շնորհակալ եմ, արքա ես կզեկուցեմ Լուկուլլոսին, որ Կորդուքի արքա Զարբիենոսը անշահախնդիր ծառայություն է մատուցել Հռոմին:

Ապա Կլավդիոսը պատմեց, որ ինքը եկել է Տիգրանից պահանջելու Միհրդատ Եվպատորին, որը պարտվել է Կաբեյրայի ճակատամարտում, փախել Հայաստան և ապաստանել այնտեղ:

- Հռոմեացի զորավարի գործը դժվար է, - շարունակեց Կլավդիոսը, - թշնամուն հաղթելը քիչ է, պետք է գերել հակառակորդի մեծավորներին, որ Հռոմ մտնես հաղթահանդեսի իրավունքով: Մեզ մոտ Հռոմում ասում են. "Աչքերին ավելի պետք է հավատալ, քան ականջներին": Քաջ Լուկուլլոսը ծնկի է բերել Պոնտոսը, շահել տասից ավելի մեծ ճակատամարտ, բայց Եվպատորին չի գերել, ոչ էլ նրա ընտանիքի անդամներին:

- Եվպատորը ընտանիքո՞վ է փախել Հայոց աշխարհը, - Կլավդիոսին ընդհատեց Զարբիենոսը:

- Ոչ միայնակ:

- Ապա, ո՞ւր է հիմա նրա ընտանիքը:

- Հիմա կասեմ, արքա: Եվպատորը Հռոմի ամենամեծ թշնամին է: Նա ամենևին չէր ցանկանա, որ աշխարհը հավաստեր Լուկուլլոսի գերազանցությունը իր հանդեպ: Դրա համար նա ոչ մի բանի առջև կանգ չի առնի: Վերջին պարտությունից և Հայոց աշխարհ փախչելուց հետո նա իր տիկնունու ներքինի Բագխիդին ուղարկում է Փառնակիա՝ հրամայելով սրի անցկացնել բոլոր հարազատներին, որպեսզի ոչ մի Միհրդատյան Հռոմ չտարվի Լուկուլլոսի հաղթահանդեսի համար:

- Եվ Բագխիդը գլխատո՞ւմ է բոլորին:

- Բագխիդին, չնայած ներքինին է, ավելի ազնիվ է գտնվում, քան Եվպատորը: Նա ասում է, որ Միհրդատի հրամանով պետք է մահ ընդունեն, բայց միջոցների մեջ կարող են ընտրություն կատարեն իրենք:

Միհրդատի քույրերը՝ Ռոքսանան և Ստատիրան, թույն են խմում, թագուհի Պերենիսը գլխատվում է, բայց բոլորի մեջ ամենից շատ տանջվում է Մոնիկան:

- Հույն գեղեցկուհի՞ն:

- Այո, նա, որ մեր աշխարհներում աստվածային գեղեցկուհու համբավ ուներ: Եվպատորը երկար ժամանակ չէր կարողանում առնել նրա համաձայնությունը: Երեք անգամ Մոնիկան ետ տվեց Եվպատորի ուղարկած տիկնանց-տիկնոջ խույրը: Չնայած, վերջիվերջո նա համաձայնեց, բայց ունեցավ փոթորկալից ու սարսափնելով լեցուն կյանք: Եվ ահա, երբ

Բագխիդը Մոնիկային հայտնում է Միհրդատի հրամանը, գեղեցկուհին գլխից հանում է դիադեման, նրանից օղակ պատրաստում և կախվում: Բայց դիադեման կտրվում է: "Անիծյալ լաթի կտոր, - բացականչում է տիկնանց-տիկինը, - նույնիսկ կախվելու համար էլ դու պիտանի չեղար": Նա դեն է շպրտում դիադեման, թքում նրա վրա և խնդրում Բագխիդին՝ սպանել իրեն:

- Կլավդիոսի և Զարբիենոսի զրույցը շարունակվեց երկար: Նրանք քուն մտան, երբ գիշերը վաղուց կիսվել էր:

Հաջորդ օրը Զարբիենոսը՝ պատրաստվելով մեկնել Տիգրանակերտ հռոմեացուն ասաց:

- Սպասիր ինձ այստեղ: Վաղը կեսօրին ես կլինեմ քո կողքին: Մենք միասին կգնանք Կորդուք, իմ հյուրը կլինես, մինչև Տիգրանից լուր ստանալը:

Կլավդիոսը երանության մեջ էր: Նա ամենևին չէր սպասում, որ Լուկուլլոսի հանձնարարությունն ինքն այսքան հաջողությամբ կսկսեր:

Այս Տիգրանը շատ է հեռու գնացել, մտածում էր Կլավդիոսը: Հավանաբար նա ուզում է խառնել Հռոմի հաշիվները փոքրասիական բոլոր պրովինցիաներում: Բայց այս գոռոզամիտ արմենը չգիտե, որ աշխարհում Լուկուլլոսի պես զորավարներ կան: Նա գիտե, որ Տիգրանը կմերժի Միհրդատ Եվպատորին Հռոմի ձեռքը հանձնել: Փույթ չէ, մինչ այդ ես իմ գործը կտեսնեմ: Հավանաբար Զարբիենոսը միակ դժգոհը չէ, Հայքում շատ կան այդպիսի այրեր: Իսկ ես պետք է ավելի շատ կողմնակիցներ գտնեմ, որպեսզի Տիգրանի դեմ կռիվ սկսելիս արգելքները չբազմանան: Եվպատորի հետ Լուկուլլոսը շատ ժամանակ վատնեց: Հռոմում դժգոհում են: Հավանաբար եթե Իսպանիայի պատերազմը չլիներ, ծերակույտը Լուկուլլոսին կփոխարիներ Պոմպեոսով: Այդ Պոմպեոսն էլ շատ է խորամանկ, ուզում է հնձել այնտեղ, ուր ուրիշներն են ցանել: Չէ , նա այս անգամ չի հասցնի: Տիգրանը դժվար թե երկար դիմադրի Հռոմին: Մենք այստեղից տուն կվերադառնանք հարստացած: Եթե ծերակույտը այդքան շատ է գնահատում Պոմպեոսին, թող նրան ուղարկի ծովահենների դեմ, թող ուղարկի Սպարտակի դեմ: Իսկ Հայոց աշխարհը պիտի դառնա Լուկուլլոսի բաժինը, որովհետև սա ամենահարուստն է Արևելքի բոլոր երկրների մեջ:

Կլավդիոսը իր խորհրդածությունների հետ էր, երբ դռան մոտ երևաց Եղջերու Վարդը:

- Հարգարժան դեսպան, - ասաց իջևանատերը, մի մարդ խնդրում է քո տեսակցությունը:

- Ո՞վ է:

- Նա չտվեց իր անունը, միայն ասաց, որ արքա Զարբիենոսն է իրեն ուղարկել:

- Կանչիր ներս:

Անծանոթը ներս մտավ: Նրա վիթխարի մարմնի վրա փոքրիկ գլուխը հազիվ էր երևում: Դիմակալը ծածկում էր երեսը: Նա դռան մոտ կանգնեց մի պահ, խոնարհվեց մինչև գոտկատեղը և սպասեց:

- Մոտեցիր մարդ և խոսիր:

- Ես Արարատ աշխարհի Մասյացոտն գավառից եմ, նահապետ Խաժակը:

- Հետո:

- Եվ Զարբիենոս արքայի բարեկամը:

- Հետո:

- Ես եկա քեզ մոտ, որ օգնես ինձ դուրս գալու Հայոց աշխարհից և հասնելու Հռոմ:

- Հռո՞մ:

- Այո:

- Ի՞նչ ես կորցրել այնտեղ:

- Ինչ որ ունեի, Տիգրան Մեծի հրամանով ես կորցրի այստեղ՝ Հայոց աշխարհում:

- Խորհուրդ չէի տա Հռոմ մեկնել ձեռնունայն:

- Ես ձեռնունայն չեմ մեկնում

- Ապա ինչ ես տանում քեզ հետ:

- Որդան կարմիր:

- Հռոմը կարող է այդ հրաշալի ներկից գնել Միջերկրայքի շուկաներում ինչքան ցանկանա:

- Բայց Հռոմը չի կարող տեղում ստանալ այն:

- Իսկ դու ինչո՞վ կարող ես օգնել, որ Հռոմում էլ որդան կարմիր ստանան:

- Ես ինձ հետ Հռոմ եմ տանում այն սեզերից, որոնց վրա բազմանում են որդան կարմիր միջատները, - այս ասելով, նահապետ Խաժակը իր լայնաքղանցք պատմուճանի տակից հանեց կանաչ խոտերի մի փոքրիկ խուրձ ու մեկնեց Կլավդիոսին:

- Ի՞նչ է սա:

- Սա այն խոտն է, որի վրա ամռան սկզբներին երևում են կարմիր որդանի միջատները: Մենք հավաքում ենք այդ միջատները, եփում ու ստանում աշխարհի ամենահրաշալի ներկը, որ կոչվում է որդան կարմիր:

- Բայց սա կչորանա, մինչև Հռոմ հասնելը:

- Փույթ չէ, թե կչորանա. ինձ հետ ես տանում եմ այնքան սերմ, որից այսպիսի բյուրավոր սեզեր կաճեն հենց որ մտնեն հողի մեջ:

- Բայց չէ՞ որ Հայոց աշխարհում եղանակներն ուրիշ են, իսկ Հռոմում ուրիշ:

- Ես լսել եմ, որ ձեր Պադուս գետի հովտում արևն այնպես է փայլում, ինչպես մեր Արաքսի հովտում:

Նահապետ Խաժակը պատմեց, որ ինքը մի քանի անգամ փորձել է որդան կարմիրի սեզերը տարբեր տեղերում աճեցնել, և միշտ էլ բախտը ժպտացել է:

Լուկուլլոսի դեսպանը մտքում ծանրութեթև անելով Խաժակի պատմածները, նրան տվեց Հռոմի իր բարեկամներից մեկի հասցեն և այն նշանաբանը, որով պետք է այդ բարեկամը համոզվեր, թե Խաժակին ուղարկել է Կլավդիոսը: Ավելին պետք չէր: Զարբիենոսը ձգտում էր վերականգնել իր արքայական խորտակված հեղինակությունը և ամբողջ հույսը դրել է Հռոմի վրա, այս Խաժակն էլ ուզում է վաճառքի հանել Հայքի բնական հարստությունը:

Հաջորդ օրը Կլավդիոսը իր թիկնապահների հետ մեկնեց Զարբիենոսի աթոռանիստ քաղաք Փինակա: Մի քանի օր նա մնաց այստեղ, վայելեց Կորդվաց աշխարհի արքայի հյուրասիրությունը, ապա շարժվեց դեպի Օսրոյենե, այնտեղից էլ՝ Անտիոք:

Անտիոքում նա պետք է սպասեր արքայից-արքա Տիգրանին: Մի շաբաթ նա չկարողացավ դուրս գալ Հայքի արևմտյան քաղաքամայրից, ասպետ Բագարատը հետևում էր նրան:

Բայց ահա մի օր՝ վաղ առավոտյան, Անտիոքում իրարանցում սկսվեց: Մարդիկ հոծ խմբերով հավաքվում էին քաղաքի կենտրոնական հրապարակը: Կլավդիոսը հյուրանոցի իր սենյակից, որի պատուհանը բացվում էր հրապարակի վրա, զարմացած դիտում էր այդ անսովոր շարժումը: Շուտով հրապարակ մտան արքայական լրատարները և ազդարարեցին.

- Անտիոքցիներ, քաղաք է ժամանում աշխարհակալ Տիգրան Մեծը: Նա հաղթել ու գերել է Փյունիկեի գոռոզամիտ թագուհի Սելենեին: Ով ուզում է տեսնել նրան և ծովափնյա քաղաքների պարտված աստվածներին, թող շտապի հրապարակ մտնել: Է հեյ, անտիոքցիներ, դուրս եկեք դիմավորելու Մեծն Տիգրանին:

Չանցավ մի ժամ, հրապարակում երևացին հայկական բանակի առաջապահ գնդերը: Սկսվեց մի երկար զորաշքերթ, որ Կլավդիոսին հիշեցնում էր Կապիտոլի վրա տեղի ունեցող հաղթահանդեսները: Դրանիկ գնդի ուղեկցությամբ ահա հրապարակ մտավ Տիգրան Մեծը:

Ռազմակառքից նա ողջունում էր անտիոքցիներին: Նրա ետևից ռազմակառքի վրա ամբողջ հասակով կանգնած, ձեռքերն ու ոտքերը կալանդների մեջ Սելենե թագուհին էր, Սելևկյան վերջին գահակալը:

Կլավդիոսը կլանված դիտում էր կառքի վրա վեհանձնորեն կանգնած թագուհուն, որ երկար տարիներ դիմադրել էր Տիգրանին և կորուստներ պատճառել նրան: Գեղեցիկ էր Փյունիկեի թագուհին: Կլավդիոսին նույնիսկ թվաց, թե նա շատ նման է իր քույր Կլոդիային՝ Լուկուլլոսի կնոջը: Ու սկսեց մտածել, թե ինչպես կվարվի նրա հետ Տիգրանը: Հավանաբար մտցնի իր տիկնունու հարճերի մեջ: Բայց մի՞թե գոռոզ Տիգրանը արժանի է դրան: Տեսնես որտե՞ղ է գտնվում հիմա սրա որդին՝ Անտիոքոսը: Մի՞թե նա չի մտածում մոր վրեժը լուծել Տիգրանից: Հարկավոր է Լուկուլլոսին գլխի գցել, որ փնտրի Անտիոքոսին, նա պետք կգա Հայքի դեմ Հռոմի առաջիկա կռվում:

Հրապարակ մտան ուրիշ ռազմակառքեր: Նրանց վրա գտնվում էին ոսկուց ու բրոնզից ձուլված Ապոլլոնի, Արտեմիսի, Հերակլի, Դիոսի, Աթենասի, Աֆրոդիտեի ու Հեֆեստոսի գեղաքանդակ արձանները: Ծովափնյա քաղաքների աստվածներին Տիգրանը բերել էր Անտիոք, որ այստեղից էլ ուղարկի Հայքի խորքերը:

Մի պահ Լուկուլլոսի դեսպանին թվաց, թե այս հաղթահանդեսը Տիգրանը սարքել է հենց իր՝ Կլավդիոսի համար, որպեսզի Հռոմին ցույց տա Հայքի զորությունը: Նա կառչեց այդ մտքից և հայացքը հեռացրեց հրապարակից:

Եվ մինչ Կլավդիոսը տարված էր այս խոհերով, արքայից-արքան հասել էր իր ապարանքը և առանձնացել ասպետ Բագարատի հետ:

- Ասում ես՝ եկել է Եվպատորին պահանջելո՞ւ, - բազկաթոռի վրա թեքվելով, հարցրեց Տիգրանը և գլուխն առավ ափերի մեջ:

- Արքայից-արքան մտախոհ էր: Նա ուզում էր կռահել, թե Լուկուլլոսի այդ պահանջի ետևում ինչ է թաքնված: Չէ՞ որ ինքը՝ Լուկուլլոսը գիտե, որ Տիգրանը չի կարող այդ քայլին դիմել: Ճիշտ է, ինքը չի սիրում Եվպատորին, որի պատճառով շատ անախորժություններ են լինում արքունիքում, բայց ինչ կասեն մարդիկ, եթե Հայքի արքայից-արքան օրը ցերեկով իր աներոջը հանձնի Հռոմի ձեռքը:

Մտքերը, սակայն, նորից խառնվեցին: Իսկ ի՞նչ ապացույց ունի ինքը, որ Եվպատորն է դրդել Զարեհին կամ Միջնակին: Եթե Եվպատորը կենդանի չմնա, ինքը բնավ չի էլ իմանա, թե որտեղից է ծնունդ առել Զարեհի և Միջնակի հանդգնությունը: Ոչ, կծիկը չի բացված: Ինքը դեռ ուզում է պարզել այդ կնճռոտ պարագան: Եթե Եվպատորը մեղավոր է, ապա նրան ավելի արդարորեն կպատժի ինքը՝ Տիգրանը: Լուկուլլոսն ուզում է նրան հաղթահանդեսի համար Հռոմ տանել որպես ավար: Իսկ իր խոցված սիրտը վրեժի կարոտ է.

- Ասում ես՝ եկել է Միհրդատին պահանջելո՞ւ, - կրկնեց իր հարցը Տիգրանը, չնայած ասպետ Բագարատն արդեն պատասխանել էր նրան:

- Այո արքայից-արքա:

- Ի՞նչ մարդ է այդ Կլավդիոսը:

- Ստոր հռոմեացի, որ դեսպանի պատմուճանով լրտեսությամբ էր զբաղվում ամեն քայլափոխի:

- Եվ դու, ասպետ, ինչպե՞ս ես թույլ տվել, որ նա իր գլուխը խոթի ամեն տեղ:

- Դա նույնիսկ օգտավետ է մեզ համար, արքայից-արքա, այդ լրտեսին մերոնք ավելի լավ են լրտեսում: "Աղձնյաց խորոված" իջևանի տեր Եղջերու Վարդը իր գաղտնարանից լսել է Կլավդիոսի և դավաճանների զրույցները և հապշտապ տեղյակ պահել ինձ:

- Ովքե՞ր են բարեկամացել Կլավդիոսին:

- Զարբիենոս արքան և նահապետ Խաժակը: Նրանց ես ձերբակալեցի, և հիմա գտնվում են այստեղ ու սպասում են քո արդար դատավճռին:

Եվ Բագարատը Տիգրանին պատմեց, թե ինչի մասին են խոսել Զարբիենոսն ու Խաժակը Կլավդիոսի հետ:

Քիչ հետո ներս բերեցին շղթայակապ Զարբիենոսին: Նրա այլայլված դեմքի վրա ոչ մի մկան չէր շարժվում:

Տիգրանը իր հրացայտ հայացքը ուղղեց Կորդուքի արքային, վերջինս գլուխը խոնարհեց:

- Նո՞ր տիրոջ ես որոնում, Զարբիենոս, - կծու հարցրեց Տիգրանը:

Զարբիենոսը լուռ էր:

- Դու խոստացար հավատարիմ լինել Հայոց աշխարհին, մի՞թե կորդվացի արքաները այդպես են կատարում իրենց խոստումը: Դեհ, ինչ է, համրացե՞լ ես:

- Դու անչափ շատ ես նվաստացրել ինձ արքայից-արքա, - գլուխը վեր բարձրացնելով, խոսեց Զարբիենոսը: - Ինչո՞ւ պիտի ես հավատարիմ մնայի քեզ: Մի հայ նահապետ կարող է մտնել Կորդուք և հրամաններ տալ ինձ, Տիգրանակերտ տանել ամեն բան՝ առանց իմ գիտության ու ցանկության: Ասա, ով Մեծդ Տիգրան, էլ ինչի՞ է պետք այն թագը, որ դու թողել ես իմ գլխին: Մի՞թե ծաղրածու եմ ես:

Հայոց աշխարհի սահմաններում այլազգի թագավորը փշերի վրա է նստած: Քսանհինգ տարի ես հանդուրժեցի, արքայից-արքա, բայց համբերությունն էլ սահման ունի:

- Հոխորտո՞ւմ ես, զոռոզամիտ, ապա ի՞նչ կուզենայիր, որ բոլոր հայերը քեզ գլուխ տան այնպես, ինչպես իրենց արքայից-արքայի՞ն:

Եվ չսպասելով Զարբիենոսի պատասխանին, Տիգրանը շարունակեց:

- Դու, ապերախտ կորդվացի, կարծում ես, թե Հռոմը նոր մարգարիտներ պիտի ավելացնի քո թագին:

Տիգրանը ոտքի ելավ և նույն զայրույթով շարունակեց.

- Էյ, ասպետ, կանչիր այստեղ զորապետ Մամիկին:

- Իսկույն, արքայից-արքա:

Արքայական դահլիճ մտավ զորավար Մամիկը և զգաստ դիրքով դռան մոտ կանգնած մնաց:

- Ես լսում եմ, արքայից-արքա:

- Տեսնո՞ւմ ես այս մարդուն, զորապետ, ճանաչո՞ւմ ես նրան, - խոսեց Տիգրանը:

- Զարբիենոս արքան է, - պատասխանեց Մամիկը:

- Նա այլևս արքա չէ, այլ Հայոց աշխարհի դավաճան, վերցրու սրան, նստեցրու մի ավանակի վրա՝ դեմքով դեպի ավանակի պոչը, իր թագն էլ դիր ավանակի գլխին: Եվ թող մեր զինվորները պտտեցնեն նրան քաղաքով ու բարձրակոչ ձայնեն, որ սա՝ Զարբիենոսը, մատնիչ է և կաշառվել է հռոմեացիներից: Հիշիր, որ իր կյանքի մնացած օրերը նա պիտի անցկացնի ավանակի վրա:

Թող զինվորները պտտեցնեն նրան ոչ միայն Անտիոքում, այլ տանեն Կորդուք, որպեսզի կորդվացիները տեսնեն իրենց մատնիչ գահակալին:

- Հրամանդ ի կատար, արքայից-արքա, - ասաց Մամիկը և շղթայակապ Զարբիենոսին հրեց դուրս:

Տիգրանին մի պահ թվաց, թե գլուխը պտտվում է: Նա մի փոքր երերաց, բայց իսկույն էլ զգաստացավ ու հանգիստ նստեց բազկաթոռի վրա:

- Դու քեզ վատ ես զգում, արքայից-արքա, - խոսեց ասպետ Բագարատը:

- Ոչ, ասպետ, ես դեռ ինձ լավ եմ զգում, ներս բեր մյուսին:

Ոչ Զարբիենոսը, ոչ էլ նահապետ Խաժակը գլխի չնկան, թե ինչպես բռնվեցին իրենք: Նրանց մտքով բոլորովին չանցավ, որ "Աղձնյաց խորոված" իջևանում Եղջերու Վարդը կարող էր լրտեսել իրենց: Խաժակը չկարողացավ Զարբիենոսի պես պահել իր ինքնավստահությունը: Նրա մարմնի դողոցքն ավելի սաստկացավ, երբ նրան հրեցին արքայական դահլիճը:

Մասյացոտնի նահապետին տեսնելով, արքայից-արքան քմծիծաղ տվեց: Այդ դառն քմծիծաղը ասես նրա սրտի նուրբ լարերից մի քանիսը խառնեցին իրար: Ահա իր առջև կանգնած է նահապետ Խաժակը՝ մի մարդ, որ եղել է Զարեհի կողմնակիցը Արտաշատի ապստամբության ժամանակ: Բայց ամենածանր պահին, երբ Փայլակ Մարդպետունին գրոհել է ապստամբների վրա, սա վախկոտի պես լքել է Զարեհին, ազատել իր գլուխը և դարձել կրկնակի դավաճան: Հետո Փայլակը չի գտել սրան Մասյացոտնում, բայց աստվածները բերել հասցրել են արքայից-արքայի ոտքերի տակ: Գուցե սա մի բան գիտի Եվպատորի և Զարեհի կապերի մասին:

Այս մտքերն այնպես էին իշխել Տիգրանին, որ կարծես նա այլևս չէր տեսնում իր աչքի առջև կանգնած նահապետ Խաժակին:

Խոր մտածմունքներից նրան սթափեցրեց ասպետ Բագարատի ձայնը.

- Արքայից-արքա...

- Հա, ասպետ, - ուսերը վեր ձգեց Տիգրանը, - սա է , տեսնում եմ: Մինչև հիմա ոչ ոքի մտքով չի անցել որդան կարմիր բույսը վաճառել օտարներին, իսկ այս վատաբարո այրը մտածել է Արարատյան դաշտի զարդը տանել Պադուսի հովիտը: Հռոմը ինչքա՞ն ոսկի պիտի տար այն սերմերի համար, որ դու փորձում էիր գողեգող տանել:

- Չգիտեմ, արքայից-արքա, - դողալով խոսեց նահապետ Խաժակը:

- Ինչո՞ւ չգիտես:

- Ես ավելի շատ ուզում էի փախչել քո վրեժխնդրությունից, քան որդան կարմիրը նվիրել հռոմեացիներին:

- Դու վատաբարո մարդ, չէիր ուզում ճանաչել իմ իշխանությունը և մտել էիր Զարեհի փեշի տակ, հիմա էլ Հայոց աստվածատուր բարիքն ես հափշտակում: Եվ այդ բոլորը ոսկու համար: Տեսնում եմ, որ դու շատ ես սիրում ոսկին: Ասպետ Բագարատ, տարեք այս մարդուն և նետեցեք Տիգրանակերտի ոսկու իմ գանձարանը: Թողեք նա ապրի այդ մետաղների մեջ առանց հացի: Ինչ է, ասպետ, հարմար պատիժ չէ՞: Դե, ես սրան չեմ էլ պատժում, այլ միայն կատարում եմ իր ցանկությունը:

Թող լողա ոսկու մեջ: Չէ՞ որ դա այս մարդու երազանքն է:

- Խաժակին դուրս տանելուց հետո Բագարատը դիմեց Տիգրանին.

- Ե՞րբ պիտի ընդունես Լուկուլլոսի դեսպանին:

- Հենց որ Կլավդիոսը իր աչքով տեսնի, թե Հռոմի բարեկամությունը աղերսող Զարբիենոսին ինչպես են դիմավորում անտիոքցիները, - իսկույն պատասխանեց Տիգրանը:

Հաջորդ օրը անտիոքցիները ականատես եղան զվարճալի տեսարանին: Մոխրագույն ավանակի վրա կապկպել էին Զարբիենոս արքային, ավանակի գլխին ամրացրել արքայի թագը: Հայ զինվորները հրում էին չորքոտանուն և ամեն մի նոր փողոց մտնելիս բացականչում.

- Էյ, անտիոքցիներ, տեսեք ու ճանաչեցեք Կորդուքի արքա Զարբիենոսին, նա դավաճան է, հռոմեացիների կողմից կաշառված:

Ամբոխը աղմկում էր, բացականչում, թափոր կազմում Զարբիենոսի ետևից:

Այդ տեսարանը ամենից շատ ցնցեց Լուկուլլոսի դեսպանին: Նա գլուխը կորցրել էր: Մի՞թե իրենց լրտեսել են: Ինչ խայտառակություն է սա: Լուկուլլոսը կհռհռա իր վրա և Կլոդիային կասի. "Տեսար, թե որքան անճարակ է եղբայրդ: Բարբարոսներն ավելի դիվանագետ են, քան նա": Այո, հայերն ավելի խորամանկ են երևում, քան նրանց մասին գիտեն Հռոմում: Մի՞թե ձախողվեց իր հանձնարարությունը: Տես, թե ինչպես են վարվում խեղճ Զարբիենոսի հետ: Այդ ի՞նչ է փայլում նրա բերանում: Հա ոսկի են խոթել բերանը, որ բոլորն իմանան, թե նա կաշառվել է: Բայց ես նրան Լուկուլլոսի անունից միայն խոստումներ եմ տվել:

Ապպիոս Կլավդիոսին չթողեցին երկար դատողություններ անելու: Հյուրանոցի նրա սենյակում երևաց զորապետ Մամիկը և հայտնեց.

- Ես եկել եմ քեզ ուղեկցելու արքայից-արքա Մեծն Տիգրանի մոտ:

- Վերջապես, - չոր պատասխանեց Կլավդիոսը և հետևեց Մամիկին:

Արքայական դահլիճում ոսկեզօծ թախտի վրա բազմել է Տիգրանը: Նրա աջ կողմին ասպետ Բագարատն էր, ձախ կողմին՝ Փայլակ Մարդպետունին: Կլավդիոսը ներս մտավ՝ մտքերը չժողոված: Զուսպ ողջունեց հետո նա արքայից-արքային մեկեց գրտնակաձև բոլորած հավատարմաթուղթը և ասաց.

- Լուկուլլոսը ողջունում է աշխարհակալ Տիգրանին:

Արքայից-արքան բացեց Լուկուլլոսի հավատարմաթուղթը, հայացքը սահեցրեց նրա վրայով և մի կողմ դնելով այն, դիմեց Կլավդիոսին.

- Քեզ դո՞ւր եկավ քաղաքամայր Անտիոքը:

Ասես Կլավդիոսի դեմքին մտրակեցին: Ահա թե որքան գոռոզն է այս մեծ արմենը: Նա փոխանակ պատասխանելու Լուկուլլոսի պահանջին, խոսքը կտուրն է գցում: Ուզում է ցույց

տալ, որ Հռոմի զորավարի հավատարմաթուղթը ոչինչ էլ չարժե իր համար: Թե՞ փորձում է չափել իր հանբերությունը:

Դեսպանը ճիգ թափեց ժպտալու և պատասխանեց.

- Հռոմեացիներն օգնում են, որ Հայքում զվարճանան:

Կլավդիոսի դեմքը լրջացավ:

- Հռոմը, արքայից-արքա, մինչև հիմա քեզ ոչ մի վնաս չի տվել և մտադիր էլ չէ վնասել, եթե դու Եվպատորին հանձնես Լուկուլլոսի ձեռքը:

- Քո խոսքերը, ով դեսպան, սպառնալիքի պես են հնչում, դու մոռանում ես, որ գտնվում ես Հայքում և ոչ թե Բյութանիայում:

- Հայքի համար շահավետ է Հռոմի բարեկամությունը:

- Ինչպես կվարվեիր դու, ով տրիբուն Ապպիոս Կլավդիոս, եթե դու արքա լինեիր, և պարտված Լուկուլլոսը փախչեր ու ապաստաներ քեզ մոտ, դու քո քրոջ ամուսնուն կհանձնեի՞ր Եվպատորի ձեռքը:

- Լուկուլլոսն ու Եվպատորը իրար նման չեն: Լուկուլլոսը քեզ վատություն չի արել, իսկ Եվպատորը, չնայած քո աներն է, բայց թշնամիդ է:

- Մի՞թե:

- Այո, արքայից-արքա, չէ՞ որ բոլորը գիտեն, որ նա դրդեց քո հարազատ որդուն ապստամբելու և իրեն հռչակելու արքայից-արքա: Դու սպանեցիր քո դավաճան որդիներին Եվպատորի պատճառով:

- Դու որտե՞ղ լսեցիր, թե Եվպատորն է դրդել Զարեհին:

- Պոնտոսում:

- Գուցե այստեղ՝ Հայքում իմացար այդ մասին:

- Ոչ, արքայից-արքա, ես ասացի, որ Պոնտոսում եմ լսել, իսկ Հայքում այդ մասին գիտեն բոլորը:

- Ոչ ոքի ձեռքին ապացույց չկա ասածներդ հաստատելու համար:

- Դա իհարկե, քիչ է վերաբերվում ինձ, ես եկել եմ միայն Եվպատորին տանելու և ոչ թե նրան արդարացնելու:

- Հայտնիր զորավար Լուկուլլոսին, որ ես մերժում եմ նրա պահանջը:

- Խորհուրդ չէի տա, արքայից-արքա, այդպես պատասխանելու, գուցե դու մտածեիր և նոր...

- Դեսպան, Հայոց աշխարհի արքայից-արքան չի սիրում կրկնել:

Կլավդիոսը հասկացավ, որ ընդունելությունն ավարտված է:

Հենց նույն օրը հռոմեական դեսպանախումբը դուրս եկավ Անտիոքից և ուղևորվեց դեպի Պոնտոս: Մինչև Հայքի սահմաններից հեռանալը Կլավդիոսին ուղեկցեց Փայլակ Մարդպետունին:

ՀԱՅՈՑ ՆԱՎԱՍԱՐԴԸ

Նպատ լեռան ստորոտամերձ ժայռի տափարակ կատարից արքայական զորագնդի մի խումբ սրնգահարների երկարաշունչ նվագով ավետում էին լուսաբացը: Նվագի հնչյունները սփռվում էին Բագրևանդի ընդարձակ դաշտում, հասնում մինչև Արածանի գետը և ձուլվում վերջինիս շառաչին:

Իր թամքին առաջին անգամ հեծյալ կրող նժույգի նման Արածանին նետվում էր զառիվարից ցած, հետո ծառս լինում, մի պահ խաղաղվում ու նոր թափով մղվում ատաջ: Մերթ ընդ մերթ գետի կապտաթույր կոհակները զարնվում էին իրար, գունատվում և ասես վախից՝ ճերմակին տալիս:

Բագրևանդի դաշտը նման է մի լարված աղեղի, որի նետը Արածանին է: Այդ աղեղի բոլորքը երիզող բլրաշարքերն իրենց գրկի մեջ սեղմել են աղեղը և կարծես չեն ուզում բաց թողնել, երկյուղելով նրա նետի՝ Արածանիի կորստից:

Բնության բոլոր գույներով պճնված դաշտը անուշահոտ բույր էր խնկարկում:

Արածանիի աջ ափով, գետի հոսանքին համընթաց, երկար գոտու պես ձգվում է Արտաշատ Զարիշատ արքայական պողոտան: Այդ գոտու ճարմանդներն են Բագավան և Զարեհավան քաղաքները, որոնք այնքան են մոտեցել իրար, որ ասես ուր որ է պիտի ագուցվեն: Հեռվում, Սինակի ստորոտներում, երևում են Գայլատու լճի երկնագույն ջրերը: Բազմաճյուղ եղջերվի նման Սինակը թեքվել է լճի վրա և կարծես ուզում էր հագեցներ իր ծարավը:

Ամռան վերջին ամսվա՝ նավասարդի Արեգ օրն էր: Հայոց աշխարհի բոլոր անկյուններից բազմաթիվ խմբերով դեպի Բագրևանդ էին դիմում նահապետներ, սեպուհներ, ազատներ ու շինականներ: Աղձնիքից ու Փայտակարանից, Զարիշատից, Կարինից ու Կապուտանից գալիս են ու գալիս՝ որը հեծյալ, որը հետիոտն: Արածանիի ափերը ծածկվել են անթիվ վրաններով:

Քաղաքամայր Տիգրանակերտից Բագրևանդ է եկել նաև արքայական տունը: Նպատի փեշերին փողփողում էին արծվակիր երկնագույն դրոշները: Այստեղից էին Հայոց զորագնդերը, արքայից-արքա Տիգրանը, տիկնունին, արքունիքի հարյուրավոր սպասավորները:

Բագրևանդը հյուրընկալ է բոլորին:

Արևն արդեն ոսկեզօծել էր Նպատի ճակատը, իսկ Սինակի փեշերից դեռ շարունակում էին իջնել մարդկային խմբերը, և հերթափոխելով դեռ նվագում էին արքայական զորագնդերի սրնգահարները:

Այսօր սկսվում է Նավասարդի տոնը:

Հայոց աշխարհի հինավուրց սովորություն է Նոր տարվա առաջին օրերին հավաքվել Բագրևանդի դաշտում, երկրպագել կյանք ու բարիք տվող աստվածներին, խնդալ, ուրախանալ, ուժ ու կորով խնդրել Վահագնից, երգել ու պարել, մրցություններ անցկացնել:

Վաղ առավոտ է: Արածանիի աջ ափին, դեպի Գայլատու լիճը տանող ճանապարհի երկու կողմերին ընկած փոքրիկ անտառի ընդարձակ բացատում, կանոնավոր շարքերով կանգնել են արքայական զորագնդերի զինավառ վաշտերը:

Յուրաքանչյուր զորագունդ ուներ իր դրոշը: Առջևի շարքերում փողփողացող դրոշների վրա երևում էր Բագրատունյաց տոհմական զինանշանը՝ Բագարատը մարգարտաշար խույրը դնում է Հայոց թագավոր Մեծն Արտաշեսի գլխին: Բագրատունյաց գնդին հաջորդում է Մարդպետականը. սրա դրոշների զինանշանը պատկերում էր քնած ապարանքի շուրջը պահակող մի քաջ զորականի, որի մարմնի վրա կային մի քանի տասնյակ աչքեր ու ականջներ: Հետո գալիս էին Գնունիների, Խորխոռունյաց, Գնթունիների և այլոց գնդերը:

Զորաշարի առջևում, շարքերից մի քանի շարք հեռու, խաղացող, սիգապանծ նժույգի վրա նստել էր արքայից-արքա Տիգրանը: Նրա հանդերձը որսորդական էր: Որդան կարմրագույն շապիկի վրայից հագել է արքայական ծիրանին, գլխին դրել ոսկեճաճանչ, ատամնավոր վարսակալ խույրը, ոտքերը հագցրել երկար, ճերմակափայլ սրանքազգեստներ: Նրա ածիլված դեմքը շառագունել էր վսեմ հաճույքից:

Ձախ ձեռքով նա բռնել էր նժույգի ոսկեզօծ երասանը, աջով նետ ու աղեղը: Տիգրանից պատշաճ հեռավորության վրա ծառս-ծառս էին լինում հեծյալ թիկնապահների նժույգները:

Ահա բացատ բերող ճանապարհի անկյունում երևացին մի քանի ձիավորներ: Երբ նրանք մոտեցան և արքայական շքախմբից գտնվում էին մի նետաձիգ հեռավորության վրա, ձայնարկու վաշտն սկսեց նվագել: Վաշտի սրնգահարներն ու թմբկահարների մարտակոչ քայլերգը աշխուժացրեց նժույգներին, և հեծյալ զորաշարի կանոնավոր շարքերը երերացին, ընդառաջ եկող խմբից անջատվեց մի հեծյալ և համաչափ վարգով մոտեցավ արքային: Նա թեթև շարժումով իջավ նժույգից, Տիգրանից հինգ քայլ հեռու ծնկի եկավ, հանեց վարսակալը և ողջունեց արքայից-արքային: Նրա վարսակալի վրա Բագրատունյաց տան զինանշանն էր: Նվագը լռեց:

- Ողջույն իմ արքային: Քո գալուստը ցնծությամբ է լցրել Բագրևանդը: Այս նվիրական օրը քո սպասումին է մեր ծաղկաճիծաղ գավառը:

Այժմ Հայոց աշխարհին ցնծություն բերող Նավասարդի Արեգը թող բացվի արքայական որսով: Այս անտառում արքայից-արքայի անվրեպ նետին են սպասում Բագրևանդի ամենաընտիր եղջերուներն ու այծյամները:

Էյ, դուք, սրնգահարք և թմբկահարք, ձայնեցեք ուժգին և ազդարարեք սրբազան որսաժամը: Հաջող որս, արքա:

Բագրևանդի նահապետը որսի ելավ և, վարսակալը գլխին դնելով, ցատկեց նժույգին: Ձայնարկու վաշտը թնդացրեց մարտական մի նվագ: Զորաշարը փուլ եկավ: Մի քանի հեծյալ վաշտեր դուրս եկան բացատից և սկսեցին օղակել փոքրիկ անտառը:

Բագրևանդի նահապետը իր շքախմբով խորացավ անտառի մեջ և արգելափակոցներից բաց թողեց որսացու եղջերուներն ու այծյամները: Ազատություն ստացած կենդանիները աջ ու ձախ թռչկոտելով, սկսեցին վազվզել հսկա կաղնիների ու տանձենիների արանքում: Բայց հենց որ հասնում էին անտառի ծայրին ու փորձում դուրս գալ բաց դաշտը, խրտնում էին շուրջկալող զորականների կանչերից և ետ սլանում դեպի անտառի խորքը: Արգելափակոց վանդակից նրանք ընկել էին անտառ վանդակը: Վերջինիս խաբուսիկ մեծությունը աշխուժացրել էր եղջերուներին ու այծյամներին:

Քիչ հետո ձայնարկու վաշտը մի որոտընդոստ հաղթանվագով ավարտեց Տիգրանի հաջողակ որսը: Անտառի խորքից լսվեցին բացականչություններ: Քառորդ ժամ անց խառույկների վրա երևացին որսի մսով բեռնավորված առաջին շամփուրները:

Արքայից-արքա Տիգրանի խրախճանքը տևեց մինչև կեսօր: Բազմաթիվ նահապետներով շրջապատված, նա դուրս եկավ անտառից և, անցնելով Արածանին, ժամանեց տոնախմբության վայրը: Նախօրոք պատրաստված տաղավարի աշտարակի վրա արքայից-արքայի երևալը տոնախմբությունն սկսելու ազդանշան եղավ:

Արածանիի ձախ կողմը երիզող հարթության վրա երիտասարդ տղաներն ու դեռատի աղջիկները ծաղկեպսակներով շուրջպար են բռնել: Ուռենու բարակ շիվերից պատրաստված աղեղնաչափ օղակները զարդարել են բազմագույն ծաղիկներով, իրենց գլխներին ամրացրել ալ-կարմիր թերթիկներ ունեցող համասփյուռ կոկոններ և մտել շուրջպարի:

Տղաները հագել էին միատեսակ, հազիվ մինչև ծնկները հասնող տոգաներ, իսկ աղջիկները՝ սպիտակափառ մետաքսի շրջազգեստներ, որ բացվում էին շուրջառի նման և առջևի մասում ծալք տալիս՝ պարանոցի աջ անկյունից մինչև ձախ ոտքի սրունքը: Այդ շեղագիծ ծալքերն ագուցված էին ծաղկահյուս գոտիներով: Քանի գնում, այնքան ավելի էր ոգևորվում պարողների խումբը: Ահա պարախմբի հեզասահ շղթան խոնարհվեց գետնին, ծաղկեպսակները զույգ ձեռքերով գլխներին բարձրացրած՝ պարողներն սկսեցին ծնկաչոք երգել միաձայն.

Հազար ողջույն, Նավասարդ,

Գալդ բարի, Նավասարդ,

Ահա, այսպես կանչով

Հողը ծածկիր, Նավասարդ:

Նպատի չափ բերք տուր մեզ,

Ջրի նման կյանք տուր մեզ,

Չարից հեռու պահիր մեզ,

Երջանկաբեր Նավասարդ

Պարաշրջանը բոլորող ամբոխը արձագանքեց քաղցրահնչուն երգի ղողանջներին: Հազարավոր մարդիկ ձեռքերը դեպի երկինք կարկառած, սկսեցին ձայնակցել խմբին: Ամբոխի հուժկու ձայնը թնդում էր Բագրևանդի ընդարձակ դաշտում:

Մի քանի րոպե հետո միանգամից մարեց երգը, և խումբը շարունակեց պարը:

Ծաղկեպսակները գետնին դնելով, յուրաքանչյուրն սկսեց պսակի անցքից մատներով փորփրել հողը և կուզեկուզ պարելով պտտվել պսակի շուրջը: Իբր եռանդով հերկում են հողը, հետո ձեռքերի յուրահատուկ շարժումներով ցույց տալիս, որ ցանում ու մշակում են այն: Ու նորից հայացքները դարձնում են դեպի երկինք: Առատ բերք հայցող նրանց հայացքները, մի պահ տագնապ արտահայտելուց հետո, բացվում են մեկեն, և խումբը հուզաթաթավ ձայնով արտասանում է. "Անահիտ, Անահիտ, Անահիտ": Եվ իբր աստվածուհին լսում ու կատարում է նրանց ցանկությունը: Պարողները իրենց գլուխները հանդարտ թեքում են դեպի պսակները: Մի անհուն երջանկության փայլ ողողում է նրանց դեմքերը: Նրանք այնպես են նայում ծաղկեպսակներին, ասես Անահիտ աստվածուհին հենց նոր ստեղծեց դրանք: Հետո սկսեցին ծաղկեպսակներն այնպես բարձրացնել գետնից, որ ասես վիթխարի ծանրություն լինեին վերցնելիս: Դա արդեն բերքահավաքն էր, որին ուղեկցում էր ուրախ երգը:

Հայոց հողի պահապան,

Ով գթառատ Անահիտ,

Հայոց բերքի պահապան,

Մեր Անահիտ, Անահիտ:

Պարախումբը նորից հեզանազ շարժումներով սկսեց շրջան կազմել: Ձախ ձեռքերի արմունկները հագցրած ծաղկեպսակներով պարողները չոքելով աջ ոտքի վրա, կանգ առան մի պահ:

Եվ շղթան ստացավ վահանափակի տեսք: Քիչ հետո պատռվեց վահանափակը, և պարախմբի շղթան ձգվեց մի քանի աղեղներով: Պարողներն իրենց հայացքները դարձրին դեպի հյուսիս-արևմուտք: Հեռվում ուրվագծվում էին Հայկական պարի լեռնակատարները: Թվում է թե Հայոց նախնի վիթխարահասակ հսկաները իրենց աղխերով շուրջպար են բռնել և պարելու ժամանակ էլ քարացել: Ասես այդ վշտից ճերմակել է շուրջպարը վարող Մասիսի գլուխը: Ստացվեց Հայկական Պարը՝ Մասիս, Բարդող, Սուկավետ և Այծպտկունք գագաթներով:

Մի որոտընդոստ ու երկարաձիգ բացականչության տակ շուրջպարն ավարտվեց:

Երեկոյանում էր: Սինակի գագաթներին հանգրվանած արևը, անփույթ գեղեցկուհու նման, խաղում էր իր հրակարմիր վարսերի հետ: Արածանիի ափերին կարճատև ընդմիջումներով դեռ շարունակվում էին շուրջպարերն ու խմբերգերը: Մի քանի վրանների առջև երևացին առաջին խարույկները: Իրիկնային զովասուն զեփյուռը սկսեց այնպես խաղալ դաշտում, որ ասես աղմկալից ցերեկվա հոգնածությունից Բագրևանդը հանգիստ էր առնում: Մոտակա գյուղերից և Բագավան ու Զարեհավան քաղաքներից տոնախմբությանը եկած մարդիկ կամաց-կամաց սկսեցին ցրվել տները:

Թաղիքածածկ վրանի ներսում, փոքրիկ գահավորակի վրա թիկն է տվել Կապուտանի երիտասարդ նահապետ Պաճույճ Տրպատունին: Նա փաթաթվել էր բրդյա շուրջառի մեջ, որի վրա ճարտար ձեռքերով պատկերված է Կապուտան ծովակը: Գահավորակի կողքին ընկած էր մի փոքրիկ հանդերձակալ սնդուկ, իսկ սնդուկի վրա՝ եռոտանի աշտանակ:

Աշտանակի գագաթաձև գագաթին դրված ճրագի պատրույգը վառվում էր ճրթճրթալով: Դրսի ուրախ երգն ու բացականչությունը կարծես չէին հասնում նահապետի ականջներին: Տարված իր խոհերով՝ Պաճույճը վերացել էր Բագրևանդից և թռել հեռու Փայտակարան:

Ջահել էր Պաճույճը: Չնայած արդեն լրանում էր նրա քսանհինգ տարին, բայց պատանու դիմագծեր ուներ, և աղվամազը դեռ նոր էր սկսել երևալ դեմքին:

Տարօրինակ մտքերի հախուռն գրոհից կարծես բթացել էր նրա գիտակցությունը: Նա նույնիսկ չնկատեց վրան մտած զինավառ զորականին: Վերջինս մի քանի քայլ արեց վրանի ներսում և կամացուկ շշնջաց:

- Դու քնա՞ծ ես, նահապետ:

- Քնա՞ծ, - Պաճույճն, ուշքի գալով, կտրուկ բարձրացրեց գլուխը և նստեց գահավորակին:

- Չկա, նահապետ, չկա ու չկա, - խոսել սկսեց զորականը, - ոտքի տակ տվի ողջ Բագրևանդը, բայց նրա այստեղ գտնվելու մասին ոչ մի լուր չառա:

- Երևի Բագրևանդի ընդարձակ դաշտում կորսված ասեղն ավելի դյուրությամբ գտնվի, քան կենդանի մարդը, - ասաց երիտասարդ նահապետը, դեմքը խոժոռելով:

- Նահապետ, օրիորդ Շուշանի ետևից ես ման եմ եկել լուսածեգից մինչև ուշ երեկո: Եղա Բագավանի և Զարեհավանի հյուրակայաններում, դաշտի մի քանի գյուղերում, շատերին հարցուփորձ արի, սակայն բոլորն էլ միաբերան հաստատեցին, որ այս կողմերում փայտակարանցի կին չի երևացել:

Նավասարդի հաջորդ, Հրանտ օրվա լուսաբացին Բագրևանդի դաշտում ցրված վրանները անհետացան միանգամից, և մարդկանց խմբերը ուղղվեցին դեպի Արածանիի ակունքները: Այստեղ, Ծաղկանց լեռների զովասուն լանջերին ձիարշավ և գինարբուք կլինի:

Քարքարոտ, դժվարանցանելի էր այն ճանապարհը կամ ավելի շուտ արահետը, որ Արածանիի կողերը քերելով դաշտը միանում էր Բագրևանդի ծայրամասի՝ Ծաղկանց լեռնապարի հետ, ուր գտնվում էր Արածանիի ակունքը: Բագրավանից մինչև Ծաղկոտն ավանը քսանյոթ թավալում տարածություն էր, իսկ Ծաղկոտնից մինչև գետի ակունքները՝ մի քիչ ավելին: Այդ ամբողջ ճանապարհը կտրելու համար, եթե չհաշվենք Արտաշատ-Զարիշատ արքայական պողոտայի շուրջ տասներկու թավալում գիծը, պետք է գնալ շատ զգույշ, որովհետև նեղ արահետը երբեմն անցնում էր անդնդախոր ձորերով:

Գետի ափերին կային ատամնավոր աշտարակներով մի քանի բերդեր, որոնք դարձել էին արքայական զորագնդերի մշտական բանակատեղիները:

Տոնախմբության թափորի մի ծայրը հասել էր Ծաղկոտն ավանին, իսկ մյուսը դեռ նոր էր դուրս գալիս արքայական պողոտայից:

Ծաղկոտն ավանի հյուսիսային ծայրում, քարերի վրա նստած, զրուցում էին չորս ստրուկներ: Սովորական, հասարակ տոգայից բացի նրանց հագին ոչինչ չկար: Դիմացի բերդի աշտարակից նրանց հսկում էր Մարդպետական գնդի մի զորական:

Դրանք արքայամայր Երանուհու պատգարակակիր ստրուկներն էին, որ սպասում էին թափորի տիկնունյաց խմբին:

Նրանց տանջահար դեմքերին իրենց վիճակի դառն պատմությունն էր դրոշմված:

Նոր էին նրանք դուրս գալիս Ծաղկոտնից, երբ Արածանիի ակունքների մոտ, Ծաղկանց լեռների ստորոտներում երևացին առաջին վրանները:

Արածանին այս մասում նման է մի փոքրիկ գետակի, որի երկու ափերին ձագարաձև փոսերից շատրվանում են տաք ջրեր, այնքան տաք, որ նրանց մեջ ոչխարի միսը եփվում է այնպես, ինչպես եռացրած կաթսայում: Այդ ցայտաղբյուրները Բագրևանդի առաջին հայկազունի նահապետ Սահակ Բագրատունու եղբոր՝ Վարշակի անունով կոչվում են Վարշակի ջերմուկներ:

Տեղ հասած նավասարդավորները սկսեցին ճաշի պատրաստություն տեսնել:

Շատերը հեռավոր վայրերից այստեղ էին եկել Վարշակի ջերմուկով բուժվելու: Ոմանք փորձում էին խմել եռացող ջրից կամ լողանալ:

Ծաղիկների բուրմունքը, ախորժագրգիռ օդը և ճանապարհի հոգնությունը նավասարդավորներին ստիպեցին նախաճաշել:

Կեսօրվա մոտ նավասարդավորները շտապեցին դեպի ձիարշավարանը: Վերջինս ձվաձև տափարակի վրա պատրաստված բազմագալար արշավուղի էր՝ հիսուն նետաձիգ երկարությամբ և մասը մասն լայնությամբ Արշավուղու բոլորքը պատող բլրապատի վրա աղմկում էր հետաքրքրասեր ամբոխը: Պատնեշակործան մեքենայի տպավորություն թողնող աշտարակի վրա տեղավորվել էր արքայից-արքան, մի քանի նահապետների ու տիկնունու կանանց հետ:

Այդ աշտարակի կողքից հեծյալները պետք է երեք անգամ շրջան կատարեին արշավուղիով: Մրցության մեջ հաղթողը ստանալու էր կենաց թասը:

Հայոց աշխարհի քսանհինգ ընտիր հեծյալներ նժույգների սանձերից բռնած, սպասում էին արշավն սկսելու արքայի նշանին: Սրաթռիչ նժույգները չէին կարողանում հանգիստ կանգնել տեղում: Արշավը վարում էր Բագրևանդի նահապետը: Նա մոտենում էր բոլոր նժույգավարներին և առանձին-առանձին խոսում նրանց հետ:

Արքայական աշտարակ-դիտարանի գոգահարթակին դրված էր արծաթյա, նախշավուն բռնակով կենաց թասը: Այն լցված էր Հայոց աշխարհի բուրավետ ծաղիկներից պատրաստված հեղուկով: Մեծագույն երջանկություն էր ապրում այն մարդը, որը մրցության մեջ ձեռք էր բերում այդ թասը: Նրա պարունակությունը համարում էին անմահական հեղուկ և չէին հավատում նրանց մահվանը, ովքեր իրենց կյանքում թեկուզ մի ումպ խմել էին այդ հեղուկից:

Զիարշավի մասնակիցների մեջ էր նաև երիտասարդ նավապետ Պաճույճ Տրպատունին: Քնատությունից նրա աչքերի կոպերն ավելի շարժուն էին դարձել, հաստ շրթունքները՝ բռնվել դողով: Նա չէր գտել Շուշանին:

Բոլոր նժույգավորները, կենաց թասին ակնդետ, ժպտում էին և լուռ իրենց մտքերում հաղթություն հայցում Վահագնից: Իսկ Տրպատունին թասին նայում էր այնպիսի հայացքով, որ կարծես թե նրա մեջ էլ էր որոնում Շուշանին: Նա չնկատեց նույնիսկ, թե ինչպես տրվեց արշավի նշանը, և երբ բոլորը թռան նժույգների վրա, ինքն էլ ակամա ոտքը դրեց ասպանդակին: Բայց մինչև նա իրեն կզգար նժույգի թամբին, հեծյալներն ահագին տարածություն հեռացել էին նշանակետից:

Նրա նժույգը պոկ եկավ տեղից և քամու պես սլացավ առաջ:

Բլրապատի տարբեր կողմերից ոգեշնչող բացականչությունները կարծես երկարատև քնից արթնացրին Տրպատունուն: Նա թեքվեց դեպի ձիու գլուխը և սկսեց ձգել բաշը: Ձին նոր թափ առավ և քիչ հետո հասավ իր ընկերներին: Տրպատունուն թվում էր, թե կտրվել է գետնից և իր նժույգի հետ թռչում է օդում: Նա իր մտքում մեկ պատկերացնում էր, թե երկրորդ շրջավազքից հետո արշավակետում կենաց թասը ձեռքին իրեն կդիմավորի Շուշանը, մեկ՝ թե իր նժույգի գավակին Շուշանին նստեցրած փախչում է, խուսափելով իրեն հալածող թշնամիներին: Ոչ ետ էր նայում, ոչ էլ լսում իր հետևից հասնող նժույգների սմբակների դոփյունները: Առաջին շրջավազքի քսաներորդ ձողափայտի մոտ հեծյալներից մեկը հասավ Տրպատունուն: Լցված մոլեգին ատելությամբ, Պաճույճն սկսեց ջղաձգորեն քաշել ձիու բաշը, բայց նրա առջևից սլացող ճերմակ նժույգը արդեն հեռանում էր, և երիտասարդ նահապետը միայն կրճտացնում էր ատամները: Առաջին շրջավազքից հետո արքայական աշտարակ-դիտարանի վրա շփոթ առաջացավ: Առջևից սլացող նժույգավարի մասին Տիգրանը հարցում արեց կողքի նստածներին:

Գողթան գավառի քաջերից է, արքայից-արքա, - ասաց Փայտակարանի նահապետ Առնակ Փայտակարանցին, բայց գույնը գցեց, երբ արքայամոր ձախ թևում նստած Գողթան գավառի նահապետը առարկեց նրան.

- Ոչ, արքայից-արքա, առջևից վազողը գողթանցի չէ,

- Ապա ո՞ր գավառից է նա:

- Բացի Փայտակարանցուց, բոլորը հաստատեցին, որ այդ նժույգավարի դեմքը անծանոթ է: Կանչեցին Բագրևանդի նահապետին: Ծերունին միայն սկսեց դժգոհել իր հիշողությունից:

- Նահապետներից մեկը փորձեց սրամտել.

- Արքայից-արքա, կանչիր գուշակին, թող նա ցրի մեր տարակուսանքը:

Բոլորը ծիծաղեցին:

Այդ ժամանակ մրցողները երկրորդ շրջանն էին կատարում կանգառակետի կողքով: Այս անգամ էլ երկու-երեք մասն առաջ ընկած նույն հեծյալն էր՝ կապույտ վարսակալը գլխին:

- Նրա վարսակալի ճակատամասում տոհմանշան չկար, արքայից-արքա, ես խիստ ուշադիր նայեցի, - ասաց նահապետներից մեկը:

- Արքայից-արքայի դեմքը ամպեց:

- Այդ ո՞ր վատանշան շինականն է հանդգնել չափվել քաջազների հետ, գուցե մի ստրուկ է նա, որ փորձել է իր կյանքի գնով գեթ մի անգամ առնել կենաց հեղուկի համը:

Չեմ կարծում արքայից-արքա, - ծերունական դողով բռնված, ասաց Բագրևանդի նահապետը, - ես քննել եմ բոլորին, ճիշտ է, չեմ կարողանում հիշել նրա որ գավառից լինելը, բայց համոզված եմ, որ նա քաջազն է և ոչ ստրուկ կամ շինական:

Առաջինը տեղ հասավ ճերմակ ձիավորը: Նրանից հետո Պաճույճ Տրպատունին: Տեղ հասնողներն իջնում էին և նժույգները հանձնում սպասավորներին: Երբ վերջին ձիավորը իջավ նժույգից, բոլորը զորաշար կազմեցին և մոտեցան արքայական շքախմբին:

Այստեղ պատահեց մի այնպիսի բան, որ զարմանք պատճառեց բոլորին: Արշավի հաղթող հեծյալը գլխից վերցրեց վարսակալը, հանեց շուրջառը և սրունքների մոտ վարտիքավորված լայն տոգան: Հանդերձները հանելուց հետո արքայի առջև կանգնել էր քրտնքից մարմնին կպած շրջազգեստով մի գեղեցկուհի:

- Շուշան, - զարմանքի և ուրախության զգացումով լռությունը խախտեց Տրպատունին:

Առնակ Փայտակարանցին մոտեցավ արքայից-արքային ու ներողահայց տոնով սկսեց.

- Թող ների ինձ արքայից-արքան, տերը Հայոց աշխարհի, որ դուստրն իմ փորձել է չափվել այր քաջարիների հետ և հաղթող դուրս եկել: Ես ուստր չունեմ, արքայից-արքա, և կնոջս մահից հետո իմ կյանքի երջանկությունը տեսնում եմ միայն դստերս ուրախության մեջ: Նա խնդրել է ինձ մինչև ձիարշավի վերջը գաղտնի պահել իր այր չլինելը: Ես երդվել եմ Անահիտ աստվածուհու անունով և կատարել խոստումս, որ պատճառ է դարձել քո արքայական հոգու վրդովմանը: Արդ, խնդրում եմ, արքայից-արքա, որ քո պատիժը տարածվի միայն ինձ վրա և նրանից մաս չունենա իմ դուստրը:

Զայնարկու վաշտի նվագի ու պարգևաբաշխության սրահը շրջապատող բազմության բացականչության տակ Տիգրանը կենաց թասը հանձնեց Շուշանին: Հաղթող նժույգավարուհին հնավանդ սովորությամբ իր ձեռքով մի բաժակ լցրեց թասի ծաղկահյութով և մեկնեց արքային, ասելով. - Երկար կյանք Հայոց աշխարհի տիրոջը:

Բայց արքան դեռ չէր հասցրել բաժակը մինչև վերջ ըմպել, երբ պարգևաբաշխության սրահի առջև երևացին քրտինքի մեջ կորած երկու հեծյալ սուրհանդակներ:

Արքայից-արքա, - զեկուցեց նրանցից մեկը, - Լուկուլլոսի զորքերը գողեգող մտել են մեր աշխարհի սահմանները և շարժվում են Տիգրանակերտ:

ՈՏՔԻ ԵԼ, ՀԱՅԿՅԱՆ ԵՐԿԻՐ, ՀՌՈՄՆ Է ԳԱԼԻՍ

Երկաթակերտից յոթ հրասախ դեպի արևմուտք, Եդեմաբուխ գետի ափից դեպի Տիգրանակերտ ձգվող արքայական պողոտայի ձախ կողքին տարածվում է Զվարճանքի պուրակը: Այստեղ էին իրենց տոնախմբություններն ու զվարճանքի ժամերն անցկացնում ոչ միայն Երկաթակերտի, այլև Ծոփքի շատ երիտասարդներ:

Սաղարթախիտ ծառերն այստեղ փակում էին արևի ճառագայթների ուղին և անտառը պահում խորհրդավոր մթության մեջ:

Նավասարդյան օրը դեռ չէր բացվել, երբ իր երեք հազար մարտիկներով անտառ մտավ զորապետ Մեհրուժանը: Զվարճանքի պուրակը վերածվեց ռազմական ճամբարի:

Մեհրուժանը դառը խոհերով դուրս եկավ Երկաթակերտից:

Նրա կինը՝ գեղուհի Աշխենը, այսօր պետք է ծննդաբերեր: Չար զուգադիպություն է՝ անդրանիկ զավակի ծնունդը համընկնում է Հայքի վրա Հռոմի ուխտադրուժ հարձակմանը: Գոռոզամիտ Լուկուլլոս, կռվի համար ուրիշ ժամանակ չգտա՞ր, մտածում էր Մեհրուժանը:

Նա մի անգամ էլ ծոցից հանեց և աչքի անցկացրեց արքայից-արքայի հրամանը. "դիմագրավել վայկուն Լուկուլլոսին՝ մինչև տերունական բանակը կհասնի Ծոփք":

Արի ու երեք հազար զինվորներով դիմագրավիր մի քանի բյուր հեծյալ ունեցող հռոմեական բանակին:

Երեք ժամ հետո թշնամին կհասնի Զվարճանքի պուրակին և կանգ չի առնի այստեղ, որովհետև Երկաթակերտը կողքին է: Բայց դեռ Լուկուլլոսը չգիտի, որ հայերն այդպես հեշտությամբ ճանապարհ չեն տա նրան: Ոչ, թշնամին չպետք է Երկաթակերտ մտնի, չէ՞ որ այնտեղ է իր Աշխենը, գուցե հիմա լույս աշխարհ է եկել նաև իր զավակը, իսկ եթե նույնիսկ նա դեռ չի ծնվել, ապա նրա հայրը թույլ չի տա, որ իր զավակը գերության մեջ ծնվի:

Մի պահ նրա աչքի առջև կանգնեց Ծոփքի վերջին արքա Արտանը: Այն ժամանակ Ծոփքում լուրեր տարածեցին, թե Մեհրուժանը կաշառվել է Տիգրանից և դավաճանել Զարեհյաններին: Բայց ինչու միայն այն ժամանակ: Չէ՞ որ այժմ էլ Ծոփքում կան մարդիկ, որ չեն սիրում ոչ իրեն, ոչ էլ Տիգրանին: Զարմանալ կարելի է հայերի վրա: Ինչ տեսակ ժողովուրդ են: Ախր չէ՞ որ միևնույն է. Զարեհյանները երկար չէին կարող պահել Ծոփքը, որը փոքրիկ պատառի պես կուլ կգնար Հռոմի երախում: Իսկ հիմա չի գնա, որովհետև նրա թիկունքին Մեծ Հայքն է, համայն Հայոց աշխարհը: Չէ, եթե հայերը համաձույլ լինեն՝ ոչ ոք չի կարող հաղթել նրանց:

Այս մտքերով տարված, նա հասավ հրամանատարական վրանին, որտեղ հավաքվել էին մի խումբ վաշտապետներ:

- Ի՞նչ նորություն կա, - հարցրեց Մեհրուժանը, մոտենալով վաշտապետներին:

- Լուկուլլոսի ընդհանուր բանակից առաջ ընկած արագ վարգով մեզ են մոտենում երկու հեծյալ լեգեոններ:

Նրանց հրամանատարն է Սեքստիլիոս լեգատը: Բոլոր հաստատուսները, պրինցեսպները և տրիարիոսները դարձել են հեծյալ, - խոսեց վաշտապետներից մեկը:

Կեսօրին պուրակի կողքին երևացին հռոմեական բանակի առաջապահ գնդերը: Արքայական պողոտան դողում էր հազարավոր նժույգների սմբակների դոփյուններից: Փորձառու լեգեոնականները այնպես էին շարվել, որ ամեն րոպե պատրաստ էին դիմագրավելու հակառակորդին:

Հայկական հեծյալ վաշտերը մխրճվեցին թշնամու զորքի մեջ և սկսեցին անողոք կոտորածը:

Մարտը կատաղի բնույթ ստացավ:

Հռոմեացիները կամաց-կամաց օղակի մեջ առան հերոսաբար մարտնչող հայկական գնդերին: Մեհրուժանը իր դրանիկ ջոկատով նետվեց դեպի Զվարճանքի պուրակը՝ փորձելով պատռել թշնամու շղթան և բարձրացնել հայերի մարտական ոգին: Նրա վրա ուղղեցին նետերի մի երկար փունջ: Նետը պատռել էր զրահը և խրվել մարմնի մեջ: Սիրելի Մեհրուժանի մահը տեսած զինվորներից մեկը, որ հրաշքով ճեղքել էր հռոմեացիների օղակը, քամու արագությամբ հասավ Երկաթակերտ և շտապեց Մեհրուժանի ապարանքը: Նրա առջևը կտրեց Աշխենի դայակը:

- Ո՞ւր է Մեհրուժանը: Աշխենը տղա է բերել, ոսկեգանգուր տղա:

- Դայակ Մեհրուժանը չկա: Հիմա չի կարելի մի րոպե կորցնել, շուտով հռոմեացիները կմտնեն Երկաթակերտ:

- Դա ճիշտ է, քաջ զինվոր, օգնիր, որ փրկենք զորավարի որդուն: Երկաթակերտի փոքրիկ կայազորը չդիմադրեց Լուկուլլոսին:

Զարեհյանների ամառային հնամյա ապարանքում Լուկուլլոսն առանձնացավ իր դպիրի հետ և մտածեց, թե ինչպես գրի առաջին զեկույցը ծերակույտին: Զվարճանքի պուրակի ճակատամարտը նրան ակամայից դարձրել է դյուրաբորբոք: Երիտասարդ դպիրն իսկույն կռահեց զորավարի վրդովմունքը և աշխատեց չնայել նրա կողմը: Դպիրն արդեն ընտելացել էր Լուկուլլոսին: Զայրույթի պահին չպետք է նայել նրա դեմքին: Դա ավելի էր կատաղեցնում զորավարին:

Հայերը լավ դիմադրեցին մեզ, - ատամները կրճտացնելով խոսել սկսեց Լուկուլլոսը:

Տիգրանակերտը պաշարվեց հանկարծակի: Մինչև արքայից-արքան կհավաքեր իր զորքը, կսպասեր Փայտակարանում վարժվող հայկական այրուձիուն, Լուկուլլոսի լեգեոնները օղակի մեջ առան Հայքի երեց քաղաքամայրը:

Քաղաքի կայազորի պետ Մամիկը առանց խուճապի մատնվելու պատրաստվեց պաշտպանվել հռոմեացիներից: Տիգրանակերտի կայազորը բաղկացած էր տարբեր ազգի մարտիկներից: Գլխավոր դարպասների պաշտպանությունը Մամիկը հանձնարարեց բացառապես հայերից կազմված գնդերին, իսկ մյուս աշտարակների վրա բարձրացրեց հույն ու հրեա վարձկաններին: Տիգրանակերտի տիկնունու պալատում բոլորը քնել էին, բացի Կլեոպատրայից: Քաղաքի պաշարումը ահաբեկել էր տիկնանց-տիկնոջը: Նա գիտեր, որ եթե ինքը ընկնի Լուկուլլոսի ձեռքը, ապա կյանքի վերջին օրերը կանցկացնի Հռոմում ու խորամանկ Լուկուլլոսի հաղթահանդեսում:

Հռոմեացին լավ խաբեց: Բայց ո՞վ է մեղավոր, որ Տիգրանը ողջամիտ չգտնվեց, չուզեց միանալ իր աներոջը՝ Եվպատորին և համատեղ ուժերով հարվածել Լուկուլլոսին: Դե այժմ դիմացիր հռոմեական հեղեղին: Որտե՞ղ է գտնվում հիմա իր հայրը՝ Պոնտոսի մեծ այրը: Ինչո՞ւ գոնե հիմա Տիգրանը չի դիմում նրա օգնությանը: Չէ՞ որ Եվպատորը լավ գիտե հռոմեացիներին: Ասենք հիմա Կլեոպատրայի համար միևնույն է: Կոծկելով՝ կոտրված բաժակին նախկին տեսքը տալ չես կարող: Տիգրանը կոտրել է Կլեոպատրայի ողջ երջանկությունը: Նա սպանել է Զարեհին ու Միջնակին: Սարսափելի է նույնիսկ մտաբերել դա: Հավանաբար աստվածները պատժեն նրան դրա համար: Ուր գնալ, Պոնտոսը ընկել է, իսկ Հայքն ուրիշ բարեկամ չունի: Բայց ինչպե՞ս թողնել այստեղ Կրտսեր Տիգրանին:

Արքայից-արքան արքունիքում հայտարարեց, թե Կրտսեր Տիգրանին հռչակում է Ծոփքի փոխարքա: Բայց ո՞ւմ սիրտն է ուզում շահել Մեծն Տիգրանը: Կլեոպատրա՞յի: Ոչ: Արքայից-արքան լավ գիտե, որ տիկնանց-տիկնոջ խոցված սրտին ոչ մի թագ սպեղանի չի դառնա: Հավանաբար, Տիգրանը այդ քայլով ձգտում է մեղմացնել հենց իր ցավը: Դե, արքայից-արքան ուրիշների ցավը զգալ չի կարող: Եվ կտուժի մի օր: Կլեոպատրայի ցավից կտուժի և նա, և այդ Մարդպետունին:

Նա՝ Մարդպետունին է սպանել իմ որդուն, իմ Զարեհին, Կրտսեր Տիգրանը դեռ չգիտե այդ մասին, ժամանակը գա՝ ինքը կասի նրան և երդվել կտա, որ նա վրեժխնդիր լինի իր եղբայրների համար: Հաստատ է, որ արքայից-արքան Մարդպետունու թելադրանքով է սպանել տվել Զարեհին, գուցե Միջնակին էլ... Կլեոպատրան կցանկանար, որ Լուկուլլոսը հաղթեր միայն այն ճակատամարտերում, որտեղ սպանվեր Արտավազդը:

Համասփյուռը շատ է իրեն գոռոզ պահում: Նրան թվում է, թե ամբողջ օրը միմոսների հետ անցկացնող իր Արտավազդը կարող է երկիր ղեկավարել և գլխին արքայից-արքայի թագ դնել:

Որքան պետք է ներեք այս անարդարությունները դուք՝ աստվածներդ Հայոց, և դու՝ ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ:

Ինչքան ժամանակ է, որ չի հանդիպել արքայից-արքային: Զարեհից ու Միջնակից հետո դժվար է հանդիպել: Տիգրանը կարծում էր նույնիսկ, թե ինքը՝ Կլեոպատրան, մասնակից է Արտաշատյան դավադրությանը: Որքան երկար խոսեցին վերջին անգամ: Այնուամենայնիվ Տիգրանը չհամոզվեց: Նա մեղադրում էր նաև Եվպատորին: Իսկ ով պիտի մի օր բացի ճշմարտությունը:

ՈՒՇԱՑԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արևի գունդը հեռու տեսածիրում դեռ չէր պոկվել գետնից, բայց Արտաշատում սկսվել էր արտասովոր եռուզեռ: Բնակիչներն իրար հաղորդում էին երևակայական զանազան մանրամասներով համեմված պատմություններ հռոմեացիների արշավի մասին: Երկրի տարբեր կողմերից Տիգրանի հրամանով հավաքվում էին զինավառ գնդերը:

Խոր Վիրապի միջնաբերդի աշտարակից արքայից-արքան նայում էր դեպի Արաքսի մյուս ափը: Ծաղկանկար սրնքակալները և ալ կարմիր տոգան վեհաշուք կերպարանք էին տալիս նրան: Դեմքի վրա հաճելի գծագրվող արծվենի քիթը, որ ճակատից զատված էր աննշան

աղեղով, նրբաձև շրթունքները, գեղեցիկ ծնոտը, մեծ խորաթափանց աչքերը և դրանց վրանող սև հոնքերը համամասնում էին արքայից-արքայի դեմքը: Նրա արծվենի հայացքն ու գեղեցկագույն կեցվածքը դեռ պատանեկան տարիներին գրավել էին անդրիագործների ուշադրությունը: Վահագն աստծու անդրիագործը թույլտվություն էր խնդրել արքայից և օրերով դիտել արքայազնի դեմքի գծագրությունը:

Այժմ նա հենվել էր միջնաբերդի իր ննջարանի պատշգամբի հենասյանը և խոր մտքերի մեջ ընկղմված նայում էր առջևում փռված քաղաքին:

Խոր Վիրապի բարձրությունից պարզ տեսանելի էր ողջ քաղաքամայրը: Աջ կողմից եռակի ծնկածալով Արաքսն էր սահմանազծում քաղաքի հարավային մասը, ձախ անկյունից Մեծամորը շեղակիորեն խառնվում էր Արաքսին, և Արտաշատը երկու գետերի արանքում դառնում է թերակղզի, որի պարանոցից տասներկու հրասախ երկարությամբ քաղաքի արևմտյան պարիսպներն են, իսկ դրանց արտաքին կողմից՝ պարիսպներին ուղեկցող յոթ կանգուն բարձրությամբ և մեկուկես մասն երկարությամբ՝ խրամները: Պաշարման ժամանակ Արաքսի և Մեծամորի ջրերը կարող են բաց թողնվել այդ խրամները, որով քաղաքը ամբողջովին կշրջափակվեր ջրագոտով և անմատչելի կդառնար թշնամու համար: Հարյուր տարի է, ինչ կառուցվել է Արտաշատը, սակայն այդ խրամներով միայն մի անգամ է ջուր թողնվել, և այն էլ ոչ թե նրա համար, որ թշնամի է մոտեցել քաղաքին, այլ պարզապես արքայազն Տիգրանի ցանկությամբ: Այն ժամանակ խրամների ուղղությամբ ձիու վրա նստած արքայազնը քահ-քահ ծիծաղել է խրամամերձ ագարակատերերի խուճապի վրա, որոնք ջրալեցուն խրամներն ընդունել են քաղաքը թշնամու կողմից պաշարվելու նշան:

Լուկուլլոսը խառնեց բոլոր հաշիվները: Պարծենկոտ հռոմեացուն մինչև Հայքից քշելը շատ ուժեր կկորցնի ինքը: Ասենք արդեն կորցրել է, չէ՞ որ իր լավագույն ու հավատարիմ զորավար Մեհրուժանն ընկավ: Ծոփքը չի կարող նրան փոխարինել մեկ ուրիշով:

Ահա արդեն մեկ ամիս է, ինչ Լուկուլլոսը հասել է Տիգրանակերտին, բայց առաջ չի շարժվում: Խորամանկն է երևում այս նոր Վայկունը, վախենում է մտնել Հայքի խորքերը: Հավանաբար պատրաստվում է ճակատամարտ տալ հենց Տիգրանակերտի մոտ, գիտե որ արքայից-արքան չի կարող հեշտությամբ զիջել տերության ամենամեծ քաղաքը: Իսկ Հայոց բանակը դեռ պատրաստ չէ:

Պատշգամբում ոտնաձայն լսելով, արքայից-արքան հայացքը կտրեց հեռվից: Մռայլ մտքերով ծանրաբեռնված, նա շարժվեց դեպի դահլիճի մուտքը: Սպասարանում նույնիսկ չնկատեց, որ մեկը գոտկատեղից ծալվելով, խոր գլուխ տվեց իրեն: Գորշագույն աստիճանների աղեղները նրան տարան դեպի պալատի արաքսահայաց սենյակների կողմը: Դա պալատի տիկնունյաց բաժինն էր: Մի ժամանակ այստեղ էին ապրում արքայից-արքայի հոր բոլոր կանայք:

Տիգրանը կանգ առավ կիսաշրջանաձև մի դռան առջև, որի վրա քանդակված էր ամբողջովին մերկ Աստղիկ աստվածուհին: Կաթնագույն մարմարից պատրաստված այդ քանդակը ծառայում էր որպես ելք: Պալատի տիկնունյաց բաժնում դա եզակի պատկեր չէր, սակայն:

Տիգրանը ակամայից մտաբերեց իր կանանց, որոնք այժմ գտնվում են հռոմեացիների կողմից շրջապատված Տիգրանակերտում:

Նա մի քիչ էլ առաջացավ և կամացուկ խփեց Աստղիկ-դռան մուրճզարկանը:

- Ո՞վ է, - լսվեց ներսից:

Արքայից-արքան բացեց դուռը և մտավ ներս:

- Ա, Տիգրանս, լավ է, հիշում ես մորդ և տեսակցության գալիս, - ասաց Երանուհին և, ընդառաջ գնալով, գրկեց որդուն ու համբուրեց նրա ճակատը:

Տիկնանց-տիկինն ութսունհինգն անց, մոխրագույն աչքերով, դեմքի երբեմնի գեղեցկությունը արդեն կորցրած կին էր: Նրա պարանոցի մոտ շրջանաձև, բազմօղակ վարսահյուսքը նմանվում էր ծալծլված օձի: Տարիքը անողոք հողմի պես քշել-տարել էր նրա դեմքի չքնաղությունը, ու այժմ այդ հողմի ալիքներից փրկված այտերի կաթնագույն փոսիկներն են այն միակ վկաները, թե տասնամյակներ առաջ ինչպիսի գեղեցկություն է ունեցել Երանուհին, որ դարձել էր տիկնանց-տիկին:

Ուսերին գցած կանացի լայն շուրջառի տոտերը հավաքելով՝ Երանուհին հրավիրեց որդուն նստել գահավորակի վրա:

- Տեսնո՞ւմ ես, արքայամայր, - խոսեց Տիգրանը՝ աշխատելով վանել վրդովմունքը, - որքան ձանձրալի է միայնակ ապրել այս սենյակում:

- Զավակս, ամեն մարդու իր բույնն է հարազատ:

- Մի՞թե հաճելի չէր լինի, մայր, որ քո շուրջը պտտվեն հարսներդ ու թոռներդ:

- Համասփյուռից ու Արտավազդից բացի, ոչ ոքի չեմ ուզում տեսնել, իսկ դու նրանց նստեցրել ես Տիգրանակերտում:

Ինչո՞ւ ես ուշացնում, փրկիր թոռանս, Լուկուլլոսը կարող է գրավել Տիգրանակերտը ու գերել նրան:

Տիգրանը դառն ժպտաց:

- Մի՞թե հիմա ավելի կարևոր է Արտավազդին փրկելը, արքայամայր, երկիր է խուժել թշնամին, ես եկել եմ խորհրդակցելու քեզ հետ:

- Խոսիր զավակս:

- Արքայամայր, Հռոմը կռվի է կանչում մեզ, նա գողի պես մտել է մեր տունը և թալանում է ամեն բան: Ես զորահավաք եմ կատարում, բայց Լուկուլլոսին այդքան էլ հեշտ չէ հաղթելը: Ես դիմել եմ իմ բարեկամների օգնությանը, ինձ մոտ եմ հրավիրել նաև Եվպատորին:

- Եվպատորի՞ն:

- Այո, արքայամայր:

- Զավակս, ինչո՞ւ ես նվաստացնում քեզ համայն աշխարհի առջև: Այդ վատաբարո մարդուց դու ոչ մի օգուտ չունես: Չէ՞ որ մեր արքունիքում շատ գործեր խճճվել են նրա պատճառով: Նա պետք է միայն գոհ լինի, որ ապաստան ես տվել իրեն և չես հանձնել Լուկուլլոսի ձեռքը: Իսկ հիմա կանչում ես քեզ մոտ, ինչի՞ համար, որ Կլեոպատրան քիթն ավելի վեր ցցի, որ գա և իր մյուս թոռանն էլ լարի քո դեմ և հեռվից ծիծաղի մեզ վրա: Դու սխալվում ես, Տիգրան, գործ չունես նրա հետ, չէ՞ որ Լուկուլլոսը Հայքի վրա հարձակվեց հենց նրա պատճառով: Ավելի լավ է Լուկուլլոսի հետ բանակցել, Միհրդատին հանձնել նրա ձեռքը, Հայքը ազատել կռվից, քան դաշնակցել Միհրդատի հետ ընդդեմ Հռոմի:

Եվ ինչ օգուտ դրանից:

Ի՞նչ ուժ ունի հիմա Միհրդատը, Պոնտոսից հազիվ ճողոպրել ու փրկել է իր գլուխը, ինչո՞վ կարող է նա հիմա օգնել քեզ: Լավ մտածիր, որդիս, այդպիսի սխալները քո հաջորդներն էլ չեն կարող ուղղել:

- Արքայամայր, ես պետք է ուղղեմ իմ ամենամեծ սխալը:

- Ո՞րն ես համարում այն:

- Եթե ես իր ժամանակին դաշնակցեի Միհրդատի հետ, ապա այժմ Լուկուլլոսը Հայքում չէր լինի: Դու ասում ես, թե Լուկուլլոսը Միհրդատի համար է մտել Հայք: Ոչ, արքայամայր, Միհրդատը հիմա ոչինչ չունի, իսկ հռոմեացին սուր չի ճոճի ոչինչ չունեցող մարդու վրա: Հռոմը եկել է թալանելու Հայքը, փակելու մեր ճանապարհը դեպի Ներքին ծովի ափերը: Լուկուլլոսը խաբում է բոլոր ասիացիներին: Նա ուժասպառ արեց նույնիսկ Եվպատորին, որի ամբողջ կյանքը անցավ հռոմեացիների դեմ մղած կռիվներում: Ես մտածել եմ շատ երկար, արքայամայր, և իմ բոլոր խոհերը եզրահանգում են այն բանին, որ պետք է դաշնակցեմ Եվպատորի հետ: Ես նրան կհանձնեմ մեր զորքի մի փոքրիկ մասը և կուղարկեմ Պոնտոս: Այնտեղ նա շուտ ոտքի կկանգնի և նոր ճակատ կբացի հռոմեացիների թիկունքում: Դա կթուլացնի Լուկուլլոսին, և այն ժամանակ հեշտ կլինի հռոմեացիներին ջարդելը:

- Զավակս, արա, ինչպես ուզում ես, բայց Եվպատորից ես ոչինչ չեմ սպասում հօգուտ Հայքի:

- Փորձենք մեր Պոնտոսի բարեկամությունը, արքայամայր, գուցե այն օգտավետ լինի:

- Իսկ ե՞րբ ես մտադիր շարժվել դեպի Տիգրանակերտ:

- Ես ասպետ Բագարատին ուղարկել եմ վեց հազար զինվորներով, մեր բանակն արդեն կամաց-կամաց կենտրոնանում է Տիգրանակերտի մոտ, Միհրդատի հետ բանակցելուց հետո շտապ կմեկնեմ նաև ես:

Միջնաբերդից լսվեց ձայնարկու վաշտի նվագը: Արաքսի աջ ափին Տափերական կամուրջով Արտաշատ էր մտնում Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորը: Քաղաքի դարպասները բացվեցին և պոնտացիները ուղղվեցին դեպի միջնաբերդ:

Արքայից-արքան հրաժեշտ տվեց մորը և գնաց դիմավորելու Եվպատորին: Միջնաբերդի ստորին հարկից իջնելիս, նրա աչքին ընկան դեպի հանցանաց խուց տանող աստիճանները: Հանցանաց խուց: Խոր Վիրապի բլրի կրծքում, արքայական քարակերտ ապարանքի ստորին

նկուղն է դա, ուր կալանվում էին հայրենադավ մարդիկ: Տիգրանը մի պահ պատկերացրեց, որ ինքը հաղթում է Լուկուլլոսին և բերում ու նրան նետում է այդ անարև, խոնավ նկուղը:

Երկու տարի է, ինչ Եվպատորը ապաստանել է Հայքի Եկեղյաց գավառի Սինորա բերդում: Տիգրանը շատ բան ուներ նրան ասելու, բայց չէր ուզում հրավիրել նրան արքունիք՝ մտածելով, որ դրանով հռոմեացիներին կգրգռի իր դեմ: Իսկ այժմ այլևս Լուկուլլոսի կարծիքը ոչ մի արժեք չունի: Սխալվում է նաև արքայամայրը՝ Երանուհին. հազար Եվպատոր էլ որ հանձնես Լուկուլլոսին, միևնույն է՝ նա հիմա չի հեռանա Հայքից: Սրով եկողի դեմ սուր պիտի բարձրացնել և ոչ թե ընկնել նրա ոտքերը, որ խնայի քո կյանքը: Եվ եթե նույնիսկ նա խնայի այդ կյանքը, ում է պետք այն: Տիգրանը խորշում է այդպիսի նվաստացած կյանքից:

Պետք է զուսպ լինել և բոլորովին չակնարկել Զարեհի կամ Միջնակի մասին: Այդպես է թելադրում ժամանակը, Եվպատորը հիմա չի կարող Տիգրանին որևէ վնաս տալ: Մինչև այժմ նա ուզում էր, որ Հայքը օգտագործի Հռոմի հետ իր հաշիվները մաքրելու համար, բայց արքայից-արքան բոլոր միջոցներով խանգարել է նրա այդ նպատակները: Խանգարել է, որովհետև հզոր է եղել: Իսկ այժմ պետք է նոր ընթացք տալ դեպքերին: Անհրաժեշտ է Եվպատորին օգտագործել Հռոմի դեմ՝ հանուն Հայքի շահերի: Եվպատորը հիմա չի կարող չկատարել Տիգրանի թելադրանքը, որովհետև զորություն չունի ինքնուրույն շնչելու:

Այդպես էր մտածում արքայից-արքան: Այդ մտածմունքներով էլ Խոր Վիրապի միջնաբերդի հրապարակ դուրս եկավ իր մեծամեծներով: Ահա ռազմակառքից իջավ Պոնտոսի ահեղ արքան՝ Եվպատորը, հավաքեց իր արքայական քղամիդի փեշերը և մոտեցավ Տիգրանին: Նրանք ջերմորեն ողջագուրվեցին ձայնարկու վաշտի հաղթանվագի ներքո: Եվպատորին ուղեկցում էր նրա հավատարիմ զորավար Տաքսիլիոսը:

Քիչ հետո միջնաբերդի արքայական դահլիճում դեմ-դիմաց նստել էին առաջին անգամ իրար հանդիպող աներն ու փեսան: Դահլիճում ըստ աստիճանների տեղեր էին գրավել նաև Պոնտոսի և Հայքի երևելի շատ անձինք:

Յուրովի ռազմական խորհուրդ էր: Այն սկսեց արքայից-արքա Տիգրանը:

- Ես ողջունում եմ իմ մեծ բարեկամին, Պոնտոսի արքա Եվպատորին: Ես խոստացել եմ թանկարժեք զոհեր մատուցել Հայոց բոլոր աստվածներին այս հաճելի հանդիպման համար:Թեև ուշացած հանդիպում է սա, ով մեծդ Եվպատոր, բայց այսօր պահը չէ դատելու նրանց, որոնց մեղքով ձգձգվել է մեր հանդիպումը: Երբ բարեկամը չի հանդիպում բարեկամին՝ կորցնում են երկուսն էլ, իսկ թշնամին շահում է:

- Ես շատ ուրախ եմ Տիգրան, - պատասխանեց Եվպատորը, որ այդքան ողջամիտ ես դատում: Եթե մենք երկուսով այդպես դատեինք մի քանի տարի առաջ՝ հիմա Միջերկրայքում ոչ մի հռոմեացի չէր լինի: Եվ խարդախ ու ստոր Լուկուլլոսն էլ օղակի մեջ չէր առնի Տիգրանակերտը, աղջկաս ու թոռանս:

- Եվպատոր, ես կջարդեմ այդ օձի գլուխը:

- Մի շտապիր, Տիգրան, Լուկուլլոսը շատ խորամանկն է ու խարդախ: Պետք է մաշել նրա համբերությունը, քաշել նրան երկրի խորքը և մասնատել հռոմեական բանակի ուժերը:

- Բայց նա չի ուզում հեռանալ Տիգրանակերտից:

- Իսկ Տիգրանակերտը կարո՞ղ է երկար դիմանալ պաշարմանը:

- Մի քանի տարվա պաշար ունի Հայքի երեց քաղաքամայրը, բայց ես ուրիշ բանից եմ վախենում, քաղաքի կայազորում այլազգիները շատ են, նրանք կարող են դավաճանել:

- Ո՞վ է կայազորի պետը:

- Զորավար Մամիկը:

- Նա քա՞ջ է:

- Այո, քաջ է և համառ:

- Եվպատորը դիմեց զորապետ Տաքսիլիոսին:

- Իսկ դու Տաքսիլիոս, ինչ ես կարծում, Լուկուլլոսը կփորձի՞ ուժով գրավել Տիգրանակերտը:

- Հիմա չի փորձի, արքա, - խոսեց Տաքսիլիոսը, բայց հետո կփորձի:

- Ինչո՞ւ չի փորձի հիմա:

- Նա դեռ չի հանդիպել հայկական բանակին: Նա հավանաբար հիմա պատրաստվում է ճակատամարտ տալ արքայական բանակի հետ, հույս ունի, որ կհաղթի: Միայն այդպիսի ճակատամարտից հետո նա կմտածի Տիգրանակերտի մասին:

- Իսկ եթե ճակատամարտ չտա՞նք նրա հետ:

- Միևնույն է, նա չի շարժվի Տիգրանակերտի մոտից: Նա գիտի, որ արքայից-արքա Տիգրանը շատ քրտինք է թափել այդ քաղաքի վրա և չի կարող օգնության չգալ, դրա համար էլ նա չի հանդգնի խորանալ Հայքի ներսը, Պոնտոսի փորձը խրատել է նրան:

Այդ պահին արքայական դահլիճ մտավ սպասավորներից մեկը և զեկուցեց.

- Արքայից-արքա, եկել է Արցախի նահապետ Սմբատը:

- Ներս հրավիրիր:

Քիչ անց դահլիճ մտավ զինավառ, պարթևահասակ Սմբատ նահապետը: Նա ողջունեց բոլորին և կանգնեց դահլիճի կենտրոնում:

- Մոտեցիր նահապետ, ի՞նչ լուրեր կան, ինչպե՞ս եկար, - հարցրեց արքայից-արքան:

- Արքայից-արքա, ես ընտրեցի Արցախի ամենաքաջ նժույգավարներին և շտապեցի հասնել այստեղ:

- Քանի մարդ կա քո բանակում:

- Տասը հազար:

Հինգ հազարն էլ քո հրամանով ես ուղարկեցի Կապուտան, պարթևների հնարավոր հարձակման դեմ ճակատելու համար:

- Իսկ Օրո՞զը, նա օգնական զորք չուղարկե՞ց:

- Ուղարկեց, արքա, երկու հազար հեծյալ, նրանց էլ ես բերի ինձ հետ:

Սմբատի դուրս գալուց հետո արքայական դահլիճ մտավ Պաճույճ Տրպատունին:

- Իմ բերած նորությունները կարող են տխրեցնել քեզ, արքայից-արքա, - սկսեց նա.

- Դեպի Տիգրանակերտ՝ մեր զորքերին օգնության շտապող արաբներն ընկել են Լուկուլլոսի ցանցի մեջ և ջարդվել գլխովին:

- Հետո՞, հարցրեց Տիգրանը:

- Ես կատարեցի քո հրամանը, արքայից-արքա, հենց Սելևկյան բերդում գլխատել տվեցի Փյունիկեի թագուհուն՝ Սելենեին, իսկ բերդի կայազորը դուրս բերի հարավով և հռոմեացիների քթի տակ հանձնեցի Բագարատին:

Հայոց աշխարհի վրա բացվում էր Սահմի ամսվա Ասակ օրվա առավոտը: Տիգրանակերտից հարավ, Թուխ գետի երկու ափերին տարածվող ընդարձակ դաշտում, դեմ-դիմաց կանգնել էին հայկական ու հռոմեական բանակները:

Գետի աջ ափին մարտի էին պատրաստվել արքայից-արքա Տիգրանի, իսկ ձախ ափին՝ Լուկուլլոսի զորագնդերը:

Արքայից-արքան չլսեց Եվպատորի զորավար Տաքսիլիոսին, որը խորհուրդ տվեց խուսափել ճակատամարտից և մանր մարտերով ջլատել հռոմեացիների ուժերը, խափանել նրա պարենավորումը և նոր միայն դիմել մարտի:

- Դու տեսա՞ր, Տաքսիլիոս, թե ասպետ Բագարատը Լուկուլլոսի աչքի առջև ինչպես մտավ պաշարված քաղաքը և այնտեղից դուրս բերեց իմ գանձերը: Հռոմեացիք անպարտելի չեն, մենք կհաղթենք, մեզ հետ են ատրպատականցիները, աղվանները, վրացիները, արաբները:

- Արքայից-արքա, հռոմեացիների այրուձին համարյա անպարտելի է:

- Բայց այսօր մենք պարտության կմատնենք այն:

Լուկուլլոսը, որ իր այրուձիու հիմնական ուժերը գաղտնի ճանապարհով հասցրել էր հայկական բանակի թիկունքը, երևաց ընդարձակ դաշտի արևելյան մասում գտնվող բլրի վրա: Ոգեշնչելով իր գնդերին, նա գրոհեց հայկական ծանրաշարժ հետիոտն բանակի վրա և սկսեց անխնա կոտորել:

Տիգրանի բանակում խուճապը դարձավ անխուսափելի:

Մարտն ավարտելուց հետո Լուկուլլոսը թույլ տվեց թալանել սպանվածներին: Հռոմեացիներն սկսեցին իրենց ավարառությունը:

Մինչ Լուկուլլոսը ի պատիվ հաղթության գինարբուքի էր նստել Տիգրանակերտի դարպասների տակ, Մթին լեռներում արքայական վրանում անհանգիստ ետ ու առաջ էր գնում Տիգրանը՝ դեմքը խոժոռ, սիրտը՝ վհատ: Ոչ ոք չէր համարձակվում մտնել նրա մոտ: Արքայից-արքային թվում էր, թե աշխարհը փուլ է գալիս, ուր որ է կփլվի նաև իր վրանը: Մի՞թե հայոց աստվածները, այսքան անգութ են, ինչո՞ւ այսպես հուսախաբ արեցին իրեն:

- Իսկ ինչո՞ւ ես թողեցի, որ հռոմեացիներն ինձ հետ հանդիպեին այստեղ, իմ երկրի ներսում, ինչու ուշացրի նրանց հետ իմ մարտը:

Չէ՞ որ, երբ ես դեռ երիտասարդ էի, կարող էի նրանց քշել շատ հեռու: Ինչո՞ւ ես այնքան ժամանակ կորցրի Փյունիկեում, երբ կարող էի կռվի պատրաստվել Գամիրքի հողի վրա: Ես խնդրում եմ ձեզ, օգնեցեք ինձ, աստվածներդ Հայոց, թույլ տվեք ապրել աշխարհի վրա դեռ այնքան ժամանակ, մինչև վրեժ լուծեմ Լուկուլլոսից, Հռոմից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՂՆԻՔԸ

Տիգրանակերտի տակ հայկական բանակի պարտության լուրը տարածվեց երկրի բոլոր անկյուններում: Արքայից-արքան, սակայն, չշարժվեց Մթին լեռներից, որտեղ նրա շուրջն էին հավաքվում ցիրուցան եղած զորքի մնացորդները:

Ոգևորված առաջին հաղթությամբ, Լուկուլլոսը թույլ տվեց իր լեգիոնականներին ասպատակել Աղձնիքի, Անահտականի ու Տարոնի գյուղերը: Հռոմեացիք թալանում էին մեհյանները, խլում շինականների ձմեռվա պաշարը, գերավարում գեղեցիկ հայուհիներին:

Աղձնիքի ու Տարոնի սահմանագլխին, փոքրիկ հովտում ընկած Կապան գյուղը ցենտուրիոն Միչուպին շրջապատեց ադամամութին: Իր հարյուրյակով նա կտրեց գյուղից դուրս եկող բոլոր ճանապարհները և ինչպես ինքն էր ասում. "որսը գցեց ցանցի մեջ":

Միչուպին քառասունհինգն անց էր: Հինգ տարուց ավելի է, ինչ նա Փոքր Ասիա է ընկել Լուկուլլոսի հետ:

Մինչև այժմ Միչուպին երկու հայկական գյուղեր է թալանել, Կապանը կլինի երրորդը:

Բայց երևում է, որ սա մեծ գյուղ է, շատ հարստություն կունենա և գեղեցիկ աղջիկներ:

Պահակներ թողնելով ճանապարհների եզրերին առանց ժամանակ կորցնելու, իր լեգեոնականներով խուժեց գյուղ:

Սկսվեց աղմուկ-աղաղակը, լաց ու կոծը: Միչուպիականները ոչ միայն խլում էին շինականների հացահատիկը, անասունները, այլև հանում էին թանկարժեք հագուստները:

Սակայն կապանցիները հեշտությամբ չենթարկվեցին հռոմեացիներին: Կապանի ծայրում գտնվող մի տանն էին հավաքել գեղեցիկ աղջիկներին ու կանանց: Նրանց մեջ բոլորից համարձակը գյուղապետի կին Զեփյուռն էր: Քառասունն անց այս կորովի գեղջկուհին ծանր բռունց ուներ: Նրանից քաշվում էին նույնիսկ երիտասարդ տղամարդիկ:

Զեփյուռը երկու կանանց ուղարկեց մոտակա գյուղը՝ Սոսավան: Հետախույզները վերադարձան ու հայտնեցին, որ հռոմեացիները թալանել են նաև Սոսավանը և մի քանի գեղեցիկ աղջիկների ու կանանց գերած, հեռացել են դեպի Արտաշավան:

Զեփյուռը կարգի բերեց իր ջոկատը և հաջորդ օրվա առավոտյան դեմ փակեց այն նեղ կիրճը, որտեղ պետք է վերադառնային միչուպիականները:

Խոր ձորով անաղմուկ հոսում էր լեռնային փոքրիկ մի գետակ: Նրա աջ ափի արահետանման ճանապարհը, որտեղով մի ձիավոր հազիվ էր անցնում, Արտաշավանը միացնում էր Կապանի հետ: Կիրճը կես թավալում երկարություն ուներ: Ծերպերից նայելիս, նրա տեսքը ահավոր էր:

Զեփյուռը իր զինակիցներով դիրքավորվեց ժայռերի ետևում ու սպասեց հռոմեացիներին: Իսկ նրանք չուշացան:

Սակայն, բոլորովին անսպասելի, հռոմեացիները հայտնվեցին ոչ միայն Արտաշավանի, այլև Սոսավանի կողմից: Անդունդի վրա կախված ելուստից մի հայուհի թափահարեց որդան կարմիր գույնի թաշկինակը, որով իմաց էր տալիս, թե թշնամուն կիրճի մեջ ոչնչացնելու Զեփյուռի ծրագիրը մնում է անփոփոխ:

Հակառակ կողմից եկող հռոմեացիներն իրար հանդիպեցին կիրճի խորքում:

Անդունդի վրա կախված ելուստից մեկը թափահարեց ճերմակ գլխաշորը: Զեփյուռի ջոկատը սկսեց մեկ-մեկ շարքից հանել կիրճի մեջ ընկած հռոմեացիներին: Միչուպիի զինակիցները փորձեցին ետ դառնալ դեպի Արտաշավան, բայց այստեղ էլ կիրճի մուտքը փակված էր այնպես, ինչպես մյուս ծայրում: Վանդակի մեջ ընկած լեգեոնականները, ձիերից իջան, սկսեցին փրկության ելք որոնել: Նրանք չէին լսում միմյանց, որովհետև ցրված էին նեղ ու երկար արահետի վրա: Հայուհիները ձորն էին նետում հսկա քարեր: Նրանք գերի վերցրին լեգեոականների, որոնց մեջ էին Արկելիոսն ու Միչուպին, ազատեցին Արտաշավանից գերևարած քսան կանանց ու աղջիկների:

Զեփյուռը առանձնացրեց Արկելիոսին ու Միչուպիին:

- Քո ձայնն ինձ ծանոթ է, ասա ի՞նչ է քո անունը:

- Միչուպի:

- Դո՞ւ հրդեհեցիր Կապանը:

- Ես սովոր չեմ պատասխանել կանանց:

Սովոր չես, բարբարոս, իսկ ինչի ես դու սովոր, գրոհել անզեն գյուղերի վրա, թալանել ու սպանել անմեղ մարդկանց, ավերել հայոց գյուղերը: Ասա, ինչի՞ ես սովոր: Ուզում էիր, որ բաղնիք սարքեն քեզ համար, և հայուհիները լողացնեն քո կեղտոտ մարմի՞նը, ասա ի՞նչ ես քարացել: Հիմա ես ի կատար կածեմ քո ցանկությունը, քեզ համար բաղնիք կսարքեմ, և դու կծանոթանաս մեր բարեկրթությանը:

- Ի՞նչ եք ուզում անել:

- Հանվիր, հիմա կտեսնես:

- Բայց այսքան կանանց ներկայությամբ ինչպես կարող ենք...

- Ահա թե ինչ, դու ուզում ես ասել, թե նույնիսկ ամոթի զգացմունքից զուրկ չե՞ս: Ապա ինչպե՞ս էիր հրամայում, որ Կապանի գյուղապետը բաղնիք սարքեր քեզ համար և հրամայեր որ մերկ հայուհիները լողացնեն քեզ:

Կանայք նրանց կապեցին ջրվեժի մոտ գտնվող մի ցից քարից:

- Դեհ, աղջիկներ, ապա ձեզ տեսնեմ, լողացրեք սրանց, - կարգադրեց Զեփյուռը:

Հայուհիներն իրենց հետ վերցրած սաղավարտներով սկսեցին ջուր լցնել ջրվեժից և թափել Արկելիոսի ու Միչուպիի գլուխներին: Ցրտից ու սառը ջրից դողահար հռոմեացիները վայնասուն բարձրացրին, բայց կանայք առանց ուշադրություն դարձնելու նրանց բղավոցներին, շարունակեցին ավելի թափով ու ժրաջանությամբ ջուր լցնել Արկելիոսի ու Միչուպիի մարմիններին: Այս զարմանալի բաղնիքը տևեց ավելի քան երկու ժամ, ու չնայած հայուհիները տեսնում էին, որ իրենց գերիներն արդեն սառել են, բայց շարունակում էին "լողացնել" նրանց:

ՄԵԾ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Զմեռային մի գիշեր դարբին Ֆորկուսը Տիգրանակերտի պարիսպներից պարանով իջավ ներքև, մի փոքր շունչ քաշեց, աչք ածեց չորս կողմը և առանց ետ նայելու, վազեց առաջ: Քառորդ ժամ հետո, սակայն, նրան բռնեցին քաղաքը պաշարող լուկուլոսականները: Ֆորկուսին տարան Սեքստիլիոսի մոտ:

- Ո՞վ ես, - կտրուկ հարցրեց Սեքստիլիոսը:

- Մաժաքցի դարբին Ֆորկուսը, արմեններն ինձ Տիգրանակերտ են բերել ուժով, իսկ ես ուզում եմ գնալ մեր քաղաքը, նորոգել իմ տունը, որ ավերեցին արմենները:

- Դա լավ ցանկություն է, ես խոստանում եմ օգնել, որ դու հասնես Մաժաք, բայց այս ցրտին դու ինչպե՞ս կարող ես ոտքով Մաժաք հասնել:

- Եթե թույլ տաք, ես անպայման կհասնեմ:

- Դու գիտե՞ս, թե Մաժաքն այստեղից ինչքան է հեռու:

- Այո, զորապետ Մամիկը Մաժաքից մեզ այստեղ հասցրեց ութ օրում, իսկ ես կարող եմ տուն վերադառնալ ավելի շուտ:

- Իսկ ո՞ր կողմն է գտնվում Մաժաքը:

Ֆորկուսը ձեռքով ցույց տվեց դեպի արևելք: Սեքստիլիոսը հեգնանքով ժպտաց և ասաց.

- Դու ցույց տվիր ճիշտ հակառակ ուղղությունը, իսկ եթե ես թույլ տամ՝ շարունակես քո ճանապարհը, ապա այն քեզ դուրս կբերի Արտաշատ և դու նորից կընկնես արմենների ձեռքը:

- Մի՞թե այդպես սխալ եմ ես կողմնորոշվել, անիծվի այս Հայքը, մարդ չի էլ կարողանում գլխի ընկնել, թե արևը որտեղից է ելնում, կարծես ամեն օր նա փոխում է իր ուղին, հավանաբար լեռները մոլորեցնում են նրան:

- Ապա, Ֆորկուս, պատմիր, թե ինչ են անում Տիգրանակերտում:

- Ինչ պիտի անեն, տղամարդիկ հերթապահում են բերդապարիսպների վրա և անիծում բոլոր արմենիներին:

- Իսկ ինչու են նրանք դիմադրում հռոմեացիներին:

- Ապա ինչ անեն, այստեղ ոտից գլուխ զինված հայկական գնդեր կան, որ կարող են իսկույն պատժել բոլորին: Բերդապարիսպների վրա հայերը երեք անգամ շատ են գաղթականներից, իսկ քաղաքի բոլոր գլխավոր դարպասները ամբողջովին գտնվում են հայերի ձեռքում:

- Լսիր ինձ, Ֆորկուս, ուշադիր լսիր: Վերադարձիր Տիգրանակերտ, հայտնիր բոլոր գաղթականներին, որ եթե Լուկուլլոսը գրավի քաղաքը, ապա բոլոր գաղթականներին կվերադարձնի իրենց հայրենի քաղաքները: Միևնույն է, Տիգրան արմենը չի կարող այլևս օգնության հասնել, իսկ Տիգրանակերտը մենք կգրավենք: Բայց եթե այժմ գաղթականները օգնեն մեզ, ապա մեր բանակը կմտնի քաղաք և կազատի քեզ ու բոլոր նրանց, որոնք մահվան սպառնալիքի տակ Միջերկրայքից քշվել են Հայք:

Զորապետ Մամիկը հարավային դարպասների մոտ կատաղի պայքար էր մղում հռոմեացիների դեմ: Քաղաքի մյուս մասերում կռիվներն արդեն դադարել էին, հռոմեացիները լցվել էին Տիգրանակերտ և սկսել կողոպուտը:

Սակայն Մամիկը ամենևին չէր մտածում հանձնվել հաղթողներին:

Նա իր երկու հարյուր խիզախներով ամրացել էր հարավային միջնաբերդում և նետերի տարափով էր դիմավորում բոլոր կողմերից եկող թշնամուն:

Վրա հասավ ձմեռային երեկոն: Քաղաք մտավ հրճվանքից փայլող Լուկուլլոսը: Կողոպուտն ու ավերվածությունները շարունակեցին մինչև ուշ գիշեր: Լուկուլլոսը համոզված էր, որ Մամիկը առավոտյան կհանձնվի իրեն: Բայց հաջորդ օրը, երբ հռոմեացի պատգամախոսները մոտեցան Մամիկի մատույցին առաջարկելու, որ հայերը անձնատուր լինեն, աշտարակներից նրանց վրա թափվեց հրակեզ կպրանյութ: Մամիկը ետ շպրտեց միմյանց անմիջապես հաջորդող լեգեոնականների երկու գրոհները: Լուկուլլոսը հրամայեց պաշարել մատույցը և այլևս գրոհի չդիմել: Հռոմեացին մտածում էր սովի մատներ Մամիկին:

Իսկ այդ ժամանակ հայ զորապետը եռանդուն նախապատրաստության մեջ էր: Հայերը հավաքում էին մատույցների տակ ընկած լեգեոնականների հանդերձները: Իր գնդի մնացորդներին հանդերձափոխելով՝ Մամիկն իջավ պարիսպների ներքնամասում գտնվող ախոռները: Հայերը վերցրին իրենց զենքերը և նժույգները մոտեցրին մեծ դարպասին: Արդեն իրիկնադեմ էր: Իրենց զինավառ հրամանատարին տեսնելով, փախուստի պատրաստվող Տիգրանակերտի վերջին պաշտպանները ասես մի պահ աշխուժացան: Մամիկը մոտեցավ նրանց, մի վայրկյան հայացքը շրջեց քաղաքի կողմը և ասաց.

- Ով իմ հավատարիմ զինակիցներ, մենք կռվեցինք թշնամու դեմ ինչպես վայել է քաջին, և թեկուզ հռոմեացիք գաղթականների դավաճանության պատճառով գրավեցին մեր Տիգրանակերտը, բայց և այնպես ավելի շատ կորուստներ տվին, քան մենք: Լուկուլլոսը այստեղ երկար չի կարող նստել, մենք՝ հայերս, չենք թողնի, որ նա երկար նստի: Բայց այժմ մեզ միայն մի ուղի է մնում՝ դուրս գալ քաղաքից և միանալ արքայական բանակին: Թշնամու օղակը ճեղքելու համար ես ընտրեցի իրիկնապահը, որովհետև գիշերը վրա հասնելիս, հռոմեացիները չեն համարձակվի մեր ետևից գալ և վտանգել իրենց կյանքը: Նրանք այժմ տաքուկ անկյուններ են գտել և բաժանում են իրենց ավարը: Օգտվենք այս հարմար պահից և դուրս գանք, որ հետո բազմացած վերադառնանք ու վրեժ լուծենք բոլոր հռոմեացիներից: Իսկ եթե պիտի մեռնենք, ապա ավելի պատվաբեր է նժույգի վրա մահ ընդունել, քան չորս պատերի մեջ: Թող ձեզ չսարսափեցնի լեգեոնականների բազմությունը: Խիզախենք, բարեկամներ, թող մեզ հովանի լինի Վահագն աստվածը:

Ջոկատի բոլոր անդամները բարձրացրին իրենց սրերը, որով ասես համաձայնություն էին տալիս զորապետին:

Դարպասները բացվեցին, և Մամիկը իր զինակիցներով դուրս թռավ պարիսպներից: Հռոմեացիներն սկսեցին նետեր արձակել փախչողների ետևից, բայց հայերը քամու արագությամբ շարունակեցին սլանալ առաջ: Լեգեոնականների մի հեծյալ գունդ դուրս եկավ ու փորձեց կտրել փախչողների ճանապարհը: Բայց Մամիկը ավելի ճարպիկ գտնվեց և ջոկատը շրջանցելով դեպի Մթին լեռները, դուրս եկավ Լուկուլլոսի աքցանից:

ՄԵԾՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՇԻՐՄԻ ԱՌՋԵՎ

Զմեռն ու գարունը Տիգրանը անցկացրեց Տարոնի Աշտիշատ քաղաքում: Նա այստեղ էր կենտրոնացնում իր ուժերը, մարզում այրուձին: Արքայից-արքայի բանակում այժմ մնացել էին բացառապես հայերը: Նա ցրեց իր ծանր հետևակը և որոշեց ստեղծել մի հզոր այրուձի: Անձամբ մասնակցում էր զինավարժություններին, խորհուրդներ տալիս Բագարատին ու Մամիկին: Լուկուլլոսի կողմից պաշարվելու ամբողջ մեղքը նա բարդում էր հայկական բանակում եղած օտարազգի վարձկանների վրա: Հայքի տարբեր գավառներից խմբերով գալիս էին նրա մոտ, բայց նա իր դրոշի տակ հավաքում էր միայն երևելիներին:

Յոթանասունամյա ծերունին դեռ հավատում էր իր բախտին: Նրան թվում էր, թե Աշտիշատը ուժ է տալիս իրեն: Չէ՞ որ այստեղ էին թաղված Արտաշեսյան տան բոլոր անդամները: Նախնիներն իրենց գերեզմանից ասես հովանի էին դառնում նրա ձեռնարկումներին, թևավորում նրա ձգտումները: Նա զոհեր էր մատուցում Անահիտի տաճարին, ոսկի ցրում վահեվանյան սենյակներում ու պատրաստվում Լուկուլլոսի հետ նոր հանդիպմանը: Բայց հռոմեացին չէր երևում: Լուկուլլոսը իր հանգիստն էր առնում Կորդվաց աշխարհում և Տիգրանակերտում: Տարիներ առաջ Տիգրանի իշխանությանը ենթարկված Միջերկրայքի մեծապետները իրադարձությունների հորձանքի բերանն ընկած, հպատակություն էին հայտնում Լուկուլլոսին:

Անառիկ էր մնում միայն Մծբինը, որտեղ նստած Տիգրանի եղբայր Գուրը ամեն բոպե սպասում էր հռոմեացիներին, բայց վերջիններս ամենևին չէին մոտենում Մծբինին: Հետևաբար այն, ինչ գտնվում էր իր թիկունքում, Լուկուլլոսը համարում էր իրենը:

Ամառվա սկիզբն էր: Մի գիշեր Աշտիշատի պարիսպների տակ աղմուկ բարձրացավ: Պարեկները բռնել էին հայ շինականի հագուստով մի հռոմեացու, որը վարժ խոսում էր հայերեն: Լրտեսին տարան Մամիկի զորավրանը: Հռոմեացին փորձում էր ամեն կերպ թաքցնել իր անձը:

- Դու կմեռնես այնպիսի մահով, - ասաց զորապետը, - որ աշխարհում դեռ մինչև հիմա չի մահացել ոչ մի մարդ:

- Սպառնալիքը ազդեց: Լրտեսը խոստովանեց, որ ինքն ուղարկվել է Լուկուլլոսի կողմից՝ հետախուզելու հայկական բանակը:

- Որտե՞ղ է հիմա Լուկուլլոսը, - հարցրեց Մամիկը:

- Չգիտեմ, - պատասխանեց հռոմեացին:

- Ուզում ես ասել, որ նա արշավի է դուրս եկել և շարժվում է առաջ:

- Այո:

Երկու օր հետո Տիգրանի հետախույզները հաստատեցին լրտեսի տեղեկությունները: Արքայից-արքան որոշեց հեռանալ Աշտիշատից և հակառակորդին քաշել երկրի խորքը: Ասպետ Բագարատի հետ նա բանակի հիմնական ուժերն ուզում էր հեռացնել Լուկուլլոսից, իսկ Մամիկին թույլ տալ փոքրիկ խմբերով կտցահարել հռոմեացիներին, դժվարացնել նրա երթուղին: Զորավարները չառարկեցին Տիգրանին:

Աշտիշատից դուրս գալուց առաջ մի առավոտ արքայից-արքան իր ծիրանին հագած մտավ քարայրի հյուսիսային կողմում գտնվող Արտաշեսյան գերեզմանատունը:

Թիկնապահները նրան հետևում էին պատշաճ հեռավորությունից:

Տիգրանը շարժվեց մամռապատ, հնաբույր գերեզմանաքարերի արանքով և կանգ առավ նրանցից մեկի մոտ: Նա հանեց իր ճաճանչավոր խույրը և դրեց Մեծն Արտաշեսի հսկա շիրմաքարի վրա, հետո ծունկի եկավ ու սկսեց խոսել.

- Ով դու, Մեծդ Արտաշես, ներիր, որ վրդովում եմ քո հանգիստը: Կարճ միջոց է մնացել, մինչև ես էլ տեղ գրավեմ քո կողքին: Բայց ես խնդրում եմ՝ չշտապեցնեք ինձ՝ իմ նախնիների մոտ կանչելու: Աղերսում եմ ձեզ, ով Արտաշեսյան ոգիներ և քեզ, Մեծդ Արտաշես, որ թույլ տաք ինձ քայլելու այն աշխարհի վրա, որտեղ չհասցրի ավարտել ձեր թերի գործերը:

Ինչպես գլորվեց իմ յոթանասունը՝ ինքս էլ չիմացա: Տասնհինգն անցավ պատանդության մեջ՝ Տիգբոնի անհյուրընկալ պարիսպների օղակում: Մնացած տարիները սպառեցի ձեր պատգամներն ի կատար ածելու համար: Արշավեցի ես բոլոր կողմերով, միավորեցի մեր հողերը, և նրա սահմանները ձգվեցին Վրկանից մինչև Մեծ ծովը: Բայց եկել է հռոմեացին և սպառնում է Հայքի ինքնությանը: Ընկավ Հայքի երեց քաղաքամայրը, ընկան Ծոփքն ու

Միջերկրայքի իմ մյուս հենարանները, պարթևը սպասում է հարմար պահ որսալ, որ նորից տիրի Կապուտանին:

Սարսափելի է երկիրը թողնել այս վիճակում և գալ ու հանգստանալ ձեզ մոտ: Ես թախանձում եմ, թույլ տվեք մի քիչ էլ մնամ այն աշխարհում, ուր քաջի սահմանն իր սուրն է:

Ինձ հուսախաբ են անում նույնիսկ այն աստվածները, որոնց պաշտում եմ ես և զոհեր մատուցում ձեր կողմից ավանդված սովորությամբ:

Ես տեսա բոլոր վայելքները, տեսա փառքի կատարն ու նվաստության ստորոտը, ճաշակեցի այս կյանքի լավն ու վատը, որ բաժին հասցրին ինձ մեր բոլոր աստվածները:

Եվ հիմա, երբ վտանգ է կախվել ձեր բնօրրանի գլխին, ուժ տվեք ինձ նժույգի վրա մնալու և խաչաձևելու իմ սուրը տմարդի Լուկուլլոսի հետ: Նա գողի պես մտել է մեր տունը և ավերում ու թալանում է այն:

Դուք շատ տարիներ բաշխեցիք ինձ փառքի ու վայելքի համար: Իմ կյանքի մնացորդը հիմա պետք է ինձ՝ պահպանելու համար Հայքն ու նրա զորությունը:

Արքայից-արքան մի պահ լռեց, ոտքի ելավ և, վերցնելով իր խույրը, շարունակեց.

- Եվ նորից ներեցեք, որ խանգարեցի ձեր անդորրը, իմ քաջազն հայրեր:

- Ապա երկար ժամանակ խույրը ձեռքին նա կանգնեց լուռ շիրմաքարերի կողքին և քայլերն ուղղեց դեպի դամբարանատան մուտքը:

Մի քանի օր անց Աշտիշատ մտած Լուկուլլոսը ոչինչ չգտավ իր զորքին տալու համար: Նահանջող Տիգրանն իր հետ երկրի խորքն էր քշում այն բնակավայրերի պարենն ու անասունները, որտեղով պիտի անցներ հռոմեական բանակը: Շինականների մեծ մասն ապաստան էր գտել լեռնային քարայրներում ու մթին անտառներում, որտեղ լուկուլլոսականները չէին կարող ոտք դնել: Բայց հաճախ հայկական զինված ջոկատներն իջնում էին արքայական պողոտա, հանկարծակի հարվածում հռոմեացիներին և սրընթաց անհետանում:

Զորապետ Մամիկը իր թեթև հեծելազորով մեկ հայտնվում էր Լուկուլլոսի խոր թիկունքում, մեկ՝ առաջապահ գնդերի մոտ: Արքայից-արքայի հրամանով Լուկուլլոսի դրոշի տակ գտնվող բոլոր զինվորները, որ գերի էին ընկնում Մամիկի կամ զինված հայ շինականների ձեռքը, պետք է գլխատվեին տեղն ու տեղը:

Բայց և այնպես Լուկուլլոսի յոթանասուն հազարանոց բանակը Տոսպա ծովակի արևմտյան ափով շարունակում էր մտնել Հայքի խորքը:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՍԱՂԱՎԱՐՏԸ

Նավասարդի Արեգ օրվա լուսաբացին արքայից-արքա Տիգրանը Ծաղկանց լեռների փեշերի տակ դուրս եկավ Արածանիի աջ ափը և իր վաթսուն հազարանոց այրուձիով փակեց Արտաշատ տանող արքայական պողոտան:

Ընդարձակ դաշտի հյուսիսային կողմում, իր զորավրանում Տիգրանը խորհրդակցում էր զորապետներ Բագարատի և Մամիկի հետ:

- Հասկացեք, զորապետներ, - ասում էր Տիգրանը, - բավ է, մենք չենք կարող թույլ տալ, որ Լուկուլլոսը շարունակի առաջ շարժվել: Եթե հռոմեացիք մտնեն Արարատյան դաշտ և մոտենան Արտաշատին, ժողովուրդն այլևս չի հավատա մեր հաղթանակին, իսկ պարթևները՝ կարծելով, թե մենք ուժից ընկել ենք, կգրավեն հարավի մեր գավառները: Սա կլինի մեր գլխավոր մարտը. կամ մահ, կամ ազատություն: Ամեն տարի Նավասարդի Արեգ օրը Բագրևանդում մենք տոնախմբություն ենք կատարում:

Լուկուլլոսը եկավ և խանգարեց մեր Նավասարդն ու մեր աշխարհի անդորրը, իսկ այժմ նա մոտենում է այն վայրին, որը թանկ է բոլոր հայերի համար: Տեսեք, թե ինչ զուգադիպություն է:

Մենք ճակատամարտի ենք դուրս գալիս թշնամու դեմ հենց այն օրը, երբ մեր քաջազն նահապետ Հայկը նետահարեց բռնակալ Բելին: Ահա նորից եկել է այն ժամը, երբ մենք պիտի աշխարհին ցույց տանք, որ մեր երակներում հայկյան այրուն է հոսում: Հռոմեացիները հյուծվել են և չեն դիմանա մեր բուռն գրոհին: Եթե մենք արագաշարժությամբ գերազանցենք նրանց՝ հաղթանակը մերը կլինի:

- Արքայից-արքա, իսկ ի՞նչը կխանգարեր, եթե մեր հետևակը նույնպես այստեղ լիներ, - ասաց Մամիկը:

Զորապետ, Լուկուլլոսը Տիգրանակերտի տակ մեզ հաղթեց միայն մեր ծանրաշարժ հետևակի անգործության պատճառով: Ես թույլ չեմ տա, որ այդ սխալը կրկնվի: Մենք թշնամու դեմ կելնենք, ինչպես հավասարը հավասարի դեմ, ուղիղ ճակատով, հիմա դա պետք է, թող հռոմեացիները մի անգամ իրենց կաշվի վրա զգան մեր այրուձիու ուժը: Դրանից կշահենք ոչ միայն մենք, այլև կշահեն մեր սերունդները, Հայոց աշխարհի ապագան:

Զորավրանի մոտ դոփեցին հետախույզ հեծյալների ձիերը: Նրանց ավագը իսկույն մտավ վրանի ներսը և արքայից-արքային զեկուցեց, որ հռոմեական բանակն արդեն հասել է գետի ձախ ափը:

Ասպետ Բագարատն ու Մամիկը դուրս եկան արքայական վրանից և իրենց համհարզների ուղեկցությամբ սլացան դեպի Արածանիի ափը:

Ռազմադաշտի ձախ թևում Բագարատը իր գնդերով շրջապատեց հռոմեական մի մեծ զորամաս:

Իր դիտակետից Լուկուլլոսը տեսավ այս առաջին անհաջողությունը և այլևս չհամբերեց: Մի դրանիկ գնդի գլուխ անցած, նա քամու արագությամբ հասավ յուրայիններին:Մի քանի լեգեոնականներ կտրեցին նրա առաջը:

Լուկուլլոսի նժույգը խրխնջաց և բարձրացրեց առջևի ոտքերը: Բագարատը սրով ետ պահեց Լուկուլլոսի հարվածը: Մի շեշտակի հարված կպավ Լուկուլլոսի վզին: Երկաթյա վզակալը կոտրվեց, և Լուկուլլոսի սաղավարտը ընկավ գետին: Նրա ձին պոկ եկավ և բախվելով Բագարատի ձիուն, սայթաքեց: Լուկուլլոսը ընկավ գետին և ոտքը հազիվ հանեց ձիու փորի տակից: Քիչ հետո հռոմեացի զորավարն ուշքի եկավ և տեսավ իրեն շրջապատված իր

հավատարիմ զինվորներով: Նրա գլխից արյուն էր հոսում: Ձեռքը տարավ դեպի գլուխը: Նրա ձեռքն արյունոտվեց:

Չէ, արյան հոտ է գալիս այս Հայոց աշխարհից: Սթափվեց:

Սաղավարտը տարել էին: Դեռ Լուկուլլոսը այդքան չէր կատաղել: Նրան թվում էր, թե հայերը տարել էին իր զորավարական ամբողջ հեղինակությունը: Նոր սաղավարտ տվին: Եվ նա ելավ ձիու վրա:

Իսկ ճակատամարտը շարունակվում էր մոլեգին ուժով: Շուտով հայկական բանակը դուրս եկավ Արածանիի ձախ ափը: Հայերն սկսեցին նեղել լեգեոնականներին և սաստկացնել գրոհը: Հռոմեական մի գնդից լսվեց նահանջի փողը: - Հայերը հաղթում են, հայերը հաղթում են, Ալիայի օրը կրկնվում է, ձայն էին տալիս իրար գլխապատառ հռոմեացիները և նահանջում:

Հռոմեացիները նահանջում էին և կատաղաբար դիմադրում: Բայց նրանց մարտական ոգին արդեն ընկել էր:

Հայկական սուրը շարքից հանում էր հաղթական ճանապարհ անցած հռոմեական բանակի ընտիր զորամասերը: Լուկուլլոսը արդեն դուրս էր եկել ռազմադաշտի կենտրոնից և աշխատում էր կարգի բերել իր ուժերը:

Մամիկը իր զորամասերով հասնում էր փախչող հռոմեացիներին և ստիպում, որ նրանք մարտի մեջ մտնեն: Հռոմեացիներն այլևս չէին ենթարկվում իրենց հրամանատարներին:

Ամեն ոք մտածում էր իր գլուխը փրկել: Խուճապի ու սարսափի ոգին կարծես մտել էր բոլորի սրտերը:

Մարտերն, այնուամենայնիվ, շարունակվեցին մինչև ուշ երեկո: Իրիկնադեմին իր վրանի առջև կանգնած և ձեռքում բռնած Լուկուլլոսի սաղավարտը, Տիգրանը հայացքը դարձրել էր դեպի վառվող հորիզոնը:

Հայոց աշխարհը հաղթեց: Փառք քեզ, ոսկեմայր և ոսկեծղի Անահիտ, փառք քեզ, քաջակորով Վահագն, փառք ձեզ, Հայոց բոլոր աստվածներ:

Թող իմանան այժմ, որ Տիգրանը դեռ կարող է հաղթել: Հաղթել այնպես, որ գոռոզամիտ Լուկուլլոսը իր սաղավարտը թողնի Հայոց աշխարհում:

Վառվող հորիզոնը ասես կլանեց Տիգրանին:

Շեկ-բոսորավուն և կապտախառն արևմուտքը արքայից-արքային երևաց ինչպես Մեծ ծովը:

Ահա նա տեսնում է, թե այդ գույների մեջ ինչպես են վեր բարձրանում հայոց կիսավարտ տաճարներն ու պալատները: Տեսնում է, թե ինչպես են հայոց նավերը մտնում Միջերկրայքի ափերը ողողող ջրերը:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ ՃԱՇՈՒՄ Է ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՀԵՏ

Փառքի բոլոր ճամփաներն անցնում են անդունդների եզրերով: Միշտ կարող ես սայթաքել: Բայց դու չգիտես, թե երբ և որտեղ կլինի քո գլխապտույտը:

Արածանիի մոտ Լուկուլլոսը չկարողացավ կառչել հռոմեական որևէ աստծու քղանցքից: Նա տեսավ, թե փառաբանված իր լեգեոնականներն ինչպես են ճողոպրում հայկական այրուձիու առջև: Տեսավ ու սարսափով զգաց, որ հռոմեացիների համար Արածանին դարձել էր Ալիա:

Մինչև այժմ Հռոմը մի սև օր էր հիշում, չլինի՞ Արածանին դարձավ երկրորդը:

Լուկուլլոսին թվում էր, թե հաղթության իր բոլոր դափնիները կուլ գնացին Արածանիի ջրերին: Առաջին պարտությունը ճաշակած զորավարը իրեն մի պահ պատկերացրեց ծերակույտի առջև գլխահակ կանգնած: Համայն Հռոմը դատում էր նրան. "Ամոթ Լուկուլլոսին, նա տանուլ տվեց Արածանիի ճակատամարտը, փախավ Տիգրանի առջևից: Նա չի կարող արդարանալ: Եթե Արածանիի մոտ նա չի պարտվել, ապա ինչո՞ւ չմոտեցավ Արտաշատին: Ո՞վ կհավատա Լուկուլլոսին, որը վարկաբեկել է Հռոմի հեղինակությունը: Հայերն Արածանիի մոտ ապացուցեցին, որ կարելի է հաղթել նաև Հռոմին: Լուկուլլոսը օրինազանց է: Հարստանալու տենչից հղփացած, նա պատերազմ է հայտարարել Տիգրանին՝ առանց ծերակույտի համաձայնության: Հռոմը պետք է յոթնապատիկ պատիժ տա նրան...":

Ինչո՞ւ եմ ինքս ինձ դատապարտում:

Գուցե դեռ կարելի է շտկել վիճակը: Բայց ինչպես շտկես Արածանիի մոտ տասը հազար լեգեոնականների կորուստը: Իսկ եթե ուժեր հավաքի նոր ճակատամարտի համար: Միակ փրկությունը Արտաշատը գրավելն է: Ուշքի գալու համար ընդամենը մի ամիս է պետք: Եթե ծերակույտը հանգիստ թողնի իրեն: Բայց մի՞թե Արածանիից հետո հանգիստ կթողնի: Նրա պարտության լուրը շուտ կհասնի Հռոմ: Չար լուրերը երկու անգամ արագ են թռչում: Հռոմը ոչ մի ժամ չի կորցնի ետ կանչելու Լուկուլլոսին: Հավանաբար նրան փոխարինի Պոմպեոսը: Խորամանկ Պոմպեոս, չարախնդում ես: Մի շտապիր: Ես դեռ կանցնեմ Արածանին: Հարկավոր է խաբել ծերակույտին ու ժամանակ շահել: Դեռ կարելի է շտկել, ինքն իրեն ասավ նա: Չէ՞ որ իր կյանքի ուղեկիցը միշտ էլ եղել է համարձակությունը: Շուտով կլրանա իր երեսունութը: Ոչ մի անգամ նա ետ չի նայել: Ժամանակ չի ունեցել ետ նայելու: Բայց ահա Արածանին ստիպեց նրան կանգ առնել և նայել, թե ինչ է թողել թիկունքում: Զարմանալի է: Մեկի փոխարեն թիկունքում նա մի քանի Լուկուլլոս է տեսնում: Մի՞թե երեսունութ տարում մարդը կերպարանափոխվում է մի քանի անգամ: Երևի ոչ ոք իր կյանքի ճամփան չի կարողանում անցնել մի դեմքով: Հավանաբար, անսովոր խիզախություն ու կամք է պետք դրա համար: Իզուր է կշտամբում իրեն: Բոլոր մարդիկ էլ խաղում են դերասանի պես:

Ամեն մարդ փառքի ճամփա է դուրս գալիս՝ հենվելով մի զորավոր հեղինակության կռնակի: Լուկուլլոսի կռնակը մեծ Սուլլան էր: Սուլլան նրան Հռոմից Ասիա բերեց որպես իր ծախսարարը:

Մեկ ուրիշի համար այդ պաշտոնը հրապուրիչ կթվար:

Հարկավ, Հռոմում շատերը կերազեին Սուլլայի ծախսարարը դառնալ, ճարպկորեն կեղծել հազար ու մի հաշիվ և հարստության տիրանալ: Լուկուլլոսը, սակայն չգայթակղվեց

ծախսարարի պաշտոնով, որովհետև վաշխառուի երևակայություն չուներ: Թվերի ու հաշիվների մեջ փորձառու Սուլլային զարմացրեց Լուկուլլոսի ազնվությունն ու հավատարմությունը:

Գուշակությունները դուր են գալիս բոլոր հռոմեացիներին: Նրանք ամենից շատ սիրում են մատնացույց անել Հռոմի ապագա մեծությունները: Այդ տարիներին խոսում էին Պոմպեոսի և Լուկուլլոսի մասին: Պոմպեոսը, թեև չորս տարով փոքր էր Լուկուլլոսից, բայց հմուտ զորավարի համբավ էր ձեռք բերել: Այդ ժամանակ Լուկուլլոսը միայն ուղեկցում էր Սուլլային և դիտում, թե նա ինչպես է կռվում Հռոմի մեծ թշնամու՝ Միհրդատ Եվպատորի դեմ: Մի ճակատամարտի ժամանակ Սուլլան, լսելով Լուկուլլոսին, խորամանկորեն հաղթեց պոնտական բանակին: Լուկուլլոսը ոչ ոքի չասաց, որ այդ հաղթության դափնին պատկանում է իրեն: Ընդհակառակը, ծերակույտին ուղարկած զեկույցի մեջ այդ հաղթությունը նա ամբողջովին վերագրեց Սուլլային: Սա արդեն Սուլլայի համար մեծ հայտնագործություն էր: Ահա թե Հռոմը ում պետք է վստահի իր ապագան: Եվ նա Լուկուլլոսին գերադասեց Պոմպեոսից: Ծերակույտում սկսեցին հարգանքով տալ Լուկուլլոսի անունը:

Սուլլան, այնուամենայնիվ, չհասցրեց տեսնել Լուկուլլոսի փառքը: Բայց մահից հետո էլ նա հովանի դարձավ Լուկուլլոսին: Սուլլայի կտակը բացեցին ծերակույտում:

Բայց այն նման չէր սովորական կտակների: Սուլլան ծերակույտին հայտնում էր, որ Հռոմին վտանգ է սպառնում, և միայն մեծ Լուկուլլոսը կարող է փրկել... Գուշակությո՞ւն է սա, թե՞ կտակ: Ծերակուտականները չէին կարողանում միանգամից ընթերցել Սուլլայի գրածը: Ամեն մի տողը չոր հացի պես նրանք կուլ էին տալիս դժվարությամբ, ընդմիջումներով: Ոչ մի ծերակույտական չէր կարողանում կռահել, թե ինչ վտանգ է սպառնում Հռոմին:

Մարդիկ ամենից շատ իմաստնանում են մահից առաջ: Լուկուլլոսին առաջ մղելու համար Սուլլան աշխատել էր երկյուղ ներշնչել ծերակույտականներին: Սուլլան հիանալի գիտեր, որ Հռոմին ոչ մի վտանգ չի սպառնում: Եթե նա կենդանի լիներ՝ ծերակույտականները կծաղրեին նրան: Բայց Հռոմում մեռած մարդու կտակի խոսքերը մեծ ուժ ունեն: Այդ խոսքերն ավելի ազդու են դառնում, քանի որ նրանց հեղինակը Սուլլան է: Ծերակույտին ներշնչելու և Լուկուլլոսի մեծությունը հավաստելու համար, նա կտակի մեջ գրել էր, որ Լուկուլլոսին համարում է իր որդու՝ Փավստոսի օրինական պաշտպանը: Սուլլան, միաժամանակ, Լուկուլլոսին էր հանձնում իր հիշատակարանը շտկելու պաշտոնը:

Սուլլայի մահից երեք տարի հետո ծերակույտը Լուկուլլոսին նշանակեց Անդրալպյան Գաղիայի կառավարիչ: Բայց Լուկուլլոսն արդեն փոխել էր իր դեմքը:

Գաղիա՞: Նրա ինչին՞ է պետք Գաղիան, որտեղ ոչ մի զենքի շառաչ չի լսվում: Իսկ փառքի ճամփան վերջանում է այնտեղ, ուր լռում է զենքի շառաչը: Նա երազում էր գնալ Սուլլայի ճանապարհով: Իսկ այդ ճանապարհը տանում է դեպի Ասիա, դեպի Միհրդատ Եվպատորը:

Եթե ծերակույտը իրեն նշանակեր ասիական բանակի հրամանատար:

Բայց այդ պաշտոնը իրեն չեն տա:

Հավանաբար, այստեղ նրա ճամփան կկտրի Պոմպեոսը: Ծերակույտը Պոմպեոսին ու Լուկուլլոսին բարձրացրել է փառքի մի նժույգի վրա: Իսկ այդ ձին երկուսին չի կարող հեռու

տանել. բեռը թեթևացնելու համար մեկնումեկին կգցի: Բայց ո՞ւմ. Լուկուլլոսի՞ն, թե՞ Պոմպեոսին: Հավանաբար Լուկուլլոսին, որովհետև ծերակույտը նրան ձիու գավակին է դրել: Պոմպեոսը ոչ միայն թամբին է, այլև իր ձեռքում է պահում երասանը:

Դեռ Գաղիա չհասած, Լուկուլլոսի ականջին հասավ Կիլիկիայի կառավարիչ Օկտավիայի մահվան լուրը: Աստվածներն ասես ճամփա են բացում նրա համար: Եթե հաջողվեր փոխարիներ Օկտավիային՝ ամեն ինչ կընթանար իր հունով: Բայց ծերակույտը այդ պաշտոնը հեշտությամբ չէր հանձնի Լուկուլլոսին: Չէ՞ որ Կիլիկիա ընկնելը միևնույն է, թե քեզ տան Միհրդատի դեմ ճակատելու իրավունքը: Իսկ Հռոմում ո՞վ գիտե Միհրդատին ավելի լավ, քան Լուկուլլոսը:

Հռոմեացիների համար Հռոմն աշխարհի մայրաքաղաքն էր, և բոլոր ճանապարհները պետք է ավարտվեին այնտեղ: Տիբերի ձախ ափին, յոթ բլուրների վրա ցրված շքեղաշուք պալատներով այս քաղաքում են կատարվել աշխարհի ամենաարդար վճիռները: Այստեղ տեղի ունեցած ամեն մի հաղթահանդես ավարտվում էր մի ամբողջ ժողովրդի կամ տերության կործանումով: Յոթ բլուրներից ճամփաները փնջվում են Սրբազան փողոցում և դուրս գալիս դեպի Մարսյան դաշտ:

Հռոմեացիք վաղ են արթնանում: Կիսատ գործը շարունակելու համար չէ, որ նրանք խանգարում են իրենց հանգիստը: Հռոմեացին շուտ է արթնանում՝ քծնելու պատահած աստիճանավորին: Նրանք խումբ-խումբ շարժվում էին դեպի Մարսյան դաշտ: Ինչպես չշտապեն: Չէ՞ որ այսօր կոմիցիան քննում է առասպելական խնջույքների տնօրեն Լուկուլլոսի հարցը: Շատերը չգիտեին, թե Միհրդատին հաղթող Լուկուլլոսի մասին ինչ պետք է ասեն և ինչ վճիռ կկայացնի կոմիցիան: Բայց շտապում էին Մարսյան դաշտ՝ լսելու նորություններ: Նրանք համոզված էին, որ այդ նորությունները կլինեն ցնցող, որովհետև կապված են Լուկուլլոսի անվան հետ:

Լուկուլլոսի անունը այդ օրը մեծ բազմություն էր հավաքել Մարսյան դաշտ: Ինչպես միշտ, առաջինը պատվանդանին մոտեցավ կոմիցիայի արարողապետը:

- Հռոմեացիք, - ասաց նա, - Ասիա պրովինցիայից եկող լուրերը ստիպել են մեզ հավաքվել այստեղ: Ասիական բանակի զորապետ Լուկուլլոսը ծերակույտին ուղարկած իր զեկուցագրերում թաքցնում է ճշմարտությունը: Նվազել են Ասիայից Հռոմ եկող հասույթները: Լուկուլլոսը դեռ Միհրդատին չհաղթած՝ պատերազմ է հայտարարել արմենների արքայից-արքա Տիգրանին: Իր գործողություններով նա ավելի շատ վնաս է բերում Հռոմին: Ով կցանկանա, թող այսօր դատապարտի կամ պաշտպանի Լուկուլլոսին: Եվ եթե նա անարդար է՝ կոմիցիան թող պատժի նրան:

Արարողապետը վերջացրեց, բայց ինչ որ բան մտաբերելով, ավելացրեց.

- Թող ներեն ինձ ճառախոսները, ես հիշեցնում եմ, որ ճառելու ժամանակամիջոցը, մինչև մի ոտքի վրա կանգնելը, երեք հարյուր թիվն է: Չմոռանանք, որ մտքի մարտում հաղթում է նա, ով ինքնակամ բուժում է շատախոսության իր հիվանդությունը: Էյ, հաշվարարներ, երդվեցեք, որ ազնվորեն կկատարեք ձեր պարտականությունները և բարեհաճ խոսքերով կդիմեք ճառախոսներին, երբ նրանք ստիպված լինեն իրենց ասելիքը շարունակել մի ոտքի վրա կանգնած:

- Երդվում ենք, - ձայնեցին պատվանդանի մոտ կանգնած այն մարդիկ, որոնք կոմիցիայի հաշվարարներ էին նշանակվել:

- Թեթև էր նրանց գործը: Հենց որ ճառախոսը բարձրանում է պատվանդանին՝ նրանք սկսում են հաշվել մեկից մինչև երեք հարյուրը: Եթե մինչև երեք հարյուրը պատվանդանի վրա գտնվողը չի ավարտում իր ճառը, ապա հաշվարարը իսկույն հիշեցնում է, որ խոսելու սահմանված ժամկետը լրացել է, և նա պարտավոր է կամ ընդհատել ճառը, կամ բարձրացնել մեկ ոտքը: Կարևոր չէ, թե որ ոտքը: Նրանք գիտեն, որ մի ոտքի վրա կանգնած մարդու համար դժվար է խոսելը: Շուտ է հոգնում և ստիպված իջեցնում է մյուս ոտքը: Այդ ամենը տեսնում են Մարսյան դաշտում հավաքված բոլոր մարդիկ: Հենց որ ճառախոսը մյուս ոտքը դրեց գետնին՝ պարտավոր է անմիջապես իջնել պատվանդանից: Հռոմի բոլոր օրենքները բացառություններ ունեն, բայց ժողովրդական ժողովում խոսելու ժամանակամիջոցի այս կարգուկանոնը ոչ մի անգամ չի խախտվել: Արարողապետը առաջինը հրավիրեց ծերակուտական Փավստոսին:

Վերջինս պատվանդանի վրա այնպիսի դիրքով կանգնեց, որ ասես այնտեղ էր բարձրացել ոչ թե խոսելու, այլ ցուցադրելու լայն քղանցքներով իր տունիկան, չորս կապիչներով կոշիկները և ճաճանչափայլ մատանին:

- Մեծ Սուլլան ասում էր, - որ Լուկուլլոսը Հռոմի հպարտությունն է: Եվ ովքե՞ր են չարախոսում նրան: Նախանձողները: Իսկ Լուկուլլոսին, իրոք, կարելի է նախանձել: Չէ՞ որ նա հաղթեց Հռոմի ամենամեծ ու վտանգավոր թշնամուն՝ Միհրդատ Եվպատորին: Չէ՞ որ նա գրավեց Տիգրանակերտը, որը պետք է դառնար Ասիայի Հռոմը: Մի՞թե արքայից-արքա Տիգրանին հաղթելը բավական չէ, որպեսզի Լուկուլլոսի փառքն ու անունը մնան անբիծ: Այո, Հռոմի համար հայոց Տիգրանն ավելի վտանգավոր էր, քան նույնիսկ Միհրդատը: Նա իրեն ներկայացնում էր իբրև աշխարհի ամենահզոր արքան: Նա երազում էր իր հաղթարշավը հասցնել մինչև Հռոմ: Լուկուլլոսի սուրը կտրեց նրա ճամփաները: Եվ այսօր այդ մեծ զորապետին շնորհակալություն հայտնելու փոխարեն պետք է դատապարտե՞նք: Նրանից շնորհակալ են մեր բոլոր աստվածները: Երբ մարդիկ շատ են խոսում մեկի մասին՝ նշանակում է այդ մեկը մեծություն է: Եթե հայրս կենդանի լիներ, բոլորիդ կոչ կաներ հարգանքով խոսել Լուկուլլոսի մասին, որի առջև խեղճացել են Ասիայի բոլոր ազգերը: Հարգանք Լուկուլլոսին: Արդար կլիներ, եթե ծերակույտը երկարաձգեր նրա զորապետական լիազորությունները: Այդպիսի առաջարկ կաներ նաև հայրս՝ մեծ Սուլլան, եթե կենդանի լիներ և օգտվեր ծերակուտականի իր իրավունքներից: - Փավստոսը վերջացրեց և իջավ պատվանդանից: Կոմիցիայի արարողապետը բարձր ձայնով տվեց հաջորդ ճառախոսի անունը.

- Մարկոս Տուլլիոս Կիկերոն:

- Խիստ մոլորվում է նա, - անմիջապես սկսեց Կիկերոնը, - ով արտասանած մեր ճառերում որոնում է մեր համոզմունքների արտացոլումը: Այդ ճառերը կրում են հենց ընթացքի և հանգամանքների կնիքը և չեն արտահայտում մարդկանց և հովանավորողների իսկական հայացքները: Այդպիսին էր ծերակուտական Փավստոսի խոսքը, Սուլլայի որդու՝ Փավստոսի ճառը: Ես ցանկանում եմ շեշտել, որ նա Սուլլայի զավակն է: Հենց Փավստոսի համար են հույներն ստեղծել իրենց առածը. "Ով կփառաբանի իր հորը, եթե ոչ ձախորդ որդին": Այո, մարդ իր հոր անունը մշտապես հոլովում, նրան փառաբանում է այն ժամանակ, երբ ինքը

հպարտանալու ոչ մի բան չունի: Ի դեպ, Փավստոսը դա ապացուցեց այն ճառով, որ նա արտասանեց այստեղ և աշխարհին ցույց տվեց, որ նրա միտքը դեռ դուրս չի եկել Հռոմի պարիսպներից:

Նա փառաբանում է Լուկուլլոսին նրա համար, որովհետև Լուկուլլոսին փառաբանել է Սուլլան: Սուլլան ճանաչում էր Լուկուլլոս ծախսարարին, բայց Փավստոսը չի ճանաչում Լուկուլլոս զորավարին: Հռոմեացիք: Ես մեղադրում եմ Լուկուլլոսին: Իսկ նրա մեղքերը ծանր են: Նա ամեն ինչում սկսել է խաբել ծերակույտին: Նա գողացել է այն գանձերը, որ պարտավոր էր ծերակույտին ուղարկել: Այդ գումարներով նա ապարանքներ է կառուցում այստեղ ու այնտեղ: Փավստոսն ասաց, թե Լուկուլլոսը անքուն գիշերներ է անցկացնում Հռոմի համար մարտնչելով: Մի՞թե պատվարժան ծերակուտականը և Սուլլայի զավակը չգիտե, որ Լուկուլլոսի կյանքը խնջույքների մեջ է անցնում: Եթե նա քնի, ինչպես բոլոր մարդիկ, ապա Հռոմն ու հռոմեացին շատ կհարստանան:

Լուկուլլոսին պետք է մեղադրել նաև նրա համար, որ նա Հայքի դեմ պատերազմ է հայտարարել առանց ծերակույտի համաձայնության: Ի՞նչ է ստացել Հռոմն այդ պատերազմից: Ոչինչ: Իսկ ո՞վ է ասում, թե Լուկուլլոսը հաղթել է Հայոց արքայից-արքա Տիգրանին: Լուրերն ասում են, որ Հայոց Արածանի գետը Լուկուլլոսի բանակի համար դարձել է Ալիա:

Լուկուլլոսը, որին ծերակուտական Փավստոսը և Սուլլայի որդին Հռոմի հպարտությունն է համարում, ամուսնացել է իր քրոջ հետ: Եվ այս Լուկուլլոսը կարո՞ղ է հայերի մոտ հպարտանալ հռոմեացու իր քաղաքակրթությամբ: Բայց ինչու միայն Լուկուլլոսը: Բոլոր հռոմեացիք չեն ազատվել բարբարոսական այդ արատից: Ինչո՞ւ ծերակույտը օրենք չի արձակում արգելելու համար մերձավորի ամուսնությունը, որից սերված զավակներն ամենևին էլ չեն փայլում իրենց խելքով:

Եվ ո՞վ է լիազորել Լուկուլլոսին, որ նա հայերին գրգռի Հռոմի դեմ: Չէ՞ որ Տիգրանին մենք կարող ենք մեր դաշնակիցը դարձնել բարեկամաբար:

- Երեք հարյուր, հարգարժան Կիկերոն, դու հիանալի խոսեցիր, Հռոմի բոլոր գեղեցիկ կանայք այսօր քեզ գլուխ կտան, թող նրանց սերը ուժ տա քո մի ոտքին, - պատվանդանի կողքեց Կիկերոնին ընդհատելով, ժպտադեմ ասաց հաշվարարներից մեկը:

Կիկերոնը բարձրացրեց ձախ ոտքը և ասաց.

- Ես մի ոտքի վրա կարող եմ ավելի երկար մնալ, քան Լուկուլլոսը իր փառքի նժույգին: Պետք է Ասիայից ետ կանչել նրան և դատել որպես հանցագործի ու խաբեբայի:

Նրա կողմնակիցները տարածել են, թե հռոմեացիք նվաճել են Արտաշատը, մինչդեռ Լուկուլլոսը հիմա Տիգրանի առջևից փախչում է դեպի Մեծ ծով:

- Կիկերոնը իջեցրեց ոտքը և իջավ պատվանդանից:

Նորից լսվեց կոմիցիայի արարողապետի ձայնը.

- Ծերակուտական Կեթեկոս:

- Պատվանդանի վրա կանգնեց բոսորագույն պարեգոտի մեջ ձգված Կեթեկոսը:

- Կիկերոնը գեղեցիկ է խոսում, բայց Լուկուլլոսին Հայքից ետ կանչելու և պատժելու համար հիմքեր չունի: Աչքով տեսածն ավելի զորեղ է, քան անենաճարտար խոսքը: Ահավասիկ: Իմ հագին դուք տեսնում եք մի պարեգոտ, որը հաճելի գույն ունի: Հռոմի ներկատներում հանդերձներն այսպես չեն ներկում: Լուկուլլոսը նվաճել է Հայքի մայրաքաղաք Արտաշատը և այնտեղ ներկել տվել այս պարագոտը: Սա հայկական որդան կարմիրն է, և աշխարհում ոչ մի տեղ, Արտաշատից բացի, չեն կարող այսպես ներկել:

- Հռոմեացիք, հիմա՞ էլ չեն համոզվում, որ Լուկուլլոսը գրավել է Արտաշատը:

ԹԵՎԱՏՎԱԾ ԱՐԾԻՎԸ

Արածանիի ափերից Արտաշատի պարիսպները չեն երևում: Լուկուլլոսը նահանջի ուղին բռնեց՝ առանց այդ պարիսպները նույնիսկ հեռվից տեսնելու: Լուկուլլոսը ստիպված գնում էր իր բանակի ետևից:

Նա այլևս հրամաններ չէր տալիս: Նահանջի ժամանակ պետք էլ չեն հրամանները:

Լուկուլլոսի փառքի երիվարը խեղդվեց Արածանի գետում: Հռոմեացիք շտապում էին հեռանալ Հայքից: Լուրեր էին հասնում, որ Միհրդատ Եվպատորը վերագրավել է ամբողջ Պոնտոսը և պատրաստվում է կտրել Լուկուլլոսի նահանջի ուղին: Լեգեոնականներն աշխատում էին օր առաջ հասնել Մեծ ծովին և խուսափել շրջապատման մեջ ընկնելու վտանգից: Թիկունքից հանգիստ չէր տալիս զորապետ Մամիկը: Հայկական այրուձին հետապնդում էր նահանջող լեգեոնականներին և ստիպում, որ սրանք ճակատամարտի դիմեն: Բայց լեգեոնականներն այլևս մարտի մասին չէին մտածում, հայկական այրուձիուց սարսափահար՝ նրանք խտանում էին շարքերով, հուսադրում միմյանց:

Արքայից-արքա Տիգրանը մտավ Տիգրանակերտ: Փողոցներում, այստեղ-այնտեղ փոքրիկ խմբերով հավաքված բնակիչները բացականչություններով ողջունում էին արքայից-արքային: Տիգրանը տարբերում էր այն ձայները, որ կոտրտված հայերենով արտասանում էին հույներն ու հրեաները: Ինչո՞ւ այս մարդիկ չեն փախել իրենց հայրենի քաղաքները, մտածում էր արքայից-արքան: Երևի սրանք կամ չեն հասցրել վերադառնալ, կամ իր վրեժից սարսափած, չեն շարժվել տեղից; Այնուամենայնիվ, Տիգրանակերտը արքայից-արքային թվում էր ամայի, ավերված:

Կյանքն այստեղ կարծես կանգ էր առել երկու տարի: Բոլոր կողմերում կիսավարտ շենքեր կան: Լուկուլլոսը կտրել էր Տիգրանակերտի շինարարության զարկերակը: Արքայից-արքան, զորապետ Մամիկի և մի քանի թիկնապահների ուղեկցությամբ, շրջեց քաղաքում և կանգ առավ թատրոնի մեծ շենքի մոտ:

Հսկա, երկհարկանի շինության բարձրությամբ բազալտե արծվաքանդակը ավելի մռայլեց նրա դեմքը: Հիշեց, թե վիթխարի այս քարակտորը ինչպես են հասցրել թատրոնի շենքի մոտ: Պարանների մեծ փնջին, տասը հազար հայ զինվորների հետ, լծվել էին նաև արքայազն Արտավազդը և ասպետ Բագարատը:

Հետո քարագործ վարպետները փոխարինել են միմյանց գիշեր ու ցերեկ: Այս քարը հղկելու և նրա վրա արծիվ քանդակելու համար ինչքան բրիչներ են ջարդվել: Այդպիսի արծվաքանդակ չէր տեսել աշխարհի և ոչ մի քաղաք: Հայոց աշխարհի ու Տիգրանակերտի զինանշան այդ փառահեղ քանդակի մասին խոսում էին ամենուրեք:

Մեծ քանդակն, իհարկե, մնացել էր իր տեղում: Բայց հիմա Տիգրանը նրան նայում էր խոժոռադեմ: Լուկուլլոսը ջարդել էր տվել արծվի թևերը: Քանդակի վրա արծիվն այժմ թևատված էր: Չլինի՞ աստվածները ծաղրում են արքայից-արքային: Արդյոք իր կյանքի խորհրդանիշը չէ՞ թևատված այս արծիվը: Այո իրար նման են: Քսանհինգ տարի մնաց նժույգի վրա, որպեսզի թշնամին հեռու փախչի Հայքի հզորությունից: Եվ արդեն հասել էր իր ցանկության սահմանին: Բայց Լուկուլլոսը նորից խառնեց սահմանները: Երիցս նզովք բոլոր ուխտադրուժներին: Ներիր ինձ, իմ Տիգրանակերտ: Ես երազում էի քեզ դարձնել Հայքի երեց քաղաքամայրը: Ես երազում էի: Դու պետք է դառնայիր համայն Հայքի փառքը: Բայց Լուկուլլոսը խանգարեց ինձ: Ափսոս, որ չգիտեմ, թե ինչքան կապրեմ աշխարհի վրա: Ես դեռ կշարունակեմ, գուցե կարողանամ փրկել քեզ:

Այո, իմ կյանքը նման է այս քանդակի թևատված արծվին: Բայց Լուկուլլոսը չի կարողացել գետին տապալել քանդակը: Թեկուզ թևատված՝ արծիվը մնացել է օդում: Արծիվը պետք է միշտ էլ արծիվ մնա: Այդպես էլ կանցնի իմ կյանքի մնացած մասը:

Արքայից-արքան հայացքը հեռացրեց քանդակից և, Մամիկին ու թիկնապահներին թողնելով թատրոնի մուտքի մոտ կանգնած, շարժվեց տեղից: Քարե աստիճաններով նա իջավ դեպի բեմը: Կարծես ամեն ինչ նույնն էր: Եթե Լուկուլլոսը Հայք չմտներ՝ ինքը պետք է ողջուներ թատրոնի բացումը: Սակայն, առաջին արարն սկսել է Լուկուլլոսը: Երևի այն հույն դերասանները, որ արքայից-արքայի հրավերով այստեղ էին հավաքվել՝ մասնակցելու Տիգրանակերտը Հայքի երեց քաղաքամայր հռչակելու հանդեսին, իրենց փառաբանական խոսքերն ուղղել են Լուկուլլոսին: Հիմա այս բեմում պետք է կանգներ Վահագն աստվածը և իր վճիռը կարդար աշխարհին: Ավաղ, ինքը չի կարող Լուկուլլոսին գերել և հանձնել Վահագնի դատին:

Երկու շաբաթ հետո արքայից-արքան իր թիկնապահ գնդով Տիգրանակերտից շարժվեց դեպի Արշամաշատ: Նրա թիկնապահ գնդում, որի հրամանատարն էր նահապետ Սմբատը, այժմ միայն արցախցիներ էին: Տիգրանն իր կյանքի ապահովությունը վստահում էր նրանց: Լուկուլլոսը գնահատել էր Սմբատ նահապետի գլուխը: Տիգրանակերտի մեծ ճակատամարտում և Արածանիի մոտ հռոմեացի զորավարը հասկացավ, որ արցախցիների գնդերը ոչ միայն ռազմունակ են հռոմեացիների համեմատ, այլև իրենց անսովոր քաջությամբ ոգի են ներշնչում հայկական ամբողջ բանակին:

Եթե Լուկուլլոսը հաղթեր Հայքին, ապա բոլոր արցախցիներին կամ սրի կանցկացներ, կամ Արցախը կկտրեր Հայքից և կհանձներ պարթևներին: Պարթևների՞ն: Այդ դեպքում պարթևներն ավելի կուժեղանային: Ոչ: Արցախը Կովկասի ամենաշողշողուն սուրն է, պետք է փշրել այդ սուրը և նրա կտորները ցրել աշխարհով մեկ: Եթե իրեն չհաջողվի, ապա դա պարտավոր են անել նրանք, ովքեր ցանկանում են ծնկի բերել Հայքը: Պետք է կտրել Հայքի այդ կենսատու զարկերակը: Այն ժամանակ հայերի զորության աստղի փայլը կդառնա խաբուսիկ:

Լուկուլլոսի լրտեսներն, այնուամենայնիվ, չհանդիպեցին նահապետ Սմբատին: Արցախցիները ուշի ուշով հետևում էին ոչ միայն արքայից-արքային, այլև իրենց հրամանատարին: Նրանց աչալրջությանը կարող էին նախանձել նույնիսկ աստվծները: Երթի ժամանակ մեծ տարածության վրա նրանք կատարում էին քառակողմ մշտական հետախուզություն, որը բացառում էր ծուղակի մեջ ընկնելու հնարավորությունը:

Իրիկնադեմին Սմբատի հրամանով գունդը կանգ առավ և վրան զարկեց մի փոքրիկ սարի ստորոտում: Զարմանալի մարդիկ են արցախցիները: Լեռներ են սիրում: Հաստատուն են համարում միայն լեռան կողին կառուցած տունը, հանգստանալու համար վրան են զարկում լեռան մոտ, առյուծի ուժ են առնում, երբ թշնամու դեմ գրոհում են լեռներից: Սմբատը հավատացնում էր արքայից-արքա Տիգրանին, որ լեռ տեսնելիս արցախցին զորեղանում է:

Արցախցիների քաջության աստվածը նստակյաց բնավորություն ունի, նա չի սիրում մյուս աստվածների պես ոստնել մի տեղից մյուսը: Ծանր է պահում իրեն, դուրս չի գալիս իր լեռներից և կորով է տալիս այն ժամանակ, երբ արցախցին մոտենում է լեռանը:

Զորավրանում արքայից-արքայի ու ասպետ Բագարատի զրույցը ոչ ոք չէր խանգարում: Տիգրանը չէր կարողանում հասկանալ, թե ինչու է ասպետը ուշացնում իր ասելիքը:

- Դու ինչո՞ւ բաց թողեցիր Կրտսերին:

Ես նրան հռչակեցի Ծոփքի արքա, և ինքս թագ դրի նրա գլխին:

- Այո: Թագադիր ասպետ, քո պարտականությունը ինքս կատարեցի:

- Վերջապես պիտի ասե՞ս, թե ինչ է արել Տիգրան Կրտսերը:

- Ինձ հրավիրել է Արշամաշատ և հրամայել, որ ես թագադրեմ իրեն որպես համայն Հայքի արքայից-արքա:

- Ողբացեք, աստվածներդ Հայոց, չէ՞ որ ինձնից դժբախտ մարդ չի ապրում աշխարհում: Զարեհը դավաճանեց, Միջնակը՝ նույնպես, հիմա էլ՝ Կրտսե՞րը: Գուցե հերթը գա Արտավազդի՞ն: Դուք ուզում եք պատժե՞լ ինձ, Հայոց աստվածներ: Իսկ ինչի՞ համար: Մի՞թե իմ սիրտը խոցելու փոխարեն չեք կարող մահ պարգևել ինձ: Եվ ի՞նչ հող ես դու երկիր Հայկյան, և Տիգրան Մեծ ես ծնում, և ողորմելի դավաճաններ: Սուր եմ բարձրացնում Լուկուլլոսների վրա, բայց հարվածը դիպչում է իմ հարազատ զավակներին: Ես ո՞ւմ բողոքեմ: Աշխարհում ոչ մի աստված հայի բողոքը չի լսում: Չեն լսում, թեկուզ բողոքողը արքայից-արքա Տիգրանը լինի: Սոսկալի է:

Լսո՞ւմ ես, ասպետ, սոսկալի է և, այնուամենայնիվ, դու շարունակիր, վշտի բոլոր հարկե՞րը դրեցիր ուսերիս, թե մի բան մնաց, մի խնայիր, ասպետ, ինձ չեն խնայում նույնիսկ աստվածները:

- Կրտսերը սպառնաց, թե շուտով կգլխատի ինձ: Չգիտեմ նրա ինչին է պետք ծերունուս գլուխը:

- Եվ դու հանգիստ լսում էիր նրա խոսքերը: Ինչո՞ւ չձերբակալեցիր Կրտսերին:

- Արքայից-արքա, նա հիմա Ծոփքում չէ:

- Ծոփքում չէ՞:

- Մեկնել է Տիզբոն: Ի՞նչ Տիզբոն: Դու հաստա՞տ գիտես, որ նա մեկնել է պարթևների մոտ:

- Այո, արքայից-արքա:

- Բայց պարթևները մեր թշնամիներն են, նա ինչո՞ւ է գնում Տիզբոն: Սպասիր, ասպետ, Կրտսերը մեկնել է Տիզբոն, ասում ես: Չլինի՞ Եվպատորը: Կարծես ինչ-որ բան կռահում եմ:

- Ի՞նչ բան, արքայից-արքա:

- Ես Կլեոպատրային թողեցի Տիգրանակերտում, քո կարծիքով, տիկնանց-տիկինը հիմա որտե՞ղ կլինի, ասպետ:

- Իհարկե Տիգրանակերտում:

- Ոչ, Բագարատ, նա հիմա Տիգրանակերտում չի լինի: Կրտսերը միայնակ չէր մեկնի Տիզբոն, Կլեոպատրան պետք է նրա հետ լինի:

- Դժվար է հավատալ, արքայից-արքա, դու ե՞րբ դուրս եկար Տիգրանակերտից:

- Երեկ առավոտյան:

- Քո մեկնելու պահին տիկնանց-տիկինը մայրաքաղաքո՞ւմ էր:

- Այո:

- Այդ դեպքում նա ինչպես կարող է մի օրում հասնել Կրտսերի ետևից:

- Եվպատորի դուստրը, ասպետ, կարող է թռչել մեր գլխի վրայով:

- Ոչինչ չեմ հասկանում արքայից-արքա:

- Կանչիր նահապետ Սմբատին, մենք պետք է շտապ վերադառնանք Տիգրանակերտ:

Արքայից-արքան մայրաքաղաք մտավ իրիկնադեմին: Կլեոպատրան ապարանքում չէր: Մի շաբաթ հետո սուրհանդակների բերած լուրերը խաճեցին Տիգրանի մտքի թելերը: Կրտսերը հասել է Տիզբոն, իսկ Կլեոպատրան՝ Պոնտոս, հոր մոտ:

Տիգրանը նորից մտաբերեց թևատված արծվաքանդակը: Ահա ինքը՝ թևատ ու միայնակ, ասես հրաժեշտ է տալիս Հայոց բարձր երկնքին: Ուր որ է կնկնի: Բայց նրա անկումն էլ թռիչք պետք է լինի, մի վերջին ինքնազոհ գրոհ Հայքին սպառնացող վտանգի դեմ: Բայց ո՞ր կողմը սուրաս, դեպի Կրտսե՞րը, դեպի Պոնտո՞ս, թե՝ Հռոմ:

ԳԼՈ՞ՒԽ ԵՍ ԲԵՐԵԼ

Ծերերը երազում են վերսկսել իրենց կյանքը և շտկել առաջին անգամ թույլ տված սխալները: Բայց եթե նույնիսկ աստվածները ուժ ունենային և օգնեին մարդուն թեկուզ տասն անգամ

կրկնելու իր կյանքը, այդ սխալները կտասնապատկվեին, որովհետև ծերունական խելքով երիտասարդն ավելի շատ կսայթաքեր չափազանց զգուշությունից:

Արքայից-արքա Տիգրանը, սակայն, չէր երազում անցյալը նորից կրկնելու մասին: Իր կյանքի յոթանասունհինգ սանդուղքների վրա վերջին երեսուն տարում նա այնքան է վեր ու վար արել, որ ծերությունն ու երիտասարդությունը խառնել է իրար: Բոլորովին ուրիշ էր նրա մտահոգությունը: Նա այդ մասին չէր ասում ոչ ոքի, նույնիսկ Արտավազդին: Մենության մեջ երբեմն դիմում էր ինքն իրեն. "Եվ դու, արքայից-արքա Տիգրանդ, գիտե՞ս, թե երբ պետք է հրաժեշտ տաս աշխարհին: Յուրաքանչյուր հայր հանգիստ խղճով է մեռնում, երբ զգում է, որ իր զավակները չեն դժվարանա ապրել: Ամեն հայր, սակայն, իր ծխի մասին է հոգում: Իսկ քո ծուխը, Տիգրան, համայն Հայքն է: Դու պարտավոր ես դեռ ապրել, ժամանակները խառնակ են և վտանգներով հղի: Արտավազդը հիմա կարող է շփոթվել և կորցնել երեսուն տարում քո ձեռք բերածը":

Հռոմն, իրոք, խառնել է Ասիան, և Տիգրանը տեսնում էր, որ ամեն կողմից փոթորիկ է սպասվում: Միհրդատ Եվպատորի դեմ կռիվ սկսելու նախօրեին Պոմպեոսը նախ որոշեց Տիգրանի զինական ուժերն զբաղեցնել ուրիշ ուղղությամբ: Պարթև Հրահատը Արտաշատը պաշարեց այն ժամանակ, երբ Պոնտոսում իրար դեմ էին ելել Եվպատորն ու Պոմպեոսը: Տիգրանը ոչ միայն չեր կարող օգնել Եվպատորին, այլև ժամանակ չուներ կարգի բերելու իր բանակը և դիմագրավելու նոր վտանգին:

Արքայից-արքան համոզված էր, որ Պոմպեոսը Միհրդատին հաղթելուց հետո կանգ չի առնի Պոնտոսում: Այժմ արդեն չես կարող ճակատամարտով փրկել Հայքը: Յոթանասունհինգ տարեկան հասակում դու չես կարող ելնել նժույգին ու մարտի նետվել: Կռվի դաշտում նժույգները շուտ են ցած նետում ծերունի հեծյալներին: Տիգրանը հիմա պարտավոր է փոխել իր ձին: Այժմ պետք է հեծնել դիվանագիտության նժույգը և մարտի մտնել Պոմպեոսի պարթև Հրահատի ու դավաճան որդու հետ: Այդ ձիու սմբակների տակ նախ հարկավոր է տրորել պարթևներին: Մի՞թե դա դժվար է: Ամենևին էլ ոչ: Պոմպեոսը խոստացել է Հրահատին, որ եթե վերջինս օգնի իրեն, ապա պարթևները կստանան և կորցրած գավառները, և արքայից-արքա տիտղոսը: Իսկ եթե արքայից-արքա Տիգրանը խոստանա օգնե՞լ Պոմպեոսին: Այն դեպքում Պոմպեոսը չի՞ հրաժարվի Հրահատին տված խոստումից: Կհրաժարվի, որովհետև Պոմպեոսը գիտե ծանրութեթև անել: Հրահատը սովորական արքա է, իսկ Տիգրանը՝ արքայից-արքա:

Այն ժամանակ, երբ Հրահատն ու Կրտսերը օղակի մեջ էին առել Արտաշատը և զարմանում էին, թե ինչու Տիգրանը չի մոտենում իր բանակով, արքայից-արքան զորապետ Մամիկին ուղարկել էր Պոմպեոսի մոտ: Հրահատն ու Կրտսերը չիմացան, որ Տիգրանը նրանց պարտության էր մատնել առանց ճակատամարտի:

Այդ օրերին աստվածային ոչ մի պատգամախոս չէր համարձակվի գուշակել Միհրդատ Եվպատորի պարտությունը: Բայց Արտաշատի միջնաբերդում նստած արքայից-արքան, ասես ոտքի տակ էր տալիս աշխարհը և տեսնում այն, ինչ աստվածները երբեմն ուշացումով են նկատում:

Նա զգաց նաև Միհրդատի կործանումը և բոլորովին չզարմացավ, երբ մի շաբաթ հետո սուրհանդակները հայտնեցին այդ մասին:

Գայլ գետի մոտ Պոմպեոսը շրջապատել էր Եվպատորի բանակը և գիշերային հարձակումով կոտորել բոլորին: Բոլորի՞ն: Ոչ: Ճողոպրել էր Միհրդատը, ազատվել իր թիկնապահ ջոկատի և սիրուհու՝ Հիպիսկրատիայի հետ: Ընդամենը երկու տարի առաջ Լուկուլլոսը պատրաստ էր Գամիրքը նվիրել գեղեցկուհի Հիպիսկրատիային, եթե վերջինս համաձայներ մի գիշեր մերկանալ զորապետի աչքի առջև: Այն ժամանակ Հիպիսկրատիան հագնում էր այնպիսի նրբահյուս շրջազգեստ, որ անզգույշ շարժումը կարող էր խաթարել թանկարժեք հանդերձի հմայքը: Բայց այժմ այր մարդու շորեր հագած Հիպիսկրատիան Եվպատորի կողքին քաջի պես կռվում էր Պոմպեոսի լեգիոնականների դեմ, և նրա զարկից ընկնող ոչ մի հռոմեացի չէր մտածի, որ ինքը մեռնում է կնոջ սրից: Եթե այս գեղեցկուհու՝ վտանգի վաղաժամ նախազգումը չլիներ, ապա Եվպատորը հավանաբար ընկներ Պոմպեոսի ձեռքը:

Ինչպես երեք տարի առաջ, Եվպատորը նորից հայտնվեց Հայքի սահմանագլխի Սինորա ամրոցում: Նա շտապում էր այս անգամ էլ ապաստան խնդրել Տիգրանից, բայց լրտեսները տեղեկացրին, որ արքայից-արքան հարյուր տաղանդ ոսկի է գնահատել Եվպատորի գլուխը: Սինորայի շրջակայքում կասկածելի մարդիկ էին հայտնվում թավուտ անտառներում: Եվպատորը ստիպված թողեց Սինորան: Բայց նրա փախուստի ուղին անհայտ մնաց Պոմպեոսին ու Տիգրանին:

չխանգարել արքայից-արքայի քունը և ներկայանալ առավոտյան: Բայց քառորդ ժամ չանցած, հայտնվեց հազարապետ Մարդպետունին և ասաց, որ Տիգրանը սպասում է զորապետին:

Չի կարողանում քնել, անցավ Մամիկի մտքով:

- Ինչպե՞ս են գործերը Մեծ ծովի ափին, - հարցրեց Մարդպետունին, երբ միասին բարձրանում էին պալատի աստիճաններով:

- Լավ են, - պատասխանեց զորապետը, իսկույն հասկանալով, որ Տիգրանից բացի, ոչ ոք չգիտե, թե որտեղից է գալիս ինքը:

Արքայից-արքան, ողջունելով Մամիկին, դիմեց Մարդպետունուն

- Մեզ ոչ ոք չպետք է ունկդրի:

Լսում եմ, արքայից-արքա, - պատասխանեց հազարապետը և դուրս եկավ գահասրահից:

Սովորաբար Տիգրանին զեկուցում են ոտքի վրա կանգնած: Պալատական այդ կարգը հիանալի գիտեր Մամիկը, բայց զարմացավ, երբ արքայից-արքան առաջարկեց, որ զորապետը նստի իր դիմաց:

- Ներիր արքայից-արքա, ես չեմ համարձակվի նստել, - պատասխանեց Մամիկը, ձիգ կանգնած մնալով Տիգրանի առջև:

- Նստիր, զորապետ, ոտքի վրա մարդն իր ասելիքի հակը շտապում է ուսից ցած գցել:

Մամիկը տեղի տվեց:

- Հիմա խոսիր, - հանգիստ ասաց արքայից-արքան:

- Ես հանդիպեցի Պոմպեոսին:

- Նա ինչպե՞ս ընդունեց քեզ:

- Բարեկամաբար, արքայից-արքա: Պոմպեոսը երդվեց հռոմեական աստվածներով, որ ծերակույտի անունից ինքը լիազորված է բարեկամություն հաստատել Հայքի հետ:

- Ի՞նչ պայմաններ էր ուզում:

- Բարեկամանալ Հռոմին և չօգնել նրա թշնամիներին:

- Եվ ի՞նչ է խոստանում դրա դիմաց:

- Ձեռք չտալ Հայքի ինքնությանը և արքայից-արքա տիտղոսին, որ միայն հզոր Տիգրանին է պատկանում:

- Իսկ պարթև Հրահատի հետ...

- Խոստանում է օգնել Հայքին, եթե Հրահատը փորձի կռվել մեզ հետ:

- Նա իմացա՞վ Եվպատորի գլուխը գնահատելու իմ հրովարտակի մասին:

- Այդ մասին գիտեն նույնիսկ հռոմեացի զինվորները: Պոմպեոսն ինձ ասաց, որ արքայից-արքա Տիգրանը ավելի մեծ պատճառ ունի Եվպատորին ատելու, քան Հռոմը:

- Բայց չեմ կարծում, զորապետ, որ մեզ կամ Պոմպեոսին հաջողվի բռնել Եվպատորին:

- Արքայից-արքա, Եվպատորին բռնելը հիմա ձեռնատու էլ չէ Հայքին:

- Ինչո՞ւ:

- Եվպատորը Կրտսերի պապն է, Կրտսերը՝ Հրահատի փեսան: Այս երեքի առաջնորդը Եվպատորն է, հետևապես երեքն էլ Հռոմի թշնամի են: Եթե Եվպատորը չլինի, Հռոմն այլևս չի վախենա ոչ Հրահատից, ոչ էլ Կրտսերից: Պոմպեոսը գիտե, որ այժմ երեքի դեմ Հայքը իր անդավաճան օգնականը կլինի:

Ահա թե ինչու Եվպատորի չբռնվելը Հայքի կշիռը բարձրացնում է Պոմպեոսի աչքում:

- Դա ճիշտ է, բայց ես ե՞րբ պետք է պատժեմ Եվպատորին:

- Առայժմ պետք է գործ չունենալ Եվպատորի հետ: Եվ եթե հանկարծ մերոնք բռնեն նրան, հարկավոր է այդ մասին լուր չտալ ոչ ոքի և իսկույն ազատ արձակել: Հռոմեացիները հավատում են քո հրովարտակին: Հայքի շահը, սակայն, պահանջում է չիրագործել այն:

- Զորապե՞տ...

- Ներիր, արքայից-արքա, Պոմպեոսի մոտ մեկնելուց առաջ դու հրամայեցիր ինձ ամեն ինչ անել Հայքի համար, մոռանալով նույնիսկ հզոր Տիգրանին բաժին ընկնող վնասը:

- Այո, Մամիկ, այդպես եմ հրամայել և հիմա էլ չեմ փոխում իմ հրամանը: Մի զարմացիր, զորապետ, որ արքայից-արքա Տիգրանը քո աչքի առջև մի պահ փոխվում է հայր Տիգրանի:

- Պոմպեոսն ասաց, որ Զարեհին ու Միջնակին սպանել ես ոչ թե դու, այլ Եվպատորը:

- Իսկ դու չգտա՞ր տիկնանց-տիկին Կլեոպատրայի հետքը:

- Սինորայում նրան տեսել են հոր հետ:

- Դու չկռահեցի՞ր, թե դեպի ուր է գնում Եվպատորը:

- Ոչ, արքայից-արքա: Այդ մասին չգիտեն նույնիսկ նրա չորս զորապետները, որոնք, շքախումբ կազմած, Հայք էին գալիս:

- Եվ դու ազատ արձակեցիր նրանց:

- Ոչ, բոլորին ձերբակալեցի և ինձ հետ բերեցի Արտաշատ:

- Նրանց պետք է հանձնել Պոմպեոսի ձեռքը:

- Այո, ես այդպես էլ մտածում էի, բայց չորսից մեկը հայ է:

- Հա՞յ է:

- Այո: փոքր Հայքից է:

- Քո կամքն է արքայից-արքա:

- Ել ու այստեղ կանչիր հազարապետին:

Մամիկը հասավ մինչև գահասրահի ծայրը և խփեց դռան պղնձե զարկանը: Քիչ հետո ներս մտավ Մարդպետունին:

Հազարապետ, - դիմեց նրան արքայից-արքան, - հենց այս պահին ինձ մոտ բեր Միհրդատ Եվպատորի այն հայ զորապետին, որին ձերբակալել է Մամիկը:

- Իսկույն, արքայից-արքա:

Տիգրանը նորից դարձավ Մամիկին.

- Արդ, ժամն է նոր զորահավաքի: Մեր բանակը պետք է պատրաստ լինի: Բոլոր մարդիկ իրադարձությունների ստիպմամբ դրժում են իրենց խոստումը: Այդպես կարող է վարվել նաև Պոմպեոսը: Եթե հռոմեացին դրժի իր խոստումը, մենք կտուժենք կրկնակի: Բայց եթե նա տեղեկանա, որ մեր զինական ուժերը հզոր են, ապա ստիպված կլինի ետ չկանգնել իր երդումից:

- Կենտրոնանա՞նք մի տեղ, թե՞...

- Ոչ: Պետք չէ մի տեղ հավաքվել: Հիմնական ուժերը մենք կպահենք այստեղ, Արտաշատում և նրա շրջակա գավառներում, երկրորդ բանակը՝ Տիգրանակերտում, իսկ երրորդը՝ Կապուտանի մոտ:

- Զորամասերը շատ չենք հեռացնում իրարից:

- Մենք ամուր կապ կհաստատենք թևերի հետ և անհրաժեշտության դեպքում կսեղմվենք մի տեղ: Իսկ հետո պետք է մտածենք Կապուտանի մոտ մշտական պահելու մասին:

- Ինչո՞ւ հատկապես Կապուտանի:

- Զորապետ, մեր բախտի նավը պետք է միշտ նայի դեպի արևմուտք, որտեղից եկող քամին չի կարող խորտակել մեզ, բայց պարթևաց կողմից կործանարար փոթորիկ կլինի, որի դեմ պետք է հզոր պարիսպ ունենալ:

- Բայց եթե Հռոմը չլինի, մենք կարող ենք խորտակել Պարթևաց աշխարհը:

- Ուշացել ենք զորապետ, հիմա ոչ Հռոմը կխորտակվի, ոչ էլ Պարթևաց աշխարհը: Հիմա պետք է անխորտակ մնանք մենք:

Նկատելով գահասրահ մտնող Մարդպետունուն, արքայից-արքան ընդհատեց իր խոսքը:

Արքայից-արքա, Եվպատորի զորապետն այստեղ է, - դռան մոտ կանգնած՝ խոսեց հազարապետը:

- Թող ներս գա:

- Գահասրահ մտավ շքեղ պարեգոտ հագած զորական մի մարդ, որի այտերին ասես որդան կարմիր էր քսված: Կանթեղների պայծառ լույսից նա սկսեց կկոցել քնատ աչքերը: Մի պահ շփոթվեց, ապա, գլուխ խոնարհելով, սկսեց ակնապիշ դիտել արքայից-արքային՝ մտքում երևի Տիգրանին համեմատելով Եվպատորի հետ:

- Ի՞նչ է քո անունը, - հարցրեց արքայից-արքան:

- Ես հայերեն չգիտեմ, - հունարեն պատասխանեց Եվպատորի զորապետը:

Մի ակնթարթում Տիգրանի դեմքը փոխվեց: Զայրույթից նա չկարողացավ նստած մնալ տեղում, ելավ գահից և, առանց որևէ մեկի կողմը նայելու, սկսեց անցուդարձ անել: Հետո նորից բազմեց գահին և դիմելով անծանոթ զորապետին, հունարեն հարցրեց:

- Դու հայ ես:

- Այո:

- Ի՞նչ է քո անունը:

- Հեկտոր:

- Քանի՞ տարեկան ես:

- Քսանյոթ:

- Քսանյոթ տարի աշխարհի վրա ապրել ես առանց հայերեն խոսելո՞ւ:

- Արքայից-արքա, Պոնտոսում հունարեն են խոսում:

- Բայց դու հայ ես:

- Այո, և այնուամենայնիվ Պոնտոսում կարելի է ապրել նաև առանց հայերենն իմանալու:

Մի՞թե այդպես են մտածում Պոնտոսում գտնվող բոլոր հայերը:

- Երևի ոչ բոլորը: Բայց հայերենով ես չէի կարող զորապետի աստիճանի հասնել Միհրդատ Եվպատորի մոտ:

- Օտարազգի թագավորին ծառայելու համար դու մոռացե՞լ ես մայրենի լեզուն:

- Չգիտեմ, արքայից-արքա, բայց այդպես եմ վարվել:

- Որտե՞ղ ես ծնվել դու:

- Փոքր Հայքում:

- Ահա թե ինչու էր Եվպատորը պինդ գրկել Փոքր Հայքը: Լսո՞ւմ ես, Մամիկ, թե ինչքան ենք ուշացել մենք: Փոքր Հայքում հայերը ուրանում են մայրենին, պաշտոններ ձեռք բերելու և բարեկեցիկ կյանք ստեղծելու համար խոսում են հունարենով, փոխում են նույնիսկ իրենց տոհմանունները: Ինչո՞ւ են քեզ Հեկտոր կոչել:

- Չգիտեմ, հայրս է դրել այդ անունը:

- Իսկ դու երբևիցե մտածե՞լ ես, որ աստվածները կպատժեն քեզ մի օր դավաճանությանդ համար:

- Իսկ ո՞ւմ եմ դավաճանել ես:

- Հայքին:

- Բայց ես երբեք գործ չեմ ունեցել Հայքի հետ, ես Եվպատորի հետ կռվել եմ միայն հռոմեացիների դեմ:

- Դու չե՞ս դավաճանել Հայքին:

- Ոչ: Նույնիսկ հոգուս խորքում հպարտացել եմ, որ Հայքն ավելի զորեղ է, քան Ասիայի որևէ տերություն, որ արքայից-արքա Տիգրանն ավելի մեծ է, քան աշխարհի որևէ մեծություն:

- Քո հաճոյախոսությունն ինձ չի ուրախացնում: Եթե որևէ հայ չի խոսում հայերեն, պետք է ստանա իր արդար պատիժը:

- Ի՞նչ օրենքով:

- Մեր հայկյան օրենքով: Մենք աշխարհ ենք եկել հայերենով և եթե մի օր հեռանանք աշխարհից, մեր հրաժեշտի խոսքը պետք է հայերեն լինի:

- Բայց չէ՞ որ կգա ժամանակ, երբ բոլոր ազգերը կխոսեն միայն հունարենով:

- Որտեղից ես լսել այդ հիմարությունը:

- Պոնտոսում:

- Եվ դու հավատում ես, որ բոլոր ազգերը մի օր հունարե՞ն կխոսեն:

- Այո:

- Իսկ ինչո՞ւ ես շտապում, չէ՞ որ կարող է և այդպես չլինել, գուցե հռոմեերե՞ն խոսեն:

- Չգիտեմ:

- Դու ուրիշ լեզու չգիտե՞ս:

- Գիտեմ նաև հռոմեաց և գամերացոց լեզուն, բայց ոչ հայերենը:

- Այո արքայից-արքա:

- Իսկ ինչո՞ւ ես եկել ինձ մոտ, գլո՞ւխ ես բերել, ինչ է:

- Արքայից-արքա... Դժվարանում եմ հասկանալ, քո վրդովմունքը:

- Ահա թե իմ դեմ ով է կանգնել: Եղծված հոգի, անառակ որդի Հայկյան տոհմի:

- Ներիր ինձ արքայից-արքա, միթե հայերեն չիմանալու համար ես արժանի եմ այդպիսի կշտամբանքի:

- Այո, զորապետդ Միհրդատ Եվպատորի, քո տեղը հանցանաց խուցն է:

- Հանցանաց խո՞ւց:

- Այո:

- Դաժան ու անարդար է, արքայից-արքա: Մի՞թե Հայք եկող հյուրին հանցանաց խուց են ուղարկում:

- Հյո՞ւր:

- Այո:

- Չէ՞ որ ես հյուր եմ:

- Հայքում հայը հյուր չէ: Բավ է, հազարապետ, տար սրան, հարգիր նրա զորապետական տիտղոսը և ինքդ ուղեկցիր դեպի հանցանաց խուց:

ՀԱՅՐԱԴԱՎ ՈՐԴԻՆ

Դեռ Նախճավանին չհասած, Կրտսերը լուր ստացավ, որ Արտաշատի մատույցներում իր բանակը պարտվել է:

Թիկնապահ խմբով նա թեքվեց արքայական պողոտայից և վրան զարկեց արաքսամերձ վիթխարահասակ եղեգնուտների մեջ: Նախճավանի գավառում դժվար էր վստահել որևէ բերդապահի: Մարդպետունիների այս կալվածքում բոլորը կմատնեն նրան: Նրա սուրհանդակները թռան տարբեր կողմերով: Գիշերը վրա հասավ: Իր մտերիմ զորականների հետ վիճելով, Կրտսերը անցնում էր մի վրանից մյուսը: Արտաշատի պարտությունից չէր կարողանում ուշքի գալ: Գոռում էր այս ու այն թիկնապահի վրա: Նրան սկսեց կատաղեցնել Զահանիրայի վրանից եկող երեխայի լացը: Մտավ կնոջ մոտ:

Ի՞նչ է ձայնը բարձրացրել, ինչո՞ւ չի լռում, - բղավեց արքայազնը:

Փոքրիկ Երանուհու բարուրը գրկած Զահանիրան իր գեղեցիկ աչքերն ուղղեց ամուսնուն.

- Մեր Երանուհին կմեռնի, նա սոված է, քանի ժամ է արդեն ոչինչ չի կերել: Իսկ ես չեմ կարող նրան կաթ տալ:

- Ո՞ւր է դայակը:

- Նա փախավ կես ճանապարհից:

- Ինչու՞ այդ մասին հիմա ես ասում ինձ:

- Իսկ ե՞րբ ասեի:

- Երբ տեսար, որ փախչում է:

- Ես չտեսա, թե երբ և ինչպես փախավ դայակը, ես իմացա միայն այդ մասին:

- Իսկ ինչո՞ւ է նա փախել, չէ՞ որ ես նրան վարձատրում էի տասն անգամ շատ:

- Չգիտեմ: Ինքդ իմացիր, թե ինչու է փախել:

- Չլինի՞ թե այդ դայակը վախեցել է, որ դստերս կերակրելու համար կպատժվի հորս կողմից: Կամ գուցե Հայքի դավաճան է համարել ինձ և հրաժարվել սնելու Երանուհուն: Ինչո՞ւ է այսպես հիմարացել աշխարհը:

Ինչո՞ւ են բոլորը կասկածում, որ ես արքայից-արքա կդառնամ: Չէ՞ որ գահ բարձրանալուց հետո ես կգտնեմ այդ դայակին և կհրամայեմ կտրել նրա ստինքները:

- Ես ոչինչ չգիտեմ, Տիգրան: Ինձ մոտ ուղարկիր իմ նաժիշտներին, նրանցից մեկը կարող է կերակրել Երանուհուն:

- Դու մոռանում ես Հայքի արքայական տան օրենքը:

- Ի՞նչ օրենք:

- Հայ արքայազնը կամ արքայազնուհին պետք է միայն հայ կնոջ կաթով մեծանան, հասկանո՞ւմ ես:

- Մի՞թե չես տեսնում, որ հայ կանայք հրաժարվում են սնել մեր դստերը, ինչ է, դու կարծում ես, թույլ կտա՞մ, որ նա մեռնի: Մեր ամուսնական կյանքն սկսվել ու շարունակվում է ճանապարհների վրա, վրանների տակ, իսկ դու խոսում ես արքունիքի սովորությունների և օրենքների մասին: Ամեն մայր իր որդուն փրկելու համար կանգ չի առնի ոչ մի օրենքի առջև...

- Վարվիր, ինչպես ուզում ես, - ձեռքը թափ տվեց Կրտսերը և դուրս եկավ Զահանիրայի վրանից:

Լուսադեմին սկսեցին եղեգնուտի թաքստոց-վրանները վերադառնալ սուրհանդակները: Նրանց բերած լուրերն ավելի զայրացրին Կրտսերին: Ասպետ Բագարատի գնդերը Նախճավանի մոտ փակել էին ոչ միայն արքայական պողոտան, այլև Արաքսի մյուս ափը տանող բոլոր անցուղիները: Հայկական զորամասերը դարանակալել են նաև դեպի Ծոփք տանող ուղիները: Կրտսերն զգաց, որ ինքը ծուղակի մեջ է ընկել:

Եթե միայնակ լիներ, նա կարող էր ճանապարհ գտնել դեպի Տիզբոն, բայց ինչպես վարվի երկու հարյուր յոթանասուն թիկնապահների և Զահանիրայի ու նաժիշտների հետ, որոնք միայն ռազմակառքով կարող են շարժվել մի տեղից մյուսը:

Կրտսերը որոշեց դուրս չգալ եղեգնուտ-թաքստոցից և սպասել: Բայց երրորդ օրը հայտնվեց վերջին սուրհանդակը:

- Արքայազն, աստվածները մեր ճանապարհը փշերով են ծածկում:

- Հիմա՞ ինչ է պատահել:

- Պոմպեոսը հաղթել է Եվպատորին:

- Պոմպեոսը հաղթե՞լ է մեծ Եվպատորին:

- Այո:

- Հետո՞:

- Նա հիմա առանց բանակի թաքնվել է Կողքիսում և հազիվ թե կարողանա ուշքի գալ մի տարուց շուտ:

- Ուզում ես ասել, որ ես չեմ կարող ապաստան գտնել պապիս մոտ:

- Այո:

- Եվ այնուամենայնիվ ես կցանկանայի նրա հետ լինել:

- Չես հասցնի, արքայազն, Եվպատորի վիճակն անհուսալի է: Նրան հետապնդում են ոչ միայն հռոմեացիները, այլև՝ հայրդ:

- Հա՞յրս:

- Այո: Արքայից-արքան Եվպատորի գլխի համար հարյուր տաղանդ պարգև է նշանակել:

- Ծերունին խելագարվել է, իհարկե խելագարվել է, ոչ ոք չի՞ տեսնում, թե ինչ է անում նա: Մի՞թե մարդ իր աներոջը սպանելու հրաման կարձակի: Ցանկանում է դուր գալ Պոմպեոսին, որպեսզի թագը պինդ պահի գլխին: Եվ ինչպես են աստվածները հանդուրժում նրա հանցանքները:

Նա սպանել է հարազատ զավակներին, հիմա էլ ձեռքը Եվպատորին է մեկնում:

- Բայց նա Եվպատորին գլխատելու հրաման է տվել ոչ միայն Եվպատորին պատժելու համար:

- Ապա:

- Այդ բոլորը նա կատարում է, որպեսզի դու կամովին հանձնվես իրեն:

- Ոչ թե ես, այլ նա պետք է հանձնվի իմ ձեռքը, ես, ես պետք է սարքեմ նրա դատաստանը: Ես հիմա նրան այնպիսի հարված հասցնեմ, որ ստիպված լինի ինքնասպան լինել: Դու ասում ես, որ բոլոր ճանապարհները փակվա՞ծ են:

- Փակված են միայն երեք կողմով:

- Իսկ ո՞րն է բաց:

- Դեպի Արտաշատ տանող պողոտան:

- Ահա թե որն է բաց թողել խելագար ծերունին. տունդարձի ճանապարհ է հարթում ինձ համար, որպեսզի եղբայրներիս մոտ ուղարկի ինձ:

Մոլուցքի մեջ Կրտսերը բռնեց սուրհանդակի օձիքից և չարացած աչքերն ուղղեց նրան:

- Հանգստացիր, արքայազն Տիգրան, - խեղճացած խոսեց սուրհանդակը:

- Ուրիշ նորություն չե՞ս բերել դու, - բայց թողնելով սուրհանդակին, հարցրեց Կրտսերը:

- Արքայից-արքան զորահավաք է կատարում: Հայկական մի բանակ արդեն շարժվում է դեպի Կապուտան:

- Դեպի Կապուտա՞ն:

- Այո:

- Ոչինչ չեմ հասկանում: Հռոմեացին Հայքի դուռն է բախում, իսկ նա զորքերը կենտրոնացնում է Պարթևաց աշխարհի սահմանագլխին: Ի՞նչ է մտածում ծերունին, ես չեմ կարողանում կռահել, ինչո՞ւ ես լռում ասա, ինչ է մտածում արքայից-արքան:

- Նա երևի ցանկանում է պատժել մեր համախոհներին և զգուշացնել Հրահատ արքային...

- Բավ է, այդ բոլորն ուղղված է իմ դեմ:

- Արքայազն, այս եղեգնուտից դուրս գալու գաղտնի ճանապարհ կա դեպի Սյունիք, այնտեղից հեշտ կլինի մտնել Արցախ, ապա Փայտակարանով իջնել դեպի Պարթևաց աշխարհը:

- Այդպիսի ճանապարհ կարող է ընտրել միայն վախկոտը: Ես չեմ հեռանա արքայական պողոտայից:

- Բայց չէ՞ որ այդ պողոտան փակ է:

- Մեկը բաց է, սուրհանդակ, բաց է...

- Դեպի Արտաշատ...

- Այո...

- Դու ուզում ես հանձնվել դահճին:

- Ոչ: Մենք կանցնենք դահճի կացնի տակով:

- Ինչպե՞ս:

- Ետ կդառնանք դեպի Արտաշատ, կանցնենք նրա կողքով և կապավինենք Պոմպեոսին:

- Պոմպեոսի՞ն:

- Այո:

- Բայց դա վտանգավոր է:

- Վտանգավոր է արքայից-արքա Տիգրանի համար: Իսկ իմ փրկության միակ ուղին հիմա Պոմպեոսն է:

Միհրդատ Եվպատորից բացի, Հռոմը կարող է լեզու գտնել և բարեկամանալ բոլորի հետ:

Պոմպեոսը այդ նշանաբանով մտավ Ասիա: Բայց այս նշանաբանը նրան տվել էր ծերակույտը: Իսկ զորապետ Պոմպեոսն ուներ նաև իր գաղտնի նշանաբանը, բարեկամանալ՝ նշանակում է խաբել: Նրա կոշտ ձգված դեմքի վրա ոչ մի հաստատուն բան չէր մնացել: Արդեն քառասուն տարեկան էր և գիտեր, որ աշխարհում մարդուն ձանձրացնում է այն, ինչ հաստատուն է:

Ամեն մարդ պետք է ունենա իր իմաստասիրությունը, հաստատուն համարիր քեզ, մնացածը փոփոխական է: Ուղեղդ մի տանջիր ուրիշների և աշխարհի ցավերի համար: Դրանով կտուժես միայն դու, որովհետև քո կորստի համար աշխարհն իր աչքն էլ չի թարթի:

Պարթև Հրահատին նա արքայից-արքա տիտղոս խոստացավ: Մի քանի ամիս պարթև արքան երանություն ապրեց և Պոմպեոսին օգնելու համար արշավեց դեպի Արտաշատ: Հետո, երբ Միհրդատ Եվպատորը պարտվեց ու փախավ Պոնտոսից, Պոմպեոսի մոտ երևացին արքայից-արքա Տիգրանի պատգամավորները: Նա կարող էր անմիջապես ձերբակալել զորապետ Մամիկին և հուսահատության մատնել Հայոց Տիգրանին: Բայց դա անմտություն կլիներ: Ավելի լավ է ետ կանգնել Հրահատին տված խոստումից և ապավեն կանգնել Հայոց Տիգրանին: Հիմա շահավետը դա էր: Այդ մասին դեռ չգիտեր Հրահատը: Ավելի լավ, թող ուշ իմանա: Ինչեր ասես, որ չի լինում մի օրում: Մի՞թե մի օրում չպարտվեց Եվպատորը: Երևում է, արքայից-արքա Տիգրանը շատ է անկեղծ: Զարմանալի է, թե այդ մեծ հայն ինչպես է այսքան ժամանակ մնացել գահի վրա:

Արտաշատ վերադառնալուց մի շաբաթ հետո Մամիկը նորից հայտնվեց Պոմպեոսի մոտ: Այս անգամ նա իր հետ բերել էր արքայից-արքա Տիգրանի հրամանով ձերբակալված Միհրդատ Եվպատորի պալատականների, հարազատների ու զորականների մի խումբ: Պոմպեոսի հաղթահանդեսի համար հրաշալի հավաքածու էր: Չէ, ըստ ամենայնի այս Տիգրանը կարող է դեռ շատ ծառայություններ մատուցել Պոմպեոսին: Եթե նրան հաջողվի գերել նաև Եվպատորին, ապա Պոմպեոսը կարող է մի այնպիսի խնջույք սարքել, որ մարդիկ մոռանան լուկուլլոսյան խնջույքները: Եվպատորը Պոմպեոսի հաղթահանդեսո՞ւմ: Հռոմի աչքում ինքը աստված կդառնար: Բայց Տիգրանը որտեղ կգտնի Եվպատորին: Եվ ինչո՞ւ պետք է Պոմպեոսն սպասի, թե երբ կբռնեն պոնտացուն: Այժմ արդեն Պոմպեոսի թիկունքից հռոմեական բանակը վտանգ չունի: Արքայից-արքա Տիգրանը իր բարեկամությունն է աղերսում: Ասիայի ամենահզոր տիրակալը ձեռքը երկարել է դեպի Պոմպեոսը: Հարկավոր է չշտապել: Միշտ էլ կարելի է սեղմել այդ ձեռքը: Տիգրանի վիճակն այնպիսին է, որ նա հիմա ետ չի քաշի իր ձեռքը:

Իսկ մինչ այդ, Պոմպեոսը կզբաղվի Եվպատորով: Փախել է դեպի Կողքիս: Պետք է հետապնդել նրան, քանի դեռ ուշքի չի եկել: Միևնույն է, Եվպատորը Պոնտոսի սահմաններից չի հեռանա: Պոնտոսից դուրս Միհրդատը կարող է սովորական ելուզակ դառնալ:

Սակայն դեպի Կողքիս արշավելու և Եվպատորին հետապնդելու Պոմպեոսի որոշումը խափանեց Կրտսեր Տիգրանը: Հռոմեացի զորապետը ամենևին չէր սպասում նրան: Բայց Կրտսերն իր շքախմբով և արքայական կեցվածքով հայտնվեց հռոմեական բանակատեղիում և տեսակցություն խնդրեց Պոմպեոսի հետ: Ինչո՞ւ է եկել այս հանդուգն արքայազնը:

Պետք է զգույշ լինել սրա հետ, մտածում էր Պոմպեոսը: Չէ՞ որ Կրտսերը Ասիայի երեք մեծ տիրակալների բարեկամության շաղկապն էր. նա արքայից-արքա Տիգրանի զավակն է: Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորի թոռը և պարթևաց աշխարհի արքա Հրահատ Արշակունու փեսան:

Կրտսերը թույլ չտվեց, որ Պոմպեոսը չափի ու ձևի իր անելիքը: Նա անհապաղ տեսակցություն էր խնդրում: Եվ Պոմպեոսն ընդունեց նրան: Կրտսերը զորավրան մտավ երկու թիկնապահներով:

- Ես ողջունում եմ Հռոմի մեծ զորապետ Գնեյ Պոմպեոսին, - ասաց Կրտսերը և թեթևակի գլուխ տվեց:

Պոմպեոսն զգաց, որ Կրտսերի կեցվածքում բարձր արժանապատվություն կա: Հռոմեացին որոշեց ծաղրել նրան և ստորացնել:

- Ո՞ւմ անունից և ինչո՞ւ ես եկել դու ինձ մոտ:

- Հայքի անունից, հայերն ինձ են ճանաչում արքայից-արքա, չնայած թագը դեռ գտնվում է հորս գլխին:

Արքայազն Կրտսեր, դու ոչ մի օրինական իշխանություն չունես քո ձեռքում: Դու մոռանում ես, թե ում մոտ ես եկել: Ես Ասիա եմ եկել օրինականություն հաստատելու և ոչ թե անօրեններին թևավորելու: Մեկը կարող է լինել արքայից-արքա Տիգրանի զավակը, Միհրդատ Եվպատորի թոռը և Հրահատ Արշակունու փեսան, բայց ոչ մի իշխանություն չունենալ: Եթե բոլոր պայազատներն իրենց գլխին թագ դնեին, աշխարհը կմնար հավերժական կռվի մեջ:

- Բայց ես Արտաշեսյան գահի օրինական ժառանգն եմ, օրինական, զորապետ Պոմպեոս և ոչ թե սովորական պայազատ:

- Առայժմ քո հայրն է Հայքի արքայից-արքան, չէ՞ որ դու այդ քաջ գիտես:

- Հայքի նահապետները նրան չեն ընդունում արքայից-արքա:

- Իսկ ի՞նչ ապացույցներ ունես քո ասածները հաստատելու համար:

- Իմ շքախմբում յոթ գավառների նահապետներ կան, հինգը Կապուտանի կողմերից, երկուսը Ծոփաց աշխարհից:

- Արդյոք այդ նահապետները քո համախոհները չե՞ն դարձել այն պատճառով, որ դու Հրահատի փեսան ես, իսկ իրենց գավառները մոտ են Պարթևաց աշխարհին:

- Ոչ, զորապետ, նրանք իմ համախոհներն էին դեռ այն ժամանակ, երբ ես չէի ճանաչում ոչ Հրահատին, ոչ էլ նրա դստերը, որն այժմ իմ կինն է:

- Դու ի՞նչ ես պահանջում:

- Որ Հայքի տիրակալությունը հանձնես ինձ և Հայքը դարձնես Հռոմի բարեկամն ու դաշնակիցը:

- Բայց ես արքայից-արքա Տիգրանի դեմ կռվելու պատճառ չունեմ:

- Մի՞թե Հռոմն այդքան շուտ է մոռանում Արածանիի ճակատամարտը:

- Ծերակույտն ինձ Լուկուլլոսի մեղքերը քավելու լիազորություններ չի տվել:

- Բայց քո անունից հիմա դողում է համայն Ասիան:

- Ի՞նչ ես առաջարկում:

Առանց ուշացնելու գրոհել և պատժել արքայից-արքային: Հայքում հիմա դիմադրող ուժեր չկան: Ասպետ Բագարատը քսան հազարանոց բանակով մեկնել է Կապուտան, իսկ զորապետ Մամիկը պալատական խորհրդատուի պես չի հեռանում ծերունի Տիգրանի մոտից:

Ո՞վ պետք է դիմադրի հռոմեական բանակին: Սուլլան ու Լուկուլլոսը Պոնտոսն այնպես են կողոպտել, որ քո բանակի համար քիչ բան է մնացել: Իսկ Հայքի գանձերին ոչ ոք ձեռք չի տվել: Հայքը կհարստացնի ոչ միայն քեզ, այլև քո բոլոր լեգեոնականներին, - Կրտսեր Տիգրանը ծափ տվեց, և զորավրան մտավ նրա թիկնապահներից մեկը՝ իր հետ բերելով մի ծանր սնդուկ, - Ահա, զորապետ, այստեղ հիսուն տաղանդ ոսկի կա: Ես նվիրում եմ քեզ, իսկ եթե դու օգնես ինձ ստանալու Հայքի գահը, ապա կստանաս սրա հարյուրապատիկը:

Հայկական դեղին ոսկու փայլից գայթակղվելով, Պոմպեոսը մոռացավ արքայից-արքա Տիգրանին տված հավաստիացումները և համաձայնեց Կրտսերի հետ: Վերջինս, սակայն շտապեցնում էր նրան: Եվ Պոմպեոսի բանակը, որ Փոքր Հայքի սահմանագլխին կանգնած պատրաստվում էր Կողքիս արշավելու, հրաման ստացավ շարժվել դեպի Արտաշատ: Դավաճան որդին թշնամու բանակն առաջնորդում էր հայրենի տան վրա:

Հայկական ծայրակալ մի զորամաս Խաղտո բերդի մոտ փակեց Պոմպեոսի ճանապարհը: Բայց ճակատամարտը երկար չտևեց: Լեգեոնականները շրջապատեցին հայերին, գերի վերցրին նրանց և վառեցին բերդը: Տեղեկանալով, որ թշնամուն ուղեկցում է հայ արքայազնը, գերի հայ զորականները փորձեցին մոտենալ նրան և դաշունահարել, բայց Պոմպեոսի օգնական Մետելլուս Կելերը գլխի ընկավ դավադրությունը և հրամայեց բոլորին սրի քաշել:

Երբ հայտնեցին գերի հայ զինվորների դավադրության մասին, Պոմպեոսը որոշեց զգուշանալ: Նա խորհրդի նստեց Լուկիոս Փլակկիուսի և Մետելլուս Կելերի հետ: Երկու օգնականներն էլ Պոմպեոսին հայտնեցին իրենց կասկածը:

- Զորապետ, - ասաց Փլակկիուսը, - մենք ինչու պետք է հավատանք, թե արքայազն Տիգրանին հավատում են բոլոր հայերը: Մենք գործ ունենք դավաճանի հետ, պետք է զգույշ լինել, որովհետև, եթե նա դավել է իր հարազատ հորը, ապա կարող է ծուղակի մեջ գցել նաև մեր բանակը:

Փլակկիուսի միտքը շարունակեց Կելերը.

- Ես ստվերի պես հետևում եմ նրան: Ես տեսնում եմ, որ նա շատ է համարձակ:

- Կելեր, նրա կյանքի համար պատասխանատու ես դու, - ասաց Պոմպեոսը:

- Բայց զորապետ, նրա սուրհանդակները ազատ ելումուտ ունեն մեր բանակը:

- Մի արգելիր նրանց, Կելեր, Կրտսերն զգաստացնում է իր համախոհներին, իսկ դա մեզ ձեռնտու է: Մենք միշտ էլ կարող ենք ետ դառնալ և շարժվել դեպի Կողքիս, բայց ինչպես տեսնում եք, մեզ ոչ ոք չի դիմադրում, հետևապես Կրտսերն իրավացի է: Եկեք չմոռանանք մեր շահը:

Երեք զորականներն էլ հասկացան իրար:

Խաղտոյից հետո, սակայն, հայկական բերդերն սկսեցին անձնատուր լինել, և հռոմեացիներն շտապեցին մոտենալ Արտաշատին: Պոմպեոսի առանձին գնդեր մեկ-մեկ թեքվում էին արքայական պողոտայից և, կողոպտելով շրջակա բերդերը, վերադառնում ու նորից միանում մեծ բանակի երթին: Հռոմեացիներին դուր գալու համար Կրտսերը ոգևորում էր անկյունային այդ գրոհները, ցույց տալիս կարճ ու անխոտոր ուղին, հայտնում այս կամ այն հայկական բերդի աքիլեսյան գարշապարը:

Երբ Պոմպեոսը հասավ Բագրևանդին, որ Բագրատունիների տոհմական կալվածքն էր, Կրտսերը նոր ոճիր հղացավ: Նա չէր մոռացել ասպետ Բագարատի վիրավորանքը: Ինչ-որ մի ասպետ հրաժարվեց թագադրել իրեն որպես Հայքի արքայից-արքա: Հիմա Կրտսերն այնպես պատժի Բագարատին, որ վշտից ոչ սուր կարողանա բռնել նա, ոչ էլ հպարտանա թագադրողի իր տիտղոսով: Կելերի հետ նա անմիջապես ներկայացավ Պոմպեոսին և հայտնեց, որ երթուղուց երեսուն թավալում դեպի ձախ գտնվում է Քարատուն ամրոցը:

- Քարատո՞ւն:

- Այո:

- Ո՞ւմ է պատկանում:

- Բագրատունյաց տոհմին:

- Շա՞տ զանձեր ունի:

- Երևի երկու տաղանդի չափ:

- Երկու տաղանդի համար արժե՞ երեսուն թավալում հեռանալ և մտնել անծանոթ ձորահովիտները:

- Բայց, զորապետ, կարևորը Քարատուն ամրոցի երկու տաղանդը չէ:

- Ապա ի՞նչն է կարևորը:

- Այնտեղ է գտնվում ասպետ Բագարատի կինը՝ Զոսիման:

- Ինչ է, խորհուրդ ես տալիս հիմա էլ կանա՞նց որսալ:

- Բայց մի՞թե Զոսիմա անունը ոչինչ չի ասում:

- Իսկ ի՞նչ պիտի ասի այդ անունը:

- Իսկ ի՞նչ պիտի ասի այդ անունը:

- Զոսիման Անտիոքի զորապետ Ֆարմեսի դուստրն է, Ասիայի գեղեցիկ կանացից մեկը, որը պետք է դառնար արքայից-արքա Տիգրանի կինը, բայց...

- Բայց ի՞նչ:

- Դարձավ ասպետ Բագարատի կինը:

- Ինչո՞ւ արքայից-արքան իր ձեռքից բաց թողեց Զոսիմային:

- Չգիտեմ, բայց քո հաղթահանդեսի համար դու կարող ես նրան Հռոմ տանել որպես արքայից-արքայի նախկին կանանցից մեկը:

- Իսկ եթե Զոսիման հայտարարի, որ ինքը արքայից-արքայի կինը բնավ չի եղել:

- Մի՞թե Հռոմի հաղթահանդեսում քայլող գերիները խոսելու այդքան լիազորություններ ունեն:

- Եվ այնուամենայնիվ, մարդիկ ծերակույտին կարող են հայտնել ճշմարտությունը:

- Ապացույցները դարձյալ կմնան քո ձեռքում:

- Ինչպե՞ս:

- Դու կարող ես հաստատել, որ արքայից-արքա Տիգրանը, գնահատելով ասպետ Բագարատի ծառայությունները Զոսիմային, որ նախապես իր կինն էր, նվիրել է նրան:

- Իսկ որտեղի՞ց գիտես, որ Զոսիման հիմա Քարատուն ամրոցում է:

- Իմ հետախույզները հայտնեցին:

- Պոմպեոսը չնայած զարմանում էր, որ Հայքում սկսել է իր քայլերը չափել Կրտսերի խորհուրդներով, այս անգամ էլ տեղի տվեց: Մի քանի ժամ հետո Կելերը իր գնդով պաշարեց Քարատուն ամրոցը:

- Բագրատունյաց ամառանոցավայր-բերդի քառասուն պաշտպանները ելան աշտարակների վրա: Հայերն արհամարհեցին Կելերի սպառնալիքները և սառնասրտորեն ետ մղեցին հռոմեացիների առաջին գրոհը: Զոսիման նախազգում էր, որ հռոմեացիները Քարատուն են եկել իրեն գերելու համար: Երևի ոսկին չի կշտացնում Պոմպեոսին, հիմա էլ Հայքի գեղեցկություններն է փորձում թալանել: Հայքի՞: Բայց մի՞թե ինքը հայուհի է: Չէ՞ որ ասպետ Բագարատն էլ գրավեց իր հայրենի Անտիոքը, գերեց և հետո դարձրեց իր կինը: Բայց Զոսիման գոհ է աստվածներից, որ դարձավ ասպետի կինը: Բագարատը վեհանձն է ու ազնիվ, Ասիայի միակ զորապետը, որ միայն մի կին ունի: Զոսիման սիրում է Բագարատին, սիրում է ավելի ուժգին, քան կարող էր սիրել որևէ սելևկյանի: Եվ ո՞ր սելևկյանը կարող էր չափվել Բագարատի հետ:

Զոսիման հասկանում էր, որ թշնամին ետ չի դառնա ձեռնունայն: Հռոմեացիների մոտենալու լուրը լսելով, նա իր երկամյա տղային՝ Կրտսեր Բագարատին հանձնել էր երկու վստահելի զորականների և հեռացրել ամրոցից: Գիտեր, որ որդուն կպահեն և կհանձնեն ասպետին: Դե, իհարկե, ինքը հայուհի է, չէ՞ որ Բագարատին պետք է փոխարինի Կրտսեր Բագարատը: Ի՞նչ թողեց նրա գեղեցկությունն աշխարհում: Մի Կրտսեր Բագարատ, որ քաջ կլինի հոր պես: Որդին կապրի, բայց ասպետը կարո՞ղ է ապրել առանց Զոսիմայի: Խեղճ Բագարատ, դու հիմա հանգիստ նստել ես Կապուտանի ափին և չգիտես, որ քո Քարատունը շուտով կրակի կմատնեն:

Սանձարձակ Պոմպեոս, եկել ես, քո ուժը կանանց հե՞տ ես չափում: Չես էլ երկյուղում, որ մի օր կհանդիպես ասպետին: Կհանդիպես: Եթե ասպետի ձեռքն էլ թուլացած լինի, որդուս կհանդիպես:

Կելերը նորից գրոհեց Քարատան վրա: Սակայն հայերը շարունակում էին աշտարակներից անվրդով նետահարել: Հռոմեացիք Քարատան պարիսպների վրա ոչ մի մարդու դեմք չէին տեսնում: Կելերը գլխի ընկավ, որ աշտարակների դիտանցքները փոփոխվում են: Ահա թե ինչքան հնարամիտ են այս Բագրատունիները: Երևի աշտարակների վրա շատ տեղերում շարժական քարեր են դրել և կարող են դիրքավորվել ցանկացած ուղղությամբ: Ոչինչ: Ինչ անենք, թե երկու-երեք ժամում հարյուրից ավելի հռոմեացի ընկավ ամրոցի պատերի տակ: Բայց բերդի այսպիսի աշտարակների գաղտնիքն իմանալու համար, արժե նույնիսկ հազար մարդ զոհել: Որքան կուրախանա Պոմպեոսը, երբ Կելերը հայտնի նրան, թե Քարատուն ամրոցում ինչպես են փոխվում դիտանցքերը: Հռոմեացիներն այսուհետև այսպիսի բերդեր կկառուցեն: Կելերը բնավ չէր մտածել, թե ինքը երբևէ կհանդիպի այսպիսի ամրոցի: Տարօրինակ երկիր է այս Հայքը; Մի՞թե այսպիսի ամրոց կառուցող մարդիկ չեն կարող փակել իրենց տան բոլոր դռները:

Կելերը Քարատան պաշարումը շարունակեց գիշերը և առավոտյան նորից գրոհի հրաման տվեց: Բերդն այս անգամ էլ մնաց անմատչելի: Պոմպեոսի օգնականը որոշեց ետ դառնալ, բայց Կրտսերը կանխեց նրան.

- Եվ ի՞նչ պիտի զեկուցես զորապետ Պոմպեոսին, որ հազար լեգեոնականներով չկարողացա՞ր կոտրել քառասունի դիմադրությունը:

- Դու ինքդ տեսար, արքայազն, թե ինչքան կորուստներ տվեցինք մենք:

- Բայց և այնպես չկարողացար գրավել:

- Մի կնոջ համար չարժե Պյուրոսյան հաղթության ձգտել:

- Կելեր, եթե դու լսես իմ խորհուրդը, ապա առանց կորուստների,մի քանի ժամից հետո կլինես Քարատանը:

- Կելերը հանգիստ ունկդրեց Կրտսերին: Հնչեց նահանջի փողը, և հռոմեական զորքը հեռացավ Քարատան մատույցներից: Մի քանի ժամ հետո Բագրատունյաց զինանշաններով և հանդերձներով տասնհինգ հեծյալներ մոտեցան Քարատանը: Ամրոցի դարպասները բացվեցին: Կրտսերի հանդերձափոխված հայ զորականները ամրոց մտնելով, դավադրաբար դաշունահարեցին մի խումբ պաշտպանների և, գրավելով մի քանի աշտարակներ, կանչի փող

փչեցին: Կելերի դարանամուտ գունդը նորից մոտեցավ բերդին: Հռոմեացիները ներս մտան բաց դարպասներով:

Քարատունն ընկավ:

Զոսիմայի հրաշակերտ արտաքինի և արհամարհող ու հպարտ հայացքի առջև Կելերը նվաստացած զգաց իրեն:

- Հռոմի զորավարներն այսպիսի նենգ հաղթություններով են գոռոզանում, - ասաց Զոսիման:

- Դու այդպես չէիր խոսի, եթե հաղթողը քո ամուսինը լիներ, - պատասխանեց Կելերը:

- Իմ ամուսինն ավելի շուտ ինքնասպան կլիներ, քան կձգտեր տմարդի հաղթանակի:

- Դու այժմ Հռոմի հզոր զորապետ Գնեյ Պոմպեոսի գերին ես:

Եթե շնորհակալություն հայտնես նրան, որ քեզ ազատեցինք գերությունից, նա բաց կթողնի քեզ, և դու կարող ես տուն վերադառնալ:

- Իմ տունը Հայքն է:

- Դու սելևկյան ես, և սպառնալիքի տակ ես դարձել ասպետ Բագարատի կինը:

- Ոչ, ես սիրել եմ Բագարատին և կսիրեմ ցմահ:

- Ես հարգեցի քո գեղեցկությունը և խոսեցի քեզ հետ, բայց տեսնում եմ, որ դու արժանի չես հարգալից վերաբերմունքի, - ասաց Կելերը և բարձր ձայնով գոչեց, - Էյ, լեգեոնականներ, տարեք սրան և փակեցեք ռազմակառքում:

Կողոպտված Քարատունն ամայացավ:

Պոմպեոսի բանակը փոշի բարձրացրեց դեպի Արտաշատ տանող արքայական պողոտայում: Զոսիմայի հետ գերի ընկած կին ու տղամարդ տասնյոթ հայերի սպանեցին ցուցադրաբար: Բոլոր գնդերում լուր տարածվեց, թե սպանվել է նաև ասպետ Բագարատի կին Զոսիման:

Կրտսերը ապշահար հանդիպեց Պոմպեոսին.

- Դա ճշմարտությո՞ւն է, թե լեգեոնականները կատակում են:

- Ճշմարտություն է, - պատասխանեց Պոմպեոսը:

- Բայց զորապետ...

- Նա իրեն պահեց ինչպես անառակ կին:

- Կարելի էր փակել նրա լեզուն:

- Լեզուներ կան, որոնք փակվում են միայն սրի հարվածով:

Պոմպեոսի հետ զրույցից մի ժամ հետո, Կրտսերի հետախույզներից մեկը հայտնեց, որ զորապետը մի քանի վստահելի մարդկանց միջոցով Զոսիմային ուղարկեց դեպի Հռոմ:

Արքայազնը գլխի ընկավ, որ Պոմպեոսն սկսել է կեղծել: Նա մտաբերեց պապի՝ Միհրդատ Եվպատորի խրատը. "Բոլոր հռոմեացիք խաբեության աստծու հարազատ զավակներն են":

ԼԵԶՈՒՆ ԿԱՊԻ ՊԵՏՔ ՈՒՆԻ, ԱԽՈՐԺԱԿԸ՝ ՉԱՓԻ

Տափերականի կողմից Արտաշատը բոլորովին անմատչելի է: Այստեղ և Արաքսն է փակում թշնամու ուղին, և գետեզրյա գորշավուն բերդապարիսպը: Բայց Պոմպեոսն Արաքսն անցավ Արարատյան դաշտի կենտրոնական մասով և Հայոց մայրաքաղաքին մոտեցավ թիկունքից: Դժվար չէր կռահել, որ հռոմեացի զորապետը այդ քայլին է դիմել արքայազն Կրտսերի խորհրդով: Կրտսերը գիտեր, թե որտեղից կարելի է խոցել Արտաշատը:

Սակայն քաղաքից երեք հրասախ հեռու հռոմեացիներն ստիպված էին կանգնել: Հայկական բանակը դուրս էր եկել քաղաքից և փակել թշնամու ճանապարհը: Առաջին գծի վրա աղեղնաձև ճակատ էին կազմել արցախցիների չորս գնդերը: Նրանք պատրաստ էին գրոհի նետվել Պոմպեոսի վաթսուն հազարանոց բանակի վրա:

Հռոմեացին զգաց, որ շտապել է: Չես կարող երկար կանգնած մնալ հակառակորդի բանակին դեմ-դիմաց: Մի փոքր նահանջն էլ կարող է ճակատագրական դառնալ: Նա զորաժողով հրավիրեց՝ հստակ չիմանալով իր անելիքը: Հետախույզների տեղեկությունները չգոհացրին Պոմպեոսին:

- Արքայազն, - դիմեց Պոմպեոսը Կրտսերին, - քո լրտեսները լավ չեն գործում:

- Գուցե, զորապետ, բայց հիմա պետք է գրոհել և արքայից-արքայի հետ մի հարվածով փակել բոլոր հաշիվները:

- Ինչպես կարող ես գրոհել թշնամու վրա, երբ չգիտես, թե որքան է նրա բանակի թիվը: Այստեղ ինչ որ խորամանկություն կա: Դու գիտես, որ քո ծերունի հայրը միամիտ չէ: Նա մեր դեմ դուրս է բերել քսան հազար զորական, մնացածը պահել է քաղաքի ներսում: Եվ ես չգիտեմ, թե որքան է այդ մնացածը, գուցե քսան, երեսուն, թե՞ քառասուն հազար: Ո՞վ կարող է ասել, թե մարտն սկսվելուց հետո Արտաշատից քանի գունդ դուրս կգա և կմտնի մարտադաշտ:

- Եթե արցախցիների դիմադրությունը կոտրեք, հետո հեշտ կլինի:

- Դու ասում էիր, թե արքայից-արքան բոլոր արցախցիներին պահում է իր թիկնապահ գնդերում:

- Այո:

- Իսկ ինչ է նշանակում սա: Իր թիկնապահ գնդե՞րն է դաշտ դուրս բերել:

- Դա ինձ համար մնում է գաղտնիք:

Այն պահին, երբ դավաճան որդին մտածում էր միայն Հայքի թագին ժամ առաջ տիրանալու մասին, և նրան գաղտնիք էր թվում արցախցիների քաջարի գնդերը Արտաշատից դուրս բերելը, արքայից-արքան չէր մտահոգված իր ապահովության ու թագի մասին: Արցախցիներին Պոմպեոսի դեմ ուղարկելը արտաշատցիներին համոզեց, որ Տիգրանը տերությունը փրկելու համար պատրաստ է զոհել նաև իրեն:

Փորձությունը հասել է տան շեմին: Երեսուն տարվա հզոր Հայքը կարող է կորցնել ամեն ինչ:

Արտաշեսյան հարստության վիթխարի կաղնու բնին երկու կացին են հարվածում: Մեկը Պոմպեոսի ձեռքում է, մյուսը՝ Կրտսերի:

Ի՞նչ անել: Ինքը՝ արքայից-արքա Տիգրանը, այդ կաղնու տերն է: Նա կարող է թաքնվել և կողքից լսել կացինների հարվածները: Ուր որ է Պոմպեոսն ու Կրտսերը կկտրեն բունը, և հսկա կաղնին կտապալվի գետնին: Ճիշտ է, մարդիկ կասեն, որ կործանված այս ծառի տերը դարձյալ արքայից-արքա Տիգրանն է: Բայց հայերի ինչի՞ն է պետք տապալված կաղնին: Նա շուտ կփտի, նրա հետ կփտի և Հայքի փառքը: Ոչ, պետք է կանգուն պահել Հայքի ինքնության կաղնին: Թող Պոմպեոսն ու Կրտսերը կացնի հարվածն ուղղեն իրեն: Ավելի լավ է ցավից ճչա մեկը, թեկուզ և նա արքայից-արքա Տիգրանը լինի, քան մի ամբողջ ժողովուրդ:

Արտաշատը դարձել էր մեծ զորանոց: Լայն փողոցներում շարասյուններ էին կազմել զինավառ գնդերը: Առավել բանուկ էր դարձել Նիգ փողոցը: Սուրհանդակներն այս փողոցով ետ ու առաջ էին սլանում՝ կամուրջ դառնալով մարտի պատրաստ գնդերի և արքունիքի միջև: Շուտով քաղաքից դուրս եկան և արցախցիների ձախ թևում մարտաշար կազմեցին Մարդպետունիների հինգ գնդերը: Դա չվրիպեց Պոմպեոսի աչքից: Հռոմեացին զգաց, որ արքայից-արքան պատրաստվել է մեծ ճակատամարտի համար և կարող է անակնկալի բերել Հռոմից մինչև Արաքսի ափերը հաղթական ճամփա անցած արծվակիր լեգեոններին: Հետախույզները հայտնեցին, որ քաղաքից դուրս եկան ևս ութ գնդեր, որոնցից վեցը միացան արցախցիների գնդերին, իսկ երկուսը սրարշավ շարժվեցին դեպի հյուսիս: Կես ժամ հետո այդ երկու գնդերը կտրուկ թեքեցին իրենց երթուղին և անցան հռոմեացիների խոր թիկունքը:

Չէ, մտածեց Պոմպեոսը, եթե ես մարտի բռնվեմ, Տիգրանը կհաղթի, նա իմ դեմ գնդեր կիջեցնի նույնիսկ երկնքից: Բանակցելն ավելի ձեռնտու է, ապա թե ոչ ես էլ Լուկուլլոսի պես կընկնեմ փառքի նժույգից և ստիպված կլինեմ Հռոմ վերադառնալ հետիոտն:

Հռոմեացի առաջին բանագնացներին քաղաքի պարիսպների մոտ դիմավորեց Մամիկը: Կելերի քծնալի ողջույնին նա պատասխանեց սառն:

- Լավ է, որ դու դիմավորեցիր ինձ, - ասաց Պոմպեոսի օգնականը:

- Իսկ ես ուրախ եմ հանդիպելու զորապետ Մետելլուս Կելերին, որը Լուկիուս Փլակկիուսի հետ վկա է եղել իմ և մեծ Պոմպեոսի դաշնագրությանը: Ցավալի է, որ այն մի ամսվա կյանք էլ չունեցավ, այլապես մենք կզրուցեինք ոչ թե ձեռքներիս մեկը սրի դաստակին դրած, այլ գարեջրի կարասների մոտ:

- Այդ դեպքում Պոմպեոսը պետք է հանդիպի արքայից-արքայի հետ, ես ցանկանում եմ իմանալ, թե որտեղ կարող են հանդիպել նրանք:

Հաջորդ օրը Արտաշատից դուրս, Արարատյան դաշտում Պոմպեոսն իր զորավրանում ընդունեց արքայից-արքա Տիգրանին: Ալեհեր տիրակալի փառահեղ կեցվածքը պատկառանք էր ներշնչում: Արքայից-արքային ուղեկցում էին զորապետ Մամիկն ու տասնութ զորականներ: Զորավրանում Պոմպեոսի կողքին նստել էին նրա երկու օգնականները՝ Լուկիուս Փլակկիուսը և Մետելլուս Կելերը: Այստեղ էր նաև արքայազն Կրտսերը:

Նկատելով թշնամու կողքին նստած դավաճան որդուն, Տիգրանը շտապեց թաքցնել իր վրդովմունքը և այնպես ձևացրեց, թե իբր չի տեսնում նրան:

Դեմ-դիմաց նստած են երեքը: Նրանցից յուրաքանչյուրն իր նպատակն ուներ: Արքայից-արքան խորհում էր, որ Պոմպեոսի հետ բարեկամության դաշն կնքելով, վտանգից հեռու կպահի Հայքը, Կրտսերը զարմանում էր, թե հռոմեացի զորապետն ինչու է ճակատելու փոխարեն զրույցի նստել իր հոր հետ: Իսկ Պոմպեոսը՞: Նա գիտեր, որ այս զրույցից շահելու է ինքը: Շահելու է ավելի, քան հայր ու որդի միասին:

- Ծերակույտը լիազորել է ինձ բարեկամության ձեռք մեկնել Ասիայի ամենահզոր տիրակալի՝ Հայքի արքայից-արքա Տիգրանին, - ասաց Պոմպեոսը:

- Ես ընդունում եմ Հռոմի բարեկամությունը, եթե մեր դաշնագրությունն այնպես վավերացվի, որ հետագայում կողմերից մեկն իր խոստումը չկատարելու համար ամոթ զգա համայն աշխարհի առջև:

- Ծերակույտի անունից ես ընդունում եմ այդ պայմանը:

Այժմ կարող ենք խոսել դաշնագրության մյուս կետերի շուրջ: Հռոմը ճանաչում է Հայքի ինքնությունը և քո իշխանությունն Ասիայի այն սահմաններում, ինչ դու ձեռք ես բերել զենքի ուժով: Ծերակույտը արքայից-արքա տիտղոսը Ասիայում վերապահում է միայն քեզ:

- Ես շնորհակալ եմ Հռոմի և մեծ զորապետ Պոմպեոսի բարեհաճ վերաբերմունքից:

Կրտսերը չկարողացավ համբերել և պոռթկաց.

- Զորապետ Պոմպեոս, սա երազ է, թե... դու կարող ես պնդել քո ասածները:

- Արքայազն, ես ծերակույտի անունից եմ խոսում և միայն կատարում եմ ծերակույտի հանձնարարությունը, - պատասխանեց Պոմպեոսը:

- Իսկ մինչև այժմ ինձ հետ ո՞ւմ անունից էիր խոսում:

- Ի՞նչ եմ խոսել քեզ հետ:

- Հայքի գահն ինձ է պատկանում:

- Ահա թե ինչ անարժանն ես եղել դու, Կրտսեր, հանդգնում ես հորդ մոտ հոխորտալ, - այս անգամ էլ չհամբերեց արքայից-արքան:

- Գուցե ես անարժան որդի եմ: Բայց մի՞թե ավելի լավ չէ անարժան որդի լինել, քան անարժան հայր: Դու սպանել ես իմ եղբայրներին: Քեզ չեն սիրում Հայքում, դու կործանում ես մեր տերությունը:

- Ամեն մարդ պետք է քավի իր մեղքերը, եթե ես քսանութ տարի առաջ իմ պալատից դուրս վռնդեի Միհրդատ Եվպատորի դեսպան Գորդիոսին, ապա ոչ որդիասպան կդառնայի, ոչ էլ կլսեի իմ սիրտը խոցող խոսքեր, - ասաց Տիգրանը և նայելով Պոմպեոսի կողմը, զգաց, որ նետը դիպավ նպատակին: - Հռոմեացի զորապետը միջամտեց.

- Այո, Եվպատորը մեր աշխարհներում շատ բան է խառնել իրար: Իսկ դու, արքայազն, պետք է բավարարվես այն ամենով, ինչ քեզ շնորհել է արքայից-արքան:

- Ի՞նչ է շնորհել ինձ:

- Ծոփքի արքայի տիտղոսը:

- Ես հրաժարվում եմ այդ ողորմությունից:

- Մի՞թե արքայական տիտղոսը ողորմություն է:

- Ես համայն Հայքի գահակալի օրինական ժառանգն եմ:

- Այդ օրենքին ուժ կարող է տալ քո հոր խոսքը:

- Իսկ ես, զորապետ Պոմպեոս, կարծում էի, թե այդ օրենքին ուժ կարող է տալ Հռոմի ծերակույտը:

- Այժմ արդեն արքայից-արքա Տիգրանը Հռոմի դաշնակիցն ու բարեկամն է:

- Եվ քո այսօրվա ասածները պետք է վավերացվեն մագաղաթների վրա՞:

- Այո:

- Ես բողոքում եմ այս անարդար որոշումների դեմ:

- Արքայազն, ես հաստատում եմ հորդ խոստումը, դու կարող ես քեզ համարել Ծոփքի արքա և վաղը վերադառնալ Արշամաշատ:

- Ոչ, զորապետ,ես պահանջում եմ Հայքի արքայից-արքայի թագը:

- Այդ թագն այլևս քո գլուխը չի տեսնի, - հանգիստ պատասխանեց արքայից-արքա Տիգրանը: - Ես հրովարտակով իմ փոխանորդ եմ նշանակել արքայազն Արտավազդին:

- Ես այն կգրավեմ մի օր:

- Փորձիր:

- Եվ կփորձեմ: Ես ավելի զորեղ հովանավոր կգտնեմ, քան Պոմպեոսը:

Հռոմեացի զորապետը որոշեց լռեցնել Կրտսերին.

- Լսիր, արքայազն, խոսքը կապի պետք ունի, ախորժակը՝ չափի: Դու խախտում ես ընդունված օրենքների ու սովորությունների բոլոր սահմանները: Ինչո՞ւ ես ձեռնածություններ անում իմ համբերության լարի վրա:

Այն կարող է կտրվել, որը կործանարար կլինի քեզ համար:

Կրտսերը մոլեգնած հայացքն ուղղեց Պոմպեոսին: Վերջինս կկոցեց աչքերը, կեղծ ժպտաց և դիմեց Կելերին.

- Արքայազն Կրտսերին ուղեկցիր իր վրանը:

Հռոմեացին ոչինչ չավելացրեց: Կրտսերը ելավ տեղից և շարժվեց դեպի մուտքը: Կանգ առավ, շրջվեց հանգիստ և ասաց.

- Զորապետ Պոմպեոս, ցավալի է, որ դու քո խոստումները փոխում ես, ինչպես քո կանանց:

Պոմպեոսն անպատասխան թողեց արքայազնի խոսքը: Կելերի և Կրտսերի դուրս գալուց հետո բանակցությունը վերսկսվեց: Արքայից -արքան խոստացավ հռոմեական բանակը մթերքով ապահովել այնքան ժամանակ, որքան այն կմնա Հայքի սահմաններում: Բայց հռոմեացի զորապետին դա չէր բավարարում: Նա ցանկանում էր իմանալ, թե Տիգրանը ինչքան ոսկի պիտի տա որպես ռազմատուգանք: Ռազմատուգա՞նք: Բայց մի՞թե ճակատամարտ է եղել: Այդ ե՞րբ է Պոմպեոսը հաղթել Տիգրանին: Ոչ: Այդ բառը կարող է տապալել ամեն ինչ: Չէ՞ որ դեմ-դիմաց կանգնած է մարտի պատրաստ հայկական բանակը: Անհրաժեշտ է ասելիքը ձևակերպել ավելի պատշաճ, մանավանդ, որ արքայից-արքան սկսել է տեղի տալ: Միայն պետք է ասել զգույշ: Կարելի է նույնիսկ խնդրել, որ նա դրամով օգնի որպես Հռոմի դաշնակից ու բարեկամ: Պետք է ոսկի ուղարկել ծերակույտին: Թող արքայից-արքան այդ ոսկին տա որպես նվեր, միևնույն է, Հռոմն այն կընդունի որպես ռազմատուգանք: Եվ Պոմպեոսը սկսեց հեռվից.

- Ծերակույտը համոզված է, որ Հայքի արքայից-արքա Տիգրանը որպես Հռոմի դաշնակից ու բարեկամ շատ բանով կօգնի մեզ:

- Այո, զորապետ Պոմպեոս, ես պատրաստ եմ օգնել Հռոմին:

- Հաճելի է լսել քո խոսքը, արքայից-արքա, ես պատրաստ եմ արշավել դեպի Պարթևաց աշխարհը և եթե կարողանայի...

- Ինչքա՞ն ոսկի է պետք քեզ, զորապետ Պոմպեոս, - չթողնելով, որ իր խոսքը շարունակի, ասաց Տիգրանը:

- Վեց հազար տաղանդ:

Տիգրանը միանգամից չարձագանքեց: Պոմպեոսն զգաց, որ նա մտքում հաշվումներ է կատարում:

Սակայն արքայից-արքան ուրիշ հաշվումներ էր կատարում, որ այդ պահին Պոմպեոսը չէր կարող հասկանալ:

- Վեց հազա՞ր, ասում ես, զորապետ:

- Այո, արքայից-արքա:

- Ես համաձայն եմ, միայն այդ գանձերը դու կստանաս Ծոփքից:

- Ծոփքի՞ց:

- Այո:

- Ծոփքը կարո՞ղ է այդքան ոսկի տալ:

- Այո:

- Եվ ե՞րբ կարող եմ ստանալ:

- Ես կհրամայեմ, որ վեց հազար տաղանդ ոսկին քեզ հանձնեն հենց վաղը:

- Ողջ լեր, արքայից-արքա, մենք համաձայնության եկանք: Դպիրներն այսօր կպատրաստեն մեր դաշնագրության մագաղաթը:Ե՞րբ կարող ենք այն հաստատել մեր մատնակնիքով:

- Վաղը:

- Բարի, արքայից-արքա:

Զրույցն ավարտվեց: Արքայից-արքայի շքախմբի անդամները թանկարժեք նվերներ հանձնեցին Պոմպեոսին:

Երբ Տիգրանը վերադառնում էր Արտաշատ, հռոմեական բանակում լեգեոնականները ցնծություն էին սարքել:

- Կեցցե Հռոմի բարեկամ Հայքի մեծ տիրակալ Տիգրանը, - բացականչում էին նրանք:

Արքայից-արքա Տիգրանն ու Պոմպեոսը հաջորդ օրը նորից ողջունեցին միմյանց: Դաշնագիրն ստորագրելու արարողությանը մասնակցում էին նրանք, ովքեր ներկա էին նախորդ օրվա հանդիպմանը: Փոքրիկ զորավրանի կենտրոնում դրված սեղանի մոտ նստել էին արքայից-արքան և հռոմեացի զորապետը: Մյուսները, քսան մարդ հռոմեական, քսանը՝ հայկական կողմից, ոտքի վրա էին: Դպիրը գրտնակաձև մագաղաթները հանձնեց Հայքի տիրակալին և Պոմպեոսին: Մինչև նրանք կընթերցեին դաշնագիրը՝ ոչ ոք ձայն չէր հանում: Արքայից-արքան բարձրացրեց գլուխը և, հայացքով համաձայնության նշան տալով Պոմպեոսին, որդան կարմիրի թանաքով մատնակնքեց մագաղաթը: Պոմպեոսից հետո դաշնագիրն ստորագրեցին զորապետներ Կելերն ու Մամիկը: Հաջորդը պետք է սեղանին մոտենար արքայազն Կրտսերը: Բայց երբ նա փորձեց շարժվել տեղից, զորապետ Մամիկը կտրեց նրա առջևը: Արքայից-արքայի թիկնապահներն իրարով անցան:

- Ի՞նչ պատահեց, - երկյուղած հարցրեց Պոմպեոսը:

- Զորապետ Պոմպեոս, - ասաց Մամիկը, - դու ծերակույտի անունից խոստացար ազնվորեն կատարել մեր դաշնագրության բոլոր կետերը:

- Այո, հարգարժան զորապետ, ես խոստմանս տերն եմ:

- Դու խոստացար նաև դաշնագիրը ստորագրելու ժամանակ պահպանել մեր պայմանը:

- Ի՞նչ պայման:

- Ոչ ոք իրավունք չուներ այստեղ մտնել զենքով:

- Դու խոստացար նաև դաշնագիրը ստորագրելու ժամանակ պահպանել մեր պայմանը: - Ի՞նչ պայման:

- Ոչ ոք իրավունք չուներ այստեղ մտնել զենքով:

- Զենքո՞վ: - Այո: - Բայց մի՞թե մեզնից որևէ մեկի մոտ զենք կա: - Արքայազն Կրտսերը դաշնագրին մասնակցում է հռոմեացիների կողմից, զորապետ Կելերը պարտավոր էր ստուգել նրան և նոր թողնել դաշնագրության վրան մտնելու:

- Մի՞թե արքայազնի մոտ զենք կա, - ասաց Պոմպեոսը և ելնելով տեղից, շարժվեց դեպի Կրտսերը:

- Իսկ ո՞վ ասաց, որ ինձ մոտ զենք կա, - աշխատելով անայլայլ մնալ, խոսեց արքայազն Կրտսերը:

- Ես, - գոչեց զորապետ Մամիկը և, առանց որևէ մեկի համաձայնությունն առնելու, մոտեցավ ու Կրտսերի պարեգոտի գրպանից հանեց փոքրիկ դաշույնը:

Արքայազնը կորցրեց իրեն.

- Դա ինքնապաշտպանության համար է: Այստեղ գտնվող բոլոր մարդկանց մեջ միայն ես ունեմ պաշտպանվելու կարիք:

- Արքայազն, - զայրացած ասաց Պոմպեոսը, արքայից-արքա Տիգրանի որդուն պատշաճ ու վայել չէ քո արածը:

- Բայց ի՞նչ եմ արել ես:

- Դավադիր դաշույն ես թաքցրել քո գրպանում:

- Ես ոչ ոքի չեմ դավադրում, ինձ են դավադրում

- Ստորագրիր, - հրամայեց Պոմպեոսը:

- Կրտսերը մոտեցավ և առանց դաշնագիրը ընթերցելու, մատնակնքեց: Եթե դաշույնի պատմությունը չլիներ, նա չէր ստորագրի: Ոչ էլ նա այստեղ էր եկել որևէ դաշնագիր ստորագրելու համար: Ամեն ինչ խորտակվեց: Զորապետ Մամիկն ավել զգույշ էր: Բայց Մամիկն ինչպես կռահեց:

Չէ՞ որ ինքը նույնիսկ ձեռքը չէր մոտեցնում գրպանին՝ կասկած չհարուցելու համար: Ընդամենը մի բոպե հետո ամեն ինչ վերջացած կլիներ: Այդ ժամանակ զորապետ Մամիկը չէր համարձակվի այդպես հոխորտալ:

Արքայից-արքան որդու կողմը չէր նայում: Նա ոչինչ չասաց և Արտաշատ վերադարձավ ընկճված: Ինչո՞ւ էր որդին գրպանում պահել այդ դաշույնը: Չլինի՞ մտադիր էր սպանել հորը: Գուցե ուզում էր Պոմպեոսի՞ն սպանել: Չէ: Նա այդքան քաջություն չունի Պոմպեոսին սպանելու: Եթե նա որոշել էր թիկունքից հարվածել որևէ մեկին, ապա բռնել է դավադրության ողորմելի ուղին: Այդ ուղու վրա էլ կավարտվի նրա կյանքը: Ավաղ, չեմ կարող փրկել նրան:

Կելերը արքայազն Կրտսերին ապահով հասցրեց հռոմեական բանակատեղին: Պոմպեոսի հրամանով կալանդներ հագցրին նրա ձեռքերին: Ամենքն իմացան, որ Կրտսերը կտարվի Հռոմ որպես Պոմպեոսի գերին: Բայց արքայազնին չմոռացան: Միայն չէին կարող մոտենալ նրան: Կելերի դրանիկ ջոկատը հսկում էր Կրտսերին: Պոմպեոսը հայտարարեց, որ իր գերին է ոչ միայն Կրտսերը, այլև նրա կինն ու փոքրիկ դուստրը՝ մեկուկեսամյա Երանուհին: Պատահածից ցնցված էր Զահանիրան:

ՎՐԴՈՎՎԱԾ ԱՍՊԵՏԸ

Բագրևանդը հեռու է Կապուտանից: Եթե ձիուդ առջևը չկտրեն, դու կարող ես Պարթևաց աշխարհի սահմանը հասնել մի քանի օրում: Բայց Քարատան ամրոցի կործանման լուրը ասպետ Բագարատին հասավ երկու ամիս հետո: Յոթանասունամյա զորապետը սկզբում չհավատաց:

Արտաշատից եկող սուրհանդակները հայտնում էին, որ Պոմպեոսը իրեն հռչակել է Հայքի բարեկամ, տերությանը ոչ մի վնաս չի տվել, հայկական ու հռոմեական զորքերի ոչ մի բախում չի եղել: Պոմպեոսի ինչի՞ն է պետք Բագրատունյաց Քարատուն ամրոցը, ինչո՞ւ պետք է նա սպաներ Զոսիմային:

Զորապետի հետախույզները Կապուտանից թռան դեպի Քարատուն: Լուրն ստանալու հաջորդ օրը ասպետը չկարողացավ համբերել և մտածեց տուն վերադառնալ: Բայց զսպեց իրեն և նոր սուրհանդակներ ուղարկեց Բագրևանդ: Հետո նամակ գրեց արքայից-արքա Տիգրանին: Զայրացավ ինքն իրեն, թե ինչու է համաձայնել Կապուտան գալ: Չէ որ նա կարող էր մնալ Արտաշատում կամ Տիգրանակերտում: Ավելի լավ չէ՞ր լինի, որ Մամիկին հանձնեին Կապուտանի հայկական բանակի հրամանատարությունը: Արտաշատն ու Տիգրանակերտը մոտ են Բագրևանդին: Նա ամեն շաբաթ կայցելեր Զոսիմային: Բայց ե՞րբ է Բագարատը մտածել իր մասին: Արքայից-արքայի կամքն էր, որ նա նստեր Կապուտանում: Հավանաբար Տիգրանը այդպես էր որոշել այն պատճառով, որ ասպետը քաջ գիտեր պարթևներին, որոնք չէին մոռացել ոչ Կապուտանի ճակատամարտում կրած պարտությունը, ոչ էլ զորապետ Բագարատին: Իսկ Մամիկն այս կողմերին ծանոթ չէր: Չէ, արքայից-արքան արդար է բաժանել դերերը: Հայրենյաց շահի համար Կապուտանում պետք է լիներ ինքը ոչ թե Մամիկը կամ մեկ ուրիշը:

Իսկ գուցե արքայից-արքան բոլորովին էլ այդպես չի մտածել: Ասպետ Բագարատը չէր հավատա դրան:

Տիգրանը պարտավոր էր միայն այդպես մտածել:

Մի շաբաթ հետո Քարատնից վերադարձան սուրհանդակները և հաստատեցին գույժը:

ՈՐԴԻՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ Է ՀՈՐԸ, ՔԱՆ ԱՆԵՐՈՋԸ

Պարթևաց աշխարհը ամեն օր լուրեր էր ստանում Հայքից: Հրահատ Արշակունին հետևում էր, թե Պոմպեոսն ինչով է զբաղված Արտաշատի պարիսպների տակ: Հռոմեացու հետ արքայից-

արքա Տիգրանի դաշնակցությունը սկզբում շփոթեցրեց պարթև Հրահատին: Կապուտանի սահմանից նա իր զորքերը ետ բերեց Տիզբոն: Հույս ուներ, որ հայերը, տեսնելով այդ, իրենք էլ ետ կքաշվեն Կապուտանից, ճանապարհը կբացվեր դեպի Հայք, և ինքը նորից կհասներ Կապուտանին: Բայց հայկական քսանհինգ հազարանոց բանակը Պարթևաց աշխարհի սահմանից չէր հեռանում:

Հրահատը սպասում էր, որ Պոմպեոսը Հայքի թագը կհանձնի իր փեսային՝ արքայազն Կրտսերին: Դա կվախեցներ պարթև այն նահապետներին, որոնք իրենց դավերի թելերը փորձում էին կծկել Տիզբոնի արքունիքում: Սակայն Կրտսերի մասին եկող լուրերը սկսեցին հուսահատեցնել պարթև արքային, ու նա նորից մտածեց Կապուտանն անցնելու և դեպի Արտաշատ արշավելու մասին: Բայց ի՞նչ կարող է անել Պարթևաց աշխարհը արքայից-արքա Տիգրանի և Պոմպեոսի դեմ:

Շուտով Հրահատը համոզվեց, որ Տիգրանից արքայից-արքայի տիտղոսը ետ խլելու երեզանքը խորտակվեց: Արքայազն Կրտսերին ձերբակալելու լուրը երկյուղ ներշնչեց նաև պարթևին: Հրահատը որոշեց Տիգրանից վրեժ լուծելու պարագան հետաձգել նպաստավոր ժամանակների, իսկ այժմ փրկել Կրտսերին: Եթե արքայազնը չլինի, հայերը հանգիստ չեն տա պարթևներին:

Աշնան կեսերին Հրահատ Արշակունու դեսպանախումբը դուրս եկավ Տիզբոնից և երեք օր հետո հասավ Արաքսի ափը: Պարթևները նախ Պոմպեոսին մատուցեցին թանկարժեք նվերները, որ ուղարկել էր պարթև արքան: Հռոմեացին չգովեց պարթևների առատաձեռնությունը:

Հրահատի դեսպանը հռոմեացի զորապետին մեկնեց գրտնակած մագաղաթը:

- Բաց արա, դեսպան, և կարդա ինքդ, - ծուլորեն ու անտարբեր ասաց Պոմպեոսը:

Դեսպանը սկսեց ընթերցել.

"Պարթևաց աշխարհը ողջունում է մեծ զորապետ Գնեյ Պոմպեոսին:

Հռոմից մինչև Տիզբոն քո մասին խոսում են որպես արդարադատ ու ազնիվ մարդու: Աշխարհում պետք է ապրել ազնվության երասանից բռնած: Եվ հաճելի է, որ Հռոմից հասնելով Ասիա, դու ոչ այդ երասանն ես բաց թողել, ոչ էլ մեր զորձերն ու արարքները կշռելու ծերակույտի արդարաչափ նժարները,,,":

Երբ դեսպանը վերջացրեց ընթերցումը Պոմպեոսը դիմեց նրան.

- Ինչո՞ւ է քո արքան այնպիսի պահանջներ ցուցանում, որոնք Ասիայում ընդունված սովորություններով վերապահվում են ուրիշի:

- Ո՞ւմ:

- Հայքի արքայից-արքա Տիգրանին;

- Զորապետ, արքայազն Կրտսերը Հրահատի փեսան է, իսկ Զահանիրան՝ հարազատ դուստրը:

- Բայց Կրտսերն ավելի մոտ է հորը, քան աներոջը:

- Արքայից-արքա Տիգրանը հայտնի պատճառներով հազիվ թե մտահոգվի Կրտսերի ազատության մասին:

Եվ, այնուամենայնիվ, Կրտսերը արքայից-արքա Տիգրանի զավակն է, միայն նա իրավունք ունի պահանջել արքայազնին:

ԵՐԿԱՅՆԱՁԻԳ ԳԻՇԵՐ

Արքայից-արքան արթնացավ կեսգիշերին:

Շուռ եկավ մյուս կողքի վրա և փորձեց նորից քուն մտնել: Կողոթյակից վառվող ճրագայուղի ճրթճրթոցը խանգարեց: Նա ելավ մահճակալից, ուսին արկանեց պատմուճանը և փոքրիկ լուսամուտից նայեց կողոթյակի կանթեղին: Աշտանակի մոտ քնած սպասավորի դեմքը ձուլվել էր կանթեղի ստվերին: Ճրթճրթոցն ասես ավելի սաստկացավ: Երևի յուղը վերջանալու վրա է: Խեղճ սպասավոր: Եթե նա չարթնանա և յուղ չլցնի կանթեղին՝ վաղը կգլխատվի: Արքայական պալատի այն ննջարանում, ուր Տիգրանն է քնում, գիշերն ամբողջ պետք է վառվի կանթեղը:

Տիգրանն սկսեց հուզվել: Կանթեղի լույսը բեկբեկվում էր: Ուր որ է հիմա կհանգչի: Արդյոք դա նշան չէ՞, որ հանգչելու վրա է նաև իր կյանքը: Բայց ինչու թույլ տալ, որ հանգչի:

Արքայից-արքան չհամբերեց: Նա բացեց դուռը ու մտավ կողոթյակը: Դռան ճռռոցից սպասավորը վեր թռավ տեղից և ձգվեց Տիգրանի առջև:

- Լսում եմ, արքայից-արքա:

- Ի՞նչ է, չե՞ս տեսնում, որ կանթեղը մարելու վրա է, - ասաց Տիգրանը:

- Ի՞նչ, կանթե՞ղը, արքայից-արքա, վառվում է...

- Ես լսեցի նրա մարելու ճրթճրթոցը:

- Մարելո՞ւ, - զարմացավ սպասավորը և, մոտենալով կանթեղին, սկսեց ձեռքի պղնձե ձողիկով խառնել աշտանակի ճրագայուղը:

Կանթեղի լույսը պայծառացավ, իսկ սպասավորը, ասես մոռանալով արքայից-արքայի ներկայությունը, սկսեց ինքն իրեն իմաստասիրել.

- Պարզապես թանձրացել է, մի քիչ խառնել է պետք, թե չէ երեք գիշերվա պաշար կա այստեղ: Մարդու կյանքն էլ է այսպես. պետք է միշտ բորբոքես, որ կրակը մոխրի տակ չանցնի:

Դեռ երեկ իմացավ, որ Պոմպեոսը Կրտսերին ուղարկել է Հռոմ: Արքայից-արքայի խայտառակության պարանը Արտաշատից ձգվեց մինչև Հռոմ: Ով ասես, որ չի կարող հիմա իր կեղտոտ լաթերը նետել այդ պարանին: Տմարդություն չարե՞ց Պոմպեոսը: Ինչո՞ւ ոչինչ չասաց արքայազնին Հռոմ ուղարկելու մասին: Բայց մի՞թե հռոմեացին պարտավոր էր իր անելիքի մասին տեղյակ պահել արքայից-արքային: Գուցե Պոմպեոսն սպասում էր, որ Տիգրանը պահանջի որդուն: Եվ ինչու չպահանջեց արքայից-արքան: Կրտսերի կատարածն այնքան

ահավոր էր, որ Տիգրանը դեռ ուշքի չէ՞ր եկել: Եվ դու, Հայքի հզոր տիրակալդ, արքայական մեծությանդ արժանի ազնվությամբ պատասխանիր ինքդ քեզ՝ ինչպես կվարվեիր Կրտսերի հետ, եթե Պոմպեոսը նրան վերադարձներ քեզ: Դու չէի՞ր սպանի նրան: Ոչ: Նա կապրեր, բայց որպես պատվազուրկ արքայա՞զն: Իսկ ինչո՞ւ չդիմեցիր Պոմպեոսին: Չհասցրի՞ր: Բայց դու կարող ես պահանջել նաև հիմա:

Հռոմեացին այլևս չի՞ համաձայնի: Այդ դեպքում դու էլ իրեն՝ Պոմպեոսին գերիր: Հռոմեացին հիմա Աղվանքում է, հավաքիր քո բանակները և շրջապատիր նրան: Դու կհաղթես Պոմպեոսին, նա վախկոտ է և գող: Եվ գո՞ղ: Այո, նա հափշտակել է Միհրդատի դեմ Լուկուլլոսի տարած հաղթության դափնիները: Չես ցանկանում խախտել դաշնագի՞րը: Դավաճան որդու փրկության համար չի կարելի խաղալ Հայքի բախտի հե՞տ:Ներիր Կրտսերին, արքայից-արքա, նա քո որդին է: Չե՞ս կարող: Ինչո՞ւ: Որպես հայրադավ կներես, բայց որպես հայրենադավ՝ ո՞չ:

Քամու ոռնոցից զնգզնգաց պալատական ննջարանի լուսամուտի ապակին: Արքայից-արքան նորից ելավ մահճակալից և մոտեցավ պատուհանին: Դրսում ձյունախառն մրրիկ էր: Տիգրանը ետ դարձավ և կանգնեց հանդերձակալի մոտ: Մի պահ խորհեց, ապա սկսեց հագնվել: Նա կարծես երկյուղեց միայնակությունից: Հարվածեց զանգակալին: Կողոթյակի դռան փեղկից երևաց սպասավորի գլուխը: Արքայից-արքան հիշեց, որ դուռը փակել է ետևից: Շարժվեց դեպի կողոթյակը, բացեց դուռը և դիմեց սպասավորին.

- Վառիր գահասրահի բոլոր կանթեղները, արթնացրու հազարապետին և ասա, որ շտապ ներկայանա այստեղ:

- Մարդպետունին չուշացավ: Նա զարմանքով լսեց Տիգրանի հրամանը.

- Հազարապետ, կանչիր ինձ մոտ արքայազն Արտավազդին և... - Տիգրանը նայեց Փայլակ Մարդպետունու քնատ դեմքին, քմծիծաղ տվեց ու ավելացրեց. – թող գինի բերեն այստեղ, ամենաթունդ գինին:

- Հիմա կեսգիշեր է, արքայից-արքա: - Քանի՞ տարեկան է մեր ամենահին գինին, - ուշադրություն չդարձնելով հազարապետի խոսքերին, հարցրեց Տիգրանը:

- Յոթ, արքայից-արքա:

- Այդ գինուց բերեք:

Հազարապետը գնաց հրամանը կատարելու, իսկ Տիգրանը ասես իր մտքերից փախչելով, սկսեց անցուդարձ անել գահասրահում:

- Ի՞նչ է պատահել, արքայից-արքա, - գահասրահ մտնելով, շտապով հարցրեց արքայազն Արտավազդը;

- Ի՞նչ կարող է պատահել գիշերվա այս ժամին, - ասաց հայրը և որդուն հրավիրեց նստել:

- Բայց ինչո՞ւ ես դու արթնացել:

- Իսկ դու, արքայազն, կարծում ես, թե ես երբևէ քնե՞լ եմ հանգիստ: Ոչ, զավակս, ես միշտ էլ արթուն եմ եղել: Բայց չեմ ցանկացել, որ ինձ հետ արթուն մնան ուրիշները:

- Նաև ես:

- Այո, և դու:

- Իսկ ի՞նչ պատահեց, որ արթնացրիր ինձ հիմա:

- Ես կանչեցի քեզ, արքայազն, հիշեցնելու, որ սկսվում է քո արթուն մնալու ժամանակը:

- Հայր դու...

- Ուզում ես ասել, որ ես վատառո՞ղջ եմ: Ոչ, Արտավազդ:

Մի մատռվակի հետ ներս մտավ հազարապետը: Արքայից-արքան սպասեց, մինչև մատռվակը դուրս կգար գահասրահից, ապա դարձավ Փայլակ Մարդպետունուն:

- Հազարապետ, գինի լցրու:

Մարդպետունին երեք գավերն էլ լցրեց: Արքայից-արքան վերցրեց իր գավը, գլխին քաշեց և, թեթևակի շարժելով ուսերը, ասաց. - Հրաշալի է:

Հայկական գինին մարդուն երանության գիրկն է նետում: Ինչի՞ց է պատրաստված այս գինին:

- Նռան ու խաղողի ընտիր հյութերից, - պատասխանեց հազարապետը:

- Լսո՞ւմ ես, Արտավազդ, հիանալի խառնուրդ է: Դու չե՞ս ցանկանում խմել, արքայազն:

- Ոչ, արքայից-արքա:

- Այդպես: Եվ ճիշտ ես անում, որդիս:

- Ի՞նչ ես ուզում ասել, հայր իմ:

- Մի՞թե ամեն ինչ մեկնաբանում են: Աշխարհի բոլոր արքաներն էլ երկյուղով են խմում ամենասքանչելի խմիչքը: Նորից լցրու հազարապետ, ես անցել եմ երկյուղի բոլոր սահմանները: Մինչև այժմ ես գինի եմ ճաշակել հազվադեպ և զգույշ: Իսկ դու, Արտավազդ, հեռու կպահես քեզ այս հրաշալի հյութից: Արքայական պալատներում գինին ու թույնը երկվորյակ քույրեր են, մինչև չխմես՝ չես կարող տարբերել իրարից: Իսկ եթե նույնիսկ աստվածների օգնությամբ դու գործ ունենաս այդ քույրերից միայն առաջինի հետ՝ վնասը կգա ուրիշ դռնից: Խմիչքը մարդու լեզուն դարձնում է շատախոսության ծորան:

Տիգրանը գավը տանում է դեպի բերանը և սկսում դանդաղորեն ըմպել:

- Հայքի տիրակալը, Արտավազդ, - շարունակեց Տիգրանը, - պարտավոր է արթուն լինել նաև արթուն ժամանակ: Վաղվանից... ինչո՞ւ վաղվանից, հենց այս պահից դու պետք է կառավարես տերության գործերը: Ես ցանկանում եմ իմանալ...

- Արքայից-արքա...

- Ինչո՞ւ թթվեց դեմքդ, կարծում ես քո հայրը հավիտյան կենդանի՞ պիտի մնա:

Այժմ պատասխանիր ինձ, բայց աշխատիր չշտապել, քանզի տիրակալի պատասխանը վերջնական վճիռ է: Դու գիտե՞ս, որ Կրտսերին ուղարկել են Հռոմ:

- Այո:

- Ինչպե՞ս կվարվեիր, եթե Պոմպեոսը մեծ փրկագին պահանջեր արքայազնի համար:

- Ամեն ինչ կտայի նրան ազատելու համար:

- Ես հիշեցրի քեզ, որ չշտապես վճիռ արձակելու ժամանակ:

- Ես չէի փոխի իմ վճիռը:

- Իսկ ի՞նչ պիտի անի Կրտսերը, եթե վերադառնա Հայք:

- Կապրի ինձ հետ:

- Քո վճիռը, արքայազն, ճիշտ չէ, արքունիքը բանաստեղծություն չէ, որ, ախորժալուր հնչեղության համար, տողերն իրար հետ խոսե միանման հանգերով: Արքունական տունն ուրիշ կառուցվածք ունի: Այստեղ պետք է ոչ մի հանգ մյուսին չբռնի: Նման հանգերը բանաստեղծությանը տալիս են հնչեղություն, իսկ արքունիքին՝ դավադրություն: Եթե Կրտսերը վերադառնա Արտաշատ՝ կդավի քեզ: Նրան կօգնեն Եվպատորն ու պարթև Հրահատը:

- Մի՞թե իմ եղբայրն իրավունք չունի ապրել հայրենի հարկի տակ:

- Ոչ: Նա հայրենադավ է: Եթե բախտի աստվածները նրան երբևէ ուղարկեն քեզ մոտ՝ բանտիր անմիջապես: Դե, ասա, դու կտատանվե՞ս այսպիսի վճիռ արձակելու համար:

- Չգիտեմ, արքայից-արքա:

- Գինի լցրու հազարապետ, իսկ դու Արտավազդ, լսիր ինձ:

Կռիվները չէին թողնում, որ ես զբաղվեմ տերության ներքին գործերով: Շատ բաներ խաճվել են: Պետք է կարգի բերել: Հայքի սահմաններն ընդարձակելու հետ բացվել է նաև նահապետների ախորժակը: Շինականները շատ են բողոքում: Նահապետներն սկսել են իրենք գծել իրենց կալվածքների սահմանները: Նրանց ձեռնատու չէ, որ մի քիչ էլ իր հողամասն ավելացնի շինականը: Եթե գյուղացին շատ հող ունենա՝ նահապետի կալվածքում աշխատող չի լինի: Բայց դու չպետք է թույլ տաս, որ նահապետները զորանան: Պետք է նոր սյուներ դնել բոլոր նահապետների կալվածքների սահմաններում: Աշխատիր պաշտպանել օրինաց կարգը և այնպես վերաբաշխիր հողերը, որ ոչ շինականը կարողանա նահապետ դառնալ, ոչ էլ նահապետը՝ բդեշխ:

- Գինի լցրու, հազարապետ...

ՓՈԹՈՐԿԻՑ ՀԵՏՈ

Պոմպեոսը երկար ժամանակ չմնաց Աղվանքում: Կոզիսի բանակը պարտվեց: Օրոզ արքան ստիպված էր պատանդներ տալ հռոմեացուն և դառնալ Հռոմի դաշնակիցն ու բարեկամը: Պոմպեոսի դաշնակիցը դարձավ նաև իբերների արքա Արտոկը:

Հռոմեացի զորապետը, սակայն, դեռ շարունակում էր երկյուղել Եվպատորից: Նա Հայքի վրայով հասավ Պոնտոս և հրամայեց իր զորքին՝թալանել Միհրդատի բոլոր կալվածքները: Պոմպեոսը համոզված էր, որ Եվպատորը մի օր կվերադառնա Պոնտոս: Պետք է ամայացնել նրա գանձատները:

Բայց եթե նույնիսկ աշխարհի բոլոր գանձատներն էլ ամայանան՝ փույթ չէ Միհրդատ Եվպատորի համար:

Նա ծնվել էր Հռոմի դեմ կռվելու համար: Պոմպեոսը չգիտեր, թե Կոլխիդայի անտառներում թաքնված Եվպատորը ուր գնաց: Եվ մինչ հռոմեացին նստել ու սպասում էր նրան Պոնտոսում Եվպատորը արշավի էր պատրաստվում Հռոմի դեմ: Եվպատորը տեր էր դարձել Բոսփորյան թագավորությանը, կազմել հարյուր հազարանոց բանակ և մտադիր էր ցամաքով հասնել Անդրալպյան լեռներին ու թիկունքից հարձակվել Հռոմի վրա: Եթե այդ հանճարեղ արշավը հաջողվեր Եվպատորին՝ հավանաբար Հտոմի կործանումը կդառնար անխուսափելի: Այն ժամանակ աշխարհում շատ բան կփոխվեր:

Սակայն բախտը ժպտաց Հռոմին: Մեծ արշավի նախօրեին Միհրդատի բանակն ապստամբեց: Խռովարարների գլուխ անցավ Եվպատորի որդին՝ Փարնակը: Ահեղ պոնտացու մտքով չէր անցնի, թե ինքը կարող է հանդիպել այդպիսի ձախորդության: Ապստամբները պաշարեցին Պանտիկապեյոն քաղաքի միհրդատյան պալատը: Նա տեսավ, թե ինչպես ջախջախվեց իր դարպասապահ ջոկատը: Ուր որ է ապստամբները կհասնեն պալատի բարձր աշտարակին: Եվպատորը ելավ աշտարակի վրա և փորձեց լեզու գտնել խռովարարների հետ: Բայց Փարնակը խափանեց:

- Ես համաձայն եմ քո բոլոր պայմաններին, - վերևից ասաց հայրը:

- Իմ պայմանն այն է, որ դու ինքնասպան լինես, - ներքևից պատասխանեց որդին:

- Ես քեզ եմ վերադարձնում Բոսփորի թագավորությունը:

- Ես քեզ կես ժամ ժամանակ եմ տալիս՝ինքնասպան եղիր:

Եվպատորը ետ դարձավ և աշտարակի վրա հանդիպեց տիկնանց-տիկին Կլեոպատրային:

Նա կխնայի քեզ, աղջիկս, քո եղբայրն է, - ասաց Եվպատորը:

Ոչ, հայր, ես կմեռնեմ քեզ հետ, - պատասխանեց Կլեոպատրան:

Առաջին անգամ Եվպատորը ափսոսաց, որ վարժվել է դեղթափին: Ինչպես ինքնասպան լինել: Նա կանչեց աշտարակի մյուս անկյունում կանգնած սպասավորին, նրան հանձնեց իր դաշույնը և հրամայեց.

- Մի ուշացրու, բարեկամ, սպանիր ինձ:

Սպասավորը դաշույնը խրեց Եվպատորի սիրտը:

- Նզովք Հռոմին և Հռոմի բախտի բոլոր աստվածներին, - ասաց Եվպատորը և փռվեց հատակին:

Կլեոպատրան ճչաց: Հենց այդ պահին միջնասանդուղքով աշտարակ ելան Փարնակի դահիճները: Նրանք ցանկանում էին կենդանի բռնել Հայքի երբեմնի տիկնանց-տիկնոջը: Չհասցրին: Կլեոպատրան սպասավորի ձեռքից խլեց արյունաշաղախ դաշույնը և խրեց իր սիրտը:

Դավաճան որդին աշտարակ չբարձացավ: Հաջորդ օրը նա հոր գլուխն ուղարկեց Պոմպեոսին, որը գտնվում էր Մեծ ծովի ափին: Հռոմեացին սարսափով նայեց Հռոմի քսանհինգ տարվա հակառակորդի անշունչ գլխին:

Այս գլուխը պետք է հողին հանձնել արքայավայել, - հրամայեց Պոմպեոսը: Եվպատորի գլուխը ուղարկեցին Սինոպ և թաղեցին արքայական դամբարանում:

Հայքի հարավում սկսեցին անհանգիստ շարժումներ անել պարթևները: Պոմպեոսը դեռ Աղվանքում էր, երբ Հրահատը իր բանակով մտավ Կորդուք:

Հայկական հեծելազորը նահանջեց և մարտի չբռնվեց պարթևների հետ: Ուժերն անհավասար էին:

Արքայից-արքան Կորդուք ուղարկեց արցախյան գնդերը: Բայց Սմբատ նահապետը տեղ չհասած, Պոմպեոսի օգնական Ափրանիուսը հարձակվեց պարթևների վրա և քշեց նրանց մինչև Արբելա: Կորդուքի վրա նորից շողշողաց հայկական դրոշը: Ամեն ինչ սկսվեց յոթանասուն հովտից, - ասաց Հրահատը և կռիվ հայտարարեց Տիգրանի դեմ:

Պարթևական բանակը մոտեցավ Կապուտանին: Բայց զորապետ Մամիկն այստեղ պարտության մատնեց Հրահատին և մտավ Պարթևաց աշխարհը: Նորից հուզվեց Տիզբոնը:

Հայերը երկրորդ անգամ չեն ների: Պոմպեոսը խառնվեց: Նա որպես Հայքի դաշնակից պարտավոր էր կռվել պարթևների դեմ: Իսկ հռոմեացին կռվելու ցանկություն չուներ: Եթե հայկական և հռոմեական բանակները գրավեն Պարթևաց աշխարհը, ո՞ւմ պետք է պատկանի հաղթանակը՝ Պոմպեոսի՞ն, թե՞ արքայից-արքա Տիգրանին: Այդ կռվից միայն կշահի Հայքը: Իսկ եթե շահեց՝ կդառնա Հռոմի մրցակիցը Ասիայում: Ոչ, չպետք է թողնել, որ Հայքի հզորության նժարը շատ իջնի:

Հայկական բանակը ետ դարձավ ելման դիրքերը: Պոմպեոսի երեք դատավորները Հրահատին հայտնեցին իրենց վճիռը՝ Կորդուքը և նրան մերձ գավառները պատկանում են Հայքին: Բայց մինչ այդ, Հրահատն ինքն էր համաձայնել հայերի հետ: Պարթևը հասկացավ, թե ինչու էր Եվպատորը զինակցության կոչ անում բոլորին Հռոմի դեմ:

Ուշացել էր: Հրահատը կմիանա Տիգրանին, եթե վերջինս այդպիսի զինակցության կոչի իրեն: Ասիայի տիրակալները իրենց վեճերը կարող են լուծել առանց կռվի, եթե Հռոմը չխառնվի: Իսկ ինչ կլինի, եթե հենց ինքը՝ Հրահատը, դաշնակցի Տիգրանի հետ ընդդեմ Հռոմի: Արքայից-արքան չի՞ արհամարհի արդյոք այդ քայլը: Այնուամենայնիվ, պետք է փորձել: Բայց Հրահատն այստեղ էլ ուշացավ: Նա սպանվեց իր որդիների ձեռքով:

Ասիայում նորից երևաց Արիոբարզան Հռոմեասերը: Եվպատորի դեմ նյութած դավերի համար, որպես վարձատրություն, նա թագ ստացավ Պոմպեոսից: Բայց հռոմեացին նրան հանձնեց Գամիրքի միայն մի մասը: Պոմպեոսը մտադիր էր նրան հանձնել նաև Կորդուքն ու Ծոփքը: Այդ առաջարկը խայթեց Արիոբարզանին: Նա հրաժարվեց կամովին: Գիտեր, որ Տիգրանը չի հանդուրժի հայկական հողի վրա Արիոբարզանի իշխանությունը: Հայերից կրած երկյուղը դեռ չէր անցել: Պոմպեոսն զգաց, որ դեռ շատերն են Ասիայում դողում Տիգրանից: Հռոմեացին համաձայնեց Կորդուքն ու Ծոփքը թողնել արքայից-արքային, բայց այնտեղ պահեց մի քանի լեգեոններ:

Իր շքախմբով Արշամաշատ հասավ արքայազն Արտավազդը: Հոր անունից նա բանակցությունների մեջ մտավ Պոմպեոսի հետ: Հռոմեացին փորձեց զրույցն սկսել հաղթողի պատվանդանից: Բայց Արտավազդը ասաց, որ արքայից-արքան չեղյալ կհայտարարի Արտաշատի դաշնագիրը, եթե Պոմպեոսը չկատարի իր խոստումը: Հռոմեացին իջավ պատվանդանից.

- Արքայազն Արտավազդ, ես շատ դաշնագրեր եմ կապել, որ թելադրեմ իմ կամքը: Բացառություն է կազմում Հայքի տիրակալը: Չէ՞ որ այդ մասին գիտես նաև դու:

- Զորապետ Պոմպեոս, - պատասխանեց Արտավազդը, - Հայքը պահանջում է, որ դու կատարես քո խոստումը:

- Արքայազն, ես Փոքր Հայքը համարյա ամբողջությամբ հանձնեցի ձեզ, զիջեցի նաև Կորդուքն ու Ծոփքը:

- Ի՞նչ է նշանակում զիջել, զորապետ, մի՞թե մեզ չեն պատկանում մեր պապենական հողերը:

- Իսկ ո՞վ կհաստատի, որ դրանք հայկական հողեր են:

- Հայկական սրբազան գերեզմանները:

- Աշխարհում բոլոր տերությունների սահմանները գծում են սրով, իսկ դուք՝ հայերդ, պահանջում եք գերեզմաններո՞վ որոշել ձեր հողային իրավունքը:

- Գերեզմանները անխարդախ վավերագրեր են, զորապետ:

- Գուցե, արքայազն, քո հայրը դրսում հայկական գերեզման չթողեց, հետևապես լուծելու խնդիր չկա:

- Իսկ Կոմմագենե՞ն:

- Այո, Հայոց հնամյա օրրանը:

- Կոմմագենեն ձեզնից խլել է Լուկուլլոսը, և ոչ թե ես:

- Մի՞թե կարևոր է, թե ով է խլել:

- Բայց Կոմմագենեն հիմա հռոմեական պրովինցիա է, միայն ծերակույտը կարող է որոշել Հայքին միացնելու հարցը:

- Կոմմագենեն Հայքի մի մասն է, այնտեղ միայն հայեր են ապրում:

- Մի մոռացիր, Արտավազդ, որ հայ է նաև Կոմմագենի կառավարիչը. հայ է, Երվանդունյաց հարստությունից սերող պայազատ:

- Չպետք է ճանաչել նրա իրավունքները:

- Դա բռնություն է, արքայազն:

- Կոմմագենեի կառավարիչ Երվանդը դաշնակցել է Լուկուլլոսի հետ: Նա դավաճանել է արքայից-արքային, կդավաճանի նաև քեզ, եթե թուլանա Հռոմի զորությունը: Երվանդունյաց զարմից սերելը դեռևս իշխանության նշան չէ: Բացի այդ, զորապետ, հայրս ցանկանում է տեղեկանալ նաև, թե հռոմեական կայազորը երբ պետք է ազատի Ծոփքի ու Կորդուքի հայկական ամրոցները:

- Մենք դաշնակիցներ ենք, արքայազն, մի՞թե հռոմեական մի քանի լեգեոնների ներկայությունը հայկական հողում այդքան շատ է անհանգստացնում ձեզ:

- Այո, զորապետ, անհանգստացնում է, մենք չենք կարող կեղծել:

- Բայց իմ զորամասերի ներկայությունը այստեղ պետք է որ ուրախացներ արքայից-արքային:

- Մենք սիրով ենք հյուրընկալում բարեկամին, բայց...

- Ցանկանում ես ասել, որ չարաշահում ենք Հայքի հյուրասիրությունը: Արքայազն, մի՞թե առայժմ արքայից-արքային ձեռնտու չէ, որ իր զինավառ դաշնակիցը պաշտպան է կանգնել Հայքի սահմանին: Պարթևները կարող են նորից հայտնվել և պահանջել Կորդուքը:

- Այլևս չեն համարձակվի: Զորապետ Մամիկը Կապուտանի կողմից կհասներ Տիգրոն, եթե քո խորհրդով հայկական բանակը ետ չդառնար Պարթևաց աշխարհից: Իսկ այստեղ էլ մեր գնդերն են կանգնած:

- Ես չեմ առարկում, մեկ-երկու տարուց հետո մեր լեգեոնները կթողնեն Կորդուքն ու Ծոփքը:

- Մեկ-երկու տարի՞:

- Ինչո՞ւ զարմացար, արքայազն, մեր դաշնագրի համաձայն արքայից-արքան կարող է հայկական զորամասեր ուղարկել հռոմեական պրովինցիաները, նույնը կատարում եմ նաև ես: Բացի այդ, Կորդուքում ու Ծոփքում ձեր բանակն է, դուք եք վարում այդ տիրույթների գործերը:

- Արքայից-արքան անորոշ նպատակ է տեսնում այդ բանում:

- Ի՞նչ նպատակ:

- Ասենք՝ արքայազն Կրտսերին Հայք վերադարձնելու և Ծոփքը նրան հանձնելու նպատակ:

- Դա քե՞զ է անհանգստացնում, թե՞ արքայից-արքային:

- Ոչ, զորապետ, դա անհանգստացնում է համայն Հայքին: Կարևոր չէ, թե ով կլինի տիրակալը: Մենք չենք հանդուրժի, որ Հայքը նոր հողեր կորցնի:

- Ես ազդարարել եմ ամբողջ աշխարհին, որ Կորդուքը ու Ծոփքը պատկանում են արքայից-արքա Տիգրանին:

- Մի քանի ամիս անց Պոմպեոսը վերադարձավ Հռոմ: Ասիայում ամեն ինչ խաղաղվեց: Միհրդատ Եվպատորի մահը Միջերկրայքում ու Պոնտոսում ազատություն տվեց հռոմեացի կառավարիչներին ու վաշխառուներին: Զենքի շառաչը լռեց, և անտրտունջ Ասիան սկսեց քամվել գանձերից: Փոթորիկն անցավ Հայքի վրայով: Աշխարհում գահեր կործանվեցին, թագեր ընկան շատերի գլխից, բայց Հայքը մնաց անսասան:

Տիգրանի գլխին ավելի ամրացավ արքայից-արքայի թագը:

ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՍԱՀՄԱՆԵՑԻ ՕՐԵՆՆ ԱՅՍ

Արքայից-արքայի հրամանով ամռան սկզբին Արտաշատ հասան տերության բոլոր գավառների նահապետները: Մայրաքաղաքի Վանատուր իջևանում կյանքն աշխուժացավ: Նահապետները կերուխում էին սարքում և տաք-տաք զրուցում Հայքի տիրակալի նոր հրովարտակի մասին:

- Տիրակալը կասկածում է ծայրակալ գավառների նահապետների հավատարմության վրա, այլապես այսպիսի հրովարտակ չէր արձակի, - ասում էր մեկը:

- Եվ նա ճիշտ է անում, մի քանի տարի առաջ Կապուտան աշխարհի նահապետները չանցա՞ն արքայազն Կրտսերի ու պարթև Հրահատի կողմը, - առարկում էր մեկ ուրիշը:

- Բայց արքայից-արքան պատժեց նրանց:

- Իսկ եթե չկարողանա՞ր հաղթել դավաճաններին:

- Հիմա Հայքի ոչ մի ծայրակալ գավառի նահապետ չի դավաճանի տիրակալին:

- Հրովարտակ արձակելուց հետո էլ ինչո՞ւ է կանչել մեզ:

- Երևի ցանկանում է իր կամքն անձամբ թելադրել նահապետներին:

Զրույցին չէր մասնակցում Հանիբերդ ամրոցի նահապետ Թորգոմը: Տասնիննամյա այս երիտասարդը Վրկանա ծովի ափից Արտաշատ էր հասել ութ օրում: Երբեք չէր եղել արքունիքում: Նա իր երեք հարյուր զինվորներով առաջինը գրոհեց պարթևների վրա, երբ մի տարի առաջ զորապետ Մամիկը հայկական բանակով մտավ պարթևաց հողը: "Ճիշտ է, քո դեմքը գեղեցիկ չէ, բայց դու քաջ այր ես, Թորգոմ, խիզախությանդ մասին ես կզեկուցեմ արքայից-արքային", ասել էր այն ժամանակ զորապետ Մամիկը:

"Քո դեմքը գեղեցիկ չէ": Ինչո՞ւ զորապետ Մամիկը ճիշտ չարտահայտվեց: Չէ՞ որ Թորգոմը տգեղ է, երևի ամենատգեղը Հայքի բոլոր այրերի մեջ: Եվ ինչո՞ւ է կանչել տիրակալը: Որ նայի Թորգոմի ծուռ քթին, անսովոր մեծ բերանին, ցցված ծնոտին ու ճաղատ գլխին և չարախնդա՞:

Ինչ է, արքայից-արքան ծաղրի ուրիշ առարկա չի՞ գտել, որ Թորգոմին է բերել հասցրել պալատ: Եվ մի՞թե Տիգրանը պիտի չարախնդա նրա տգեղության վրա: Չէ՞ որ այդ տգեղ այրը հավատարիմ է եղել Հայքին ու նրա մեծ տիրակալին; Այստեղ, Վանատուր իջևանում Թորգոմին հանդիպելիս, նահապետները փսփսում էին իրար հետ և հռհռում: Դրանք դեռ նահապետներն են: Իսկ ինչպես կհռհռան պալատականները:

Թորգոմն այս խորհրդածությունների հետ էր, երբ արքունի սուրհանդակը նրան հայտնեց, թե պարտավոր է շտապ ներկայանալ տիրակալին:

Արքունիքի մեծ գահասրահում հավաքվել էին Հայքի շատ երևելիներ: Իր փառահեղ գահի վրա բազմել էր արքայից-արքա Տիգրանը, նրա ձախ կողքին տիկնանց-տիկին Համասփյուռն էր, աջ կողքին՝ արքայազն Արտավազդը, հետո՝ շքեղ քղամիդներ հագած չորս բդեշխներ, հազարապետ Փայլակ Մարդպետունին, արքայադուստր Նռանեն, զորապետ Մամիկը, տակառապետ Գնունին, տերության մի քանի քաղաքապետներ ու գավառապետներ: Ավագանին ասես տոնական խնջույքի էր նստել: Արքայից-արքայի տրամադրությունը բոլորի համար անսովոր էր թվում: Նա հաճոյախոսում էր, կատակում:

Մատռվակները փոքրիկ գավերով քաղցր ըմպելիքներ էին մատուցում: Ոչ ոք չգիտեր, թե ինչո՞ւ է արքայից-արքան հավաքել ավագանուն: Երևի տիրակալն ուզում է զվարճանալ, այլապես նա չէր դառնա Ոստանի նահապետին ու ասեր.

- Գիսանե աստվածուհին տո՞ւրք է վերցնում քեզնից:

- Ի՞նչ տուրք, արքայից-արքա:

- Մազի, նահապետ, վերջին երկու տարում քո գլուխը ճաղատությունից կլորանում է արագորեն:

- Դե, ի՞նչ ես ասում, տիրակալ, - ձեռքը ճաղատին քսելով, ասում է Ոստանի նահապետը, ամբողջ դեմքով կարմրելով գահասրահում պայթող քրքիջից:

Արքայից-արքան բարձրացնում է ձեռքը, գահասրահում միանգամից մարող քրքիջը արձագանքում է միջնասրահի հեռավոր անկյունում: Հետո տիրակալը դիմում է Գուգարքի բդեշխին.

- Ցուցանիր, թե ով է Արտաշատի ամենագեղեցիկ աղջիկը:

- Բայց բդեշխը դեռ բերանը չբացած, փոքրիկ արքայադուստրը բացականչում է.

- Վարսանուշը:

- Սպասիր, Նռանե, թող ինքը՝ բդեշխը պատասխանի, - ասում է արքայից-արքան:

- Այս ու այն կողմից բացականչում են՝ դարձյալ ընդհատելով բդեշխին:

- Վարսանուշը, տակառապետ Գնունու դուստրը...

Տասնութամյա Վարսանուշը աշխատում է իր գեղանի գլուխը թաքցնել հոր թիկունքում, բայց տիրակալը ձեռքով է անում, և Գնունին աղջկա ձեռքը բռնած, մոտենում է արքայից-արքային:

Հենց այդ պահին գահասրահ է մտնում արքունի սպասավորը և զեկուցում.

- Մեծդ արքայից-արքա, ժամանել է Հանիբերդի նահապետ Թորգոմը:

- Թող ներս գա, - հրամայում է Տիգրանը:

Գահասրահ է մտնում գեղազարդ տոգա հագած Թորգոմը, գլուխ տալիս տիրակալին ու ավագանուն: Նրա այլանդակ դեմքը տեսնելով՝ մի քանիսը փոթկացնում են, որը չի վրիպում արքայից-արքայի ուշադրությունից: Տակառապետ Գնունին փորձում է աղջկա հետ ետ դառնալ իր տեղը, բայց Տիգրանը նորից է բարձրացնում ձեռքը և ասում.

- Օրիորդ Վարսանուշ և նահապետ Թորգոմ, կանգնեցեք կողք-կողքի:

Հրամանն անմիջապես կատարվում է: Գահասրահում հավաքվածները սկսում են ծիծաղել: Նահապետ Թորգոմի տգեղությունն ավելի անսովոր է դառնում գեղեցկուհու կողքին, և պալատականները մոռացության տալով պատշաճության կարգը, ոչ միայն բարձրաձայ են դարձնում իրենց ծիծաղը, այլև սկսում են սրամտել: Կարծես թե բոլորն էլ գոհ են: Այսքան հաճելի տեսարան նրանք չէին տեսել: Այ թե ինչ կարող են անել աստվածները: Մեկին լողացրել են գեղեցկության ծովում, մյուսին՝ տգեղության: Արքայից-արքան երկար նայում էր Թորգոմին ու Վարսանուշին և չէր ընդհատում պալատականների ծաղրը: Երիտասարդ նահապետի դեմքը քրտնել էր ամոթից: Վարսանուշը շեղակի նայեց Թորգոմին և արցունքի մի կաթիլ նշմարեց նրա աջ աչքում:

Աղջիկը խղճաց տղային, թե ոչ, բայց դադարեց ծիծաղելուց: Արքայից-արքան կարծես թե սպասում էր Վարսանուշի լրջանալուն: Նա բարձրացրեց ձեռքը և դարձավ ավագանուն.

- Արք և տիկնայք, դուք հաստատո՞ւմ եք, որ տակառապետ Գնունու դուստր Վարսանուշը ամենագեղեցիկ աղջիկն է համայն Արտաշատում:

- Այո, արքայից-արքա, Վարսանուշը գեղեցիկ է ինչպես Աստղիկ աստվածուհին, - ձայնեցին այս ու այն կողմից:

- Հանիբերգի նահապետ Թորգոմը տգեղ է, չէ՞, - նորից հարցրեց Տիգրանը:

Այս անգամ նրան չարձագանքեցին:

- Դուք չեք ցանկանում վիրավորել նահապետի արժանապատվությունը և լռում եք: Դուք իրավացի եք, արք և տիկնայք: Նահապետ Թորգոմը Հայքի քաջ զորականներից է, գահին ու հողին նվիրված այր, որ Վրկանա ծովի ափին հաստատուն է պահում Հայկյան արծվակիր դրոշը: Նա իր հեծյալներով առաջինն է փախուստի մատնել պարթև Հրահատի առաջապահ երկու գնդերին: Այս այրը երեք հարյուր հայերով հաղթել է երկու հազար պարթևի: Հարգանք նրան, երիցս հարգանք:

- Հարգանք նահապետ Թորգոմին, - բացականչեց ավագանին:

Տիգրանը շարունակեց.

- Արդ, արքայական իմ կամքն է, որ գեղեցիկ Վարսանուշը ամուսնանա քաջայր Թորգոմի հետ:

Գահասրահը սսկվեց: Ոչ ոք չէր սպասում այդպիսի հարվածի:

Վարսանուշի հոգին ավելի շատ փոթորկեց Թորգոմի արցունքը, քան Տիգրանի հայտարարությունը: Այս քաջ այրը, որ մահ է տեսել և հաղթել թշնամուն, արտասվեց՝ լսելով, որ Վարսանուշը պետք է դառնա իր կինը: Դա սիրո և երջանկության արտասուք չէ՞ր: Արդյոք ուրիշնե՞րն էլ տեսան Թորգոմի արցունքի այդ մի հատիկ շիթը, թե միայն ինքը... Ոչ, երևի միայն ինքը՝ Վարսանուշը տեսավ: Եթե հիմա ինքը մերժի, ապա ամբողջ կյանքում չի մոռանա արցունքի այդ շիթը...

Պալատականներից ոչ ոք չէր համարձակվում ձայն հանել: Տակառապետ Գնունուն թվում էր, թե տիրակալը կատակում է: Գնունին ինքնաբերաբար մի քայլ առաջացավ դեպի գահը և կանգ առավ: Տիգրանը չթողեց, որ տակառապետը հավաքի իր մտքերը:.

- Գնունի, դու դժգո՞հ ես արքայական իմ որոշումից:

- Արքայից-արքա, - սկսեց խոսել տակառապետը, - իմ դուստրը պետք է ապրի Վրկանա ծովի ափին...

- Վրկանա ծովի ափը Հայքի սահմանն է:

- Ես խնդրում եմ. Մեծդ Տիգրան, կատակ համարիր քո ասածը:

- Տակառապետ, իմ հռչակած նոր օրենքը ծանո՞թ է քեզ:

- Այո, արքայից-արքա:

- Ի՞նչ է ասում այդ օրենքը:

- Հայքի ծայրակալ գավառների նահապետական տները պետք է ազգակցական կապերով կապվեն Արտաշատի և Արարատյան աշխարհի նահապետական տների հետ:

- Տակառապետ Գնունի, դու կարծում ես վասն կատակի՞ սահմանեցի այդ օրենքը:

- Չգիտեմ, արքայից-արքա, երևի վասն իմ դժբախտության:

- Ոչ, տակառապետ Գնունի, վասն հայրենյաց սահմանեցի օրենն այս: Հիմա նահապետ Թորգոմը միայնակ ու կտրված է զգում իրեն Վրկանա ծովի ափին: Բայց Վարսանուշի հետ ամուսնանալուց հետո նա ավելի կկապվի Արտաշատին, որովհետև իր աները և կնոջ ազգականները ապրում են մայրաքաղաքում:

Վարսանուշը Արտաշատը կմոտեցնի Թորգոմին:

- Վարսանուշը կարող էր ավելի հարմար փեսա գտնել իր համար մյուս ծայրակալ նահապետների մեջ, եթե օրինաց կարգով պարտավոր է անպայման ամուսնանալ ծայրակալների հետ:

- Դու ակնարկում ես նահապետ Թորգոմի ոչ գեղեցիկ դե՞մքը:

- Թերևս, այո:

- Թորգոմի և Վարսանուշի որդիները գեղեցիկ կլինեն, տակառապետ:

- Արքայից-արքա, խնդրում եմ ի միտ բերել իմ ծառայությունները...

- Վարսանուշը պետք է դառնա Թորգոմի կինը, - վճռական ձայնով հայտարարեց Տիգրանը և դիմեց տակառապետի դստերը, - դու համաձայն ես իմ որոշմանը, գեղեցկուհի:

- Տիրակալ... - հազիվ շշնջաց Վարսանուշը:

- Աղջիկը մի քայլ ետ դարձավ և դեմքը ձեռքերով ծածկելով, դուրս վազեց գահասրահից:

- Ետ բերել նրան, - հրամայեց Տիգրանը:

- Պալատական սպասավորը Վարսանուշին ետ բերեց գահասրահ:

Նահապետ Թորգոմին թվում էր, թե երազ է տեսնում: Մի՞թե այս ամենը իրոք երազ չէ: Արտաշատի գեղեցկուհի Վարսանուշը պիտի դառնա իր կինը: Մի՞թե իր տգեղության համար աստվածները կարող են այդքան մեծ երջանկություն փոխհատուցել:

Երազների աշխարհում մոլորված Թորգոմը նույնիսկ չլսեց Տիգրանի հարցումը.

- Դու գո՞հ ես, նահապետ Թորգոմ:

Սպասավորը հրեց երիտասարդի ուսը:

- Լսում եմ, արքայից-արքա:

- Դու գո՞հ ես Թորգոմ, - իր հարցը երկրորդեց Տիգրանը:

- Այո, արքայից-արքա, բայց...

- Բայց ի՞նչ:

- Ես, ես...

Նահապետը կմկմում էր:

- Խոսիր, նահապետ, - հրամայեց Տիգրանը:

- Ես անչափ շնորհակալ եմ, արքայից-արքա, - ասաց Թորգոմը:

- Մոտ եկեք երկուսով, - ասաց տիրակալը:

Թորգոմը առաջացավ դեպի Տիգրանը, իսկ Վարսանուշը ետ դարձավ ու մտավ սրահի անկյունը:

- Վերցրու այս տուփը, նահապետ, քո հարսնացուն այստեղ հրապուրիչ զարդեր կգտնի իր համար, ես շնորհավորում եմ քո և Վարսանուշի ամուսնությունը, - վերջացնելով իր խոսքը, արքայից-արքան բարձրացրեց ձեռքը:

Դու բռնություն գործադրեցիր, հայր իմ, - արքայից-արքայի հետ միայնակ մնալով, ասաց արքայազն Արտավազդը:

- Տերությունը, որդիս, առանց բռնության կառավարել չես կարող:

- Տակառապետ Գնունին հարգարժան պալատականներից է, Արտաշեսյաններիս նվիրված այր:

- Հանի գավառը տերության համար ավելի արժե, քան հազար Գնունի:

Հիմա և առմիշտ իմացիր այդ, արքայազն: Տերության ղեկավարը պետք է աչքը տնկած պահի Հայքի սահմանին: Եթե սահմանամերձ մեր բոլոր գավառները հավատարիմ լինեն գահին, ապա թշնամու հարձակման ժամանակ Հայոց բանակը բնավ հանկարծակի չի գա: Գահի վրա երկար չի կարող մնալ այն թագավորը, որը միայն իր պալատն է տեսնում ու մայրաքաղաքը: Մեր թշնամիներն իրենց դավերն սկսում են Հայքի ծայրակալ գավառներից: Մի պահ պատկերացրու, թե դու նահապետ Թորգոմն ես, ապրում ես Վրկանա ծովի ափին, պարթևների հարևանությամբ: Քո տիրույթը պահելու համար պիտի միշտ նայես, թե որտեղից կարող է վտանգ գալ: Եթե պարթևները մտնեն Հայք, առաջինը կպատժեն Հանիի նահապետին: Այդ պատճառով ծայրակալ գավառապետները հեղհեղուկ խառնվածք են ունենում: Նրանք միշտ թեքվում են հզորի կողմը: Այդպիսի վիճակում են գտնվում աշխարհի բոլոր տերությունների ծայրակալները:

- Եվ դու, արքայից-արքա, համոզված ես, որ մենք կարող ենք հաստատուն դարձնել նրանց հավատարմությունը մեր գահին:

- Մենք կարող ենք և պարտավոր ենք դա անել: Մի կասկածիր: Այս տգեղ Թորգոմի նահապետական տան առնվազն երկու սերունդ հավատարիմ կլինի Արտաշատին:

- Մենք մայրաքաղաքում այդքան գեղեցկուհիներ չունենք, որ նվիրաբերենք տերության բոլոր ծայրակալ նահապետներին:

- Պետք էլ չէ, որ մայրաքաղաքից մեկնեն ծայրակալ գավառները: Մեր ծայրակալ նահապետներից շատերը սքանչելի դստրեր ունեն: Անհրաժեշտ է նրանց ամուսնացնել Արտաշատի և Արաարատյան աշխարհի երևելիների հետ:

Շտապել, իհարկե, չարժե: Այդ ամենը հարկավոր է անել լուռ, առանց աղմուկի: Դա պետք է սովորություն դարձնել Հայքում: Ինձնից ու քեզնից հետո էլ այդպես պիտի վարվեն մեր հետնորդները, այլապես Հայքի միասնությունը կխախտվի: Մենք կսկսենք գործարկել նաև օրենքի մյուս կետերը:

- Դա դժվար կլինի, արքայից-արքա:

- Ինչո՞ւ:

- Բնաշխարհի նահապետները չեն համաձայնի ամառանոցներ ու դաստակերտներ կառուցել ծայրակալ գավառներում:

- Կստիպենք բոլորին, արքայազն: Ծայրակալ գավառները Հայոց տան դարպասներն են, որոնց բանալիները պետք է գտնվեն մեր ձեռքում: Եթե պալատի մեծավորը դաստակերտ

ունենա պարթևաց սահմանամերձ գավառում, ապա նա միշտ մտահոգված կլինի, որ պարթևը չմոտենա Հայքին: Ես զրուցեցի զորապետ Մամիկի հետ: Նա արդեն իր եղբայրներին ուղարկել է Տայք, որոնք Ճորոխ գետի ափին ամրոց են կառուցում: Հիանալի օրինակ է ցուցանում Մամիկը: Մի քանի տարի հետո Տայքում կստվարանա Մամիկենց գերդաստանը: Գիտե՞ս թե ինչ կլինի հիսուն տարի հետո: Ով կհանդգնի մոտենալ Տայոց աշխարհին: Մամիկենց քաջերի ահից թշնամին հեռու կփախչի: Հայկազուն քաջերով պիտի ամրապնդել և Ուտյաց աշխարհը, և Կապուտանը, և Ծոփքն ու Կորդուքը, և Գուգարքը:

- Իսկ գերեզմանների խնդի՞րը:

- Բայց դա քո մտահղացումն է, արքայազն:

- Իմ մտահղացո՞ւմն է:

- Այո, Արտավազդ, Պոմպեոսի հետ բանակցությունների ժամանակ դու ես ասել հռոմեացուն, որ տերությունների սահմանները որոշելու համար ամենաանխարդախ վավերագրերը գերեզմաններն են:

- Դա ճիշտ է:

Պոմպեոսը առարկել է քեզ՝ պնդելով, որ սրով են որոշում տերության սահմանը:

- Այո նա այդպես ասաց:

- Աստվածները կարող են մի օր մարդկանց ձեռքից խլել սրերը, բայց ոչ մի աստված չի կարող ձեռք տալ գերեզմաններին;

- Երևի այդպես լինի հայր իմ:

- Արդ, արքայազն, եթե այս ամենը ճիշտ է, էլ ինչո՞ւ ես մտածում, որ արդար չէ մեր օրենքը:

- Արքայից-արքա, ես չասացի, թե արդար չէ, կիրառելն է դժվար:

- Ինչո՞ւ:

- Մեր սովորությամբ գերեզմանը սրբություն է:

- Օրենքով պարտադրվում է, որ տերության երևելիներից շատերը մահից հետո թաղվեն Հայքի սահմաններին մերձ:

- Այո, դա նշանակում է, արքայազն, որ Հայքի բոլոր սահմանները հարազատի գերեզմանի պես պետք է սրբություն համարենք ոչ միայն ես և դու, այլև բոլոր հայերը:

- Թշնամիները կարող են պղծել մեր անվանի մարդկանց դամբարանները:

- Այդ դեպքում թշնամին կտուժի, իսկ մենք կշահենք:

Պղծված դամբարանատիրոջ ազգականների ատելությունը թշնամու հանդեպ կսաստկանա քառապատիկ ուժով: Դու գիտե՞ս, թե Օսրոյենեն ինչպես գնաց մեր ձեռքից:

- Օսրոյենցիներն անցան հռոմեացիների կողմը:

- Բայց մինչ այդ, տղաս...

- Մինչ այդ ոչինչ էլ չէր պատահել:

- Պատահել է, արքայազն:

- Ի՞նչ է պատահել:

- Մեր բարեկամ արաբները իրենց հոտերով խուժել էին Օսրոյենե:

- Առանց համաձայնությա՞ն:

- Այն ժամանակ Մծբինում էր քո հորեղբայրը՝ արքայազն Գուրը, որը Միգդոնիայից ղեկավարում էր Օսրոյենեի գործերը: Նա բանի տեղ չի դրել վաչկատուներին, որոնք լցվում էին Օսրոյենեի բարեբեր հովիտները և հաստատվում այնտեղ: Եվ տասը տարի հետո Օսրոյենեն դարձավ արաբների արոտավայրը:

- Իսկ ինչ եղան Օսրոյենեի հայերը: Նրանք փոխադրվեցին դեպի բնաշխարհի գավառները:

Զարմանում ես, այնպես չէ՞, երբ մեր բանակը գրոհում էր մեծ ծովի ափերով և մեր առջևից նահանջում էր թշնամին, թիկունքում՝ Օսրոյենեում, հայերն էին նահանջում բարեկամ արաբների առջև: Այդպիսի նահանջներից է սկսվում տերության պարտությունը, տղաս: Մենք պարտավոր ենք ծայրակալ գավառները բնակեցնել միայն հայերով: Լսո՞ւմ ես, արքայազն, միայն հայերով: Ծայրակալ գավառները մեր տան սյուներն են:

ԵՍ ԿՄՆԱՄ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Արքայից-արքա Տիգրանը չխորհրդակցեց ոչ տիկնանց-տիկին Համասփյուռի, ոչ էլ արքայազն Արտավազդի հետ: Արտաշատից մեկնեց Տիգրանակերտ և որոշեց այլևս դուրս չգալ այնտեղից: Արքունիքը մնաց Արտաշատում, և Արտավազդն զգաց, որ հայրը Հայքի տերությունը անխոս հանձնում է իրեն: Դրանիկ բոլոր գնդերը արքայից-արքայի հետ հաստատվեցին Տիգրանակերտում:

Ամեն մարդ կյանքի իրիկնամուտին վերադառնում է իր երազանքի ոստանը: Տիգրանի ոստանը միշտ էլ Տիգրանակերտն է եղել: Այստեղ, գլխին թագ դնելու պահից՝ նա երազել է հզոր Հայքի և նրա մեծ մայրաքաղաքի մասին: Հայքը հզորացավ, բայց Լուկուլլոսն ու Պոմպեոսը խանգարեցին, որ Տիգրանակերտը դառնա մեծ մայրաքաղաք: Եվ այնուամենայնիվ, նա Արտաշատին հավասար մայրաքաղաք է:

Հեռվից ահեղ տպավորություն էին թողնում քաղաքը շրջափակող բարձր պարիսպները: Քաղաքում շարունակվում էր շինարարությունը: Մուշից Խուշուշի հետ այստեղ էր փոխադրվել Գնելը: Նա մեծ տուն էր կառուցում: Անտառավանից Խուշուշի հայրը՝ Հրաչը, արջատխլենու փայտ էր հասցնում փեսային: Գնելը գեղազարդ տուփեր էր պատրաստում, վաճառում և ստացած դրամը վճարում շինարար վարպետներին:

Հենց որ տանիքի գործն ավարտեն, - ասում էր Գնելը Խուշուշին, - հայրիկիդ ու մայրիկիդ կփոխադրենք այստեղ:

- Իսկ ո՞վ պետք է արջատխլենի բերի:

- Մյուս անտառավանցիները:

- Ես չեմ կարողանում մոռանալ մեր Գրգուռը:

- Քո Գրգուռն ու Անտառավանը հիմա Տիգրանակերտն է Խուշուշ:

Մի քանի օր հետո պալատական սպասավորը երևաց Գնելի անավարտ շենքի մոտ և հայտնեց, որ արքայից-արքան կանչում է զարդաքանդակողին:

Տիգրանակերտի արքայական մեծ պալատը գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս, հյուսիսային մայր դարպասներից կես հրասախ հեռավորության վրա: Այս վիթխարի ապարանքը, սակայն, երկու մեծ գետնուղիներով կապված է քաղաքի ներսում գտնվող պալատի հետ: Երկու պալատներն էլ կրկնակի պարիսպ ունեին: Լուկուլլոսի հարձակման ժամանակ տիկնանց-տիկին Կլեոպատրան մեծ պալատից փոխադրվել էր փոքրը: Երկար ժամանակ մի սպասավորից բացի, մեծ պալատում ոչ ոք չէր ապրում: Կլեոպատրայի և նրա հայրադավ որդիների պատճառով մեծ պալատն ասես անիծված էր ոչ միայն տիգրանակերտցիների, այլև հենց իր՝ արքայից-արքայի կողմից:

Արքայից-արքան հրամայեց միայնակ թողնել իրեն: Նա մոտեցավ փոքրիկ լուսամուտին: Այստեղից երևում էր ամբողջ քաղաքը: Տիգրանակերտը պարուրող մյուս պարիսպներից մի քանի կանգուն բարձր Կլեոպատրյան աշտարակները խռովեցին արքայից-արքայի հոգին: Եվպատորի դուստրն ամեն ինչում աշխատել է տարբերվել: Ինչո՞ւ է նա ավելի բարձր կառուցել տվել այդ աշտարակները: Երազո՞ւմ էր իշխե՞լ հայոց պարիսպների վրա: Տիգրանակերտում իր պարիսպներն էր բարձրացնում, իսկ արքունիքում էլ՝ ձգտում որդիներին գահ բարձրացնել:

Որդիները: Ապերախտ որդիները: Ուր են հիմա նրանք: Չկան... Իսկ Կրտսե՞րը: Հազիվ թե Հռոմից տուն դառնա նաև նա: Եթե Եվպատորը շուտ մեռներ, ապա արքայից-արքան Պոմպեոսից կպահանջեր՝ Կրտսերին հանձնել իրեն: Գուցե կարողանար փրկել նրան: Բայց չէ, աստվածները չեն խախտում մարդկանց մահվան հերթը:

Այս ապարանքում Կլեոպատրայի հետ ինչքան շքեղ երազներ է հյուսել նա: Բայց ամեն ինչ կարծես փուլ եկավ: Լուկուլլուսը, Զարեհը, Միջնակ Տիգրանը, Կրտսերը, հետո Կլեոպատրան լքեց այս ապարանքը, հոր հետ հասավ մինչև Պանտուկապեյոն և ծովահայաց ամրոցի աշտարակի վրա վերջ տվեց իր կյանքին: Կարծես թե նրանք չեն եղել, ոչ Կլեոպատրան, ոչ որդիները: Իսկ գուցե նրանք կան, այս քաղաքը չկա: Ապա շենքերն ու պարիսպնե՞րը: Ո՞րն է երազը. Կլեոպատրա՞ն, թե Տիգրանակերտը: Հեռվում ծնծղաներ են զարկում: Երևի հարսանիք է: Տիգրանակերտցիների փույթը չէ, որ արքայից-արքան ամեն օր զրույցի է նստում վշտի աստծու հետ: Տարիներ հետո նրանք չեն էլ հիշի, որ այս ապարանքում իր որդիների հետ ապրել է տիկնանց-տիկին Կլեոպատրան: Իսկ ինձ կհիշեն: Կասեն՝ արյունակիցները խանգարեցին Մեծն Տիգրանին, բայց բոլոր հայերը սիրում էին նրան: Հետո կպատմեն, թե ինչպես է զոհվել արքայասեր արհեստավոր Գնելը: Եվ այդ Գնելի որդին հիմա տուն է կառուցում և համոզում մարդկանց, որ Տիգրանակերտը պիտի դառնա աշխարհի ամենամեծ քաղաքը: Չէ, կյանքը ոչ արքաների հետ է սկսվել, ոչ էլ կվերջանա արքաների հետ: Իրենց երազների հետ փլվում և աշխարհին հրաժեշտ են տալիս միայն մարդիկ: Ծխանի ծուխը մնում

է: Միայն չես կարող ասել, թե հազար տարի հետո այդ ծխանի տերը հայորդի՞ կլինի, թե՞ հռոմեացի կամ պարթև:

Հայքը փուշ է դարձել բոլորի աչքում: Եթե հայերը թույլ տան, ապա օտար տիրակալները նախ Հայքը կբաժանեն իրար միջև, հետո՝ մնացած աշխարհը:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Տիգրանակերտի թատրոնի շենքի առջև տեղադրվեց վիթխարի ապառաժ քարը: Մի տարի տևեց, մինչև զորականները Մթին լեռներից այն հասցրին այստեղ:

Երբ քարը տեղ հասցրին, Տիգրանակերտ հրավիրեցին Հայքի նշանավոր քարագործ վարպետներին: Նրանք պտտվեցին թատրոնի շենքի առջև տեղադրված ապառաժ քարի շուրջը և ասացին.

- Նորը նախկին արծվաքանդակից երկու անգամ մեծ կլինի: Բայց տասն անգամ գեղեցիկ ու փառահեղ կլինի, քան նախորդը, և ամեն ինչով կպատշաճի մեր Տիգրանի արքայական մեծությանը:

Լսելով, որ քարագործ վարպետներն արդեն սկսել են քանդակելը, արքայից-արքան ուրախացավ: Սակայն Հռոմից ստացված լուրերը մռայլեցին նրա հոգին և մոռացության տվին ամեն ինչ: Արքայազն Կրտսերը մահացել է: Մահացել է՝ կռվելով հռոմեացիների դեմ: Հարազատ որդու մահվան բոթը խեղճացրեց աշխարհակալ Տիգրանին: Արքայից-արքան սկսեց արտասվել երեխայի նման: Առաջին անգամ նա երկյուղեց և մեծ ապարանքում զգաց իրեն միայնակ: Գիշերը չկարողացավ քնել, և նրան թվաց, թե այսուհետև ինքն արթուն կմնա մինչև մահ:

Հաջորդ օրը սուրհանդակները Տիգրանակերտից սուրացին դեպի Արտաշատ: Տիրակալը հրամայում էր արքունիքը Արտաշատից փոխադրել Տիգրանակերտ: Երկու շաբաթ անց մեծ ապարանքում տեղավորվեցին տիկնանց-տիկին Համասփյուռը, արքայազն Արտավազդը, արքայադուստր Նռանեն, հազարապետ Փայլակ Մարդպետունին: Նրանք Տիգրանակերտ եկան իրենց բազմաթիվ սպասավորներով: Կապուտանից Խուլփի ափ հասավ զորապետ Մամիկը, իսկ Արշամաշատից՝ տասնմեկամյա բդեշխ Մեհրուժանը՝ տիկին Աշխենի ուղեկցությամբ: Մամիկն ու փոքրիկ Մեհրուժանը տեղավորվեցին Տիգրանակերտի ներսում գտնվող ապարանքում:

Ոչ ոք չէր հանդգնում հարցնել, թե արքայից-արքան ինչու է բոլորին իր շուրջը հավաքում: Չլինի՞ կանխազգում է մոտալուտ մահը և ցանկանում է աշխարհին հրաժեշտ տալուց առաջ տեսնել մտերիմներին: Տիգրանը, սակայն, ոչինչ չէր ասում, շարունակում էր մնալ միայնակ, կարճում էր իր հանդիպումները նույնիսկ տիկնանց-տիկին Համասփյուռի և արքայազն Արտավազդի հետ: Մեծ ապարանքում հորդում էր կյանքը՝ չխախտելով միայն գահասրահի լռությունը:

Գահասրահում լռությո՞ւն: Բայց մի՞թե կարող է լռել արքայից-արքա Տիգրանը: Ահա նրա արծվենի հայացքի առջև կանգնեց իր պապը՝ Արտաշեսը, որն ասես ինչ-որ բան էր պահանջում:

- Զեկուցե՞մ, - գահասրահի լռության մեջ լսվեց Տիգրանի ձայնը: - Մի շտապեցրու, աշխարհակալդ Արտաշես, հիմա կզեկուցեմ: Գիտեի, վաղուց գիտեի, որ մի օր պիտի զեկույց տամ քեզ: Գիտեի, որ ես իրավունք ունեմ մի անգամ զեկուցելու: Միայն մի անգամ: Մինչև հիմա ինձ զեկուցել են ուրիշները:

Նրանցից շատերը պահանջել են, որ ես դաժան չլինեմ իմ վճիռների մեջ: Ես ոչինչ չեմ պահանջում, Մեծդ Արտաշես, ոչ էլ կտրտնջամ, եթե դու դաժան լինես իմ հանդեպ:

Քո մեծության շվաքի տակ ես չհանգստացա ոչ մի օր: Պաշտեցի աստվածներին Հայոց և պապերին իմ հզոր, պաշտեցի երկիրն իմ Հայկյան և որդան կարմիրը: Ասքանազյան մեր նժույգները հասան Մեծ ծովի, Եվքսինյան Պոնտոսի և Վրկանայի ափերը: Ես հրամայեցի, որ Հայքի եզրապահը դառնա Հայոց լեզուն:

Քանի-քանի բանակներ եկան իմ դեմ: Եկան ու բախվեցին ու անցան: Ես զիջեցի ուրիշների հաշվին: Բայց ոչ ոք չիմացավ, որ ես Հայքից ոչ մի շյուղ չզիջեցի: Ես չէի ապրի մի օր աշխարհի վրա, եթե բախտն ինձ ստիպեր զիջել Հայքից:

Ապրեցի՝ կարծելով, թե աստվածները փառքի ու վայելքի առատ բաժին են շնորհել ինձ: Բայց ամեն ինչ խաբուսիկ էր: Ես զոհեր էի մատուցում աստվածներին, բայց նրանք դավաճանում էին ինձ, ես գահեր էի կռում իմ որդիների համար, բայց դավաճանում էին նաև նրանք: Կռվեցի օտարների դեմ, դավաճան որդիների, իմ հայրական խղճի և Հայոց աստվածների դեմ: Ես չգտա մեր բախտի բանալին: Տեսա, որ հայն իրեն բաժին ընկած բերկրանքը վայելում է տագնապով: Ինչո՞ւ է այսպես: Ես Մեծ Հայք եմ ժառանգում իմ հետնորդներին: Բայց չեմ պահանջում, որ նրանք հատուցեն ինձ փառքի հուշայունով: Կցանկանայի, որ ծայրակալ գավառներից հայերենը ոչ մի քայլ չընկրկեր դեպի երկրի խորքը: Ահա իմ միակ պատգամն ու պահանջը: Շուտով իմ թագն ու ծիրանին կհանձնեմ Արտավազդին:

Ներիր ինձ, աշխարհակալդ Արտաշես, ես մտադիր չեմ տեղ գրավել քո կողքին: Արքայից-արքա լինելուց բացի, ես հայր էի: Սպանեցի իմ երկու որդիներին, օգնության ձեռք չմեկնեցի երրորդին, նա էլ սպանվեց Հռոմի մատույցներին մերձ Ապպիոսյան ճանապարհի վրա: Սարսափելի է, այնպես չէ՞: Հայրական վշտի այսպիսի բեռով ես չեմ կարող հանգիստ ննջել Արտաշեսյաններիդ մոտ: Ես կհրամայեմ, որ ինձ համար դամբարան կառուցեն Մթին լեռներում: Շատ խոր կառուցեն, որ հեռու լինի երկրից ու մարդկանցից: Գիտեմ, որ դա մեր աստվածային ավանդների խախտումն է: Բայց մի՞թե աստվածները արդար էին իմ հանդեպ: Ինչո՞ւ ես ավելի երկար ապրեցի, քան իմ որդիները: Չէ, հայրական այսպիսի հանցանքով երկրի վրա հողը չի դիմանա իմ շիրիմին;

Գահասրահի նախադռանը արքայադուստր Նռանեի զրնգուն քրքիջը ընդհատեց Տիգրանին: Արքայից-արքան ելավ տեղից և մոտեցավ լուսամուտին: Դրսում ամառ էր: Կլեոպատրյան վարդանոցի ծաղիկների բուրմունքը հասնում էր մինչև մեծ ապարանքի աշտարակը:

- Արտավազդ:

- Լսում եմ, արքայից-արքա:

- Ես քո հայրն եմ, Արտավազդ:

- Դու սովորեցրել ես ինձ չշեղվել պալատական կարգուկանոնից:

- Այո, բայց մենք հիմա խոսում ենք որպես հայր ու որդի:

- Ես լսում եմ հայր իմ:

- Հայր իմ, դա ավելի լավ է հնչում, քան արքայից-արքան:

- Երկուսն էլ հրաշալի են հնչում

- Ինչ էիր անում այսօր:

- Շրջում էի մայրաքաղաքում:

- Եվ ի՞նչ տեսար:

- Կառուցում, հայր իմ, ամեն տեղ կառուցում են, ավելի շքեղ են կառուցում, քան առաջ, դա նշանակում է, որ հայն այլևս վախ չի զգում ոչ համայն Հայքի, ոչ էլ Տիգրանակերտի համար:

- Դու այդպե՞ս ես կարծում:

- Այո, հայր իմ:

- Սխալվում ես, որդիս Արտավազդ, դու երկու զենքով պիտի պահես Հայքը:

- Երկո՞ւ:

- Այո:

- Որոնք են այդ զենքերը:

- Հայոց լեզուն և Հայկյան սուրը: Հիշիր, տղաս, սուրը դու կարող ես պատյանի մեջ դնել, բայց վերստին հանել, կոտրվելու դեպքում կռել նորը: Սակայն եթե սխալվես և Հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին՝ կկորցնես և քեզ, և վարքը Հայոց մեծաց, և Հայքը համայն, և ապագան Ասքանազյան մեր ազգի:

- Ես չեմ շեղվի քո իմաստուն վճռից, հայր իմ:

- Կուզենայի, տղաս, որ աստվածներն ավելի բարյացակամ լինեին քո հանդեպ: Ես մաղթում եմ, որ աներեր մնա քո գահը, և մեր հետնորդների քաղաքամայրը չթափառի տերության այս ու այն կողմը:

- Հայր իմ, Տիգրանակերտի քո արծվաքանդակի շվաքը հովանի կլինի և ինձ, և մեր հաջորդներին:

- Ինչպե՞ս է ընթանում քանդակելու գործը:

- Քարգործ վարպետներն աշխատում են առանց դադարի: Շուտով ապառաժ քարի վրա կերևա քո արծիվը:

- Շուտո՞վ:

- Այո:

- Ոչ, Արտավազդ, այդ քանդակը կպատրաստվի հինգ-վեց տարում:

- Ով է ասել քեզ, հայր իմ:

- Ոչ ոք, տղաս, ես՝ ինքս գիտեմ դիտել ու հաշվել: Բայց հիմա կարևորն արծվաքանդակը չէ, տղաս: Ես ցանկանում եմ քեզ հետ խորհրդակցել ուրիշ բանի մասին:

- Լսում եմ, հայր իմ:

- Ես ուզում եմ դամբարան կառուցել ինձ համար:

- Դու շտապում ես արքայից-արքա:

- Դարձյալ արքայից-արքա, ինչի՞ համար ես հիշեցնում այդ արքայից-արքան և հետո ինչո՞ւ ես ասում, թե ես շտապում եմ:

- Այո հայր իմ դու շտապում ես, և ես չեմ թողնի, որ քեզ համար դամբարան կառուցեն հիմա:

- Ինչո՞ւ չես թողնի:

- Չեմ թողնի:

- Արտավազդ, դու քաջ գիտես, որ տիրակալներից շատերն իրենք են կառուցում իրենց դամբարանները:

- Այո գիտեմ: Եվ այնուամենայնիվ, հայր իմ, ես չեմ թողնի, որ դու դամբարան կառուցես:

- Մի վրդովվիր, տղաս, ես պահանջում եմ, որ դու լսես հորդ և արքայից-արքային:

- Հրամայո՞ւմ ես:

- Այո, Արտավազդ, դա իմ վերջին հրամանն է:

- Լսում եմ:

- Ես պետք է մահից առաջ տեսնեմ իմ դամբարանը:

- Վարպետներ կուղարկեմ Աշտիշատ:

- Աշտիշա՞տ:

- Իհարկե, Աշտիշատ, հայր իմ, Արտաշեսյանների պապենական գերեզմանատունն այնտեղ է:

- Բայց ես Աշտիշատի անունը չտվեցի, որդիս:

- Արտաշեսյանները ուրիշ տեղ մինչև հիմա դամբարան չեն կառուցել:

- Ոչ, Արտավազդ, ես իմ դամբարանը Աշտիշատում չեմ կառուցի:

- Հայր իմ, ինչո՞ւ ես ուզում խախտել մեր հարստության հնավանդ կարգը:

- Լսիր, տղաս, իմ դամբարանը կկառուցենք Մթին լեռներում:

- Ես չգիտեմ, թե դա ինչպես կարելի է անել, հայր իմ:

- Հազար մարդ պետք է ուղարկել Մթին լեռները:

- Հետո՞:

- Նրանք կփորեն ժայռերը և կխորանան գետնի մեջ: Կխորանան այնքան, որ ոչ ոքի մտքով չանցնի մտնել այնտեղ: Այդ խորխորատում էլ կկառուցեն իմ դամբարանը:

- Սարսափելի է:

Խորհրդավոր ու տանջահար կատարներ ունեն Մթին լեռները: Տիգրանակերտից տասնութ-քսան հրասախ հեռու, դեպի Արտաշատ տանող մեծ պողոտայից մի կողմ ընկած այս լեռներից խույս են տալիս բոլորը: Ճանապարհորդը կարող է մոլորվել նեղ կածաններում, որոնք քարայրից քարայր են միանում իրար:

Բայց ահա ամառվա վերջին հազար կորովի վարպետներ եկան այստեղ: Հսկա բրիչների զնգոցը խախտեց Մթին լեռների ահավոր լռությունը: Լեռնահովտում վրաններ զարկեցին և սկսեցին կռիվ տալ քարերի հետ: Քանդում էին հողը, մանրատում ժայռերը և խորանում ընդերքում: Նրանք համոզված էին, որ դամբարանը կառուցելուց հետո մեծ վարձատրություն կստանան ու կվերադառնան տուն:

Տիգրանակերտից նրանց համար ուտելիք ուղարկում էին տասնհինգ օրը մի անգամ:

Հայքում շարունակում էին կառուցել արքայից-արքա Տիգրանի համար: Տիգրանակերտի թատրոնի առջև ժայռաբեկորի վրա ուրվագծվում էր տիրակալի փառքի խորհրդանիշ արծվաքանդակը, իսկ Մթին լեռներում՝ ստորգետնյա դամբարանը: Տերության բոլոր արհեստավորաց տներում պատրաստում էին ոսկյա ու արծաթյա բազմատեսակ մասեր, որոնք իրար էին միացվում և ամբողջանում Մթին լեռների խորքում: Արհեստավորաց տան ոչ մի վարպետ չգիտեր, թե իր պատրաստած այդ թանկարժեք ու ծանր մետաղամասը ինչի հետ պիտի կցորդվի և այդ կցորդումից հետո ինչ տեսք կունենա: Մարդիկ ենթադրում էին, որ ինչ որ տեղ մի բան է կառուցվում: Բայց ի՞նչ:

Ամիսը հասնում էր ամսվա հետևից: Տիգրանակերտի մեծ ապարանքում արքայից-արքան հրամայում էր խրախճանք սարքել ամեն օր: Գուսանները գովերգում էին Տիգրանին և մեծ ապարանքում, և թատրոնի շենքում, և մայրաքաղաքի բոլոր թաղամասերում: Հաճախ ապարանքի կողքով մարտական կեցվածքով անվերջանալի շարասյուներով շարժվում էին հայկական գնդերը: Տիգրանն իր գահասրահի պատուհանից դիտում էր զինավառ ռազմիկների գնացքը և հրճվագին հայացքով ձեռքով ողջունում նրանց:

Մամիկն ու Սմբատը զորահանդեսից հետո ներկայանում էին արքայից-արքային և սպասում, թե ինչ նոր հրաման պիտի տա նա:

***

- Ես զարմանում եմ, հայր իմ, - դառնալով հորը, խոսեց արքայազնը, - դու հիմա ոչ ոքի չես լսում:

- Ճիշտ է տղաս, - պատասխանեց արքայից-արքան, - բայց դու մի նեղացիր և կամակորություն մի համարիր իմ ցանկությունները, մենք հիմա կգնանք Մթին լեռները, ես ուզում եմ տեսնել, թե ինչպիսին է այն տունը, որի մշտնջենական բնակիչը պիտի դառնամ ես:

- Իսկ դա պատշա՞ճ է, հայր իմ:

- Սպասիր, ասացիր պատշաճ չէ՞, ինչը, այս հանդերձով Մթին լեռներում երևա՞լը: Կես ճանապարհին ես կհանդերձափոխվեմ:

Մարտակառքը կանգ առավ կիսամութ մի կիրճի բերանում: Հանդերձափոխված արքայից-արքան և Արտավազդը իջան կառքից: Այստեղից հետո պետք է ոտքով գնալ: Կառապանը սուլեց: Քիչ անց նրանց կողքին հայտնվեց կոշտացած դեմքով, հաղթաբազուկ մի այր: Նա խոնարհվեց արքայազն Արտավազդի առջև ու ասաց.

- Ո՞վ է այս մարդը արքայազն Արտավազդ:

- Հելլեն դպիր ու ճարտարապետ է, - աշխատելով անտարբեր ձևանալ հանդերձափոխված Տիգրանի հանդեպ, պատասխանեց արքայազնը:

- Ինչո՞ւ է բարեհաճել մեզ մոտ:

- Նա եկել է դիտելու ձեր կառուցած դամբարանը:

- Գեղեցիկ է, - ասաց Տիգրանը, - չէի նկատել:

- Սա արքայից-արքա Տիգրանի դամբարանի բանալին է, - խոսեց Արտավազդը:

- Այս արծվաքանդակը դամբարանի բանալի՞ն է:

- Այո:

- Հետաքրքիր է, արծվաքանդակը բացվում է դռան պե՞ս:

- Ոչ: Տեսնո՞ւմ ես, ոլորանների կողերին արքայից-արքա Տիգրանի թագի փոքրիկ քանդակներ են երևում:

- Տեսնում եմ:

- Ի՞նչ է կարծում հարգարժան հյուրը, այս ոլորանների կողերին թագի այդպիսի քանի՞ քանդակներ կլինեն:

- Երևի հազար:

- Ոչ, քսան հազարից ավելի:

- Բայց այս քանդակներն ինչ կապ ունեն դամբարանի հետ:

- Հիմա կասեմ: Այս դամբարնը կառուցվել է Հայքի արքայից-արքա Տիգրանի կյանքի ութսունհինգերորդ տարում: Ութսունհինգը դամբարանի մուտքի բանալու ծածկագիրն է: Այս արծվաքանդակից սկսած, եթե հաշվես ութսունհինգ թագաքանդակ, ապա դեմ կառնես դամբարանի մուտքին:

Սկսեցին հաշվել ու շարժվել առաջ: Ոլորանի ութսունհինգերորդ թագաքանդակը ոչնչով չէր տարբերվում կողքի թագաքանդակներից: Հաղթաբազուկ այրը մոտեցավ և ուժով հրեց ոլորանի կողին: Լսվեց մի ծանր ճռռոց, և քարը բացվեց դռան պես: Հաղթաբազուկը ներս մտավ մութ լեռնախորշը, վերցրեց անկյունում դրված կանթեղներից երկուսը, վառեց դրանք և արքայից-արքային ու արքայազնին սկսեց ուղեկցել դեպի երկրի խորքը:

Իջնում էին դանդաղ, զգուշորեն: Հաղթաբազուկը լուսավորում էր յուրաքանչյուր սանդղոտ: Քիչ հետո լեռնախորշի դիմացի ծայրից լույս երևաց: Արքայից-արքան կանգ առավ և հրեց Արտավազդի ուսը.

- Այնտեղ լույս է վառվում:

- Այո, հարգարժան հյուր, մենք մոտենում ենք դամբարանին, որտեղ գիշեր ու տիվ հարյուրից ավելի կանթեղներ են վառվում, - պատասխանեց Արտավազդը:

Սանդղոտները վերջացան: Այժմ արդեն քայլում էին հարթ, սալարկված խորշով, որը կամաց-կամաց լայնանում էր: Վերջապես հասան ընդգետնյա հսկա կառույցին: Նրա առաստաղն ավելի բարձր էր, քան Տիգրանակերտի մեծ ապարանքի գահասրահինը: Կանթեղների լույսի տակ Տիգրանը սկսեց դիտել իր դամբարանը: Ընդարձակ լեռնախորշի կենտրոնում շողշողատում էր ոսկեձույլ մի մարտակառք: Նրա անիվները կիսով չափ խրվել են ապառաժուտ հատակի մեջ: Կառքի իրանը զարմանալի կառուցվածք ուներ: Այն ոչ դագաղի էր նման, ոչ մահճակալի, ոչ էլ արքայական բազմոցի: Ոսկեձույլ կառքի տարբեր կողմերում ադամանդներ էին հուրհրում: Ձիերի փոխարեն կառքին լծվել էր մի արծիվ, որ թևերով կառչել էր գետնին և գլուխը ցած խոնարհել: Թվում էր, թե ուր որ է արծիվը կբարձրացնի իր թևերը և կսլանա դուրս՝ լույս աշխարհ հանելով զարմանահրաշ կառքը: Տիգրանը դիտեց արծվի արծաթյա թևերը և քմծիծաղ տվեց: Կառք դամբարանն անբողջովին ոսկուց ու ադամանդից է, բացի արծվի թևերը: Տիգրանը մի քանի անգամ պտտվեց կառքի չորս կողմը և դիմեց հաղթաբազուկին.

- Դու տեսե՞լ ես ուրիշ դամբարաններ:

- Ոչ, հարգարժան հյուր, - պատասխանեց հաղթաբազուկը, - ես ուրիշ դամբարաններ չեմ տեսել, որովհետև Հայքից ոչ մի անգամ չեմ ելել: Բայց միևնույն է, եթե նույնիսկ ես թափառած լինեի աշխարհը և տեսնեի հին ու նոր բոլոր դամբարանները, ոչինչ չէր փոխվի:

- Ինչո՞ւ, - նորից հարցրեց արքայից-արքան:

- Հարգարժան հյուր, մենք չենք սիրում կրկնել կամ ընդօրինակել: Այս դամբարանը պիտի նմանվեր միայն իրեն: Չեմ կարծում, թե աշխարհի որևէ մասում Տիգրանի դամբարանի նման դամբարան լինի:

- Ինչո՞ւ ես այդպես մտածում:

- Այսքան ադամանդ, ոսկի ու արծաթ կարող է ունենալ միայն արքայից-արքա Տիգրանը՝ Արևելքի ամենամեծ տիրակալը: Նայիր, ապա հարգարժան հյուր, տես ինչ աստվածային շքեղություն ունի մարտակառքը: Եթե այս կողմից դիտես՝ կթվա, թե սա դագաղ է՝ ոսկյա ադամանդազարդ կափարիչով: Այո, այստեղ կարող ես պառկել ինչպես ամենալավ մահճակալի վրա: Հիմա առջևի կողմից դիտիր. մահճակալ-դագաղը նման է գահաթոռի: Արքայից-արքա Տիգրանը հայերիս ամենամեծ աստվածն է: Ճիշտ է, նա ծերացել է և կարող է մեռնել: Բայց ինչեր ասես, որ չեն լինում աշխարհում: Այս ոսկեձույլ մարտակառքի մեջ պառկելով, նա կարող է հարություն առնել աստվածային ուժով, ձգել ահա այս երասանը և արթնացնել քնած արծվին: Այն ժամանակ մարտակառքը կթռչի դուրս և վայ Հայքի թշնամիներին...

- Արտավազդը նկատեց, որ հայրը դժգունեց:

- Դու հոգնել ես, հարգարժան հյուր, - ասաց արքայազնը:

Հաղթաբազուկը նորից վառեց իր կանթեղները և առաջ անցավ:

Հասնելով սանդղոտներին, Արտավազդն զգաց, որ ինքը չի կարող միայնակ օգնել հորը վերելքի ժամանակ: Հաղթաբազուկը աջ ձեռքով բռնեց լուսավառ կանթեղները, իսկ ձախով՝ Տիգրանի ձեռքը:

Քառորդ ժամ հետո երեքով դուրս եկան ոլորանը, փակեցին թագաքանդակ քարե դուռը և նստեցին հանգստանալու: Մաքուր օդը ուշքի բերեց արքայից-արքային:

- Ա՞ջ պիտի գնանք, թե ձախ, - հարցրեց Տիգրանը:

- Ձախ, - պատասխանեց Արտավազդը:

Ես ցանկանում եմ հանդիպել դամբարանը կառուցողներին:

- Այդ դեպքում մենք աջ պիտի գնանք, նրանց վրանները ձորահովտում են, - ասաց Արտավազդը:

Երբ մի քիչ առաջ էին անցել, հաղթաբազուկը կանգ առավ, հրաժեշտ տվեց և ետ դարձավ:

Հայր ու որդի երկար ժամանակ քայլում էին անխոս:

- Նա չճանաչե՞ց, - հարցրեց արքայից-արքան:

- Ոչ, հայր իմ, - պատասխանեց արքայազնը:

Որքան իջնում էին ներքև, օդն այնքան հաճելի էր դառնում: Վերջապես Տիգրանի դեմքին հասավ ծանոթ զեփյուռը: Արքայից-արքային թվաց, թե ինքը դուրս եկավ մահվան աշխարհի սահմաններից:

Կանաչապատ լանջերին երևացին թաղիքածածկ վրանները:

- Նստեցեք այստեղ, - ասաց արքայից-արքան և չսպասելով, թե ինչ կպատասխանի Արտավազդը, նստեց ձորաբերանի կանաչ խոտերի վրա:

Արքայազնը նստեց հոր կողքին: Հեռվից եկող երգի ձայնը շեղեց Տիգրանի ու Արտավազդի ուշադրությունը: Քաղցրալուր երգը մոտենում էր: Երգողը պատանի էր: Նա խնդրում էր սիրած աղջկան՝ չմոռանալ իրեն և սպասել:

- Ես ճանաչում եմ նրան, - ասաց արքայազնը:

- Ո՞վ է, - հարցրեց արքայից-արքան:

- Երկաթակերտից մի կենսուրախ տղա:

- Ձայնիր թող գա այստեղ, - ասաց Տիգրանը:

Բայց պատանին այնքան էր մոտեցել, որ ձայնել պետք չէր: Արտավազդը ձեռքով մոտ կանչեց նրան: Տղան լայն-լայն քայլերով մոտեցավ նրանց և, գլուխ խոնարհելով, ասաց.

- Ողջույն արքայազն Արտավազդին և անծանոթ այս մարդուն, որի քղամիդը շատ երկար է:

- Նա հելլեն ճարտարապետ է, որ ցանկանում է զրուցել քեզ հետ, նստիր մեզ մոտ, - ասաց արքայազնը:

- Հրամանդ ի կատար, արքայազն:

Արքայից-արքան դիմեց պատանուն:

- Ի՞նչ է քո անունը:

- Արամ:

- Քանի տարեկան ես:

- Միչև Արշալույսի հետ ծանոթանալը տասնյոթ տարեկան էի:

- Իսկ ե՞րբ ես ծանոթացել Արշալույսի հետ:

- Երկու տարի առաջ: - Հանելուկներով ես պատասխանում իմ հարցին, ուրեմն տասնիննը տարեկան ես:

- Դու ճիշտ գումարեցիր:

- Սրամիտ ես երևում, մի՞թե տասնյոթին երկու գումարելն այդքան դժվար է, որ ինքդ չես անում:

- Դժվար չէ, բայց այդ երկու թվերի արանքում կանգնած է իմ Արշալույսը:

- Իսկ նա գեղեցի՞կ է:

- Իմ Արշալո՞ւյսը:

- Այո:

- Նա Հայքի ամենագեղեցիկ օրիորդն է:

- Որտե՞ղ է հիմա քո գեղեցկուհի Արշալույսը:

- Երկաթակերտում: Նա սպասում է քո վերադարձի՞ն:

- Այո:

- Իսկ եթե դու չվերադառնաս ի՞նչ կանի նա:

- Ինչո՞ւ պետք է չվերադառնամ:

- Ո՞վ գիտե:

- Ոչ, ես կվերադառնամ:

- Այդպե՞ս են մտածում նաև քո մյուս ընկերները:

- Այո:

- Բայց ինչո՞ւ դուք հիմա չեք վերադառնում, չէ՞ որ արդեն վերջացրել եք դամբարանի կառուցումը:

- Մենք չենք շտապում:

- Դու գոհացուցիչ պատասխան չտվեցիր: Չեմ էլ ստիպում, որ տաս: Ես գիտեմ, թե դու և քո ընկերները երբ պիտի վերադառնաք:

- Ե՞րբ պիտի վերադառնանք:

- Երբ մահանա արքայից-արքա Տիգրանը: Եվ երևի դուք անհամբեր սպասում եք նրա մահվան:

- Լռիր, մարդ, եթե դու արքայազն Արտավազդի հյուրը չլինեիր, ես կբռնեի քեզ և կնետեի անդունդը:

- Ինչո՞ւ զայրացար, պատանի:

- Որովհետև դու զրպարտեցիր հայերիս:

- Զրպարտեցի՞:

- Այո:

- Դու ճշմարտությունը շփոթում ես զրպարտության հետ:

- Իսկ քո խոսքերը, հարգարժան հյուր, ճշմարիտ չէին:

- Մի՞թե:

- Այո, ճշմարիտ չէին:

- Հենց դու, պատանի, չէ՞ որ դու շտապում ես հանդիպել քո գեղեցկուհի Արշալույսին և քաջ գիտես, որ Երկաթակերտ կարող ես վերադառնալ միայն այն ժամանակ, երբ մահանա Հայքի մեծ տիրակալը:

- Դա ճիշտ չէ, ես չեմ շտապում, իմ Արշալույսը ինձ կսպասի: Ես չեմ դժգոհի, եթե նույնիսկ ծերանամ Մթին լեռներում, միայն թե արքայից-արքա Տիգրանն ավելի երկար ապրի:

- Եվ դա ասում ես անկեղծորե՞ն:

- Այո, անկեղծորեն ու սրտանց:

ՊԱՏԳԱՄ

Երբ արքայից-արքա Տիգրանն ու արքայազն Արտավազդը վերադարձան Մթին լեռներից, մայրաքաղաքի վրա իջնում էր երեկոն:

- Հրամայիր, թող այս գիշեր ապարանքում կրկնապատկեն կանթեղների թիվը, - ասաց տիրակալը, մտնելով իր ննջասենյակը: Ներս մտավ մատուցարանը բռնած սպասավորը:

Տիգրանը ետ վերադարձրեց նրան և պառկեց մահճակալին:

Սրտի ծակոցներն ուժեղացան, բայց նա արհամարհեց և որոշեց չխփել զարկանին: Ոչ մի զարկան, սպասավոր ու բժիշկ չեն կարող օգնել այլևս: Մտածում էր Մթին լեռներում մնացած Արամի մասին:

Հետո արքայից-արքան մտաբերեց Մթին լեռների խճճված ոլորանները, հաղթաբազուկին, ոսկեձույլ մարտակառք-դամբարանը: Եթե այս գիշերը սիրտը կանգ առնի, ապա վաղն իր դին կամփոփվի ոսկեձույլ դամբարանում: Ութսունհինգ տարի, և հավերժական լռություն: Ի՞նչ է թողնում երկրի վրա: Արքայազն Արտավազդի՞ն: Իսկ եթե հանկարծ սպանվի կամ մեռնի նաև Արտավազդը՝ ինչ պիտի լինի Հայքի հետ: Քանի Լուկուլլոս ու Պոմպեոս կբարձրացնեն իրենց գլուխը: Կլսեն, որ ահեղ Տիգրանը չկա և կգան: Կգան իրենց գայլի ժանիքները բացած և կհոշոտեն ամեն ինչ, նույնիսկ Հայքի քարերը: Մահն այնքան երկյուղալի չէ: Կարելի է երկյուղել միայն տերության հեղհեղուկ ապագայի համար: Մահից հետո ես թաքնված կլինեմ աշխարհից ու մարդկանցից և չեմ իմանա, թե ինչ պատահեց Հայքին:

Արքայից-արքային թվաց, թե միտքը կանգ առավ:

Մի՞տքը կանգ առավ, թե՞ սիրտը: Նա խփեց զարկանին: Կողոթյակից ննջասենյակ մտավ սպասավորը:

- Տիկնանց-տիկնոջը կանչիր այստեղ, - նվաղած ձայնով հրամայեց Տիգրանը:

Համասփյուռը արքայից-արքայի սենյակը մտավ Արտավազդի հետ: Նկատելով, որ Տիգրանն իրեն վատ է զգում, տիկնանց-տիկինը բարձրացրեց ամուսնու գլուխը և փոքրիկ սրվակից մի քանի կաթիլ խմեցրեց նրան:

Արքայից-արքան մեղմ ժպտաց և ասաց.

- Որդան կարմիրի հյութ է, Համասփյուռ, բայց Հայոց այս անմահական հեղուկն էլ չի կարող օգնել ինձ:

- Հանգիստ պահիր քեզ, Տիգրան, և ոչինչ մի խոսիր, - ասաց տիկնանց-տիկինը:

- Չեմ խոսի, - պատասխանեց արքայից-արքան և փոքր դադարից հետո ավելացրեց, - դու գնա հանգստացիր, Արտավազդ, մայրդ կմնա ինձ մոտ:

Առանց հրաժեշտ տալու արքայազնը դուրս եկավ ննջասենյակից և տխուր խորհրդածություններով կանգ առավ գահասրահում: Հայրը համաձայնեց, որ տիկնանց-տիկինը գիշերը մնա իր մոտ: Դա լավ նշան չէ: Չլինի՞ նա հույս չունի, որ կարող է ապրել մինչև լուսադեմ: Վաղն ի՞նչ պիտի անի ինքը, եթե այս գիշեր հայրը մահանա: Երևի տիկնանց-տիկինը արթուն մնա ամբողջ գիշեր: Իհարկե, մայրը արթուն կմնա: Իսկ ի՞նքը: Ինչպե՞ս կարող է հանգիստ ննջել: Ննջե՞լ: Բայց մի՞թե մարդ կարող է ննջել՝ իմանալով, որ կողքի սենյակում ուր որ է կարող է մեռնել հայրը: Արքայազնը շարժվեց դեպի գահասրահի մուտքը: Նախագավթում հանդիպեց հազարապետ Փայլակ Մարդպետունուն:

- Դու ինչո՞ւ ես արթուն այս ժամին, - հարցրեց Արտավազդը:

- Ստուգում եմ, թե ինչ են անում պահակները, - պատասխանեց հազարապետը և դիմեց թոռանը, - ինչպե՞ս է հայրդ:

- Լավ չէ:

- Թող աստվածները օգնեն նրան:

Առավոտյան մեծ ապարանքի աշտարակներից հնչեցին գալարափողերը: Մահամերձ արքայից-արքան մեծ խորհրդի էր հրավիրում Հայքի երևելիներին:

Գահասրահում հավաքվեցին և ըստ տիտղոսների բազմեցին տիկնանց-տիկին Համասփյուռը, արքայադուստր Նռանեն, հազարապետ Փ. Մարդպետունին, Ծոփքի պատանի բդեշխ Մեհրուժանը, զորապետներ Մամիկն ու Սմբատը, քաղաքապետ Եղջերու Վարդը, նահապետներ, պալատական խորհրդատուներ, քրմեր ու դպիրներ:

Միայն ոտքի վրա կանգնած մնաց արքայազն Արտավազդը: Նա կարող էր նստել տիրակալի կողքին իրեն հատկացված բազմոցի վրա:

Բայց կանգնել էր գահասրահի կենտրոնում, հոր դիմաց և այնպիսի կեցվածքով, որ կարծես Տիգրանը մեծ խորհրդում դատավճիռ պիտի արձակեր արքայազնի մասին:

Վսեմափայլ ծիրանու մեջ, ադամանդակուռ թագը գլխին Տիգրանը այնպես էր բազմել իր գահին, որ աստվածային ներշնչանք էր ազդում բոլորի վրա: Նրա դժգունած դեմքին պատկառազդու էին արծվենի քիթն ու ահեղ հայացքը:

Ահա նա ուղղվեց գահի վրա, բարձրացրեց ձեռքը և ասաց.

- Արք և տիկնայք Հայոց աշխարհի, ես հրավիրել եմ ձեզ, որ դուք լսեք, թե ինչ եմ պատգամում իմ որդուն և Հայքին:

Իսկ դուք, դպիրներ, քերթեցեք իմ պատգամը ձեր մագաղաթներին, որոնք ավելի երկար կյանք ունեն, քան աստվածներն ու արքաները Հայոց աշխարհի:

Դու լսո՞ւմ ես Արտավազդ:

- Այո, հայր իմ, լսում եմ:

- Արտավազդ, ես չտեսա Տիգրանակերտի իմ նոր արծվաքանդակը: Վարպետները չհասցրին: Չէին կարող հասցնել: Աստվածներն արծվին միայն մի անգամ են թևեր տալիս:

Ահա ես քեզ եմ հանձնում իմ թագն ու ծիրանին: Իմ ոգին հովանի կլինի քեզ Հայոց բոլոր աստվածների հետ:

Ես հրամայում եմ, որ հենց այսօր տուն վերադառնան Մթին լեռների բոլոր քարգործ վարպետները: Ջարդիր ոսկեձույլ իմ կառք-դամբարանը և հրամայիր, որ Եկեղյաց գավառում այդ ոսկուց ձուլեն ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ աստվածուհու արձանը: Թող հողով ու քարով լցնեն իմ դամբարանատունը, և Մթին լեռների ոլորաններն այնպես քանդվեն, որ ոչ մի անցորդ չմոլորվի այնտեղ:

Ինձ կթաղեք երկրի վրա, Հայքին ու հայերին մոտիկ: Իմ ոգին արթուն կմնա աշխարհում և կուղեկցի բոլոր հայերին, որտեղ էլ լինեն նրանք: Ես իմ սիրտը կբաժանեմ բյուր անգամ հազար բյուր մասերի և կվերածնվեմ ամեն հայի հետ: Ես արթուն կպահեմ հայկական ոգին մինչև գալիք բոլոր ժամանակների եզրապահ դարերը: